

1  
L. 100-100

28(09)

42-54

10265

V 28 y.



280  

---

1018-46

الزينة

4431

1472-44

28(09)

4-54

ԿՐԹՈՒԹԻՒՆ

**ՔՐԻՍՏԻԱՆԱԿԱԿԱՆ**

**ՎԵՐԿՊԵՏՈՒԹԵԼՆ**

ԵՇԻՆՏԵՐԲԵԼ

Ի Լ. ՍՐԵՒՅԵԼ ՎԵՐԿՊԵՏԵԼ

ՎԵՅՈՒՆՆԵՐ

Ի ՍՐԵՒՅԵԼ

2005  
20413



Ի ՎԵՆՆԵ

Ի ՏՊԵՐԱԿՈՒՄ ԻՐԹՈՒՄՆԵՐԵՐԵՅ

1839 ՈՒՄՁՐ

Մի խնդրեր խմանալ զի հաւատացելս, այլ  
հաւատս զի խմացիս, քանզի խմանալն  
փարձք է հաւատոց:

Ս. Օգոստ. Եւջ.

004



## ՅԵՌԵՂԻՄԻԱՆ ԱՄԻՅԻՒՆ

**Մ**արդը բանական ստեղծւած է՝ աշխարհք  
 եկած ատենը որչափ ալ սղորակելի վիճակի  
 մէջ բլլալով կենդանիներէն ալ վար կերև-  
 նայնէ, անանկ չէ. Աստուած իրեն բանական  
 հոգի պարգևած է՝ որուն կարողութիւննե-  
 րովը մեծ բաներ կրնայ սորվել ու բնել՝ ի-  
 րեն վայլած գերբնական բաներուն մէջ կրբ-  
 թրվելով: Ար աս կրթութենէ խալսելու  
 համար չիկրբնար մտածել, որ ինքը հրեշ-  
 տակներու պէս անմարմին չէ, վասն զի կեն-  
 դանիներուն պէս մինակ մարմին ալ չէ, իր  
 բանական հոգիովը անոնցմէ շատ գերազանց՝  
 ու հրեշտակներու շատ մօտ է. Աստուած  
 զինքն ալ հրեշտակներուն պէս իրեն համար  
 ստեղծած է, ու իր վախճանն ալ անոնց պէս  
 զԱստուած փառաբանել ու Աստուծոյ փա-  
 ռայքը հաղորդ բլլալ է: Աս վախճանին հաս-  
 նելու համար ինքը պարտքեր ունի Աստուծոյ  
 կատարելու՝ որ երկու տեսակ են, այս ինքն՝  
 հաւտալու բաներու՝ հաւտալ, ու դործելու  
 բաները դործել է, ու ասոնցմէ փախչելու  
 ճար չունի, սորվի՝ չիսորվի, կրթութիւն՝ ան-  
 կիրթ մնայ, Աստուած աս պարտքերը իրմէն  
 պիտի պահանջէ:

Հաւտալու բաները Արրորդութեան,  
 Մարդեղութեան և ուրիշ աստուածային  
 խորունկ խորհուրդներն են, որոնց պատ-  
 ճառներուն մարդուն շափաւոր խելքը չի-

Հասնիր, մարդք պարտական է մինակ Աստուծոյ անանկ յայանելուն ու եկեղեցւոյ անանկ վկայելուն համար՝ հաւտայու:

Գործելու բաներն ալ Աստուծոյ, իր անձին ու բնկերին կատարելու պարտքերն են, որ ինչւան որ մարդք աւ երկու պարտքերը չիկատարեր՝ վախճանին չիկրնար հասնիլ ու չիկրնար փրկիլի. ու ինչպէս որ մեր հաւաաքին ուրիշ ճշմարտութիւնները Աստուած յայանած է, ու Աստուծոյ յայանելուն եկեղեցին վկայած է, աւ բաւժիս ճշմարտութիւնն ալ անանկ է. անոր համար վա՛յ ան մարդու՛ճ՝ որ աւ պարտքերը աղէկ սորվելու ու կատարելու անհոգ կրլայ:

Մարդուն Աստուծոյ կատարելու պարտքը՝ զինքը ամեն բանէն աւելի սիրել, պաշտել ու պատւիրանները պահէլն է: Իր անձին կատարելու պարտքը՝ ինքը զինքը Աստուծոյ սիրուն համար սիրելով՝ Աստուծոյ կամայը համաձայն ու իր հոգւոյն փրկութեանը օգտակար ճշմարիտ բարին բնել, ու Աստուծոյ կամայը հակառակ ու իր հոգւոյն փրկութեանը փաստակար ճշմարիտ չարէն փախչիլն է: Բնկերին կատարելու պարտքն ալ՝ զանիկայ Աստուծոյ սիրուն համար իր անձին պէս սիրելով՝ ինչ որ ինքը բանականօրէն կուզէ՝ որ բնկերը իրեն բնէ, ան բանը ինքն ալ բնկերին բնել, ու ինչ որ ինքը բանականօրէն չուզեր՝ որ բնկերը իրեն բնէ, անիկայ ինքն ալ բնկերին չբնէլն է:

Աս պարտքերը ժողովուրդին սորվեցունօղ գրքերուն զլուսարը քրիստոնէական

վարդապետութիւնն է : Ար թէպէտ ազգեր-  
նոս մէջը կային , բայց շատ կարճ ըլլալուն  
համար՝ ամմէն մարդ իր պարտքերը աղէկ չէր  
կրնար իմանալ ու սորվիլ : Անոր համար  
աշխատեցայ աս ընդարձակ քրիստոնէականը  
զրել՝ երևելի հեղինակներէն ժողվելով , ու  
անոնց բռնած կարգերուն հետեւելով , որ ա-  
սոր մէջէն ամմէն մարդ իր հասարակ պարտ-  
քերը սորվելէն իղա՞ս՝ իր գանրված վիճակին  
պարտքերն ալ կարող ըլլայ սորվիլ , ու իր  
վախճանէն զրկուիլու առիթներէն փախչիլ :

Գոլոր գիբբը հինգ գլուխի բաժնրված  
է . առջինը՝ հաւատքի վրա , երկրորդը՝ յու-  
սոյ վրա , երրորդը՝ սիրոյ վրա , չորրորդը՝  
եկեղեցւոյ խորհուրդներու վրա ու հինգե-  
րորդը՝ բարին ընելու ու չարէն՝ փախչելու  
վրա կըխօսի :

Չրլայ՝ որ սորիոյներուն ձանձրութիւն  
ու յուսահատութիւն տայ՝ զլուխներն ալ  
համարներու բաժնրված են , որ ուզողը օրը  
համար մը միտք առնելով՝ բոլորը իրեք ամ-  
սրեան մէջ կարող ըլլայ լմնցունել . ետրն  
ալ սորվածները ամմէն օր կարգաւ մէյ մէկ  
համար նորէն աչքէ անցունելով , մէկգմէկու-  
քով եկած առննին՝ իրենց փրկութեանը  
օգտակար նիւթ ունենան խօսելու , որպէս զի  
վիասակար բամբասանքներով ու արդւրած  
խօսքերով զՆստուած՝ վշտացուցանելու ու  
սատանային կամբը կատարելու ակզը՝ ասանկ  
օգտակար խօսքերով՝ հրեշտակները , մանա-  
ւանդ հրեշտակներուն ճերը՝ Արիստոս , գայ՝  
ու մէջերնին մանէ , ինչպէս Վիր յարութեան

օրը մասու իր երկու աշկերաններուն մէջը, որ իր վրա խօսելով Ամմաուուս կերթային կոր :

Ամմէն մէկ համարներէն ետքն ալ անոնց նիւթերուն յարմար մէյ մէկ խրատներ գրված են՝ անոնք ալ աստուածաշունչի կամ սուրբերու վկայութիւններով հաստատված են :

Վերջապէս դիտնալով մեր բարեպաշտ ազգին բերումը՝ որ պատմութիւնը շատ կը սիրէ ու սիրով կը կարգայ, ամմէն մէկ համարին յարմար մէյ մէկ ազուր աստուածաշունչի պատմութիւններ գրված են, որ կարգացողները անոնց ալ քիչ մը տեղեկութիւն ունենան : Մէյ մէկ պատմութիւն ալ նոր եկեղեցւոյ մէջ պատահած օրինակներէն բնարված գրված են, յուշունելու համար՝ որ Աստուած միշտ նոյն է, իր պատկերանները անփոփոխ են, յաւիտենական են՝ որ զանաք պահս լերը միշտ կը վարձատրէ ու անոնց դէ գործողները միշտ կը պատժէ :

Աս պզտիկ աշխատանքս կընծայեմ սիրելի ազգիս Աստուծոյ փառացը ու իրենց հոգևոր օգտին համար, յուսալով՝ որ բարեպաշտ կարգացողները պարզապէս ճշմարտութեան սիրով կը կարգան ու կը ջանան՝ որ իրենց փրկութեանը հարկաւոր բաները սորվին, ու իրենց հաւտայլու բաները հաւտալով՝ ու կատարելու բաներնին կատարելով իրենց վախճանին, այս ինքն՝ Աստուծոյ պայծառ տեսութեանը և արքայութեան անսահման ու յաւիտենական փառքերուն համին . որուն արժանի բնէ Աստուած ամմէն ուղղափառ բրիտանեաները . ամմէն :







Heiligste Dreyfaltigkeit.


ԱՄԵՆԱՍՈՒԹԻ ԵՄՄՈՐԴՈՒԹԻՒՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍՆԷՆԿԵՆ

ՎԵՐԴԵՊԵՏՈՒԹԵԱՆ

ՀԵՐՅՈՒՄՈՎ ՈՒ ՊԵՏԵՍԻՆՆՈՎ



ՅԵՌԵՂԵՄՅԱՆ ՀԵՐՅՈՒՄՆԵՐ

ԹԷ ԵՏ Ի՞նչ է՝ ի՞նչ Բանի համար  
հարցը ստեղծել է :

հ. **Օ** քեզ ո՞վ ստեղծեր ու աշխրպիս  
մէջ դրեր է :

պ. Եստուած :

հ. Եստուած ի՞նչ բան է :

պ. Ենսահման էակ մի է՝ երկինքի ու  
երկրի ստեղծող՝ ու ամեն ստեղծվածնե-  
րու բացարձակ տէր :

հ. Եստուած մարմին ունի :

պ. Չունի՝ անսահման կատարեալ ու մա-  
քուր հոգի մի է :

հ. Ե՞տ սկիզբ ունի, կամ ատեն մը ե-  
ղան, որ Ե՞տ չիկար :

պ. Չէ՛ Ե՞տ երբէք սկիզբ չունեցաւ՝

ինչպէս վերջ ալ պիտոր չունենայ . հասարակ  
միշտ եղած է՝ միշտ է՝ միշտ պիտի ըլլայ :  
հ . Ա՛ճ ո՛ւր տեղ է :

ա . Արկինքը՝ երկիրը ու ամմէն տեղ է  
իր անչափութիւնը :

հ . Ա՛ճ ամմէն բանը գիտէ :

ա . Հրամմերես՝ Ա՛ճ ամմէն բանը կը-  
տեսնէ , ու մեր սրտերնուս ամմէն գաղ-  
տուկ մտածմունքները գիտէ :

հ . Ա՛ճ մէկէ մը կախում ունի՞ :

ա . Չէ՛ մէկէ մը կախում չունի , ու ամ-  
մէնը իրմէն կախում ունին :

հ . Ա՛ճ զքեզ ինչո՛ւ ստեղծեր՝ ու աշ-  
խարհիս մէջը գրեր է :

ա . Օ՛հնքը ճանչնալու՝ սիրելու՝ պաշ-  
տելու՝ ու յաւիտենական արքայութիւնը  
վաստրկելու համար :

հ . Ա՛ճ ի՞նչ կերպով կուզէ , որ ծա-  
ռայենք իրեն յաւիտենական արքայութիւնը  
վաստրկելու համար :

ա . Հաւատալով ու կատարելով ան  
բաները , որ քրիստոնէական հաւատքը  
մեզ կըսորվեցընէ :

հ . Ինչո՛ւ համար :

ա . Ա՛յդի մինակ քրիստոնէական հա-  
ւատքի մէջ կրնանք փրկութիւն հասնիլ :

հ . Փրկութեան հասնելու համար քրիս-  
տոնէական հաւատքը զլիսաւորաբար քա-  
նի՞ բան կըսորվեցընէ մեզի :



դ. Այլ էց բան. հաւատ՝ յոյս՝ սէր՝ խոր-  
հուրդներ՝ չարէն փախչիլ ու բարին ընել:

Աշխարհիս սպեղծագործութիւն պատմութիւն:

Ա՛ճ՝ որ ինք իրեն բոլոր յաւիտենա-  
կանութիւն մէջ կատարեալ երանեալ էր,  
բանական ստեղծմածներէն ալ փառաւոր-  
վիլ ուղեց: Ա՛մէն բանէն յառաջ երկին-  
քը ու երկիրը ստեղծեց. երկինքը արե-  
գակը՝ լուսինը՝ աստղները դրաւ, գիշերը  
ցորեկէն բաժնեց. մեր բնակութիւնը հա-  
մար ցամաքը ծովէն զատեց. իրենց սահ-  
մանները որոշեց. պտղաբերութիւն պարգե-  
ւեց, ու երկիրը տեսակ տեսակ կենդանի-  
ներով՝ ծովը ձուկերով ու օդը թռչուն-  
ներով զարգարեց: Ա՛սանկ գեղեցիկ բնա-  
կութիւն տեղը պատրաստէլէն ու օրէնքներ  
գնելէն ետքը, որ աս սքանչելի գործքին  
պահպանութիւնը համար ամէն տարերք-  
ներն ալ պարտրկան ըլլան զանոնք պա-  
հելու, քիչ մը հող առաւ, ուսկից որ  
առջի մարդը շէնեց. որուն փչեց բնական  
հողի, ու անունը Ա՛դամ դրաւ: Ա՛սիկայ  
բանական հողով իր պատկերին նման ըս-  
տեղծելէն ետքը՝ Ա՛ւան ասոր կողի ոսկո-  
րէն շինեց՝ ու իրեն ընկեր ու օգնական  
տրվաւ: Ա՛րկուքն ալ աղւոր պարտիզի մի

մէջ դրաւ , որ հոն տեղը իրենք՝ ու զաւ-  
 կէ զաւակ իրենց տղաքները Մ.Յ ծառայե-  
 լով երջանկապէս սպրին , որ Մ.Յ շնորհ-  
 քովը ամմէնն ալ ազատ պիտի ըլլային  
 հիւանդութի մահուանէ ու ամմէն տե-  
 սակ պատահարներէն , որոնց տակը որ հիմա  
 ինկած ենք : Հոն տեղը անմեղութիւնով  
 ու սրբութիւնով ապրելէն ու աւելի երջա-  
 նիկ կեանքի պատրաստութիւն տեսնելէն  
 ետքը երկինքը պիտոր երթային , որ զՄ.Յ  
 տեսնելով յաւիտեան ուրախանան : Մ.ս  
 էր Մ.Յ վախճանը՝ որուն համար մարդը՝  
 ու մարդու համար բոլոր աշխարհքը ըս-  
 տեղծեց . Օհն . Գ . Բ :

**Խորագր հարգում լախճանին զրայ :**

Գ . Մարդը բոլոր Մ.ստուծմէ է , <sup>1)</sup> . ու  
 ամմէն ժամանակ անկէ կը պահպանվի . մի-  
 նակ անկէ ունի իր հոգին՝ մարմինը՝ ամ-  
 մէն կարողութիւնները՝ ու ամմէն ունեցածը ,  
 ու բան մը չունի որ անկէ առած չըլլայ . <sup>2)</sup> :  
 Բ . Մ.սոր համար մարդը պարտրկան է՝  
 որ զինքը բոլորովին ու սրայն Մ.Յ տայ .  
 իր հոգին ալ պարտրկան է , որ զՄ.Յ ճանչ-

1. Նա արար զմեզ՝ և ոչ մեք էաք . Սաղմոս . 2 ը . 3 :  
 2. Ո՛չ ես ինչ զոգիսդ և զկեանսդ ձեզ շնորհեցի . . .  
 այլ որ աշխարհի արարիչն է . Բ . Սաղմոս . 1 .  
 22 . 23 :

նալու ետևէն ըլլայ, սիրտը՝ ՂՄԾ սիրելու  
 աշխատի .<sup>1)</sup> ու իր մարմինը՝ իր ունեցած  
 ներք՝ ու մէկ խօսքով ինչ որ է՝ կի՞ ինչ  
 որ ունի նէ, ամմէնը ՄՅ սք ծառայութեը  
 զբաղեցրնէ: ՄԾ զինքը աս վախճանի Նա-  
 մար ստեղծած է, և ուրիշ բանի համար  
 չէ .<sup>2)</sup>:

Գ. ՄԾ անանկ կարգ դրաւ, որ մար-  
 դուն փրկութե հասնիլը իր աս պարտքե-  
 րէն ու իր վախճանէն կախվի, թէ որ աս  
 իր պարտքերը աղէկ կրկատարէ՝ ու իր վախ-  
 ճանին աղէկ կըծառայէ նէ աշխրբիս մէ-  
 ջը, յաւիտենական փրկութե հասնի, չէ  
 նէ՝ յաւիտենական դժբաղդութե ու տան-  
 ջանքներու դատապարտութի .<sup>3)</sup>:

( ) Երևակ :

Յնեան կարգէն Փրանկիսկոս Սժրէնա  
 անունով քահանայ մը օրմը շատ տղաքներ  
 ժողված՝ ժողովուրդին առջևը իրենց քրիս-  
 տոնէական վարդապետութիւն հարցուցած  
 ատենը՝ մէջերնէն շատ պղտիկ տրդու մի  
 ալ հարցուց . աս տրդան Յնի սիրովը լեց-

1. Յոյց ինձ Տէր զկատարած իմ . Սժր . 12 . 5 :
2. Օ՜նմ ինչ դործեաց Տէր վն իւր . Մժր . 12 . 4 :
3. Արթիցն նորա ՚ի տանջանսն յաւիտենականս,  
 և արդարքն ՚ի կեանսն յաւիտենականս . Սժր .  
 12 . 46 :

վերլով ու ջերմեռանդուիով պատասխանը  
 տրվաւ : Արապետը աս տղուն սիրուն ու  
 ջերմեռանդութեւր վրա զարմանալով՝ ամ-  
 մէնուն առջևը ըսաւ . աս տղան՝ որ ա-  
 սանկ աղէկ պատասխան տրվաւ նէ՛ պէտք  
 է՝ որ զՎճ սրտանց սիրէ , տեսնենք՝ որ  
 անանկ է , թէ չէ : Ղարձաւ տղուն՝ ու  
 ըսաւ . իրաւ կրսիրե՛ս զՎճ : Տղան պա-  
 տասխան տրվաւ . հրամմերես կրսիրեմ :  
 Քահանան կրկնեց . ո՞րչափ կրսիրես :  
 Տղան կրսէ . իմ հօրմէս՝ մօրմէս՝ ու եղ-  
 բարներէս աւելի կրսիրեմ : Արապետը  
 կրսէ , իրաւ ասիկայ մեծ սէր է , բայց աս-  
 կէ աւելի սէր մը չունի՞ս : Ըն առենը տը-  
 ղան պատասխան կուտայ , իմ կեանքէս՝  
 իմ սրտէս՝ իմ հոգիէս ալ աւելի կրսի-  
 րեմ : Եւտ աղէկ է՝ կրսէ քահանան ,  
 բայց աս ըսածներդ խօսք են . հիմայ գանք  
 գործքի : Ղուն որ ասանկ գեղեցիկ ըզ-  
 գեստ մը հագեր ես , Յս մանուկին սի-  
 րուն համար ասիկայ ինծի կուտաս , որ  
 իր աղքատներուն տամ : Տղան Յսին սի-  
 րովը լեցված՝ ուրախ զուարթ հանեց ըզ-  
 գեստը կրոնրկէն , ու ձեռքը բռնելով  
 կանչեց , աս զգեստիկս՝ աս զգեստիկս՝  
 առ ասիկայ , ու ասոր հետ իմ սիրտս ալ ,  
 ու ասանկ ըսելով զգեստը վարպետին առ-  
 ջևը նետեց , ու աս խօսքերը անանկ շնորհ-



քով ու եռանդով զրուցեց, որ բոլոր ժողովուրդին սիրտը լեցվեցաւ, լալ սկսան։ Արպետը ասով ալ գոհ չեղաւ, տղուն նորէն հարցուց. ասկէ աւելի բան չէ՞ք ըներ Յս մանուկին սիրուն համար։ Տըղան շուտ մը ծունկ չոքեցաւ, ու բարձր ձայնով պատասխան տրվաւ. հոս՝ հոս՝ հիմայ Յս մանուկին սիրուն համար իմ կեանքս կուտամ. հա՛ մէկը գայ՝ զիս մեռցրնէ, որ իմ բաղձանքս աս է։ Աս մանուկիս ասանկ իր կեանքը ընծայելը Յսին անանկ ընդունելի եղաւ, որ քիչ օրվան մէջ հիւանդացաւ, ու անուշ մահուամբ մը կանչովեցաւ Յսին հետ յաւիտեան ապրելու. որուն սիրուն համար իր զգեստը տրված էր՝ կեանքն ալ տալ կուզէր կոր։ Աս Փրանկիսիոս յահանային լարքին ԲՉԵ. ԳԼ. Կ։

ԳԼՈՒԽ Ե  
 ՀԵՒԵՏՔԻՒ ՍԻՐԵ  
 ԱՌՋԻ ՀԵՄԵՐ

Քրիստոնէայ անուանն ու հաւատարի լլտ։

Կ. Դ ու ի՞նչ ես։

դ. Քրիստոնէայ եմ՝ Այ շնորհքովը։

Կ. Քրիստոնէան ի՞նչ է։

պ. Ան է՛ որ մկրտութեամբ է՛ ու քրիստոնէական վարդապետութիւնը կրդաւանի :

հ. Քրիստոնէական վարդապետութիւնը ի՞նչ բան է :

պ. Ան բաներն են, որոնք որ Յսի Բար աշխարհիս վրա մեղի սորվեցուց, որն որ նաև հռովմէական սբ եկեղեցին կը սորվեցընէ :

հ. Քրիստոնէին ամմէնէն հարկաւոր բանը ո՞րն է :

պ. Հաւատքն է :

հ. Ինչո՞ւ հաւատքը ամմէնէն հարկաւորն է :

պ. Ասանդի հաւատքը փրկութեան հասնելու համար ամմէն արդիւնքներուն հիմը ու սկիզբն է :

հ. Հաւատքը ի՞նչ բան է :

պ. Այ գերբնական պարգև մի է, որ անով կը հաւտանք իրեն՝ ու բոլոր ան բաներուն, որոնք որ ինքը գրով կման գիր սբ եկեղեցւոյն յայտնած է :

հ. Հաւատքի բաները աչքով տեսածի պէս հաստատ հաւտալու պարտրկան ենք :

պ. Հրամմերես . մանաւանդ որ ալ աւելի հաստատ հաւտալու պարտրկան ենք, ինչու որ մեր աչքը կրնայ զմեզ խաբել, բայց Ա՞՞ծ ոչ կրնայ խաբել, և ոչ կրնայ խաբվիլ :

հ. Աստուծմէ եկեղեցւոյ յայտնութեամբ բա-

ներուն ամենքը գիտնալու և հաւտալու պարտական ենք :

դ. Հրամներես՝ պէտք է հաւտալ ընդհանրապէս ինչ որ եկեղեցին կը հաւտայ ու կը սորվեցընէ, և մասնաւորաբար պէտք է հաւտալ ու գիտնալ հաւատքին գոնէ գլխաւոր խորհուրդները :

հ. Որո՞նք են հաւատքին գլխաւոր խորհուրդները :

դ. Գլխաւորները ամենասք Նորրորդուն՝ Սարգեղութե՛ն ու Փրկագործութե՛ն խորհուրդներն են :

հ. Ինչո՞ւ համար ըսիր, որ պէտք է հաւտալ ու գիտնալ գոնէ աս գլխաւոր խորհուրդները :

դ. Ե՛նոր համար վասնզի ասոնք սորվելով եկեղեցւոյ սորվեցուցած ուրիշ ճշմարտութիւնները սորվելու անհոգ ըլլալու չէ :

հ. Ի՞նչպէս պէտք է զանոնք սորվիլ :

դ. Քրիստոնէականի երթալով, ու մեզի սորվեցընելու պաշտօն ունեցողներուն մը տիկ ընելով :

Սարգ-ու-ն իշխալ-ն պատմութիւնը :

Ը՛ծ մարդը բոլոր մարմնաւոր ստեղծվածներու վրա իշխան ու տէր գնելէն ետե՛ իրեն ալ ուղեց իմացընել, որ ինքն ալ Ը՛յ իշխանութե՛ր տակն է, որ իր ըս-

տեղծողին իր շնորհակալութիւնը ու հնազանդութիւնը ցուցունէ : Անոր համար իրեն ապսպրեց, որ դրախտի մէջ անկած ծառերուն ամմէնուն պտուղներէն ուտէ, մինակ բարւոյն ու չարին գիտութե՛ն ծառին պտղէն չուտէ, ու ասոր համար ալ իրեն մահ սպառնացաւ, թէ որ չի՛հնազանդի : Աւան հետագրգռութէ՛ փորձըվելով ան ծառին քովը գնաց, որուն պտուղը իրեն շատ գեղեցիկ ու համով երևցաւ. սատանան ալ մարդուն երջանկութե՛ն նախանձելով օձի կերպարան մտաւ՝ ու զինքը գրգռեց՝ որ անոր պտղէն ուտէ՛ խարելով զինքը, որ չէ՛ որ կըմեռնին, հապա կերած ատեննին Ա՛յ նման պիտոր ըլլան : Ինքը խարւիլցաւ՝ ան պտղէն կերաւ, յանցաւոր ինքը մինակ չիմնալու համար երկանն ալ տըվաւ, ան ալ անոր խօսքէն չելլալու համար Ա՛յ խօսքէն ելաւ ու կերաւ : Ալ երբոր Ա՛ծ յանդիմանեց զինքը աս ըրած անհնազանդութե՛ր համար՝ յանցանքը բոլոր Աւային վրա նետեց, ինչպէս Աւան ալ օձին վրայ ձգեց : Ա՛ն ատենը Ա՛ծ իրենց մեղացը պատիժ՝ զիրենք դրախտէն վռնտեց, զիրենք ու իրենց բոլոր հետագայ զաւկըները առջի վիճակին ամմէն պարգևներէն մերկացուց, ու իրենց կրից ապստամբութե՛ր՝ հիւանդու-

Թիւններու՝ մահուան՝ և ուրիշ պատիժներու տակ ձգեց : Մայց նոյն ատենը իրենց ողորմել ուզեց, ու խոստացաւ, որ օր մը կին մը պիտոր ըլլայ, որ օձին գլուխը ձգմէ՝ ու իրենց մեղքերուն փրկիչը ծնանի պիտոր : Եւ անձային փրկչին հաւտարով մենք քրիստոնեայ եղած ենք . Օհն . 4 :

Խրատ քրիստոնէին լախճանին վրա :

ա . Քրիստոնէին անունին ու վախճանին փառքը՝ պատիւը և օգուտը աշխրաբիս ամմէն փառքերէն պատիւներէն շատ վեր է . վասնզի ճշմարիտ քրիստոնէի վիճակի մէջը Մ. Ե որդիքներ՝ <sup>1)</sup> Քնի եղբարներ՝ ու ժառանգակիցներ, <sup>2)</sup> ու շողին սքին տաճարներ կըլլանք : Ինչ մեծ պատիւներ են ասոնք, որ աշխրաբիս մէջը Քնի ճշմարիտ հետևող ըլլալը զմեզ ասանկ մեծ փառքերու վերցուց :

բ . Քրիստոնէի ասանկ պատուաւոր անունը ու փառաւոր աստիճանը մեզ կը պարտաւորէ, որ զայր Մ. Ե ճշմարիտ որդիքներու սիրով սիրենք, ու հնազան-

1. Որպիսի սէր շնորհեաց մեզ շայր, զի որդիք Մատուծոյ կոչեսցուք . ա . Յ. Լ. 4 . 1 :
2. Ժառանգք Մատուծոյ՝ և ժառանգակիցք Քնի . շ. 17 :

դինք, Վսի վարդապետութիւններուն հետեւինք ու իր վարքին նմանելով զմեզ Հոգին սքին արժանի տաճար ընծայենք.<sup>1)</sup> որ գայ իրաւցընէ, ու բնակի մեր սիրտը՝ սք շնորհքներովը զմեզ լուսաւորելով:

Գ. Մայց որոնք որ իրենց չար կենցաղավարութիւնը ասանկ սք անունը ու աստիճանը կանարգեն, Մյ որդիութեւ տեղը մեղքերու գերի կըլլան՝ Վսի եղբայր ու ժառանգակից ըլլալնուն տեղը՝ դժոխքի յաւիտենական զոհ կըլլան, ու Հոգին սքին տաճար ըլլալու տեղը՝ սատանաներու բնակարան կըլլան<sup>2)</sup>:

### Օրինակ:

Մսկղէպիադէս անունով կոպաչտ դատաւորը սուրբ Սոմանոս մարտիրոսը անգթութիւնով չարչարած ատենը՝ տեսնելով սուրբ մարտիրոսը դատաւորինսըրտին խստութիւնը, որ չիճանչնար ու չէր խոստովանէր կոր քրիստոսի հաւատքին

1. Եթէ որ զտաճար Մտուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Մտուած. զի տաճար Մտուծոյ սուրբ է, որ էք դուք. Կոր. 4. 17:
2. Ոչ գիտէք՝ թէ որում պատրաստէք զանձինս ձեր ծառայս՝ ի հնազանդութիւն, ծառայ էք՝ որում հնազանդիքն, եթէ մեղաց՝ ի մահ, եւ եթէ ի հնազանդութիւն արդարութեան՝ ի կեանս. Կոր. 7. 16:



Ճշմարտութիւն, ուղեց հրաշքով մը զին-  
քը կակղցընել, կամ թէ որ անկէ ետքն  
ալ չուզեր ճանչնալ նէ՛ գոնէ անպատաս-  
խանի ընել զինքը. անոր համար իր չար-  
չարանքները մոռցած՝ դատաւորին ըսաւ.  
Թէ որ ինձի չես հաւտար նէ, աս տղուն  
հարցուր որ անչափ անմեղ է, որ իր բեր-  
նէն սուտ հանելու սորված չէ, ու կըլսես  
իմ ըսածներուս՝ ու իմ հաւատքիս ճշմար-  
տութիւն: Ատքը պզտիկ տղու մը նշան  
բրաւ, որն որ հոն տեղը իր քրիստոնեայ  
մօրը գիրկն էր, ու խօսիլ չէր կըրնար:  
Ըն ատենը տղան բարձր ձայնով ըսաւ,  
որ Քս ճշմարիտ Ա՛ճ է: Գատաւորը աս  
տեսնելով վախցաւ, բայց խոնարհիլ չու-  
զելով՝ տմարդուիով մը հարցուց տղուն՝  
Թէ ո՞վ ըսաւ քեզի ասիկայ. տղան պա-  
տասխան տրվաւ, որ ինձի իմ մայրս ը-  
սաւ, ու մօրս ալ Ա՛ճ ըսաւ: Ի՞նչ գեղե-  
ցիկ պատասխան՝ մեզի ալ հարցընողնե-  
րուն: Սեր հաւատքին ճշմարտութիւնները  
մեզի մեր մայրը հռովմէական սք եկեղե-  
ցին ըսաւ, անոր ալ Ա՛ճ ըսաւ. Սէկնէ-է-  
հասն ա. էրէս 3:



ԵՐԿՐՈՐԴ ԷՆՍԵՐ

Ահա՛սա՛հա՛հա՛ Երբորդու՛նի զու :

հ. Քանի՞ Մժ կայ :

ա. Մինակ մէկ Մժ կայ՝ ուրիշ չիկայ՝  
ու չիկրնար ըլլալ :

հ. Քանի՞ են անձային անձերը :

ա. Երեք են՝ շայր, Որդի ու շողի սք :

հ. շայր Մժ է :

ա. շրամներես Մժ է :

հ. Որդին Մժ է :

ա. շրամներես Մժ է :

հ. շողի սք Մժ է :

ա. շրամներես Մժ է :

հ. Աս երեք անձինքները մէկ տեղ ի՞նչ  
պէս կըսվին :

ա. Ամենասք Երբորդու՛նի կըսվին :

հ. Աս երեք անձերը մէկըմէկէ կըզա-  
նազանվի՞ն :

ա. շրամներես կըզանազանվին , անանկ  
որ շօր անձը Որդւոյ անձէն՝ ու շօր և  
Որդւոյ անձերը շողին սքին անձէն զատ  
են՝ ու կըզանազանվին :

հ. Անանկ է նէ երեք անձերը զատ զատ  
անձներ են :

ա. Ոչ երբէք՝ աս երեք անձերը մինակ  
մէկ Մժ են՝ որ ամենասք Երբորդու՛ն ան-  
հասանելի խորհուրդը կըսվի :

հ. Ա՞ս անձերուն մէջը յառաջը վերջը,  
մեծ ու սղտիկ կայ :

պ. Այ՛, երեքն ալ հաւասար 'ի յաւի-  
տենից՝ ամենակարող՝ ու կատարեալ են,  
մէջերնին յառաջը վերջը՝ մեծ ու սղտիկ  
չիկայ :

հ. Ինչո՞ւ համար հաւասար են :

պ. Ի՞նչո՞ր համար վասնզի մի և նոյն  
էութի՛ն և անութի՛ն ունին :

հ. Ի՞նչո՞ր խորհուրդը մտքի դէմ չէ :

պ. Այ՛, սա ալ՝ ուրիշ խորհուրդներն  
ալ մեր մտքէն վեր են՝ բայց դէմ չեն :

հ. Մտքի դէմ չէ, որ երեքը մինակ մէկ  
ընէ, ու աւելի չընէ :

պ. Այ՛, ան ատենը մտքի դէմ կըլլար,  
թէ որ երեք անձերը մէկ անձ ընելու ը-  
լային, բայց երեք անձերու մէկ ընութի՛ն  
մէկ էութի՛ն ու մէկ անութի՛ն ունենալով՝  
մէկ Մ՞ծ ըլլալը մտքի դէմ չէ :

հ. Մեր միտքը կրնայ իմանալ սա բա-  
նիս ինչոր ըլլալը :

պ. Այ՛, վասնզի մեր միտքը սահմանա-  
ւոր է՝ և Մ՞ծ անսահման և անհասանելի  
է, բայց պէտք է՝ որ հաւտանք, վասնզի  
ինքը որ ճշմարտութի՛ն է, սասնկ յայտ-  
ներ է մեզի :

Տաճիկնի ժողովն ու երէւմանց  
պատմութիւնը :

Նաբուգոդոնոսոր թագաւորը Տարի-  
լոն քաղքի մէջ վաթսուն կանգուն բար-  
ձրութիով ոսկի արձան մը շինել տրվաւ,  
ու թագաւորութենը բոլոր մեծերուն ու  
ժողովուրդին հրամայեց, որ ամէնը ան  
արձանին երկրպագութիւն ընեն, ու աս հրա-  
մանին չհնազանդողները վառած փռան  
մէջ նետվին : Արեք իսրայէլացի պատա-  
նիներ՝ Ադրաք՝ Սիսաք՝ ու Աբեղնագով  
անունով՝ որ թագաւորին կուսակազմ պաշ-  
տօնատէրներու մէջը ճշմարիտ ԱՅ երկր-  
պագութենը մէջ հաւատարիմ մնացեր էին,  
չուզեցին ան արձանին երկրպագութիւն  
ընել : Թագաւորը ասոնք առջևը բերել  
տրվաւ, ու սաստիկ բարկութիով կրպատ-  
ժեմ զձեզ ըսաւ, թէ որ իմ հրամանիս  
չէք հնազանդիր, և ո՞վ է ան Աճը, որ  
զձեզ իմ ձեռքէս խալըսէ : Աիւրաւ կր-  
նայ, ըսին իրեն՝ ան ճշմարիտ Աճը՝ որն  
որ մենք կրպաշտենք, զմեզ քու ձեռքէդ  
խալըսել, թէ որ ուզելու ըլլայ . բայց  
գիտնաս ո՞վ թագաւոր, որ մենք ան մեր  
Աստուծակէն ՚ի զատ ուրիշ ԱՅ երկրպա-  
գութիւն չենք ըներ : Նաբուգոդոնոսորը  
սաստիկ բարկութիով բռնկած՝ հրամայ-  
եց փուռը հասարակ վառածէն եօթն-



ինք իրմէն եղօղ էակ մը է՝ ու ամմէն էակներու առջի աղբիւրը ու պատճառը .<sup>1)</sup> :

Բ. Օձ մեր կարողութեւնը հասածին չափ ճանչնալու համար պէտք է, որ աչքերնիս մտադրութիւնով աշխարհի վրա պրտըսցընենք՝ օգի գեղեցիկ թռչունները՝ ու երկինքի փառաւոր աստեղները, երկրի տեսակ տեսակ կենդանիները, ազնիւ պրտուղները, գեղեցիկ ծաղիկները ու ծովու անթիւ ձուկերը ու ճճմունքները աչքէ անցունենք : Ինչ որ զուարճալի՝ զարմանալի՝ ու սիրելի կրտեսնենք նէ, ամմէնն ալ իրենցմէ կատարելութի մը չունին, անոնց ամմէն կատարելիները Մատուծմէնն, ու Մ.Յ անսահման իմաստութիւնը և ամենակարողութիւնը կը պատմեն .<sup>2)</sup> : Ինքը անսահման եղանակաւ ու առանց մէկ պակսութեան ամմէն կատարելութիւնները ունի, ու ամմէն ստեղծվածներու մասնաւոր կատարելութիւնները ինքը պարզեւած է, անոնցմով ղինքը մեզի ճանչցընելու համար :

Գ. Օձնածնիս պէս չենք կրնար անանկ

---

Թեան նորա ոչ գոյ չափ . Սալմ . 67 . 3 :

1. Ես եմ որ էն . Ելմ . 7 . 14 :

2. Ընդհանրութիւն նորա ի սկզբանէ աշխարհի, արարածովքս իմացեալ տեսանին . այսինքն է՝ մըշտ արմընաւորութիւն և զօրութիւն և մեծութիւն նորա . Սալմ . 100 . 20 :

շուտով Մյ մեծութիւն ճանչնալու ետեւէ  
 ըլլալ. բայց բանավարութիւնիս բացվածին  
 պէս, ամմէն արարածներէն աւելի զինքը  
 ճանչնալու՝ պատվելու ու սիրելու պար-  
 տրկան ենք.<sup>1)</sup> :

( ) Ը Ն Ի Վ Ի :

Սք օգոստինոսը ամենասք Արքորդուն  
 խորհուրդին վրա գիրք մը գրել ուղեւով  
 սկսաւ Վս անհասանելի խորհուրդին վրա  
 մտածել, անգամ մը աս մտածմունքով  
 ծովին քովը պտրտելու ատենը գեղեցիկ  
 մանուկ մը տեսաւ, որ ծովին մօտ պղտիկ  
 ծակ մը փորած՝ ձեռքը արծրթէ դալով  
 մը կաշխատէր կոր՝ ծովէն ջուր առնելով  
 անպղտիկ ծակին մէջը լեցրնելով : Օ ըւար-  
 ճանալով սքը կեցաւ հոն տեղը աս հրեշ-  
 տակային մանուկին ըրածին նայելու հա-  
 մար, որ ան գործքի վրա մեծ ջանքով կաշ-  
 խատէր կոր : Ե ատ առնն սիրով ու զար-  
 մանալով նայելէն ետքը՝ տեսաւ՝ որ մա-  
 նուկը հոգնեցաւ նէ, անուշ կերպով իրեն  
 հարցուց, որ ատ ըրածը ի՞նչ պիտոր ըլ-  
 լայ : Մանուկը ծանրութիւն մը պատասխաւն  
 տրվաւ, որ կուզեմ աս ծովին բոլոր ջուրը

1. Փառաւորոզք զՏէր . . . . օրհնեցէք զՏէր՝ բար-  
 ձրացուցէք զնա՝ որքան կարէք, զի մեծագոյն  
 է քան զամ գովութիւն. Լուկ. Ի. 32. 33 :



կրել՝ աս իմ փորած ծակիս մէջը լեցունել :  
 ( ) գոստինոսը աս տղայական՝ բայց խորհրդաւոր պատասխանին վրա քթին տակէն խնտալով՝ ըսաւ մանուկին . ի՞նչպէս կրնաս տղաս աս խորունկ ծովուն ատչափ ջուրը աս պղաիկ ծակի մէջ լեցընել , պարաստեղը կաշխատիս կոր մանուկ անկարելի բանը փործելու համար : Արուն երկնային մանուկը շուտ մը պատրաստած պատասխան տրվաւ . ինծի աւելի կարելի է աս խորունկ ծովուն բոլոր ջուրը հանել՝ ու աս ծակի մէջ լեցունելը , քան որ քեզի ըմբռնել ու մեկնել քու տկար մտքովդ ամենասք Արրորդութե՛ն բոլոր անհասանելի խորհուրդը : Մանուկը՝ որ հրեշտակ էր , աս ըսածինպէս աներեւոյթ եղաւ . **Լ. Կր . ԳԼ . 341 :**

ԵՐՐՈՐԴ ԼԱՄԱՐ

Սարգեղո-լէ ու Իրիագործո-լէ Խորհո-րդ-նէրո- վրա :

Կ . Մենասք Արրորդութե՛ն երեք անձերու մէջէն ո՞րը մեզի համար մարդ եղաւ :

Կ . Արկրորդ անձը՝ Արդին Մ՛ծ :

Կ . Սարգ ըլլալը ի՞նչ բան է :

Կ . Սարմին և հոգի առնուլ և մեզի նման մարդ ըլլալ է :

հ. Ո՞ւր տեղ մարմին ու հոգի առաւ  
Որդին Աստուծոյ:

ա. Ա՞ն կոյս Սարիամայ անարատ ար-  
դանտին մէջ՝ Հոգւոյն սրբ զօրութիւր:

հ. Ո՞ր օր մարդ եղաւ Որդին Ա՛յ:

ա. Սարտի քսանըհինկին՝ աւետման օրը:

հ. Վանի՞ սմիս ետքը ծնաւ:

ա. Ինք ամիս:

հ. Ո՞ր օր ծնաւ:

ա. Դեկտեմբերի քսանըհինկին՝ ծնըն-  
դեան օրը:

հ. Ո՞ւր տեղ ծնաւ:

ա. Ինթէհէմ քաղաքը սյրի (մաղա-  
րայի) մը մէջ, որ հոն անբան կենդանի-  
ներ ալ կային:

հ. Անունը ի՞նչ դրին:

ա. Յօ դրին՝ որ Վսօ ալ կոչվեցաւ:

հ. Յս Վսօ քանի՞ բնութի ունի:

ա. Երկու բնութիւն ունի, այսինքն ան-  
ային ու մարդկային:

հ. Յս Վսօ ի՞նչպէս երկու բնութի ունի:

ա. Սրբի ինքը ճշմարիտ Ա՛ծ՝ ու միան-  
գամայն ճշմարիտ մարդ է:

հ. Յս Վսօ քանի՞ անձ ունի:

ա. Սինակ մէկ անձ ունի, որ Որդւոյն  
Ա՛յ անձային անձն է:

հ. Ինչո՞ւ մարդ եղաւ Որդին Ա՛յ:

ա. Օմեղ մեղքին ու դժոխքի պատիժ-

ներէն աղատելու՝ և յաւիտենական կեանքի արժանի ընելու համար:

հ. Ի՞նչպէս փրկեց զմեզ Յս Բ.:

ա. Իբ ամենասք չարչարանքներովը ու մահաւամբը:

հ. Ո՞ր բնութքը չարչարվեցաւ ու մեռաւ:

ա. Սինակ մարդկային բնութքը, վնդի անձային բնութքը անչարչարելի ու անմահ է:

հ. Ի՞նչ է Սարգեղութե՛ր խորհուրդը:

ա. Որդւոյն Լ.Յ խորհուրդն է, որ մեզի համար մարդ եղաւ:

հ. Ի՞նչ է փրկագործութե՛ր խորհուրդը:

ա. Լ.Ծ ու մարդ Յս Բ.սի խորհուրդն է:

է. որ մեր մեղացը համար մարմնովը խաչին վրա մեռաւ:

Պէտքոս առաքելուն պաճարին դուռը բացած հրաշխին պատմութիւնը:

Սճրմէն կաղ ծնած աղքատ մարդ մը, որ զինքը ամմէն օր Լըրուսաղէմայ տաճարին դուռը կրբերէին ու մուրալու համար կրդնէին, սք Պետրոս ու Յովհաննէս առաքեալները տեսնելով տաճարը մտածատեննին՝ իրենցմէ ողորմութի ուղեց: Պետրոս առաքեալը իրեն նայելով ըսաւ. ոս կի արծաթ չունիմ, բայց ինչ որ ունիմ նէ՝ տամ քեզի. Յս նաղովըեցւոյն անու նովը ստք ել, ու քալէ. աս ըսելով ձեռ-

քէն բռնեց՝ ոտքի վրա վերցուց, ան բո-  
ւազի մէջ ոտվըները վերէն ՚ի վար առող-  
ջացան, որ վաղվաւելով ու Մ.Յ փառք  
տալով տաճարը մտաւ: Տողոր ժողո-  
վուրդը՝ որ զինքը շատոնց կրճանչնային,  
երբոր տեսան՝ որ ասիկայ կը քալէր՝ ու սք  
Պետրոսին ու սք Յովհաննէսին հետ կը  
պըտըտէր կոր, բազմուիով վազեցին, ու  
կըզարմանային: Մ.ն ատենը սք Պետրոս  
ձայնը բարձրցուց, ու ան բազմութե քա-  
րողեց, որ ասանկ երևելի հրաշք մը իր ան-  
ձին կարողուն գործքը չէր, հապա մինակ  
Յսի սք անվան զօրութեը գործքն էր, և  
ասիկայ այնպիսի հոգւով խօսեցաւ, որ ան  
օրը հինկ հազար հոգի Վսի սք հաւատքը  
դարձան: Մ.ս տեսնելով քահանայապետ-  
ները՝ ու տաճարին իշխանները վրանին  
հասան, ու փոխանակ ժողովուրդին պէս  
իրենք ալ սք Պետրոսին խօսքերէն բարի  
պտուղ հանելու՝ զիրենք բանտ դրին: Ար-  
կրորդ օրը առտըւանց երկուքն ալ յան-  
դիմանելու համար իրենց առջևը բերել  
տըվին: Մ.ն ատենը Պետրոս առաքեալ Հո-  
ղին սքով լեցվեցաւ, ու Յսի անուանը  
փառքը իրենց անանկ զօրաւոր խօսքերով  
աւետարանեց, որ ոչ եղած հրաշքին  
ճշմարտուիը կրցան ուրանալ, և ոչ իրեն  
ըսածներուն կրցան պատասխան տալ, բա-

ւական սեպեցին իրենց սպառնալով ապս-  
պրելը, որ ալ չհրարողեն, ու արձրկեցին .  
Գործ . Գ . Դ :

Խորհրդ Յն անուանի անան իտապը լրտ :

ա . Յն անունը յաւիտենական Հայրը  
տրվաւ իր Որդւոյն .<sup>1)</sup> , որ ինչպէս կրտէ ա-  
ռաքեալը՝ ուրիշ ամմէն անուններէն վեր  
է .<sup>2)</sup> , անանկ որ՝ աս անունը իր փրկչութե  
ամմէն զօրութիները մեծութիները կրպա-  
րունակէ : Ըս անունը հրեշտակները կը-  
յարգեն , սքերը կըփառաւորեն , վնդի  
յաւիտենական երանութե՝ ու փրկութե  
դուռը աս անունով բացվեցաւ իրենց<sup>3)</sup> :

Բ . Ըս անունս է դժբաղդութիներու  
մէջ մեր մխիթարութիւր , փորձութիներ  
րու մէջ մեր զօրութիւր , ինկած ատեննիս  
ասիկայ կրնայ զմեզ վերցընել , ու բան մը  
չիկայ , որ աս անունով չիկարենանք ձեռք  
բերելու .<sup>4)</sup> , ասով է ամմէն աղգերուն

1. Առեկեցես զանուն նորա Յիսուս , զի նա փրկ-  
կեսցէ զժողովուրդ իւր ՚ի մեղաց իւրեանց .  
Մատթ . ա . 21 :
2. Ընորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան ՚զա-  
մենայն անուն . Փնկ . Բ . 9 :
3. Ոչ անուն այլ գոյ ՚ի ներքոյ երկնից սուեալ  
ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ .  
Գործ . Դ . 12 :
4. Գոր ինչ խնդրիցեք յանուն իմ , արարից զայն .  
Յովն . Ժ . 13 :

փրկութիւնը, որոնց որ սք աւետարանը քարոզեցաւ :

Գ. Աս անունս սատանաներու տոսկալի վախ ու զինքը ճանչնալ չուզողներու սատակ շիտթութի կուտայ՝ ու չար քրիստոնեաները կրդատապարտէ, որ զինքը ուրիշ բանի համար չիճանչցան, բայց եթէ իրենց չար գործքերովը անարդելու և անպատելու համար, բայց աս անունը միշտ ու ամենուն յարդելի ու երկրպագելի է, ու միշտ ասանկ կըմնայ. <sup>1)</sup> :

### ( ) Ինչո՞ւ :

Աք Ֆեռնարգոսը Աիլան գնացնէ՝ առջևը դիւահար կին մը բերին, որ դէր իրմէն հանէ, ինչպէս իր ջերմեռանդ աղօթքին զօրութիւնով շատ դիւահարներ ազատած էր : Աք Ֆեռնարգոսը սատանային հրամայեց, որ ան կնկանէ ելլէ, սատանան բաղմոսութե առջևը պատասխան տրվաւ իրեն, որ սիրով կելլէի աս պառվէն, բայց տէրը չուզեր՝ որ ելլեմ, սքը իրեն հարցուց, որ ո՞վ է ան տէրը՝ որ չուզէր, սատանան պատասխան տրվաւ, անիկայ՝ որ ամենուն ստեղծօղն է : Աքը հարցուց, որ

1. Յանունն Յնի Քնի ամենայն ծունր կրկնեցի՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամտականաց. Փիլիպ. Բ. 10 :



զինքը տեսած ունի՞, սատանան ըսաւ .  
 փառքերու մէջը տեսած եմ զինքը : Աքը  
 ըսաւ . կուզե՞ս հոն տեղը նորէն երթալ .  
 սատանան անհամ ու անշնորհք ծիծաղե-  
 լով մը ըսաւ . հիմայ շատ ուշ է , ալ յոյս  
 չիկայ : Ըն ատենը սք Նեոնարդոսը ըսաւ .  
 ուզի գիտնաս՝ որ Յսն ալ քու Տրդ է , ա-  
 նոր ամենասք անուսովը կը հրամայեմ քե-  
 ղի , որ ելլես , ու ազատ թողուս իր ստեղծ-  
 վածը : Սատանան անմիջապէս պօռա-  
 լով ու տրանջելով , որ անիկայ զարհու-  
 րելի է իրեն , որ զինքը կը բռնադատէ կոր  
 ելլալու , ելաւ , ու կընիկը ազատեցաւ .  
 Հայելի օրինակաց . զան . Ը :

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱՐ

Աք խաչին նշանին վրա :

հ . Քրիստոնէին նշանը ո՞րն է :

պ . Աք խաչին նշանն է :

հ . Ի՞նչպէս կը խաչակնքես զքեզ :

պ . Ըջ ձեռքս ճակատս տանելով՝ ան-  
 կէ կուրծքիս տակը՝ ետքը ձախ ու աջ  
 ուսս՝ ու ըսելով , Յանուս Հօր՝ ե Որդայ՝  
 ե Հոգայն սք . ամէն :

հ . Աք խաչը մեզի ի՞նչ կը սորվեցնէ :

պ . Գլխաւորաբար մեր հաւատքին եր-  
 կու մեծ խորհուրդները կը սորվեցընէ , այ-  
 սինքն՝ Արրորդութեն ու փրկագործութեն :

հ. Ամենասքեւ Արրորդութեան խորհուրդը  
խնչպէս կըսորվեցրնէ :

դ. Աս խօսքերը ըսելով . Յանուհ Ըօր՝  
և Որդւոյ՝ և Ըգւոյն «Էյ :

հ. Վրկագործութեան խորհուրդը խնչ-  
պէս կըսորվեցրնէ :

դ. Այլ խաչին նշանովը զմեզ խաչակրն-  
քելով , որուն վրա Յն Քն մեր վրկութեք  
համար մեռաւ , որով նաև Այ Որդւոյն  
Սարգեղութեք խորհուրդը կը յայտնըլի :

հ. Արք կըխաչակնքես զքեզ :

դ. Առտըանց անկողինէն ելածիս պէս ,  
իրիկունը անկողին մտնելու ատենս , ամմէն  
անդամ աղօթքի սկսելէն յառաջ՝ ու լմննա-  
լէն ետքը , կերակուրէն յառաջ՝ ու ետքը ,  
ու օրվան մէջ գլխաւոր գործքեր սկսած  
ատենս :

հ. Ի՞նչու ասանկ շատ կըխաչակնքես  
զքեզ :

դ. Անոր համար , որ ամմէն գործքերս  
Այ օրհնութիւնը ըլլան , խաչին սորվեցրցած  
խորհուրդները միտքս աղէկ տպաւորվին ,  
ու սատանայի փորձութիւններու դէմ՝ միշտ  
զէնքով գտնըլիմ :

հ. Ի՞նչ կերպով խաչակնքելու է զմեզ :

դ. Սեծ յարգութիւնով՝ ջերմեռանդու-  
թիւով ու միտ դնելով :

Մովսէսի պնդելն օրին պատահալիս Ընդ :

Ի սրայէլացիները Ազիպտոսէն ելլալէն վերջը ճամբորդութեան երկայնութեն ձանձրանալով սկսան Մովսէս մարգարէին ու Ընդ դէմ տրտնջել՝ Ազիպտոս դառնալ ուղեցին, որ ան տեղաց գերուէ Ընդ անչափ հրաշքներով ազատած էր զիրենք : Ընդ ալ իրենց ասանկ ապերախտութեան վրա բարկացաւ՝ իրենց չար օձեր խաւրեց, որ իրենցմէ շատ մարդիկներ կըխայթէին ու կըմեռցնէին : Ապերախտ իսրայէլացիները աս պատիժը տեսնելով Մովսէսին գացին՝ իրենց մեղանջելը խոստովանեցան՝ ու իրեն աղաչեցին, որ Ընդ աղօթէ՝ որ զիրենք աս պատժէն ազատէ : Մովսէս Ընդ աղօթեց, Ընդ ալ իրեն հրամայեց, որ պղնձէ օձ մը շինէ, ու բարձր փայտի վրա ժողովուրդին դիմացը տնկէ, որպէս զի որոնք որ ան օձերէն կըվիրաւորվին նէ, աչքերնին վերցընեն՝ ան պղնձէ օձին նային, որ բժշկըվին : Մովսէս Ընդ հրամանը կատարեց, ու որոնք որ ան օձին նայեցան նէ, ամմէնքը իրենց վերքերէն ազատեցան, Ընդ աս : Յն աւետարանի մէջ աս օրինակը իր վրա բերաւ, ըսելով . ինչպէս Մովսէս օձը բարձրցուց անապատի մէջը՝ անանկ ինքն ալ խաչին վրա պիտոր բար-

ձրնայ՝ ան վէրքերը բժշկելու համար, որոնք որ դժոխային օձը մեղքերով մեր հոգւոյն կը պատճառէ. Յով. Գ. 14:

### Խորատ խաչին լրտ:

ա. Վն իր սք խաչովը յաղթեց մեղաց՝ աշխրբին ու սատանային, խաչին հնազանդութիովը մեղքին անհնազանդութեանը համար ՄԾ Զօրը հատուցումը ներով, խաչին խոնարհութիովը աշխրբին հպարտութիւր ոտքի տակ առնելով.<sup>1)</sup> ու խաչին տանջանքներովը դժոխքին պատիժները քաւելով, որոնց արժանի եղած էինք.<sup>2)</sup>:

բ. Մնանկ է նէ՝ սք խաչին նշանը աշխարհասէր մարդիկներուն դատապարտուի է, որոնք որ ՄԾ պատւիրաններու չիհնազանդելու սրտով՝ հպարտութե հոգիով ու մէկ հեշտուն մէջ թաթխւած մարմնով անարժանարար իրենք զիրենք կըխաչակնքեն.<sup>3)</sup>:

գ. Մտոր ներհակը սուրբ խաչին նշանը աշխրբիս խաբեբայ զբօսանքներէն հեռու

1. Խոնարհեցոյց զանձն. լեալ հնազանդ մահու չափ՝ և մահու խաչի. Փիլ. Գ. Բ. 8:

2. Մրար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս. Առ. ա. 20:

3. Թշնամեաց խաչին Քրիստոսի. Փիլ. Գ. Բ. 18:

կեցող քրիստոնէին յոյսն է, խոնարհ  
քրիստոնէին փառքը ու պարծանքը, համ-  
բերող ու մահացուցեալ քրիստոնէին մը-  
խիթարանքն է . <sup>1)</sup> :

(Օրինակ :

Շատ ազահ մարդ մը աւելի հարրս-  
տուէ հասնելու համար իր հոգին գարշելի  
կախարդութե՛ր ու սատանայի մատնած էր :  
Ասիկայ պզտիկ տղայ մը ունէր, որ վտան-  
գաւոր հիւանդուէ՛ մը խալըսելուն համար  
բարեպաշտ մայրը զինքը Ա.Յ ընծայած՝  
ու կրօնաւորի զգեստ ալ հագցուցած էր  
իրեն, որ ետքը եթէ մեծնալու ըլլայնէ՛  
ուխտ ընէ : Սատանան աս անմեղ մանուկն  
ալ իր իշխանութե՛րը տակը ձգելու համար  
հօրը խրատ տրվաւ, որ թէ որ գետնի  
տակէն գանձ գտնել ու հարրստնալ կու-  
ղէնէ, իր տղան գետնի տակ սյրի մը մէջ  
տանի, ու հոն իրեն տայ՝ անոր վր իր չար  
կամքը կատարելու համար, որ զանիկայ  
պիտոր մեռցունէր : Չար կախարգը հա-  
րրստութե՛ր բաղձանքովը տարաւ տղան  
սատանային ըսած տեղը . բայց իր կա-  
խարդութի՛ովը ինչ որ ըրաւ նէ, սատա-  
նան չիկրցաւ տղուն մօտենալ, իր չար ու

1. Քաւ լիցի ինձ պարծել՝ բայց միայն ՚ի խաչն  
Տեան մերոյ Յնի Քնի . Գալա . 2 . 14 :

անգուժ կամքը կատարելու համար . հայ-  
րը կըզարմանար կոր իր ազահուժն չար  
բաղձանքին չկաջողելուն վրա : Ան ա-  
տենը սատանան իրեն ըսաւ , որ տղուդ  
բան մը չենք կրնար ընել , վնդի զինքը  
անանկ զգեստով բերիր ինձի , որ ներսի  
գին կարած խաչի նշաններ կան , որ իմ  
գործքերս կըխափանեն կոր , հանէ աս  
զգեստը վրայէն : Հայրը շուտ մը հանեց  
տղուն զգեստը , բայց անով ալ բաղձան-  
քին չիհասաւ , անոր համար սկսաւ տրտ-  
միլ ու ցաւիլ : Մէյ մը ալ գետնի տա-  
կէն տխուր ձայն մը եկաւ , որ կըսէր .  
ըրէ ինչ որ կուզեսնէ , դանձը չես կըրնար  
գտնել , վնդի նոր արգելք մը ալ կապեց  
զմեզ . մանուկին մարմնոյն ալ չենք կրնար  
գաչիլ , վնդի Այ ընծայված է . ասան-  
կով սք խաչին նշանը աղատեց աս մանու-  
կը ասանկ մեծ վտանգէն : Սք Լ, Գրէ՛մ ասո-  
րին իսպառու՛ առ-բէ՛ Յուրեանոս ճգնաւորին  
Չարքին Տղը :

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Ի Հ Ա Մ Ա Ր

Հաստատութիւն Չրա :

Է. Ինչ բանով կրնանք սորվիլ հաւատ-  
քի հարկաւոր մասերը , որոնք որ քրիս-  
տոնեան պարտական է սորվելու :

Ը. Հաւատամքին խօսքերովն՝ որ Վնի



տասվերկու առաքեալները շարագրեցին ,  
ու եկեղեցին սբ ժողովքներու մէջ վրան  
ատեն ատեն հարկաւոր եղած մեկնութի-  
ները աւելցընելով ճօխացուց :

հ. Արբ շարագրեցին առաքեալները ըզ-  
հաւատամքը :

ող. Քնի սուրբ աւետարանը բոլոր աշ-  
խարհք քարոզելու երթալէն՝ ու մէկզմէ-  
կէ զատվելէն յառաջ :

հ. Ինչո՞ւ շարագրեցին հաւատամքը :

ող. Ընոր համար , որ բոլոր քրիստո-  
նեաները հաւատքին գլխաւոր մասունք-  
ները սորվին , ու միօրինակ հաւատք մը  
ունենան :

հ. Արբ աւելցուց եկեղեցին հաւատամ-  
քին վրա առ մեկնութիւնները :

ող. 'Աիկիոյ' Աոստանդնուպօլսոյ և ու-  
րիշ ժողովքներու մէջ՝ ամմէն մէկ ատեն  
եղած հերետիկոսութիւններու դէմ հաւա-  
տամքին մասերուն մէջը զօրութիւն գտնը-  
ված նշանակութիւնները յայտնի բառերով  
կրմեկնէր , ու կաւելցուներ , ամմէն քրիս-  
տոնեաներու վրա պարտք դնելով , որ ա-  
նանկ ըսեն և անանկ հաւտան :

հ. Ըս հաւատամքը ամմէն մարդ պար-  
տրկա՞ն է գիտնալու :

ող. Ըրամերես , ամմէն մարդ ջանալու է  
բերան սորվելու , ու շատանգամ ըսելու :

հ. Որն է առաքեալներու շինած հաւատամքը :

ող. 1. Հաւատամ յԱ՛ճ Հայրն ամենակարող՝ յարարիչ երկնի և երկի: 2. Եւ 'ի մի Տէր մեր Յօ՛ւ Բօ՛ս յԱրդի նր միածին: 3. Որ յղացաւ 'ի Հոգւոյն սբյ, և ծնաւ 'ի Սարիամայ կուսէն: 4. Չարչարեցաւ ընդ պոնտացւով Պիղատոսիւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ: 5. Եւ 'ի դժոխս՝ յերրորդ աւուր յարեաւ 'ի մեռելոց: 6. Համբարձաւ յերկինս, նստաւ ընդ աջմէ Լստուծոյ Հօր ամենակարողի: 7. Ուստի դալոց է 'ի դատել զկենդանիս և զմեռեալս: 8. Հաւատամ 'ի Հոգի սբ: 9. Ի սբ կաթուղիկէ եկեղեցի, 'ի հաղորդուի սբց: 10. Ի թողուի մեղաց: 11. Ի յարութի մարմնոց: 12. Ի կեանս յաւիտենականս, ամէն:

հ. Որն է ան եկեղեցւոյն ճախացուցած հաւատամքը :

ող. 1. Հաւատամք 'ի մի Ա՛ճ Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից: 2. Եւ 'ի մի Տէր մեր Յօ՛ւ Բօ՛ս յԱրդին Ա՛յ, ծնեալն Ա՛յ Հօրէ միածին, նախ քան զամ յաւիտեանս: Ա՛ճ Ա՛յ, լոյս 'ի լուսոյ, Ա՛ճ ճշմարիտ, Ա՛յ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած: Եւ 'ի նր համադոյակից Հօր,

որով ամ ինչ եղև յերկինս և ՚ի վերայ  
երկրի, երևելիք և աներևոյթք: 3. Ար  
յաղագս մեր մարդկան և վն մերոյ փրո-  
կութե իջեալ ՚ի յերկնից, մարմնացաւ,  
մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Աս-  
րիամայ սքեյ կուսէն Հոգւովն սքել: Արով  
էառ մարմին, հոգի, միտ և զամ որ ինչ  
է ՚ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք:  
4. Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, 5.  
յերրորդ աւուր յարուցեալ, 6. ելեալ  
յերկինս՝ նովին մարմնովն՝ նստաւ բնդաջ-  
մէ Հօր: 7. Վալոց է նովին մարմնովն և  
փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և ըզ-  
մեռեալս, որոյ թագաւորութենն ոչ գոյ  
վախճան: 8. Հաւատամք և ՚ի սքե Հոգին  
յանեղն և ՚ի կատարեալն, որ ՚ի Հօրէ  
և յԱրդւոյ բղխի: Ար խօսեցաւ յօրէնս  
և ՚ի մարգարէս և յաւետարանս. որ էջն  
՚ի յորդանան, քարոզեաց զառաքեալն,  
և բնակեցաւ ՚ի սքսն: 9. Հաւատամք ՚ի  
մի միայն յբնդհանրական և յառաքելա-  
կան սքե եկեղեցի: 10. Ի մի մկրտութի,  
յապաշխարութի, ՚ի քաւութի և ՚ի թո-  
ղութի մեղաց: 11. Ի յարուի մեռելոց, ՚ի  
դատաստանսն յաւիտենից հոգւոց և մարմ-  
նոց: 12. Յարքայութի երկնից, և ՚ի  
կեանսն յաւիտենականս. ամէն:  
հ. Վանի՛ մաս ունի հաւատամքը:

դ. Տասններկու մաս ունի :

է. Աս ճշմարտութիւնները սրտիւ հաւատալը բաւական է :

դ. Չէ, պարտրկան ենք բերնով ալ խոստովանելու, և ասոնց ամէն մէկը չուրանալու. համար պէտք եղած ատենը ամէն տեսակ չարչարանքները քաշելու ու մահն ալ յանձն առնելու :

Աբրահամին հասարակին պատմութիւնը :

Օարմանալի է հին օրինաց սքերուն սքանչելի հաւատքին գործքերը որ Պօղոս առաքեալն ալ իր բերած օրինակներու մէջը կը պատմէ : Հաւատքով կըսէ, Աբրահամը Ա՛յ հրամանի համար իր ծնողաց երկիրները թողուց, ու իր չիզիտցած երկիրները բնակելու գնաց, շատ տարիներ օտարութիւնով երկրէ երկիր պտըտեցաւ՝ վերանի տակ, ու Աստուծմէ իր բնակութիւնը մէկ հաստատ տեղմը սպասելով : Հաւատքով էր, որ տարիքը շատ անցած ծերացած ըլլալովը Ա՛յ խոստումին հաւտաց, որ իրմէն ու իր ընկերը ամուլ Սարայէն զաւակ մը պիտոր ծնանի, ու անով իր զաւկրները պիտոր շատնան՝ երկինքի աստեղներէն ու ծովու աւազներէն աւելի պիտի ըլլան : Հաւատքով էր՝ որ երբոր Ա՛ծ իրեն հրամայեց, որ ան խոստումով

ծնած մէկ հատիկ զաւակը իրէն զոհէ, առանց երկբայութեան հնազանդելու պատրաստեցաւ, յուսալով՝ որ Մ<sup>ծ</sup> զանիկայ կամ նորէն պիտոր յարուցանէ, կամ անոր կենացը պահպանութեան համար ուրիշ ճարմը պիտոր հոգայ. ինչպէս հոգաց ալ. առնանկ որ Մ<sup>բ</sup>բահամ իր գերազանց ու փորձըված հաւատքովը բոլոր հաւատացողներու հայր կոչվելու արժանի եղաւ. Ն<sup>բ</sup>բ. Ժ. 3 :

Խրատ հաւատքի վրա :

« . Հաւատքը թէպէտ իր խորհուրդներովը մութ է՝ մարդկային խելք չիհասնիր . <sup>1)</sup> . բայց հաւատալու համար շատ հաստատուն հիմ յայտնի ցոյցեր, ու պատճառներ ունի, որ ասոնք են. բոլոր մարդարէութիւններուն անսխալ կատարվիլը . Յսի ու իր առաքեալներու գործած անբաւ զարմանալու հրաշքները . անթիւ մարտիրոսներու սք հաւատքին խոստովանութեանը համար քաշած դառն տանջանքները ու թափած արիւնները . բոլոր իմաստուն ու սք մարդիկներու արժանահաւատ վկայութիւնները . ու իր անձային օգնութիւններով զօրացուցած հաստատու-

1. Օ՛ր նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երեւին. Ն<sup>բ</sup>բ. Ժ. 1 :

Թիւնը բոլոր մարդկային կիրքերուն՝ աշխարհի՝ ու դժոխային իշխանութիւններուն պատերազմերուն դէմ <sup>1)</sup> :

Բ. Անհաւատութե՛ն հիմն ալ նախ՝ հողւոյն հպարտութիւն է , որ չուզեր հաւտալ ան բանին , որուն իր չափաւոր ու տկար խելքը չի հասնիր <sup>2)</sup> . չի մտածեր ալ , որ անով ինքը իրեն դէմ կը դառնայ , վնդի թէ որ հաւատքի խորհուրդներուն մարդու խելքը հասնելու ըլլար նէ , ան ատենը հաւատք չէր ըլլար , հաւտալու բան չէր ըլլար , ու հաւտալու համար խոստացված արքայութե՛ն վարձքն ալ չէր մնար : Արկրորդ՝ գլխաւորաբար սրտին չարութիւն է , որ անոր համար հաւատքը կը մերժէ , վնդի անիկայ իր մոլորութիւները կը դատապարտէ <sup>3)</sup> :

Գ. Հաւատքը՝ որ ասանկ հաստատուն հիմերու վրա հաստատված է՝ ու անհաւատութե՛ն հիմերովն ալ ցուցված է , ինքն ալ արդարանալուն՝ ու բոլոր քրիստոնէական

---

2. Այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի , հաւատքն մեր . . . Յովն . Ի . 4 :

2. Չ'իմրդ կարէք հաւատալ , զի զփառս 'ի միմեանց անուր . . . Յովն . Ի . 44 :

3. Ասաց անզգամն 'ի սրտի իւրում . թէ ոչ գոյ Աստուած : Ասրականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց . Սաղ . ԺԶ . 1 :



սոսքինուծիւններուն հիմը ու արմատն  
է <sup>1)</sup> :

( ) րինալ :

Արկու իմաստուն պատանիներ կային,  
որ սք գիրքին աղէկ տեղեկութի ունէին,  
ու մէկ զմէկու շատ բարեկամ էին. ասոնց  
մէկը մեռաւ. ետքը ընկերին երեցաւ, որ  
կրակներու մէջ կերէր կոր : Մնկերը ան  
կրակները տեսնալով շատ վախցաւ՝ ու  
պատճառը հարցուց իրեն. որուն պա-  
տասխան տրվաւ, որ մահուանս ատենը  
սատանան երեցաւ, ու ինծի հաւատքի  
խորհուրդներ հարցուց : Արուն շուտով  
պատասխան տրվի՝ որ մեր հաւատքի սոր-  
վըցուցածներուն բոլոր կը հաւտամ : Սա-  
տանան պատասխան տրվաւ, աղէկ գի-  
տեմ, որ դուն սք գիրքը աղէկ սորված  
ես, կուղեմ՝ որ ԱՅ Հօր անձին վրա  
քանի մը մութ բաներ կան՝ զանոնք մեկ-  
նես ինծի, ու մէկ քանի սուտ բաներ ա-  
ռաջարկեց ինծի : Արուն ըսի, որ ան ա-  
ռաջարկութիւնները ու պատճառները հե-  
րետիկոսական ու սատանայական են. բայց  
սատանան ինծի հետ շարունակ վիճելով  
իր սուտ պատճառներովը զիս յազմելու

1. Ասոնց հաւատոյ անհնար է հաճոյ ինկէ (Աս-  
տուծոյ). Աբր. Ժա. 6 :

համար, ես ալ չտիէն աւելի իմ խելքիս  
 ապաւինելով՝ վերջապէս անոր սուտ պատ-  
 ճառներովը խարվեցայ՝ ու սկսայ հաւատ-  
 քի ան մասերուն վրա տարակուսիլ: Ան  
 բոպէի մէջ մահն ալ վրաս հասաւ, ու  
 ծայրագոյն դատաւորին առջևը ելայ, որ  
 զիս աս կրակին դատապարտեց, որուն մէջն  
 որ զիս կրտեսնես կոր. Ք. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.  
 «Բ ԵՐԻՆ՝ ԿԷ ՎԵՄ շԷՄԻԹ ԳԵՐԷՆ ԴԷՂ. ԳԷ. 357:

Վ. Ե. Գ. Բ. Ո. Բ. Գ. Է. Ը. Մ. Ը. Բ.

Հասարակական արժէքի հասին վրա:

Կ. Ինչ ըսել է հասարակ:

պ. Ըսել է, որ ստոյգ ու ամէն բանէն  
 աւելի ճշմարիտ կրտեսենք բոլոր հաւա-  
 տամքի խորհուրդները՝ վասնզի Աստուած  
 յայտնած է:

Կ. Ինչ կընշանակեն աս բառերը՝ 'ի Դ  
 Աստուած Հայրն:

պ. Կընշանակեն, որ յԱ՞՞ Երեք անձեր  
 կան, որոնց առջինը Հայր կըսվի:

Կ. Ինչո՞ւ առջի անձը Հայր կըսվի:

պ. Ասանզի ան՝ի յաւիտենից ինքը զինքը  
 ճանչնալով զՍրբին Ա՞՞ կըծնանի, որ ամ-  
 մէն բաներու մէջ հաւասար է Հօր:

Կ. Ինչո՞ւ ամենախորշ կըսվի:

պ. Ասանզի Ա՞՞ անկարելի կամ դժար

բան չիկայ, իր կամելովը կրնայ ընել ինչ որ կուզէ նէ :

հ. Ի՞նչ ըսել է՝ արարել էր ինչ եւ էր ինչ :

ա. Ըսել է՝ որ Մ<sup>ծ</sup> իր ամենակարողութիւնը երկինքը՝ երկիրը՝ ու բոլոր անոնց մէջը եղած բաները ստեղծած է :

հ. Մ<sup>ծ</sup> ասոնք հարկաւ ստեղծեց :

ա. Չէ՛ ամմէն բանը իր ազատ կամքովը ստեղծեց, որ թէ որ կուզէր նէ՛ ասկէ շատ գեղեցիկ հազար աշխարհք ալ կրնար ստեղծել, կամ աս ալ չստեղծել :

հ. Մ<sup>ծ</sup> ի՞նչ բանէ ստեղծեց երկինքը ու երկիրը :

ա. Մ<sup>ծ</sup> ամմէնն ալ ոչնչէ ստեղծեց՝ ըսաւ ու ամմէնն ալ եղան :

հ. Մ<sup>ս</sup> ասոնք իրենք իրենցմէ կրնան պահպանվիլ :

ա. Չէ. պէտք է, որ Մ<sup>ծ</sup> ամմէն բոպէ պահպանէ զիրենք :

հ. Մ<sup>ս</sup> իկայ անկատարութիւն չէ՞ Մ<sup>Յ</sup>, որ իր գործքերը իրենք իրենցմէ չի կրնան կենալ՝ ու միշտ իր պահպանութիւնը կարօտին :

ա. Չէ. մանաւանդ որ կարօտութիւնը՝ ստեղծվածներուն իրմէն կախումը, ու ըստեղծողին գերագոյն իշխանութիւնը կը ցուցնէ, որուն զանոնք թէ ստեղծելը՝ թէ պահպանելը իրեն գժարութի մը չեն իտար :

հ. Մ<sup>շ</sup> իրքի վրա ըստ պատահման բան մը կրնայ ըլլալ :

ա. Չէ, ամմէն բանը Մժ իր նախա-  
խնամութիւնը կրկարդագրէ, ու առանց իր  
հրամանն ըլլալ :

հ. Նախախնամութիւն ըսելով ի՞նչ կի-  
մանաս :

ա. Մն կիմանամ, որ Մժ անսահման  
խմաստութիւնը ու բարութիւնը ամմէն բանը  
կրհոգայ, ամմէն բանի կարգ կրդնէ, ու  
աշխարհիս վրա բան չիպատահիր, որ ինքը  
հրամայած՝ կամ թող տրված չըլլայ :

հ. Մնանկ է նէ՛ բաղդը ու դիպուածը  
ի՞նչ բաներ են :

ա. Անորդիկներու հնարած բառեր են՝  
ան գործքերը ցուցընելու համար, որոնց  
պատճառները իրենք չեն տեսներ :

Յովսէփ գեղեցիկն պարտութիւն :

Յակոբ նահապետին տղան Յովսէփը՝  
եղբօրներուն պատմելով իր տեսած երազ-  
ները, որոնցմով Մժ իրենց կը յայտնէր-  
կոր, որ Յովսէփը օր մը իրենց տէրը  
պիտի ըլլայ : Աղբարները իրեն գէմ նա-  
խանձելով միտքերնին դրին, որ անիկայ  
մեռցընեն. անոր համար զինքը խորունկ  
հորի մը մէջ նետեցին, որ հոն մեռնի.  
Ետքը երբոր տեսան, որ իսմայէլացի վա-  
ճառականներ կանցնին կոր՝ Յովսէփը  
գերիի մը պէս անոնց ծախեցին : Մնոնք

ալ զինքը Լգիպտոս տարին Պետափրէսին ծախեցին, որ Լգիպտոսի մեծ իշխաններուն մէկն էր: Եսիկայ Յովսէփին խելացուծիք տեսնելով՝ իր տանը կառուցարուիք բոլոր անոր ձեռքը հաւտաց: Բայց Պետափրէսին կնիկը՝ Յովսէփին հետ մեղք գործել ուզած ատենը՝ Յովսէփը իր չար կամքը չիկատարելուն համար, վրան երկանը սուտ ամբաստանութի բրաւ, ան ալ իր կնկանը խօսքին հաւտալով Յովսէփը բանտ դնել տրվաւ. շատ ատեն ան բանտը մընալէն ետքը՝ որ մը Փառաւոն՝ (Թագաւորը) երազ մը տեսաւ, որ զինքը շատ անհանգիստ կընէր, իր տակառապետը առաջարկեց իրեն, որ Յովսէփ իր երազը կրնայ մեկնել, վնդի ատենօք տակառապետին մէկ երազը բանտին մէջ մեկնած էր: Թագաւորը Յովսէփը բերել տրվաւ, որ նոր իր երազը մեկնեց՝ ըսելով, որ եօթը տարի շատ առատութի ու ետեւէն եօթը տարի ալ շատ մեծ սով պիտոր գայ: Թագաւորը զինքը բոլոր Լգիպտոսի վրա փոխարքայ կարգեց, որ առատութե տարիները չափէ աւելի շատ ցորեն գնեց, ու ետեւէն գալու սովի տարիներու համար պահեց: Սովի տարիները՝ երբոր եղբարները ցորեն գնելու համար Լգիպտոս եկան՝ քիչ ժամանակ զիրենք



փորձելէն ետև՝ զինքը իրենց յայտնեց .  
իր հայրը բոլոր տնովը բերել տրվաւ , ան  
տեղի մէկ պտղատու կողմը տեղաւորեց .  
ու իր եղբարներուն չար հատուցում մը  
չըրաւ . խրատեց զիրենք Մ.Յ նախախնա-  
մութիւնը վրա զարմանալու և պատուելու ,  
որ իրենց կամքին չարութիւնը գործիք ա-  
ռած զինքը ստտիճանէ աստիճան վերցը-  
նելով՝ անանկ մեծ փառքերու հասցուց ,  
որ իրենց կարօտութիւնը մէջ իրենց օգնե-  
լու կարօղ ըլլայ . Օ՛ննդ . ըլլ . ի . ե . այլն :

Խրատ Մ.Յ նախախնամութիւնը լուս :

« . Նախախնամութե կամ Մ.Յ սքան-  
չելի կառավարութեանը չիհաւտալը զՄ.Յ  
ուրանալ է <sup>1)</sup> . վնդի Մ.Յ նախախնամութիւնը  
վերցընելով՝ արգարութիւն՝ բարութիւն՝ ի-  
մաստութիւն՝ ամենակարողութիւն ալ մէկ-  
տեղ կըվերնան : Մ.Յօրէն մարդիկները ,  
որ իրենց չարութիւնին իրենց մտքին աչ-  
քերը կուրցընելով ասիկայ կուրանան նէ՝  
չատ անգամ իրենց կամքերնուն դէմ ի-  
րենք առջինները կըլլան ասիկայ ճանչնա-  
լու՝ կամ իրենց դժբաղդութիւններու մէջ  
ասոր դէմ տրանջելով , և կամ բնութե

1. Սակայն քո հայր վարէ տեսչութի . Մաս . 47 . 3 .



դրդելովը ԱՅ նախախնամութիւնը իրենց  
օգնութե կանչելով :

Բ. Նախախնամութե հաւտալ՝ ու անոր  
չհհնազանդիլ ու չապաւինիլը ուրիշ բան  
չէ՝ բայց եթէ մինակ ինք իրեն ապաւի-  
նիլ, և կամ չէ նէ մարդկան վրա յոյսը  
դնել է, որուն համար ալ անանկ մար-  
դիկները դժբաղդութներու մէջ կկոխան<sup>1)</sup> :  
Եւ ԱՅ գթած նախախնամութե արժանի  
ըլլալու տեղ, անոր արդար նախախնա-  
մութե փորձը կառնուն, ուսկից որ եր-  
բէք չեն կրնար փախչիլ :

Գ. Նախախնամութե հաւտալ՝ հնա-  
զանդիլ՝ ու ապաւինիլը քրիստոնէին խա-  
ղաղութիւն ու երանութին է, որ Վճ կը-  
պարտաւորէ՝ զինքը մասնաւոր եղանակաւ  
հողալու<sup>2)</sup> : Անզի մենք կոյր կամ մեր  
բաներու վրա անհող Վճ մը չենք պաշ-  
տեր . մեր պաշտած ճշմարիտ ԱՅ նա-  
խախնամութե աչքը մեր վրա ամմէն ժա-  
մանակ բաց է, իրեն կատարեալ ապաւի-  
նողները կըտեսնէ, ու իրենց օգնելու չու-  
շանար<sup>3)</sup> :

1. Սի այսուհետե հողայցէք՝ և ասիցէք, զի՛նչ  
կերիցուք՝ կամ զի՛նչ արբցուք կամ զի՛նչ զգեց-  
ցուք . . . . քանզի գիտէ հայր ձեր երկնաւոր  
թէ պիտոյ է ձեզ այդ ամ. Ս. Գր. . շ. 31. 32:  
2. Օ՛ւամ հողս ձեր ընկեցէք՝ ի նա, զի նա է՝ որ  
հողայ վն ձեր. . . . Պի. Գ. Է. 7:  
3. Եւք Տեառն հային յամ երկիր զօրացուցանել

(Օրինակ) :

Աղնըւական պատանի մը կար, որ իր ծնողքները գիտութիւն սորվելու համար զինքը ուրիշ քաղաք խրկած էին, և հոն անշահ տուն մը կրքնակէր, որուն մէջը շատ չար ու մոլի ընկերներ կային. ասիկայ տեսնելով, որ անոնց մէջը մաքուր խղճմտանքով չիկրնայ պիտի ապրիլ, գնաց ուրիշ տեղ մը գտաւ, ուր որ շատ բարի մարդիկներ մէկ տեղ ժողված՝ աղքատ զգեստներով խոնարհութիւով ու սրբութիւնով կապրէին : Վառաւոր զգեստները հանեց՝ անոնց պէս զգեստներ հագաւ, անոնց պէս սկսաւ ապրիլ, ու անոնց հոգևոր կառավարութիւնը տակ իր ուսումը կը սորվէր : Աս բանս իր ծնողքներուն ահանջը հասնելով՝ իրենց զաւկին բարուեր վրա ուրսխանալու տեղը՝ ան բաները իրենց աղնըւականութիւնը նախատինք սեպելով շատ տրտմեցան. ու գրեցին իրեն, որ առջի տեղը երթայ, ու ան տեղի ընկերներուն պէս ապրի : Վայց բարեպաշտ պատանին ԱՅ պատուիրանը ծնողաց հրամանէն մեծ սեպելով չուզեց նորէն ան չար ընկերներու մէջ երթալ : Օնտղքը

զնն, որք բողոքով սրտիւ հաւատան 'ի նա.  
Է. Սուրբ. Ժ. 9 :

չատ անգամ գրելէն ետքը՝ բարկացան ,  
ու ալ զգեստ՝ ստակ՝ ու տղուն ուրիշ  
պէտք եղած բաները չիսաւրեցին , ու  
զինքը երեսէ ձգեցին : Նարեպաշտ պա-  
տանին շատ կարօտուն մէջ ինկաւ . բայց  
ջերմեռանդ աղօթքով զինքը ԱՅ նախա-  
խնամութիւնը յանձնեց , ու բոլոր քաշած  
աղքատութիւնը ԱՅ սիրուն համար քաշե-  
լով տեղէն չիշարժեցաւ , որ չըլլայ՝ որ  
հոն երթալով զԱՅ բարկացրնէ : ԱՅ  
սքանչելի նախախնամութիւն ալ իր սիրելի  
ցինւորը իր կարողութիւնէ աւելի չարչարել  
չուզելով , երկինքէ իրեն հրեշտակ մը  
խաւրեց՝ իրեն սիրտ տալու համար . հրեշ-  
տակը ըսաւ իրեն , որ քու մեծ Այրդ՝  
երկնից թագաւորը՝ որուն պատուոյն ու  
փառացը համար քու մարմնաւոր ծնողք-  
ներէդ մերժուլեցար նէ , իր անսահման  
գթութիւնովը զքեզ երկնաւոր հարսնիքը  
կըհրաւիրէ կոր , որ հրեշտակներու ու  
սրբ հոգիներու հետ մէկ տեղ վայելես յա-  
ւիտենական փառքերը , անոր համար պա-  
տրաստըվէ , վնդի նծային նախախնա-  
մութիւնը զքեզ աշխրբիս ողորմելի կեան-  
քէն ազատելու համար ասանկ որոշեց :  
Պատանին ասանկ ուրախական ու փառա-  
ւոր պարգևի համար ուրախութիւնով ու  
մխիթարութիւնով լեցված՝ հոգևոր պատ-

բաստուածիները տեսաւ, ու քանի մը օր  
 ետքը թեթեւ հիւանդութիւնով մը պառկե-  
 ցաւ, ու քիչ օրւան մէջ ամմէն պատ-  
 րաստութիւներով՝ ու սաղմոսին աս խօս-  
 քերը ըսելով. հայր իմ եւ հայր իմ լեռնէն պէս .  
 եւ Տէր ընկալաւ պէս. Իր սը հոգին ԱՅ  
 ձեռքը աւանդեց : Անբեկոսը իւրապէս  
 հայէլ. օրին. պան. Ժ :

Ե Օ Թ Ն Ե Բ Ո Ր Դ Է Ա Ս Ա Բ

Հասարակական անձնական շարունակութիւնը :

Կ. Ինչո՞ւ կրտսեւ էր եւ լեռնայ եւ անբեկոս-  
 լից :

պ. Անոր համար՝ վնդի բոլոր երեւելի ու  
 աներևոյթ բաները Աճ ինքը ստեղծեց :

Կ. Որո՞նք են ԱՅ ստեղծած աներևոյթ  
 բաները :

պ. Մեր հոգիները ու հրեշտակներն են :

Կ. Մեր հոգին ի՞նչ բան է :

պ. Հոգեղէն ու անմահ էակ մի է, որ  
 Աճ ստեղծած ու մեր մարմնոյ հետ միա-  
 ցուցած է :

Կ. Հրեշտակը ի՞նչ է :

պ. Հոգեղէն էակ մի է անմահ՝ բնական  
 կատարելութիւններու մէջ մարդէն վեր, որ  
 միտք ու կամք ունի՝ ու մարմին չունի :

Կ. Արք ստեղծեց Աճ հրեշտակները :

- դ. Մարդը ստեղծելէն յառաջ :
- հ. Ինչո՞ւ ստեղծեց Մ.Ճ հրեշտակները :
- դ. Լըրկինքը զինքը անդադար փառաբանելու համար :
- հ. Մամէն հրեշտակներն ալ աս վախճանի հասան :
- դ. Չէ, որոնք որ հաւատարմութիւլ Մ.Յ հնազանդեցան նէ՛ յաւիտենական երանութիւր ժառանգեցին, ու վախճաննին հասան. ուրիշները ապստամբելով ու անհնազանդութիւ իրենց վախճանէն զըրկրվեցան. յաւիտենական դժոխքը դատապարտուվեցան, որոնք որ սատանաներն են :
- հ. Բարի հրեշտակները մարդիկներու հետ հաղորդակցութի ունի՞ն :
- դ. Ըրամներես՝ Մ.Ճ շատ անգամ գործածեց զիրենք իր կամքը մարդիկներու յայտնելու համար, մեր ամմէն մէկին ալ անոնցմէ մէյմէկ պահապան հրեշտակ տրվաւ :
- հ. Սեր քովը աս պահապան հրեշտակներուն պաշտօնը ի՞նչ է :
- դ. Ըն է, որ մեր ծնած ատենէն ինչվան մեր մահը մեղի հետ ըլլան, մեր միտքը բարի խորհուրդներով լուսաւորեն, զմեզ մեղքի առիթներէն հեռացընեն, մեր աղօթքները ու բարի գործքերը Մ.Յ մատուցանեն, զմեզ հոգւոյ ու մարմնոյ վը-

տանգներէն պահեն, ու սատանաներուն դէմ անդադար պատերազմին, որ չիկընան մեզի փնասելու :

հ. Հրեշտակներուն անունները դիտեա :

դ. Մինակ երեք հատինը դիտեմ, որ Մ<sup>ճ</sup> յայտներ է, որ Միքայէլ՝ Գաբրիէլ ու Սատիայէլ կրսվին, ուրիշներունը չեմ դիտեր, մնզի Մ<sup>ճ</sup> յայտնած չէ :

հ. Սատանաները մեզի հետ գործք մը ունին :

դ. Կաշխատին՝ որչափ որ Մ<sup>ճ</sup> թոյլ կուտայ նէ՝ մեզի փնասելու, ու զմեզ մեզք խօթելու համար, որ իրենց տանջանքներու ընկեր ըլանք :

հ. Սատաները ինչո՞ւ սաչափ թշնամութի ունին մեզի հետ :

դ. Կախանձու համար, մնզի Մ<sup>ճ</sup> սահմանեց, որ մարդիկները երկինքը ապրտամբ հրեշտակներու տեղ լեցրնեն :

### Տօբէլէն պատմութիւն :

Տօբիթ անունով սուրբ մը իր կնկանը ու տղուն հետ մէկ տեղ Կինվէքաղաքը գերի ինկաւ, ու հոն տեղը ուրիշ գերի ինկած իսրայէլացիներուն ողորմութիւն տալով՝ զիրենք խրատելով, ու մեռածներնին թաղելով կապրէր : Մ<sup>ճ</sup> ալ իր առաքինութիւնը փորձելու համար



Թոյլ տրվաւ, աչվըները կուրցան, ու մեծ աղքատութե մէջ ինկաւ. աս դժբաղդուն վրա կնիկն ալ դառն յանդիմանութիներով կրնեղէր զինքը: Աս նեղութիներու մէջ Ա.Յ աղաչեց, որ իր կեանքը աշխրբէս վերցընէ, ու կարծելով որ Ա.Ճ աղաչանքը լսած է, իր տղան առջևը կանչեց, իրեն բարի խորհուրդներ տրվաւ, ու ըսաւ, որ Հռագիս քաղաքը երթայ, ու Վաբայէլին քովէն ան տասը քանքար արծաթը առնու, որն որ ատենօք իրեն փոխ տրված էր: Ասոր համար իր տղան Տորիա առաջնորդ մը փնտռել սկսաւ: Ասփայէլ հրեշտակը ճամբորդի կերպարանքով դիմացը կելայ, իրեն կառաջնորդէ, յառաջ զինքը զարհուրելի ձկան մը կատաղութէ կրխալըսէ, որ զինքը կուլ պիտոր տար. ետքը Սարա անունով մէկ բարեպաշտ աղջկան հետ զինքը կրկարդէ, որ իր հարուստ աղգականը Հռագէլին մէկ հատիկ աղջիկն էր, հրեշտակը իրեն ասանկ Աստուծով եղած պսակի պարտքերը սորվեցընելէն ետքը՝ ինքը գնաց Վաբայէլէն տասը քանքարը բերաւ, Տորիան իր կնկանը հետ մեծ հարստութիներով հօրը տարաւ. հասած ատենը հօրը աչքերը լուսաւորեց, ու բոլոր տունը ուրախութիով ու հարստութիով լեցուց:

**Տօբիթը** ու **Տօբիան** հրեշտակին ըրած  
ասչափ բարիքներուն դէմ հատուցում մը  
ընելու համար՝ շիգիտնալով՝ որ հրեշտակ  
էր՝ բերած հարստութիւններուն կէսը իրեն  
տալ ուզեցին : Ան ատենը հրեշտակը զին-  
քը յայտնեց , ու բարի գործքերու մէջ  
հաստատ կենալու և զԱ՛ճ միշտ օրհնելու  
վրա զիրենք խրատելէն ետքը՝ աներևոյթ  
եղաւ՝ զիրենք մեծ զարմանքի ու շնորհա-  
կալութե մէջը թող տալով . **Տօբ :**

**Խորոպ պահապան հրեշտակներու վրա :**

**ա .** Բաւական պատիւ էր մեզի մեր  
հոգևոյն հոգեղէն ու անմահ ըլլալը , բայց  
Ա՛յ գթութիւնը ասիկայ բաւական չիսեպե-  
լով մեզի ալ մեծ պատիւ ընել ուզեց ,  
մեր պահպանուէր համար մեզի հրեշտակ  
պահապան պարգևեց , որ աս կեանքին  
վտանգներու մէջ մեզի յաւիտենական  
փրկութե առաջնորդեն <sup>1)</sup> :

**բ .** Մեր բոլոր կենաց մէջը մեր քովը  
աս սք հրեշտակներու պաշտօնները ասոնք  
են . մեր աղօթքները ու բարի գործքերը  
Ա՛յ կրմատուցանեն . մեզի հոգևոր ու  
մարմնաւոր վտանգներու մէջ կօզնեն ,  
զմեզ սատանաներու դէմ կրպաշտպա-

1. Հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն  
զերեսս շօր իմոյ որ յերկինս է . Մատթ. 10 :

նեն, մեր միաքը բարի խորհուրդներ կը-  
բերեն, ու մեղանչած ատեննիս խղճմը-  
տանքնիս կարթընցնեն <sup>1)</sup>:

Գ. Աս սք հրեշտակներնուս մեր պարտ-  
քերն ալ զիրենք սիրել ու պատուելն է,  
մեր նեղութիւններու և փորձութիւններու մէջ  
զիրենք օգնութի կանչել՝ անոնց մեր միա-  
քը բերած բարի խորհուրդներու հետե-  
ւիլ՝ ու զիրենք չիվշտացընելն է <sup>2)</sup>:

( ) Երևակ :

Սք Աճաճնայ շատ ջերմեռանդ Աղե-  
րիկոս մը անանկ ծանր հիւանդութիով  
պառկեցաւ, որ հիւանդութե ցաւերէն,  
ու սաստիկ կրակէն զինքը կորսընցուց, ու  
ինչ բրածը չիգիտնալով՝ իր լեզուն խա-  
ծաւ՝ կտրեց, և ուրիշ անդամներն ալ ա-  
նանկ կուզէր ընել : Տեսաւ որ անկողինին  
քովը գեղեցիկ լուսաւոր զգեստներով  
մէկը կար, որ պահապան հրեշտակն էր՝  
քովն ալ սք Աճաճինը, որ եկած էր իր  
ջերմեռանդ ծառան զօրացընելու համար :

1. Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վն քո. պա-  
հել գ. քեզ յամ ճանապարհս քո. Սալ. 2. 11 :
2. Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի երեսաց  
քոց. զի պահեսցէ զքեզ ՚ի ճանապարհի. որ-  
պէս զի տարցի զքեզ յերկիրն, զոր պատրաս-  
տեցի քեզ : Գցոյշ լիբ անձին քում. և լուիցես  
նմա. Աւել. 17. 20. 21 :

Պահապան հրեշտակը սկսաւ աղաչել սբ  
 Մ. ճածնայ՝ ըսելով . ո՞վ մայր Մ.Յ՝ գը-  
 թու թե՛ ու ողորմութե՛ աղբիւրը՝ ի՞նչպէս  
 կը համբերես կոր, որ աս քու սիրելի ջեր-  
 մեռանդ ծառայդ ասչափ չարչարվի, ու  
 ան լեզուն, որ միշտ զքեզ կը գովէր ու  
 կը փառաբանէր նէ՛ ասանկ չարաչար տան-  
 ջը վի: Կաղաչեմ քեզի՝ մեր գթած ափ-  
 րուհի ու թագուհի, մտի թարէ՛ զինքը  
 ասչափ դառն ցաւերու և տանջանքներու  
 մէջը, որ նորէն կարող ըլլայ զքեզ օրհ-  
 նելու, ու քեզ ծառայելու՝ ինչպէս որ  
 ինչպէս հիմայ ըրած էր: Մ.ն ատենը սբ  
 Մ. ճածինը հիւանդին քովը գնաց՝ իր կու-  
 սական կաթէն հիւանդին բերնին մէջը ցա-  
 նեց, ու անով լեզուն առողջացաւ՝ ու հի-  
 ւանդուէ՛ ազատեցաւ: Արտեսնե՛ս, որ մեր  
 պահապան հրեշտակները որչափ կը սի-  
 րեն՝ ու ցաւակից կը լլան մեզի: Ա իջէնցօ  
 Եպիսկոպոսը իւրապէ՛ հայելե՛ օրին. Բեջ:

ՈՒԹԵՐՈՐԴ ԼԵՍԵՐ

Լուսաբանի էրկրորդ ու երրորդ հասերունն  
 զլս:

Կ. Մ.նչ կիմանաս աս խօսքերով. Կ. ի  
 թ Տէր Յ. Ք. յ Որդին Մ. Յ. ճանաչն յ Մ. Յ.  
 Լօրէ Թոմէն նախ քան զմի յաւիտեանս:  
 Կ. Մ. մենասբ Արրորդութե՛ երկրորդ ան-

ձը կիմանամ՝ որ մինակ ծնած է Հօր  
Լստուծակ ամմէն յաւիտենականուէ յա-  
ռաջ, ու Հօր մէկ հատիկ որդին է :

Է. Ինչո՞ւ զՅս մեր տէրը կըսես :

Կ. Այդի ամմէնքնիս ալ իր հպատակներն  
ենք, որովհետեւ ինքը անուր մեր ստեղ-  
ծողն է, ու մարդկութիւն ալ մեր գլուխը՝  
ուսուցիչը՝ թագաւորը ու մեր փրկիչն է :

Է. Ինչ ըսել է Լ.Ժ յԼ.Յ, լոյս 'ի լուսոյ,  
Լ.Ժ ճշմարիտ, յԼ.Յ ճշմարտէ ծնունդ ե ոչ  
արարած :

Կ. Ըսել է՝ որ Յս Քս Լ.Ժ է յԼ.Յ Հօր-  
մէն. ինքը լոյս է իր լոյս Հօրէն՝ որ անկէ  
ճշմարտապէս 'ի յաւիտենից ծնած է, ու  
արարած չէ :

Է. Ինչ կիմացիլի աս խօսքով. նայն ինքն  
համագոյնից Հօր, որով ան ինչ եղև յեր-  
կինս ե 'ի վերայ երկրի, երևելէ ե. անե-  
րկոյլէ :

Կ. Կիմացիլի՝ որ Յս Քս յաւիտենակա-  
նութե՝ Լ.Ժութե՝ կարողութե ու ամմէն  
կատարելութիւներու մէջը Լ.Յ Հօրը հաւ-  
սար է, ու Հայր Լ.Ժը անոր հետ մէկ տեղ  
ստեղծեց երկինքը երկիրը ու ամմէն ե-  
րևելի ու աներևոյթ ստեղծվածները :

Է. Ինչ կիմանաս ըսելով. որ յաղագս Տէր  
հարդիան ե զն Տէրոյ վրիտէ իջեալ 'ի յերկ-  
նից, հարհասցաս, հարդացաս :



ա. Մարդեղութեան խորհուրդը կիմանամ, որ Այ Որդին մեր փրկութեան համար երկինքէն վար ինչաւ, մարմին առաւ, ու մեզի նման մարդ եղաւ :

հ. Ինչո՞ւ կըսես՝ Հոգիս սրբո՞ւ :

ա. Ընդ որ համար, որ Վսի ամենասուրբ Մարդեղութիւն մինակ Այ զօրութիւն անմիջապէս կատարվեցաւ, այսինքն երբոր Այ կոյս Մարիամը եղեցի ինչ ըստ Բանի հոգի ըսելով հրեշտակին խօսք տրվաւ, նոյն վայրկենի մէջ Հոգի սրբը ինչաւ իր անարատ արգանդին մէջը իր կուսական արիւնէն կատարեալ մարմին կազմեց, ու նոյն վայրկենի մէջ նաև Տանն Ա՛ճ ինչաւ, նոյն մարմինը առաւ, անոր հետ միացաւ, ու կատարեալ մարդ եղաւ :

հ. Ի՞նչ կընշանակէ աս ըստ Թեոֆան :

ա. Կընշանակէ, թէ Գարբիէլ հրեշտակապետը Աստուծո՞ւ ամենասրբ Աուսին խորհրվեցաւ Վսի Մարդեղութեան ու իր աստուածամայր ըլլալու աւետիսը իրեն տալու համար :

Հրեշտակին ամենասրբ Աուսին Թեոֆան  
պատմութիւնը :

Երբոր Որդին Ա՛ճ մարդկային ազգը փրկելու համար մարդ ըլլալ ուզեց, խորհեց Հայր Ա՛ճ Գարբիէլ հրեշտակապետը



երկինքէն՝ որ դայ ու աս բանիս վրա խօսի :  
Աւ ահա աս սք հրեշտակապետը չիխըր-  
կըվեցաւ ու չերեցաւ ոչ թագաւորի մը  
և ոչ ուրիշ աշխրբիս մեծերուն , այլ խըր-  
կըվեցաւ : Յուդայի ցեղէն խոնարհ Աուսի  
մը , որ պղտիկ Վազարէթ քաղաքը կը-  
բնակէր : Հրեշտակը մեծ յարգութիով  
երեցաւ իրեն , ու Ա՛յ դիաց մեծ գո-  
վեստներով ողջունեց զինքը : Սուրբ Աոյս  
Սարիամը ան գովեստներէն չիհպարտա-  
նալէն ետև , սրտին մէջը խռովելով մը-  
տածել սկսաւ , որ ի՞նչ պիտոր ըլլայ ատ  
ողջունը : Հրեշտակը սիրտ տըվաւ իրեն  
ու աւետիս տըվաւ , որ իրմէն որդի մը  
պիտոր ծնանի , որ Ա՛յ ալ մէկ հատիկ որ-  
դի պիտոր ըլլայ , Վաւթին աթոռը պիտոր  
ժառանգէ , ու իրեն թագաւորութիւր աշ-  
խրբին մէկ ծայրէն մինչուկ մէկալ ծայրը  
պիտոր ըլլայ՝ ու յաւիտեան պիտի տևէ : Աք  
Աոյս Սարիամը՝ որ ամմենեին պատուոյ  
բաղձանք չունէր , ու թէպէտ սք Յովսէ-  
փին հետ պսակված էր , բայց կուսութի  
ուխտած ըլլալով՝ կոյս մնացած էր , և ուխ-  
տը կուղէր պահել , անոր համար հրեշ-  
տակէն ուղեց իմանալ , որ իրեն մեկնէ ,  
որ ի՞նչպէս պիտի կատարվի աս խորհուր-  
դը , չըլլայ՝ որ իր ուխտին դէմ ըլլայ :  
Հրեշտակը յայտնեց իրեն , որ ան մեծ

խորհուրդը մինակ Հոգին սքին անային զօրութիւն՝ չիտեսնելած ու չիլսված հրաշքով մը մայր պիտոր ըլլայ ու կոյս պիտոր մնայ : Ան ատենը Աբ կոյս Արիամը իր մաքրութիւնը համաձայն խոնարհական հաւատքով մը հաւտաց անանկ մեծ հրաշքի, որ իր վրա պիտի կատարվէր իրեն հաւանութիւնը, ինչպէս որ կատարվեցաւ : Այս, թէ ինտո՞ր մեծ էր Աբ կոյս Արիամին մաքրութիւն սէրը՝ ու իր ուխտին վրա հաստատութիւնը, և թէ ասիկայ որչափ հաճոյ էր Ան, որ Ամենասք Արորդուէ երեք անձերը մէկ երկինքի հրեշտակապետներուն մէկը իրեն դեսպան խաւրեցին ու իր հաւանութիւնը սպասեցին, որ Ան մայրութիւն պատիւը ընդունի՝ ու խօսք տայ, որ աշխրբի փրկագործութիւն խորհուրդը սկսին : Հրեշտակները կը բաղձային, որ իրենց թագուհի ըլլայ, ու մարդկային ինկած բնութիւնը կարտորար, որ բոպէ մը յառաջ իրեն փրկագործութիւնը սկսվի, որ իրէն ազգէն զօրաւոր բարեխօս մը ունենայ : Ալ զարմացիր թէ ինչպէս Աբ կոյս Արիամ իր մաքրութիւնը ու դրած ուխտին վրա կը մտածէր, հրեշտակէն կը տեղեկանար, հաւանութիւնը կուշացընէր, ինչպէս որ ազգէկ մը հասկընայ, որ աս բանով իր մաքրութեանը ամենեկին

մնաս պիտոր չըլայ . ու ան ատենը մեծ  
խոնարհութիով իր հաւանութիւնը կուտայ՝  
ըսելով . որ ահա պատրաստ ու հնազանդ  
աղախին եմ ԱՅ , քու ըսածիդ պէս ըլլայ  
ինձի . ու աս հաւանութե խօսքը բերնէն  
հանած վարկենի մէջը Հայր Աստուած իր  
միածին Արդին կրխաւրէ Հոգին սբը իր մա-  
քուր արգանտի մէջը իր կուտական արու-  
նէն կատարեալ մարմին կըկազմէ . ու  
ինքն ալ ԱՅ մայր կըլլայ . Վ Դ-ի . 3 :

Խորատ արեւմտեան վրտ :

3 . ԱՅ յաւիտենական միածին Ար-  
դին մարդ ըլլայ <sup>1)</sup> . ստեղծօղը իր ստեղծա-  
ծին կերպարանը մտնէ , ու անոր նմանի .  
ինչ անպատմելի ու խելք չիհասնելու խո-  
նարհութի է <sup>2)</sup> : Ար տեսնելով , որ եր-  
կու տեսակ գեղեցիկ ստեղծվածներ՝ այ-  
սինքն չար հրեշտակները ու մարդը իրեն  
նմանիլ ուղելով ետեւէ ետեւ չարաչար ին-  
կան կործանեցան , կեցիր ըսաւ , ես ալ  
անանկ կերպարան մը մտնեմ , որ անով  
նախ՝ ինկած կործանած մարդուն տեղը իմ  
Հօրս հատուցում ընեմ ու զինքը նորէն

1 . Բանն մարմին եղև . Յ-ի . 3 . 14 :

2 . Գանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի  
առևալ . . . . և կերպարանօք դտեալ իբրև  
զմարդ . Փիլի . Բ . 7 :

վեր վերցրնեմ . երկրորդ՝ ես խոնարհում ,  
ու զիս խոնարհութե օրինակ ընեմ , որ  
անկէ ետքը ինծի նմանիլ ուղղոյին իյնալու  
վտանգ չըլլալէն ետե՛ մեծ վարձք ալ տըր-  
վի <sup>1)</sup> :

Բ . Պարզ կոյս մը Ա՛յ մայր ընտրվի :  
Ի՛նչ զարմանալի բարձրութի՛ է . բայց  
նայէ Ա՛յ Նանին Սարգեղութե զօրութեը ,  
որ անով իր մայրը դեռ մայր չեղած ծնա-  
նելու Արդւոյն նմանելու կըջանայ . վնդի  
Արդին Ա՛յ ծառայի խոնարհ կերպարանք  
մտնելու՝ ու իրեն որդին ըլլալու համար  
երկինքէ իրեն անամայրութե պատւոյն ա-  
ւետիսը կուտայ , ու ընտրած մայրը ինքը  
զինքը աղախնոյ տեղ կըդնէ <sup>2)</sup> . ու մի և  
նոյն խոնարհութի՛ը բոլոր կենացը մէջ կը-  
պահէ <sup>3)</sup> :

Գ . Նմանինք ասկէ ետքը Ա՛յ Արդւոյն ,  
չիվախնանք սատանաներու և մեր առջի  
ծնօղներու իյնալուն օրինակէն , անոնք Ա՛յ  
անսահման փառացը ու բարձրութե՛ը նմա-  
նիլ ուղեւով անանկ ինկան նէ , մենք ալ  
նոյն Ա՛յ միածին Արդւոյն անճառ խոնար-

1. Աւարտէք յինէն՝ զի հեղ եմ և խոնարհ սրտիւ . և  
գաջիք հանգիստ անձանց ձերոց . Մատթ. Ժա. 29 :

2. Ահաւասիկ կամ աղախին հեռան . Ղուկ. ա . 38

3. Չի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ  
Ա՛յ . 48 :

Հուժեր նմանիլ ջանալով կելլենք. ու ա-  
նոր ու մեր ամենայն մօրը օրինակին հե-  
տևելով՝ որչափ մեծութիւ կը հասնինք նէ՛  
անչափ աւելի խոնարհ ըլլանք <sup>1)</sup>:

**(Օրինակ:**

Միամիտ նորընծայ մը Հն մանուկի  
շատ մեծ սէր ունենալով՝ անոր պատկե-  
րին առջևը դացած ատենը զինքը յանձ-  
նելու համար՝ միամիտ ընտանութիւ մը  
սովորութիւ ըրած էր՝ Հն մանուկը իր եղ-  
բարը կը կանչէր: Աս բանը Հնին շատ հա-  
ճելի ըլլալով, ան ալ զինքը եղբար կը կան-  
չէր. ու շատ սէր կը ցուցունէր իրեն: Սեր  
կրօնաւորմը կրօնէ դուրս ելաւ, ու շատ  
ատեն ուխտազանց պտըտելէն ետե՛ զղջա-  
ցաւ ու եկաւ աս միամիտ նորընծային ա-  
ղաչեց, որ իր մեծ մեղքերուն համար իր  
երկնաւոր եղբօրէն թողութիւ առնու:  
Գնաց շուտ մը բարի նորընծան կատա-  
րեալ յուսով իր սիրելի մանուկ Հնին  
ոտքը ինկաւ, ու ըսաւ. իմ սք ու անու-  
շիկ Աղբարս՝ հիմայ է ժամանակը, որ քու  
եղբայրական սիրուդ նշանը ցուցընես ին-  
ծի, ու թողուս ան իմ կրօնաւոր եղբօրս

1. Որչափ մեծ ես՝ խոնարհ կալ գքիզ քան գա-  
մնեսեսան. և առաջի Աստուծոյ գոցես ըզ-  
շնարհս. Լ:Ղ:Է. 4. 20:



ծանր յանցանքը, որ կրօնէ ելլալով՝ ու աշխարհք դառնալով քեզի գէմ գործեց : Ինքը գիշեր ցորեկ ան մեղքին վրա կուլայ կոր, ով սիրելի մանուկ եղբարս Յս, ըրէ ինձի աս մեծ շնորհքը : Մանուկ Յսը իր ջերմեռանդ աղաչանքին լսեց, ու իրեն իմացուց, որ իր աղաչանացը համար թողուց ան կրօնաւորին յանցանքը, անոր համար ուրախութիւնով ու վաղելով գնաց՝ ան կրօնաւորին աւետիս տրվաւ, որ Յս մանուկը իր մեղքը թողուց : Մարդեղութե պտուղն է, որ Յսի եղբայր ըլլալու արժանի եղանք : Հայր Ռաբրէժօնը իրապարհ մանկանց տրայ. Բ-ը մասն Բ. Գ-ը . Թ :

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ Է Մ Ե Ր

Հասարակին էրբորդ մասին զլոս :

Կ. Ինչ կրնչանակէ հաւատամքին աս խօսքը. որով հասարակին, հոգի, և միտ, և սրտ որ ինչ է 'ի հարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք :

Ե. Կրնչանակէ, որ ԼՅ Ռանին Սարգեղութե եղանակը մեղմէ տարբեր ըլլալովը՝ առած մարմինը մեր մարմինէն տարբեր մարմին չէր՝ երևութիւ կամ կարծիքով ալ չէր. հասա մեր մարմիներու պէս ճշմարիտ ու կատարեալ մարմին էր, մեր մարմիններուն ամէն կատարելութիւնները



ունէր ու մեղիպէս մարդկային բանական  
հոգի. միտք, ու կամք ունէր :

հ. Ինչ ըսել է. ձեռք-խոտորէլուպէս  
'ի Սարէմայ Սէյ կոստէն՝ ըսելը :

ա. Ըսել է, որ Սէ կոյս Սարիամը զՔս  
իր կուսական արգանդի մէջ յղանակէն  
ինը ամիս ետքը՝ ծնաւ Մծ փրկիչը առանց  
ցաւի՝ ու կուսութիւնը պահելով :

հ. Երբ ծնաւ զՅս Քս :

ա. Ինը ամիսը լմնցածին պէս՝ կէս դիշե-  
րին մօտ :

հ. Ո՛ր տեղ ծնաւ :

ա. Ինթիկէհէմ քաղաքը՝ ու ինչպէս Սի-  
քիա մարգարէն գուշակեր էր, ախոռի մը  
մէջ ծնաւ :

հ. Ինչո՞ւ անանկ աղքատութիւնով ծնա-  
նիլ ուզեց Յս Քս :

ա. Ըշխրքիս մեծութիւններուն ու զբօսանք-  
ներուն վրա սիրտ չիկապելը մեղի ան ատե-  
նէն սորվեցրնելու համար :

հ. Հայր Մծ ինչ ըրաւ Արդւոյն խոնար-  
հիլը փառաւորելու համար :

ա. Իր ծնունդը հրեշտակներու ձայնե-  
րովը հովիւներուն աւետել տրվաւ, ու  
նոր աստեղով մը արեւէք իրեք իմաստուն  
թագաւորներուն յայտնեց, որոնք որ  
հովիւներէն ետքը ախոռը եկան, Քսի  
ծունկ չոքելով երկրպագութիւն ըրին :

Հ. Աք կոյս Անրիամը մայր Այ կամ Աճա-  
ծին կրոնայ ըսվիլ :

Պ. Հրամմերես կրնայ ըսվիլ և է, վասն-  
զի զՅս Քս ծնաւ, որ Այ ճշմարիտ  
Արդի է :

Հ. Թէ որ սք Աճածինը մայր է նէ՝ հա-  
պա ինչո՞ւ կոյս կըսես :

Պ. Այզի Հոգին սքին զօրուժքը Յսի  
մայր ըլլալով միշտ կոյս էր, ու կոյսմնաց  
ամէն ժամանակ, ու կուսուժք մեռաւ :

Հ. Անանկ է նէ սք Յովսէփը ո՞վ էր :

Պ. Սուրբ անծածնայ պսակակից՝ ու Յս  
Քսի կարծրված հայր ըլլալու համար  
Աստուծմէ ընտրված արդար ու պարկեշտ  
մարդմը էր, որ զՅս մանուկը ու սք անծա-  
ծինը մարդկօրէն հոգայ ու պահէ՝ իրենց  
ներուժիններու մէջ օգնական ըլլայ, ու  
սք անծածնայ կուսուժիը ու պատիւը ան  
բիրտ հրէաներուն զըպարտուժիներէն  
անարատ պահվի :

Հ. Աք անծածինը ու սք Յովսէփը ո՞ր ցե-  
ղէ էին :

Պ. Երկուքն ալ Վաւիթ մարդարէին տը-  
նէն ու ցեղէն էին, ինչպէս որ Վաւիթ  
ալ Յակօր նահապետի որդին Յուդայի  
ցեղէն էր, որ ցեղէն որ մեսիան գալու  
խոստացված էր :

Իւրէ՛ք մոգէրոս՝ կամ իմաստութեան լեռագետորնէ-  
րոս՝ պատգամ-լէ՛րը :

Յս՝ ծնած ատենը իրեք մոգերը, որ  
իմաստուն թագաւորներ էին, մէկ նոր  
աստեղ առաջնորդութիւնը արեւելքէն Ա-  
րուսաղէմ եկան՝ տեղեկանալու համար, որ  
ո՞ւր ծներ է հրէից թագաւորը կամ Սե-  
սիան : Հերովդէս աս բանը լսելով շատ  
տակն ու վրա եղաւ. օրէնք գիտցօղները  
ու քահանաները ժողովեց, իրենց հար-  
ցուց, որ ո՞ւր պիտոր ծնանի մեսիան. ո-  
րոնք պատասխան տրվին, որ Ռէթլէհէմ  
քաղաքը պիտոր ծնանի : Մոգերը ան կող-  
մը սկսան երթալ նէ՛ աստղը նորէն երե-  
ցաւ, որ զիրենք շատ ուրախացուց, ու  
գնաց՝ այրին վրա կեցաւ, ուր որ Յս՝ մա-  
նուկը ծնած էր : Թագաւորները զՅս՝ ա-  
սանկ աղքատ այրի մէջ տեսնելով հաւատք-  
նին չիշխոթեցին ներսի լուսով մը լու-  
սաւորվեցան, աս անձային մանուկին առ-  
ջըր գետինը ինկած՝ ծունկ չորբելով եր-  
կրրպագութի ըրին, ու իրեն խունկ՝ ոսկի՛  
ու զմուռ (ասըլպէնտ) ընծայելով զինքը  
իրենց Վճը՛ թագաւորը՝ ու փրկիչը խոս-  
տովանեցան : Ատքը հրեշտակին յայտնե-  
լովը Արուսաղէմ չիհանգիպած շիտակ  
իրենց քաղաքները գացին. ինչու որ Հե-

բովուրդէսը չար մտքով ըսած էր իրենց, որ  
'ի դարձին երթան՝ իրեն իմացընեն, թէ  
որ ան մանուկը կը գտնեն նէ: Ատքը յայտ-  
նի երեցաւ, որ հերովուրդէսը ինչ վախճա-  
նի համար աս բանս կուզէր իմանալ. վնգի  
աս նոր ծնած Յս մանուկը ձեռք ձգել ու  
մեռցընել կուզէր, որ չըլլայ՝ որ մեծնայ,  
ու իր թագաւորութիւնը ձեռքէն առնու.  
անոր համար ալ երբոր կեղծաւորութիւնով  
չիկրցաւ մանուկ Յսի վրա բան մը իմանալ  
նէ՝ անգութ բարբարոսութեւն ձեռք երկըն-  
ցուց, բէթէհէմ, ու անոր չորս կողմէ  
երկու տարւան ու ալ պղտիկ տղաքները  
սրէ անցընել տրվաւ: Քայց հրեշտակը  
Հերովուրդէսին չար խորհուրդը սք Յովսէ-  
փին յառաջուց իմացուց, ու ասպարեց ի-  
րեն, որ Յս մանուկը ու իր մայրը առնու՝  
Ագիպտոս փախչի: Ար ասանկ Հերովուրդէս  
իր անգթութեւն ուրիշ պտուղ չիկրցաւ  
քաղել, մինակ ան անմեղ մանկունքնե-  
րուն պատճառ եղաւ անանկ մեծ փառքին  
հասնելուն, որ Քսի տեղը արուն թա-  
փեցին, ու անոր առջի մարտիրոսները ե-  
ղան. ու աս իր անողորմ գործքովը խոս-  
տացված Մեսիային ծնանիլը բոլոր աշխր-  
քի իմացուց, իր ամպարչտութիւնը մինակ  
իր դատաւարտութեւնը պատճառ եղաւ,

բայց Այ խորհուրդին դործադրութիւնը  
չիկրցաւ վնասել . Ստոր . Բ :

Խորոք Յնի ծնունդին վրա :

ա . Ստուրը առջի խորանն է , որ տեղ  
որ Վս ծնած բոպէէն խոնարհ ու համբե-  
րող ողջակէզի մը պէս զինքը իր յաւիտե-  
նական Հօրը կրմատուցանէ՝ մեր մար-  
դիկներու ըրած անպատուութիւններու տեղը  
իրեն հատուցանելու համար , ու զինքը  
նորէն մեզի հետ հաշտեցրնելու համար <sup>1)</sup> :

Բ . Ստուրը աթոռ մի է , որ Վս հոն տե-  
ղէն վարդապետի պէս աղքատութիւն՝ խո-  
նարհութիւն ու համբերութիւն իր օրինա-  
կաւր մեզի սորվոցուց ու զՎժ փառաւորե-  
լու , ու Այ յաւիտենական խաղաղութիւն  
ու հաշտութիւն ձեռք ձգելու համար ինչ  
որ պարտրկան ենք ընելու նէ՝ մեզի քա-  
րողեց <sup>2)</sup> :

Գ . Ստուրը ատեան մի է՝ որ հոն տե-  
ղէն Յս Վս դատաւորի մի պէս նզովքներ  
կարծակէ կոր <sup>3)</sup> . որն որ օր մի Յովտա-  
փատի ձորի վրայէն ազահ հարուստնե-

1. Աստուած էր՝ Վրիստոսիւ զաշխարհ հաշտե-  
ցուցանել ընդ իւր . Բ . Վրդն . է . 19 :

2. Փառք ՚ի բարձունս Աստուծոյ , և երկիր իա-  
ղաղութի , ՚ի մարդիկ հաճութի . Ղ . 14 :

3. Վայ ձեզ մեծատանցդ . Ղ . 14 :



քուն՝ հպարտներուն ու իրենց մարմինը պաշտօղներուն դէմ պիտի արձակէ, հիմակ-  
ւընէ իր արդար դատաստանին օրինակը կը-  
ցուցընէ կոր զփերովդէս անարգելով աղ-  
քատ հովիւները՝ ու խոնարհ՝ հաւատարիմ  
ու իր ձայնին լսելու վարժած մողերը իջ  
ծնած այրին մէջը ընդունելով <sup>1)</sup> :

### Օրինակ 2.

Արանելի Մարգարիտա կոյսը Քաս-  
տէլօ քաղաքը մօրմէն կոյր ծնած էր,  
բայց իր հոգւոյն աչքը Ա՛յ շնորհքի լու-  
սը լուսաւորելով կարող ըրաւ զինքը մտքի  
աչքով անձային բաները տեսնելու, ու  
միշտ Ա՛յ վրա մտմտալու, ու Յսի մարդե-  
ղութիւն անպատմելի սիրով սիրելու : Պա-  
տարագ տեսած ատենը հոգւոյ աչքովը Յսի  
մանուկը միշտ խորանի վրա կըտեսնէր .  
իր ամմէն օրվան մտածութիւն ասոնք էին՝  
ամենաաբ Արոյսը ոտը Յսի կըծնանէր, իր ան-  
ային ծնունդը, ու սը Յովսէփին անու-  
շութիւն Յսի մանուկը զիրկը պարտացուցած  
ատենը : Ա՛ս իրեք խորհուրդները ամմէն  
օր կըմտմտար, ասոնց վրա շատ անգամ  
կըխօսէր . աս բաներու վրա անանկ մեծ  
սէր ունէր՝ ու անանկ անդադար կը-

1. Արանի աղքատաց հոգւով. Մատթ. Է. 3 :



մտածէր, որ իր սիրուն ուժովը սրտին մէջը ծնունդ մը ձևացած էր՝ Յս մանուկը իր մօրը հետ ու սք Յովսէփը. անոր համար շատ անգամ կըսէր, մէյ մը գիտնալու ըլլայիք, որ ի՞նչ ունիմ սրտիս մէջը՝ կըզարմանայիք: Իր մահուանէն ետքը իմացվեցաւ, որ աս կոյսը աս խօսքով ի՞նչ կուղէր ըսել. վնդի բժիշկները սիրտը բացին նէ՛ իրեք անգին քարեր գտան, առջինին վրա փառաւոր տիկին մի փորված՝ երկրորդին վրա նոր ծնած մանուկ մի երկու կենդանիներու մէջ, ու երրորդին վրա գլխուն մաղեր թափված՝ ճերմակ մօրուքով ծեր մը փորված էր, որուն ոտքը տօմէնիքանի զգեստով կին մի ինկած էր, որ ինքը մարգարիտա կոյսն էր: Պէտքս լաննին իւրաքանչիւր չրխապոնէտիտանին մէջը:

ՏԵՍՆԵՐՈՐԴ ԷՆՍՆՐ

Հասարակէն չարսորտ հասն զրա:

Կ. Ի՞նչ ըսել է՝ չարչարեցաւ ընդ պոնպոյով Պիլատոսի: Կ. Ի՞նչ է՝ որ Յս Վս արքայութե ճամբան իր գործքերովը ու խօսքերովը սորվըցընելէն՝ ու իր սորվըցուցածները անթիւ հրաշքներով հաստատելէն ետքը՝ պոնտացի Պիլատոսին ատենը՝ ու անոր

հրամանաւը ամսէն տեսակ նախատինքներով ու տանջանքներով չարչարվեցաւ :

հ. Ի՞նչ ըսել է խաչէցաւ՝ մեռաւ :

ա. Ի՞նչ է՝ որ զՅիսուս սաստիկ ծեծելէն փշպսակով պսակելէն ետե՛ւ երկու աւաղակներու մէջ խաչափայտի վրա խաչեցին՝ ու խաչին վրա մեռաւ :

հ. Ընտանիքը խաչը ի՞նչպէս բան էր :

ա. Սեփականացողները տանջելու գործիք էր, բայց ետքը Վրնի արիւնովը մեր փրկութեան գործիք՝ ու մեզի պատուելու նիւթ եղաւ :

հ. Պիղատոս ի՞նչ յանցանքի համար զՎրն խաչի մահուան դատապարտեց :

ա. Պիղատոս Վրնի վրա յանցանք մը չըզրտաւ՝ Վրնի անմեղութեան հրէաներու առջևը ինքը շատ անգամ վկայեց, մինակ անոնց կատաղութի վախնալով վատութի՛ք դատապարտեց զՎրն :

հ. Վրնի մահուան ատենը ի՞նչ պատահեցաւ :

ա. Իրեք ամբողջ ժամ արեգակը խաւարեցաւ. մեծ գետնաշարժ եղաւ, և ուրիշ շատ մեծ ցուցանքներ պատահեցան :

հ. Ընտանիքներէն ի՞նչ պտուղ յառաջ եկաւ :

ա. Ընտանիքներէն խել մը մարդիկներ զղջացան, ու շատերն ալ կուրծքերը,

նին զարնելով՝ ու իրաւ որ աս մարդս Մ  
Որդի էր ըսելով տեղերնին գացին:

Կ. Մճ աշխարբիս մէջն ալ պատժեց ան անձա-  
սպան հրէաները, որ չուզեցին զղջալ ու  
դառնալ:

Կ. Հրամմերես, ինչպէս որ Վճ յառա-  
ջուց ըսած էր նէ, իրենց քաղաքը ու տա-  
ճարը քանդըվեցաւ, իրենք չարաչար ջար-  
դըվեցան ու գերեցան, ինչպէս հիմայ ալ  
հոգևոր կուրուժե մէջը՝ բոլոր աշխարհք  
ցրված են, ու Մճ անանկ կը պահէ կոր զի-  
րենք՝ որ ուրիշ ազգերուն խրատ ըլլան:

Կ. Վճ ո՞ր օր խաչվեցաւ՝ ու մեռաւ:

Կ. Մլազ ուրբաթ օրը:

Կ. Ետքը Վճի մարմինը ի՞նչ ըրին:

Կ. Մն օրը Յովսէփ արեմաթացին՝ ու  
Սիկողիմոսը գլուխ եղան՝ Սք Մճածնայ ու  
իւղարեր կնիկներու և ուրիշներու հետ  
մէկ տեղ մեծ պատուով ու խունկերով  
պատեցին, ու ան պարտիզի մէջը՝ ուր որ  
Վճ խաչված էր նէ, նոր գերեզմանի մը  
մէջ թաղեցին:

Վողգոնայի իրէ՛ խաչէրուն պատմութիւնը:

Մս մեր փրկագործութե մեծ օրը Վող-  
գոթայ լեռան վրա իրեք խաչեր երևցան՝  
ու անոնց վրա իրեք հոգի խաչ ելած՝  
մեռան, գրսի երևութին նայելով ի՞նչ մեծ

նմանութի էր . բայց ներսի ճշմարտութիւր  
մտմտալով ի՞նչ մեծ աննմանութի էր .  
մէկը խաչով աշխարհքը կրփրկէր կոր ,  
մէկալը խաչին զօրութիովը կրփրկւմէր կոր ,  
ու երրորդը խաչի վրա կրկորսւմէր կոր .  
ու աս մեծ տարբերութիւր անձինքներու  
տարբերութէ՞ , ու խաչի համբերելուն ե-  
ղանակէն կրծագէր կոր : Յս՝ Վս մարդ ու  
Մճ և պատկեր անմեղութե՞ կամաւ ու սի-  
րով խաչի համբերելով աշխարհքը կր-  
փրկէր կոր՝ մեղաւոր մարդ մը մեղքերէն  
դարձած՝ ու զղջացած հարկաւորապէս  
չարչարւելով , բայց չարչարանքները  
համբերութիւր քաշելով ու իր փրկչին չար-  
չարանքներու հետ միաւորելով կրփրկը-  
մէր կոր , և ուրիշ մեղաւոր մը իր մեղքե-  
րու մէջը խստացած՝ ու խաչի չարչարանք-  
ները անհամբերութիւր քաշելով , չարա-  
մաղթութիւր ընելով ու զփրկիչն անարգե-  
լով կրդատապարտւմէր՝ ու անցաւոր տան-  
ջանքներէն յաւիտենական տանջանքները  
կանցնէր կոր : Մս խաչերը արդարներու  
և մեղաւորներու պատկերներն էին , ար-  
դարներու պատկերներն էին , որ խաչերու  
մէջը իրենց քրիստոնէական համբերութիւրը  
յաւիտենական փառքերուն կրհասնին . ու  
մեղաւորներու պատկերներն էին , որ իրենց  
տրտնջելովը և անձսյին ձեռքին դէմ ապրս-

տամբելովը՝ որ զիրենք կըհարկանէ, զՄ.Ճ  
փառաւորելու միջոցները իրենց գատա-  
պարտութեցը նիւթ կընեն. Ղ. 1. 17:

Խրատ Խաչելուի Գրք:

Խաչելութիւնը մեծ գիրք մի է, որմէն  
պարտրկան ինք սորվելու՝

« . Նախ՝ Այ ունեցած պարտքերնիս՝  
իր անաչառ գատաստանէն վախնալու <sup>1)</sup>,  
որ մեղքի համար ասանկ ճիշտ հատուցում  
կըպահանջէ. ու իր ողորմութեւնը յուսա-  
լու, որուն աթոռը խաչելուին է <sup>2)</sup>. Ղ. 1. 17  
Այ պատուելու ու փառաւորելու, որ մեղի  
համար իր մէկհատիկ Արդւոյն չիխնայեց <sup>3)</sup>.  
ու Արդին Այ սիրելու՝ որ մեղի համար ինք  
իրեն չիխնայեց:

Բ. Երկրորդ՝ մեր ընկերին ունեցած  
պարտքերնիս՝ ով որ է նէ՝ մեղիպէս սիրե-  
լու, վնդի Ք. 1. 17 ասչափ սիրեց զմեզ զամ-  
մէնքնիս ալ <sup>4)</sup>. մեր ընկերը գայթաղ-  
ղեցընելէն, ու իր հոգին կորսնցընելէն

1. Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն  
զի՞նչ լինիցի. Ղ. 1. 17. 31:
2. Ս'առիցուք այսուհետեւ համարձակուի՛ր առաջի  
աթոռոյ շնորհացն. Ղ. 1. 17. 16:
3. Ար յիւր Արդին ոչ խնայեաց՝ այլ վն մեր ամե-  
նեցուն մասնեաց գնա. Ղ. 1. 17. 32:
4. Սիրեցէք զմիմեանս՝ որպէս սիրեցի ես զձեզ.  
Յ. 1. 17. 34:



վախնալու, որուն համար Վս խաչին վրա մեռաւ :

Գ. Արրորդ՝ մենք մեզի ունեցած պարտքերնիս՝ մեր հոգւոյն գինը ու յարգութիւն ճանչնալու, և ուրիշ փնասները ու կորուստները բանի տեղ չիզներլու մեր հոգին պահելու համար. վս զի Վս զմեզ ժամանակաւոր ու անցաւոր կորուստներէն պահելու համար չիմեռաւ, մինակ մեր հոգին յաւիտենական կորուստէն պահելու համար մեռած է <sup>1)</sup>. անոր համար ալ մեր հոգին աշխարհիս բոլոր գանձերէն ու ամմէն բաներէն աւելի կարժէ <sup>2)</sup> :

### ( ) Ի նստի :

Արկու սիրելի բարեկամներ կային, մէկը եկեղեցական ու շատ կարգացող, մէկալը աշխարհական ու միամիտ, որ կարգալ ալ չէր գիտեր. ասոնք ԱՅ աղէկ ծառայելու համար անապատը դացին, մէկզմէկու մօտ խուցեր շինեցին, ու զիրենք խիստ ճգնութիւններու՝ աղօթքի՝ պահքի՝ ապաշխարութիւններու տրւին : Այկեղեցա-

1. Սիրեաց զիս, և մատնեաց զանձն վասն իմ. Գաղատ. Բ. 20 :

2. Ոչ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօք փրկեցարուք . . . : ԱՄ պատուական արեամբն Վսի. իբրև անբիծ և անարատ գաւինն. ա. Պիտ. ա. 18. 19 :



կանը շուտով ձանձրացաւ՝ շատ տրտմութե  
մէջ ինկաւ, ու կուղէր աշխարհք դառնալ :  
Տգէտ աշխարհականը ասոր ներհակը իր  
ապաշխարութիւններուն մէջ շատ ուրախութի  
կրողար, ու երեսէն ալ կըրցուցունէր : Այ-  
կեղեցականը ասոր ուրախութիւնը տեսնելով,  
իր փորձութիւնը պատմեց ու անոր խորհուրդ-  
հարցուց՝ որ ինքը ի՞նչպէս կրնայ կոր ա-  
նանկ ուրախութիւնով ճգնութիւն ընել : Այս  
գիրք մի ունիմ, ըսաւ՝ աշխարհականը, ան-  
կէ ամմէն օր յաւիտենական իմաստութիւնը  
կըսորվիմ, ու աս գիրքը Վսի խաչելու-  
թիւն է : Այս գրքին մէջը կըկարդամ նախ՝  
իմ փրկիչս Վսին անձային առաքինու-  
թիւները, ու կըջանամ անոնց հետեւելու  
ու գործքով կատարելու : Այրկրորդ՝ կը-  
կարդամ Յսիս անչափ դառն չարչարանք-  
ները՝ անոնցմով սիրտ կուտամ ինծի ա-  
պաշխարութեա բոլոր խստութիւնը ու ծան-  
րութիւնը կամաւ ու սիրով քաշելու, տես-  
նելով՝ որ իմ փրկիչս ինծի համար անչափ  
բաներ քաշեր է : Արրորդ՝ կըկարդամ իմ  
մեղքերուս ծանրութիւնը ու տգեղութիւնը,  
որ դանոնք ջնջելու համար Այ Արդին իր  
բոլոր արիւնը թափել ուզեց : Թէ որ դուն  
ալ կարդալու ըլլաս աս գիրքը նէ՛ մէկալ  
գրքերէդ աւելի պտուղ կըրնաս հանել, ու  
ան ատենը աս Այ սիրուն համար քաշած

ամմէն ծանրութիւներդ քեզի ալ շատ ա-  
նուշ կուգան : Ասոնք լսելով եկեղեցա-  
կանին սիրտը բացվեցաւ , խաչելութիւն սի-  
րով պագաւ , ու առաջադրութի դրաւ բո-  
լոր կենացը մէջ խաչելութե գիրքը կար-  
դալու , ու դրած առաջադրութեը վրա  
հաստատ կենալով , ուրախութե քաշեց  
անկէ ետքը ան ճգնութիւները : Արքիմ .  
Էրեմ . Բ. Ե Էրեմ . Գրեմ . Գրեմ . Գր . Ժ :

ՏԵՄԵՐՄԷԿԵՐՈՐԻ ԷՆՄԵՐ

Շատապատճիմ չարքորդ հասնի շարունակուելէր :

Կ . Յն Բն հարկան չարչարվեցաւ ու  
մեռաւ :

դ . Չէ՛ ինքը իր կամօքը չարչարվեցաւ ու  
մեռաւ :

Կ . Ինչո՞ւ ուզեց չարչարվիլ ու մեռնիլ :

դ . Սեր մեղքերուն համար Ա՛յ կատարեալ  
հատուցում ընելու՝ արքայութե դուռը  
մեզի բանալու , ու հոն հասնելու հարկաւոր  
չնորհքները մեզի վաստրկելու համար :

Կ . Սենք մեզմէ չէի՞նք կրնար ատ հա-  
տուցումը ընելու :

դ . Չէ՛ վնգի մեղքը անարդ ստեղծվածի՛  
Ա՛յ անսահման մեծութեը դէմ՝ ըրած նա-  
խատինք մը ըլլալով՝ անսահման հատու-

ցում կուզէ, որ սահմանաւոր ստեղծւածը  
չիկրրնար ընել :

հ. Վս ՄԺ է, ինտոր կրողաւ չարչարվել  
ու մեզի համար մեռնելով վճարել :

ող. Ինքը մարդկութիւնը չարչարվեցաւ, ու  
անձութիւնը իր չարչարանացը անսահման  
արժողութի մը տրվաւ :

հ. Հարկ էր, որ Վս անչափ չարչարանք  
քաշէր, որչափ որ քաշեց նէ :

ող. Չէ, իր չարչարանքները անգին ըլլա-  
լով անոնց մէկ պզտիկ մասն ալ բաւական  
էր հազար աշխարհք փրկելու :

հ. Մնանկ է նէ ինչո՞ւ անչափ չարչարվեցաւ :

ող. Սեղքին չարութիւն՝ ու իր սիրուն մե-  
ծութիւնը մեզի յայտնելու համար :

հ. Վս որո՞ւն համար մեռաւ :

ող. Հասարակաբար ամմէն մարդիկներու  
համար :

հ. Թէ որ Վս ամմէն մարդիկներու հա-  
մար մեռաւ նէ՞ ինչո՞ւ ամմէն մարդ փրկուե՞  
չի հասնիր :

ող. Վս չի ամմէնը Վսի մահւանէն, ու  
իրենց համար վաստրկած արդիւնքներէն  
պառուղ չեն ուզեր հանել :

հ. Թէ որ Վս անսահման հատուցում  
ըրաւ նէ՞ մեզի ի՞նչ կրմնայ ընելու :

ող. Սեղի ալ ան կրմնայ, որ խորհուրդ-

ներ ընդունելով, ու բարի գործքերով  
անոնց մասնակից ըլլալու աշխատինք:

Վ. Ե՛ր չարչարանքն էր ուն որսորդն է՛ր:

Վ. Ե՛ր չարչարանքներուն մէջը որնոր  
Մ. Ե. տարանիչները կը պատմեն՝ նշանաւոր  
պարագայ մը կերէնայ, որ իր անմեղութիւնը  
զինքը չարչարողներն ալ ճանչցեր էին:  
Յուգա՛ որ զինքը վաճառեց, կը պողայ, որ  
ես մեղք գործեցի՛ արդար արիւն մատ-  
նեցի, ու յուսահատութիւնով կերթայ ինքը  
զինքը կրկախէ: Պետրոս առաքեալը, որ  
զինքը ուրացաւ նէ, իր մեղքին ծանրութի  
իմանալով ըրածին վրա սաստիկ զղջացաւ,  
և յուսով ու լալով Մ. ստուծմէ թողութի-  
ւնդրեց: Սուտ վկաները իրենց վկայու-  
թիւնները մէկզմէկու համաձայնել չիկրնա-  
լով մէկզմէկ սուտ կը հանէին, ու անով  
Յ. Ե. անմեղութիւն իրենք ալ յայտնի կը տես-  
նէին: Վ. հասնանները ու քահանայապետ-  
ները Վ. Ե. մահը ուզելու համար մինակ  
իրենց չար նախանձէն ուրիշ պատճառ մը  
չունէին, որն որ դատաւորն ալ գիտէր.  
Վ. Ե. Ե՛ր՝ զէ աս նախանձո՛ւ հարսնեցին զնա.  
Ս. Ե. Ե. Ե՛ր. 8:

Պիղատոսը իր հակառակախօս դատաս-  
տանովը ամմէնուն առջևը Վ. Ե. անմեղու-  
թեքը կը վկայէր, ու նոյն ատենը զՎ. Ե. կը-

դատապարտէր, ու անոր անմեղ արիւնին  
հաղորդ չըլլալու համար ժողովուրդին առ-  
ջևը ձեռքը կը լըւար, որն որ իր հրամա-  
նաւը պիտոր թափէր: Արոնք որ ինչ-  
վան խաչը զինքը նախատեցին նէ՛ հոն տեղը  
յայտնի խոստովանեցան, որ զինքը մահ-  
ւանէ չապրեցուց նէ, ուրիշները ապրեցու-  
ցած էր: Ա երջապէս իր չարչարանքնե-  
րուն ու մահւան վրա բոլոր բնուիւր զար-  
հուրեցաւ. արեգակը խաւարեցաւ. օդը  
մըթընցաւ. տաճարին վարագուրը վերէն՝ ի  
վար պատռեցաւ. երկիրը շարժեցաւ. քա-  
րերը ճաթըրտեցան. գերեզմանները բաց-  
վեցան. մեռելները կենդանացան. նոյն իսկ  
հրեաները կուրծքերնին զարնելով ետ  
դարձան: Ասոնք բոլոր կը վկայեն, որ Վս  
անմեղ էր, ու իրենց արարիչն էր, որ  
մարդկային բնութիւնը չարչարվեցաւ՝ ու  
մեռաւ. ու ասոնց մէջը իր անմեղին ալ  
յայտնի ցուցուց:

Խորատի Վսի անյին ու բնութեցը վրա:

« . Յս Վս թէպէտ կատարեալ մարդ  
է մարդկային բնութիւնը, բայց կատարեալ  
Աճ ալ է անմեղին անձովը ու կատարեալ  
բնութիւնը, որ մինակ մէկ անմեղին անձ ու  
երկու բնութի ունի՝ անմեղին ու մարդ-



կային . 1) անոր համար ալ արժանի է ամ-  
 մէն տեսակ պատիւներու և երկրպագու-  
 թիւներու : Իր անձային բնութիւնը իրեն  
 անձային իմաստութիւնը լեցված խօսքերէն՝  
 ու մինակ հրամայելով գործած սքանչելի  
 հրաշքներէն յայտնի կերևնայ , ու իր  
 մարդկային բնութիւնը իր մարմնաւոր ծննդե-  
 նէ սկսած բոլոր մարդկային գործքերէն՝  
 չարչարանքներէն՝ խաչէն՝ ու մահուանէն  
 յայտնի է 2) :

Բ . Յս Վս թէպէտ կատարեալ Վճ  
 է , բայց ճշմարտապէս մարդ ալ է 3) . որ

1. Որ ՚ի կերպարանս Վստուծոյ էր , ոչինչ յախը-  
 տակութի համարեցաւ զլինելն հաւասար Վս-  
 տուծոյ . այլ զանձնունայնացոյց՝ զկերպարանս  
 ծառայի առեալ . Գլխի . Բ . 6 : Լ : Վճ ճշմարտ ,  
 որ գոյով անմարմին ՚ի մարմնի երևեցաւ , ոչ  
 ունի զերկու անձն , այլ երկու բնութի . Սուրբ  
 Գրքի . սխալ . ՚ի ճարտ հասար :
2. Մանուկ ծնաւ մեզ . որդի տուաւ մեզ , որոյ  
 իշխանութի իւր ՚ի վր ուսոց իւրոց . և անուն  
 կոչեցաւ նմա . . . . Վճ հզօր . Լսոյ . Բ .  
 6 : Լ : Թէ որ հարցանէ վս մարդեղութե անօ-  
 րէնութեն , թէ քանի բնութի խոստովանիս .  
 պատասխանեալ . թէ զերկու բնութիս , և  
 զմի անձնաւորութի . Սուրբ Վճանա ՚ի Գրք սահ-  
 ինայ :
3. Որ էրն ՚ի սկզբանէ , զորմէ լուսքն՝ որում ա-  
 կանատեսն իսկ եղևաք , բնդ որ հայեցաքն , և  
 ձեռք մեր շոշափեցին ՚ի վր բանին կենաց .  
 . . . Յով . . . 1 : Վարդի ՚ի սքանչելեաց , Վճ  
 մարմնով վս իմ խաչեալ . մերով բնութիս  
 մեռանի Վճ անմահ խոստովանի . Շնորհ . Կան .  
 Գրքի . ուր :



ամմէն քրեքէն ու հրեշտակներէն աւելի  
քր՝ ու բոլոր ընտրեալներուն արժանի  
գլուխն է . անոր համար պարտրկան ենք  
մեր ամմէն գործքերու մէջ իր օրինակնե-  
րուն հետեւելու <sup>1)</sup> . որուն առաքինութի-  
ները շատ գերազանց՝ շատ մաքուր ու ամ-  
մէն միճակի յարմար են :

Գ. Յս Քս երկու բնութքը մարդ ու  
Մճ մեր փրկիչն է <sup>2)</sup> . անոր համար ամ-  
մէն շնորհակալութիներու՝ ու մեր սրտին  
բոլոր սիրուն արժանի է . իր փրկագոր-  
ծութե բարերարութիւր ընդհանուր է <sup>3)</sup> .  
ու ամմէն շնորհքներու աղբիւրը . իր չար-  
չարանքները ու ամմէն գործքերը յայտնի  
կրցուցունեն , որ Մճ մեղքը կատէ , բայց  
մեղաւորը կըսիրէ :

### Օրինակ :

Քսի հինկ հարիւր թըւականին՝ Սի-  
մաքոս պապին ատենը՝ Սարակինոսներու  
Մլմոնտոս թագաւորը քրիստոնէսայ եղաւ :  
Նւտիքեան հերետիկոսները ասիկայ լսե-  
լով՝ մէջերնէն երկու հոգի ելան՝ թագա-

1. Օրինակ մի ետու ձեզ , զի որպէս ես ձեզ արա-  
րի , և դուք աւնիջիք . Յովն . ԺԳ . 15 :
2. Որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն . ա . ՏԳ .  
Բ . 6 :
3. Նա է քաւութի մեղաց մերոց , և ոչ եթէ մե-  
րոց միայն՝ այլ և ամ աշխարհի . ա . Յովն . Բ . 2 :

ւորին դացին, որոնք որ Վսի երկու բնու-  
թիւն կուրանային, ու մինակ մէկ բնութի  
ունի կըսէին: Աս գարշելի հերետիկոսները  
սուտ պատճառներով թագաւորը խաբե-  
լու, ու իրենց չար աղանդին քաշելու կաշ-  
խատէին: Թագաւորը մտիկ ընելու պէս  
կեցաւ բոլոր ան բաները, որ մեր սբ հա-  
ւատքին դէմ կըսէին կոր: Արենք խօս-  
քերնին լըմընցընելէն ետքը թագաւորը  
ըսաւ իրենց. գիտնաք հարք, որ ասօր ին-  
ծի դժբաղդ լուր մը եկաւ, որ աշխրբիս  
մէջը աւելի չարագոյնը չիկըրնար ըլլալ, որ  
երէկ երկինքը Միքայէլ հրեշտակապետը  
մեռեր է: Հերետիկոսները աս լսեցին նէ՛  
խնտալով ըսին իրեն, որ ատ բանը ան-  
կարելի է. մնզի հրեշտակապետը հոգե-  
ղէն է՝ անմահ է, ու չիկըրնար մեռնիլ: Ան  
ատենը թագաւորը ըսաւ իրենց, անանկ  
է նէ՛ թէ որ Միքայէլ հրեշտակապետը  
հոգեղէն ու անմահ ըլլալով չիկըրնար մեռ-  
նիլ նէ, հապա Վս անձային բնութիւնը ինչ-  
պէս կըրցաւ մեռնիլ, թէ որ մարդկային  
բնութի ալ ունենալով երկու բնութի  
չունէր նէ: Թէ որ մենք ալ դուք ալ կը-  
հատանք, որ մեռաւ, անանկ է նէ՛ մարդ-  
կային բնութի ունէր, ու մարդկային բնու-  
թիւնը կըրցաւ մեռնիլ: Թագաւորը աս դօ-  
րաւոր պատճառաւ՝ ու ճշմարտութիով

ամբըցուց զերենք : Ս իշենց . Եպիսկոպոսը  
կըտարէ պատերազմ զարշին Տըջ :

ՏԵՍԻՆԻԿՈՒՆԲՈՐԴ ԼԵՍԵՐ

Լուսարարին հինգերորդ հասնն զլսա :

հ. Ի՞նչ կընշանակէ աս խօսքը . Էջ 'է  
դժոխս :

պ. Կընշանակէ , որ Վսի հոգին մարմնէն  
բաժնըվելէն ետքը 'ի գոգն Մբրահամու  
ինչաւ հոն ժողված սի հոգիները միսի-  
թարեւու , ազատեւու և արքայութի տանե-  
լու համար :

հ. Վսի հոգին մարմինէն բաժնըված ա-  
տենը Մճութին ալ բաժնըվեցաւ :

պ. Չէ , Վսի մարմինը ու հոգին թէպէտ  
մահաւմբ մեկզմէկէ բաժնըվեցան , բայց  
անձային անձը ու բնութիւր երկուքին հետ  
ալ միացած մնացին , ու չիբաժնըվեցան :

հ. Ի՞նչ ըսել է՝ յերրորդ տար-  
'ի հետեւոց :

պ. Ըսել է՝ որ Վս մեռնելէն երեք օր  
ետքը իր հոգին մարմնոյն հետ նորէն միա-  
ցաւ , ու կենդանի և փառաւորված մար-  
մնովը գերեզմանէն դուրս ելաւ , ինչպէս  
որ յառաջ շատ անգամ ըսած էր :

հ. Ըրեաները ի՞նչ զգուշութիւր քրած էին ,

որ չըլլայ՝ թէ Վրսի մարմինը մէկը գող-  
նալով կենդանացած կարծրվի:

■. Պիղատոսին հրամանաւը գերեզմանին  
վրայի քարը կրնքեցին, ու քովը զիշեք  
ցորեկ գունդ մ' ալ զինւոր պահապան  
գրին:

հ. Ինչ օգուտ եղաւ ատ զգուշութիւնը  
քէն:

■. Ընոնցմով Վրսի յարութիւնը ամմէնուն  
անտարակոյս յայտնեցաւ:

հ. Ո՛վ յարոյց զՎրս 'ի մեռելոց:

■. Ինքը զինքը յարոյց իր անային զօ-  
րութիւնը:

հ. Ինչպէս յարեաւ Վրս 'ի մեռելոց:

■. Ընչարչարելի՝ անմահ ու փառաւոր-  
ված մարմնով, ու մահւան և դժոխոց  
յաղթելով:

հ. Ո՞ր օր յարեաւ Վրս:

■. Օլատկի սք յարութիւն օրը, որ ան օրը  
մեծ տօն է:

Վրսի Եմատանի ճամբան աշխարհիւն  
Երեւոյնն պատմութիւն:

Յի աշխարհներէն երկու հոգի զատ-  
կին առջի օրը Յի վրա խօսելով Ամմա-  
ւուս անունով Արուստղէմի մօտ գեղը կեր-  
թային. Յի զինքը իրենց չիյայտնելով մե-

ջերնին խառնրվեցաւ՝ ու հարցուց իրենց՝  
Թէ ի՞նչ կըխօսէիք, ու ինչո՞ւ տրտում  
էք: Սինակ դուն մնացեր ես Արուսաղէմի  
մէջը, ըսին իրեն, որ չես իմացեր աս օրերս  
Յսի պատահած բաները, որ խօսքով ու  
գործքով զօրաւոր մարդ մը էր Մ, յ ու բո-  
լոր ժողովուրդին առջևը, մենք կըյուսայ-  
ինք, որ Ասրայէլի ազգը ինքը պիտի փրկէր:  
Աս բաներու վրա ալ աս առտու մերիններէն  
քանի մը հոգի իր գերեզմանը դացեր էին,  
մեզի պատմեցին՝ որ գերեզմանը բաց գը-  
տեր են, հոն տեղը երկու հրեշտակներ ալ  
տեսեր են, ու հրեշտակները իրենց հաս-  
տատեր են, որ անիկայ յարութի առեր  
է: Ան ատենը Յիսուս յանդիմանելով  
իրենց անհաւատութիւր՝ մեկնեց իրենց բո-  
լոր մարգարէներուն իր չարչարանացը ու  
փառացը վրա գրած մարգարէութիւնները:  
Աշկերտները Յսի վրա ասանկ իմաստուն  
ու անուշ խօսքերը ալ աւելի լսելու համար  
յորգորեցին զինքը, որ ան գիշեր իրենց  
հետ մնայ: Արթալու տեղերնին հասան  
նէ՛ Յս իրիկունը սեղանի վրայէն հացը  
առաւ՝ օրհնեց՝ կտրեց՝ ու իրենց տրվաւ  
ուտելու համար: Ան ատենը աչքերնին  
բացվեցաւ՝ զինքը ճանչցան, որ Յս էր,  
ու ինքը աներևոյթ եղաւ: Ասոնք շուտ մը  
Արուսաղէմ դարձան, աս իրենց պատա-



Հած ուրախական բանը առաքեալներու պատմեցին : Ասոնք աս բաները պատմած ատեննին՝ Յսնորէն մէջերնին եկաւ, իրենց խաղաղութիւն ողջոյն տրվաւ, աշկերտները զինքը հոգեղէն երևոյթ մը կարծելով վախնալ սկսան նէ, իր վերքերուն նշանները ցուցուց՝ զանոնք իրենց շօշափել տրվաւ, ինչ որ առջևը դրին նէ՝ իր մարմնոյն ճշմարտութիւնը յայտնելու համար կերաւ, գրքերէն զիրենք լուսաւորեց, և զիրենք ուրախութիւնով ու մխիթարութիւնով լեցունելէն ետքը անյայտ եղաւ :  
Պ Դ. Ի Կ :

Խաբար Յսնէ յարո-ւիւ զեռ :

ա . Յսնիսք յարութիւն մեր յարութիւն յոյսը հաստատեց <sup>1</sup>). և անկեղծութիւն մեր մեղքերէն դաճնալով՝ մեր հոգւոյն ԱՅ շնորհացը մէջ կենդանանալուն օրինակ եղաւ . բայց կեղծաւոր ու խաբերայ դարձերուն ալ դատապարտութիւն կը լլայ :

բ . Քսնի փառաւոր յարութիւն յայտնութիւն մեր մարմիններուն փառքերով յառնելուն պատճառն է, ու մեր հոգինե-

1. Արպէս Քսն յարեաւ ՚ի միւսերոց . . . նոյնպէս և մեր ՚ի նորոգումն կենաց շրջիսցուք . Զաւի . 2 . 4 :



րուն մեղքերէն ազատելուն օրինակ է. <sup>1)</sup> Բայց վարքերնին փոխելու և մեղքէն դառնալու ամբօրոյններուն ալ դատապարտութի է:

Գ. Յի յարութէ ետքը անմահութիւր մեր յարութէ ետքը յաւիտեան անմահ մնալուն փորձն է. <sup>2)</sup> ու մեր հոգւոցը միշտ Մ. Ն շնորհացը մէջ մնալուն օրինակն է. բայց հաստատ չիկենալով շատ անգամ մեղք ինկողներուն ալ դատապարտութիւն է:

### Օրինակ:

Նարեպաշտ ու ազնւական զինւորական մը մեծ բաղձանքով ու քանի մը ընկերներով Նեթղեհէմ կերթայ Յի ծնած տեղը տեսնելու համար, անկէ Նրուսաղէմ կերթայ Յի Նի բոլոր մեր փրկութիւր համար կատարած տնօրէնութիւններուն տեղերուն սյցելութի ընելու համար, ու ասանկ բարի բանը ալ աւելի ջերմեռանդութիով կատարելու համար յառաջուց խոստովանած ու սք շաղորդութիւր առած Նազարէթ կերթայ՝ սք Մ. ծածնայ բնա-

1. Յայնժամ և դուք յայտնեսցիք փառօք. Վրոն . 4 . 4:
2. Մ. յսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ շաղորդ. 9:

կուժիր տեսնելու, ուր որ Վարրիէլ հրեշ-  
տակապետը իրեն աւետիս բերած՝ ու մար-  
դեղուժե խորհուրդը կատարված էր, ետքը  
Յորդանան կուգայ, ուր որ Յն Յուհան-  
նէս մկրտիչէն մկրտրված էր, վերջը Վսի  
քառսուն օր ծով կեցած անապատը՝ չար-  
չարանքներուն տեղերը՝ թաղված ու յա-  
րուժի առած սք գերեզմանը՝ ու բոլոր  
տնօրէնուժե տեղերը մեծ ջերմեռանդու-  
ժիով մէկիկ մէկիկ պըտըտելէն ու տես-  
նելէն ետե՛ երբոր ձիժենեաց լեռը եկաւ  
նէ՛ ուստի որ Վս երկինքը համբարձած  
էր՝ հոն տեղը ալ աւելի ջերմեռանդուժիով  
Վսի բոլոր տնօրէնուժիներուն վրա եր-  
կան մտածական ընելէն ետքը՝ լալով աչ-  
քերը երկինքը վերցուց, ու մեծ փափա-  
քով աս աղօթքը ըրաւ: Այլ քաղցր Յն  
Վս՝ ես քու աղքատ ու անարժան ծառայ  
դբեզ ասչափ փընտըռեցի, երկրի վրա քու  
ամմէն տնօրէնուժիներուդ տեղերը պտը-  
տեցայ, բայց դբեզ չիգտայ. հոս տեղս  
դբեզ փընտըռու քու ետեէդ դալու ալ  
ուրիշ տեղ չեմ գիտեր, գոնէ աս շնորհ-  
քը ըրէ ինծի, որ քու ետեէդ դամ եր-  
կինքը, ուր որ դուն աս լեռնէն վերացար,  
որ թող տամ սակէ ետքը աս մեռնելու  
մարմինս, ու յախտեան քեզի հետ ըլլամ:  
Վս աղօթքը լմեցաւ՝ հողին ալ աւանդեց:

Ընկերները իրենց ջերմեռանդ ընկերին մէկէն ՚ի մէկ մեռնելուն վրա շատ ցաւելով, ու մեռնելուն պատճառն ալ չի գիտնալով՝ բժիշկ կանչեցին, մարմինը բանալ տրվին, ու տեսան որ սիրուն սաստկութիւն սիրտը բացված երկու կրտոր եղած էր. որուն մէջը աս խօսքը գրված էր՝ Յն՝ սէր իմ: Սէր իմնապարտս սինա. համբ. ճառին Տեղ. ու շէնքիկոս հայելի օրին. Տեղ. իրապարտէն:

ՏԵՍԻՒԲԵՆԲՈՐԴ ԼԵՍԵՐ

Լաւապարտէն ձեցելորդ ու Էօլնէրորդ  
Գասէրուն ձրա:

Կ. Քն յարութիւն ետքը քանի՞ ժամանակ մնաց երկրի վրա:

Պ. Քառսուն օր:

Կ. Քն աս քառսուն օրը ի՞նչ ըրաւ աչքի վրա:

Պ. Իր աչկերտները իր յարութեն հաւատքին մէջը հաստատելու համար իրենց շատ անգամ երեցաւ, ու արքայութե խորհուրդները իրենց սորվեցուց:

Կ. Քառասներորդ օրը ի՞նչ ըրաւ:

Պ. Ըռաքեալները և ուրիշ աչկերտներու բաղմուճիւնը ձիթենեաց լեռան վրա ժողվեց՝ հոն տեղը զիրենք օրհնեց՝ ապրսպրեց, որ աւետարանը բոլոր աշխարհք

քարոզեն, ու անոնց աչքին առջևը մարմնովը երկինքը համբարձաւ՝ ինչպէս հաւատամքի մէջ կըսվի՝ Եւէալ յԵրկնս նոյնն հարմնոյն՝ որ համբարձման օրն էր :

հ. Վաս ի՞նչպէս համբարձաւ երկինքը :

ող. Իր անձային զօրութիւնը համբարձաւ, ու փառաւոր ամպ մը ծածկեց զինքը աշկերտներուն աչքէն :

հ. Ե՞՞մ մարմին չունի, հապա ի՞նչպէս կըրնաս ըսել, որ Վաս նախաւ ընդ առջէն չօր տե՛նակարողէ :

ող. Յուզընելու համար, որ Վաս բոլոր արարածներէն շատ դերագոյն փառքերովերացաւ, ու իր կարողութիւնը Մ.Յ. չօր ամենակարողութե՛ն հաւասար է :

հ. Ե՛ս բանս ի՞նչ ըսել է, գուցայ է նոյնն հարմնոյն եւ ի՞նչօր չօր՝ է դատել զԵրկնս եւ զԵրեւոյն :

ող. Ըսել է, որ աշխրբին կատարածին Վաս պիտի գայ իր մարմնովը բոլոր բարի ու չար մարդիկները՝ ու յառաջ կամ վերջը ան ընդհանուր կրակէն մեռած մարդիկները դատելու համար :

հ. Ի՞նչպէս պիտի գայ Վաս :

ող. Ե՛նպատմելի փառքերով մեծութիւններով ու բոլոր երկնային զօրքերով շուրջ պատած պիտոր գայ՝ բարիները շարերէն

զատէ, ու անձային խորհուրդները բոլոր կրնքէ վերջացրնէ պիտոր :

Կ. Ինչո՞ւ կրսես. որոյ Լազարոս-Լէն ոչ գոյ վախճան :

Պ. Այնքի Վս թէպէտ համբարձման օրը գնաց իր թագաւորութիւն առաւ, բայց վերջին դատաստանին օրը ամմէնուն հրատարակէ պիտոր, ու ընտրեալները իր արքայութեան մէջը ժողովելէն ետքը յաւիտեանս յաւիտենից իր փառքերը անոնց հաղորդելով պիտի թագաւորէ, ու իր թագաւորութիւնը ամենեւին վերջ պիտի չունենայ :

Յախճ նահապետին հօրը դառնալուն պատճառ-Լէն :

Յակոր նահապետը իր եղբօրը Ասաւին հալածանքէն փախչելու համար Միջագետ իր մօրեղբօրը Աբբանին քովը դրնաց, ու քսան տարի մեծ աշխատութիւնով ու սքանչելի համբերութիւնով իրեն ծառայեց : Ա՛յնքի իր հաւատարիմ աշխատանքը օրհնեց՝ շատ զաւկրներու հայր ու շատ կենդանիներու տէր ըրաւ զինքը, որ անժամանակէն հարստութիւնները ասոնք էին, ետքը իրեն հրամայեց, որ հօրը քովը դառնայ : Յակորը ճամբան իմացաւ, որ Ասաւը չորս հարուր հոգիով զինքը դիմաւորելու կուգայ կոր, շատ վախնալով՝ որ չըլլայ թէ իրեն



դէմ թշնամու թիով գայ, Ա՛յ աս աղօթքը  
բրաւ: Ա՛յ Ա՛բրահամին ու Իսահակին Ա՛ծը՝  
ես քու մէկ պրղտիկ բարեբիդ ալ հասու-  
ցում ընելու կարող չեմ. ես աս Յորդանան  
գետը ձեռքս դաւազանով մը մինակ ան-  
ցայ, ու հիմայ երկու գունդ բազմութիով  
ետ կրդառնամ կոր. կատարէ քու խոս-  
տումդ ինձի, ու ազատէ զիս եղբօրս Ասա-  
ւին՝ ձեռքէն: Ա՛ծ աղօթքին լսեց. Ասաւը  
եկաւ՝ զինքը ճշմարիտ եղբօր պէս դիմա-  
ւորեց: Յակօբ իր հայրը Իսահակը տես-  
նելու արժանի եղաւ. ու իր տասերկու  
ղուկըներովը Ա՛յ ժողուուրդին գլուխ ե-  
ղաւ, որոնցմէ Իսրայէլի տասերկու ցե-  
ղերը ծագեցան: Ասիկայ մեր փրկչին գե-  
ղեցիկ օրինակն էր, որ զմեզ մէկնօր կեան-  
քի մը ծնանելու համար երսունւիրեք  
տարիէն աւելի ծանր աշխատանք քաշելէն  
ետեւ, ու խաչին դաւազանովը մեր ողոր-  
մելութե՛ն գետը մինակ անցնելէն ետեւ եր-  
կու գունդ բազմութիւններով իր Հօրը դար-  
ձաւ, այսինքն առջևէն իրեն հետ հին  
կտակարանի սքերովը, ու ետեւէն նոր  
կտակարանի սքերով. Յոսօ ՚ի յէտին ան-  
ցի ընդ այս Յորդանան, արդ ահա-ասի՛ի է-  
լէ յէրի-ս Բանախ: Օ՛նն. ԼԷ:



Խորոհո Վրնի համբարձմանը զեռ :

ա . Վրն երկինքը համբարձաւ հոն տեղը յաւիտեան թագաւորելու համար <sup>1)</sup> . անանկ է նէ երկինքը իր փառքերուն աթոռը՝ մեծվայելչութե գահը՝ իր ամենակարողութե շատ գեղեցիկ գործքը՝ մէկ անվախձան երանութե տեղն է <sup>2)</sup> :

բ . Յն երկինքը համբարձաւ արքայութե գոցված դուռը մեղի բանալու , ու հոն սեղի տեղ պատրաստելու համար <sup>3)</sup> . անանկ է նէ հոն երթալը մեղի կարելի է , թէ որ ամմէն գործքերնիս՝ խօսքերնիս , ու խորհուրդներնիս անոր բաղձանքովը ու յուսովը կարգաւորելու ըլլանք նէ :

գ . Բայց Վրն երկինքը խաչին ճամբովը համբարձաւ , ու իրեն հարկ ըրաւ չարչարվիլը՝ ու իր փառքերուն անանկ մտնելը <sup>4)</sup> . ուրեմն երկինքի ճշմարիտ ճամբան աշխրբիս խաչերը ու փորձանքներն են <sup>5)</sup> .

1. Թագաւորութե նր վախձան մի լիցի . Ղ. 14 . 33 :
2. Ըթոռն Ըստուծոյ և Վառին նր էր ՚ի նմա . . . և թագաւորեսցին յաւիտեանս յաւիտենից . Յ. 1 . 35 :
3. Արթամ պատրաստեմ ձեզ տեղի . Յ. 15 . 2 :
4. Պարա էր չարչարել Վրնի , և մտանել ՚ի փառս իւր . Ղ. 14 . 17 . 26 :
5. Բազում նեղութիւ պարտ է մեզ մտանել յարքայութին Ըստուծոյ . Վ. 7 . 21 :

անոր համար չարչարանք ու նեղութի քա-  
շողները իրաւունք չունին տրտնջելու .  
բայց հարստութիներու և ուրախութիներ-  
րու մէջ կեանք անցունողները մեծ պատ-  
ճառ ունին վախնալու :

### Օրինակ :

Ք.Յի 1240 թրւականին քարոզիչնե-  
րու կարգէն Վեռնարդոս անունով բարի  
քահանայ մը կար , որ Փողթուքալ իրենց  
վանքի մէջը պահարանի վրա ըլլալով իր  
իշխանութեը տակ երկու պղտիկ տղաք ու-  
նէր , որ իրենց կրօնի զգեստը հագած էին :  
Մ.ս տղաքը մէկ քանի պատարագի սպասա-  
ւորութի ընելէն ետքը մատուռի մը մէջ  
նախաճաշիկ կընէին : Մ.ն տեղը խորանի  
մը վրա սիւ Մ.ճածնայ գեղեցիկ արձանը  
կար գիրկը մանուկ Յսով : Մ.սոնք նա-  
խաճաշիկ ըրած ատեննին մանուկ Յսն ալ  
իրենց մանկական անմեղութեը խոնարհե-  
լով մօրը գրկէն վար կիջնար՝ իրենց հետ  
նախաճաշիկ կընէր : Մ.ս բանս քանի մը  
անգամ պատահելէն ետքը՝ որ մը քահա-  
նային պատմեցին , բայց մեզի հետ չիխօսիր՝  
ըսին : Այլ քահանան սկսաւ իմաստութիով  
մտմտալ , որ Յս աս բանով խորհուրդ մը  
ունի կատարելու . անոր համար իրենց սոր-  
վեցուց . որ Յս մանուկը ուրիշ անգամ

իրենց քովը գալու ըլլայ նէ՛ ըսեն իրեն .  
որ դուն մեր տէրը ու մեծ Ա՛ծը ըլլալով  
կրկոնարհիս կոր մեր մէջը գալու՝ ու մեզի  
հետ կերակուր ուտելու, բայց մեզի հետ  
չես խօսիր կոր, ու բան մը ալ չես բերեր  
կոր մեզի: Ասողաչենք՝ քեզի, որ դուն ալ  
զմեզ մեր վարժապետին հետ մէկ տեղ  
քու երկնաւոր Հօրդ տունը հրաւիրես,  
որ մենք ալ հոն տեղը քեզի հետ նախա-  
ճաշիկ ընենք: Արկորորդ օրը Յօ՛ւր մէջեր-  
նին եկաւ նէ՛ տղաքը ասիկայ իրեն ըսին:  
Յօն ալ իրենց ըսաւ, որ ես ալ շատ կու-  
ղեմ առ բանը, ու համբարձման օրը՝ որ  
մօտ է՝ զձեզ պիտի հրաւիրեմ: Տղաքը  
Յօի ըսածները պատմեցին քահանային,  
ան ալ ասանկ երջանիկ լուրին շատ ուրա-  
խացաւ: Իրեքն ալ պատրաստուլեցան,  
համբարձման օրը քահանան իրենց առջևը  
պատարագ զրուցելէն ետքը՝ իրեքը մէկ  
տեղ աղօթարանի մը մէջ քաշված՝ աղօթե-  
լով հոգիներն Յօի ձեռքը աւանդեցին:  
Հ. Ա՛նպոնը իւրապէս բարոյեցնելու ժա-  
ման իւր գրուելէ մէջը:

ՏԵՄԵՐ, ՉՈՐՍԵՐՈՐԳ՝ ՀԵՄԵՐ

Հասարակի ուրիշից խանի զեռ :

Է. Քսիբ համբարձմանէն յառաջ գըլ-  
խաւորարար ինչ խոստացած էր առա-  
քեալներուն :

Պ. Հոգի սքը իրենց խրկելու խոստա-  
ցած էր :

Է. Հոգի սքը ո՞վ է :

Պ. Ամենասք Արրորդութիւն երրորդ անձն  
է, որ ճշմարիտ Աճ ու ամմէն բանի մէջ  
երկու անձերու հաւասար ու համագոյակից  
է, ու անոր համար ալ հաւատամքի մէջը  
հասարակի եւ ՚ի սքը հոգին յանկըն եւ ՚ի հա-  
սարկեալն կըսվի :

Է. Ինչ ըսել է հաւատամքին աս խօսքը՝  
որ ՚ի հոգի եւ յԱրդոյ Բրիտի :

Պ. Իսկ է՝ որ հոգի սքը հօր ու Արդ-  
ւոյ՝ իրենց անձերուն՝ ու մէկզմէկու՝ գոյա-  
ցական ու հաւասար սէրը ըլլալուն համար  
ալ հաւասարապէս երկուքէն ալ կըրդխի :

Է. Ինչէն գիտես ասանկ խորունկ անձային  
խորհուրդը :

Պ. Ակեղեցին ասանկ կըսորվըցունէ, որ  
Աճ ալ իրեն ասանկ յայտնած է, վստի Քս  
հոգի սքին վրա խօսած ատենը երբեք  
հայր ասցէ՛ ասարկեացէ՛ ՚ի հոգի եւանի  
կըսէ. երբեմն ալ յիմի անպի ասարկեաց

Էս աստիճանից՝ Հոգի Ճշմարտութիւն, կրսէ՛ կամ փշեւում ասէ՛ք զՀոգի սբին՝ կրսէ, որ ան խօսքերը Հոգի սբին ՚ի Հօրէ և յԱրդւոյ հաւասար բղխումը կրնշանակեն :

հ. Հապա Կոստանդնուսոյսոյ առջի ժողովը ինչո՞ւ համար Տէր Ինգամարաբ Եւոզ ՚ի Հօրէ ըսաւ՝ Հոգի սբին համար :

դ. Այճի ան ատենները Հոգին սբին յԱրդւոյ բղխելուն վրա քրիստոնեայ ազգերուն մէջը տարակոյս չիկար, անոր համար երբոր արիօսեան ու մակեդոնեան հերետիկոսները կարծելով որ Արդին Հօրէն՝ ու Հոգին Արդիէն պղտիկ է, Արդին մինակ ՚ի Հօրէ, ու Հոգին մինակ յԱրդւոյ կըբղխի ըսել սկսան նէ, եկեղեցին ասիկայ խափանել ուզելով՝ Եւոզ ՚ի Հօրէ ըսաւ :

հ. Ինչո՞ւ ան ատենը մէկէն ՚ի մէկ Եւոզոյն ալ չաւելցուց եկեղեցին հաւատամքի մէջը :

դ. Այճի հերետիկոսները Արդւոյ Հօր՝ ու Հոգի սբին Հօր ու Արդւոյ հաւասար ու համագոյակից ըլլալը կուրանային կոր, անոր համար Եւոզոյ աւելցրնելը անոնց հերետիկոսութիւնը դէմ չէր ըլլար :

հ. Եկեղեցին վերջէն ինչո՞ւ աւելցուց Եւոզոյն հաւատամքի վրա :

դ. Երբոր ատեն անցնելով ու առջինները



մոռցրվելով ուրիշ հերետիկոսներ ելան՝  
ու Հոգի սբին Մարգարայ ալ ելալը ուրա-  
նալ սկսան նէ, ան ատենը անոնց հերե-  
տիկոսութիւն ալ խափանելու համար յառա-  
ջուց զօրութիւն հաւատացածը հաւատամքի  
մէջ յայտնի դրաւ, ու ամմէնը պարտա-  
ւորեց անանկ ըսելու, և անանկ հաւատալու:  
հ. Այլեղեցին ի՞նչ իշխանութիով կրօնաւ-  
աւելցրնել Արիկիոյ ու Կոստանդնուպօլսոյ  
հաւատամքին վրա աս մասնիկը Խորհրդոյ:  
դ. Ան իշխանութիով կրօնաւաւելցրնել,  
որ իշխանութիով որ յառաջուց ան ժողով-  
ներու մէջ առաքելոց հաւատամքին վրա  
Արիոսին դէմ համագոյակիցը՝ ու Սակեդո-  
նին դէմ Տէր Կենդանաբար ելող 'ի Հօրէ՛  
բնդ Հօր Խորհրդոյ 'ի Ռատն երկրոր-  
դելն աւելցուցած էր, այսինքն՝ Պետրոսի  
ձեռքովը Քնէ ընդունած անսխալ ու դը-  
ժոխքի դռներէն անյաղժելի իշխանութիւնը  
ոչխարները ու գառնուկները արածելու,  
և եղբարները սբ հաւատքի մէջ հաստա-  
տելու:

հ. Ար օր եկաւ Հոգի սբ առաքեալներուն  
վրա:

դ. Համբարձմանէն տասը օր ետքը՝ Հո-  
գէզալստեան օրը:

հ. Ի՞նչ կերպարանքով եկաւ Հոգի սբը,



ա. Հրեղէն լեզուներու ձևով իջաւ, որոնք ամմէն մէկին գլխուն վրա կեցան :

հ. Մն հրեղէն լեզուները ի՞նչ կընշանակէին :

ա. Շնորհքի լուսը՝ սիրոյ հուրը՝ որով լեց-վեցան առաքեալները, ու լեզուներու պարգևը կընշանակէին՝ որ ընդունեցան ու անմիջապէս ամմէն լեզուները խօսիլ սկսան :

հ. Սինակ ան օրը ու մինակ առաքեալներուն վրա եկաւ Հոգին սքը :

ա. Հոգին սքը չերևնալով ամմէն աղէկ պատրաստրված հաւատացեալներուն սիրտըն ալ կիջնայ :

հ. Ի՞նչ բաներ կըպարգևէ իրենց :

ա. Իրենց հոգիներն շնորհքներով ու պարգևներով կըլեցընէ, անոր համար ալ Հոգի սքը սրբող կըսվի :

հ. Մնանկ է նէ՝ Հայր Մժ ու Որդին Մժ սրբարար շնորհք չեն պարգևեր :

ա. Հրամմերես անոնք ալ կըպարգևեն, վսղի երեքն ալ մի և նոյն Մժ ըլլալով Արքորդութեան ձերուն մէկը անձերն երսէն ինչ որ կընէ նէ, իրեքն ալ մէկ տեղ կընեն, ու մէկզմէկէ մինակ անձնական յատկութիւններով կըտարբերին :

հ. Հապա ինչո՞ւ կըսես, որ Հոգի սք սրբացընող է, ու մէկալ անձերը չես յիշեր :

դ. Այլի ամենասքե Ներորդութե արտա-  
 քին գործքերը կըզանազանէ սքե դերքը .  
 արարչագործութիւն՝ որ Հայր Արդուլը  
 ըրաւ, Հօր կընծայէ, աշխրոքի վրկութիւնը  
 Արդույ կընծայէ . ու սրբելը՝ լուսաւորելը՝  
 ազգելը ու սորվըցունելը շնորհքի գործք  
 ըլլալով Հոգի սքին կընծայէ, անոր հա-  
 մար ալ հաւատամքի մէջը կըսվի . որ Խօ-  
 սեցաւ յօրէնս եւ 'ի հարգութեա եւ յաւելա-  
 րանս, որ էջն 'ի Յարգանան, յարուլեաց  
 զառաւելան, եւ Բնակեցաւ 'ի սքան :

Վեդէոնի հարկանացիները յողլելու-  
 պատահալիւ :

Վեդէոնը երբոր մադխանացիներու  
 դէմ պատերազմի երթալու պատրաստե-  
 ցաւ նէ՛ Մծ ըսաւ իրեն, որ քու բանակիդ  
 զօրքը շատ է՝ անանկ շատ զօրքով չես  
 կըրնար իրենց յաղթել . ու հրամայեց՝ որ  
 իր բոլոր զօրքը գետի մը քով տանի՝ ու  
 փորձէ որոնք որ իրենց ծունկերուն վրա  
 պառկելով կուշտ մըկըխմեն նէ՛ զանոնք  
 իրենց տներնին խրկէ, ու մինակ զանոնք  
 տանի հետը, որոնք որ շներուն պէս ա-  
 փով ու լեզաւ կըլափեն : Վեդէոնը կա-  
 տարեց Մյ պատուիրած փորձը, ու շատ  
 քիչ մարդիկներ ափով ու լեզուաւ խմե-  
 ցին ու զանոնք քովը պահեց, ու մէկալ-

նոնք տներնին խաւրեց, անանկ որ յառաջ  
 իր բանակը երեսունւերկու հազար հոգի  
 կային, աս փորձէն ետքը մինակ իրեք հարուր  
 հոգի մնացին : ՄԾ հրամայեց Վեդէոնի, որ  
 ասանկ քիչ զօրքով երթայ պատերազմե-  
 լու, որ ըլլալու յաղթութիւն իրենց զօրու-  
 թիով եղած չիկարծեն : Օէնքի տեղ ալ  
 հրամայեց, որ ամմէնն ալ մէյմէկ ձեռքեր-  
 նին փող (պօրու) առնուն, ու մէկալ  
 ձեռքերնին ալ մէյմէկ վառած ջահեր առ-  
 նուն հողէ ամաններով ծածկած : Վե-  
 դէոնը հնազանդեցաւ, ասանկ քիչ  
 զօրքը իրեք բաժնեց՝ հարիւրահան հոգի՝  
 ձեռքերնին աս նոր տեսակ զէնքերով ու  
 ՄԿ թշնամիներուն անթիւ բանակը գիշեր-  
 ւան մութուն իրեք դիաց պաշարեց : Հա-  
 զիւ որ ասոնք փողերնին հնչեցուցին, հո-  
 դէ ամանները կոտորեցին, ու անոնց մէ-  
 ջը վառած ջահերնին դուրս հանեցին, ու  
 անոնց լուսը ցուցուցին նէ, մագիանացիները  
 փողերու ձաներէն շատ վախցան, ջահերու  
 լուսերն ալ աչվրնին ուրիշ կերպ երեցան,  
 սկսան թշնամի կարծելով մէկզմէկ ջար-  
 դել մեռցրնել, ու բոլորը ջարդըվեցան :  
 Մսիկայ առաքեալներուն քարոզութե օրի-  
 նակն էր : Հոգի սքը կը հրամայէ իրենց՝  
 կռապաշտութե խաւարին մէջը իրենց ձա-  
 ներնին լսել տալու, իրենց մարմինը բռնա-

ւորներու կատաղութենք դէմ վտանգի մէջ  
դնելու, ու ան հողէ ամաններուն պէս  
կոտորտելու: Իրենց սրտին մէջը սիրուն  
հուրը կրվառէ, որուն լուսը աշխարհի խաբե-  
րայ իմաստութիւնը կրմ' թնցընէ, ու մինակ  
ասանկ զէնքերով պատրաստըված տաս-  
ւերկու ողորմելի ձկնորսներով բոլոր աշ-  
խարհին ու դժոխքին զօրութիւններուն կը յաղ-  
թէ: 'Վաստակ . զ. է:

Իսրայիլ շոգին սբին անյին ու գործոցը զու:

« . շոգի սբը ամենասբ Նորորդութե  
երրորդ անձն է, որ շօր ու Որդւոյն մէկ-  
զմէկու փոփոխակի յաւիտենական սէրն է,  
անոր համար ալ 'ի յաւիտենից 'ի շօրէ  
և յՈրդւոյ կը բղխի<sup>1)</sup>: շայրը 'ի յաւիտե-  
նից կը սիրէ զինքը ու զՈրդին, ու անով  
շոգի սբը կը բղխի 'ի շօրէ<sup>2)</sup>: 'Նոյն սի-  
րով Որդին 'ի յաւիտենից կը սիրէ զինքը  
ու զշայրը, ու անով շոգի սբը կը բղխի  
և յՈրդւոյ<sup>3)</sup>. 'Բն շոգի սբին իրմէն ալ

1. Որդին 'ի շօրէ ծնեալ և շոգի սբ 'ի զոյա-  
ցութէ շօր և Որդւոյ յաւիտենական բրդ-  
խումն: 'Վ. 17. ս. 1. 'ի թ. 2. որոյ սկիզբն է Նշա-  
24: Ու է շոգին որ 'ի շօրէ և յՈրդւոյ բղխի.  
Ու 17. 6. « . « . 'ի լիւրայ հանգ. ս. 1. 1:

2. Չոր ես առաքեցից ձեզ 'ի շօրէ զշոգին ճը-  
մարտութե, որ 'ի շօրէ ելանէ. Յ. 1. 26:

3. 'Նա զիս փառաւորեսցէ, զի յիմէ անտի առ-  
նուցու. Յ. 1. 14: Փշեաց 'ի նս (Յս) և  
ասէ, առէք շոգի սբ. Յ. 1. 22:

բղխիլը մեզի սորվեցունել ուղելով՝ Հոգի սբին համար՝ Հոգի ճշմարտութե կրսէ, որ ճշմարտութիլը ինքն է <sup>1)</sup>: Աւ աս Հօր ու Արդւոյ հաւասար սէրը՝ որ Հոգի սբն է՝ իրենց հաւասար ու համագոյակից կատարեալ Մծ է, ու անոր համար Վս Հոգի սբին վրա խօսած առնելը ինչ որ ունի Հայրը ան իմս է կրսէ <sup>2)</sup>:

Բ. Հոգի սբին սքանչելի գործքերը առաքեալներու և աշխրոքի վրա: Հոգի սբը առաքեալներուն վրա իջածին պէս զիրենք լուսաւորեց, նոր մարդիկներ ըրաւ, մտքերնուն մոլորութիները ուղղեց, սրտերնուն մոլութիները սրբեց, իրենց սիրտ տրվաւ ու զօրացուց <sup>3)</sup>: Մն տաաւերկու աղքատ ու տղէտ ձկնորսներու ձեռքովը սատանային խարդախութիները յաղթեց, աշխրոքին խաբեբայ իմաստութիլը ամրացուց, կռապաշտութիլը կործանեց, անոր փրատակին վրա Վսի սբ հաւատքը ու ե-

1. Աս եմ ճանապարհ և ճշմարտութի. Յովն. Ժդ. 6: Հոգի ճշմարտութե անուանի. արդ Վս է ճշմարտութի. և վս այսորիկ երանէ ՚ի նմանէ և Մատուծոյ Հօրէ. Վեդ. աղէտս. խոռոչ. առ Վսսոր:

2. Չամ զոր ինչ ունի Հայր՝ իմ է. վս այնորիկ ասացի ձեզ, թէ յիմիկ անտի աւնուցու և պատմեցէ ձեզ. Յովն. Ժլ. 15:

3. Մաաջնորդեսցէ ձեզ ամ ճշմարտութի. Յովն. Ժլ. 13:



կեղեցին հաստատեց, ու բոլոր երկնային առարկանութիւններով զարդարեց <sup>1)</sup> :

Գ. Հողի սթին զարմանալի պտուղները՝ իր ազդեցութիւնները ընդունողներուն վրա, որ անոնց ալ իրենց վիճակին պէտք եղածին չափ մտքերնին կըլուսաւորէ, սրտերնին կըսրբէ աշխրբի՝ մարմնոյ ու սատանայի յաղթելու համար իրենց կարողութիւն ու զօրութի կուտայ <sup>2)</sup> : Աշխրբի պտուղները Հողի սթին պտուղներուն ներհակն են, որ իր հեռեւորներուն մտքերնին կուրութի կուտայ, սրտերնին կապականէ, գիրենք իրենց մեղքերուն գերի կընէ, ու Հողի սթին ազատութիւններէն, բոլոր կըզքրկէ <sup>3)</sup> :

( ) Ընթացի :

Արկու պատանի եղբարներ փարիզ ուսում կըսորվէին, պրդտիկը ԱՅ ծառայութեը և կարգալուն ետևէն էք, ու մեծը մոլութիւներու և գայթազղութե չար գործ-

1. Զ. իմարս աշխարհի ընտրեաց Աճ, զի յամօթ արասցէ զիմաստունս. և զտկարս աշխարհի ընտրեաց Աճ, զի յամօթ արասցէ զհզօրս. ա. կ. 27 :

2. Անին Աստուծոյ տխուալ է ՚ի սիրոս մեր ՚ի ձեռն Հողոյն սթի՝ որ տուաւ մեզ. Հող. է. 5 :

3. Զհոգին ճշմարտութե, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել՝ զի ոչ ճանասէ զնա, և ոչ տեսանէ զնա. Յովհ. Ժ. 17 :



քերու ետևէ : Պզտիկ եղբարը զինքը  
շատ կըխրատէր, բայց օգուտ չէր ընէր :  
Եսիկայ ծանր հիւանդութիւնով մը պառ-  
կեցաւ, ու մեղքերուն ծանրութիւնը միտքը  
ըերելով յուսահատեցաւ : Վիշերը իրեն  
յարդելի ծեր մը երեցաւ, ու անանկ բար-  
կացած աչքով մը նայեցաւ, որ վախէն  
շատ շփոթեցաւ : Են ծերը ըսաւ իրեն .  
„Ես երկնաւոր Հայրն եմ, որ զքեզ ստեղ-  
ծեցի, ու ամմէն բանը քեզի համար ըրի,  
որ դուն զղջաս, ու մեղքերուդ վրա ա-  
պաշխարես . բայց դուն յամառ կեցեր ես,  
անոր համար պիտի դատապարտուիս“ :  
Հիւանդը չափէ դուրս վախցած՝ իր դա-  
տապարտութե միջիւր կըսպասէր կոր,  
տեսիլքը աներևոյթ եղաւ : Արկրորդ գի-  
շերը գեղեցիկ երիտասարդ մը երեցաւ՝  
գլուխը փշպսակով՝ կոնակը խաչով, ու  
կողէն արուններ վազելով, ու ըսաւ իրեն .  
„Ես Ե. Յ Արդին՝ Բնն եմ, որ աշխրոքի հա-  
մար չարչարվեցայ՝ եկայ քեզի զրուցելու՝  
որ յաւիտեան պիտոր մեռնիս, իմ արդիւնք-  
ներէս զուրկ պիտոր մընաս, որոնք որ չես  
ուզեր կոր քու փրկուեդ համար գործա-  
ծել“ . ետքը իր կողի արունէն առաւ՝  
ողորմելիին երեսընետեց՝ ըսելով . „Ե, ուս  
արունը քու դատապարտութեդ համար“ .  
ու աներևոյթ եղաւ : Հիւանդը բոլոր յու-

սահատած՝ եղբարր կանչեց, ու բոլորն ալ պատմեց իրեն. բարի եղբարր խրատ տրվաւ իրին չիյուսահատելու, և զղջալու՝ իր յոյսը Հոգի սբին վրա գնելով, որ ԱՅ բարեգթութին է: Հնազանդեցաւ իրեն. մեծ զղջումի եկաւ. խոստովանեցաւ. հաղորդութիւն, ու վերջին օծում առաւ: Ան գիշերը առջիններու նման ուրիշ անձ մը երևցաւ իրեն անպատմելի լուսաւոր ու ճերմակ զգեստով ու աջ ձեռքը ձունէն ճերմակ աղաւնիով մը. որ շատ բարեկամական ու անուշ աչքով նայեցաւ իրեն նէ. հարցուց հիւանդը, որ ինքը ո՞վ է. պատասխան տրվաւ, որ «Այս Հոգի սբն եմ, որ ՚ի Հօրէ և յԱրդւոյ կելլեմ, ու քեզի յըսելու եկայ, որ մեղքերդ ջնջուվեցան, ու քեզի արքայութե գուռը բացվեցաւ»: Հիւանդը աս լսելով ուրախութէ սկսաւ լալ, ու մեծ յուսով ու աւելի զղջումով իրեք օր ապրելէն ետքը երջանկութիւն փոխվեցաւ մէկալ կեանքը: Հեռիցիոս Գեղեամտար իւրապարհ հայելի օրինակացին Տեղը. զան. Ժ:

ՏԵՍՆԻ ՀԻՆԳԻՆՐՈՐԻ ՀԵՍՆԻ

Հաստատութիւն իննէրորդ հասիւն վրա:

Կ. Արեղեցին ի՞նչ է:

պ. Թէ որ ընդհանրապէս կը հարցունես

նէ, ճշմարիտ Մ.Յ պաշտօնին մէջը միարա-  
նած հրեշտակներու՝ կենդանի՝ ու նաև Մ.Յ  
շնորհացը մէջ մեռած հաւատացեալնե-  
րուն ժողովն է, որուն գլուխը Ք.ս է, բայց  
հաւատամքի մէջը ըսած եկեղեցին աս չէ:  
հ. Մ.ս եկեղեցին քանի՞ կրթաժներ վի:

պ. Արեք, այսինքն՝ արքայուն հրեշտակ-  
ներուն ու սքերուն ժողովը, որ յաղթօղ  
եկեղեցի կըսվի. քաւարանի հոգիներու  
ժողովը, որ չարչարվող եկեղեցի կըսվի,  
ու կենդանի հաւատացեալներու ժողովը,  
որ պատերազմօղ եկեղեցի կըսվի:

հ. Հաւատամքի մէջը ըսած եկեղեցին որն  
է՞ և ի՞նչ է:

պ. Արրորդն է, ու կենդանի հաւատացեալ-  
ներու ժողովն է, որ մի և նոյն հաւատք  
ու օրէնքներ կըխոստովանին օրինաւոր հո-  
վիւներու առաջնորդուէ տակը, որոնց գը-  
լուխը մեր հայրը սրբազան պապն է:

հ. Այլեղեցին մինակ արդարներ՞ու ժո-  
ղովն է:

պ. Այ. արդարներու և մեղաւորներու  
ժողովն է, չէ նէ երևելի չէր ըլլար, վն-  
դի շատ անգամ չենք ճանչնար, որ որոնք  
են ճշմարիտ արդարները:

հ. Հարկ է, որ եկեղեցին երևելի ըլլայ:

պ. Հրամմերես, որպէս զի ամմէն հաւա-

տացեալները կարող ըլլան զինքը ճանչնալու, և իր հրամաններուն հնազանդելու :  
հ. Արժնք են նշանները ճշմարիտ եկեղեցին ճանչնալու համար :

ա. Գլխաւորները աս չորս նշաններն են, որ հաւատամքի մէջ ալ գրած են, այսինքն՝ մի, սբ, ընդհանրական և առաքելական :  
հ. Ար եկեղեցին ունի աս նշանները :

ա. Մինակ Հռովմայ եկեղեցին ունի, և ուրիշները չունին :

հ. Ի՞նչ է Հռովմայ եկեղեցին :

ա. Ըն է, որ բոլոր աշխարհք տարածեալ է, ու իր երեւելի գլուխը աշխրքի վրա սբ Պետրոս առաքեալին յաջորդն է :

հ. Եկեղեցին ինչո՞ւ հռովմական կըսվի :

ա. Այճի սբ Պետրոսը Յս Բսէն երկրի վրա իրեն փոխանորդ ընտրված էր, որ իր աթոռը Հռովմ հաստատեց, ու իր աթոռը և իշխանութիւնը իր յաջորդներուն անցան :

Պետրոս առաքելն գլխաւորն է պապ...  
հո-լէլ :

Երբոր Վս առաքեալներուն հարցուց նէ „Ո՞վ կըսէք ինձի համար, որ ըլլամ“ : Պետրոս առաքեալը ամմէնէն յառաջ պատասխան տրվաւ . „Գու՛ն կենդանի Մ. Յ Արդին Վսն ես“ : Ըս Վսի անութե խոստովանութիւնը, որ մեր հաւատքին հիմն

է, Պետրոս արժանի եղաւ, որ եկեղեցւոյն Տէրը ու աներևոյթ գլուխը Հնչնքը ու իր օրինաւոր յաջորդները ինչպէս աշխրոյթին կատարածը եկեղեցւոյ երևելի գլուխ հաստատէ . անոր համար ըսաւ իրենն . „Ղուն վէճ ես, ու աս վիմին վրա յիմ եկեղեցիս պիտի շինեմ“ : Ան որ անատենը խոստացաւ նէ, իր սբ յարութէ կտքը իրեն սիրուն վրա իրեք անգամ հարցունելէն ետե՛ հաւատքին համար իրեն խոստացած գլխաւորութիւնը՝ երեք անգամ սիրոյ ներգործութէ կտքը տրվաւ իրեն, ու զինքը բոլոր եկեղեցւոյ վրա հովիւ դրաւ, պարտաւորելով զինքը ու իր յաջորդները իր գառնուկները ու ոչխարները արածելու : Պետրոս երկրի վրա Հնչի փոխանորդութիւնը աս կերպով ընդունելէն կտքը՝ իր նախագահութիւնը ամէն առիթներու մէջ գործածեց : Արբոր մատնիչ Հուդային տեղը առաքեալ մը ընտրել պէտք եղաւ նէ՛ առաքեալներուն ինքը առաջարկեց : Հոգի սբը առաքեալներուն վրա իջաւ նէ, ինքը եղաւ առջինը, որ զՔս Արուսաղէմ քարոզեց, որով երեք հազար հոգի Քսի հաւտացին, ու հոն տեղը հաւատքի հիմը դրաւ . կռապաշտները սբ հաւատքի մէջ ընդունելու համար խօսք եղաւ նէ, ամէնէնէն յառաջ ինքը ընդունեց



Կուռնելիոս հարուրապետը մկրտելով .  
հրէից ծիսական օրէնքներուն պահպանու-  
թեքը վրա վէճելած ատենը, Երուսաղէմի  
ժողովին մէջը ինքը իր նախագահութիւնը հե-  
թանոսներուն կողմը որոշեց դատը: Սաղմ. Ժ. Գ. 18:

Խրատի ճշմարտութիւնը որ Եկեղեցին  
կրտորակցում է:

ա. Երբէք չիտեսներվեցաւ ճշմարիտ  
ուղղափառ մը, որ մահւան ատենը իր  
հաւատքին վրա զղջայ, ու հերետիկոս  
ըլլայ: Բայց ասոր ներհակը գրանրվեցան  
անթիւ հերետիկոսներ, ու անհաւատներ,  
որ իրենց մահը մօտեցած տեսնելով՝ զղջա-  
ցան, ու մեր ուղղափառ հաւատքը դար-  
ձան. որ յայտնի ցոյց է մեր հաւատքին  
բաներուն ճշմարտութեքը, որոնք որ հռով-  
մէական սբ եկեղեցին կրտորվըցունէ<sup>1)</sup>:

Բ. Չեղաւ երբէք առաքինի ուղղափառ  
մը, որ մահւան ատենը իր առաքինի ըլլա-  
լուն վրա զղջայ. բայց շատ անգամ եղաւ,  
որ անառակ ու չար մարդիկները՝ որ ինչւան  
իրենց մահւան ատենը անհաւատի պէս  
ապրեր էին, ան ատենը վախնալով վար-

1. Կուռնելիոս, և ՚ի վր այդը վիմի շինեցից զե-  
կեղեցիիմ. և գրունք դժոխոց զնա մի յաղթա-  
հարեսցեն. Սաղմ. Ժ. Գ. 18:

քերնին փոխելու խոստացան, որ ամենա-  
յայտնի փորձ է ան բաներուն սրբութիւնը,  
որ կաթուղիկէ եկեղեցին վարուց վրա  
կըսորվըցունէ <sup>1)</sup>:

Գ. Անդանութեւ ատենը չար մարդիկ-  
ներուն անգթութիւնները՝ հերետիկոսնե-  
րուն խաբերայ վարդապետութիւնները, ու  
իրենց անկարգ վարքերնին մէկզմէկու  
կատարեալ կը յարմարին. ասոր ներհակը  
ուղղափառի մը ըրած անկարգութիւնները  
իր հաւատքին հետ ամենեին չեն համա-  
ձայնիր, որով յայտնի կերեւոյ մեր հա-  
ւատքին ճշմարտութիւնը, ու հերետիկոս-  
ներուն աղանդներուն ստութիւնը ու մոլո-  
րութիւնը <sup>2)</sup>:

( ) րնիսի :

Նիկողայոս անունով մեղաւոր մարդ  
մը շատ տարիներով ծանր մեղքերու և  
անպարկեշտութիւններու մէջ ապրելէն ետքը՝  
տեսնելով, որ ԱՅ դատաստանին առջևը  
ելլալը մօտեցաւ, որոշեց իր վարքը փո-  
խելու. զնաց սբ՝ Անդրէաս առաքեալին

1. Երածեալ զգառինս իմ . . . . արածեալ զոչ-  
խարս իմ. Յովհ. Իմ. 15. 16 :

2. Արպէս զի ոչ բնարեցին զԱճ ունել ՚ի դի-  
տութե, մասնեաց զնն Աճ ՚ի միտս անար-  
գութե գործել զանարժանս. Զովհ. Իմ. 28 :

ուտքը ինկաւ, ու աղաչեց իրեն, որ Մս-  
տուծմէ իրեն դարձին համար շնորհք խըն-  
դրէ, իրեն ալ դեղ մը սորվը ցունէ ան-  
չափ հինցած մեղքերուն և չար սովորու-  
թիւններուն դէմ: Մ. ռաքեալը տեսնելով ա-  
սոր զինքը ուղղելու ճշմարիտ բաղձանքը,  
սկսաւ ջերմեռանդութիով ու խիստ պահ-  
քով ծոմով հինկ օր աղօթել Մ. Մ. Արկո-  
ղայոսին դարձի շնորհք առնելու համար:  
Հինգերորդ օրը երկինքէն ձան մը եկաւ  
իրեն, որ կրտէր. «Վիտնաս Մնդրէաս,  
որ կը շնորհէի Արկողայոսին համար խըն-  
դրածդ, բայց ինչպէս դուն պահք ու  
ծոմ կեցար նէ, անանկ ալ ինքը պէտք  
է՛ որ ալ աւելի պահք ու ծոմ պահէ՛»  
«ու իր մարմինը մահացունէ»: Մ. ռաքեա-  
լը աս պատասխանը տրվաւ Արկողայոսին,  
ան ալ հնազանդեցաւ, ու վեց ամիս մինակ  
հացով՝ ջրով ու խիստ ապաշխարութիով  
ապրելէն ետքը՝ մեռաւ նէ, Մնդրէաս ա-  
ռաքեալին յայտնըվեցաւ, որ Արկողայ-  
ոսը իր աղօթքով ու պահքովը՝ ու անոր  
ալ իրեն համար ըրած ապաշխարութիւնե-  
րովը փրկըված է: ՍԷ Ա՜հրր. Չարուցը  
Տէ՛ն է:

ՏԱՄԵՐՎԱՅՆՐՈՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական ինտելեկտուալ հասկն շարունակ  
կուլտուր:

հ. Ինչ կերպով ճանչնալու է, որ  
հոովմէական եկեղեցին է Վրսի ճշմարիտ  
եկեղեցին:

ա. Վաւական է, որ մէկը աչքը բանայ  
բարի հաւատքով ու խոնարհութիով  
յայտնի կրտեսնէ անոր վրա, ու մինակ ա-  
նոր վրա Վրսի ճշմարիտ եկեղեցւոյն չորս  
նշաններն ալ:

հ. Ինչպէս մի է հոովմէական եկեղեցին:

ա. Անոր իր անդամները աշխրբին ամմէն  
դին մի և նոյն հաւատքը կրխոստովանին,  
մի և նոյն խորհուրդները կըգործածեն, ու  
մինակ մէկ երևելի գլխոյ կըհնազանդին՝ որ  
սրբազան պապն է:

հ. Ինչպէս սք է հոովմէական եկեղեցին:

ա. Անոր հաւատքի ու բարեգործութե  
մէջը բան չիսորվըցուներ, որ սք չըլլայ,  
անանկ որ բոլոր իր պատւիրանները պա-  
հողները սրբութե կըհասցընէ:

հ. Ինչպէս ընդհանուր է հոովմէական  
եկեղեցին:

ա. Անոր աշխրբի չորս կողմերը տարածած  
է, ու առաքեալներէն սկսած՝ ինչվան  
հիմայ տեւած է, ու ինչվան աշխրբի կա-

տարածն ալ պիտոր տեէ մի և նոյն հաւատքով :

հ. Ինչպէս առաքելական է հռովմէական եկեղեցին :

ա. Աստուծոյ առաքելոց գլուխը Պետրոսէն սկսաւ՝ ու ինչպէս հիմայ անոր անսխալ վարդապետութիւնը անոր յաջորդներէն հովուեցաւ :

հ. Թէ որ Հռովմայ եկեղեցին ճշմարիտ եկեղեցի է նէ՛ ամեն մարդ պարտըկան չէ՞ անոր հնազանդելու :

ա. Հրամայեցաւ, պարտըկան է, վստի անկէ դուրս փրկութի չիկայ :

հ. Արո՞նք են աս եկեղեցիէն դուրս :

ա. Կռապաշտները՝ անհաւատները, հերետիկոսները՝ հերձուածողները, ու բանադրած կամ նզովածներն են :

Առջի բրիտանական-ընտանիքային լարքերուն  
պատմութիւնը :

Առջի բրիտանականներուն վարքերը յայտնի կը ցուցունեն, որ հաւատքը մարդուն հոգին ու սիրտը սրբացունելու զօրութի ունի : Արոնք թէպէտ զատ զատ ազգեր էին, բայց անանկ կապրէին, որ կարծես՝ թէ մինակ մէկ սիրտ ու մէկ հոգի ունէին. սրտերնին աշխրբի հարստութի-



ներէն բաժնըված՝ իրենց երկիրները կը-  
ծախէին, ու գիները առաքեալներուն  
ոտքը կըբերէին, անոնք ալ զանոնք ամ-  
մէն մէկին պէտք եղածին չափ կըբաժնէ-  
ին, անանկ որ՝ իրենց մէջը աղքատ հա-  
րուստ չիկար, ու կրօնաւորներու պէս  
ամմէն բանը հասարակաց էր: Բոլոր աշ-  
խարհք աս բանիս վրա կըզարմանար ու  
քրիստոնեաներուն թիւը օրէ օր կաւել-  
նար: ՄԾ ուղեց իրենց հաւատքը ու աղ-  
քատութիւնը զարհուրելի հրաշքով մը  
մաքրել: Մնանիս անունով քրիստոնեայ  
մը իր ագարակը ծախեց, իր կնկանը Սա-  
փիրային հաւանութիւնը դնոյն ստրկին մէկ  
մասը իրեն պահեց, ու մնացածը առա-  
քեալներուն բերաւ: Պետրոս առաքեալը  
ՄԿ լուսաւորելովը ըսաւ իրեն, Մնանիս՝  
ինչո՞ւ ստեցիր Հոգին սքին, քուկդ չէր՝  
բոլորն ալ քեզի կրնայիր պահել, ինչո՞ւ  
համար մէկ մասը պահելով մինակ մէկ մասը  
բերիր: Մնանիան աս լսելով գետինը ին-  
կաւ ու մեռաւ: Արեք ժամ ետքը իր կնիկը  
Սափիրան եկաւ, որ եղած բաները չիգիտ-  
նալով ինքն ալ Պետրոսին հարցումին պա-  
տասխան տրվաւ, որ ան իր երկանը բե-  
րածը ագարակին բոլոր ստակն էր: Պե-  
տրոս առաքեալը զինքն ալ յանդիմանեց,  
ու ան ալ ինկաւ՝ ու մեռաւ: ՄԵ օրինակը

բոլոր հաւատացեալները փրկաւէտ վա-  
խով ու եկեղեցւոյ դիտուն խոնարհական  
յարգութիով մը լեցուց : Գործ. Բ :

Խրատ հաւատքին օգուտներուն վրա :

ա . Սեր հոգւոյն մոլորութիւնները մի-  
նակ հաւատքը կրնայ շիտակել <sup>1)</sup> : Ուղիղ  
հաւատքէն հեռացողը որչափ մոլորութի-  
ւներու մէջ կիյնայ : Առապաշտները՝ ան-  
հաւատները ու հերետիկոսները իրենց  
տեսակ տեսակ խենդութիւններովը ու յան-  
դրգնութիւններովը ասիկայ յայտնի կըրցու-  
ցընեն : Եւսոր ներհակը մեր սք հաւատքը  
Ե՛ւ՝ մեր հոգիներուն ու յաւիտենական  
կեանքին վրա մեզի շիտակ տեղեկութիւն  
կուտայ . անոր համար ալ ուղղափառնե-  
րուն մէկ տգէտ մանուկը՝ ուղիղ հաւատք  
չունեցող փիլիսոփայէ մը աւելի լուսաւոր-  
ված է <sup>2)</sup> :

Բ . Սինակ ուղղափառ հաւատքը կրնայ  
մեր մոլութիւնները ուղղել , մեզի առաջար-  
կած իր հաւատալիութե մեծ պատճառ-  
ներովը՝ ու մեզի պարգևած զօրութիւններով  
ու շնորհքներովը մեզի ճշմարիտ առաքի-  
նութիւններ գործել տալ <sup>3)</sup> :

1. Հաւատովք սրբել զսիրտս նոցա . Գործ. Ժ . 9 :

2. Յայտնութի բանից քոց լուսաւոր է . և իմաս-  
տուն առնէ զաղայս . Սոր . 67 . 130 :

3. Որ ոչ գործեաց ձեռք զանօրէնութի . . . .

Գ. Անոր համար պարտական ենք մեր ուղղափառ ու սբ հաւատքին յարգը ճանչնալու. մեծ վախով աշխատելու ենք անիկոյ չիկորսնցունելու, ու միշտ կենդանի պահելու, չըլլայ՝ որ մեր զանցառութիւներովը պակսի կամ մարի: Հաւատքը իրներգործութիւններովը կը պահուի: Հատ ուղղափառներուն անկարգութիւն ան է, որ հաւատք ունին, ու գործք չունին. անոր համար ալ հաւատքնին օրէ օր կը տկարանայ, ու շատ անգամ հաւատքի դէմ գործքերովը բոլորը կը մարի <sup>1)</sup>: Քայց ասանկներուն խղճմտանքը իրենց երբէք հանգիստ չիտար:

(Օրինակ):

Սպանիային Ալօլիկիլտոս արիոսեան թագաւորը տեսնելով ուղղափառներուն ձեռքովը եղած հրաշքները, որ իր աղանդակիցներուն ձեռքովը հրաշք մը չէր ըլլար կոր՝ շփոթեցաւ: Իրենց Առուա եպիսկոպոսը կանչեց՝ ու անոր աս բանիս պատճառը հարցուց: Ապիսկոպոսը ստութիւնով

տացի նմա շնորհք ընտիր ըստ հաւատոցն .  
Իմա . Գ . 14 :

1. Այս ազգք են՝ որք ոչ լուան ձայնի Տեառն Աստուծոյ իւրեանց . և ոչ ընկալան զխրատ . պակասեցան հաւատովք . և բարձաւ ճշմարտութի՛ի բերանոյ նոցա . Աբե. Է . 28 :

պատասխան տրվաւ, որ ինքն ալ շաա կու-  
րերու աչքեր բացած, ու խուլերու լսել  
տրված ունի, և ուզած ատենը հրաշք  
կրնար գործել: Ատքը հերետիկոսի մը  
տասը ոսկի տրվաւ, որ ինքը թագաւորին  
հետ անցած ատենը՝ աչքերը կապէ. կոյր  
ձեանայ, ու գայ իրմէն իր հաւատքին  
զօրութիւն աչքին լոյս խնդրէ: Առաւ ու  
դորմելին ոսկիները, ու ան խաբերայ ու  
չարագործ եպիսկոպոսը թագաւորին հետ  
անցած ատենը՝ անոր ապրսպրածին պէս  
ըրաւ: Ապիսկոպոսը հպարտութիով մը  
շինծու կուրին մօտեցաւ. ու ձեռքը աչ-  
քին վրա դնելով ըսաւ. խնդրած շնորհքդ  
քու հաւատքովդ ըլլայ քեզի: Աս խօս-  
քը չիմնցած, խաբերայ կուրին աչվրնե-  
րը պատռեցան՝ սաստիկ ցաւերով դուրս  
ինկան ու ճշմարիտ կոյր եղաւ, անոր հա-  
մար շատ լալով ու ամուր պողալով իր  
խաբէութիւնը ու նենգաւոր չարութիւնը հրա-  
պարակաւ ամմէնուն առջևը պատմեց, որն  
որ չար եպիսկոպոսին խրատովը ու ոսկի-  
ներուն սիրովը ըրած էր: Աս բանով ե-  
պիսկոպոսը շատ ամըջցաւ, բերանը գոց-  
վեցաւ, ու մարդու երես չէր կրնար  
նայիլ: ՍԷ Վրէճ. Բոսրոն. Վաղղէայե  
պատմ. Գ-Զ:

ՏԱՄԱՐԻՆՕԹՆԵՐՈՐՆԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կենտրոնի հասին շարունակութիւնը:

Կ. Հասարակական կենտրոնի ներքին ծրագրի  
կենտրոնի կայ:

Կ. Չէ, վստի մեկէն աւելի ծրագրի  
կենտրոնի՝ ու ծրագրի հաւատք չիկրնար  
ըլլալ:

Կ. Ինչո՞ւ չիկրնար ըլլալ:

Կ. Ենթադր համար չիկրնար ըլլալ, վստի  
Քս չիկրնար բան մը սորվեցընել մեկ ե-  
կենտրոնի բերնովը իբրև հաւատքի ծրագր-  
տուածի, ու ան բանը դատապարտել մեկ  
ալ կենտրոնի բերնովը իբրև սխալ, չէ  
նէ ինքը իրեն հակառակ կրխօսէր, անոր  
համար ինքն ալ ըսաւ. Երկրին թէ հօր ե-  
թէ հո՞ւն:

Կ. Ենթադր է նէ սք կենտրոնիէն ապստամբ  
ազանդները ան ծրագրի կենտրոնի նշան-  
ները չունին:

Կ. Հրամայեալ չունին:

Կ. Ի՞նչ կերպով չունին միութիւնը:

Կ. Վստի Քսի դրած ընդհանուր կե-  
նտրոնի երևելի հովիւը Պետրոս առաքեա-  
լին օրինաւոր յաջորդ չիճանչնալով՝ միուե-  
արմատը չունին, անոր համար վարդա-  
պետութիւններն ալ մեկզմեկու անհամաձայն  
ու ներհակ են:



հ. Ի՞նչպէս չունին սրբութիւնը :

Պ. Այլի Վրնի սբ եկեղեցիէն ապստամբելով Վրնէ ալ բաժնւում են, որ սրբութեան աղբիւրն է. անոր համար ալ իրենց մէջը ոչ սբ կելայ՝ ոչ ճշմարիտ հրաշք կըլայ, ինչպէս Հռովմայ եկեղեցւոյ մէջը Մծ ամմէն ժամանակ հրաշքները ըրած է՝ ու կրնէ :

հ. Ի՞նչպէս չունին ընդհանրութեան նշանը :

Պ. Այլի հռովմէական եկեղեցիէն դուրս ուրիշ ընկերութիւնները ամմէն ժամանակ ու ամմէն աղգերու և դաւառներու մէջը իրենց անդամներ չունեցան ու չունին, անոր համար ալ ընդհանուր չեն կրնար ըստի :

հ. Ի՞նչպէս կրնաս ատիկայ ըսել, որ ինչպէս Հռովմայ եկեղեցւոյն անդամները ամմէն տեղ ու ամմէն աղգերուն մէջ կը գտնուին նէ, անանկ ալ հերետիկոսները ամմէն տեղ կը գտնուին :

Պ. Հերետիկոսները մինակ ամմէն տեղ գտնուելով իրենց աղանդները ընդհանուր չըլար. վնդի Հռովմայ եկեղեցւոյն պէս մէջերնին միօրինակ վարդապետութի, ու միօրինակ հաւատքի մասեր չունին, մէկին սորվեցուցածը մէկային դէմ է, ու անոր համար ամմէնն ալ մասնաւոր մոլորութիւններ են :

հ. Խնչպէս հերետիկոսներուն ժողովները առաքելական չեն :

դ. Այլ իրենց հեղինակները գիտենք , որ զանազան չար հերետիկոսապետներ եղած են , ու իրենց նորուիներուն ժամանակները առաքելներէն շատ վերջն են :

Նոյն պատանին՝ պատմութիւն :

Գրեթէ բոլոր մարդիկները չարաչար մոլութիւններու մէջ ինկեր էին , անոր համար Մ. Վ. վճռեց ընդհանուր ջրհեղեղով մը զամմէնքը կորսնցընելու : Այնակ Նոյ իր ընտանիքովը՝ որ ան ընդհանուր ապականութե մէջ անարատ մնացեր էին , Մ. Վ. ողորմութեւնը արժանի եղաւ : Մ. Վ. Նոյի հրամայեց , որ տապան մը շինէ , որուն չափմունքները բոլոր ինքը տրվաւ , որ անով կարօղ ըլլան ինքը՝ իր կիներ՝ իրեք տղաքը՝ ու անոնց կնիկները՝ ամմէնը ութը հոգի ապրիլ : Մ. Վ. մեղաւորներուն դարձի ժամանակ տալու համար ուղեց Մ. Վ. , որ նաւին շէնքը երկան ժամանակ քշէ . բայց անոնք աս ապաշխարութե ժամանակէն պտուղ հանելուն տեղը՝ աւելի չարացան : Մ. Վ. ստուծոյ սահմանած ժամանակը եկաւնէ , երկինքի սահանքները մէկէն՝ ի մէկ բացվեցան , սաստիկ անձրևով բոլոր աշխրբիս երեսը ջուր կոխեց , ու բոլոր մարդիկները

ու կենդանիները խղզրվեցան, ու մինակ  
 'Աոյին տապանին մէջը իր մարդիկները՝  
 ու կենդանիները ողջ մնացին : Տապանը  
 վեր ելած ջրերու վրա հանդարտ հանդարտ  
 լողաց : Հարուր յիտուն օրէն ետքը ջրերը  
 քաշվեցան նէ, տապանը Հայաստանու  
 Մարատ լեռան վրա նստաւ : Արկրին  
 երեսը չորցած ժամանակը՝ 'Աոյ նահապե-  
 տը իր ընտանիքովը ու բոլոր կենդանիներ-  
 րով տապանէն դուրս ելաւ : Մնմիջապէս  
 Մ. խորան շինեց՝ զո՛հ մատուց՝ շնորհա-  
 կալ եղաւ որն որ Մ.ճ շատ սիրով ընդու-  
 նեց՝ 'Աոյ ու իր ընտանիքը օրհնեց, ու  
 մէյժ՝ ալ աշխարհքս ջրհեղեղով չաւրե-  
 լու խօսք տրվաւ : Մ.ս տապանը սք եկե-  
 ղեցւոյ օրինակ էր, որ անկէ դուրս փրը-  
 կութի չիկայ : Օ՛նն. Կ. Է. Ը :

Խորատ Էկեղեցոյ ունեցած պարագէրնուս  
 վրա :

« . 'Ախ պարտրկան ենք հռովմէա-  
 կան սք եկեղեցւոյ մեր բոլոր կենացը մէջ  
 հնազանդելու, վնդի ինչպէս ուղղափառ  
 հաւատքէն դուրս փրկութի չիկայ, անանկ  
 ալ աս սք եկեղեցիէն անհնազանդութիով  
 դուրս ելլողին փրկութի չիկայ <sup>1)</sup> : Ըտլոր

1. Որ միանգամ արտաքոյ տանս այսմիկ կերիցէ  
 զգառն՝ պիղծ է : Աթէ ոք ոչ նգիցի ՚ի նոյնան

աշխարքի վրա անոր իշխանութենք պէս իշխանութի չիկայ, որ կարող ըլլայ իր հնազանդ որդիքները սք հաւատքի մէջ հաստատելու, և հաւատքի ու բարի վարքի վրա ելած վէճերը որոշելու<sup>1)</sup>։ ասոր հիմը բոլոր ան վկայութիներուն վրա հաստատաւած է, որոնք որ սք հաւատքը կը հաստատեն, վսղի հաւատքի հիմը եկեղեցւոյ հիմէն զատ չէ<sup>2)</sup>։

Բ. Արկրորդ՝ պարտրկան ենք զինքը մօր պէս սիրելու և պատուելու, որ իբրացընէ մեր հոգւոյ մարն է, որ զմեզ ծնած ատեննիս աւազանին սք մկրտութիքը նորէն 'ի Վս կրծնանի մեր բոլոր կենացը մէջ իր հովիւներուն ձեռքովը կըսորվըցունէ՝ կըկառավարէ, և ճշմարիտ վարդապետութեն կաթովը կըկերակրէ<sup>3)</sup>։ մահւաննիս ատենը իր սք խորհուրդներովը կըբըժրչկէ, ու կըզօրացունէ զմեզ սրբութիք մեռնելու համար, ու մահւաննէս ետքն ալ մեր հոգւոյն համար աղօթքներ՝ պա-

---

տապանիդ, կորիցէ 'ի լինել ջուրցն հեղծղաց .  
Սուրբ Էբրնէ . առ Դամաս . պոպ . Բուղի . Ժէ :

1. Արկրորդի Աստուծոյ կենդանւոյ, սին և հաստատութիւն ճշմարտութեան . ա . Տէ . 4 . 5 :
2. Դու ևս վէճ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ . Սուրբ . Ժղ . 18 :
3. Արածեալ զգառինս իմ . Յով . Ի . 15 :

տարագներ կրմատուցանէ, որ քաւարան  
դացողներն ալ շուտով (սալըսին<sup>1)</sup> :

Գ. Երրորդ պարտրկան ենք իր վնաս-  
ներուն վրա ցաւելու, իր յաջողութիւնե-  
րուն վրա ուրախանալու, իր գլխուն ու  
հովիւներուն համար աղօթք ընելու<sup>2)</sup>, ու  
թէ որ մենք ալ մեր աշխատանքովը չենք  
կրնար իր սահմանները մեծցրնել բոլոր  
անհաւատները ու հերետիկոսները իր  
հնազանդութեը դարձրնելով նէ, գոնէ  
հալածանքներու մէջ իր որդիքը ըլլալնիս  
համարձակ խոստովանելու չամբնանք, ու  
իր առաքեալներուն ու քարոզիչներուն  
մեր ձեռքէն եկածին չափ գործակից ըլ-  
լանք ու մարդկային արդելքներու և նկա-  
տումներու համար ասանկ սք գործքերէն.  
Ետ չիկենանք :

### Օրինակ :

Կողմանա անունով մեծ խաթուն մը ,  
որ Վերմանոս աղնըւականին կնիկն էր, ու  
Սեւերիոսի հերետիկոսութիւն ունէր, որ  
կաթուղիկէ եկեղեցւոյ ճշմարտութէ դուրս

1. Մի յայտհետէ իցեմք տղայք խռովեալք և  
տատանեալք յամ հողմոց վարդապետութե .  
Եր. 14 :

2. Եղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի  
հունձս իւր . Ս. 38 :



էր, ինչպէս ամմէն ուրիշ հերետիկոսները :  
 Ասիկայ Արուսաղէմ գնաց Քնի սք գե-  
 րեղմանը տեսնելու համար : Արբոր գե-  
 րեղմանին դուրը հասաւ նէ, սք Աճածի-  
 նը շատ կուսանքներով դիմացը ելաւ՝ ի-  
 րեն ըսաւ, որ դուն մերիններէն չես, ինչ-  
 պէս կը համարձակիս աս սք տեղը մտնելու :  
 Աողմանա շատ աղաչեց սք Աճածնայ՝ որ  
 զինքը չարգելու ան սք տեղը մտնելու,  
 բայց օգուտ չըրաւ, սք Աճածինը ըսաւ  
 իրեն, որ հոս չես կըրնար մտնել, ինչվան  
 որ յառաջ ուղիղ հաւատքով չես խոս-  
 տովանիր, ու մերը չես ըլլար նէ, հասկցաւ  
 կինը ներս մտնել չիկրնալուն պատճառը,  
 որ իր հերետիկոսութիւն էր. շուտ մը  
 գնաց ուղղափառ քահանայի, ուղղափառ  
 հաւատքը խոստովանեցաւ, ու բոլոր մեղ-  
 քերը խոստովանանք եղաւ, սք եկեղեց-  
 ւոյ հնազանդ զաւակ եղաւ, ու մեծ ջերմ-  
 եռանդութիւնով սրբութիւն առաւ նէ, ան  
 ատենը սք գերեղմանը համարձակ կըրցաւ  
 մտնել, և իր ուխտը կատարել : Պլաւնե-  
 րու իւրապէս . հոգեւոր դաշտի Տեղը :

ՏԱՍՆՐՈՒԹՅԵՐՈՐԴ ԼԱՍՆՐ

Հասարակական իննէրորդ հասն շարունակ  
խնէնը:

հ. Ինչ է սորվեցընող եկեղեցին:

պ. Ապիսկոպոսներու բազմութիւն է՝ իրենց գլուխը սրբազան պապին հետ հնազան-  
թութիով միաւորված:

հ. Արընայ սխալիլ սորվեցընող եկեղեցին:

պ. Չէ, հաւատքի ու բարի վարքի վար-  
դապետութե մէջը ամենեին անսխալ է:

հ. Ինչո՞ւ եկեղեցին անսխալ է:

պ. Այլի Վս իրեն խոստացած է, որ  
դժոխքի դրոները՝ որ հերետիկոսութի-  
ւներն են, իրեն պիտի չհկրնան յաղթելու,  
ինքը ինչպէս աշխրբիս վերջը անոր հետ  
պիտոր ըլլայ, ու Հոգի սբը անոր ամմէն  
ճշմարտութիւր պիտի սորվեցընէ:

հ. Ակեղեցւոյ վճիռներուն ամմէն քրիս-  
տոնեաները պարտրկան են հնազանդելու:

պ. Հրամներես՝ ինչ հոգւոր ու մարմնա-  
ւոր մեծութի ունենան նէ ալ՝ պարտրկան  
են հնազանդելու. վսզի Վս Պետրոսի  
հրամայելովը իր գառնուկները ու ոչխար-  
ները արածելու, զանոնք ալ պարտաւորեց  
անոր հնազանդելու, որ ուրիշ անգամ  
ըսած էր՝ ո՞վ որ ձեզի կրլէ՝ ինձի կրլէ,

ով որ զձեզ կանարգէ , զիս կանարգէ .  
ով որ եկեղեցւոյ չանսար նէ , հեթանոսի  
պէս սեպիլի :

հ . Մամէն մէկ ազգի բաւական չէ իրենց  
հոգևոր առաջնորդին հրամանացը հնա-  
զանդիլ :

ա . Թէ որ իրենց առաջնորդը հռովմէա-  
կան սքեկեղեցւոյ գլուխը սրբազան պա-  
պին հետ հնազանդութիով միացած է նէ՝  
զանիկայ գլուխ ճանչնալով , ու անոր  
հրամաններուն հնազանդելով , ան ատենը  
անոր հնազանդիլն ալ եկեղեցւոյ հնազան-  
դիլ կրսեպիլի , թէ որ չէ նէ՝ չէ :

հ . Հաւատքի կանոն ըլլալու համար ամ-  
մէն մէկ մարդու սքեկիքը բաւական չէ :

ա . Չէ . վսիլի շատ մարդիկներ սքեկիքը  
ոչ կրնան կարգալ ոչ ալ հասկրնալ ,  
ասկէ ՚ի զատ ալ սքեկիքին մեկնիչը ու  
դատաւորը մինակ ուսուցանող եկեղեցին  
է , ուրիշը չիկրնար ըլլալ :

հ . Արբոր եկեղեցին հաւատքի նոր սահ-  
ման մը կը յայտնէ՝ կամ հերետիկոսութի  
մը կը դատապարտէ նէ՝ հաւատքի վրա նոր  
բան աւելցուցած չըլլար :

ա . Չէ , եկեղեցին անանկ բաներ ըրած  
ատենը նոր բան չիհնարեր , ան բանը որ  
վրան խնդիր չըլլալով զօրութի կը հաւ-  
տար նէ , ներգործութի կը մեկնէ՝ կը-

յայտնէ, ու կը դատապարտէ զանոնք, որ  
հաւատքի մէջ նորութի խօթել կուզեն:

Մ. Բ. Եստղովին հօրը գէ՛մ տպագրութեան  
պատմութիւն:

Հպարտ Մ. Բ. Եստղովին խորայէլի թագա-  
ւորութիւնը հօրը Ղաւթին ձեռքէն յա-  
փըշտակել ուզելով՝ սկսաւ փորձել ժողո-  
վուրդը խաբէութիւնով՝ իրենց պարզեաներ  
տալով՝ անուշութիւնով՝ ու հօրը կառա-  
վարութեւնը վրա կեղծաւոր հառաչանքներ  
ընելով: Արբոր շատ սրտանց բարեկամներ  
գտաւ՝ ապահովեցաւ նէ, որ պարզամիտ  
ժողովուրդին մէկ մասն ալ չի գիտնալով  
իր չար միտքը՝ անոնց հետ էր, սա ապրս-  
տամբ որդին դիմակը (մասխարան) մէկ դի  
հանեց. իր կողմի մարդիկներուն զինքը  
թագաւոր կանչել տրվաւ. հօրը դէմ  
պատերազմելու համար շատ զօրք ժողովեց,  
ու Ղաւթի թը փախչելու պարտաւորեց:  
Իսայ Սադովիկ և Մ. Բ. Եստղովին քահանայա-  
պետները իրենց զաւակներովը մէկ տեղ  
Ղաւթին հաւատարիմ մնալով՝ Մ. Բ. Ես-  
տղովին բանակը եղած բաները իրեն կիմա-  
ցրնէին: Ղաւթի թը Մ. Բ. Եստղովին բանակին  
դէմ իր կտրիչ զօրքերը ու իր փախչելուն  
ատենը հաւատարիմ մնացած ընկերները  
խրկեց. որոնք Մ. Բ. Եստղովին բանակը բո-

լոր ցիրուցան ըրին, Արեսողոմն ալ փախ-  
չելու ատենը՝ մաղերը ծառի մը պըլը-  
վեցաւ՝ հեծած ջորին տակէն փախաւ,  
ինքը մաղերէն կախված մընաց: Շուտ  
մը իմացաւ Ղաւթին զօրապետը Յովար  
ու վրան հասաւ, որ ուրիշ անգամ զինքը  
հօրը հետ հաշտեցուցած էր, աս անգա-  
մուն իրեք նետով սրտէն զարկաւ, ու  
հոն տեղը մեռցուց զինքը: Ասիկայ ճշմա-  
րիտ օրինակ էր հերետիկոսներու կեղծա-  
ւորութիւնը իրենց մօրը սիւ եկեղեցւոյ դէմ  
ապստամբութիւնը՝ առջի հովիւներու՝ և  
սիւ հաւատքի քարոզիչներու ճշմարիտ  
ջանքով՝ իրենց յաղթը վերուն, ու իրենց  
անմիաբանութիւն ու հակառակախօսութիւն  
ցիրուցան ըլլալնուն: Արեսողոմի մահա-  
նը վրա Ղաւթին արցունքները եկեղեց-  
ւոյ լացքը կընշանակէ իր ապստամբ զաւ-  
կըներուն հողով՝ կորսը վերուն վրա: Բ.  
Թագա. Ժե. Ժե. Ժը:

Խրատ եկեղեցւոյ դէմ ապերտիտութիւն-  
ներու շուտ:

« . Հնազանդութիւն պարտքին դէմ  
հերետիկոսները իրենց յամառութիւնը կը-  
դնեն՝ հաւատքի քանի մը մասերը ընդու-  
նելով ու մէկ քանին ուրանալով, որպէս  
թէ ան մասերը մէկալնոնցմէ աւելի ան-



Հասանելի ըլլան, կամ եկեղեցին, որ ան մասերը հաստատած է նէ, զասոնք հաստատած ալ չըլլայ, ու կամ զանոնք հաստատած ատենը անսխալ էր, զասոնք հաստատած ատենը սխալած ըլլայ <sup>1)</sup>: Հաւատքի ամմէն մասունքներն ալ անհասանելի ու մեր խելքէն դուրս բաներ են, անոր համար ալ հաւտացողներուն յաւիտենական վարձք խոստացված է. հերետիկոսները աս վարձքէն դուրկ են, վսոյի հաւատքի քանի մը մասերը ուրանալով հաւտացածնին ալ իրենց խելքին հաւատքը կը ըլլայ, անոյին հաւատք չըլլար: Ըմմէնն ալ եկեղեցւոյ անսխալ իշխանութիւնը հաստատած է, ու աս բանս ուղղափառի մը իր հաւատքին մէջը մեծ հանգստութի կուտայ <sup>2)</sup>: Հերետիկոսները աս հանգստութիւն ալ չեն կրնար ունենալ, վսոյի եկեղեցւոյ անսխալ վկայութեանը չանսալով, ու իրենց խելքին առաջնորդութեանը հետեւելով մոլորութի մոլորութի կը գլտորին:

Բ. Ընհաւատ և անանձ մարդիկները

1. Դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն. Սոփ. 2. 14:
2. Ընտարանին ոչ հաւատայի, եթէ ոչ էր շարժեալ զիս հեղինակութիւնն եկեղեցւոյ. Սոփ. (Գոթ. 2. 2. 2. 5):

քրիստոնէի մինակ անունը կրելով սքե կեղեցին սիրելու տեղը կատեն՝ կանարգեն, ու իրենց կարծիքին դէմ վճիռ մը տալու ըլլայ նէ՝ ձեռքերնէն գայ, զինքը կը կործանեն. բայց աւելի իրենց կը վնասեն, ու եկեղեցւոյ բան մը չեն կրնար ընել՝ Վսմիշտ իրեն հետ ըլլալով<sup>1)</sup>: Ասոնք կաշխատին իրենց կարծածէն դուրս բանի մը չի հաւտալու, ճշմարտութե դէմ պատերազմելն ալ դժար ըլլալով՝ իրենց խղճմտանքներէն կը տանջուին, սք ու աւաքինի ուղղափառները կանարգեն, ու իրենց յաւիտենական փրկութիւնը իրենց կարծիքին հետ կը փոխեն<sup>2)</sup>:

Գ. Թուլ ու անհոգ ուղղափառները եկեղեցւոյ պայծառանալուն գործակից ըլլալու, կամ գոնէ ուրախանալու տեղը անհոգ՝ անզանազան կը կենան, ամմէն հաւատքի կը հաւտան, որ նշան է, թէ ճշմարիտ հաւատք չունին: Ղուն մէկն ալ՝ մէկայն ալ չես դատապարտեր, անանկ է նէ՝ եկեղեցւոյ անհնազանդ ես, զեկեղեցին կը դատապարտես, վնզի եկեղեցին ամմէն հերետիկոսներն ալ կը դատապարտէ, ու

1. Մատթայի եւ ընդ ձեզ եւմ զամ աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի. Մատթ. էջ. 20:

2. Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ անարգէն զիս անարգէ. Ղուկ. էջ. 16:

կըհրամայէ, որ դուն ալ իրեն հետ մէկ տեղ ամմէն աղանդաւորները՝ հերետիկոսները ու հերձուածողները դատապարտես. անանկ է նէ, դուն Վրնի ալ միտք չունիս հնազանդելու, որ ան ալ ասանկ կըհրամայէ<sup>1)</sup>: Վրնի աս հրամանէն փախչելու համար ուրիշ ճամբայ չիկայ, կամ բոլոր հերետիկոսները մէկ տեղ դատապարտելու ես, որ եկեղեցւոյն չեն ուզեր լսել, կամ արքայութիւն բոլոր անհաւատներով ու կռապաշտներով պէտք է լիցունես Վրնի կամացը ու վճռին դէմ, որ է անկարելի:

### Օրէնակ:

Այն փրանկիսկոսին փոքր ըսված կարգէն Առմանոս անունով կրօնաւոր՝ մը սատանայէն ու իր հպարտուէ խարված՝ լուտերական եղաւ, ու ֆելլիմոնէ անունով վիրթենբերկցի չար մարդու մը գնաց, որ լուտերական չար աղանդին գլխաւորն էր, իրեն խոստացաւ իրենց սատանայական հերետիկոսութիւն քարոզութիւն տարածելու, ու զինքը հաւատացունելու համար ըսաւ, որ առջի անգամ քարոզ տրված օրը պիտի հաներ ամմէնուն առջևը իր կրօնաւո-

1. Ապա եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իրակ զհնթանոս. Մատթ. Ժ. 17:

րական զգեստը : Բսածին պէս ալ կատարեց, ան աղանդին չար քարոզիչ մը եղաւ, ու շատ թուլ մարդիկներուն սք հաւատքէն կործանելուն պատճառ եղաւ : Ետքը Փելլիմոնէն ան քաղքէն դնաց նէ՛ ինքը շատ մեծցաւ, ու ինչպէս ուրիշ հերետիկոս եղողները՝ անանկ աս ալ ոսկւոյ ու մարմնոյ համար ուրացած ըլլալով սք հաւատքը, երկու բաղձանքին ալ կատարեալ հասաւ, շատ երկիրներու՝ տներու և հարստութե տէր եղաւ՝ իրեք հատ մէկզմէկու մահւանէ ետե առած կնիկներէն մնացած զաւկրներուն ձգելու համար : Բայց շատ չանցաւ՝ Ե՛յ արդար պատիժը վրան հասաւ, վնդի Քնի հաղար հինկ հարուր յիսուն ու չորս թըւականին ծանր հիւընտութիով մը պսակեցաւ, յուսահատեցաւ, սկսաւ վախնալ ու ձանով մը պոռալ, Ես դատապարտըվեցայ, ինձի փրկութե յոյս չիկայ, աս մարմնապաշտ հերետիկոսները ամմէնը դատապարտըված են ըսելով՝ երեսին դունը դարձաւ, աչքերէն կրակ սկսաւ ելլել, ու սատանան իր տէրը կանչելով՝ իր պիղծ հոգին աւանդեց, ու իր վախնալու մահը սք եկեղեցւոյ միաբանութէ ու հնազանդութէ բաժնըված աղանդաւորներուն օրինակ ձըգեց : Հայր Ապէրի. Գաշա ծաղի :

ՏԱՄՆՐԻՔՆԵՆԵՐՈՐԴ ԷՆՍԵՆԻ

Հոսսաստի՛ն իննէրորդ ու գոսնէրորդ  
հասն զլս :

հ. Ինչ է հաղորդութի՛ն սրբոց :

դ. Ըն բաժինն է, որ եկեղեցւոյ խորհուրդներէն՝ աղօթքներէն ու բարեգործութիւններէն ամմէն ուղղափառ քրիստոնեաները ունին :

հ. Ինչո՞ւ կրսես ուղղափառ քրիստոնեաները :

դ. Անգի անհաւատները ու հերետիկոսները եկեղեցւոյ հոգևոր բարիքներուն մասնակից ըլլալու իրաւունք չունին :

հ. Ընհաւատները ինչո՞ւ համար չունին աս իրաւունքը :

դ. Անգի սք մկրտութիւն եկեղեցւոյ անդամներ ու որդիքներ եղած չըլլալով՝ աս իրաւունքը վաստակած չեն :

հ. Հերետիկոսները ինչո՞ւ համար չունին :

դ. Անգի իրենց անհնազանդութեցը ու ապստամբութեցը համար, եկեղեցին զլրենք մերժած ու ժառանգութի կտրած ըլլալով աս իրաւունքը կորսնցուցած են :

հ. Ըս սքերուն հաղորդութիւն մինակ աշխրրքի հաւատացեալներու մէջն է :

դ. Չէ, իրենց մէջը, իրենց ու երկինքի սքերուն, ու քաւարանի հոգիներուն մէջն



ալ է . մնդի ինչպէս վերը ըսինք , իրեքը մեկտեղ Վսի մեկ եկեղեցին կրնեն , ու յաղթող չարչարող ու պատերազմող եկեղեցի կըսվին :

հ . Ինչ բանի վրա է մեր հաղորդութիւն երկինքի հրեշտակներուն և սքերուն հետ :

ա . Սենք անոնց կաղօթենք՝ անոնք ալ մեզի համար բարեխօս կըլան :

հ . Ինչ բանով կը հաղորդինք քաւարանի հոգիներուն հետ :

ա . Սեր աղօթքներովը բարի գործքերովը ու իրենց համար խորհուրդներ մատուցանելովը :

հ . Ինչ ըսել Լուսնի Տղայ :

ա . Ըսել է , որ հռովմէական սք եկեղեցին մեղքերուն թողութի տալու իշխանութիւն ունի :

հ . Ինչ կիմանաս աս եկեղեցւոյ ունեցած իշխանութիւնովը :

ա . Ըն կիմանամ , որ բոլոր աս եկեղեցւոյ հնազանդ զաւկրները իրենց մեղքերուն թողութիւն կրնան առնուլ , որն որ եկեղեցին կուտայ իրենց :

հ . Ուր տեղաց կառնու եկեղեցին աս իշխանութիւն :

ա . Վսէն կառնու , որ յարութէն ետքը առաքեալներուն տրվաւ , որ ինքն ալ քահանաներուն կը հաղորդէ :

հ. Խնչ բանով կառնելի մեղքերուն թողութիւնը :

դ. Եկեղեցւոյ խորհուրդներուն ձեռքովը :

Քնի Տէ՛րիայ ծովուն խովը աստիճանաց  
Էրեւանալուն ուսումնականը :

Քնի յարութէն ետքը , որ մը Պետրոս առաքեալը ձուկ որսալու երթալ ուղեց , ուրիշ առաքեալներէն ալ վեց հոգի իր քովը գտնելելով , անոնք ալ մէկ տեղ գացին : Իսկոր գիշերը բան մը չիկրցան բռնել . Յս առտըւանց ծովին քովը եկաւ . զինքը թէպէտ չիճանչցան , բայց իր ըսելուն համար ուռկաննին նորէն ծովը ձգեցին , որ հարուր յիսունւիրեք հատ մեծ մեծ ձկերով լեցվեցաւ , անանկ որ ուռկանը (աղը) գուրս չէին կրնար կոր քաշել : Ասիկայ տեսնելով Յովհաննէս աւետարանիչը զինքը ճանչցաւ՝ անիկայ Տէրն է՝ ըսաւ . Պետրոս ինքը զինքը շուտ մը ծովը նետեց , լողալով Յսին գնաց . ու ետեէն մէկալ աշկերտներն ալ նաւակով հասան : Հոն տեղը կրակ տեսան , որ վրան ձուկ կար ու քովը հաց . բայց Յս ան իրենց բռնած ձուկէն ուղեց , անոր համար ուռկանը ցամաք քաշեցին , որուն մէջը անչափ խոշոր ձուկեր կային , որ երկրորդ հրաշքով մը չիպատուեցաւ .

ան ձուկերէն եփեցին, Վսի իր ձեռքովը  
 իրենց հաց ու ձուկ բաժնեց ու կերան :  
 Կերակուրը լինցաւ նէ՛ Վսի ամմէնուն առ-  
 ջըը հարցուց Պետրոսին ըսելով, Սիմոն  
 Յովնանու՛ ասոնցմէ աւելի կըսիրես զիս :  
 Պետրոս պատասխան տրվաւ, որ Հրամ-  
 մերես Տէր՛ դուն ալ գիտես, որ զքեզ  
 կըսիրեմ : Յս ըսաւ իրեն՝ Արածէ՛ իմ  
 գառներս : Աորէն հարցուց իրեն Յս առ-  
 ջի հարցումը, ու Պետրոսը նոյն պատաս-  
 խանը տրվաւ նէ՛ Յս ըսաւ, Արածէ՛ իմ ոչ-  
 խարներս, ու երրորդ անգամ կրկնեց իր  
 հարցումը : Պետրոս առաքեալը տրամե-  
 ցաւ, ու զինքը վկայ կոչեց իր սիրուն  
 ամմէնէն աւելի ըլլալուն վրա՛ ըսելով,  
 Տէր՛ դուն ամմէն բանը գիտես ու կը-  
 ճանչնաս, ու աս ալ գիտես, որ կըսիրեմ  
 զքեզ, ու Յս ըսաւ իրեն՝ Արածէ՛ իմ ոչ-  
 խարներս : Ահա Պետրոսի ու իր յաջորդ-  
 ներուն բոլոր աշխրբի ու ամմէն քրիստո-  
 նեայ ազգերուն վրա գլխաւորութիւն իշխա-  
 նութիւն : Վսի գառները արածելու հրա-  
 մանաւը բոլոր քրիստոնեայ ժողովուրդնե-  
 րը յանձնեց իրեն, ու ոչխարները արա-  
 ծելու հրամանօքը բոլոր վարդապետները՝  
 եպիսկոպոսները՝ առաջնորդները՝ ու ազ-  
 գային մասնաւոր գլուխները ու հովիւնե-  
 րը կը յանձնէ, որ միամիտ ժողովուրդը՝

գառնուկներուն ոչխարներու ետեէն երթալուն պէս իրենց վարդապետութե կաթովը հոգևորապէս կապրին, ու իրենց ետեէն կերթան: Վն ոչխարները երկու անգամ յանձնելով ամմէն աստիճանի՝ պատուոյ ու մեծութե, ու ամմէն ազգերուն հովիւներն ալ Պետրոսի ու անոր յաջորդներուն արածելու իշխանութեանը տակ ձգեց: Չելանք անանկ է նէ աս հովիւն հօտէն դուրս, որ գայլերը չկապտուն զմեզ, թէ գառները՝ ու թէ ոչխարները, վնզի գայլերը գառն ու ոչխար չեն նայիր: Յովհ. Խ:

Խրատ Բեղերու Լողուլէն զրո:

« . Ը՞ծ ինչպէս անսահման իմաստութիւն արքայութե հրեշտակները ու սքերը՝ քաւարանի հոգիները՝ ու կենդանի քրիստոնեաները մէկ եկեղեցի, ու մէկ թագաւորութի ըրաւ, ու իր միածին որդին Վնը վրան գլուխ ու թագաւոր կարգեց<sup>1)</sup>. որ ամմէնը անոր հնազանդին, ան ալ շօրը հնազանդելով մէկ տէր ու մէկ տէրութի ըլլայ<sup>2)</sup>»:

1. Բովանդակել զամ Վնիւ, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի՝ ի նոյն. Եզե. ա. 10:
2. Յորժամ հնազանդեցի նմա ամ, յայնժամ և ինքն Որդի հնազանդեցի այնմ, որ հնազանդեցոյց նմա զամ. զի եղիցի Ը՞ծ ամ յամի. ա. Կրի. Ժ. 28:

Անանկ ալ Այ իմաստութիւր Քս երկրի վրայի երևելի եկեղեցւոյն վրա երևելի գլուխ և իրեն փոխանորդ զՊետրոս ու անոր յաջորդները դրաւ, ու կուզէ՝ որ անոր ամմէն քրիստոնեաները հնազանդին, որ ան ալ իր պահելովը իրեն միշտ հնազանդ պիտի ըլլայ, որ աս եկեղեցւոյ մէջ ալ միութի միշտ պահվի <sup>1)</sup> . ու անոր ձեռքովը ամմէն թողութիւնները ու շնորհքները բաժնւրվին :

Բ. Ով որ Քսի դրած երևելի գլխուն ու անոր հովւած եկեղեցւոյն հետ հնազանդութիւն կրմիանայ՝ Քսի եկեղեցւոյ մէջ կը լայ, Քսի ու Այ հետ կը միանայ, ու եկեղեցւոյ ձեռքովը բաժնւրված շնորհքները, ու Քսի արգիւնքներովը տրուած թողութիւնները, ու սք եկեղեցւոյ բոլոր բարիքները շիտակ կարգաւ իր վրան ալ կիջնան <sup>2)</sup> : Աս սք եկեղեցւոյ միութիւն անհնազանդութիւնով ապստամբողն ալ ինքը զինքը իր մեղքերուն թողութիւն Այ շնորհքներէն՝ Քսի արգիւնքներէն՝ ու ասոր բոլոր բարիքներէն կը

---

1. Չայնի իմուժ լուիցեն. և ևղիցին մի հօտ և մի հովիւ. Յւճ. 7. 16 :

2. Արպէս իւղ զի իջանէ՝ ի գլուխ՝ և ի մօրուան Ահարոսիի, և ի մօրուայն իջանէ՝ ի գրապանս զգեստու նր Սաճ. 2. 2 :



զորկէ՛, հեթանոսի պէս կըլլայ<sup>1)</sup> . ու ինչպէս ապստամբ զաւակը ժառանգութի կըզրկըվի, ու ապստամբ քաղքըցին մահաւամբ կըպատժըվի, սասնկ ալ աս եկեղեցիէն ապստամբողը արքայութե ժառանգութի կըզրկըվի, ու յաւիտենական մահաւան կըդատապարտի<sup>2)</sup> :

Գ . Ը՛ զքեզ աս սք եկեղեցւոյ զուակ ընելովը Քսի ու անոր երկնաւոր թագաւորութեան ժառանգ ու քաղքըցի ըրած է, քեզի շնորհք ալ տըված է, որ Քսի երկրաւոր թագաւորուեր՝ այսինքն՝ աս սք եկեղեցւոյ մէջ երկրաւոր քաղքըցիութեդ ատենը իր փոխանորդին հաւատարիմ հնազանգութի՛ բարի գործքերով, ու շուտ շուտ խորհուրդներ ընդունելով զանիկայ աւելցընես, ու անանկ կարող ըլլաս երկնային ժառանգութեդ ու քաղքըցիութեանդ հասնելու : Ղանչցիր Ը՛ քեզի ըրած բարերարութե յարդը, ու մեծ վախով հաւատարիմ կեցիր որդիութեանդ ու ժառանգութեդ մէջը, որ չըլ-

1. Եպա եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղեցի քեզ իբրև գհեթանոսն . Մատթ. Ժ. 17 :
2. Ըթոռոյն Պետրոսի հաղորդութեամբ կցորդիմ : Ի վերայ այդր վիմի շինեալ գիտեմ գեկեղեցի : Ար միանգամ արաարոյ տանս այսմիկ կերիցէ զգառն, պիղծ է : Եթէ որ ոչ եղիցի ՚ի նոյեան տապանիդ, կորիցէ . Սուրբ Զեդուն . Յոսոյ Ը . Ժ :

լայ՝ թէ աս ձեռքդ դանդախ իրաւունքդ  
դուն կորսընցընես՝ և ուրիշը յափշտակէ՝<sup>1)</sup> :

( ) Երկուսի :

Դաւախթ անունով չարագործ մարդ մը  
իր կենացը մեծ մասը ծանր մեղքերու մէջ  
անցընելէն ետե՛ որ մը իր մեղքերուն բազ-  
մութիւնը ու անոնց համար ատեն մը Ա՛յ  
ձեռքը իյնալիքը սկսաւ մտմտալ, և ան-  
չափ մտածեց, որ քիչ մնաց յուսահատու-  
թեան մէջ իյնալու . բայց Հոգին սբ իր  
սիրտը լուսաւորելով ճշմարիտ ապաշխա-  
րութիւնով Ա՛յ ողորմութեւնը ապաւինե-  
ցաւ, անապատ դնաց՝ ճգնաւորներու վանք  
մըտաւ, հոն տեղը խիստ ճգնութիւններով  
ապաշխարել սկսաւ, ու կատարեալ զըղ-  
ջումով բոլոր մեղքերը խոստովանեցաւ :  
Ատքը ինքը զինքը անանկ մեծ մեծ առա-  
քինութիւններու տրվաւ, որ բոլոր ան վան-  
քին ճգնաւորները կրղարմացընէր, ու ի-  
րենց բարի օրինակ կը լլար : Ասանկ ծանր  
ապաշխարութիւններու և ասանկ մեծ առա-  
քինութիւններու մէջը իր անցած մեղքերը  
միտքը գալով՝ իրեն վախ մը կուգար, որ  
չըլլայ, թէ անանկ մեծ մեղքերու թողու-  
թիւն չհտըրվի, ու եկեղեցին զանոնք թող

1. Այլ գոր ունիսգ՝ զի մի որ առցէ զպսակն քո .  
Յայտ. 4. 11 :

տալու իշխանութի չունենայ : Աս փոր-  
 ձութիներու մէջ մտմտալու ստենը հրեշ-  
 տակ մը իր անունը կանչելով ըսաւ . 'Ղա-  
 իթ Ղաալիթ, մեղքերուդ թողութի ե-  
 ղաւ : Արբոր անով ալ չիհաւտաց նէ՛ հը-  
 րեշտակը ըսաւ . Չաքարիան իմ խօսքիս  
 չիհաւտաց նէ՛ լեզուն կապեցի, ու գի-  
 տեմ որ քեզի ալ անհաւատալի կուգայ  
 կոր ըսածս, Այ բարութեը վրա ասանկ  
 քիչ յոյս ունենալուդ համար ասկէ ետքը  
 չիկրնաս խօսիլ : 'Ղաալիթը երկու ծնկան  
 վրա եկած ըսաւ հրեշտակին, երբոր չա-  
 րիքներ կրգործէի, ու անարժան խօսքեր  
 կրխօսէի նէ՛ լեզուս չիկապեցիր, հիմայ որ  
 զԱ՛ծ պիտոր փառաբանեմ, լեզուս կը-  
 կապեմ : Հրեշտակը ըսաւ իրեն՝ աղօթե-  
 լու ու զԱ՛ծ փառաբանելու բաներու մէջը  
 լեզուդ բաց ըլլայ, բայց արտաքին բանե-  
 րու վրա կարող չըլլաս խօսելու . ու ա-  
 նանկ եղաւ բոլոր կենացը մէջ : Հարանց  
 Չարուց Տըլլ :

ՔԱՆՆԵՐՈՐԴ ԼԵՄԵՐ

Հաստատման փաստը մէկ ու փաստելովն է-  
 րորդ հասին զլու :

Կ. Ի՛նչ ըսել է . 'ի յարուլիւն Տուլ-  
 րոյ : Ի դաստատման յաւթուելոց հոգաց ու  
 հարմոց :

« . Րսել է , որ աշխարքիս կատարածին բո-  
լոր մարդիկները մեռնելէն ետքը իրենց  
հոգիներին իրենց մարմիններուն հետ նորէն  
պիտի միանան , ու Վսի դատաստանին  
առջևը պիտոր ելլան :

հ . Մամէն մարդ իր մարմնովը պիտոր կեն-  
դանանայ :

« . Հրամմերես , աս' մի և նոյն մեր մարմինը  
ու միսը պիտի առնունք ու կենդանանանք :

հ . Ինչո՞ւ պիտի ըլլայ աս յարուժիր :

« . Մնոր համար , որ բարիներուն մարմին-  
ները , որ առաքինութիւններու մէջ իրենց  
հոգիներուն մասնակից եղեր էին նէ՛ վարձ-  
քի մէջ ալ անոնց մասնակից ըլլան . ու  
չարերուն մարմիններն ալ , որ իրենց մո-  
լութիւններուն գործիք եղեր էին նէ , պա-  
տիժի մէջն ալ իրենց հոգիներուն մաս-  
նակից ըլլան :

հ . Մնանկ է նէ ամմէն մարդիկները մի-  
օրինակ չե՞ն յառներ :

« . Չէ , արդարները իրենց մարմնովը՝ փա-  
ռաւորւած ու անչարչարելի պիտի յառ-  
նեն , ու մեղաւորներն ալ իրենց մարմնովը  
բայց տղեղ ու յաւիտենական հրոյ պատ-  
րաստրված :

հ . Ինտո՞ր կարելի է , որ կենդանանան ա-  
նոնց մարմինները , որ կամ գազանները  
կերած , կամ կրակի մէջ երած են :

դ. Աշխարհքը ոչընչէ ստեղծելէն աւելի դժար չէ Ա՛յ ամենակարողութիւնը մեր մարմինները իրենց հողերէն կամ մոխիրներէն նորոգելը :

հ. Ա՛րբ պիտի ըլլայ աս յարութիւնը ու վերջին դատաստանը :

դ. Սարդ չիղիտեր . բայց Վճ ըսաւ , որ երբ որ երկրի վրա հաւատքը սաստիկ կը տըկարանայ , անօրէնութիւնը կը շատնայ նէ , յանկարծակի մարդիկներուն չիկարծած ատենը պիտոր դայ դատաստանի :

հ. Ի՛նչ ըսել է՝ յարչոյութիւն երկնից , ե՛րբ կէանսն յաւիտեանկանս :

դ. Ըսել է , որ Ա՛յ շնորհացը մէջ մեռնող արդարները յաւիտենական կեանքի մը արժանի պիտի ըլլան , որ ամմէն բարիքներով լեցուն՝ ու ամմէն չարիքներէն ազատ է :

հ. Սեղաւորները յաւիտեան պիտի չապրին :

դ. Պիտի ապրին , բայց իրենց կեանքը ամմէն չարիքներով լեցուն՝ ու ամմէն բարիքներէն զուրկ պիտոր ըլլայ , անոր համար ալ յաւիտենական կեանք ըսելու արժանի չէ , յաւիտենական մահ կը սպի :



### Յարութիւնք Կիւրճի:

Ընդ Սղեկիէլ մարգարէին մարգարէական հոգի տալէն, ու իրեն շատ գաղտուկ խորհուրդներ յայտնելէն ետքը՝ որ մը զինքը հոգւով մեծ դաշտի մը վրա տարաւ, որ մեռելներու ոսկորներով լեցուն էր: Օհնքը անոնց մէջ պտըտցունելէն ետքը, ըսաւ իրեն, որ բոլոր ան ոսկորներուն վրա մարգարէանայ, ըսէ իրենց, ‘Չորցած ոսկորներ’ մտիկ ըրէք Ընդ հրամանը, որ ասանկ կրսէ կոր ձեր վրա. հիմայ զամմէնքդ ալ պիտի կենդանացունեմ, ձեր վրա ջղեր՝ մներ ու կաշի պիտի բերեմ, իմ հոգիս ձեզի պիտի տամ, որ կենդանանաք, ու ճանչնաք, որ ես ձեր Տէրն եմ: Մարգարէն Ընդ հրամանը կատարածին պէս ձան մը եկաւ՝ ետեւէն շարժում մ’ ալ եղաւ, մէյ մ’ ալ նայիս, որ ան ոսկորները քովէ քով եկան ամմէն մարդունը զատ զատ ու տեղն’ի տեղ եկան միացան. վրանին ջղեր քաշվեցան՝ մներով՝ երակներով պատեցան՝ վրանին կաշիներով ծածկրվեցան, ու կատարեալ մարդու մարմիններ եղան: Սղեկիէլը Ընդ հրամանաւը շունչին վրա ալ մարգարէացաւ՝ ըսելով, ‘Շունչ՝ փչէ աս մեռելներուն, որ կենդանանան. շուտ մը շունչերը ու

Հողիները մարմիններուն մտան, կենդանացան, ելան, ոտքի վրա կայնեցան. ուսն մեծ դաշտը՝ որ յառաջ ոսկորտանքով լեցուն էր նէ, մարդիկներով լեցվեցան անհամար բազմութիով: Ա՛յ՛ որ մեր սրբաւատքին ամմէն մէկ խորունկ խորհուրդները մէյ մէկ ճամբով յայտնած է, յարութեան մեծ խորհուրդն ալ աս տեսիլքով յայտնեց. ու ատեն ատեն ալ դործքով շատ մեռած մարդիկներ կենդանացունելով՝ յարութեան խորհուրդը հաստատեց, ու Վ՛սի սրբաւորը պսակեց: Երէն. Է:

Խրատ բնութանոց յարութեան վրայ:

• • Արդարներուն յարութիւնը շատ ուրախական պիտի ըլլայ, որ իրենց մարմինները աս աշխարհքը չարչարանքներով, ծանր ճգնութիւններով, շարունակ աղօթքով մաշելէն ետքը անչափ ժամանակ անօրան կրտսպասէին, որ Վ՛ս գայ զիրենք նորոգէ, ու անմահութեան պարգևներով զիրենք իրեն փառակից ընէ <sup>1)</sup>: Հրեշտակապետին փողին ձանր իրենց երկնաւոր հարսնիքի հրաւեր պիտոր ըլլայ, հանգըստեան քունէն անուշութիով արթընցածնին պէս իրենց երկնաւոր փեսան Վ՛ս

1. Մեռեալք յարիցեն առանց ապականութեան, և մեք նորոգեսցուք. • • Վրդն. ԺԷ. 52:

Թագաւորը մեծ փառքերով դիմացնին եկած պիտի տեսնեն<sup>1)</sup>, որ եկեր է իրենց արդարութիւնը ամմէնուն յայտնելու՝ և զիրենք անմահութե՛զ զարդերով՝ անպատմելի փառքերով ու փառաւորւած մարմնով յաւիտենական հարսնիքը տանելու համար<sup>2)</sup> :

Բ. Ի՛նչ դառն պիտի ըլլայ մեղաւորներուն յարութիւնը . ի՛նչ մեծ վախ պիտի տայ իրենց վերջին փողին ձանը, որ զիրենք ժամանակաւոր մահւանէ պիտոր արթընցունէ միշտ մեռնելու՝ ու յաւիտեան անմահ մնալու համար՝ յառաջ բուրոր աշխարհի առջևը զիրենք խայտառակելէն ետքը . ու իրենց դատաւորը ի՛նչ սոսկալի պիտի երևնայ իրենց աչքերուն<sup>3)</sup> : Ի՛նչ դաժան երևոյթներով պիտոր երևնան իրենց սատանաները՝ անողորմ դահիճներէն աւելի պատրաստուած զիրենք մարմնով ալ մէկտեղ յաւիտենական տանջանքներուն մատնելու համար : Աւ

- 
1. Նախ Վրն, և ապա քսեանք ՚ի գալստեան նր. . . Կորն. 2Է. 23 :
  2. Սերմանի ապականութիւն, և յառնէ առանց ապականութեան, սերմանի անարգութիւն՝ և յառնէ փառք. Եր. 42. 43 :
  3. Տեսցին զնա նմ աչք . . . և որք խոցեցին զնա ամենեքեան յերկրի, և կոծեսցին. Յայ. . . 7 :

ի՞նչ տգեղ պիտոր երևնան իրենք իրենց, ու  
մէկզմէկու<sup>1)</sup> . ո՞վ անպատմելի դառն բոպէ :

Գ . Մեր ըրածը ինչ մեծ անմտութի  
է , որ անանկ ուրախական ու ասանկ  
տրամական յարութի՛ններուն դէմ անհոգ  
կերթանք կոր , ու չենք գիտեր , թէ որո՞ն  
պիտոր հասնինք . արթըննանք քանի որ  
ժամանակը ձեռքերնիս է . ջանանք մեղա-  
ւորներուն յարութէ՛ փախչելու , որ յա-  
ւիտենական դժբաղդութե՛ր ու անմահ  
մահւան սկիզբն է . աշխատինք վարքեր-  
նիս Վսին ու սքերուն վարուցը նման-  
ցունելու , որ իրենց անպատմելի յարու-  
թե՛րը արժանի ըլլանք<sup>2)</sup> :

### ( ) Երևալ :

Վեկոս կայսեր հալածանքին ատենը  
Լփեսոս քաղաքը եօթը հատ ազնւական  
պատանիներ գաղտուկ քրիստոնեայ եղած  
էին , Սաքսիմիանոս , Սարտիանոս , Լմիլ-  
քոս , Վիոնէսիոս , Աոստանդիանոս , Լն-  
տոնինոս ու Յովհաննէս անուններով :  
Վեկոսը հոն գրտնրվելով՝ զիրենք առջևը  
բերել տրվաւ , ու իրենց հաւատքին հա-

1. Լմնեքեան ննջեսցուք , սյլ ոչ ամնեքեան  
նորոգեսցուք . . . Կորն . Ժէ . 51 :

2. Լնչարժ կացէք , առաւել լերուք ՚ի գործս  
Տեառն յամ ժամ . . . Կորն . Ժէ . 58 :

մար անուշութիով, բարկութիով ու ծե-  
ծով փորձեց զիրենք, իրենց իշխանու-  
թիւները առաւ, մեծութե՛ն զգեստները հա-  
նեց, ու իրենց մտմը տալու ժամանակ տա-  
լով տուներնին խորկեց: Ասոնք ազատա-  
ծին պէս շուտ մը ունեցածնին աղքատնե-  
րուն բաժնեցին, ու իրենց ապրուստին  
պէտք եղածին չափ բան հետերնին առած,  
Ողբոս լեռան վրա փախան՝ սյրի մը մէջ  
պահպնեցան: Ան տեղը աղօթքի ու  
մեծ ճգնութիւններու մէջ հացով ու ջրով  
կապրէին. ու մէկը աղքատի կերպարան-  
քով երբեմն քաղաք կիջնար հալածանքին  
տեղեկանալու և իրենց հացիկը բերելու  
համար: Իրիկուն մը զիրենք աղօթքով  
Այ պահպանութե՛ր յանձնելով քուն  
մտած ատեննին հոգինին Այ աւանդե-  
ցին: Արուր քառսուն տարիի չափ անանկ  
մնալէն ետքը բարեպաշտ (Թէոդոս կսյսեր  
ժամանակը քունէն արթնեցածի պէս կեն-  
դանացան՝ ելան: Ալածանքին դադրիլը՝  
թագաւորներուն սր հաւատքը դառնալը,  
ու ժամերուն շատնալը տեսնելով շատ  
ուրախացան, իրենց պատմութիւր պատ-  
մեցին ան ժամանակեան հերետիկոսներուն  
դէմ, որ յարութիւր կուրանային. ու ամ-  
մէն պատրաստութիւով նորէն մեռան:  
Յայտն . եւ որքիչ շտա հեղեմիւնէր ալ  
իւրապօմէն :



# ԳԼՈՒԽ Բ Յ ՈՒՍ Ո Յ ՎՐ Ե

ԵՌԵՋՐՆ ԷԵՍԵՐ

Յոսայ ու անոր շէրհայի հոլո-լէնէրու  
Չէս :

4. Յոյսը ի՞նչ է :

Պ. Ե՛յ պարզե մի է, որ անով վստա-  
հութի կրօնականներ իրմէն յաւիտենական  
կեանքը ու անոր հասնելու համար հար-  
կաւոր միջոցները :

4. Սեր յոյսը ի՞նչ բանի վրա հաստա-  
տած պիտի ըլլայ :

Պ. Ե՛յ բարութիւնը, զօրութիւնը ու անսխալ  
խոստումներուն վրա, ու Քրիստոսի անսահման  
արդիւնքներուն վրա :

4. Ինչո՞ւ կրսես՝ Եստուծոյ պիտի սպա-  
սենք յաւիտենական կեանքը, երբոր  
անիկայ մենք վաստըկինք պիտոր նէ :

Պ. Ա՛յլի յաւիտենական կեանքը հատու-  
ցում մի է, որ մինակ Քրիստոսի արդիւնքնե-  
րը մերձեցունելով կառնըվի՛ ան միջոց-  
ներուն ձեռքովը, որոնք որ ինքը աս վախ-  
ճանին համար դրած է :

4. Ար՞ոնք են ատ միջոցները :

« Եւ զօթք՝ խորհուրդներ ու բարի գործքերն են :

Կ. Արո՞նք են յոյսին ներհական մոլութիւները :

« Յուսահատութիւն ու յանդգնութիւն են :

Կ. Ի՞նչ է յուսահատութիւնը :

« Սոլու՞թի մի է, որ Եւ ը բարութիւնը վրա վստահութիւնիս կորսընցունել՝ ու մեզի հաւտալ կուտայ, որ մեր մեղքերուն թողութիւնը չենք կրնար առնուլ, ու փրկութե՛ հասնելու դժարութիւները չենք կրնար յաղթել :

Կ. Ի՞նչ է յանդգնութիւնը :

« Սոլու՞թի մի է, որ մեզի հաւտալ կուտայ, որ առանց բարեգործութե՛, ու մեղքէն դառնալը օրէ օր ձգելով ալ կրնանք փրկութե՛ հասնիլ :

Կ. Եւ զատաստանին վախը յուսին դէմ է :

« Չէ, ան ալ յուսին պէս պատւիրված առաքինութիւն մի է : Եւ զատաստանին վախը՝ մեղքէն դառնալու համար, ու յոյսը՝ թողութիւն առնելու համար՝ թէ որ դժբաղդութիւն կիյնանք նէ :

Ղաւմիշի Ղաղղաղը յաղլիւնն պատմութիւնը :

Խորայեւացիներուն և փղշտացիներուն բանակները երկու լեռներու վրա դիմացէ դիմաց կեցած էին, փղշտացիներուն բանակէն առտու իրիկուն Ղաղղաղ անունով Տսկայ մարդ մը կելլէր, երկու բանակին մէջի դաշտը կիջնար, ու Խորայելի բանակը կընախատէր, ու իրեն հետ մինակ պատերազմելու մարդ մը կըհրաւիրէր. որ վեց կանգունէն աւելի երկայն էր, ու հագած զրահը վաթսուն հօխայ պղնձէ շինւած էր : Քառսուն որ ասիկայ աս բանս կընէր, ու մարդ մը չէր ուզեր դիմացը ելլալ, ամ մէն մարդ զինքը տեսնելով կըփախչէր : Ղաւիթ պատանեակը՝ որ հօրը հրամանաւ բանակը եղբարներուն կերակուր տարած էր, աս բանս տեսաւ նէ՝ ուզեց ասոր դէմ պատերազմիլ, ու մինակ իր պարսը (սափանը) առաւ՝ դիմացը ելաւ : Ղաղղաղը անարգութիւնով մը Ղաւթին պղղտիկութեը նայեցաւ, ու իր աճներուն երդում ըրաւ, որ զինքը թռչուններու կերակուր պիտի ընէր : Ղաւիթը իրեն պատասխան տրվաւ, որ դուն իմ վրաս քու զօրութեդ ու զէկքերուդ ապաւինելով կուգաս կոր, ու ես քու վրադ ՄՅ յուսովը զինուորված կուգամ կոր, որուն

անունը դուն ասօր նախատեցիր, ինքը  
քեզի պիտոր ցուցունէ, որ յաղթութիւն  
մինակ իր ձեռքն է: Աս ըսելով իր պար-  
սին մէջը պզտիկ քար մը դրաւ, պտըտ-  
ցուց՝ ու անանկ յաջողութիւնով մը նետեց,  
որ հսկայ Գողիադը ձակտէն զարկաւ՝ գե-  
տինը ձգեց՝ շուտ մը վրան վազեց, անոր  
սուրը առաւ՝ ու անով գլուխը կտրեց:  
Փղշտացիները աս տեսնելով վախցան,  
սկսան փախչիլ, Խարայէլացիները ետևէն  
վազեցին, ու իրենց աւարները բոլոր  
յափշտակեցին: Գաւիթ յաղթութիւնով,  
ու բոլոր ժողովուրդը ձեռք զարնելով, և  
ուրախական ձաներով ետ դարձաւ: \* .  
Թագ\* . Ժէ:

Խրատ քրիստոնէական յոսանքն զգա:

\* . Սեր յուսին պատճառները: 'Ասխ'  
Աճ ինքն է<sup>1)</sup>: Արկրորդ՝ ԱՅ բարութիւն՝  
որ զմեզ՝ մար մը իր զաւկըները սիրելէն  
աւելի կրտիրէ, իր իմաստութիւն՝ որ անով  
բոլոր մեզի պէտք եղած բաները, ու ա-  
նոնց հարկաւոր միջոցները կրտեսնէ, ու  
կրկարգադրէ. իր ամենակարողութիւն, որ  
անով մեզի օգտակար բաները մեր ուղա-

1. Ոչ տկարացի առ Աստուծոյ ամենայն բան.  
Ղ. 1. \* . 37:

ծէն շատ եւելօք կրնայ տալ մեզի . իր հաւատարմութիւր , որ իր խոստումները չիկրնար չիկատարել . ու Քսի արդիւնքները , որ բան չիկայ՝ որ անոնց ձեռքովը չիկրնանք առնուլ : Արջապէս Մճ մասնաւոր հրամայած է մեր յոյսը բոլոր իր վրան դնելու <sup>1)</sup> :

Բ . Այլ գրքի վկայութիւններէն յայտնի է , որ Մճ իր օգնութիւնները բոլոր աս առաքինութե հետ կապած է <sup>2)</sup> . ասիկայ է բոլոր մեր վտանգներուն մէջ մեր ապավինելու տեղը , մեր տառապանքներուն մէջ մեր քաղցր մխիթարութիւր , ինկած ատեննիս մեր օգնութիւր , ու գլխաւորաբար մեր մահւան ժամանակը մեր զօրութիւր <sup>3)</sup> :

Գ . Յուսին չար գործածութիւր՝ որ մեղաւորները կրնեն : Սատանան մեղաւորներուն յոյսը յանդգնութե կրփոխէ՝ ինչւան որ իրենց մեղք գործել տայ , ետքը իրենց յոյսը կառնու՝ զիրենք յուսահատութե մէջ կրձգէ : Մտոր դեղը մեղքէն վախնալ՝ ու սխալմամբ ինկած ատեննիս՝

1. Սատուցէք զպատարագս արդարուէ . և յուսացարուք ՚ի Տէր . Սաղմ . 7 . 6 :
2. Այբ յուսան ՚ի Տէր՝ ողորմութի Տեառն շուրջ եղիցի զնորօք . Սաղմ . 100 . 13 :
3. Քանզի յիս յուսացաւ . և փրկեցից զնա . Սաղմ . 2 . 14 :



Այն ապաւինելով մեղքէն շուտ մը դառնալն է ու մեղի չապաւինելն է <sup>1)</sup> :

( ) ր Ի Խ Ի Կ Ի :

Աղէքսանդրիա քաղաքը Պարասգեւի անունով աղջիկ մը կար, որուն ծնողքը երբոր մեռան նէ՛ Աիրակոս անունով մէկ հատիկ եղբարն ալ անապատ գնաց ճգնաւոր ըլլալու համար աս աղջիկը սատանայէն խաբւելով զինքը մարմնական մեղքերու տրվաւ, ու քիչ ատենի մէջ քաղաքը բոլոր գայթաղութիւններով լեցուց : Հայր Ղանիէլը՝ ու անապատին ուրիշ ճգնաւորները ասիկայ լսելով՝ եղբօրը վրան թափվեցան, ու զինքը կրմեղադրէին, որ իր քուրը ասանկ կորսւելու թող տրված էր, որ ինքն ալ արդէն աս բանիս վրա կուլար կողբար կոր, ասոնց հրամանաւր ու աղօթքովը զինքը Այն յանձնած՝ գնաց լալով ու Այն աղաչելով իր քրոջը կորսւված հոգին գտնելու համար : Արբօր քրոջը տանը դուռը հասաւ՝ ու ներսէն շատ մարդիկներու ուրախութե՛ն ու երգի ձաները լսեց նէ, ներս չի մըտաւ, ամբը նալով դռան քովը կեցած՝ իր գալը քրո-

1. Չայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիցէք. և եթէ մեղիցէ որ, ունիմք բարեխօս առ Աճ զՅս Վս. Յւլէ. Է. 1 :

ջը իմացունելու համար իրեն մարդ խաւ-  
 րեց, որ ուրախութիով գլուխը բաց ու  
 ոտքը պոպիկ դուրս վազեց, ու զինքը ող-  
 ջունելով իրեն երկրպագութի ըրաւ: Աի-  
 րակոսը իր քուրը ասանկ գարշելի կեր-  
 պարանքի մէջ տեսնելով սկսաւ լալ, ու  
 աչքերէն արցունքներ թափելով՝ ձեռքե-  
 րը ՄՅ վերցուցած՝ դարձաւ քրոջը ըսաւ.  
 Ի՞նչ է աս քուր իմ Պարասգեւի, ի՞նչ  
 բանի մէջ կը տեսնամ կոր զքեզ. ասանկ  
 զՄՏ անարգեցիր, քու հոգւոյդ հետ շա-  
 տերուն հոգիներն ալ կորսընցուցիր, ու  
 ասոնց նման շատ խրատներ տրվաւ իրեն.  
 որ ՄՅ ողորմութիովը քրոջը սիրաւ ա-  
 նանկ շարժեցին, որ անմիջապէս ձեռքե-  
 րը երեսին ու կուրծքին զարնելով ու լա-  
 լով եղբօրը ոտքը ինկաւ, ու մեղքերու  
 մէջ կորսընցած ժամանակներուն վրա ցա-  
 ւելով՝ ըսաւ, Աաղաչեմ քեզի իմ հոգե-  
 ւոր հարս ու մարմնաւոր եղբարս, թէ որ  
 գիտես, թէ ՄՏ կընդունի զիս՝ ու մեղաւոր  
 կնկանս զղջումը ու ապաշխարուիլը կընդու-  
 նի, զիս հոս մի թողուր, ես ալ քեզի հօր պէս  
 կը հնազանդիմ, ու ասկէ ետքը բոլոր սրը-  
 տէս ՄՅ կը ծառայեմ: Աիրակոսը ուրա-  
 խութիով ըսաւ, որ երթայ՝ գլուխը գոցէ,  
 կօշիկները հագնի, որ կուսանաց վանք  
 տանի զինքը: Պարասգեւին չուզեց ներս

մանել զինքը նորէն վտանգի մէջ չիղնելու համար, ու անանկ սկսաւ եղբօրը ետևէն երթալ. որ ճամբան մէկ գիէն կուլար, մէկ գիէն եղբօրը կըհարցունէր, որ իր մեղացը թողութի կըրնայ ըլլալ իրեն փրկուած թե յոյս կայ, ու եղբօրը խրատները լսելով, որ ՄԺ կատարեալ զղջումով ու ճշմարիտ ապաշխարութիով դարձողները սիրով կընդունի, ու որչափ մեծ մեղքեր ալ ունին նէ՛ կըթողու, ու անոր համար իր փրկութեը մեծ յոյս կայ, ալ աւելի կըզգար ու կըցաւէր ըրած մեղքերուն վրա, անանկ եղաւ, որ անդադար զարնելէն կուրծքերը արունեցան, պոպիկ՝ եղբօրը ետևէն երթալով ոտքերը ծակ ծակ եղան, աչքերուն արցունքները մարմնոյն քրտինքները՝ կուրծքին արունները, ոտքերուն արուններուն հետ խառնըվեցան, ու շարունակ աս կըկանչէր, Տէր Յս Իս՝ մեղաւոր կնկանս ապաշխարանքը ընդունէ: Ղիմացնին ճամբորդներ ելլալով եղբօրը խրատովը անտառի մէջ քաշվեցաւ, որ չիտեսնեն զինքը: Ճամբորդները անցնելէն ետքը եղբարը քովը գնաց, տեսաւ, որ քուրը մեռած էր: Վալով ու աղօթելով զինքը հոն տեղը թաղեց, ու ՄԺ յայտնեց իրեն, որ քուրը փրկըված, ու առանց քաւարանի շիտակ արքայութի գացած էր: Լաբանց լաբանց Տեղը:

ԵՐԿՐՈՐԻ ՀԱՄԱՐ

Աղօթի լրա :

Հ. Որն է աւելի զօրաւոր միջոցը մեղի պէտք եղած շնորհքները Աստուծմէ ընդունելու համար :

Պ. Աղօթքն է :

Հ. Աղօթքը ի՞նչ է :

Պ. Ստորին Այ վերանալն է՝ իրմէն յուսացած բաները ընդունելու համար :

Հ. Աղօթքը պատուիրան է՝ թէ խրատ է :

Պ. Պատուիրան է, ու Ա՛ճ իր օգնութիւնները անոր հետ կապած է, որ մեզի բացարձակապէս հարկաւոր են :

Հ. Ա՛ճ արդէն գիտէ մեզի պէտք եղած բաները, հապա ինչո՞ւ կը պարտաւորէ զմեզ զանոնք իրմէն ուղելու :

Պ. Ա՛նոր համար ասանկ կուզէ, որ մեր աղօթքովը զինքը պատենք, մեր տկարութիւնը ճանչնանք, ու իր օգնութեցը կարօտութիւնիս խոստովանինք :

Հ. Աղօթքը ի՞նչ զօրութի՛ ունի :

Պ. Աստուծմէ ամմէն բանը կընդունի, ինչպէս Քս խոստացեր է, որ իր անունովը ինչ որ կուզենք նէ՛ մեզի պիտոր շնորհվի :

Հ. Ա՛նանկ է նէ՛ ինչո՞ւ շատերը կաղօթեն, և ուզած բաներնին չեն կրնար ընդունել :

Պ. Այնքան կամ ինչ որ պէտք է խնդրել նէ՛ զան չեն խնդրեր, կամ ինչպէս որ պէտք է նէ՛ անանկ չեն խնդրեր :

հ. Այնքան պէտք է աղօթք ընել :

Պ. Գլխաւորաբար առտըւանց ու իրիկունը, և ասոնք շատ անգամ թողուլը մեր կրօնին մէկ գլխաւոր գործքը թողուլ կը լայ :

հ. Առտըւանց ինչո՞ւ համար պէտք է աղօթել :

Պ. Այն շնորհակալութի՛ ու պատիւ ընծայելու համար, որ զմեզ ստեղծեր ու ինչփան ան օրը պահպաներ է, ու ան օրը սրբութի՛ անցունելու իրմէն շնորհք խնդրելու համար :

հ. Իրիկունը ինչո՞ւ համար հարկաւոր է աղօթել :

Պ. Այն ան օրը մեզի ըրած բարիքներուն տեղ՝ իրեն շնորհակալ ըլլալու համար, մեր յանցանքներուն թողութի՛ր խնդրելու և զմեզ իրեն յանձնելու համար, որ ան գիշերը զմեզ ամէն տեսակ չարէն պահէ :

Անձնասին աղօթելուն պարտութի՛ր :

Իսրայէլացիները Ազիպտոսէն ելան նէ, Ասիիտիմ անապատին մէջը ամաղէկացիները իրենց վրան վաղեցին. Անձսէս ընտիր զօրքերով Յեսու զօրապետը



վրանին խաւրեց , ինքն ալ լերան մը վրան  
ելաւ , ուր տեղէն որ պատերազմին տեղը  
կերենար , անոնք պատերազմելու ատենը  
ինքն ալ աղօթքի կեցաւ , ու երբոր ձեռ-  
քերը երկինքը վերցուցած կաղօթէր նէ ,  
Յեսուն կը յաղթէր . երբոր ձեռքերը վար  
կկնայիննէ , ամաղէկացին երը կը յաղթէին :  
Ըհարովն ու Ովր , որ հոն տեղն էին , ու  
Սովսէսին աղօթքին հրաշքը տեսան , ու  
տեսնելով ալ որ սքը ձեռքերը յոգնած  
ըլլալով՝ չէր կըրնար կոր վեր բռնել ,  
քարի մը վրա նստեցուցին զինքը , ու մէ-  
կը աջ ձեռքը մէկալը ձախ ձեռքը վեր  
բռնելու կօզնէին իրեն . ու ասանկով  
Սովսէս իր աղօթքը ինչպան արևուն մըտ-  
նելը շարունակեց , որ Յեսու ժամանակ  
ունեցաւ Ըմաղէկին բոլոր զօրքը կոտորե-  
լու և կատարեալ յաղթութի ընելու :  
Ելէջ թէ : Ուրիշ ժամանակ ալ բարկացաւ  
Ըճ Իսրայէլի ժողովուրդին կռապաշտու-  
թի ընելուն վրա , ու կուզէր զամմէնքն  
ալ մեռցունել ջնջել : Սովսէս աղօթքի  
կեցաւ , ու կարծես որ իր աղօթքովը զԸճ  
պարտաւորեց . թող տուր ինձի՝ կըսէր  
Ըճ , որ ջնջեմ աս ապերախտ ժողովուր-  
դը : Չէ , Ըճ իմ՝ ըսաւ Սովսէս , աղ-  
թելէն չեմ դադրիր , ինչպան որ քու ժո-  
ղովուրդիդ յանցանքը չես թողուր նէ , ու

անչափ աղաչեց, որ վերջապէս խնդրածը  
ընդունեցաւ : Եւնց . ԷԲ :

Խորատ աղօթի վրա :

ա . Աղօթքը հարկաւոր է՝ մէյմը որ  
մեր կրօնին էական մասն է, վնդի կրօնը  
ԱՅ մատուցված պաշտօն մի է երկրպա-  
գութիւնով և աղօթքով, որոնցմով ԱՅ  
գերագոյն տէրութիւնը կըճանչնանք<sup>1)</sup> :  
Երկրորդ՝ որ մեզի հոգևոր ու մարմնաւոր  
պէտք եղած բաները Աստուծմէ աղօթքով  
կըրնանք ընդունել<sup>2)</sup> : Երրորդ՝ որ մեր  
փրկիչը Քս աղօթել հրամայեց, ու իր  
օրինակաւը հաստատեց<sup>3)</sup> :

Բ . Աղօթքին զօրութիւն Քսի խոստում-  
ներուն ու անոնց կատարմանը վրա հիմնած  
է<sup>4)</sup> : Աղօթքի պտուղներով բոլոր սբ գիր-  
քը լեցուն է, որ կերպով մը ԱՅ սիրտը  
մեր վրա ողորմութե կըշարժէ<sup>5)</sup> :

1. Պարտ է յամ ժամ կալ նոցա յաղօթս և մի  
ձանձրանալ . Ղ. 1. 1 :
2. Խնդրեցէք՝ և տացի ձեզ . . . զի ամ որ  
խնդրէ՝ առնու . Ղ. 1. 9. 10 :
3. Զանէր զգիշերն՝ ի գլուխ յաղօթան Աստուծոյ .  
Ղ. 1. 12 :
4. Օր ինչ և խնդրեցէք՝ ի շօրէ իմմէ յանուն իմ,  
տացէ ձեզ : Յ. 1. 23 :
5. Ի նեղութե կարգացիր առ իս՝ և փրկեցի ըզ-  
րեզ, լուայ բեզ ի գաղտնութենէ մրկի .  
Ուշ. 3. 8 :

Գ. Արբոր ուղածնիս չենք ընդունիր նէ, նշան է, որ կամ չենք խնդրեր՝ աղօթք չենք ըներ, կամ ինչպէս որ պէտք է նէ, անանկ չենք խնդրեր, ու կամ մեր հոգւոյն վնասակար բաներ կըխնդրենք, Ա՛ճ ալ անոր համար չիտար<sup>1)</sup>:

### Օրինակ:

Ուրացող Յուլիանոսը պարսիկներուն դէմ պատերազմի գնաց նէ, հոն տեղէն սատանայ մը խաւրեց, որ երթայ իրեն արեւմուտքէն շուտով լուր (խապար) մը բերէ: Ան ատենը սբ Պոպղիոս ճգնաւորը աղօթքի կեցած ըլլալով սատանան հոն եկած ատենը՝ տեսաւ, որ սբին աղօթքը օդը կապած էր, տասը օր անշարժ մնաց հոն տեղը, յառաջ չիկրօցաւ երթալ, վնդի սբը սատանաներուն անցնելու թող չէր իտար կոր: Արբոր ճգնաւորը գիշեր ու ցորեկ աղօթքէ չիդադրեցաւ նէ, սատանան յուսահատեցաւ, պարապ ետ դարձաւ, ու իր պարապ դառնալուն պատճառը Յուլիանոսին պատմեց: Յուլիանոսը շատ բարկացաւ, բտաւ՝ որ պատերազմէ ետ դառնալու ատենը ան ճգնաւորէն աս բանիս

---

1. Խնդրէք և ոչ առնուք, վնդի չարաչար խրնդրէք. Յ՛՛: 7. 3:

վրէժը առնում պիտի, ու իրեք օր ետքը պատերազմի մէջը յուսահատուի մեռաւ: Սատանան աս բանս Յուլիանոսին պատմած ատենը՝ իշխաններէն մէկը լսած ըլլալով, անմիջապէս իր ամմէն բաները աղքատներուն բաժնեց, գնաց՝ ան ճգնաւորը գտաւ, աս բանը պատմեց, ու իրեն աշկերտ եղաւ. ճգնաւորներուն ամմէն կարգը կանոնը աղէկ սորվելէն ետքը շատ տարիներ ապրեցաւ, ու սրբութիով մեռաւ: Արտեսնէս աղօթքին զօրութիւն, որ օգը կապեց, սատանաներուն անցնելու թող չիտարվաւ, ու աշխարհական իշխանը սքերուն գասակից ըրաւ: Սէ Լէրոն. հարանց. Չ. Դեջը կըպարտէ:

Ե Ր Ր Ո Ր Դ Է Ա Ս Ա Ր

Հայր Բերին Չ.:

Կ. Ուր տեղաց կրօնանք սորվել Աստուծմէ խնդրելու բաները:

դ. Հայր մերէն, որ տէրունական աղօթք կըսվի:

Կ. Ինչո՞ւ հայր մերը տէրունական աղօթք կըսվի:

դ. Ա զգի անիկայ մեր Տէրը Վն սորվըցուց, անոր համար ալ ամմէն աղօթքներէն գերազանց է:

հ. Հայր մերը գիտե՛ս :

ող. Գիտեմ, վնդի ամմէն քրիստոնեայ պարտըկան է գիտնալու, և շատ անգամ ըսելու :

հ. Բսէ նայիմ :

ող. Հայր մեր, որ յերկինս ես, 1. սքեղիցի անունն քո. 2. եկեսցէ արքայութի քո. 3. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի : 4. Օհայ մեր հանապազորդ տուր մեզ այսօր. 5. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողու՛ք մերոց պատասպանաց. 6. և մի տանիր զմեզ 'ի փորձութի. 7. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. զի քո է արքայութի և զօրութի և փառք յաւիտեանս. ամէն :

հ. Հայր մերը քանի՞ մաս ունի :

ող. Եօթը մաս ունի՝ մէկ յառաջաբանութի ու մէկ վերջաբանութի :

հ. Ինչո՞ւ դրած է աս յառաջաբանութիւր. Հայր մեր, որ յերկինս է :

ող. Յուցունելու համար, որ մենք իր որդիքը՝ ինչպէս մեծարանքով ու յուսով պէտք է, որ երթանք մեր երկնաւոր Հօրը՝ որ աշխրաքի հայրերէն անսահման մեծ ու բարի է :

հ. Ինչո՞ւ հայր կրկոչենք զՎ՛ճ :

ող. Անդի ինքը մեր ստեղծօղն է, ու իր մէկ հատիկ Արդին Յս՝ Բսին արդիւնքն երովը զմեզ իրեն որդեգիր ըրած է :



հ. Ինչո՞ւ հայր մեր կըսենք ու հայր իմ չենք ըսեր :

ա. Այ՛նչի Ա՛ճ մեր ամփնուն հայրն է, ու մենք պարտրկան ենք մէկզմէկ եղբօր պէս սիրելու, և մէկզմէկու համար ալ աղօթելու :

հ. Ինչո՞ւ կըսես՝ որ յէրփինս էս, որ Ա՛ճ ամփն տեղ է :

ա. Այ՛նչի գլխաւորաբար իր աթոռը երկինքն է, ու հոն երթալու թէ որ արժանի կըլանք նէ՛ զինքը երես երեսի պիտի տեսնենք, ու զինքը յաւիտեան պիտոր ժառանգենք :

Քանանացի կնոջ ու տնու Աննային  
պատմութիւնը :

Քանանացի կին մը աղօղակելով Քսի ետեէն կերթար ու կըսէր՝ Տէր ողորմէ՛ ինձի, մնչի սատանան իմ աղջիկս չարաչար կըտանջէ կոր, Քս չըլտելէն գալով իրեն պատասխան չիտրվաւ : Անիկը չիյուսահատեցաւ, Քսի ալ աւելի մօտեցաւ, ու երկրպագութի՛ ընելով իր աղաչանքը կրկնեց : Քս իր խոնարհութիւնը փորձելով ըսաւ՝ որ Տղոց հացը առնուլ ու շներուն առջևը նետելը աղէկ բան չէ : Խոնարհ քանանացին՝ Հրամներես Տէր, ըսաւ, շներն ալ իրենց տիրոջը սեղանէն

ինկած փշրանքներով կրկնատացրնեն իրենց փորը : Այլ կին դու՛ ըսաւ ան՝ ատենը Վս, քու հաւատքդ մեծ է, քու հաւատքիդ զօրութիւնը խնդրածդ կատարվի, ու նոյն բոպէին մէջը աղջիկը բժշկեցաւ : Հոս տեղս կերևնայ աղօթքի մէջ պահանջոված խոնարհութիւն, յարգութիւն, հաւատքը, համբերութիւն ու ամմէն կերպը : Սոփի. Ժէ : Ես բաներս կերևնան Եղկանային կինը Եննային աղօթքին մէջն ալ, որ ամուլ (խրսը) էր՝ ու իր ընկերը Փեննանա զաւակ չունենալուն համար զինքը կրնախատէր : Եննա ցաւած սրտով տաճարը գնաց, ու անանկ հառաչելով ու լալով Եյ աղաչեց, որ Հեղի քահանայապետը տեսնելով զինքը՝ գինով կարծեց, ու յանդիմանեց : Արուն պատասխան տրվաւ Եննա, որ Ես քու աղախինդ գինի կամ ուրիշ գինովցրնելու բան չեմ խմած, եկեր եմ մինակ իմ վիշտերս Եյ առջևը գնելու համար : Են ատենը Հեղին ըսաւ. գնա աղջիկս խաղաղութիւնով, Եժ քու ուխտդ ընդունէ : Իրաւցրնէ ընդունեցաւ, վսղի Եժ աղաչանքին լսեց, ան տարին յղացաւ, ու Սամուէլ մարգարէն ծնաւ, որ աղօթքի զաւակ կրնայ ըսվիլ : \* . թագա . \* :

Խրատ արժեքի կերպին վրա :

ա . Ի՞նչպէս կը համարձակիս Լ<sup>ս</sup>տուծմէ շնորհք ուզելու սիրտդ իրեն չի դարձուցած , ու մեղքերուդ մէջը յամառ կեցած , վսզի Լ<sup>ծ</sup> ալ քեզմէ կուզէ , որ մեղքերէդ ետ կենաս , անոնց վրա բոլոր սրբտէն զղջաս , ու իրեն դառնաս <sup>1)</sup> : Լ<sup>ռա</sup>քինութի կուզես Լ<sup>ս</sup>տուծմէ՝ ու մոլութի ներուն յաղթութի , բայց անանկ կուզես , որ քեզի ամենեին , աշխատութի ու նեղութի չիտան , շատ անգամ դուն ալ գործքով չես ուզեր , որ խնդրածներդ վրադ կատարվին :

բ . Մարմնաւոր առողջութի ու անցաւոր բարիքներ կուզես , որ անոնք շատ անգամ հողւոյդ վնասակար են , անոր համար Լ<sup>ծ</sup> ալ չիտար . Լ<sup>յ</sup> հաճելի ու քու փրկութեդ օգտակար բարիքներ ուզէ , որ Լ<sup>ծ</sup> ալ տայ քեզի <sup>2)</sup> . վսզի ասոնք են ճշմարիտ բարիքներ , որ կըրնանք Յսի անունովը խնդրել :

գ . Կաղօթես՝ բայց առանց խոնարհութե : Ի՞նչ կըսէիր , թէ որ աղքատ մը

1. Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս , և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն . Ս<sup>ար</sup> . Բ . Գ . 8 :

2. Խնդրեցէք նախ զարքայութիւն Լ<sup>ս</sup>տուծոյ և զարդարութի նր . Ս<sup>ար</sup> . Գ . Զ . 33 :

քու առջևդ անանկ լըբութիով երևնար ,  
ինչպէս որ դուն ԱՅ առջևը կերևնաս  
կոր<sup>1)</sup> : Աղօթքի կրկենաս ինքը զինքդ չի-  
ժողված , ու չիպատրաստած , ի՞նչպէս  
կուզես , որ Ա՛ճ քեզի լսէ , երբոր դուն  
քեզի միտ չես դներ : Առանց կենդանի  
յուսոյ կաղօթես , անոր համար ալ ու-  
ղածդ չես կրնար ընդունել , վնդի յոյսը  
աղօթքին հողին է<sup>2)</sup> : Աղօթքի մէջը շա-  
րունակութի չունիս , որն որ Ա՛ճ քեզմէ  
կուզէ , ու մեծ վարձքերու արժանի է .  
ու շատ անգամ ալ Ա՛ճ խնդրածներդ 'ա-  
նոր համար կուշացունէ , որ առած ատենդ  
անոնց յարգութիը ճանչնաս :

### ( ) Երևակ :

Ա եներիստա կոյսը Անգղիա ծնաւ , ու  
իր բարեպաշտ ծնողքը զինքը Պեննոս ա-  
նունով բարի քահանայի մը կրթութիը  
հաւտացին : Ասիկայ տարիքով մեծցաւ՝  
ինքը զինքը ճանչցաւ նէ՛ աշխրբէ ու աշխր-  
բի բաներէն զըզլելով՝ ծնողացը գիտու-  
թիով ուխտ ըրաւ կուսութիով՝ աշխրբէ  
քաշված՝ բարի վարքով ԱՅ ծառայելու :

1. Աղօթք խոնարհեցուցանողի զինքն՝ զամպս  
խուզէ . Ա՛ճ . 1 . 21 :

2. Որ երկմիտն է . . . . մի ակնկալցի մարդն այն  
աւնուլ ինչ ՂԱստուծոյ . Է . 6 . 7 :

Թագաւորին տղան Քատոքոսը կուզէր  
 ասիկայ կին առնուլ, գիտէր ալ որ նրա աղ-  
 ջիկը Մ. յ կուսուժի ուխտած էր: Աս բա-  
 նիս համար շատ ետեւէն իյնալէն վերջը,  
 որ մը ծնօղքը ժամ գացած ըլլալով տունը  
 ինքը մինակ գտնուած ատենը՝ զինքը կո-  
 խեց. բայց Ա. կենեփրիտան պատճառաւ մը  
 տնէն փախաւ նէ, շատ բարկացաւ, սու-  
 ըրը քաշեց՝ ժամին մօտերը ետեւէն հասաւ,  
 ու ըսաւ իրեն, կամ խօսք կուտաս ինձի, կամ  
 զքեզ կըմեռցունեմ: Ար աղջիկը Աստու-  
 ծով զօրացած՝ իրեն պատասխան տրվաւ,  
 որ Աս երկնաւոր Թագաւորին հարսն եմ,  
 իմ սէրս իրեն ընծայած եմ, ուրիշին  
 չեմ կըրնար տալ, իմ մտածմունքս ու  
 խօսքս աս է, ինչ որ կուզես նէ՝ ըրէ:  
 Քատոքոսը ալ աւելի բարկացած՝ զարկաւ  
 սուրը և աղջկան գլուխը կտրեց: Ար վար-  
 պետը Պեննոս քահանան աս բանս լսելով  
 առանց վախնալու եկեղեցիէն դուրս վա-  
 զեց, կտրված գլուխը ձեռքը առաւ, ա-  
 րունները վազելով մեռցունողին ցուցուց,  
 ու ըսաւ. Չարագործ մարդ՝ աս բանս ին-  
 չու ըրիր, նայէ ու վախցիր, ես տկար  
 եմ, քեզի դէմ բան չեմ կըրնար ընել,  
 բայց երկինքը կըհրաւիրեմ, որ կարօղ է  
 զքեզ դատելու: Աս խօսքերը լմնցա-  
 ծին պէս Քատոքոսը գետինը ինկաւ, ու



մեռաւ : Քահանան արունոտ գլուխը պագաւ, տարաւ տեղն 'ի տեղ մարմնոյն վրա մօտեցուց, ու ժողոված բազմութե հոգևոր խրատներ տրվաւ, ու աղաչեց իրենց, որ ջերմեռանդութիով Ա՛յ աղօթքի կենան, որ պարկեշտ ու կտրիճ աղջրկան կեանքը նորէն պարգևէ : Երբ ժողովուրդը բոլոր ծունկ չոքած՝ ու աղօթքը բրած ատենը աղջիկը կենդանացաւ՝ ոտք ելաւ, ու ամմէնը զարմացան, մինակ ան կրտորված տեղը կլոր գիծ մը մնացած էր, որ բոլոր կենացը մէջը մնաց՝ եղած հրաշքին նշանին համար : Սուրբնսը կրտորեալ էր հինգէ . հոգ . հոգ . հոգ :

Չ Ո Ր Ր Ո Ր Դ . Հ Ե Ս Ե Ր

Հայր Տրին ասը՝ Երկրորդ ու Երրորդ  
խնդիրներուն զեռ :

հ. Ինչ կրխնդրենք աս խօսքով . « Է  
Եղեցի անունիս » :

պ. Կրխնդրենք, որ ամմէն մարդիկները  
Ա՛յ անունը ճանչնան, փառաւորեն ու  
իրեն ծառայեն :

հ. Ինչո՞ւ ասիկայ ամմէն բանէն առաջ  
կուղենք :

պ. Ա՛յ զի մենք Ա՛յ որդիքները ըլլալնուս  
համար ամմէն բանէն աւելի պիտոր բաղ-

ձանք, որ մեր Մ<sup>ճ</sup>ը ու ամմէնէն սիրելի  
հարը ամմէն մարդ գովէ, ու իրեն ծա-  
ռայէ :

հ. Ի՞նչ կրնեն անոնք, որ իրենց մեղքե-  
րով ու գայթաղուածիներովը զՄ<sup>ճ</sup> կա-  
նարգեն :

դ. Մ<sup>ս</sup> աղօթքով իրենք զիրենք կը դա-  
տապարտեն . վսզի իրենց բերնէն ելած  
խօսքին գործքով ներհակը կը գործեն :

հ. Մ<sup>ս</sup> խօսքով ի՞նչ կուզենք ըսել, Ե-  
լէսցէ արքայու-լի թ :

դ. Արխնդրենք, որ Մ<sup>ճ</sup> մեղքին ու սա-  
տանային թագաւորութիւնը քանդէ, ու  
վերցունէ . իր սք եկեղեցին ու շնորհք-  
ներուն թագաւորութիւնը հաստատէ ու տա-  
րածէ . իր շնորհքներովը մեր սրտին վրա  
թագաւորէ, ու մեզի արքայութե՛ն մէջը ի-  
րեն հետ շուտով թագաւորել տայ :

հ. Մ<sup>ս</sup> խնդիրքով ի՞նչ կուզենք, Եղեցի՞ն  
կամ թ որդէս յերկինս եւ յերկրի :

դ. Արխնդրենք նախ՝ որ Մ<sup>ճ</sup> իր շնորհ-  
քովը աս աշխարհքը մեզի ամմէն բանի  
մէջը իր սք կամքը անանկ կատարել տայ,  
ինտոր որ երկինքը հրեշտակները ու սքե-  
րը կը կատարեն . երկրորդ՝ մեր վրայէն  
վերցունէ ան բաները, որ իր անձային  
կամքը կատարելու մեզի արգելք կը լան :

հ. Այ կամքը մինակ հրամայված բաներու մէջ պարտրկան ենք կատարելու :

դ. Չէ, պարտրկան ենք մեր կամքն ալ Այ սբ կամացը համաձայնելու, ու բոլոր Այ խրկած դժբաղդութիւները համբերութիւն քաշելու :

Սառնալին անհնազանդութիւն պատճառով :

Երբոր Սամուէլ մարգարէն Սաւուղը Խորայէլի աղգին վրա թագաւոր օծեց նէ, իրեն Այ կողմանէ հրամայեց, որ երթայ ամաղէկացիները բոլոր կոտորէ ու ջնջէ, որոնք որ Այ ժողովուրդին թշնամիներն էին, ու մասնաւոր ապսպրեց իրեն, որ անոնց բաներէն ամենեին բան մը ողջ չի-  
թողու և չառնու : Սաւուղ ասոր ներհակը իրենց թագաւորը Ագագը կենդանի թողուց, ու բոլոր աղէկ ու սուղ բաները չիկոտորեց՝ չիջարդեց, Այ հրամանին դէմ ըրաւ. ու իր անհնազանդութիւնը համար Սամուէլ մարգարէն զինքը յանդիմանած ատենը՝ ինքը զինքը ջատագովելու համար ըսաւ, որ Աղէկ կենդանիները Այ զոհ ընելու համար պահած եմ : Հնազանդութիւն ընտիր զոհ մատուցանելէն աւելի Այ ընդունելի է՝ ըսաւ իրեն Սամուէլը, դուն որ Այ հրամանը անարգեցիր նէ, Ա՛ճ ալ զքեզ անարգեց, ու

քու տեղդ քեզմէ ւաղէկ մէկը ընտրեց, որ իր ամմէն կամքերը կատարէ : Ասիկայ Ղաւթիմ մարգարէն էր, որ Աճ Սամուէլին հրամայեց երթալու՝ զինքը Խորայէլ վրա թագաւոր օծելու Սաւուղին տեղը : Ան ատենը երկուքին սրտերուն տարբերութիւն աղէկ տեսնուցաւ, մէկինը աւելի ապստամբ՝ ու մէկալինը աւելի խոնարհ ու հնազանդ : Սաւուղ Այ ընտրութիւնը դէմ ձեռք երկնցուց, ու իր բոլոր զօրութիւնը կաշխատէր զՂաւթիմ մեռցունելու : Ղաւթիմ անոր ներհակը ինքը զինքը Այ յանձնած՝ անոր նախախնամութիւնը կրօնապատէր : Սաւուղին կեանքը շատ անգամ Ղաւթիմին ձեռքը անցաւ, ու չիմեռցուց զինքը . մինակ մէկ անգամ մը Սաւուղին հագած վերարկուին ծայրը կրտրեց, ուրիշ անգամ մ՝ ալ անոր տէգը (մը զրախը) ու ջուր խմելու ամանը առաւ, որ քնացած ատենը գլխուն վերեւն էր : Ա երջապէս Ղաւթիմին բարեսրտութիւնը անչափ եղաւ, որ լացաւ Սաւուղին, ու անոր որդին Յերուսթէին մահուանը վրա, որ երկուքն ալ իրեն թշնամիներն էին, ու զինքը մեռցունելու համար ետեւէն ինկած էին, ու զիրենք մեռցունողները մեռցուց, ու չուզեց իրեն պատրաստուիլ աթոռը նստիլ, ինչպէս որ Աճ եր կամքովը՝ չընտրեցուց

զինքը : ա . թափա . ժե . ժլ . իե . ք .  
թափա . ա . դ .

Խօսար Տէր Կամփը Այ Ե՛ք Կամփին Համայն-  
նելու լըա :

ա . Քն խօսքով ու օրինակաւ ամմէն  
բանէն աւելի աս առաքինութիւնը սորվը-  
ցուց <sup>1)</sup> : Օ՛րձ փառաւորելու Համար ամ-  
մէնէն աղէկ միջոցը աս է , որ մեք զինքը  
ուրիշ բանով փառաւորել չենք կրնար ,  
մինակ ան բաներով կրնանք փառաւո-  
րել , որ իր սք կամփին Համայնն են : Ար  
անով զմեզ ալ կըսրբենք , մնզի մեր կամ-  
քը անային սք կամփին որչափ աւելի կը-  
Համայնի , անչափ աւելի սք ու կատա-  
րեալ կըլայ <sup>2)</sup> . մնզի աւելի արդունաւոր  
ու դժար զո՛հը մեր կամքը զո՛հն է :

Բ . Խօսքով շատ անգամ կրսենք՝ Այ  
կամքը ըլայ . բայց պատահած նեղութի-  
ներուն և դժբաղդութիներուն մէջ Այ կա-  
մացը քիչ անգամ կըՀամայնինք՝ Ա՛ծ  
ասանկ կուղէ կո՛ւ ըսելով , գլխաւորաբար  
ան բաներուն մէջը , որոնք որ մեզի ուրիշ-  
ներուն չարութիւնովը կըպատահին , կար-

1. Հայր իմ . . . . ոչ որպէս ես կամիմ , այլ  
որպէս դու . Մարտի . իլ . 39 :

2. Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնու-  
րիկ՝ որ առաքեացն զիս . Յովն . 7 . 34 :



ծելով, որ անոնք ան բաները առանց ԱՅ կամացը կըրնան ընել մեղի. Աճ անոնց չարութեւնը թողլ կուտայ մեր մեղքերը ու անկատարութիւնները պատժելու կամ մեր առաքինութիւնները փորձելու համար<sup>1)</sup> :

Գ. Անհամբերութիւն, տրտունջը, սիրտ կոտորւիլը ու զանցառութիւնը աս առաքինութեւններ հակ են. աս խնդիրքին միտքը՝ էղէցին իմէ՛ք, որ ԱՅ խրրկած բաները համբերութիւնով քաշել՝ ու անոր հրամայած բաները արիութիւնով կատարելն է<sup>2)</sup> : ԱՍ առաքինութեւն պտուղը խաղաղութիւն է, որ յաւիտենական երանութեւն սկիզբն ու ճաշակն (չէշնին) է :

### ( ) ր ն ա ի :

Հոնաց բարբարոս թագաւորը Ատտիլա շատ զօրքով Վաղղիա (Վրանսա) գնաց, բոլոր ան գաւառները հրով ու սրով աւրեց՝ ապականեց. թառօս քաղաքը մօտեցաւ նէ, սիւ Ղուպոս ան քաղաքին եպիսկոպոսը մտմը տալով, որ քաղաքը ասանկ զօրաւոր թշնամիին ձեռքէն

1. Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամ որդի, զոր բնդունի. Աճ. 47. 6 :
2. Աչ ամ որ ասիցէ ցիս Տէր Տէր, մոցէ յարքայութի երկնից. այլ որ առնիցէ զկամս Հօր իմոյ. Աճ. 21 :

աղատելու մարդկային ճար մը չիկար ,  
ջերմեռանդ աղօթքով՝ խիստ ճգնութի-  
ներով ու պահքով Մ.Յ դարձաւ , ու իր  
ժողովուրդն ալ յորդորեց անանկ ընե-  
լու : Ատքը իր քահանաները ու իր ժո-  
ղովուրդէն ալ շատ մարդ հետը առաւ ,  
Թագաւորին դէմը գնաց , ու համարձա-  
կութիով մը ըսաւ իրեն , (Մի կս դուն , որ  
ասչափ անիրաւութիով ու անգթութիով  
քաղաքները ու գաւառները կաւրես կոր  
բոլոր Թագաւորութիւնները քու իշխանու-  
թեդ տակը ձգելու համար՝ զիրենք բռնա-  
դատելով արուններով կըլեցունես , ու  
մոխիր կըդարձունես կոր : Մտտիլան պա-  
տասխան տրվաւ . Աս շոնաց Թագա-  
ւորը Մտտիլան՝ ու Մ.Յ պատիժն եմ : Մտ  
ուրիշ բան է ըսաւ սք եպիսկոպոսը , թէ  
որ դուն Մ.Յ պատիժն ես նէ՝ քեզի ո՞վ  
կըրնայ դէմ դնել , ողջուն կուտամ քեզի  
Մ.Յ պատիժը , քու զօրութիդ մեր վրա ալ  
գործածէ զմեզ ալ հալածէ չարչարէ որ-  
չափ որ Մ.ճ քեզի թոյլ կուտայ նէ . աս  
ըսաւ եպիսկոպոսը քաղքին դռները բա-  
նալ տրվաւ , ու Թագաւորը զօրքովը ներս  
հրամցուց : Մեր է ան բարբարոս Թագա-  
ւորը , Մ.ճ իր սիրար անանկ կակղցուց , որ  
ան քաղքին ամենեւին անիրաւութի ու  
բարբարոսութի մը չըրաւ , քաղքըցինն-

րուն շատ անուշուժի ու սէր ցուցուց ու իրենց քաղաքը անվնաս թող տրված՝ երթալու ատենը սքե եպիսկոպոսին աղաչեց, որ ինչպէս Հրենոս գետը իրեն ընկերանայ: Սք Լուսինն շարինն Տեղե:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Հ Ա Ս Ե Ր :

Հայր Տեղին շարարտ ու հինգերորդ խորհրդի խորհրդին շար:

հ. Ինչ կրխնդրենք պէտք Տեղ հանապազորտ ուստի Տեղ այսօր ըսելով:

պ. Սերի պէտք եղած հողերու ու մարմնաւոր օգնութիւները կրխնդրենք Մատուծմէ, որ ամմէն բարիքներուն աղբիւրն է:

հ. Որ հողերու բարիքները կրխնդրենք:

պ. Իր սք շնորհքները, անասին խօսքը, խորհուրդները ու մասնաւորապէս ամենասք հաղորդութիւր:

հ. Որ մարմնաւոր օգնութիւնները կրխնդրենք:

պ. Սեր կերակուրը, զգեստը ու մարմնաւոր կեանքերնուս պահպանութեւր պէտք եղած բաները:

հ. Մանկ է նէ երկրի բարիքներ ալ կրխնայնք ուղել Մատուծմէ:

պ. Հրամմերես, բաւական է, որ մեր հողերուն փրկութիւր միշտ վեր դասենք, որ ուրիշ ամմէն բաներէն գերազանց է:

հ. Ինչո՞ւ մինակ հացը կը յիշէ, և ուրիշ կերակուրները չի յիշեր :

ա. Այ՛ղի պէտքը չէ, որ Մստուծմէ փափուկ ու աւելորդ բաներ խնդրենք, մինակ հարկաւոր բաներով գոհ պիտոր ըլլանք :

հ. Ինչո՞ւ Կուսակցութիւնը կը խոստանայ :

ա. Մամէն օր աղօթելու մեր կարօտութիւնը ցուցունելու համար՝ ապագային համար ալ մեր յոյսը ՄՅ վրա դնելով՝ որ մեր հայրն է :

հ. ՄՏ ասով արգելած է զապագան հոգալը. կամ կըրցած ատեննիս ապագային համար բան պահելը :

ա. Չէ, մինակ մեծ հոգով ու իր նախախնամութիւնը չապաւինելով մտմըտալը արգելած է :

հ. Ի՞նչ ըսել է՝ Լուսնի Կուսակցութիւնը :

ա. Ըսել է, որ պէտքը չէ մարդ զինքը անմեղ կարծել, ամմէնքնիս ալ ինչվան մահերնիս ատենը ՄՅ ողորմութիւն խնդրելու պարտական ենք :

հ. Ինչո՞ւ կը խոստանայ, որպէս ինչ Լուսնի Կուսակցութիւնը :

ա. Այ՛ղի ՄՏ կերպիւ մը խոստացած է թողութի տալու անոնց, որոնք որ իրենց թշնամիներուն թողութի կուտան, ու պարապ տեղը թողութի կուզենք, թէ որ մենք ալ ուրիշներունը չենք թողուր նէ :

Ա՞՞ Սոբիւննոսին պատմութիւնը :

Ա՞ Ստեփաննոսը հաւատքով ու Հոգին սքնով լեցւած էր, առաքեալները զինքը առջի սարկաւագ ըրին, ու եկեղեցական ինչերը բաժնելու համար զինքը վերակացու դրին : Ա՞ իրեն զօրութի պարգեւած էր հրաշքներ գործելու՝ ու Յի անունը անանկ շնորհքով և ուժով քարոզելու, որ հրեաները իր խօսքերուն ազդուութեւ չէին կրնար դէմ դնել : Ա՞ պատմք հրեաները իրեն դէմ սուտ վկաներ բերին, որ կըսէին, թէ Ստեփաննոսը Սոփիստի օրէնքներուն, ու տաճարին դէմ հայհոյած ըլլայ : Օտերագոյններու և դատաւորներու ժողով կանչեցին զինքը, որոնց մէջը հրեշտակի կերպարանքով ու երեսով երեցաւ : Ար իրենց յամառութիւր ու Հոգի սքնին դէմ կենալին երեսնին զարկաւ, ու յանդիմանեց զիրենք . հրեաներուն չար ժողովը Ստեփաննոսին խօսածներուն դէմ պատասխան չիկրնալով տալ, նախանձով ու բարկութիւով լեցված՝ իրեն դէմ ահռանին կրկրծտէին կոր : Ա՞ն բոպէին մէջը Ստեփաննոսին աչքին երկինքը բացվեցաւ, ու ինքը կանչեց, Ա՞ հա երկինքը բացվեցաւ, ու զՔս Հօրը աջ դին նստած կրտեսնեմ՝ կոր : Հրեաները ահանջնին դո-



ցեցին, ամուր ձաներով պոռացին, զինքը  
քաղքէն դուրս քաշկրտեցին, հոն տեղը  
հանվեցան, ու բոլոր զգեստնին Սաւուղ  
անունով երիտասարդի մը քովը դրած՝  
զինքը քարկոծեցին. որ բարձր ձանով  
ըսաւ. Տէր՝ Յս ընկալ իմ հոգիս, ծունկ  
չդքեցաւ, ու Մ.Յ աղօթք ըրաւ զինքը  
մեռցունողներուն համար՝ ըսելով. Տէր՝  
թողու՛թի՛ ըրէ ասոնց, ու աս բանս իրենց  
մեղք մի սեպեր, ու հոգին աւանդեց: Իր  
աղօթքը Սաւուղին վրա ընդունելի եղաւ,  
որ եկեղեցւոյ հալածիչ էր, սք Ստեփան-  
նոսին աղօթքովը Վ.նի առաքեալ, ու սք  
հաւատքին քարողիչ եղաւ: Գ.դ. Է:

Խրատ Բեկ Գեմ Էղած անիրատու լինելու  
Լողուլի Կալուն զրո:

«. Մս պատւիրանը կատարելու համար  
պէտք է՝ որ մեր չափէն աւելի առնրվիլը  
յաղթենք: Մսիկայ մեր սրտին խաղաղու-  
թներ շատ կրվնասէ, որ շատ անգամ խօս-  
քէ մը, երևութէ մը ու ոչընչէ մը կը-  
խոսովի: Մսով կըցուցունենք, որ մեր  
կիրքերը մեռցուցած չենք, ու հպարտ ենք  
որ ասանկ ոչընչէ մը կառնրվինք կոր: Մս  
առնրվիլը շատ անգամ հիմ ալ չունի.  
վնգի շատ անգամ մեր երևակայութէն  
իզատ ուրիշ նիւթ մը չիկայ:

Բ. Թէ որ իրաւ անիրաւութի ալ եղած ըլլայ նէ, ընողին պէտք է թողութի տալ՝ որչափ մեծ ալ է նէ<sup>1)</sup>. Թողութի ընելով թէ որ նոր անիրաւութիներ ալ պիտի պատահի, ու մարդիկները մեր վրա պիտի խնտան ալ նէ, թող անոնք խընտան, մենք մեր պարտքը կատարենք, ու Քսի պատւիրանը պահենք<sup>2)</sup>: Ա սղի մեր մեղքերը մեղի եղած անիրաւութիներէն շատ մեծ են, ու մեր թողութի տալովը՝ Ա՛ճ ալ մեղի թողութի կըխոստանայ կոր, մենք միշտ աւելի կըվաստըկինք: Ա՛նք Ա՛յ բաղդատութիւնը անսահման սղտիկ ու ոչինչ ենք, ու զմեզ վշտացունողները մեղի հաւասար մարդիկներ են<sup>3)</sup>: Ա որ անիրաւութե ու նոր նախատինքի վտանգը մեր թողութիւր գերընական կընէ՝ մինակ Ա՛յ սիրուն համար թող տալով:

Գ. Թողութի տալը բաւական չէ, մեր թշնամիները՝ ու մեղի անիրաւութի ընողները սիրելու ալ պարտրկան ենք, վսղի մեր առաջնորդը՝ ու մեր գլուխը Քս անանկ

1. Նովին չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ. Դ. 38:
2. Արձակիցէք և արձակիցիք. Ա՛ր. 37:
3. Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ շայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր. Ա՛ր. 2. 15:

ըրաւ, ու անանկ պատուիրեց <sup>1)</sup> . որ խա-  
չին վրա զինքը խաչ հանողներուն համար  
աղօթեց <sup>2)</sup> . ու իր բարեկամութիւնը աս  
պատուիրանին կատարմանը հետ կապեց,  
ու իր բարկութիւնը ասոր զանցառութեւնը  
հետ :

### Օրինակ :

Աթ Սպիրիտոն Ապիսկոպոսը յառաջ  
ոչխարներու հովիւ ըլլալով, գիշեր մը  
իր ոչխարներուն ախոռին մէջը գողերը  
մտան, որ քանի մը ոչխար կուղէին գող-  
նալ . բայց իրենց գողութիւնը կատարած  
ատեննին ձեռվրնին ոտվրնին ԱՅ աներե-  
ւոյթ զօրութիւնը կապվեցան, ու հոն տե-  
ղը անշարժ մնացին : Աթ հովիւը առտը-  
ւանց ոչխարներուն գովը գնաց նէ, զի-  
րենք տեսաւ, ու պատճառը իմացաւ, որ  
ինչու հոն եկած էին : Յառաջ զիրենք  
աղէկ մը խրատելէն ետքը, որ իրենց ձե-  
ռաց աշխատանքովը ապրին, գողութի  
չընեն, որ ԱԾ չիվշտանայ . աղօթեց ԱՅ

1. ԱՅԼ ևս ասեմ ձեզ՝ սիրեցէք զթշնամիս ձեր . . . .  
բարի արարէք ատելեաց ձերոց . և աղօթս ա-  
րարէք ՚ի վերայ այնոցիկ՝ որ ըկեն զձեզ և հա-  
լածեն . Ս՝ադի . Ի . 44 :
2. Հայր թող գոցա զի ոչ գիտեն՝ զինչ գործեն .  
Ղ՝ադի . ԻԳ . 34 :

իրենց համար, իրենց կապը արձակեց, ու  
 ոչխարներուն մէջէն գէր ոչխար մը ընտրեց,  
 ու խնտալով իրենց տըվաւ, ըսելով, Ա-  
 ուէք ասիկայ, որ բոլոր գիշեր իմ ոչխար-  
 ներս պահպանեցիք, ձեր վարձքը ըլլայ,  
 ու աշխատանքնիդ պարապ չերթայ, և  
 ասանկ ուրախութիով ճամբեց զիրենք :  
 Հայր Աստուծոս Գողթն իւրապէս Բեթ-  
 շարէն Գլխ :

Յ. Ե Յ Ե Ր Ո Ր Դ. Հ. Ա. Ս. Ա. Ր

Հայր Գլխն Գողթն Գողթն Գողթն ու զԳողթ-  
 Գողթն-Գողթն զԳող :

Կ. Ինչ կըխնդրենք Աստուծմէ աս խօս-  
 քով, եւ մի Գողթն զԳող Գողթն-Գողթն :

Գ. () Գողթն կուզենք աշխարհի՝ մարմնոյ  
 ու սատանայի անդադար պատերազմներուն  
 ու փորձութիւններուն դէմ կենալու և յաղ-  
 թելու համար :

Կ. Անք աղօթեր, որ ասոնք չփորձեն  
 զմեզ :

Գ. Այ, վստի մեր փրկիչն ալ փորձըված  
 ըլլալով, թող կուտայ, որ մեր հաւա-  
 տարմութիւն փորձելու՝ ու զմեզ միշտ ար-  
 թուն պահելու համար մենք ալ փորձը-  
 վինք :

հ. Այս քի քրիստոսի ըսելով՝ փորձութեց հեղինակը Աճ չիմացվիր :

դ. Չէ, մինակ կիմացվի, որ Աճ փորձութիներու մեր վրա գալու թէպէտ թող կուտայ, բայց ան ալ մեր կարողութի աւելի երբէք թոյլ չիտար :

հ. Որոնք որ իրենց կարողութիւնը ապաւինելով հարկաւոր չեղած ատենը զիրենք փորձութե մէջ կը դնեն նէ, կըրնան աս աղօթքը ընել՝ հաւտալով, որ Աճ իրենց աղաչանացը կը լսէ :

դ. Չէ, ասոնք ասանկով իրենց յանդրգնութիւնը կը ցուցունեն, որ անով հասարակօրէն փորձութիներէն կը յաղթը վին :

հ. Այլ քրիստոսի ըսելով՝ որ չարէն կուզենք ազատիլ :

դ. Ամէն տեսակ հոգևոր ու մարմնաւոր չարերէն, որչափ որ մեր փրկութիւնը համար Աճ հարկաւոր կը դատէ նէ :

հ. Ինչո՞ւ տեսակը չորոշելով պարզապէս ՚ի չարէ կը ըսենք :

դ. Այնքան անոնք որ մեզի չար կերևնան նէ, շատ անգամ մեր փրկութիւնը օգտակար են, ինչպէս հիւանդութիւնը, աղքատութիւնը ու ասոնց նման բաները, անոր համար Աճ կաղաչենք, որ ինքը ան բաներէն փրկէ զմեզ, որոնք որ ինքը չար կը ճանչնայ :



Հ. Ի՞նչ կուզենք ըսել աս վերջարանու-  
թիով՝ զէ քո է արքայո՞ւնն եւ զօրո՞ւնն եւ  
ժողովո՞ւնն :

Կ. Արևոստոստութանք , որ արքայութիւն ,  
զօրութիւն ու յաւիտենական փառքը յա-  
տուկ քուկդ են՝ քեզմէ ունիս՝ ու ամենա-  
կարօղ ես , որուն ի՞նչ որ կուզես նէ՝ կըր-  
նաս տալ , անոր համար աս մեր ուզած  
բաները մեզի տուր :

Հ. Ի՞նչ ըսել է , աս վերջի աստիճան :

Կ. Ի՞նչ է , որ անանկ ըլլայ , ու բոլոր  
խնդրած բաները կը հաստատէ , անոր հա-  
մար ալ ամէն աղօթքներէն ետքը կը դրովի :

Վ. Ե՛ւ ժողովո՞ւնն եւ օրո՞ւնն :

Անր փրկիչը բոլոր մեր տկարութիւ-  
ները բեռնաւորված ըլլալով , անոնց համ-  
բերելը ու զանոնք վարձքի արժանի ընելը  
մեզի սորվեցունելու համար , ու ալ աւելի  
փորձութիւններուն յաղթելուն ճամբան մե-  
զի ցուցունելու համար՝ թող տրվաւ սա-  
տանայի իրեք մոլութիւններու վրա զինքը  
փորձելու , որոնց մէջը մարդիկները շատ  
անգամ կիյնան : Առջինը որկորի (պօղա-  
զի) փորձութիւն էր . թէ որ ԱՅ որդի  
ես՝ ըսաւ իրեն սատանան , ըսէ , որ աս  
քարերը հաց ըլլան : Վ. Ե՛ւ իրեն պատաս-  
խան տրվաւ , որ Անորդը մինակ հացով

չապրիր, հապա ՄՅ ամմէն խօսքերովը . որ աս խօսքով մեզի կըսորվեցընէ, թէ հոգւոյն կերակուրը մարմնոյ կերակուրէն աւելի մտածելու ենք : Փրկիչը՝ որ ատենօք սատանայի սպասաւորներուն թող պիտոր տար զինքը խաչ հանելու, ան ատենը թող տրվաւ սատանային զինքը տաճարին աշտարակին վրա տանելու, և հպարտութե՛ր վրա փորձելու . ըսելով, որ թէ որ ՄՅ որդի ես, զքեզ ասկէ վար նետէ . վնդի գրված է, որ ՄԾ քեզի համար իր հրեշտակներուն ապսպրած է, որ զքեզ ձեռքի վրա բռնեն, որ վնաս մը չըլլայ քեզի : Քն իրեն ըսաւ . ՄՍ ալ գրված է որ քու Տէր ՄԾԳ չիփորձես, մեզի սորվեցունելու համար, որ պարապ տեղը կըյուսայ ՄՅ օգնութե՛ր ով որ վտանգէն չիփախչիր : Սատանան զինքը բարձր լեռան մը վրա տարաւ, աշխրքի բոլոր թագաւորութի՛ները ու անոնց փառքերը ցուցուց իրեն, ու ըսաւ, ՄՍոնք բոլոր քեզի կուտամ, թէ որ ինձի երկրպագութի կրնես նէ : Յս բարկութիով վռնտեց զինքը՝ ըսելով . Մէկ դի գնա, սատանայ, գրված է, որ մինակ քու ՏՆ ՄԿ երկրպագութի ընես, ու մինակ անոր ծառայես . մեզի սորվեցունելու համար, որ ինչ տեսակ զօրութիով պարտրկան ենք ամ-

բարտաւանութիւր ու անցաւոր բարիքներուն բաղձանքը սանձելու, որոնք որ աշխարհքը իրեն երկրպագութիւն ողներուն կրխոստանայ, թէպէտ խոստացածներն ալ կարող չէ տալու: Ան ատենը սատանան շփոթեցաւ, զինքը թողուց. ու հրեշտակներ եկան ու ծառայեցին իրեն: Ա՛ճ ասանկ զմեզ փորձելէն ետքը կրմխիթարէ, որ անոնցմէ չըյաղթըվինք: Աստուծո՛ւ պ:

Խրատ Գործութիւններու վրա:

« Գործութիւն չիյնալուն դեղը մեր չափը գիտնալով մեզի չապաւինիլ ու առիթներէն փախչիլն է: Պարտք ու հարկաւոր չեղած տեղը ինքը զինքը յանդրդնութիւնով վտանգի մէջ դնելը, կամ փորձութիւն չիփախչիլը, ուրիշ բան չէ իր հոգւոյն փրկութիւն վտանգի մէջ դնել է<sup>1)</sup>» որ օրինաւոր չէ, զԱ՛ճ փորձել ու իրմէն հրաշք խնդրել է, Ա՛յ նախախնամութիւն կարգը ան է, որ ով որ ինքը զինքը փորձութիւն մէջ կրձգէ նէ, փորձութիւն մէջ կրկորսվի<sup>2)</sup>» վստի շնորհքը մինակ փորձութիւն փախչողներուն կրտրվի:

1. Ան որ որ ՚ի փորձութիւն իցէ, ասացէ՛ թէ յԱստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չարաց. Յս. 13:

2. Ար սիբէ զկորուստ, ՚ի նմին կորիցէ. Ա՛լ. 4. 27:

Ք. Փորձութիւններու յաղթելու ճարր :  
Երբոր փորձութիւն փախչելու ճար չիկայ  
նէ՛ պատերազմելով յաղթելու է : Ես  
պատերազմի զէնքերը Վն իր գործքերովը  
մեզի սորվըցուց : Ենապատը քաշվեցաւ,  
հոն տեղը աղօթեց, պահք պահեց, ծով  
կեցաւ <sup>1)</sup>, ու սք գիրքին խօսքերովը սա-  
տանան վնտեց : Եռանց աղօթելու,  
չնորհք չենք կրնար ընդունիլ, ու առանց  
չնորհքի մեր փրկութեը թշնամին չենք  
կրնար յաղթել, որ զմեզ փորձութե մէջ  
ձգելու համար գիշեր ու ցորեկ մեր ետևէն  
կրպտրտի <sup>2)</sup> : Սեր ասկէ ալ մեծ թշնա-  
մին մեր մարմինն է, անոր համար պէտք  
է զինքն ալ պահքով՝ ծովով, և ուրիշ  
ապաշխարանքներով տկարացունել, մեր  
զգայութիւններու դռներն ալ գոց պահելու  
ենք՝ պարկեշտութիւր ու ԵՅ վախը վրա-  
նին պահապան դնելով : Ետնցմէ ալ  
իզատ՝ քարոզ ու հոգևոր խօսքեր՝ որ  
անձային խօսք կրսվին մտիկ ընելը՝ հոգևոր  
գիրքեր կարգալը ու մտածական ընելը մեր  
թշնամիներուն յաղթելու համար մեզի  
չատ ուժ կուտան :

1. Ես ազգ ոչ ելանէ՛ եթէ ոչ պահք և աղօ-  
թիւք. Ստ. 20 :
2. Աստիւն ձեր սատանայ իբրև զառիժ գոչէ .  
չըջէ, և խնդրէ թէ զո՛ կլանիցէ. . . Պէր. է. 8 :

Գ. Ա՛ճ թող կուտայ փորձութիներու մեր վրա գալու՝ մեր տկարութիւր ու իր շնորհաց զօրութիւր մեզի ճանչցընելու համար, որ թէ որ իր ամենակարօղ ձեռքովը զմեզ բռնելու չըլլայ՝ բան մը չենք կրնար ընել, ու չարաչար կը յաղթըվինք: Ով որ փորձըված չէ նէ՛ ան ի՛նչ գիտէ<sup>1)</sup>: Բերդին աւելի ան կողմերը կը զօրացունեն, որ կողմերէն որ թշնամին աւելի կը պատերազմի: Չըփորձըված առաքիներութիւր մեծ բան չըսեպիւր: Արբեմն փորձութիներու մէջ իյնալով մեր տկարութիւր կը ճանչնանք, կը խոնարհինք ու խորհուրդներու և բարի կըթութիներու ձեռքովը Աստուծմէ նորէն ուժ կառնունք, և անկէ ետքը աւելի զգուշութիւով կը շարժինք. Ա՛ճ ալ արդէն մեր կարողութէ՛ աւելի փորձութի թող չհտար մեր վրա գալու, ու իր օգնութիւն ալ միշտ պատրաստ է<sup>2)</sup>:

( ) Ինչո՞ւ:

Այն փրանկիսկոսի կարգէն կրօնաւորի մը սատանան հաւատքի դէմ շատ փորձութիներ կը բերէր, որ սք եկեղեցւոյ

1. Որ ոչ է փորձեալ զի՞նչ գիտէ. Արդեւ. Գ. 9:

2. Ոչ արկեղ զձեզ ՚ի փորձութի առաւել քան ըզկարն ձեր . . . . սյլ արասցէ ընդ փորձութե և զելս զի համբերել կարասջիք. . . . Արդեւ. Ժ. 13:



ուղղափառ վարդապետներու սորվեցուցած բաները բոլոր սուտ են, սք հաւատքին ու կրօնին մէջը քաշածները բոլոր պարապ են, ստուգութի մը չիկայ, աշխարհք դարձիր, քիչ ատենվան կեանքդ աշխրբքի ու ազգականներու մէջ հանգիստ անցուր՝ ըսելով: Ատեղճ կրօնաւորը ասանկ անվայել ու վտանգաւոր փորձութիներու վրա շատ կըտրտմէր, ու ասոնցմէ ազատելու ճարը չիգտնալով կըցաւէր: Այս շատ պահքերով, ծոմերով, աչքի արցունքներով չէր կըրցած ազատիլ: Այս Վճածնայ շատ ջերմեռանդ ըլլալով՝ գնաց օր մը անոր պատկերին առջեւ ինկաւ, ու լալով ըսաւ. Այլ գթած ողորմած մայր՝ ես աս սք կրօնը ան բաղձանքով եկայ, որ աշխրբին հոգերէն ու փորձանքներէն ազատած՝ իմ տիրոջս Վսի ու քեզի աղէկ ծառայեմ: Վայց հիմայ հաւատքի դէմ ծանր փորձութիներով պաշարված՝ յուսահատածի պէս տրտմութե մէջ կապրիմ կոր. քեզի ալ շատ անգամ աղաչեցի ասանկ կարօտութե մէջ ինծի օգնութի հասնելու համար, բայց կըտեսնեմ կոր, որ զիս բոլոր թողեր ես, որ իմ տկարութիովս յաղթըլիմ, ու իմ մեղացս պատիժներուն համար դժոխքի յաւիտենական կրակը երթամ: Աղորմութեց մայրը

սք Մճածինը իրեն երեցաւ, ու զինքը մխիթարելով ըսաւ. Միրելի տղաս՝ իմ օրհնեալ Արդիս ալ ես ալ զքեզ երեսէ ձգած չենք. բայց մեծ պսակին համար փորձըվեցար, քու սք հաւատքիդ մէջը հաստատ կեցիր. վնդի ինչ որ անձային օրէնքը կըհրամայէ, սք եկեղեցին կառաջագրէ, և ուղղափառ վարդապետները կըսորվըցունենն նէ՝ ամմէնը ճշմարիտ են, ու աս ճշմարիտ և ստոյգ հաւատքէն դուրս փրկութի չիկայ: Բարի կրօնաւորը ասով կըմխիթարվի, ու փորձութէ ալ կըխալըսի: Մեհոբէտ (ժողով) ըսլա՞ծ իրօն. Ժամանակագր:

### ԵՕԹՆԵՐՈՐԻ ՀԼՄՆՐ

Հրէշտակային ողջոնատրութի ըսա:

Հ. Հայր մերէն ետքը ո՞ր աղօթքը պարտրկան ենք ընելու:

Պ. Ողջոյն քեզ Մարիամը, որ հրեշտակային ողջունատրութի կըսվի:

Հ. Ողջոյն քեզ Մարիամը ի՞նչ է:

Պ. Մղթք մի է ամենասք կոյս Մճածնայ՝ զինքը պատուելու և ՄՅ առջևը իր բարեխօսութիը խնդրելու համար:

Հ. Բսէ նայիմ ողջոյն քեզ Մարիամը:

դ. 1. Ողջոյն քեզ՝ Սարիամ, լի շնորհօք,  
Տէր ընդ քեզ . 2. օրհնեալ ես դու 'ի  
կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի  
քո Յս: 3. Սրբուհի Սարիամ մայր ԱՅ,  
աղօթեալ վս մեր մեղաւորացս այժմ և 'ի  
ժամու մահուան մերոյ . ամէն :

հ. Ո՞վ շարագրեց ողջոյն քեզ Սարիամը:  
դ. Գաբրիէլ հրեշտակապետը, սրբուհի  
Աղիսաբէթը ու սուրբ եկեղեցին շարա-  
գրեցին :

հ. Գաբրիէլ հրեշտակապետը ո՞ր մասը  
ու ո՞ր ժամանակ ըսաւ :

դ. Առջի մասը՝ ողջոյն խեղ Սարիամ՝ լի  
շնորհօք, Տէր ընդ խեղ մարտի քսանը-  
հինգերորդ օրը՝ անձամայրութե՛ր աւետիսը  
բերած ատենը ըսաւ, անոր համար ալ  
հրեշտակային ողջունատրութի՛ կըսվի,  
վսզի գլուխը հրեշտակապետին ողջունէն  
կըսկսի :

հ. Ո՞ր մասը սրբուհի Աղիսաբէթը ըսաւ :

դ. Արկրորդ մասը՝ օրհնեալ ես դու 'ի  
խնայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո  
(Յս)՝ Աճածինը իրեն այցելութե՛ր գնաց  
նէ՛ ըսաւ :

հ. Ո՞վ էր սրբուհի Աղիսաբէթը :

դ. Սք Աճածնայ աղգականը՝ ու սք Յով-  
հաննէս մկրտչին մարն էր :

հ. Ո՞վ էր սք Յովհաննէս մկրտիչը :

այ . Վրիստոսի կարապետը ու մկրտօղն էր , որ ծնանելէն յառաջ սկըզբնական մեղքէն սրբըվեցաւ այցելութե օրը , ու Վրիսաբէթին արգանդին մէջէն՝ սբ Մծածնայ արգանդը մարդ եղած Յսի երկրպագութի ըրաւ :

հ . Նկեղեցին ի՞նչ աւելցուց ողջոյն քեզ Սարիամին վրա :

այ . Յսի ու Սարիամին անունները աւելցուց , որ զօրութի կիմացվէին , որոնց վրա երրորդ մասը շարադրեց . «բէռահի Սաբիմի մայր Մ, աղօլեւա՛ վէ Ռեբ Ռեղաւորացոյն յոյժ եւ ՚ի Զամու մահուան Ռեբոյ . ա՛մէն :

### Վեբորային պատմութիւն :

Իսրայէլի ազգը իրենց մեղքերովը զՄծ բարկացուցին . Մ ալ զիրենք թող տըվաւ . Վանանու Յաբինայ թագաւորը խրկեց իր զօրապետը Սիսարան մէկ սոսկալի բանակով ու ինըհարուր երկրթէ կառքերով իրենց քաղաքները ու գեղերը ապականելու համար : Իսրայէլացիները իրենց ասանկ մեծ նեղութեը մէջ Մ զարձան , ու իր օգնութիւն խնդրեցին : Մ ալ իրենց Վեբորա անունով զօրաւոր կնկան մը ձեռքովը ուզեց օգնել : Մ սիկայ սբ ու մարգարէ կին մը ըլլալով ան ժամանակը իրենց մէջը դատաւորութի կընէր : Որ

Նարակը իրեն կանչեց, ու հրամայեց անոր, որ տասը հազար զօրք առնու՝ Սիսարային դէմ պատերազմ երթայ: Նարակը՝ թէ որ դուն ալ մէկ տեղ կուգաս նէ՛ կերթամ ըսաւ, չէ նէ չեմ կըրնար ասանկ քիչ զօրքով անանկ անթիւ բազմութե՛ դէմ պատերազմ երթալ: Ղեբորան՝ Կուգամ քեզի հետ ըսաւ, բայց ան ատենը յաղթութիւն քեզի չիսեպլիր, կնկան մը զօրութեւն կըսեպլի: Ղեբորան դնաց Նարակին հետ, որ իրեն սիրտ կուտար, ըսելով՝ որ ես չեմ քու առաջնորդդ Մօփէ: Ար թշնամիներուն վրա վախ մը ձգեց, ու ամմէնն ալ յաղթը վեցան՝ ջարդը վեցան. ու Սիսարա զօրապետը փախած ատենը Յայէլ անունով ուրիշ կին մը վրանին ցիցովը (խաղըխովը) գլխուն զարկաւ, ու գետինը գամեց՝ մեռցուց: Ընտաներ Ղեբորա ասանկ նշանաւոր յաղթութեւն շնորհակալութեւն համար Մօփ փառաւոր երգ մի երգեց: Ըսիկայ գեղեցիկ օրինակ մը էր օգնութեւն, որն որ պարտը կան ենք ամենասք կուսէն խնդրելու մեր պատերազմելու մէջը մեր փրկութեւն թշնամիներուն դէմ, ու միանգամայն երգին, որով սք կոյս Սարիամը երգեց Մօփ ըրած բարիքները իր ու Մօտուծմէ երկնչողներուն վրա: Ղարար: Գ:



Խորհար «Բ Ա՛ճածնայ լրատ :

« . Աբ կոյս Սարիամը Ա՛ստուծմէ ինչ որ ընկալաւ նէ՛ անպատմելի է<sup>1)</sup> . վնդի Ա՛ճ զինքը ՚ի յաւիտենից Վ՛սի մայրութե համար սահմանված էր , որ Սարգեղութե խորհուրդին գործակից՝ երկինքի թագուհի՛ բոլոր արարածներու մէջ Վ՛սի մարդկութէ ետքը ամմէնէն գերազանցը՝ ու բոլոր զինքը օգնութե կանչող մեղաւորներուն բարեխօս ու փաստաբան պիտոր ըլլար , անոր համար ալ զինքը ամմէնէն աւելի գերազանց շնորհքներով զարդարած է<sup>2)</sup> :

Բ . Աբ կոյս Սարիամը ինչ որ ըրաւ նէ , ուրիշներէն շատ վեր էր , ու անոնց ըրածներուն հետ բաղդատութի չունէր . Ա՛ճ սէրը բոլոր մարդիկներէն ու հրեշտակներէն աւելի ու կատարեալ ունէր , սիրոյ թագուհի էր . ընկերին սէրը՝ կենդանի հաւատքը՝ յոյսը շատ գերազանց էր . ողջախոհութիւնը խորհրդով բանիւ ու գործքով չափէն աւելի կը պատուէր<sup>3)</sup> . աղքատութե , հնազանդութե , համբերութե և

1. Արար ինձ մեծամեծս հզօրն . Ղ. 111 . 1 . 49 :

2. Սի՛ երկնչիր Սարիամ , զի գաներ շնորհս Ա՛ստուծոյ . Ղ. 111 . 1 . 30 :

3. Չխաբդ լինիցի ինձ սյգ . Ղ. 111 . 1 . 34 :

աղօթքի մէջ անանկ կրթութիւն ունէր, որ աշխրբի մէջը իրեն նմանը չեղաւ. ասոնց ամմէնուն մէջն ալ ծայրագոյն խոնարհութիւն ունէր<sup>1)</sup>. վերջապէս ամմէն առաքինութիւնները անանկ կատարեալ ունէր, որ բոլոր կենացը մէջ անոնց մէկին դէմ ներելի պակսութիւն մ' ալ չըրաւ:

Գ. Աթ կոյս Սարիամին վաստրկած վարձերն ալ մարդկային մտքէ դուրս՝ ու անպատմելի փառքեր էին<sup>2)</sup>: Մ. թիւնն ու իր միածին Արդւոյն մարդկութէն ետքը սթ Մ. թիւնայ առաքինութիւնները ու մեծութիւնը դրաւ մեր առջևը՝ հետեւելու և պատուելու համար: Աթ կուսին Մ. ստուծմէ ընդունած շնորհքներուն առատութեւնը վրա զարմանալու ենք. անոր գործած անպատմելի առաքինութիւնները մեզի օրինակ ընելով անոնց հետեւելու ենք. ու իր հասած փառքերուն բարձրութեւնը համար զինքը պատուելու ենք:

### Օրինակ:

Արբուհի Աելդրուտան ծանր հիւանդութիւնով մը պառկած ատենը՝ հիւանդութեւն շատ ծանրութեւն իր աղօթքներուն մէկ

1. Օ. ի հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. Ղ. 1. 38:

2. Արանհսցեն ինձ ամ ազգք. Ղ. 1. 48:

մասն ալ չի կրնալով ընել՝ հրեշտակային ողջունին մինակ առջի բառերը շատ անգամ կրկրկնէր, ըսելով. ողջոյն չեւ Սաբիտ, ողջոյն չեւ Սաբիտ. վսղի աս ալ զօթքն ալ բոլոր ըսելու շունչը չէր հասնէր : Այն անձաժինը գեղեցիկ ծաղիկներով բանած զգեստով մը երևցաւ իրեն, ու ըսաւ. քանի անգամ որ քու ծանր հիւանդութեդ մէջ կը ջանայիր հրեշտակային ողջունին առջի բառերը ըսել՝ անչափ աւելի նոր նոր ծաղիկներ ու զարդեր աւելցուցիր իմ փառքերուս վրա, որոնք որ արքայութե մէջ ունիմ : Այն կէտքոստային վարդուցը մէջ իւրապէս :

ՈՒԹԵՐՈՐԴ ԷՆՍԵՐ

Շրէշտակային ողջոստային Տէրու Տէր :

հ. Ինչո՞ւ ամենասք կոյսը լէ շնորհօք կը սպի :

պ. Այն սք անձաժինը բոլոր կենացը մէջ Այն շնորհաց ու բարեկամութեք մէջն էր, գերազանց առաքինութիւններով զարդարված էր, ու ինչպէս մահուան ատենը ներելի մեղք մ' ալ չունեցաւ :

հ. Այն գիւրքը ուրիշ սքերու համար ալ լէ շնորհօք չըսեր, ինչպէս սք Ստեփաննոսի և ուրիշներու համար :

դ. Հրամմերես, ուրիշ սքերն ալ շնորհքով լեցուն էին իրենց ընդունակութիւնը չափ. բայց ամենասք կոյսը Մ. Յ մայրութե պատուոյ ու մեծութե համար սահմանած ըլլալով աւելի շնորհք ընդունելու կարող եղաւ, ու ամմէնէն աւելի ալ ընդունեցաւ:

հ. Այն Մ. ճաճնայ Մ. ննայէ յղութիւնը անարատ էր, այսինքն առանց սկզբնական մեղքի:

դ. Այն եկեղեցին բարեպաշտութիւն անարատ յղութե տօնը կրկատարէ, բայց իբրև հաւատքի մաս դեռ չիսահմանեց:

հ. Ինչ ըսել է՝ Տէր ընդ թեղ:

դ. Ըսել է, որ Մ. ճ սք կուսին սիրտը ու բաղձանքները բոլոր իրեն քաշած էր, ու զինքը տարբեր եղանակաւ իր ամենակարող պաշտպանութիւնը տակ առած էր:

հ. Ինչո՞ւ կըսես՝ օրհնեալ էս դո՞ւ ՚ի կուսայս:

դ. Այն ամենասք կուսին տրուած արտօնութիւնը ուրիշի չիտրուեցաւ, այսինքն՝ կուսութիւնը անամայրութե հետ միացունել. անոր համար արժանի է, որ ամմէն ազգերը իրեն երանի տան, ու օրհնեալ կանչեն:

հ. Ինչո՞ւ կըսես ետքը՝ Խ օրհնեալ է պարտաւոր յընկայնի թ:

դ. Այն Վճառնայ ուրախակից ըլլալու համար, որ Անորդեղութե մեծ խորհուրդին ինքն՝ ալ գործակից եղաւ, և ցուցունելու համար, որ ինչպէս Յս ամմէն բանի վրա օրհնեալ՝ ու բարձրացեալ է, ասանկ ալ իր ամենասք մայրը ամմէն արարածներէն աւելի օրհնեալ ու բարձրացեալ է:

հ. Ինչո՞ւ աւելցուց եկեղեցին՝ սրբո՞ւհի Անրիտմ, հայր Վճ:

դ. Այն Վճառնայ մեծ սրբութիւնը յայտնելու համար, որ Վճ մայրութե գլխաւոր գերազանցութեը հետ միացած էր:

հ. Ինչո՞ւ կրսես՝ աղօլեո՞ վն Տէր Տեղաւորացս այժմ:

դ. Այն Վճառնայ մեղաւոր որդիքներ մեր բոլոր կենացը մէջ իր բարեխօսութեը կարօտ ենք, որ մեզի համար անկէ շնորհք առնու, որ իրմէն ծնանիլ հաճեցաւ:

հ. Վճմէնէն ետքը ինչո՞ւ կրսես՝ Կ՛ի Ժամա հա հոսան Տէրոյ:

դ. Իր զօրաւոր բարեխօսութեը Յսի առջևը՝ մեզի ամմէնէն մեծ շնորհքը խրնդրելու համար, այսինքն, բարի մահւան շնորհքը՝ որ առանց անոր ուրիշ ամմէն բաները մեր փրկութե անօգուտ են:

հ. Ինչ է վերափոխման տօնը, որ եկեղեցին անանկ մեծ հանդիսութիւնով կրկատարէ:



դ. Ան օրն է, որ սք անձաճինը իր մահէն  
կտքը յարուի առաւ, ու հոգւով և մար-  
մնով երկինք ելաւ, որ սք եկեղեցւոյ  
ընդհանուր աւանդութիւն է:

### Վեդէոնի Բարդի պատմութիւն:

Վեդէոնը իր հօրը կալին (հարմանին)  
մէջը ցորեն ծեծած ատենը՝ իրեն հրեշտակ  
մը երեցաւ՝ ու ըսաւ. Տէր քեզի հետ է  
ով զօրաւոր: Վեդէոնը պատասխան տը-  
վաւ, թէ որ Տէր մեզի հետ է նէ՛  
հապա զմեզ ինչո՞ւ երեսէ ձգեց, ու մա-  
դիանացիներուն ձեռքը մատնեց զմեզ, որ  
մեր թշնամիներն են: Հրեշտակը ԱՅ  
գիաց ըսաւ իրեն, Վաջ եղիր, Աճ զքեզ  
կրխրկէ կոր, գնա՛ Իսրայէլը իր թշնա-  
միներուն ձեռքէն ազատէ: Աս ո՞վ եմ՝  
ըսաւ իրեն Վեդէոնը իմ հօրս տանը մէջ  
ամմէնէն վարը, ու իմ հօրս տունն ալ  
Սանասէի ցեղին մէջը ամմէնէն վերջինն  
է: Աս վնաս չունի ըսաւ իրեն Աճ՝ ես  
քեզի հետ պիտոր ըլլամ, ու Սաղիամին  
բոլոր բանակը քու առջևդ մէկ մարդու  
պէս պիտի փախչի: Վեդէոնը պատաս-  
խան տրվաւ, թէ որ քեզի հաճոյ ե-  
ղայ նէ՛ կաղաչեմ, ինձի նշան մը ցուցուր՝  
ես աս բուրդը խոտին վրա կըտարածեմ,  
թէ որ վաղը առտու երկինքի ցօղէն մինակ

ասիկայ թրջած, ու չորս դին բոլոր խոտերը չոր կըգտնեմ նէ, կըճանչնամ, որ զիս դուն կըխրկես կոր: Արկրորդ օրը տեսաւ, որ ըսածին պէս եղած էր: Աաղաչեմ Տէր՝ ըսաւ Վեդէոնը՝ ինծի մի բարկանար, ու հրաման տուր, որ ասոր ներհակ բան մ' ալ խնդրեմ, թէ որ վաղը աս բուրդը չոր ու չորս դին խոտերը թրջած կըգտնեմ նէ, ալ չեմ տարակուսիր քու ուղելուդ վրա: Ան ալ ըսածին պէս կատարեցաւ: Ան ատենը Վեդէոնը Այ պաշտպանութե վրա մեծ ապահովութիով Անդիամին վրան դնաց, ու ամմէնն ալ ջարդեց կոտորեց: Ասիկայ զգալի օրինակ էր հրեշտակապետին սք Վճածնայ ըսած խօսքերուն, անոր խոնարհութեը ու բոլոր ստեղծվածներուն մէջ անոր մեղքի արատէն ամենեւին ազատ ըլլալու արտօնութեը: Վասպ . 4 :

Խրատ «Է Աճածնայ վերափոխմանը վրա:

Ակեղեցին վերափոխման օրը իրեք մեծ տօներ մէկ տեղ կըտօնէ . այսինքն՝  
« . Աախ սք Վճածնայ մահւան տօնը, որ Վնի ամենասք մահւանէն ետքը ամմէնէն գերազանցը անոր սք մահն էր: Անգլի մէյմը որ ինքը ամմէն մարդիկներէն

աւելի առատ շնորհքներով լեցված գրտնրվեցաւ, որ զանոնք իր անարատ յղութեն սկսած ամմէն օր աղէկ ու հաւատարիմ գործածելով աւելցուցած էր<sup>1)</sup>: Արկրորդ՝ որ իր մահը բնութի տկարութի պատճառած չէր, սաստիկ սիրուն բոնութի պատճառած էր, իր սիրածը՝ իր Աճը ու Արդին ըլլալով՝ իր վրա անսոյին սէրը մայրական սէրէն չէր զանազաներ<sup>2)</sup>: Չանանք մենք ալ իր հաստատուն հաւատարմութիը նմանելու, որ թէ որ սիրուն բոնութիը չենք կրնար մեռնիլ նէ, գոնէ սիրոյ մէջ մեռնելու կարող ըլլանք:

Է. Արկրորդ՝ իր սի՛ յարութի տօնը, որ աւելի կուսական մաքրութի պատճառած ըլլալովը՝ Յի յարութի վերջը ամմէնէն փառաւորը եղաւ: Անզի մէյմը որ սի՛ Աճածինը իր կուսութիը ամմէնէն յառաջ և ուստի պահած էր: Արկրորդ՝ որ իր կուսութիը անամայրութի մեծ կըսեպէր<sup>3)</sup>: Արկրորդ՝ որ անանկ զգուշութիով ապրե-

- 
1. Տր ստացաւ զիս՝ի սկիզբն ճանապարհաց իւրոց. Ա. 1. 22:
  2. Ինչպէս զստերք ստացան զմեծութիւն . . . բայց դու առաւել եղեր, և անցուցեր զամենեւնեքումք. Ա. 1. 29:
  3. Չիարդ լինիցի ինձ այդ. քանզի զայր ոչ գիտեմ. Ա. 1. 34:

ցաւ, որ պզտիկ մեղքով մը ալ չաղտոտեց իր մաքուր կուսութիւնը<sup>1)</sup> :

Գ. Արրորդ՝ իր երկինքը թագ դրած, ու երկինքի ու երկրի թագուհի եղածին տօնը<sup>2)</sup> : 'Ախ' որ երկրի վրա աւելի մեծ արդիւնքներ ու արժանապատուութի՛ ունենալով՝ աւելի դժար ու աւելի մաքուր խոնարհութիւնով ապրած էր : Արկրորդ՝ որ իր Որդւոյն ծանր նախատինքներուն ու չարչարանքներուն ամմէնէն աւելի մասնակից եղած էր : Ասանկ մենք ալ երկինքը մեր համբերուելը ու խոնարհուելը համաձայն փառքեր պիտոր ընդունինք, թէ որ աս կեանքի մէջ աս Ա՛ծամօր օրինակին նմանելու կը ջանանք նէ :

### ( ) Երկնայ :

Այն Գոմինիկոսին հերետիկոս դիւահար մը բերած էին, որ դէր հանէ. ու ազատէ զինքը, սքը՝ ժամի մէջ բազմութե՛ առջևը սատանային շատ բաներ հարցունելէն ու խօսել տալէն ետքը՝ հարցուց, որ երկինքը արքայութե՛ սքերուն մէջ որ-

1. Ամենեին գեղեցիկ եւ մերձաւոր իմ. և արատինչ ո՛չ գոյ ՚ի քեզ. Արք էրք. Գ. 7 :
2. Ա՛վ է սա՛ որ երևեալս է իբրև զառաւօտ. գեղեցիկ որպէս զլուսին. ընտիր իբրև զարեգակն. իբրև զհիացումն կարգեալ. Արք. 2. 9 :

մէն աւելի կը վախնան, ու մարդիկները որոնն բարեխօսուիր աւելի կուզեն: Սատանան շատ ահամայ, բայց սք Մճածնայ զօրութիւնը հարկադրած՝ սկսաւ ըսել ասանկ. Վսեցէք բոլոր քրիստոնեաները, աս Քնի զօրաւոր մայրը շատ պատրաստ ու գթած է իր ջերմեռանդները պահելու և պահպանելու համար, որ մեր դժօխքին խորունկ բանտը չիյնան: Մն է՝ որ արեգակի պէս բոլոր խաւարը կաւրէ՝ կապականէ. մեր բոլոր խարդախութիւնները՝ շարութիւնները՝ որոգայթները ու խարէութիւնները կը յայտնէ ու անպտուղ կընէ: Իրեն ինչւան մեռնելու ատեննին ջերմեռանդ մնացող ու զինքը պատուողներէն մարդ մը չի դատապարտւիր, վնլի ամենասք Նրորորութե առջևը իր մէկ հառաչանքը բոլոր սքերուն աղօթքներէն աւելի է: Մնոր համար մենք մինակ իր մէկ ջերմբաղձանքէն ու գթած կամքէն աւելի կը վախնանք, քան արքայուէ բոլոր սքերէն. ու իր հաւատարիմ ծառաներուն դէմ բան մը չենք կըրնար ընել: Մս ալ կը յայտնենք, որ շատ քրիստոնեաները՝ որ իրենց կենդանութե ատենը մեզի կը ծառայեն, ու մերը կը լլան, մահերնին ատենը զինքը կը կանչեն, իրենք զիրենք անոր կը յանձնեն, ու կը փրկը վին: Աք Ղոմինիկոսը



խրատեց բոլոր ժողովուրդը բարձր ձանով  
վարդարան ըսելու . զրուցած ատեննին  
կրտեսնէին , որ ամմէն մէկ ողջունին դի-  
ւահարին բերնէն կայծակի ձևով շատ  
սատանաներ կելլէին . ու վարդարանը  
լմնցած ատենը ամմէնն ալ ելան լմնցան ,  
որ տասնըհինկ հազար սատանաներ էին .  
մարդը խալըսեցաւ , դարձաւ՝ ուղղափառ  
եղաւ : Ու ասչափ թըւով սատանայ մըտ-  
նելուն պատճառն ալ ան էր , որ ան մար-  
դը վարդարանին դէմ քարոզած էր , ու  
իր չար քարոզութիով տասնըհինկ հազար  
վարդարան պակաս զրցուված էր աշխրթի  
վրա : ՍԷ Դսոննիկոսն զարբին Տըջ :

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ Է Ե Ս Ե Ր

ՍԷ Աճաճնայ ըլբէտանդուլնով ծառայ-  
ելու զրո :

հ . Ուրիշ աղօթքներ ալ կան սք Աճա-  
ճնայ ընելու :

ող . Հրամմերես՝ լեւանիան . ողջ լէբ լա-  
գոհին և ուրիշ աղօթքներ ալ կան , որոնց  
մէջը գլխաւորը հրէշտակ Տն աղօթքն է ,  
որն որ օրը իրեք անգամ , սյսինքն՝ առ-  
տու , կէսօրը , իրիկունը ըսելու է :

հ . Ինչո՞ւ համար օրը իրեք անգամ ըսե-  
լու է աս աղօթքը :

դ. Անոր համար, որ մտքերնիս մնայ, որ մեր փրկութիւն վտանգներու ու թշնամիներու մէջ պարտրկան ենք շատ անգամ սքե՛ անձաճիւնը մեզի օգնութիւն կանչելու :

հ. Անչ բան մտմտալով ընելու ենք աս աղօթքը :

դ. Վսի մեր փրկութիւն համար Արդեղութիւն՝ ու սքե՛ Աճածնայ հրեշտակապետին աւետելով անձամայրութիւն բարձրանալը մտմտալով, և ասոնք մեր կողմանէ իրեն յիշել տալով՝ իր օգնութիւն ու բարեխօսութիւն խնդրելու ենք :

հ. Արժանի չէ, որ սքե՛ Աճածիւնը ԱՅ մայր ըլլալուն համար իրեն ուրիշ սքերէն աւելի մասնաւոր ծառայութիւն ու պաշտօն մատուցանենք :

դ. Հրամմերես՝ արժանի է Վսէն ետքը անմիջապէս զինքը պատուելու՝ ամմէն հրեշտակներէն ու սքերէն աւելի պատուով, որ գերծառայութիւն (մեծ ծառայութիւն) պաշտօն կրսի :

հ. Ամենասքե՛ կոյսը մեր մասնաւոր սիրոյն ու յուսուն վրա ասկէ իզատ աւելի իրաւունք չունի՞ :

դ. Հրամմերես ունի, վսզի ինքը մինակ ԱՅ մայրը չէ, շնորհքին կարգաւ մեր մայրն ալ է :

հ. Ինչ եղանակաւ մեր մայրն ալ է շնորհ-  
քի կարգաւ :

ա. Ս շղի Մ յ Որդին մարդ ըլլալով՝ զմեզ  
իրեն որդեգրական եղբար ըրաւ, անոր  
համար չենք կրննար Վսի որդեգրական  
եղբարներ ըլլալ առանց իր մօրը որդե-  
գրական որդիներ ըլլալու :

հ. Երբ սորվեցուց մեզի Վս առ ճշմար-  
տութիւն՝ ու սք Մ ծածնայ մեր որդիական  
պարտքերնիս :

ա. Խաչին վրա Յովհաննէս աւետարա-  
նիչին ըսած ատենը՝ մեր ամէնուն ալ  
ըսաւ, ցուցունելով մեզի առ կոյս մայրը՝  
Մհա մայր քո :

### Յոգիւնն պատմութիւնը :

Սաբուքողոնոսոր թագաւորը հպար-  
տութիւնով զինքը բոլոր աշխրբի անձ-  
ցունել ու մինակ իրեն երկրպագութի ը-  
նել տալ ուզելով՝ իր կամացը հնազան-  
դիլ չուզողներուն վրա Հողովեռնէս զօ-  
րապետը խաւրեց, որ հարուր քառսուն  
հազար զօրքով եկաւ՝ Վետիղուա քաղա-  
քը պաշարեց, ու քաղքըցիները անանկ  
ներդութե մէջը ձգեց, որ Ողիա՝ քաղքին  
իշխանը որոշեց, որ հինկ օրւան մէջը թէ  
որ իրենց օգնութի չիհասնիր նէ, քա-  
ղաքը թշնամիներուն տայ : Յուդիթը՝ որ

իր առաքինութիւններուն համար ան քաղ-  
քին մէջը ամմէնուն սիրելի կին մի էր՝ աս  
բանս լսեց նէ՝ քաղքին քահանաներուն  
ու իշխաններուն ըսաւ . Ով էք դուք, որ  
Մ.Յ ողորմուե՞ր ժամանակ որոշեր էք . ա-  
ղաչենք իրեն, ու խոնարհութիով սպա-  
սենք իր ողորմութե՞րը, որ մեր աղաչանքը  
լսէ : Աս քաղքէս ելլամ երթամ պիտոր .  
դուք մի հարցունէք ու մի քննէք ինչ որ  
պիտի ընեմ նէ, մինակ ինձի համար ա-  
ղօթք ըրէք : Ինքն ալ պահք ծոմ կենա-  
լէն, ու աղօթք ընելէն ետքը՝ իր փառա-  
ւոր զգեստներովը ու զարդերովը հագվե-  
ցաւ կապեցաւ զարդարվեցաւ, որոնք որ  
էրիկը մեռնելէն ետքը բոլոր մէկ դի ձը-  
գած էր, Մ.Ծ ալ իր սրտին մաքրութիւն  
ճանչնալով՝ վրան ալ աւելի գեղեցկութի  
աւելցուց : Զետը իր աղախինովը ելաւ  
Հողովեռնէսին բանակը գնաց : Պահա-  
պան զինւորները ասիկայ իրենց զօրապե-  
տին տարին, ու տեսնողները իր գեղեց-  
կութե՞րը վրա կըզարմանային : Մնաց Հո-  
ղովեռնէսին քովը, որ զինքը իր գանձա-  
տունը խաւրեց ազատութի տալով իրեն  
ամմէն գիշեր բանակէն դուրս ելլալու՝ Մ.Յ  
աղօթելու համար, որ Յուդիթը խնդրած  
էր : Չորս օր ետքը Հողովեռնէս փառա-  
ւոր սեղան մը պատրաստել արվաւ, ու

Յուդիթն ալ հրաւիրեց : Սեղանը լմն-  
ցած ատենը Հողովեռնէսը սաստիկ գի-  
նովցած՝ անկողինին վրա ինկաւ քնացաւ ,  
բոլոր ծառաներն ալ իրեն պէս գինովցած՝  
ամմէն մարդ իր տեղը գնաց : Ան ատենը  
Յուդիթը Հողովեռնէսին քովը գնաց ,  
գլխուն վրայի կախած սուրը առաւ , Այ  
աղօթք ըրաւ , որ իր ձեռքին զօրութի տայ ,  
ու երկու անգամ զարնելով գլուխը կտրեց՝  
մէկ դի հանեց : Ա երջը ինչպէս որ յա-  
ռաջ կելլար նէ՝ կանուխ բանակէն դուրս  
ելաւ՝ Վետիղուա եկաւ , ուր տեղը քաղ-  
քին դուռը բացին՝ ու իրենց ազատիչը  
ներս առին : Հողովեռնէսին զօրքը առ-  
տրւանց տեսնելով , որ իրենց տէրը մե-  
ռած է , ու գլուխը Վետիղուա քաղքին  
վրա տնկած՝ փախչիլ սկսան , ու Խսրայէ-  
լին զօրքը ետենին ինկան , զիրենք ցիր ու  
ցան ըրին , ու բոլոր բանակնին , ու փախ-  
չելու ատենը ճամբաները թափած բաներ-  
նին առին : Ասիկայ օրինակ մի է ամենա-  
մաքուր կուսին , որ դժոխսային օձին գլու-  
խը ճզմեց , ու առատ շնորհքներ առաւ  
իր պաշտպանու թեր յուսացողներուն վրա :  
Յուդիթ :



Խորասո սք Լճաճնայ ջերմեանդուլէ զեռ :

ա. Ինչ տեսակ ջերմեանդուլթիով պատուելու ենք սս մեր մարը սք Լճաճինը, որ Լճ արժանի մայրն է <sup>1)</sup>, ու սրբութե և պատուոյ մէջ բոլոր սքերէն ու հրեշտակներէն շատ վեր է : Սք եկեղեցին մեր ջերմեանդուլթիը իրեն քանի կերպով արթնցունելու կաշխատի, աղօթքով օրը շատ անգամ անոր օգնութիը կրխնդրէ . անոր պատուոյն համար մասնաւոր տօներ սահմանած է . անոր անունովը Լճ եկեղեցիներ՝ խորաններ ընծայած է . անոր պաշտպանուելը տակ կրօններ հաստատելով և շատ ուրիշ բաներով :

բ. Ինչ մեծ յուսով պարտրկան ենք զինքը օգնութի կանչելու, որ Վս խաչին վրա կտակ ըրաւ՝ զինքը մեզի մայր ըրաւ, ու զմեզ իրեն որդիներ <sup>2)</sup> : Սեր յոյսը իր իշխանութեը ու կարողութեը վրա պիտի դնենք, որ Լճ մայրն է, ու իր բարութեը վրա պիտոր դնենք, որ մեր մայրն է . բոլոր սք հարքը ու Լճաբանները սս

1. ԶՍարիամ կոյս՝ յորմէ ծնաւ Յս. Ստր. . 16 :

2. Յս իբրև ետես զմայրն, և զաշակերտն, զոր սիրէր, զի կայր մօտ . ասէ ցմայրն, կին դու ահա որդի քո : Լպա ասէ ցաշակերտն . Լհա մայր քո . Յովհ. թր. 26. 27 :

մեղի յանձնւիլած յոյսը կըմեկնեն , որ Սարիամը հրեշտակին խօսքին հաւտալովը Աւային պատճառած չարիքներուն բժշկութեանը պատճառ եղաւ , որ հին օձին խօսքովը խարված էր <sup>1)</sup> :

Գ . Սեր ջերմեռանդութիւնը հաստատուն , ու յուսերնիս Սարիամին պաշտպանութեւնը արժանի ըլլալու համար ջանանք պիտի սք Յովհաննէսին պէս իրեն արժանի որդիութիւն ընելու՝ իր առաքինութիւններուն նմանելու , գլխաւորաբար խոնարհութեւնը ու մաքրութեւնը <sup>2)</sup> :

### (Օրինակ :

Սարդուն մէկը մահացու մեղքի մէջ գտնւիլելով յանկարծակի առանց խոստովանանքի մեռաւ . սատանաները ըրած որսերնուն վրա կուրախանային , ու հրեշտակները ան հոգւոյն կորսըվելուն վրա կըտրտմէին : Արբոր սատանաները կը պատրաստըվէին կոր ասոր հոգին յափըշտակելու՝ և դժոխք տանելու , անմիջապէս երկինքէն հրեշտակ մը հասաւ սք

1. Ազից գլժնամութիւն 'ի մէջ քո և 'ի մէջ կնոջ . . . նա սպասեցէ քուժ գլխոյ . Օճ . 4 . 15 :

2. Կուսութեւն հաճոյ եղև , խոնարհութեւն յղացաւ . Առաջ Ռեւանդոյ . ի քան առ երէկայ :

Ըճածինէն խրկրված, ու ըսաւ, որ ան  
 հոգին երկինքի թագուհւոյն շատ ջերմ  
 եռանդ էր. որ իրաւ մեղաւոր է, բայց ա-  
 նոր ժամասացութի կրնէր, ու շատ ան-  
 դամ հրեշտակային ողջոյնը ջերմեռանդու-  
 թիով կրզրուցէր, անոր համար ալ Յս-  
 Բսէն իր օրհնեալ մօրը աղաչանքովը ի-  
 րեն ժամանակ պարգևեցաւ, որ նորէն  
 մահկանացու կեանքը դառնայ, ու իր մեղ-  
 քերուն ապաշխարանքը քաշէ: Ըն առե-  
 նը սատանաները մեծ վախով փախան, ու  
 հրեշտակները ուրախացան՝ ըսելով. Իրաւ  
 որ մեր տիրուհւոյն ու թագուհւոյն ջերմ  
 եռանդները չեն կորսրվիր: Հոգին դար-  
 ձաւ իր մարմինը, մարդը կենդանացաւ,  
 ու գնաց անապատ մը խիստ ճգնուիներով  
 ապաշխարեց: ՍԷ Ընսէլհոսը իւրապօ՛ւ:

ԳՒՆՈՒԽ Գ

Ս Ի Ր Ո Յ Վ Ր Ե

Ե.Ո.Ջ.Ի ՀԵ.ՄԵ.Ր

Ըստուծոյ սիրուն լեա:

Հ. Ընսէրը ի՞նչ բան է:

Պ. Հոգի սքէն մեր հոգւոյն հեղված ա-  
 ոսքինութի մի է, որ անով զԸճ ամէն

բանէն աւելի ու իրեն համար կըսիրենք,  
ընկերնիս Մ.Յ սիրուն համար մեզի պէս  
կըսիրենք :

հ. ՕՂՃ իրեն համար սիրելը ի՞նչ է :

ա. Օ ինքը սիրել է, չէ որ մինակ մեզի  
բարիք ըրած է՝ կամ պիտոր ընէ՝ մինակ  
անոր համար . հապա վսզի անսահման  
կատարելութիւնը ինք իրմէն ամմէն սիրուն  
արժանի է :

հ. ՕՂՃ ամմէն բանէն աւելի սիրելն  
ի՞նչ է :

ա. Օ ինքը մեր ազգականներէն, բարե-  
կամներէն ու մեզմէ ալ աւելի սիրել, ու  
զինքը գոնէ մահացու մեղքով չիբարկա-  
ցունելու համար ամմէն բանը կորսնցու-  
նելու՝ ամմէն չարչարանքները քաշելու և  
մեռնելու ալ պատրաստ ըլլալն է :

հ. Ինչէն կըրնանք ճանչնալ, որ զՂՃ  
ամմէն բանէն աւելի կըսիրենք կոր՝ թէ չէ :

ա. Մ.Յ կամաց ու պատւիրաններուն հա-  
ւատարմութիւնով հնազանդելէն :

հ. Մ.Յ սէրը ուրիշ պատւիրաններէն ու  
առաքինութիւններէն զատ է :

ա. Հրամներես, Մ.Յ սէրը մասնաւոր ա-  
ռաքինութի մի է, որուն ներգործութի-  
ւնը երբեմն երբեմն պարտական ենք  
ընելու :

Կ. Վանի՞ անգամ պարտրկան ենք ԱՅ սիրուն ներգործութիւր ընելու :

Պ. Ակեղեցին մասնաւոր համրանք որոշած չէ, բայց ԱՅ սէրը ամմէն առաքինութիւններէն վեր ըլլալով՝ ներգործութիւր շատ անգամ ջանալու ենք ընելու : Ասոր մէջը ազահութի ընողը զԱՅ քիչ կըսիրէ :

Կ. Չիկան մասնաւոր առիթներ, որ անոնց մէջը պարտրկան ըլլանք ԱՅ սիրուն ներգործութիւր ընելու :

Պ. Կան, այսինքն՝ մարդ ինքը զինքը բաւական կսկսի ճանչնալ նէ, մահւան վրտանդներու մէջ, ու շատ անգամ իր կենացը մէջը :

Կ. Ի՞նչ որ անոնցին սէրը ամմէն առաքինութիւններէն վեր է նէ՝ ուրեմն ասոր ներգործութիւր բաւական է, և ուրիշ առաքինութիւններուն ներգործութիւնները հարկաւոր չեն :

Պ. Անոնց ներգործութիւններն ալ հարկաւոր են, վնդի ԱՅ ասիկայ հրամայելովը մէկալ առաքինութիւնները զանց չորաւ, զանոնք ալ ինքը հրամայեց, ու կուզէ, որ կատարենք :

Աղիա մարգարէին պատմութիւնը :

Աղիա մարգարէն ԱՅ սիրով բորբոքեր էր, ու իր եռանդը ԱՅ պաշտօնին



պայծառութեւն Տամար անանկ բռնկած էր, որ տեսնելով Խորայէլի ժողովուրդին անկարգութիւնները ինքը զինքը կուտէր: Ագաաբ Խորայէլի թագաւորը Ռահաղ կուռքին տաճար շիներ էր, իր կնիկը Յեզարէլ ալ Ա՛յ մարգարէները կոտորած էր. Աղիան չիվխցաւ երթալու թագաւորը յանդիմանելու, և Ա՛յ պատիժը իրենց սպառնալու: Թագաւորէն խնդրեց, որ բոլոր ժողովուրդը Աարմեղոս լեռան վրա ժողովլին. հոն տեղը իրենց բրած կռապաշտութիւնին երեսնին զարնելէն ետե՛ իր հաւատքին ճշմարտութիւնը ցուցունելու համար աղօթքով երկինքէն կրակ ինջեցունել տրվաւ, ու Ռահաղին սուտ մարգարէները՝ որ չորս հարուր յիսուն հոգի հոն ժողված էին, ամմէնն ալ կոտորել տրվաւ: Ամանապէս Աքողիա ամպարիշտ թագաւորին ալ դէմ կեցաւ, որ Ակկարոնի ճանճիկ չածին մարդ կրխաւրէր կոր իր հիւանդութեւնը օգնութի խնդրելու համար, որուն պատգամ խաւրեց, որ իր սուտ անճներէն օգնութի խնդրելուն համար պիտի մեռնի, ան անկողինէն պիտի չելլէ: Ա՛ծ զինքը պահելու համար հրաշքները շատցուց: Արբեմն անպատր ագռաւի ձեռքով իրեն հարկաւոր կերակուրը խրկելով՝ եբբեմն Յեզա-

բելին հալածանքէն փախած ատենը իրեն սիրտ տալու համար հրեշտակ խաւրելով . երբեմն իր աղաչանքովը երկինքէն կրակ իջեցունելով՝ ու իրեն վրա խրկրված զօրքերը երեւով . վերջապէս իմացուց իրեն , որ զինքը աշխրքէս պիտի վերցունէ . որ իր վերարկուն զարնելով Յորդանանին ջրերը բաժնեց՝ ան դին անցաւ . ու օդը հրեղէն կառք մը երեցաւ , որուն մէջը մըտաւ , ու իր աշկերտը Աղիսէին տեսութէ աներեւոյթ եղաւ՝ իր մարգարէական հոգին ու իր նախանձաւորութիւն անոր ժառանգուի ձգելով : ( )րինակ առնունք մեզի աս մարգարէին նախանձաւորութիւն Աստուծոյ սիրոյն ու պատուոյն վրա . ու թէ որ ան իշխանութիւն տրրված չէ մեզի նէ անոր պէս ուրիշներուն ալ քարոզելու ու դէմ կեցողները երկինքէն կրակ իջեցունելով պատժելու , գոնէ մեր պակսութիւնները պատժենք Ա՛յ սիրուն հրովը , ու դժոխքի հուրին ու տանջանքներուն մըտած մունքներովը : Գ . Թ՝ Գ . ԺԷ . ԺԸ . ԺԹ . Գ . Թ՝ Գ . Գ . Գ :

Խրատ Ա՛յ «իբրեւ լեռ :

« . Ա՛յ սերը : Ա՛ճ ամենեւին անկատարութի մը չունի , ամմէնէն կատարեալ , ու ամմէնէն բարի է . անոր համար պար-

տրկան ենք զինքը բոլոր սիրով սիրելու :  
Մեր սիրտը ինչ բարի որ կուզէ նէ՝ Ղ.Ճ  
կրգտնէ , չիկայ ճշմարիտ երանութի մը ,  
որ Ղ.Ճ չըգտնելի : Անանկ է նէ՝ Ա.Յ  
պարտրկան եղած սէրը ինտո՞ր չիխղճալով  
արարածներուն կուտանք <sup>1)</sup> , որոնք մեր  
սիրուն անարժան են՝ մեր սէրը յանցաւոր  
ու զմեզ պատժոյ արժանի կրնեն :

Բ. Արախտագիտութե սէրը : Ա.Ճ զմեզ  
ստեղծեց , իր մէկ հատիկ Որդւոյն չարչա-  
րանքներովը ու մահւամբը փրկեց՝ ու  
արդարացուց , ասոնք անանկ բարիքներ  
են , որ թէ որ բոլոր արարածներու սիր-  
տերը մերը ըլլային նէ՝ չէինք կրնար իրեն  
բաւական շնորհակալ ըլլալ . հապա ի՞նչ  
պէս կարելի է , որ մարդիկներու շնորհա-  
կալ ըլլանք , որ մեզի քիչ բարիք ըրած  
են , ու Ա.Յ երախտագէտ ըլլալը մոռնանք ,  
որ ամմէն բաներնիս իրմէն է <sup>2)</sup> :

Գ. Ա.Յ սիրուն օգուտը : Ա.Յ սէրը ամ-  
մէն բանը կանուչցունէ . թէ որ Ա.Յ օրէնք-  
ները մեզի դժար կուգան , նշան է՝ որ զին-

- 
1. Տէր՝ արարեր զմեզ վնքո , և անհանգիստ են սիրտը մեր , մինչև հանգիցեն ՚ի քեզ . Սուրբ Օգոստոս . ՚ի փնչս իտասով :
  2. Մեր սիրեցուք զԱ.Ճ՝ վնղի նախ նա սիրեաց զմեզ . Յովհ . Գ . 19 :

քը չենք սիրեր, մեր պղտիկ գործքերուն ալ աղնուութի, բարձրութի ու մեծ յարգութի կուտայ. որ զմեզ կրղորացունէ ամսէն բանը Մ.Յ սիրուն համար ընելու<sup>1</sup>). ու թէ որ Մ.Յ սիրուն համար մեծ գործքեր չենք կրնար գործել նէ՛ անոնց տեղը կրլեցունէ:

### Օրինակ:

Պղտիկ սք աղջիկ մը Յսի ու Սարիամու անանկ սէր ունէր. որ անոնց սիրուն համար ինչ որ կրնէր նէ՛ իրեն քիչ կերևնար, անոնք ալ իրեն հատուցումը ընելու համար իր սիրտը արքայութե ուրախութիով ու անուշութիովը կրլեցունէին: Արբոր ասիկայ տասնըջորս տարին մտաւ նէ՛ Յսի ծննդեան համար մեծ ջանքով ու անպատմելի ջերմեռանդութիով պատրաստըվեցաւ: Խթման գիշերը քաղցր Յս ու Սարիամն ալ իր ասանկ մեծ պատրաստութեը հատուցումը ըրին իրեն. որ ասանկ եղաւ: Սք անծածինը գիրկը սիրելի Յս մանուկով իրեն երեցաւ, ու ըսաւ. Մ.Յ սիրելի աղջիկս աս անծային մանուկը՝ որն որ անչափ կըսիրես, ասիկայ քուկդ

1. Արոց սիրենն զՄ.Յ յամի գործակից լինի 'ի բարիս. Լուսն. Ը. 28:

է, քեզի համար ծնած է, որ քեզի պարզև կուտամ, գիրկդ առ ասիկայ, ու ընտանեբար խօսէ իրեն հետ: Աղջիկը ուրախութիով թևերը բացաւ՝ գրկեց Յսմանուկը, ու ինչպէս որ պէտք է նէ՛ սիրեց ու պատուեց զինքը: Յսմանուկը հարցուց իրեն, Սիրելի հարսս՝ կըսիրես զիս: Ահ անուշիկ Յսմաւ աղջիկը, որ զքեզ իմ մարմնէս ու կեանքէս աւելի կըսիրեմ: Սմանուկ Յսմա նորէն հարցուց՝ ըսելով. Արչափ կըսիրես զիս, շատերը կըսեն զիս սիրել, բայց ինչպէս որ պէտք է նէ՛ անանկ քիչերը կըսիրեն: Պատասխան տրվաւ սք աղջիկը. Աուն իմ սիրտս կըտեսնես, ու գիտես, որ իրաւցընէ զքեզ իզմէ աւելի կըսիրեմ, զքեզ կըսիրեմ, հրամմերես՝ իմ ստեղծօղս՝ իմ փրկիչս ու իմ հողևոր փեսասս՝ զքեզ կըսիրեմ: Յսմանուկը ծիծաղեցաւ, ու երրորդ անգամ փորձելով զինքը նորէն հարցուց, ըսելով. Բայց ես կուզէի իմանալ, որ որչափ շատ կըսիրես զիս: Ան ատենը աղջկան սիրտը լեցվեցաւ, լալով ու հառաչելով ըսաւ. Հրաման տուր, որ չէ որ լեզուս՝ հապա սիրտս յայտնէ քեզի իմ սիրուս մեծութիւր. աս խօսքերը ըսելով՝ ալ աւելի սիրոյ ներգործութի մը ընելու համար անանկ ուժով մը ժողվեց իր մաքուր սրբ-



տին բոլոր ուժը ու բոցը մէկ տեղ , որ սիրտը ճաթեցաւ , ու գիրկը ունեցած մանուկ Յսին ձեռքը իր սք հոգին աւանդելու ատենը վերջի խօսքը աս եղաւ , Իմ Յսս՝ իմ սէրս՝ իրաւ որ կըսիրեմ զքեզ : Ետքը մարմինը բացին՝ տեսան , որ սիրտը երկու ճեղքոված՝ ու մէջը ոսկէգրով աս խօսքերը գրված էին . Յս զքեզ իզմէ աւելի կըսիրեմ , որ զիս ստեղծեցիր ու փրկեցիր : Գապալէկը Այ Երկնայէն Խաչին Դժբէ Իւրապ . ու պարտեւ հոգեւորէն Դժբէ ալ է :

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Է Ն Ս Ն Ր

Ընկերէն սիրուն վրա :

- հ . Որն է սիրուն երկրորդ պատւիրանը :
- պ . Ընկերնիս սիրելն է :
- հ . Ընկերով զո՞վ կիմանաս :
- պ . Ըմէն մարդիկները՝ թէ ազգական բարեկամ ըլլան , թէ թշնամի :
- հ . Ի՞նչ որ ամէն մարդիկները կըսիրենք , ու մինակ մէկ մարդ մը չիսիրենք նէ , սիրուն պատւիրանը կատարած կըսեպի՞նք :
- պ . Չէ , սէրը ընդհանուր առաքինութի մը ըլլալուն համար պէտք է , որ ամէնուն վրա տարածվի :
- հ . Եսիկայ օրինակաւ մը մեկնէ ինձի :

« . Թե որ հաւատքին ամէն մասերուն կը հաւտաս , ու մինակ մէկ մասը չի հաւտաս նէ՝ հաւատք չունիս . ու Ա՛յ պատուիրաններուն ամէնը կը պահես , ու մինակ մէկը չի պահես նէ՝ Ա՛յ ճշմարիտ սէրը չունիս , ասանկ ալ աս սիրուն պատուիրանին մէջը :

հ . Մեր թշնամիներն ալ ինտո՞ր կըրնանք սիրել :

« . Մտի Վ՛ս անանկ հրամայեց , ու երբ որ մենք ալ մեր մեղքերովը իր թշնամիներն էինք նէ՝ ինքը մեզի համար մեռաւ , ու կուզէ , որ ինչպէս ինքը զմեզ սիրեց , անանկ մենք ալ մէկզմէկ սիրենք :

հ . Վ՛սնէ ազգականներնիս ու բարեկամներնիս ուրիշներէն աւելի կըրնա՞նք սիրել :

« . Հրամմերես՝ սիրուն կարգը անանկ կը պահանջէ :

հ . Օրնկերնիս ի՞նչ պատճառաւ պարտրկան ենք սիրելու :

« . Ա՛յ սիրուն համար՝ ու վտի ընկերնիս ալ մեզի պէս ՚ի պատկեր Ա՛յ ըստեղծւած՝ ու Վ՛սի արունով գնված է , ասոնք են պատճառները , որոնց համար սէրը ընդհանուր պիտոր ըլլայ :

հ . Ո՞վ որ զընկերը մինակ անոր համար կը սիրէ , վտի անիկայ զինքը կը սիրէ՝ կամ

իրենն բարիք կրնէ, ան մարդը սիրուն պատուիրանը կրկատարէ:

դ. Չէ, վսզի անանկ սէրը մինակ բնական սէր ըլլալուն համար մեր հոգւոյն փրկութեւր շահ մը չունի:

հ. Ինչո՞ւ համար:

դ. Սսզի Աճ իր սիրուն համար չեղած գործքերուն արքայութեւ վարձքը չիտար:

հ. Ինչպէս պարտրկան ենք մեր ընկերը սիրելու:

դ. Սեր ընկերը մեր անձին պէս պարտրկան ենք սիրելու:

Աբրահամին ու Ղովտին Եղբարսիրու-  
պարսիրու:

Աբրահամը ու իր եղբօրը որդին Ղովտը շատ ոչխարներ և ուրիշ կենդանիներ ունէին. իրենց հովիւները արածելու արտերուն համար իրենց մէջը կուսելուն պատճառաւ Աբրահամը Ղովտին ըսաւ. Եղբար, ինչո՞ւ մեր մէջը ու մեր հովիւներուն մէջը կուս ըլլայ, բոլոր երկիրները քու առջևդ են, ընտրէ թէ որ դուն աջ կողմը կերթաս նէ՛ ես ձախը կերթամ, ու թէ որ դուն ձախ կողմը կերթաս նէ՛ ես աջը կերթամ: Ղովտը դէպ 'ի Սողոմ գնաց, ան կողմը իրեն շատ բերքով երևնալով. Աբրահամը ուրիշ կողմ գնաց, ու

Հոն տեղը շատ օտարականներ ժողվեցան իր քովը : Օր մը Աբրահամը իր վրանին դրսի դին նստած ատենը տեսաւ , որ իրեք հողի կերթային կոր , իրենց ետեւն վազեց , ու քիչ մը հանգչելու համար զիրենք իր վրանը (չատրըր) հրամցուց , իրենց ոտքը վըլաց , աղէկ կերակուրներ տրվաւ : Աբրահամը Սառայէն զաւակ չունէր , որ իր մեծ հարստութիները ժառանգէր : Աս ճամբորդները իրեք հրեշտակներ էին՝ ճամբորդի կերպարան մտած : Կերակուր ուտելէն ետքը առջի հրեշտակը ըսաւ իրեն . Քեզի գալ տարի աս ատեն նորէն պիտի գամ , ու ան ատենը քու կընիկդ Սարայէն որդի պիտի ունենաս . Սառա ծիծաղեցաւ՝ իր մտքին մէջը ըսելով . Ինձի աս բանս ի՞նչպէս պիտոր ըլլայ , վնզի իմ տէրս հարուր տարւան է , ու ես իննըսուն : Հրեշտակը յանդիմանեց զինքը չիհաւտալուն համար , ու հաստատեց իր խոստումը , ու Սառա խոստացված ժամանակը յղացաւ : Քիչ մը ետքը ան հրեշտակներուն երկուքը ճամբորդի կերպարանքներով Վոլտին երեցան . որ զիրենք իր տունը հրաւիրեց , ու Աբրահամին պէս առջենին սիրով կերակուր հանեց . ու հրեշտակները զինքն ալ վարձատրեցին : Ար Սողոմ պատժելու համար

եկած էին , ու քաղքըցիներուն անօրէնու-  
թեամբ համար ան քաղաքը պիտի կործա-  
նէին . աս բանը իրեն յայտնեցին . որ  
երկրորդ օրը առտըւանց հրեշտակները  
զինքը իր ընտանիքովը քաղքէն դուրս  
հանելէն ետքը կատարվեցաւ երկինքէն  
կրակ իջնալով : Օհն . ԺԳ . ԺԵ . ԺԶ :

Խրատ ընկերը «Իրեւոն» զեռ :

« . Աղբարսիրութեամբ պատուիրանը ԱՅ  
սիրուն պատուիրանին պէս է <sup>1)</sup> . վստի թէ  
որ ընկերնիս չենք սիրեր նէ՛ զԱ՛ճ ալ չենք  
կրնար սիրել : Ա՛ճ յաւիտենական օրէնք  
դնող ըլլալով՝ աս սէրը թէ բնական՝ թէ  
գրական , թէ աւետարանական օրէնքի  
մէջ դրած է <sup>2)</sup> . ինքը մեր արարիչը ինչ-  
պէս որ զմեզ իր պատկերին նման ստեղ-  
ծած է նէ՛ մեր ընկերն ալ անանկ ստեղ-  
ծած է . թէ որ անիկայ աս պատկերին  
գեղեցկութիւնը իր պակասութիւնով աւրած  
է նէ՛ մենք մերինը ի՞նչ ըրած ենք : Ինքը  
մեր փրկիչը ըլլալով յայտնած է , որ մեր  
ընկերին ըրածնիս իրեն ըրածի պէս պի-

1. Արկրորդն նման սին՝ սիրեսցես զընկերքո , իբրև  
զանձնքո . Մատթ . Էթ . 29 :

2. Այս է պատուէր իմ , զի սիրեսցիք զմիմեանս ,  
որպէս և ես զձեզ սիրեցի . Յովհ . ԺԷ . 12 :



տոր ընդունի, ու զմեզ զլիսաւորաբար աս պատւիրանի վրա պիտի դատէ<sup>1)</sup> :

Բ. Չենք կրնար զընկերնիս Մ. Յ. համար սիրել առանց զՄ. Թ սիրելու, վնդի ընկերին սէրը Մ. Յ սիրուն նշանն է, Վ. Բ ալ կուզէ, որ սիրով ճանչցըվինք, որ իր աշկերտներն ենք<sup>2)</sup>. եղբարսիրութե մէջ աւելի դժար առաքինութիւններ կրպարունակին, այսինքն՝ անուշուե՛ համբերուե՛ խոնարհուե՛ հեզուե՛, որ Մ. Յ սէրը կամ կենթադրեն, կամ կըհաստատեն<sup>3)</sup> :

Գ. Ինկերին սէրն ալ Մ. Յ սիրուն պէս գերբնական պատճառէ՛ ընդհանուր՝ ու ամմէն գործքերու մէջ պիտոր ըլլայ<sup>4)</sup>. եղբարնիս պէտք է հոգևով սիրել իր բարիքը ուզելով, մտքով սիրել, վնդի խօսքը բաւական չէ. իրեն չարիք ընելու չէ, ու մեզի կարօտ եղած ատենը մեր ձեռքէն եկած հոգևոր ու մարմնաւոր բարիքները ընելու աշխատելու ենք :

1. Որովհետեւ արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք. Մատթ. Է. 40
2. Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս. Յով. ԺԳ. 35 :
3. Որ սիրէ զընկերն, զօրէնսն կատարէ. Էսայ. ԺԳ. 8 :
4. Եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն զձեզ՝ զի՛նչ վարձք իցեն, ոչ ապաքէն և մաքսաւորք ըզնոյն գործեն. Մատթ. Է. 46 :

Օրինակ:

Աղաթոնն ճգնաւորը իր գործած բաները ծախելու համար քաղաք կերթալու ատեննը՝ ճամբուն վրա բոլոր մարմինը վերաքերով լեցուն հիւանդ մը կը տեսնէ պառկած, որ Աղաթոնին հարցուց՝ որ Աւր կերթաս կոր: Աղաթոնը ըսաւ, որ Ասոնք ծախելու համար քաղաք կերթամ կոր. հիւանդը ըսաւ, Սէր ըրէ՛ զիս ալ մէկ տեղ տար, ու բաներդ ծախելու տեղը դիր: Աղաթոնը եղբարսիրութե՛ համար շալկեց հիւանդը, ու կամքը կատարեց. հոն տեղը բաները ծախած ատեննը հիւանդը պլակինդի (պէօրէկ) ուղեց, Աղաթոնը գնեց տըվաւ իրեն, ետքը հողաթափ ալ ուղեց՝ ան ալ գնեց տըվաւ. ետեէն աղաչեց, որ տանի զինքը առած տեղը դնէ. Աղաթոնը ուրախութիւնով ու սիրով ան կամքն ալ կատարեց նէ՛ հիւանդը օրհնեց զինքը, ու աներևոյթ եղաւ. որ Ա՛յ հրեշտակն էր՝ եկած զինքը կը փորձէր կոր: Հարանց վարուց յէջը:

ԵՐՐՈՐԴ ԷՆՈՒՐ

Ինչպէս պէտք է սիրելու զԵս:

Կ. Թէ որ Աճ կուզէ, որ ընկերնիս մեզի պէս սիրենք, անանկ է նէ՛ կուզէ, որ մենք զմեզ ալ սիրենք:

Պ. Էրամներես, աղէկ կարգաւորված սէրը կուզէ, որ ուրիշներէն յառաջ զմեզ սիրենք:

Կ. Ի՞նչ կերպով պարտըկան ենք զմեզ սիրելու:

Պ. Այ համար՝ ու Այ ուզածին պէս՝ դիտաւորաբար մեղքէն փախչելով, որ մեզի ճշմարիտ չար է. ու մեր փրկութիւնը փոյթ տանելով, որ մեզի ճշմարիտ բարի է:

Կ. Ի՞նչ կերպով կրնանք զմեզ ուրիշներէն յառաջ սիրել:

Պ. Սարգու սիրուն կամ նկատմանը համար չար չի գործելով՝ ու մեր պարտուցը դէմ բան չընելով:

Կ. Որն որ իր փրկութե մնասովը միշտ աշխարհային հեշտութիւնները ձեռք բերելու կրմտմտայ նէ, անանկ մարդը ինքը զինքը կրսիրէ՞:

Պ. Այ, մանաւանդ ինքը իրեն մեծ թշնամութի կրնէ:

Կ. Ասանկ անկարգ սէրը ի՞նչ կըսվի:

Պ. Անձնասիրութի կըսվի:

հ. Ով որ ընկերին մոլութիւններուն ու մեղքերուն գործակից կըլլայ նէ, անիկայ ընկերը սիրած կըլլայ :

ա. Չէ, ընկերը կատէ, վնդի անոր դատապարտութիւնը գործակից կըլլայ :

հ. Գլխաւորաբար ի՞նչ բան պէտք է դիտել մեր ու ընկերին սիրուն մէջը :

ա. Սեր ու անոր հոգիներնուս փրկութիւնը պէտք է դիտել :

հ. Արժեք են զմեզ ու ընկերնիս սիրելուն ընդհանուր կանոնները :

ա. Ըստնք են. Ը՛յ պատւիրանացը համաձայն ինչ որ կուզենք, որ ընկերնիս մեզի ընէ, ան բանը մենք ալ իրեն ընել, ու ինչ որ չենք ուզեր՝ որ ան մեզի ընէ, ան բանը մենք ալ իրեն չընեն է :

Իսրայէլացիներուն տէրեաց երկրը  
մտնելուն պատմութիւնը :

Մովսէս մարգարէն մեռաւ նէ՛ Ը՛ծ Յեսուին հրամայեց. որ Իսրայէլի ազգը խոստացած երկիրը տանի, իր անունովը թշնամիներուն դէմ քաջութիւն պատերազմի, ու իր օգնութիւնը ապաւինի : Ը՛նջի արգելքը՝ որ Յեսուին դիմացը ելաւ, Յորդանան գետը անցնելն էր : Յեսու ապսպրեց բոլոր ժողովուրդին, որ մեղքերնէն մաքրուին՝ Ը՛յ մեծ հրաշքին ըս-

պասեն : Արկրորդ օրը քահանաներուն ըսաւ , որ տապանակ ուխտին առնուն , ու ժողովուրդին առջևէն երթան Յորդանան գետը մտնեն : Վահանաները ոտքերնին ջուրը դրածին պէս վերի ջուրերը վաղելէն կեցան , ու սկսան լեռան պէս վրայի վրա դիզվիլ , ու վարի ջուրերը վաղեցին դացին : Վահանաները տապանակ ուխտիով գետին մէջը կեցան , ու բոլոր ժողովուրդը ոտքերնին ալ չիթըջելով անցան տապանակին կեցած տեղէն : Ամէնէն յառաջ Արիքով քաղաքը պէտք եղաւ պաշարել , որ գոցված ու աղէկ ամրցրված էր : Յետու ըսաւ , որ օրը անգամ մը քահանաները տապանակ ուխտիով , ու փող հարկանելով՝ առջևէն բոլոր զօրքը ու ետևէն ժողովուրդը մեծ լռութիով քաղքին շրջանակը պտըտին : Աթեներորդ օրը նոյն կարգաւ եօթը անգամ պտըտելէն ետքը՝ հրամայեց Յետու , որ ամմէնը մէկէն սաստիկ պոռան : Աս ալ ըրածնին պէս՝ անմիջապէս քաղքին բոլոր պարիսպները փլան , ու զօրքը ներս մտան , ամմէն բանը աւրեցին քանդեցին , մինակ ոսկիէ ու արծրթէ եղած բաները առին , Այ ընծայեցին : Մինակ մէկը Ագար առնունով ան աւարէն քիչ մը բան առած պահած էր , ան ալ Այ հրամանաւը քար-



կոծելով մեռցուցին: Արկրորդ մեծ ար-  
գելքը աս եղաւ, որ հինկ թագաւորներ  
իրենց զօրքերովը մէկ տեղ միացան, ու  
սոսկալի բանակաւ մը Յեսուին դիմացը  
ելան: Յեսու Մ, Ե վրա մեծ յուսով՝ վրա-  
նին վաղեց, Մ, Ծ ալ իրեն օգնելու համար  
մեծ մեծ հրաշքներ գործեց՝ թշնամիներուն  
վրա՝ երկինքէ կարկտի պէս քարեր իջե-  
ցունելով, ու Յեսուին աղաչելովը արեգ-  
ակը ամբողջ օր մը իր տեղը անշարժ կե-  
ցունելով, որպէս զի Յեսու ժամանակ  
գտնալով աւելի կատարեալ ու նշանաւոր  
յաղթութի մը ընէ: Մ, սիկայ հաւատա-  
րիմ օրինակ մի է մեզի խոստացված ար-  
քայութե՛ն, հոն հասնելու պէտք եղած  
չնորհքներուն, որ տապանակաւ կրնշա-  
նակիլի, երկնաւոր բարիքները ձեռք բե-  
րելու համար երկրաւորները թող տալուն  
ու քաջութե՛ն, որով պարտրկան ենք Մ, Ե  
օգնութե՛ր յուսալով մեր թշնամիներուն  
դէմ՝ պատերազմելու, որ հարկաւոր օգ-  
նութիները մեզմէ չիխնայեր՝ երբոր խո-  
նարհ յուսով կրխնդրենք զանոնք: Յէսու:

Խորատ Թեր հոգ-ոյն զրկու-լէլը վրա:

« . Մ, Ծ զմեզ ստեղծեց, որ իրեն ծա-  
ւայելով փրկութե՛ն հասնինք, անոր հա-

մար աղքատ, հարուստ, մեծ ու պղտիկ մեր ամմէնուն՝ ամմէնէն հարկաւոր գործքը աս է. ով որ իր փրկութիւնը ձեռք կրբերէ, աղքատ ալ է նէ, ամմէն բանը վաստրկած կըլլայ. ով որ իր հոգին կրկորսընցունէ, աշխրքի ամմէն հարստութիւներն ալ ունի նէ, ամմէն բանը յաւիտեան կորսընցուցած կըլլայ<sup>1)</sup>:

Բ. Այն Արդին մինակ մեր հոգին փրկելու համար մարդ եղաւ, ու անչափ չարչարանքներ քաշեց: Անանկ է նէ մեր յաւիտենական փրկութիւնը անանկ հարկաւոր ու մեծ գործ մի է, որ անիկայ ձեռք ձգելու համար Վսի օրինակին հետեւելով հարկը կրպահանջէ նէ՝ ամմէն բանը զոհելու պարտրկան ենք, ու անանկ դժար գործ մի է, որ մեր բոլոր հոգը ան պիտոր ըլլայ<sup>2)</sup>:

Գ. Այն մեզի ամմէն օր անոր համար անչափ ներքին ու արտաքին շնորհքներ կուտայ, որ զմեզ արթընցունէ մեր յաւիտենական փրկութիւնը միտ դնելու, ու

- 
1. Չի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհ ամ շահացի, և զանձն իւր տուժեցէ. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. Ապր. Ժ. 26:
  2. Ար սիջ հրաժարեացի յամ ընչից իւրոց, սիջ կարէ իմ աշակերտ լինել. Ապր. Ժ. 33:

մեզի ասոր համար միջոցներ ալ կրմատա-  
կարարէ : Անանկ է նէ մեր յաւիտենական  
փրկութիւնը ամենէն հարկաւոր գործ մի  
է . թէ որ փրկուիլ կուզենք նէ , ինչւան  
մահը առանց ժամանակ կորսընցունելու  
աշխատելու ենք <sup>1)</sup> :

### ( ) Երկրորդ :

Այլ Պրունոնը որ լուսկացներուն կրո-  
նը հաստատեց , իր երիտասարդութեւ ա-  
տենը փարիզ քաղաքը գտնելեցաւ անձա-  
բանութի ու եկեղեցական օրէնք սորվելու  
համար : Ար ամեն բաները լմնցունելէն  
ետքը՝ ան քաղքին շատ անւանի վարժա-  
պետներուն մէկը մեռաւ : Արուն մահն ալ  
ցուցանքով մը եղած էր . բայց երբոր մար-  
մինը եկեղեցին տարած՝ կարգը կատարել  
սկսան նէ , մեռելը մէկէն ՚ի մէկ ելաւ , ու  
վախնալու ձանով մը պոռաց , Այ արդար  
դատաստանին առջևը ամբաստանվեցայ :  
Աս լսելով բոլոր ժողովուրդը մեծ վախի  
մէջ ինկաւ , վախճող վախճողի եղաւ :  
Արկրորդ օրը ժողովեցան , ու մնացած  
կարգերը կատարելու ատենը՝ Ասայի մար-  
գարէին գիրքը կարդալ սկսան նէ , մեռե-

1. Ահաւասիկ կամ ես առ դուրս և բախեմ . . . .  
Ար յազթէ՛ տաց նմա նստել ընդ իս յաթոս  
իմ . Յայ . 4 . 20 . 21 :

լը նորէն ելաւ, ալ աւելի վախնալու ձանձույթ պոռաց. Ա՛յ արդար դատաստանաւր դատվեցայ : Արրորդ՝ օրը ելաւ՝ անանկ զարհուրելի ձանձույթ պոռաց՝ ըսելով. Ա՛յ արդար դատաստանաւր դատապարտեցայ, ժողովուրդը վախէն ու դողէն երեսնին գոյն չիմնացած ժամէն ելան, ամմէն մարդ իր հոգւոյն փրկութեւն վրա մտմըտալով : Այ՛ Պրուենոնն ալ իր ընկերներովը մէկ տեղ հոն գտնւիլեցաւ, աս բանով Ա՛ճ իր սիրտը անանկ շարժեց, որ Ա՛յ դատաստանէն սիրտին մէջը սոսկալի վախ մը յղացաւ, որոշեց աշխարհքը բոլորովին թող տալու, գլուխը ընկերներ ժողովեց, անոնցմով մէկ տեղ բոլոր ունեցածնին աղքատներուն բաժնելէն ետքը գնաց Քսի հաղար հարուր մէկ թըւականին լուռ կեցողներուն կարգը հաստատեց, որ բոլոր կեանքերնուն մէջը ամենեւին չեն խօսիր, ու ինքն ալ մէջերնին անոնց բարի օրինակ ըլլալով, ու մեծ ճգնութիւններով իր հոգւոյն փրկութեւն ետեւէն ինկաւ. երևելի սք եղաւ. ու Քսի խօսքը կատարեց. Այ՛ «իբէ պանյի իւր՝ աբյակէ պնա. Այ՛ց վարէն յիջը իւրապարտվի :

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Հ Ա Ս Ա Ր

Եսպիսածոյ պատիւի բաններուն վրա :

հ. Ուր գրված է՝ ԱՅ, ընկերին ու մեր սիրուն պատւիրանները :

ա. ԱՅ պատւիրաններուն մէջը :

հ. Քանի՞ են ԱՅ պատւիրանները :

ա. Տասն են, անոր համար ալ տասնաբանեայ պատւիրաններ կրսվին :

հ. Աճբ տրվաւ Աճ աս պատւիրանները :

ա. Ազիպտոսէն ելլալէն յիսուն օր ետքը Սոփսէս մարգարէին ձեռքով Խորայէլի ժողովուրդին տրվաւ, ու Քն ալ վերջէն աւետարանի մէջ մեզի համար ալ հաստատեց զանոնք :

հ. Ան օրը հին օրէնքի մէջը ի՞նչպէս կրսվէր :

ա. Պէնտէկոստէ, այսինքն՝ յիսներորդ օր կրսվէր որ վերջը ան օրը Հոգի սբբ եկաւ, աս պատուիրանները կատարելագործելու և հաւատացեալներուն սրտին մէջը տպաւորելու համար :

հ. Աս պատւիրանները Սոփսէսէն ու հրէից օրէնքներէն յառաջ չէին պարտաւորեր :

ա. Արպարտաւորէին, փոզի ասոնք բնական օրէնքին մեկնութիւններ ըլլալով՝ ուղիղ բանը ամմէն մարդու կրտորվեցունէր :

հ. Անանկ է նէ ասոնք ամմէն մարդիկները կրպարտաւորե՞ն :



Պ. Հրամմերես, կռապաշտներն ալ ԱՅ  
դատաստանին առջևը ասոնց պահպանու-  
թիւր վրա պիտի դատովին :

Կ. Աս պատուիրանները ամմէն մարդ կըր-  
նայ պահել :

Պ. Հրամմերես, վնդի Աճ անկարելի բան  
չիհրամայեր :

Կ. Ի՞նչ գերազանցութի ունին աս պատ-  
ւիրանները :

Պ. Աս գերազանցութիւր, այսինքն՝ անանկ  
հարկաւոր են, որ ամենեւին չեն անօրին-  
վիր, ու ամմէն օրէնքները թէ եկեղեցա-  
կան թէ քաղաքական ասոր ներհակ բան  
օրինօք չեն կըրնար հրամայել :

Կ. Բսէ ինծի աս պատուիրանները :

Պ. Ա. Ես եմ Տր Աճ քո, մի ունիցիս  
զայլ Աճ առաջի իմ :

Բ. Սի յիշեր զանուն Աստուծոյ քո  
ընդունայն :

Գ. Յիշեա՛ զօր շարաթուն (զկիւրակէն)  
սրբել զնա :

Դ. Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի  
երկայնակեաց լիցիս ՚ի վն երկրի :

Ե. Սի սպանաներ :

Չ. Սի շնար :

Լ. Սի գողանար :

Ը. Սի սուտ վկայեր զընկերէ քումմէ :

Թ. Սի ցանկար կնոջ ընկերի քո :

Ժ. Եւ մի ամի, որ նր իցէ :

Լապտ-ճոյ պատմութեանսց պատկարահանելուն  
պատմութիւն :

Իսրայէլի ազգը Եգիպտոսէն ելլալէն  
քիչ մը ետքը Լճ Սոփտէս մարգարէին  
հրամայեց, որ քարէ երկու տախտակ-  
ներ պատրաստէ, ու Սինա լեռան վրա  
ելլայ : Արակի պէս ինչո՞ւ՞ ամպ մը կայ-  
ծակներ, փայլակներ արձակելով՝ երկինքը  
գոռալու ու փողերու սաստիկ ձաներով՝  
Լճ հոն ըլլալը իմացուց, որ բոլոր ժո-  
ղովուրդը գողալ սկսաւ . ժողովուրդին  
հրամայվեցաւ լեռան քովը չիմօտենալու :  
Սինակ Սոփտէսը իր սպասաւորը Յեսուին  
հետ ամպին մէջը մտաւ, ու քառսուն որ  
հոն մնացին առանց բան ուտելու . որ ժա-  
մանակը Լճ աս տասը պատուիրանները ան  
երկու տախտակներու վրա գրեց, ու բո-  
լոր օրէնքները ու հրէական արարողու-  
թիւնները Սոփտէսին սորվեցուց, որ իր  
պաշտօնին մէջը գործածեն : Լս միջոցին  
մէջը ժողովուրդը տեսնելով՝ որ Սոփտէսը  
ուշացաւ . կարծեցին՝ որ ալ պիտի չիգայ :  
Լհարոնին վրան թափվեցան՝ իրենց ոսկիէ  
հորթ մը շինել տրւին, ու առջևը յի-  
մարարար ուտելով, ըմպելով, խաղալով  
անոր երկրպագութիւն ըրին : Սոփտէսը լեռ-  
նէն վար իջաւ՝ ու եղած բաները տեսաւ

նէ՛ բարկութիւն զարկաւ օրէնքի տախտակ-  
 ները կոտրեց, ոսկի հորթը սյրեց փռի  
 ըրաւ, ու ջրով խառնած՝ կռապաշտ ժո-  
 ղովուրդին խմցուց: Ատքը ղեւտացիներուն  
 հրամայեց, որ սրերնին քաշեն՝ ան կռա-  
 պաշտութիւն ընողները մեռցունեն, որոնք  
 քիչ ժամանակի մէջը քսանւիրեք հազար  
 հոգի մեռցուցին: Ա՛ժ բոլորը կուզէր կոր  
 սատկըցունել, բայց Սոփսէս Ա՛յ աղաչեց՝  
 ու ժողովուրդը լալով թողութիւն խնդրեց  
 նէ, Ա՛ժ նորէն հաշտեցաւ, ու Սոփսէսին  
 հրամայեց, որ քարէ ուրիշ երկու տախ-  
 տակներ շինէ, ու անոնցմով լեռը ելլայ,  
 որ քառսուն օր ալ մնաց հոն տեղը, Ա՛յ  
 օրէնքները ու պատւիրանները առած, ու  
 երեսը լուսաւոր ճառագայթներով պայ-  
 ծառացած վար իջաւ, որ անով ժողո-  
 վուրդը սկսաւ զինքը պատուել: Ար օրինակ  
 է Ա՛յ օրէնքները յարգութիւնով ընդու-  
 նելուն՝ անոնց պահպանութեւնը դէմ եղած  
 մոլութիւններուն, ու անոնց զանցառութե-  
 ցը պատիժներուն: Ա. Է. Գ. Ը. Թ. Լ. Լ.:

Խորատ Ասորո-ժոյ պատուիրաննէ-րոն  
 պահպանու-լէ-ը վրա:

« . Ա՛յ օրէնքները ի՞նչք իրենցմէ  
 անսահման պատուոյ արժանի են, վնդի  
 Ա՛յ են, որուն ամմէն հնազանդութիւնը

պէտք է<sup>1)</sup>, անսահման սիրոյ արժանի են, վնդի ՄՅ և ընկերին սիրուն վրա հիմնած են, ու անսահման իմաստութիւնով տրրված են: Թէ որ ամմէն մարդ աս պատւիրանները պահելու ըլլար նէ՛ աշխրբի վրա ի՛նչ սքանչելի կարգ կըլլար<sup>2)</sup>: Յանցաւոր աշխրբի օրէնքները՝ բնութիւն բոլոր աստոնց ներհակն են, բոլորովին անարգ են, վնդի մարդկային կիրքերէն յառաջ եկած են, խիստ են, անիմաստ են ու հազար անկարգութիւններու պատճառ կըլլան, ինչպէս են շռայլութիւն, ունայն փառասիրութիւն, վրէժխնդրութիւն և ուրիշ օրէնքները:

Բ. Իսոյց մարդկային ծուլութիւն ՄՅ օրէնքներու մէջ դժարութիւններ ու պահանջումներ կըգտնէ՛ զինքը անոնց պահպանութիւն ազատելու համար, մեծ ուժ ու սիրտ պէտք է ընդդիմութիւններու դէմ Մստուծոյ օրէնքները պահելու համար<sup>3)</sup>. մեղաւորներու դժար ու անկարելի կերևնան, վնդի Մստուծոյ պատւիրաններ են. բայց ասոնք Մստուծոյ օրինացը հաւատա-

1. Եւ եմ Տր Մժ քո, որ հանի զքեզ յերկրէն եգիպտացոց ՚ի տանէ ծառայութեան: Սի՛ եղիցին քեզ անք բաց յինէն. Աւն. 1. 2. 3:
2. ՅՄստուծոյ երկիր՝ և զպատուիրանս նր պահան, վնդի այս է մարդն ամենեկին. Ժող. 13:
3. Օրէնք Տեառն անբիծ են. և դարձուցանեն զհոգիս. Սաղ. 11. 8:

րիմ գտնուիլու համար պղտիկ դժարու-  
թի մ' ալ քաշել չուղելով, ու աշխրբին  
աւելի դժար օրէնքները պահելով իրենք  
զիրենք կըդատապարտեն<sup>1)</sup> :

Գ. Կարգկային հպարտութիւնը Աստու-  
ծոյ օրինացը մէջ թեթեւ նիւթեր կըգտնէ,  
ու զանոնք չի պահելով իրեն վտանգ մը  
չիկայ կարծելով ինքը զինքը կըխաբէ,  
մտղի անանկով զինքը մեծ պատւիրաննե-  
րու դէմ ալ գործելու վտանգի մէջ կըգնէ.  
ասոր համար ան պղտիկ կարծրվածներուն  
պահպանութիւն ալ հարկաւոր է<sup>2)</sup> : Աս-  
տուծոյ դատաստանին առջևը Աստուծոյ  
օրէնքէն փախչողներուն դէմ պիտոր ամ-  
բաստանէ իրենց աշխրբի օրէնքներուն մէկ  
պղտիկին դէմ ալ չիգործելնին :

( ) Երևի :

Նարի ճգնաւոր մը շատ տարիներ ձի-  
թենեաց լեռան վրա աղօթքով ու ապաշ-  
խարանքներով կըճգնէր. սատանան ասի-

- 
1. Սիրեացես զՏՐ Աճ քո յամ սրտէ քումմէ . . . .  
սիրեացես զընկեր քո՝ իբրև զանձն քո : Յայս  
երկուս պատուիրանս ամ օրէնք և մարդարէք  
կախեալ կան . Ս՝աթԼ. Է՛. 37. 39. 40 :
  2. Ար ՚ի փոքուն անիրաւ է, և ՚ի բազմին ան-  
իրաւ է . Վ՝ա՛ : Ժ՛. 10 : Ա՛թէ կամիս ՚ի կեան-  
սրն յախտենականս մտանել՝ պահեա՛ զպատ-  
ուիրանս . Ս՝աթԼ. Ժ՛. 17 :

կայ անդադար կրփորձէր, բայց ինքը Մստուծոյ շնորհքովը կրյաղթէր: Ընդամ մ' ալ շատ փորձըված ատենը լալով ու հառաչելով ըսաւ. Մլ զիս թող տուր չար սատանայ, բոլոր կենացս մէջը զիս ասչափ փորձեցիր, ան բաւական է քեզի: Սատանան երեցաւ իրեն, ու ըսաւ. Քեզի բան մը պիտոր ըսեմ, թէ որ երդում կընես ուրիշի չըսելու նէ, ասկէ ետքը թող կուտամ զքեզ. ճգնաւորը սատանայէն խաբւելով երդում ըրաւ նէ, սատանան պատուիրեց իրեն, ըսելով. Չեմ ուզեր, որ ասկէ ետքը երկրպագութի ընես սք Մծածնայ պատկերին՝ գիրկը Յս մանուկով, որն որ խուցիզ մէջը ունիս: Ճգնաւորը գնաց՝ Թէոդորոս անունով սք ճգն ուրի մը խորհուրդ հարցուց աս բանիս վրա. և անոր խորհուրդովը սկսաւ առջինէն աւելի պատուել՝ յարգել ու երկրպագութի ընել ան ունեցած Յսի ու Մծածնայ պատկերին: Սատանան նորէն երեցաւ, ու սպառնացաւ իրեն երդումը չիպահելուն համար զինքը Մստուծոյ ամբաստանելու. որուն պատասխան տրվաւ ճգնաւորը, որ իր երդումը օրինաւոր չէր, վսզի կարգելուր կոր առջի ու հարկաւոր պատուիրանին պարտքը, որ Մստուծոյ պաշտօնն է: Լարոնց լարոնց Տէջե, ու Պէր. Անն. էր բրնարոնէտիան. Տէջե իրպար:



Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ի Հ Ա Ս Ա Ր

Աստուծոյ աստուծոյ պատճառներն Տէրնաւորն:

Հ. Ինչ կընշանակէ աս աստուծոյ խօսքը, էս է՛ Տէր Ա՛ճ ք:

Պ. Աստուծոյ պատճառները կընշանակէ, որոնց համար պարտական ենք Աստուծոյ պատճառներն պահելու:

Հ. Որոնք են աս աստուծոյ պատճառները:

Պ. Աստուծոյ արդարութիւն է, վստի պատճառովը Ա՛ճ է, որ մեր ստեղծողը ու բացարձակ Տէրն է. երկրորդը երախտագիտութիւն է, որ զմեզ փրկեց, ու սատանային գերութիւն աղատեց, որ Ազգայոսի ծառայութիւնը օրինակեցաւ:

Հ. Ինչ ըսել է. Տէրնաւորն զայն Ա՛ճ Բաց յինն:

Պ. Ըսել է, որ պարտական ենք հաւատալու, որ մինակ մէկ Ա՛ճ կայ՝ ու անկէ ուրիշ չիկայ, փառքը՝ պատիւը ու գերագոյն պաշտօնը անոր կըվայլէ, և ուրիշին չիվայլեր:

Հ. Ինչպէս պէտք է, որ ըլլայ աս պաշտօնը կամ ծառայութիւնը:

Պ. Պէտք է, որ ներքին ու մէկ տեղ արտաքին ալ ըլլայ:

Հ. Ինչո՞ւ համար ներքին պիտոր ըլլայ մինակ արտաքինը չի՞ բաւեր:

ող. Չէ, վնդի Մճ մաքուր հողի ըլլալով՝  
կուղէ, որ իր երկրպագութիւն ալ հողւով  
ու ճշմարտութիւնով ըլլայ :

հ. Ինչո՞ւ արտաքին ալ պիտոր ըլլայ, մի-  
նակ ներքինը չի՞ բաւեր :

ող. Չէ, վնդի մարդը հողիէ ու մարմինէ  
բաղկացած ըլլալով՝ երկուքովն ալ պար-  
տրկան է զՄճ պաշտելու, և ուրիշ մար-  
դիկներու առջևն ալ իրեն ծառայելու և  
զինքը փառաւորելու :

հ. Մճ աս պատւիրանաւ ի՞նչ կարգելէ :

ող. Առապաշտութիւն՝ կախարդութիւն՝ ա-  
ւելորդապաշտութիւն՝ կեղծաւորութիւն, ու  
բոլոր Մստուծոյ պաշտօնին ու ծառայու-  
թեւը գէմ՝ եղած մեղքերը կարգելէ :

հ. Առապաշտութիւն ի՞նչ է :

ող. Ողորմելի ստեղծւածի մը անծային պաշ-  
տօն մատուցանելն է, որուն կամ՝ ինչ բանի  
կըլլայ նէ՝ ըլլայ :

հ. Կախարդութիւն ի՞նչ է :

ող. Չար արեւտ մի է՝ սատանային ձեռ-  
քովը զարմանալի բաներ ընելու, կամ  
ուզելու, ինչպէս վերջէն ըլլալու բաները  
գուշակելը, ու անոր նման բաները :

հ. Աւելորդապաշտութիւն ի՞նչ է :

ող. Պարսպ բաներու ապաւինելն է, որ  
չեն արժանի, ինչպէս երազի՝ մոգերուն

գուշակութիւնը հաւատալ, ու ալ ասանկ բաներն են :

հ. Անհաւատութիւնը ի՞նչ է :

ող. Անհաւատութիւնը մի է, որ անով մարդը դրսւսէն բարեպաշտութիւնը ցուցունելու կը ջանայ, որ ներսէն անանկ չէ :

Ղանիէլ Գարգարէի պատմութիւնը :

Նաբիլոնի ժողովուրդը Նէլ անունով կուռք մը կը պաշտէին, որուն ամմէն օր շատ միտ ու գինի կուտային, կարծելով, որ զանոնք Նէլը կուտէ կոր : (Թագաւորը ամմէն օր կերթար անոր երկրպագութիւնելու : Ղանիէլ մարգարէն թագաւորին սիրելին ըլլալով՝ զինքը աս խաբէութիւնէ ազատելու համար իրիկուն մը թագաւորին առջևը Նէլին տաճարին յատակը բարակ մոխիր ցանել տրվաւ, ու անոր կնքովը դուռը կնքեց : Արկորդ օրը դուռը բացին, ու Ղանիէլը ցանած մոխիրին վրա իրեն էրիկ մարդու՝ կնիկներու և տղոց ոտքի տեղեր ցուցուց : Ան ատենը թագաւորը բարկացաւ՝ քուրմերը կանչեց, խաբէութիւնին երեսնին զարկաւ, որ հարկաւորեցան իրենց գետնի տակէն դադտուկ ճամբաները ու դռները ցուցունելու, ուր տեղաց որ իրենց բոլոր ընտանիքներով կը մտնէին ուտելու խմելու համար : (Թագա-

ւորը զիրենք բոլոր մեռցունել տրվաւ ,  
Ղանիէլն ալ կուռքը ու տաճարը փլցուց :  
Մարկոնի ժողովուրդը զարհուրելի վիշապ  
մ' ալ կրպաշտէր : Ղանիէլը թագաւորին  
ըսաւ , թէ որ հրաման կուտաս նէ , ա-  
ռանց զէնքի ան ալ կըրնամ մեռցունել :  
Թագաւորը հրաման տրվաւ . Ղանիէլը  
եղ , ձէթ , ճարպ ու մազ խառնեց , մէկ  
տեղ եփեց , կլոր բան մը շինեց , ու վի-  
շապին բերանը նետեց , որ կուլ տրվածին  
պէս ճաթեցաւ : Մտիկայ է ձեր Մծը ըսաւ  
Ղանիէլը բարելացիներուն : Մնոնք ալ  
շատ բարկացան , ու թագաւորը մեռցու-  
նել ուզեցին՝ թէ որ Ղանիէլը ձեռքերնին  
չիտար նէ : Ար հարկադրված տրվաւ Ղա-  
նիէլը իրենց ձեռքը . առին զինքը առիւծ-  
ներու գուբը ձգեցին , ուր տեղ եօթը որ  
մնալէն ետեւ թագաւորը գուբին քովը ե-  
կաւ՝ իր մեռելին վրա լալու համար : Արբ-  
որ տեսաւ , որ կատաղի առիւծներուն  
մէջը հանգիստ կընստէր , շուտով զինքը  
գուբս հանել տրվաւ , ու անոր տեղը անոր  
թշնամիները նետել տրվաւ . որ վար հա-  
սածնին պէս առիւծները փարատեցին զի-  
րենք , ու կերան : Ատքը թագաւորը սա-  
տիկ հրաման հանեց , որ բոլոր ին թագա-  
ւորութե մարդիկները Ղանիէլին պաշտած  
բոլոր աշխրբիս Մծը պաշտեն : Ղան . ԺԳ :

Խորհրդ Ը՛յ Զատուայո-Ը-Էլ ՉԼԹ :

« . Սարգուս զինքը ու աշխարհքը տեսնելով զԸ՛ծ չիճանչնալը՝ որ բոլոր ասոնց արարիչն է, մեծ կուրուձի ու յիմարուձիւն է <sup>1)</sup> . քան թէ փառաւոր տուն մը տեսնելով անոր ճարտարապետը ճանչնալ չուզելը, իմաստութե՛ն գիրք մը կարդալով անոր հեղինակը չընդունելը, աղւոր պատկեր մը տեսնելով անոր պատկերահանը չիճանչնալը . կարծելով որ բոլոր ասոնք իրենք իրենցմէ եղած են :

Բ . Ը՛ծ մը ճանչնալ՝ բայց մինակ զինքը չիպաշտելը, ու իրեն վայլած անձային երկրրպագուիլը ու պատիւը իրեն չընծայելը՝ կարծելով որ ինքը անհոգ կեցեր է, ու աշխարհքը թողուցեր է, որ ինք իրմէն ինչ որ կուզէ՝ ըլլայ՝ ան մը հաւտալ է, որ ճշմարիտ Ը՛ծ չէ՝ հապա անբան է, առանց վախճանի, կամ առանց իրեն վայլելու վախճանի գործող է : Ճշմարիտ Ը՛յ գործոց վախճանը ուրիշ բան չիկրնար ըլլալ՝ բայց եթէ իր փառքը, վնդի իրմէն մեծ՝ կամ իրեն հաւասար մը չիկայ, որ

---

1. Արկինք պատմն գիառս Ը՛ստուծոյ . և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութի Սուրբ Գրքի . 1 :

իր գործքերուն փառքը անոր կարող ըլլայ  
կարգել <sup>1)</sup> :

Գ. Մ.Ճ մը ճանչնալ ու ղինքը պաշ-  
տել, բայց անոր պատուիրաններուն չիճը-  
նազանդիլը՝ իր անձնական գործքերը Մ.Յ  
սէրէն վեր դասելով չափէ դուրս ինք ի-  
րեն հակառակ գործել է, որուն մէջը  
կիյնան մեղաւորները <sup>2)</sup> :

( ) Երևակ :

Քանի մը իմաստուններ սք Մ.նտոն  
ճգնաւորը տեսնելու գացին, իրեն հետ  
չատ բաներու վրա խօսեցան ու վիճեցին՝  
զարմանալով անոր խօսքերուն իմաստունը  
ու հաստատունը վրա, ու կարծելով որ  
յառաջուց սորված ու ետքը անապատ ե-  
կած է՝ առանձնուն մէջը հանգիստ գիտուն  
ետեէ ըլլալու համար, անոր համար ալ  
չատ գրքեր հետը բերած է. ուղեցին ան  
գրքերը տեսնել, որոնց մէջէն սքը ասանկ  
գերազանց վարդապետութիւնը կը հանէր  
կոր : Մ.ն ատենը սք Մ.նտոնը ղիրենք  
խուցէն դուրս հանեց, ու մէկ ձեռքով  
երկինքը, ու մէկալովը երկիրը ցրցունե-

- 
1. Տեառն Մատուծոյ քում երկիր պագցես, և  
զնա միայն պաշտեսցես. Մատ. 7. 10 :
  2. Աթէ հայր եմ, ուր են փառքն իմ. և եթէ Տք  
եմ, ուր է պատին իմ. Մատ. 6 :



լով ըսաւ իրենց . Մինակ ասոնք են ան  
մեծ գիրքը , որոնք ես գիշեր ցորեկ կը  
սորվիմ . թէ որ ամմէն մարդ ուղէր ա-  
սոնք աղէկ սորվիլ , ու Մ.Յ անսահման ի-  
մաստութե՛ն՝ կարողութե՛ն՝ բարութե՛ն ամմէն  
գործքերը մտմտալ նէ՛ որ կերենան աշ-  
խարհի ստեղծագործութե՛ն՝ ու բոլոր ասոնց  
կառավարութե՛ն ու պահպանութե՛նը մէջ ,  
անանկ իմաստուն կը լլար , որ ամմէն մէկ  
ստեղծածը տեսած ատենը , անոնց ստեղ-  
ծողին կատարելութիւնը կը ճանչնար : ՄԷ  
Լ.Լ.ան . Իւրապէս «Է՛ Լ.ն. . Չորսին Բ.Չ. :

Վ.Ն.Յ.Ն.Բ.Ո.Բ.Դ. Հ.Բ.Մ.Բ.Բ

Մ.Յ աս-ըն պատ-իւրանին շար-նա-ի-ն-Է.Է.Է. :

Կ. Մ.Յ.ի պատւիրանը կատարելու հա-  
մար բաւական է Մ.Յ հաւտալ , ու մինակ  
զինքը պաշտել :

Պ. Չէ , զինքը սիրելու ալ է , որ ամ-  
մէն պատւիրաններուն մեծն է :

Կ. Մ.Յ արդէն անսահման բարի ու սիրելի  
է , ասոր համար հարկաւոր էր մասնաւոր  
պատւիրան դնել :

Պ. Մ.Յ հարկաւոր դատեց՝ գիտնալով մեր  
սրտերուն տկարութիւնը ու խստութիւնը :

Կ. Ի՞նչ կերպով պարտրկան ենք զՄ.Յ  
սիրելու :

դ. Վ. Բ. աս խօսքերով մեզի սորվեցուց .  
Վ. ու Տ. Բ. Ը. քու բոլոր սրտովդ՝ բոլոր  
հոգևովդ՝ բոլոր մտօքդ ու բոլոր զօրու թիք  
սիրես :

հ. Մ. աս աշխրբի մէջ աս պատւիրանը ինչ  
պէս որ պէտք է նէ՝ կրնանք կատարել :

դ. Մ. Ե. սէրը աշխրբիս մէջը մեր վրա ոչ  
երբէք կրնայ կատարեալ ըլլալ, ասիկայ  
մինակ արքայու թե՛ մէջ կը լլայ :

հ. Ուրեմն Վ. Բ. ինչո՞ւ ասանկ մեկնեց աս  
պատւիրանը :

դ. Սեզի սորվեցունելու համար, որ պար-  
տրկան ենք Մ. Ե. սիրուն մէջը միշտ յա-  
ռաջ երթալու, և մտածելու, որ ինքը  
անսահման սիրոյ արժանի է, ու մենք չենք  
սիրեր կոր :

### Մագդաղենացւոյն պատմութիւնը :

Սորիամ Մագդաղենացի մեղաւոր կը  
նիկը լսելով՝ որ Յ. Բ. փարիսեցի Միմոնին  
տունը գացեր՝ ու առանց քաշվելու ան  
փարիսեցւոյն սեղանը նստեր է, ու միան-  
գամայն իր մեղքերուն վրա սրտին մէջը  
զղջումի գալով՝ ժամանակ չիկորսընցուց,  
երկնաւոր վարդապետին վրա յուսով ու  
սիրով լեցվեցաւ, ու գնաց Յ. Բ. քովը՝  
կերակուր կերած տեղը, ամմէնուն առ-

ջեր ոտքը ինկաւ, ու սկսաւ աչքին ար-  
 ցունքներովը Յսին ոտքերը լուալ՝ գլխուն  
 մազերովը սրբել, ու անուշահոտ աղնիւ  
 իւղով օծանել, անով՝ որ յառաջ իր մար-  
 մինը կօծանէր՝ ուրիշին մեղքի պատճառ  
 րլալու համար, անիկայ իրեն ապաշխա-  
 րութե գործիք ըրաւ՝ Յսէն թողութի  
 գանելու համար: Իր աղէկ անունը՝ որն  
 որ յառաջ մեղաւոր երևնալէն չիվախնա-  
 լով հեշտութիներուն զոհած էր նէ՝ զա-  
 նիկայ հոս տեղս Մյ զոհեց. զինքը աչ-  
 խրքի մարդիկներուն բամբասանքներուն  
 մատնելով, ու ապաշխարող երևնալէն  
 չիվախնալով: Իրաւ՝ փարիսեցին մտքին  
 մէջը զինքը անարգեց, բայց Յս ջատա-  
 գովեց, ու իր մեղքերուն թողվիլը յայտ-  
 նեց, որչափ ալ շատ ու ծանր էին նէ,  
 վսզի իր սաստիկ սիրովը իր սխալանքին և  
 դարձին արդար հատուցումը ըրաւ: Ընկէ  
 ետքը օրէ օր ալ աւելի յառաջ գնաց ա-  
 սանկ աղէկ սկսած Յսի սիրուն մէջը, բա-  
 րեպաշտ կնիկներու հետ մէկ տեղ Յսի  
 ընկերացաւ ինչպան Գողգոթա լեռան  
 վրա. ու Յսի մահւանէն ետքն ալ կիւ-  
 րակի առտու կանուխ ինքը ամմէնէն յա-  
 ռաջ գերեզմանը գնաց. երբոր գերեզ-  
 մանի մէջ Յսի մարմինը չիգտաւ նէ,  
 անմխիթար լացաւ, որ անով ալ երկու

հրեշտակներէն մխիթարվելու արժանի եղաւ . ու Յն ինքն ալ սբ մօրէն ետքը ուրիշներէն յառաջ իրեն երեցաւ , ու իր փառաւոր յարութիւնը առաքեալներուն աւետարանելու համար զինքը խրկեց :  
 Գլ. 1. Է. Յ. 1. Է :

Խորհրդ Լ՛Յ սիրուն եղանակն զլա :

Մ . Օ՛Լ՛Տ պէտք է , որ մեր բոլոր մտքով սիրենք <sup>1)</sup> . երկնաւոր զին ունեցող սէրը զ՛Լ՛Տ չէ որ մինակ մտքով ամմէն բանէն վեր կըսեպէ , հապա գործքով ալ : Որ Լ՛Յ բաղդատութիովը ամմէն բանը ոչինչ կըսեպէ , ու մեզի մեր ամմէն խորհուրդները՝ խօսքերը՝ ու գործքերը Լ՛Յ ընծայել կուտայ <sup>2)</sup> :

Բ . Օ՛Լ՛Տ պէտք է , որ մեր բոլոր սրբտովը սիրենք . ճշմարիտ սէրը ան է , որ զմեզ կըշարժէ Լ՛ստուծոյ սիրուն ներգործութիւր շատ անգամ ընելու . մեզի ջանալ կուտայ զ՛Լ՛Տ ժառանգելու . մեզի բաղձալ կուտայ , որ ամմէն տեղ ծառայեն ու փառաւորեն զ՛Լ՛Տ . ու զմեզ

1. Սիրեցես զՏբ Լ՛Տ քո յամ սրտէ քումմէ , և յամ անձնէ քումմէ , և յամ մտայ քոց , և յամ զօրութենէ քումմէ . Ս՛րբ . Է՛ . 30 :
2. Սի բանիւք և լեզուօք սիրեցուք , սյլ արդեամբք և ճշմարտութք . Մ . Յ՛Տ . Է . 18 :

կրբորբորքէ Մատուծոյ բաներուն մէջը, սյս  
ինքն Մատուծոյ խօսքը լսելու՝ Մատուծոյ  
օրէնքներուն վրա մտածելու, ու ասոնց  
նման հոգևոր բաներու մէջը <sup>1)</sup> :

Գ. Օ՛րձ պէտք է մեր ամմէն կարողու-  
թիով ու զօրութիով սիրել. ճշմարիտ  
սէրը գործքով ալ պիտոր երևնայ՝ Մա-  
տուծոյ հաճոյ ըլլալու բաները սիրով կա-  
տարելով, ու անհաճոյ ըլլալու բանե-  
րէն փախչելով <sup>2)</sup> :

### ( ) ր ն ա ի :

Մք Իգնատիոս անձազգեսաց եպիսկո-  
պոսը քառսուն տարի Մնտիոք եպիսկո-  
պոսութի ընելէն ետքը՝ իր ժողովուրդը  
միշտ Մատուծոյ սիրուն վրա՝ եկեղեցւոյ  
հնազանդութե վրա, ու հերետիկոսներէն՝  
կատղած գազաններէն ու շուններէն փախ-  
չելու պէս փախչելուն վրա խրատելով,  
ու իր սքանչելի սրբութիւնը իրենց բարի  
օրինակ ըլլալով, Տրայիանոս կռապաշտ

1. Որպէս սիրեաց զիս Հայր, և ես սիրեցի զձեզ.  
հաստատուն կացէք ՚ի սէր իմ: Աթէ պահե-  
ցէք զպատուիրանս իմ, կացջիք ՚ի սէր իմ.  
Յովհ. Ժ. 9. 10:

2. Օրնչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ՚ի քէն  
զի՞նչ խնդրեցից յերկրի: . . . Մձ սրտի ի-  
մոյ. բաժին իմ Մատուած յաւիտեան. Սաղ.  
Ժ. 20. 21:

կայսրը Մնտիոք եկաւ, ու լսելով՝ որ սք  
Իգնատիոսը կուռքերու անհաշտ թշնա-  
մին, ու Վնի սք հաւատքին պաշտպանն  
է, զինքը կանչել տրվաւ, ու ըսաւ .  
Իրաւ է ինչ որ քու վրադ լսեցի նէ .  
Սքը պատասխան տրվաւ, որ Աս ճշմարիտ  
Մծը կը պաշտեմ, ու որչափ երջանիկ կը լ-  
լայիր, թէ որ գուն ալ քու տէրութիւնդ  
մէկ տեղ զինքը պաշտէիր . քու պաշտած  
կուռքերդ չարագործ սատանաներ են,  
որոնց չեմ կրնար երկրպագութի ընել :  
Կայսրը խօսքը լմնցունելուն չըսպասեց .  
Հիմայ վիճելու ատեն չէ՝ ըսաւ . թէ որ  
չածներու կը պոհես նէ, զքեզ Վիոսի  
քրմապետ կընեմ, չէ նէ՝ անողորմ տան-  
ջանքներուն մէջը պիտի մեռնիս : Աս Մ-  
մենակարողին քահանան եմ՝ ըսաւ, որուն  
որ ամմէն օր պատարագ կը մատուցանեմ,  
ու զիս բարեբաղդ կը սեպէի, թէ որ ինքը  
զինքս կարող ըլլայի իրեն պատարագե-  
լու : Կայսրը շատ բարկացաւ . հրամայեց,  
որ զինքը շուտով Հռովմ տանին՝ առիւծ-  
ներու առջևը ձգեն : Սք Իգնատիոսը ա-  
սիկայ լսելով՝ սիրտը անպատմելի ուրա-  
խութիւնով լեցվեցաւ, ու բարձր ձանով  
կանչեց . Մծ իմ՝ քեզի անսահման փառք  
կուտամ, աս բարիքը ինձի ըրէ, որ քեզի  
ունեցած իմ սէրս ամմէնուն առջևը ցը-



ցունեմ՝ իմ կեանքս զոհելով: Ու զինքը  
կապելու եկան նէ, շղթան պագաւ, ու  
ձեռվըները ինք իր կամաւը երկնցուց:  
Հռովմ երբոր կայսեր հրամանը կատա-  
րելու համար կրտանէին կոր զինքը նէ,  
Մատուծոյ աղաչեց որ առիւծները չարգե-  
լու զինքը փարատելէն, Մճ ալ իր աղա-  
չանքին լսելով՝ առիւծները վրան կրվա-  
ղէին կոր նէ, ամուր ձանով ըսաւ. Ես  
Վնի ցորեանն եմ, պէտք է որ, գազան-  
ներու ահուաներովը աղացվիմ, որ մաքուր  
հաց ըլլամ: Մսանկ ցուցուց սք Իգնա-  
տիոսը, որ զՄճ բոլոր մտքով, բոլոր  
սրտով, ու բոլոր զօրութեամբը կրսիրէր:  
Հոսիայի Վայոթառնու-Լէ Դըս Իւրապ:

### ԵՕԹՆԵՐՈՐԻ ՀԱՄԱՐ

Սուրբ Երան պաշտօնին զոս:

Կ. Սք Մճաճնայ ու սուրբերուն պաշ-  
տօն մատուցանելը ՄՅ պաշտօնին դէմ չէ:  
Կ. Չէ, վսղի զանոնք անձային պատուով  
չենք պատուեր, մինակ իբրև Մատուծոյ  
բարեկամները կրպատուենք, անոր համար  
սքերուն պաշտօնն ալ զլիսաւորաբար Մս-  
տուծոյ կրմատուցվի:

Կ. Ինչպէս կրղանաղանվին ու ինչպէս

կրսովին Մատուծոյ՝ սբ ՄԹաճնայ ու սուրբերուն պաշտօնները :

Պ. Մատուծոյ պէտք եղած պաշտօնը անպաշտութի կամ գերագոյն պաշտօն կրսովի, սբ ՄԹաճնայ պաշտօնը գերձառայութե, սյսինքն՝ սուրբերուն պաշտօններուն մէջը գերագոյնը՝ ու սուրբերունը՝ ձառայութե, սյսինքն՝ Մատուծոյ ձառաներու՝ պաշտօն կրսովին :

Է. Յսի միջնորդութե պաշտօնին դէմ չէ սբերուն աղաչելը Մատուծմէ շնորհք առնելու համար :

Պ. Չէ, վսզի սբերուն չենք աղաչեր, որ մեզի շնորհք տան, այլ բարեխօս ըլլան Մատուծոյ, որ իր Որդին Յսի արդիւնքներուն համար մեզի շնորհք տայ :

Է. Սբերուն մասունքներն ալ պարտրկան ենք պատուելու :

Պ. Հրամմերես, վսզի իրենց մարմինները կենդանութե ատենը Հոգի սբին տաճար եղած են, ու վերջը փառաւորված Հոգիներնուն հետ միաւորվին պիտոր, անոր համար պատուելու արժանի են :

Է. Մնոնց պատկերները ու արձաններն ալ պատուելի են :

Պ. Հրամմերես, վսզի զանոնք աչքերնիս առջևը կրբերեն, որոնց որ արձան կամ պատկերն են նէ :

Կ. Արբոր պատկերները կամ արձանները կը պատուենք նէ, ան պատիւը ոսկին՝ արծաթին՝ փատին՝ կամ քաշվածին չերթար :

Պ. Չէ, անոնցմով մինակ զՅս՝ սք Մծածինը կամ սքերը մտքերնիս կը բերենք ու կը պատուենք, որ երկինքն են :

Կ. Հապա սք գիրքը ինչո՞ւ կարգելու պատկեր կամ արձան չինելը :

Պ. Անգի կուսպաշտները անոնց վրա անձական զօրութի մը կայ կարծելով՝ զանոնք իրենց համար կը պատուէին, որ անանկ պատուելը միշտ արգելած է, բայց մենք անանկ չենք պատուեր :

### Նիկանոյժէն պատմութիւն :

Նիկանոյժը Յուդա Սակարէին դէմ շարաթ օրը պատերազմել ուղելով՝ իր զօրքէն քանի մը հողի իրեն ըսին, Արկինքի թագաւորը ամենակարող Մծ հրամայած է, որ շարաթ օրը պահենք, ու իրեն սրբենք : Աս ալ, ըսաւ անօրէն Նիկանոյժը, երկրի վրա կիշխեմ, ու կը հրամայեմ, որ պատերազմը լի : Յուդա Սակարէ՝ որուն զօրքը շատ քիչ էր, բայց Մծ օգնութիւնը ապաւինելով ու կատարեալ յուսով իր զօրքին սիրտ տրվաւ, որ Մստուծոյ ապաւինին : Իրենց պատմեց, որ

տեսիլքի մէջ զՍնիա սք քահանայապետը տեսած էր, որ ՄՅ աթոռին առջևը ձեռքերը տարածած՝ Խորայէլի ժողովուրդին համար ջերմութիւն կաղաչէր կօր, վերջը սք Արեմիա մարգարէն զարմանալի փառքերով զարդարւած՝ եկաւ նէ՛ Սնիան զինքը մատովը Յուդա Սակարէին ցուցունելով իրեն ըսած էր՝ որ ասիկայ ան մարդն է, որ Խորայէլը՝ ու սք քաղաքը շատ կըսիրէ, ու անոնց պահպանութեք համար անդադար կաղօթէ, ան ատենը Արեմիա մարգարէն Յուդային ձեռքը ոսկի սուր մը տրւած էր, ըսելով. ՄՆ աս սք սուրը, որ ՄԾ կըպարգևէ քեզի, ու ասով բոլոր թշնամիները յաղթէ : ՄՍ խօսքերով Յուդային զինւորները հոգի առած՝ Աիկանովրին դէմ աւելի աղօթքով քան զէնքով պատերազմեցան, որուն զօրքէն երսուն ու հինգ հազար հոգի սպաննեցին, որոնց մէջը անօրէն Աիկանովրն ալ ինկած մեռած էր : Յուդա Սակարէն անօրէնին գլուխը և աջ ձեռքը կտրել ու Արուսաղէմ տանել տրւաւ, ու հոն տեղը լեզուն մանր կտրտած թռչուններուն կերակուր տրւաւ, ձեռքը՝ որն որ անմտութիով ՄՅ տաճարին վրա երկընցուցած էր նէ, տաճարին դրան վրա կախել տրւաւ, ըսելով՝ որ աս ձեռքը

ասիկայ՝ որմզդական կուռքի տաճար պիտոր ըներ, գլուխն ալ բարձր բերդին վրա կախել տրվաւ, որ ամմէնը տեսնեն: Ան օրն ալ միաբան հաւանութիով՝ ամմէն տարի տօն պահելու ուխտեցին՝ Ոնիա սք քահանայապետին ու սք Արեմիա մարգարէին բարեխօսութիւնը Այ պարգևած յաղթութեան շնորհակալութիւնը համար՝: Բ. Անիա. Ժ. Ժ. Ժ. Ժ.:

Խորատ «Բէրունի պաշտօնին վրա»:

«. Սքերը Այ բարեկամներն են, անոր համար պատուելու արժանի են<sup>1)</sup>, պատիւները՝ որ սքերը երկրի վրա մեղմէ կրնդունին, երկինքը ունեցած պատիւներուն ցոյցքն են: Արկինքը իրենց փառքերը մարուր են՝ մէջը խառնած չարիք մը չիկայ, կատարեալ են՝ ամմէն բաղձանքնին կրկնատաննեն, ու հաստատուն են՝ որ երբէք չեն կորսրվիր<sup>2)</sup>: Ասոր ներհակը աշխրրքիս փառքերը միշտ նեղութիւններով խառն են, սահմանաւոր են՝ պակասաւոր են՝ կորստական են, ու քիչ ժամանակ կրտեն:

1. Ինձ յոյժ մեծարու են բարեկամք քո Ա. Բ. Անի. Ժ. 17:

2. Իման նմա լինելոց եմք. զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էճ. ա. Գ. Ժ. 4. 2:

բ. Մբերը մեր պաշտպաններն են, անոր համար զիրենք պարտական ենք մեզի օգնութի կանչելու, իրենք որ աս անցաւոր կեանքին մէջ ընկերնին կըսիրէին նէ, որչափ աւելի կըսիրեն հիմայ արքայութե մէջ, ՄԾ ալ թէ որ ան ատենը իրենց աղաչանքին կըլսէր նէ, որչափ աւելի կըլսէ հիմա երկինքը<sup>1)</sup>:

գ. Մբերը մեզի օրինակ են, անոր համար պիտի ջանանք իրենց նմանելու<sup>2)</sup>, անոնք ալ մեզի պէս էին, մենք ալ իրենց պէս կըրնանք ըլլալ. սբ ըլլալու համար մեր արգելքները իրենց արգելքներէն մեծ չեն, նոյն օգնութիները ու միջոցները մենք ալ ունինք, ու անոնց դիրքերը ու վարքերը առջևնիս ունենալով՝ մենք անոնցմէ ալ աւելի ունինք, թէ որ հիմա անոնց նայելով չենք դառնար նէ՝ ետքը անոնց նայելով ամբողջանք պիտոր:

### ( ) ր ն ա ի :

Բարեպաշտ մարդ մը իր ճանչցած կնկան մը հողւոյն համար ՄԾ անդադար աղօթք կընէր՝ ու պատարագներով և ու-

1. Կարդացին արդարքն առ Տր. և Տր լուաւ նոցա. Սաղ. 12. 18:

2. Զգո՛ղ լեր որպէս ցուցաւ քեզ օրինակն . . . . արասցես. Աւել. 11. 40:



րիշ բարի գործքերով կաղաչէր : Օր մը սք Պետրոս առաքեալը երեցաւ ասոր , ու ըսաւ . Են կնկան հոգին՝ որուն համար որ կաղօթես կոր՝ քաւարանն է , իր հագվելու կապվելու ունայն բաղձանքին համար կրակներու մէջ կերի կոր . իր համով կերակուրներու ետեւէ ըլլալուն համար՝ անօթիութիւնով ու ծարւով կրտանջովի կոր , ու իր տանը ու զաւկրներուն կառավարութեը աղէկ չինայելուն համար երբեմն սաստիկ ցուրտի մէջ ալ կը շարձարվի կոր : Իայց՝ կըսէ սք առաքեալը , կենդանութեատենը ինծի շատ ջերմեռանդ ըլլալուն համար՝ մահւանը ատենը Եստուծմէ իրեն զղջման շնորհք ու մեղքերուն համար թողութի առի , հիմայ ալ զինքը ան տանջանքներէն ազատելու համար շատ կաշխատիմ կոր : Ես ըսաւ Պետրոս առաքեալը , ու աներևոյթ եղաւ : Վանջարան օրէնս . Դժը իրպարս :

### ՈՒԹԵՐՈՐԴ ԷՆՍԵՐ

Եստուծոյ երկրորդ պարտիւնին զեռ :

Կ . Ե՞նչ ի՞նչ կը հրամայէ՝ ու ի՞նչ կարգելու աս երկրորդ պատուիրանով . Ք՞ յիշէ՞ զանոնն Եստուծոյ և՛ ընդոննայն :

- ող. Արհրամայէ, որ իր սքե՛ անունը պատ-  
ւենք, և կարգելու՝ որ զանիկայ չանարգենք:  
հ. Ի՞նչպէս կը պատուրի Մստուծոյ անունը:  
ող. Օ՛րհիկայ պարսպ տեղ բերան չառ-  
նելով, ու մեր կարօտութի՛ններուն մէջը  
պատուով ու յուսով օգնութի՛ կանչելով:  
հ. Մստուծոյ սքե՛ անունը ինչո՞վ կանարգի:  
ող. Ի՛նչէքով՝ հայհոյութի՛ով. ու եր-  
գումով:  
հ. Մստուծոյ սքե՛ անւանը հայհոյութի՛  
ընելը մեծ մեղք է:  
ող. Ի՛ժոխոց արժանի մեծ մեղքերուն  
մէկն է:  
հ. Հայհոյութի՛ր Մստուծոյ անւանը չըլ-  
լար նէ՛ մեղք չէ:  
ող. Ի՛մմէն տեսակն ալ մեղք է, ալ աւելի  
սքե՛ բաներու գէմ՝ որ կը լայ նէ՛ իրենց ա-  
նունները անպատուութի՛ գործածելով:  
հ. Երգումը ի՞նչ բան է:  
ող. Օ՛րձ ճշմարտութե՛ վկայ բերելն է:  
հ. Պարսպ տեղ երգումը ի՞նչ բան է:  
ող. Ի՛ռանց հարկի՛ ու թեթեւ բաներու  
վրա երգում ընելն է:  
հ. Օ՛րինաւոր երգում ալ կը գտնուի՞:  
ող. Հրամմերես, երբոր գատաստանաւ՝  
արգարութի՛ով ու ճշմարտութի՛ով կը լ-  
լայ նէ:  
հ. Ի՞նչ է գատաստանաւ երգնուը:

պ. Սինակ հարկաւոր բաներու մէջ՝ ու շատ մեծ պատճառներու համար երդնուլն է. ինչպէս երբոր եկեղեցական կամ քաղաքական մեծաւորները ճշմարտութի մը իմանալու համար կրպահանջեն :

հ. Ի՞նչ է արդարութիւն երդնուլը :

պ. Անիրաւ կամ ընկերին վնասակար բանի մէջ չերդնուլն է :

հ. Ի՞նչ է ճշմարտութիւն երդնուլը :

պ. Իրաւ ըլլալը չիզիտցած բանի վրա ամենեւին չերդնուլն է :

հ. Սէկը՝ որ արգելած ու ապօրինաւոր բան մը ընելու համար երդում ըրած է նէ՛ պարտրկան է ան բանը կատարելու :

պ. Չէ, անանկ երդում ընօղը՝ երդում ըրած ատենը արդէն մեղանշած է, ու կատարելովը ալ աւելի կրմեղանջէ :

հ. Ուխտը ի՞նչ է :

պ. Խոստում մի է Աստուծոյ՝ բարի բան մը ընելու համար, որ իր ներհականէն լաւագոյն է :

հ. Ուխտ ընօղը՝ պարտրկան է ըրած ուխտը կատարելու :

պ. Հրամմերես, ուխտ չընելը ալ լաւ է, քան թէ ընել ու չիկատարելը, անոր համար շատ աղէկ է ուխտ մը ընելէն յառաջ լաւ մտմտալ, ու խելացի մարդու մը խորհուրդ հարցունել :

հ. Թէ որ մէկը ուխտ մը ըրած է, ու ետքը բանաւոր արգելք մը ելած է նէ, ըրած ուխտէն ազատելու համար ի՞նչ պէտք է ընել :

ա. Իշխանութի ունեցողէն տնօրինում կամ փոխադրութի խնդրելու է :

Եզէկէի Բագաւորին պատմութիւնը :

Եզէկիա Յուդայի ցեղին վրա թագաւոր եղաւ նէ՛ տասնըհինգ տարւան հազիւ կար, որ թէ Մատուծոյ պաշտօնին համար, թէ իր ստորակարգելոց հոգիներնուն փրկութեւն համար նախանձաւորութիով լեցված՝ իր հօրմէն մնացած կուռքերը բոլոր կործանեց, իրենց խորանները փլցուց, ան բաները՝ որ կուսպաշտութեւն կրճառայէին, կամ անոր մէկ հօտը ունէին նէ, ամմէնը աւրեց՝ ջնջեց, ու Մովսէսէ մնացած պղնձէ օձն ալ՝ որ ժողովուրդին աւելորդապաշտութեւն նիւթ եղած էր, կտորտեց : Անանկ որ ոչ իրմէն յառաջ՝ ոչ ալ իրմէն ետքը՝ օրէնքները իրեն պէս հաւատարմութեւ պահող Յուդայի թագաւոր մը չեղաւ, որ նախանձաւորութեւ ու բարեպաշտութեւ մէջ իրեն հաւասարէր : Անոր համար ալ ինչ բանի ձեռք երկընցուց նէ, Վճ ամմէնն ալ յաջողեց, ու իր բոլոր թշնամիները

յաղթեց Մատուծոյ զօրութիւնը: Մտորի-  
ներուն թագաւորը Սաղմանասար, Սամա-  
րիայի թագաւորը ու իր ժողովուրդը գերի  
առած էր, վնդի ասոնք զՄ<sup>Ծ</sup> թող տրվեր  
էին: Սաղմանասարին յաջորդը Սենեքե-  
րիմն ալ նոյն փորձը Երուսաղէմին վրա  
փորձել ուզելով՝ Եղեկիա թագաւորին  
սպառնալիքներով լեցուն թուղթ մը գրեց,  
որուն մէջը կըսէր, որ Եղեկիա պարապ  
տեղը կը յուսայ իր Մատուծոյն, որ ուրիշ  
երկիրներուն անոնքը՝ ինչպէս Սամարիայ-  
ին Մ<sup>Ծ</sup>ն ալ իր զօրութիւնը դէմ չիկրոցան  
կենալ, որ իրեն ու Երուսաղէմին ալ  
նոյն բանը պիտոր պատահի: Ինքն ալ  
շատ զօրքով եկած՝ արդէն Երուսաղէմ  
պաշարած էր: Մ<sup>ն</sup> ատենը Եղեկիայ քուրճ  
(հարար) հագաւ՝ Մատուծոյ տաճարը  
գնաց, ու Սենեքերիմին թուղթը Մատու-  
ծոյ առջևը տարածեց, ու մեծ յուսով  
աղաչեց, որ իր սք անւան պատւոյն վրէ-  
ժը թշնամիներէն ինքը առնու: Մ<sup>Ծ</sup> աղա-  
չանքին լսեց, ու ան գիշեր Մ<sup>Ե</sup> հրեշ-  
տակը Սենեքերիմին բանակէն հարիւր  
ու թսուն ու հինկ հազար հոգի ջարդեց:  
Երկրորդ օրը Սենեքերիմը տեսնելով ին-  
քը զինքը անթիւ մեռելներուն մէջը՝ մեծ  
ամօթով, ու վախով՝ Եինուէ փախաւ,  
ու քիչ մը վերջը երկու որդիքը զինքը

մեռցուցին՝ իր Աեսքար չածին առջևը  
խունկ մատուցած ատենը: Գ. (Թագա.  
ԺԷ. ԺԷ:

Խրատ նախանյապարհէ զսա:

ա. Աարելի՞ է զԱ՛ծ սիրել, ու իր  
պաշտօնը երեսէ ձգված ու իր սք անունը  
անարգված տեսնելով չիցաւել, ու զինքը  
ճանչցունելու և փառաւորելու կարող  
ըլլալով անհոգ կենալ <sup>1)</sup>: Աարելի՞ է  
զընկերը սիրել, ու զինքը նեղութե՛ր մէջ  
տեսնելով՝ իրեն չօգնել: (Թէ որ մէկը  
մեզի կամ մեր ազգականներուն և բարե-  
կամներուն պատուոյն՝ հարստութե՛ր կամ  
կեանքին դէմ կը պատերազմէր նէ՛ ի՞նչ  
կընէինք: Սինակ Աստուծոյ փառացը ու  
մեր փրկութե՛ր դէմ պատահած բաներո՞ւ  
մէջ պիտի չափաւորենք զմեզ:

Բ. Պէտք է, որ նախանձաւորութի՛ր  
խոհեմ ըլլայ՝ օգաակար առիթները չի-  
փախցունելով, ու միջոցներուն աղէկը  
ընտրելով <sup>2)</sup>, անուշ ըլլայ՝ համբերու-  
թի՛ով ու առանց դառնութե՛ր, բայց միան-  
գամայն ազգու և առանց տկարութե՛ր. մեծ

1. Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ կամիմ թէ  
արգէն իսկ բորբոքէր. Ա. Կ. ԺԷ. 49:

2. Ազգերո՞ւք այսուհետե խորագէտք իբրև զօձս,  
և միամիտք իբրև զաղաւնիս. Ս. Կ. Ժ. 16:



եռանդով ու քաջութիւնով, չիւլախնայով  
և աչառութի չընելով ըլլայ: Նայց ան-  
ձին որպիսութիւն դիտելով, չէ նէ՝ դէմ  
կըդառնայ, և օգուտին տեղը վնաս ալ  
կըրնայ ըլլալ:

Գ. Նախանձաւորութիւնը զօրաւոր կըլ-  
լայ, երբոր պարզապէս Նստուծոյ փառա-  
ցը համար կըլլայ՝ աղօթքով՝ ու նախ մեր  
անձէն կըսկսի նէ<sup>1</sup>): Նարի օրինակը նա-  
խանձաւորութեւ ուժ կուտայ, ու չար օրի-  
նակը անոր ուժը կըկորսընցունէ<sup>2</sup>):

### (Օրինակ):

Վաղղիայի Փարիզ քաղաքը շատ զար-  
դարանք սիրօղ ազնււական կին մը կար,  
որ ինքը զինքը շատ զարդարելու, և փա-  
ռաւոր զգեստներ հաղնելու ետեւէն ըլլա-  
լուն համար իր խոստովանահայրը մեծ  
նախանձաւորութիւնով կըյանդիմանէր, ու  
կըխրատէր զինքը՝ անանկ պարապ ու դայ-  
թագղութի տալու զարդերը մէկդի ձգելու  
համար, սք գիրքերուն ու սք վարդապետ-  
ներուն խօսքերովը իրեն կըցուցունէր, որ  
անանկ պարապ զարդերը զՆձ կըբարկա-  
ցունեն, ու սատանային որոգայթներն են  
մարդիկներուն հոգիները կորսընցունելու

1. Բժիշկ բժշկեալ զանձն քո. Վ. Կ. Գ. 23:

2. Ակտաւ 35 առնել և ուսուցանել. Վ. Կ. Գ. 7:

Համար : Անիկը զղջալով իր սխալանքներուն վրա՝ ըսաւ . Իմ սիրելի Հարս՝ ես չէի գիտեր, որ մեր զարգերը զՎճ անչափ բարկացունեն՝ որչափ որ դուն կըսես կոր, բայց թէ որ անանկ է նէ, Մատուծոյ կաղաչեմ, որ բոլոր իմ վրաս գտնելած զարգերը՝ որոնք որ իր ամենասքեկամքին դէմ են, սատանան կուրախացունեն, ու իմ հոգւոյս վնաս կուտան նէ, Հիմա սատանան ամմէնն ալ վրայէս տանի : Անիկը աս խօսքերը լմնցուցածին պէս սատանան մութ շուքով մը պատած՝ երեցաւ, ու շուտ մը վրայի զարգերը բոլոր ժողվեց՝ մերկացուց՝ ըսելով բարձր ձանով մը, ասոնք բոլոր մեր դրօշակներն (պայրախները) են, մենք դժոխային հոգիները՝ ասոնց տակը կըժողվենք մեր ժողովուրդները, ու ասոնցմով անչափ յաղթութիւններ կընենք, հոգիներ կըկողոպտենք, ու դժոխք կըտանինք . աս ըսելով զգեստները առաւ՝ աներեւոյթ եղաւ : Անիկը սաստիկ վախցաւ, կատարեալ սրտէ դարձաւ . ու ինքն ալ սկսաւ ուրիշներուն քարողելու, ու շատերուն զղջալուն պատճառ եղաւ : Մս բարի քահանային իր նախանձաւորութե պարտքը կատարելով ասչափ բարիք եղաւ : Այսպէս զաւարտեցինք իւր պատիւնը դարձաւ . Ժողով . Տեղե :

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ Է Լ Ս Ե Ր

Աստուծոյ երրորդ պատկերանին լուս :

հ. Աս երրորդ պատկերանն ալ բնական օրէնքը կը պատկերէ. «բէ՛ւ» զօր շաբաթուան :

դ. Բնական օրէնքը կը պատկերէ ԱՅ պաշտօնին մասնաւոր օրեր սրբելու, բայց աս օրերուն որոշումը ինքը չընէր :

հ. Ինչո՞ւ Ա՛Ծ հրեաներուն շաբաթ օրը սրբելու համար հրամայեր է :

դ. Իր վեց օրւան մէջ աշխարհքը ստեղծելու բարերարութիւնը յիշատակին համար, որ եօթներորդ օրը դադրեցաւ գործելէն, որ սբ գրբի մէջ Ա՛Յ հանգիստը կը սփի :

հ. Ինչո՞ւ եկեղեցին շաբաթը կիւրակէին փոխեց :

դ. Անձի առաքեալները Հոգի սբին ազդելովը անանկ դրին՝ ան օրը պատահած Քսի յարութե ու Հոգի սբին գալստեան յիշատակին համար :

հ. Ի՞նչ կընշանակէ անունս՝ կիւրակէ :

դ. Ա՛Յ օրը կընշանակէ, վնձի ան օրը Ա՛Յ ծառայելու օր է :

հ. Ի՞նչպէս պէտք է սրբել զկիւրակէն :

դ. Օստայական գործքերէն ետ կենա-

լով ու ան օրը բարեպաշտ գործքերու մէջ  
անցունելով :

հ. Ի՞նչ տեսակ բարեպաշտ գործքեր  
ընելու է ան օրը :

ա. Ակեղեցին մահացու մեղքով պարտք  
դրած է՝ ան օրը պատարագ տեսնելու, ու  
բարեպաշտութիւնով ալ կը յորդորէ անձային  
հանդիսութիւններու ներկայ գտնւիլու և  
քարոզ լսելու :

հ. Ի՞նչպէս կըսվին ան տեղերը, ուր որ  
հաւատացեալները կը ժողովին առ բարե-  
պաշտութե՛ գործքերը կատարելու համար :

ա. Ակեղեցի՛ տաճար կամ ժամ կըսվի :

հ. Ի՞նչպէս պէտք է կենալ եկեղեցին :

ա. Սե՛ծ յարգութիւնով՝ լռութիւնով ու  
ջերմեռանդութի՛ւն :

հ. Ակեղեցին յարգութի՛ւն չի կենալը մեծ  
մեղք է :

ա. Հրամմերես, որ Յսի կատարեալ չի-  
հաւատալուն նշանն է, որ սի՛ւ Հաղորդութե՛  
մէջն է, ու իրեն և անձային պաշտօնին  
անպատուութի է :

Սողոմոնին աստուծոյն պատմութիւնը :

Գաւիթ մեծ բաղձանքով կը պատրաս-  
տուի կոր Արուսաղէմի մէջ Ա՛յ փառա-  
ւոր տաճար մը շինելու. Աթման մար-  
գարէն իրեն յայտնեց, որ իր տղան Սո-

զոմոնը խաղաղարար թագաւոր մը պիտոր  
 րլայ, ու աս տաճարը ան պիտի շինէ,  
 վնդի ինքը իր կեանքը բոլոր պատերազմի  
 մէջ անցուցած էր: Ղաւթը աս շէնքի  
 համար շատ ոսկի՝ արծաթ և ուրիշ բաներ  
 պատրաստած էր, ամմէնն ալ աս վախ-  
 ճանի համար Սողոմոնին ձգեց: Սողոմոնը  
 եօթը տարւան մէջ շինեց՝ լմնցուց տաճա-  
 րը, որ աշխրբի զարմանալին էր: Ասոր  
 համար ութը օր տօն կատարեց՝ բոլոր  
 Խորայէլի ազգը հրաւիրեց, ու տապանակ  
 ուխտին մեծ հանդիսութիով ու զարդերով  
 հօն բերաւ: Տապանակը հօն տեղաւոր-  
 վածին պէս լուսաւոր ամպ մը բոլոր տա-  
 ճարը լեցուց, որ Ասիփառքը կրնշանակէր:  
 Ա՛ճ Սողոմոնի բերնովը յայտնեց, որ հօն  
 տեղը՝ իր տեղը պիտոր րլայ, հօն տեղէն  
 ժողովուրդին աղօթքին պիտի լսէ, ու զո-  
 հերնին պիտոր ընդունի: Ա՛ճ երբեմն  
 երբեմն ժողովուրդին ու թագաւորներուն  
 մեծ պատիժներ տրվաւ, որ կուսպաշտու-  
 թէ մէջ իյնալով ասոր սրբութիւն պղծած  
 էին. թող տրվաւ, որ բոլոր ազգը գերի  
 իյնայ, ու սքանչելի տաճարն ալ աւրրվի:  
 Ատքը նորէն շինվեցաւ. որուն գանձերը  
 Հեղիողորոսը յափշտակելու համար ներս  
 մտաւ նէ, երկու հրեշտակներ երեցան,  
 զինքը սաստիկ ծեծեցին, ու մեռցունէին

պիտոր, թէ որ Սնիա քահանայապետը  
իրենն համար աղօթելով ԱՅ զոհ չիմա-  
տուցաներ նէ: Հեղիողորոս իր քաղաքը  
դարձաւ, ու զինքը հոն խաւրող Սելեւ-  
կոս թագաւորին ըսաւ, թէ որ մէկը  
կուզես պատժել նէ, Արուսաղէմ խաւրէ  
տաճարին վնասելու համար, ու կըտեսնես  
զինքը վէրքերով լեցված, թէ որ կըրնայ  
կենդանի մնալ նէ. վսզի Աճ է ան տե-  
ղին պաշտպանը ու անոր վնաս ընողնե-  
րուն վրէժխնդիրը: Ասիկայ աղւոր օրի-  
նակ մի է մեր եկեղեցիներուն սրբութիւնը,  
ու անոնց պէտք եղած յարգութիւնը: Բ.  
Թագ. է: Գ. Թագ. Կ. Ը. Ը: Բ.  
Սնի. Գ:

Խրատ է՛նդէցոյ յարգութիւն վրա:

«. Աստուած թէպէտ ամմէն տեղ է,  
բայց հին օրէնքի ատենը Արուսաղէմի  
տաճարը ընտրած էր, հոն մասնաւոր  
եղանակաւ պաշտըվիլ կուզէր, ու իր բա-  
րիքները հոն տեղէն կըբաշխէր <sup>1)</sup>: Ան  
տաճարը մեր եկեղեցիներուն մինակ օրի-  
նակն էր, որոնց մէջը չէ որ մինակ օրինաց

1. Ընտրեցի զաղիդ զայդ ինձ ՚ի տուն զոհից...  
Աք իմ եղիցին բաց, և ախանջք իմ առ ՚ի լը-  
սել զաղօթս ՚ի տեղւոջս յայսմիկ. Բ. Սնայդ.  
է. 12. 15:



տախտակները տապանակի մէջ պահւած են, հապա ինքը օրէնքները տրւող Այ Որդին Յս Քս կրքնակի<sup>1)</sup>, մեղմէ պատարագներով խորհուրդներով՝ աղօթքներով կը պաշտօրվի, ու մեղի մեծ մեծ շնորհքներ կրբաժնէ:

Բ. Անոր համար մեր եկեղեցիները արժանի են, որ միշտ ու շուտ շուտ սյց առնենք, մասնաւոր պատիւներով պատւենք, ու հոն տեղը շատ պարկեշտութիով ու վախով կենանք<sup>2)</sup>: Աղքատները՝ որ Այ նախախնամութիւնը եկեղեցիներուն դռները բերած է՝ մեղմէ ողորմութի խնդրելու համար, մեղի կը սորվեցունեն՝ ինչպէս պէտք է կենալ հոն տեղը, որ ամմէնքս ալ աղքատներ ենք Այ առջևը:

Գ. Վայց քանի քրիստոնեաներ եկեղեցիներէն հեռու և կամ այնպիսի սք տեղերը անպատուութիւն կրկենան<sup>3)</sup>: Ասիկայ անանկ մեղք մի է, որ մեր վրա Այ բարկութիւն կը շարժէ: Թէ որ Այ տապանակին անպատուութիւնը համար անչափ մեծ մեծ պատիժներ տրվաւ, ու անանկ խիստ պատուհասներով տաճարէն դուրս

1. Տր է ՚ի տեղուցս յայսմիկ. Օււ. էլ. 16:

2. Ի սրբութեց իմոց երկնչիցիք. Ղէւր. էլ. 2:

3. Տուն իմ տուն աղօթից կոչեսցի. և դուք արարիք զգա այրս աւազակաց. Ստ. էլ. 13:

վնասեց զանոնք , որ իրենց մեղքերովը  
զանիկայ կը պղծէին , հապա ի՞նչ տեսակ  
պատիժներու արժանի կը լլան եկեղեցի-  
ները իրենց անարժան կեցվածներով  
պղծողները :

### Օրինակ :

Օր մը սք Սարտինոս եպիսկոպոսը  
պատարագ բրած ատենը իր սարկաւազը  
Պրիցիոս քահանան ծիծաղեցաւ . պատա-  
րագը լմնցաւ նէ՛ սք եպիսկոպոսը հարցուց  
իրեն , որ խորանին առջևը ինչո՞ւ ծիծա-  
ղած էր : Քահանան պատասխան տրվաւ .  
որ խորանին ետևը սատանայ մը կեցած  
շուտ շուտ կը գրէր կոր , երբոր բոլոր  
թուղթը լեցուց նէ , ալ աւելի բաներ  
գրելու բաղձալով՝ թուղթը ձեռքերովը  
ու ակռաներովը բռնած՝ քաշեց , որ եր-  
կըննայ , բայց շատ ամուր քաշելովը  
թուղթը պատրեցաւ՝ ու գլուխը պատին  
զարկաւ . ան ատենը սատանան բարկացաւ ,  
ու յուսահատութե՛ն շարժումներ ընել  
սկսաւ . անոր համար ծիծաղեցայ : Աք  
Սարտինոսը եկեղեցին գնաց , ու սատա-  
նան սարկաւազին ըսած տեղը գտաւ , որ  
տրտում տխուր կեցած էր : Աքը հար-  
ցուց , որ ի՞նչ էր ան թուղթին վրա  
գրածներդ : Սատանան պատասխան տը-

լաւ, որ պատարագի ատենը եկեղեցւոյ մէջ պատահած մեղքերն էին, որ իր պաշտօնը անիկայ էր. ետքը ամմէն մէկին մահւան ատենը յաւիտենական դատաւորին առջևը տանելով իրենցմէ ան մեղքերուն վրա ամբաստանելու համար, որոնք որ եկեղեցւոյ մէջը ան մեղքերը գործած էին: ՍԷ Սնորհանուհի շարհն ԴՅԸ:

ՏԵՍՆԵՐՈՐԻ ԼԵՍՆԵՐ

Աստուծոյ շնորհքով պատիւներն շնորհ:

Հ. Աճ ի՞նչ կը հրամայէ ըսելով՝ պատիւներն չունիք և պատիւներ:

պ. Օգուկըներուն կը հրամայէ, որ իրենց հայրերնին՝ մայրերնին սիրեն՝ պատուեն՝ իրենց հնազանդին, ու իրենց օգնեն:

Հ. Ինչո՞ւ եղբօրը սիրուն պատուիրանները ասկէ կը սկսի:

պ. Անգի թէպէտ ամմէն մարդիկները սիրելու պարտրկան ենք, բայց գլխաւորաբար ու յառաջ զանոնք պարտրկան ենք սիրելու և պատուելու, որոնց ձեռքովը ուզեց Աճ մեր կեանքը՝ ու կենաց բարիքները պարգևել մեզի:

Հ. Օնորհաց ի՞նչ բանի մէջ պէտք է հնազանդիլ:

դ. Ամմէն բաներու մէջ՝ որն որ ԱՅ հրամանին դէմ չէ :

հ. Ինչո՞ւ կըսես՝ ամմէն բաներու մէջ , որն որ ԱՅ հրամանին դէմ չէ :

դ. Այնքան ուլ որ կըլլայ նէ՛ ըլլայ , թէ մեր հարը մարը , թէ ուրիշները ԱՅ արգելած բան , որ կըհրամայեն նէ , պարտրկան չենք հնազանդելու , աւելի ԱՅ պատուիրանին հնազանդելու ենք :

հ. Այ՞րբ ու ի՞նչպէս պէտք է հօր ու մօր օգնել :

դ. Իրենց ամմէն հոգևոր ու մարմնաւոր կարօտութեց մէջը օգնելու է , երբոր կարելի է նէ , գլխաւորաբար անոնց ծերութեցը ու հիւանդութեցը մէջ :

հ. Ինչո՞ւ կըսէ . զէ Երկայնակեաց լեցին 'ե Ժէրայ Երկրի :

դ. Յուցընելու համար , որ Ա՛ժ աշխրբիս մէջն ալ ժամանակաւոր օրհնութիւներով կըվարձատրէ պատիւը , որով որ մեր ծնօղքը կըպատուենք , ու իրենց օրհնութիւն առնելով ԱՅ օրհնութիւն ալ կառնուենք :

հ. Ա՛նանկ է նէ զաւկըները պէտք է՝ որ ծնողաց օրհնութիւն մեծ բան սեպեն , ու ջանան անոր արժանի ըլլալու :

դ. Հրամմերես , ու ալ աւելի վախնալու են իրենց չար վարքովը անոնց անէծքը առնելէն :

հ. Աս պատուիրանը ծնողքներու վրան ալ պարտք մը կը դնէ՞ իրենց զաւկրներուն ընելու :

Պ. Հրամմերես, անոնք ալ կը պարտաւորին զանոնք սիրելու՝ անոնց կենացը պէտք եղած բաները հոգալու, մասնաւորապէս անոնց վիճակին յարմար աղէկ կը թուածին ու անոնց բարի օրինակներ տալու :

Հէղէ շահանայտուղիքին պատմութիւնը :

Հեղի քահանայապետը երկու որդի ունէր՝ Ափնի ու Փենեհէս, որ իրենց ազահուածքը ու անառակ վարքերովը Խարայէլի ժողովուրդին չար գայթագղութիւններ կուտային կոր : Հեղի մինակ յանդիմանելը բաւական սեպելով՝ զիրենք չէր պատժեր, որ պարտական էր պատժելու ալ, ու իր թուլութեամբ զաւկրները ասանկ գայթագղութիւններու մէջ կապրէին : Ան ատենները Սամուէլ մարգարէն մանուկ ըլլալով՝ իր մարը Աննա զինքը ԱՅ պարգևած էր, որ տաճարին մէջը կը ծառայէր, ու օրինակ մի էր բարեպաշտութեան ու Հեղի քահանայապետին հնազանդութեան մէջը՝ զինքը հօր տեղ զնելով : Աս մանուկը գիշեր մի տաճարին մէջը քնացած ատենը՝ Աճ զինքը իր անունովը կանչեց . Սամուէլը կարծելով՝ որ Հեղին է զինքը

կանչօղը՝ անկողինէն ելաւ՝ իրեն վազեց, ու հարցուց՝ որ ի՞նչ կը հրամայէ: Հեղին ըսաւ, որ զինքը կանչած չէ, երթայ հանգիստ քնանայ: Սամուէլին աս ձանը իրեք անգամ եկաւ ան գիշեր, ու իրեք անգամին ալ վազեց՝ Հեղին գնաց, հարցուց, որ ի՞նչ կուզէ: Արրորդին Հեղին իրեն խրատ տրվաւ, որ երթայ, հանգիստ պառկի, ու ան ձանը իրեն նորէն գալու ըլլայ նէ՛ պատասխան տայ՝ Տէր խօսէ, որ ծառադ լսէ. Սամուէլը հնազանդեցաւ: Ըն ատենը Ըճ յայտնեց իրեն սոսկալի պատիժները, որ պիտի տար Հեղին, իր որդւոցը ու բոլոր ընտանեաց՝ Հեղին վերի գրած անհոգութիւնը համար: Արկրորդ օրը Հեղի հարցուց, ու Սամուէլը պատմեց՝ ինչ որ Ըճ իրեն յայտնած էր: Հեղի խոնարհեցաւ, բայց իր տկարութիւնը զինքը արգելեց չարիքները խափանելու: Ըյ սահմանած ատենը փղշտացիները Իսրայէլին դէմ պատերազմեցան, զիրենք յաղթեցին, Ռփնին ու Փենեհէսը՝ որ տապանակ ու խտին կրտանէին կոր, սպաննեցին. տապանակը գերի առին: Հեղին աս գժբաղդութիւնները լսելով ցաւէն գետինը ինկաւ՝ մէջքը կոտրեցաւ, ու մեռաւ. իր հարսը՝ Փենեհէսին կնիկը, որ յղի էր, աս բաներս լսելով՝ զաւակը կոր-



սրնցուց, ինքն ալ մեռաւ : Ու Սամուէլը  
Հեղին տեղը Իսրայէլի վրա դատաւոր  
եղաւ : Ը՛ծ ասանկ կը պատժէ ծնողաց  
տկարութիւր ու անհոգութիւր իրենց զաւ-  
կընէրը կրթելու վրա, ու զաւկընէրուն  
անհնազանդութիւր իրենց ծնողաց խրատնե-  
ներուն : Ըսոր ներհակը կօրհնէ զանոնք,  
որ կը հնազանդին ու կը պատուեն իրենց  
ծնողքնին : \* . թ . ա . գ . \* . Ը . Գ . Կ :

Խրատ ծնողանէրուն եւ զաւկանէրուն Տէր-  
ընէն ու պարտէրան Վրա :

\* . Ծնողքները պարտըկան են, նախ՝  
իրենց զաւկները սիրելու <sup>1)</sup> : Ըս սէրը  
ընդհանուր ու հաւասար պիտոր ըլլայ, ու  
մէկը կուրօրէն աւելի սիրելով ու մէկալին  
խստութի ցուցունելով պիտի չըլլայ, որ  
մէկը մէկու չինասանձին : Ղշմարիտ սէր  
պիտոր ըլլայ, որ ունեցածնին խաղի՝ շուայ-  
լութե ու գինովութե մէջ հատցունելով  
զիրենք չափաւոր կերակրէն՝ ու օրինաւոր  
ժառանգութէն չիզրկեն : Արկրորդ՝ զե-  
րենք կրթելու, աս կրթութիւր իրենց վի-  
ճակին՝ ալ աւելի քրիստոնէական կրօնին  
համաձայն պիտի ըլլայ, զիրենք աշխրբի

---

1. Զգատացուցանիցին զմանկամարդսն՝ լինել  
որդեսէրս . Տէր . Է . 4 :

բաներուն մէջը կրթելու համար՝ կրօնին հարկաւոր պարտքերը մէկ դի ձգելու չեն . իրենց մօլութիները պատժելու ու պակասութիւնները շտկելու աղէկ պիտի նային <sup>1)</sup> . մօլութիները վրանին մնալով զՎճ բարկացունելուն ու յաւիտեան դատապարտութիւն տեղը՝ թող աշխրբի հաճոյ չըլլան : Արրորդ՝ իրենց բարի օրինակ տալու ու իրենց զաւկրները իրենց օրինակներով բարի կրթութիւններու մէջ ալ աւելի հաստատելու , վնդի ծնողքներու բարի օրինակները զաւկրներուն՝ օրէնքէն աւելի կազդեն , ասոր ներհակը իրենց անկարգութիւններն ալ իրենց զաւկրներուն մեծ կործանում կըլլան . զաւկրները իրենց մօլութիներուն մեծ մասը իրենց ծնողքներէն կըծծեն . ինչպէս յայտնի կերևնայ հերետիկոս՝ անհաւատ՝ ու բարբարոս ազգերուն վրա , որ անոր համար անանկ եղած են , վնդի այնպիսի ծնողքներու զաւակներ են , ու իրենց ծնողքներուն անկարգութիւններուն հետեւեր են :

Բ . Չաւկրներն ալ իրենց ծնողքները պարտըկան են , նախ՝ սիրելու և պատուելու :

1. Մի խնայիւ խրատել զտղայ , զի և թէ հարկանես զնա գաւազանաւ՝ ոչ մեռանի . Վ. 13 :

ու <sup>1)</sup>: Աս սէրը ու պատիւը իրենց բոլոր  
կենացը մէջ պէտք է ըլլալ, իրենց տա-  
րիքը մեծնալով՝ վիճակինն փոխվելով,  
կամ ծնողքներուն վրա պակսութիւններ  
տեսնելով պիտի չիպակսի <sup>2)</sup>: Արկրորդ՝  
սրտանց հնազանդելու՝ չէ որ մինակ ծնողք-  
ներուն՝ հապա իրենց ուրիշ մեծերուն ու  
կրթողներուն ալ, ուր որ իրենց հրամանը  
Այ հրամանին ու պատուոյն դէմ չէ նէ <sup>3)</sup>:  
Արրորդ՝ անոնց օգնելու, որ անոնցմէ  
ընդունածներնուն հաւասարի ու աւելնայ  
ալ՝ թէ որ Աճ կարողութի պարգևած է  
նէ, ու գլխաւորաբար անոնց հիւանդու-  
թեցը մէջ՝ եկեղեցւոյ օգնութիւնները հո-  
գալով, վերջին խորհուրդները՝ և ուրիշ  
հոգևոր օգնութիւնները մտքերնին ձգելով,  
ու յորդորելով, որոնք որ իրենք իրենց  
մանկութե ատենը անոնց ջանքովը լն-  
դունած են:

### (Օրինակ):

Հուովմ հինգ տարւան տղայ մը կար  
աղնւական ծնողաց զաւակ՝ ու հօրը մօրը

1. Որ երկնչի ՚ի Տեառնէ՝ պատուէ զճնօղս . Ա՛ղէս .  
Գ . 8 :
2. Ուրախ լիցին հայր և մայր քո ՚ի քեզ . և խըն-  
դասցէ՝ որ ծնաւն զքեզ . Ա՛ր . 25 :
3. Որդիք հնազանդ լիբուք ծնողաց ձերոց յամի,  
զի այն է հաճոյ առաջի Տեառն . Առա . Գ . 20 :

մէկ հատիկը . ասիկայ իրենց ծառաներուն  
Մ<sup>5</sup> անւանը երգում ընելինն՝ ու հայհոյ-  
ելինն լսելով՝ ինքն ալ սորվեցաւ, ու օրը  
չատ անգամ կընէր : Հարը լսած ատենը  
զինքը պատժելուն տեղը՝ կըխնտար՝ ու  
կուրախանար : Մ<sup>6</sup> ուղեց աս տղուն վրա  
սոսկալի պատժով մը ցուցունել, որ որ-  
չափ ատելի են իրեն անանկ հայհոյութի  
ու երգում ընելը, որպէս զի բոլոր քա-  
ղաքը լսէ, ու ասանկ մոլութիւններէն ետ  
կենայ : Մ<sup>7</sup> մանուկը ան սորված երգում-  
ները ու հայհոյութիւնները օր մ՝ ալ չափէ  
աւելի կրկնած էր, ան իրիկունը հօրը  
քով կեցած ատենը՝ սկսաւ յանկարծ երե-  
սին գունը փոխել, ինքը զինքը հօրը գիր-  
կը նետեց, ու իր գլուխը անոր զգեստ-  
ներուն տակը ծածկելու կըջանար : Հարը  
իրեն հարցուց, որ ի՞նչ տեսաւ, որ ան-  
չափ կըվախնայ կոր . Այն ինծի՛ ըսաւ  
մանուկը, սե մարդիկներ եկան՝ զիս կը-  
փրնտուն կոր իրենց հետ տանելու հա-  
մար, աս ըսաւ՝ ու սկսաւ նորէն երգում-  
ներ ու հայհոյութիւններ ընելու, և այս-  
պէս իրեն հոգին աւանդեց ան տեսած  
սատանաներուն ձեռքը : Օ՛նօղքները ա-  
սիկայ լսելով, իրենց զաւկըներուն բարի  
կրթութեցը վրա աչքերնին աղէկ բանան,  
ու զիրենք որչափ աւելի կըսիրենն նէ՛

իրենց մեղանշական պակասութիւները ան-  
չափ աւելի պատժեն, որ զիրենք ալ՝ սի-  
րելի զաւկրներնին ալ Մ<sup>ճ</sup> չիպատժէ: Ս<sup>Է</sup>  
Գրեթոր պար իւրապէս էր պրահայ. 4.  
ԳԼ. ԺԷ:

### Երեւոր օրենսի:

Նաբոլի քաղաքը բարեպաշտ մարդ մը  
գիշերով քովի տնէն վախնալու ձան մը  
կըլտէ, որ լալով ու պոռալով օգնութի  
կուղէր կոր: Մ<sup>ս</sup> սոսկալի ձանին պատճա-  
ռը իմանալու համար պատուհանէն ներս  
կընայի, ինքը ու իրեն հետ շատ մար-  
դիկներն ալ կըտեսնեն, որ զարհուրելի  
կերպարանքով սատանայ մը տղայ մը կը-  
չարչարէր կոր. ու տղան սենեկին մէջը  
ասդին անդին փախչելով ազատելու կաշ-  
խատէր կոր: Շատ վախնալու բան մի էր  
սատանային տղեղութիւր՝ ու տղուն քա-  
շած չարչարանքը. որ վերջապէս զինքը  
Մ<sup>յ</sup> ու սուրբերուն յանձնելով՝ սատա-  
նային ձեռքէն ազատեցաւ, բայց վախէն  
լեզուն բռնըվեցաւ, ու մեռածի պէս ին-  
կաւ: Քանի մը օր ետքը խելքը վրան  
եկաւ նէ՛ խոստովանեցաւ, որ ան իրի-  
կունը ան պատիժը իրեն պատահելէն յա-  
ռաջ՝ հօրը գէմ նախատական խօսք զրու-  
ցած էր, ու ան էր ան պատիժին պատ-

Ճառը : Աղէս . արեւմտեան լեռնաշղթան  
էր պատմ . ԳԼ . ԺԷ :

ՏԵՍՆԲԱՆԿԵՐՈՐԻ ՀԵՍՆԲ

Չորրորդ պատմական շարանակները :

Կ . Պատմական որ կըսէ նէ՝ մինակ հարը  
ու մարը կիմացվի :

Պ . Չէ՝ ուրիշ մեծերն ալ կիմացվին , ու  
գլխաւորաբար եկեղեցական ու աշխարհա-  
կան մեծաւորներն ալ :

Կ . Եկեղեցական մեծաւորներով զո՞վ կի-  
մանաս :

Պ . Նախ՝ սրբազան պապը , ետքը՝ եպիս-  
կոպոսները և ուրիշ եկեղեցականները ,  
որ մեր հոգևոր հարերն են , անոր համար  
կըպարտաւորինք զիրենք ալ պատուելու և  
հաւատքի ու կրօնի բաներու մէջ իրենց  
հնազանդելու :

Կ . Աշխարհական մեծաւորներով զո՞վ կի-  
մանաս :

Պ . Թագաւորը ու քաղքի մեծերը , որ  
աշխարհական ու քաղաքական բաներու  
մէջ իրենց հնազանդելու է՝ ուր որ իրենց  
հրամայածը ԱՅ օրէնքներու դէմ չէ նէ :

Կ . Աս պատուիրանը աշխարհականներն ալ  
կըպարտաւորէ իրենց վարպետները պատ-



ւելլու , և ծառաները իրենց տէրերը  
պատուելու :

Պ. Հրամմերես , զանոնք ալ կը պարտա-  
ւորէ պատուելու և հնազանդելու անոնց  
բոլոր ան բաներու մէջ , որոնց մէջ որ  
ՄԺ իրենց իշխանութի տրվեր է նէ :

հ. Մս բոլոր աշխարհական մեծաւորները  
ի՞նչ պարտք ունին իրենց իշխանութեը  
տակ եղողներուն :

Պ. Մնոնք ալ պարտրկան են իրենց իշ-  
խանութեանը տակ եղողները զաւկի պէս  
հողալու :

Աորին՝ Ղաադանին ու Մբիրոնին պատմութիւն :

ՄԺ զՄովսէս Խորայելի վրա առաջնորդ  
դրած էր , ու իր պաշտօնը շատ զարմա-  
նալի հրաշքներով հաստատած էր : Աորին՝  
Ղաադան ու Մբիրոն աս իշխանութե նա-  
խանձելով՝ Մովսէսի ու Մհարոնի դէմ  
դարձան , ու իրենց հնազանդիլ չէին ու-  
ղեր . ու իրենց անհնազանդուե՞ ժողովուր-  
դին իշխաններէն ալ երկու հարուր յիսուն  
հողի քաշեցին : Մովսէս տեսնելով անոնց  
ապստամբութիւնը՝ ՄԵ առջևը գետինը  
ինկած՝ աղաչեց , որ իր դատը ՄԺ ինքը  
դատէ , ետքը ժողովուրդին հրամայեց ,  
որ ան ապստամբներէն հեռու կենան ,  
չըլլայ՝ որ անոնց մեղացը հաղորդ ըլլալով

պատիժին ալ հաղորդ ըլլան : Բոլոր ժողովուրդը անոնց վրաններէն մէկ դի քաշվեցաւ , ուր որ ապստամբները իրենց ընտանիքներով ժողված էին : Սոսիս ըսաւ , Քիչ մը ետքը աս ապստամբներուն չարաչար մահաւմբը պիտի տեսնէք , որ ըրածներս ես իմ քովէ՞ս կրնեմ կոր , թէ ամմէն բանը Մի հրամանաւը ըրի : Անատենը ապստամբներուն ոտքին տակը գետինը բացվեցաւ , ու զիրենք բոլոր տնով տեղով կուլ տրվաւ , իրենց գլխէ հանած ժողովուրդը՝ կորսրվողներուն սոսկալի ձաները լսելով փախչիլ սկսաւ նէ՛ երկինքէն կրակ իջաւ , ան երկու հարուր յիսունն ալ երեց , որ անոնց մեղացը մասնակից եղեր էին : Արկորդ օրը նորէն տասնը չորս հազար եօթը հարուր հոգի պատժըվեցան ու մեռան , որ անանկ սոսկալի պատժէն չիսելօքցած՝ Սոսիսի ու Մհարոնի դէմ նոր ապստամբութի հաներ էին , ըսելով՝ որ առջի օրը մեռածներուն մահերնուն պատճառը ասոնք եղած էին : Անոր համար ալ Մի բարկութիւնը չիդադրեցաւ՝ ու բոլոր պիտոր մեռնէին , թէ որ Մհարոն Սոսիսի հրամանաւ մեռածներու ու կենդանիներու մէջ կեցած՝ Մի իր խունկը չիմատուցանէր աղօթելով նէ : Աս պատիժներով յայտնի կերևնայ ,

որ մեծաւորներուն դէմ անհնազանդութիւն  
ու տրտունջը, մարդու դէմ չեն ըլլար,  
Ա՛յ դէմ կը ըլլան. ինչպէս Սոփսէս իրենց  
կըսէր. Ոչ է պէնջ արարունջս յէր, այլ  
զԱստուծոյ : (Թ. 10. 11. 12):

Խորոհ Տե՛ծաւորնէ՛րոս հնազանդութիւն զեա :

ա. Ա՛ճ անանկ կարգ դրած է, որ  
աշխարքի վրա մարդիկները մարդիկներէն  
կառավարվին, ստորակարգութիւն ըլլայ<sup>1)</sup> :  
Հնազանդութե՛ն պակասութիւն է, որ տե-  
րութիւններու, քաղքերներու ու տներու  
մէջը անչափ անկարգութիւններ՝ շփոթու-  
թիւններ կը պատահին, անոր համար Ա՛ճ  
ալ անհնազանդութե՛ն մեղքերը միշտ ծանր  
պատիժներով պատժեց<sup>2)</sup> : Յս՛ Քս խօս-  
քով ու գործքով հնազանդութիւն քարո-  
զեց զլիսաւորաբար՝ ինչպէս մահը՝ ան ալ  
խաչի մահը հնազանդելով<sup>3)</sup> :

Բ. Հնազանդութիւն վարձքի արժանի  
ըլլալու համար մեծաւորին հրամանը Ա՛յ  
հրաման ճանչնալով հնազանդելու է. վս՛

1. Որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ  
հրամանին հակառակ կայ. Աստուծոյ 2 :
2. Եւ է ունկնդրութիւն քան զզոհ ընտիր, և հը-  
նազանդութիւն քան զճարպ խոյոց. ա. (Թ. 10. 11. 12):
3. Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու  
չափ և մահու խաչի. Փիլ. 1. 7. Բ. 8 :

զի ամմէն իշխանութիւն Մատուծմէ կիջնայ. հնազանդութիւն ասանկ մտմըտալով չըլլար նէ՝ ծառայական կըլլայ, ու ասանկ մտմըտալով կանուշնայ, և ուրիշ առաքինութիւններու աղբիւր կըլլայ <sup>1)</sup>:

Գ. Սեծաւորներուն անկարգութեցը համար իրենց չիհնազանդիլ չըլլար, վնզի անոնք անանկ ալ ՄՅ տեղն են, ու անոնց հրամանին ՄՅ հրամանին պէս զգուշութիւնով ու պատրաստ կամքով հնազանդելու է, երբոր անոնց հրամանը ալ մեծագոյն մեծաւորին հրամանին կմ ՄՅ պատւիրանին դէմ չէ նէ <sup>2)</sup>:

### Օրինակ:

Սք փրանկիսկոսի փոքր ըսւած կարգէն վանքի մի մէջ հնազանդ կրօնաւոր մի կար, որ մեծաւորին ամմէն հրամանին սիրով կըհնազանդէր՝ ու կըկատարէր: Մսիկայ ՄՅ կարգադրութիւնը ծանր հիւանդութիւնով պառկեցաւ: Սեծաւորը զինքը

1. Հնազանդ լիւրուք. . . վն Տեառն: Աթէ թաղաւորի, իբրև առաւել ումք: Աթէ զատաւորաց՝ իբրև ՚ի նմանէ առաքելոց . . . . Չի այսպէս են կամքն Մատուծոյ. . . Պէր. Է. 13. 14. 15:

2. Օսառայք հնազանդ լինել յամի երկիւղիւ տերանց. ոչ միայն բարերարաց և հեզոց, այլև կամակորացն. . . Պէր. Է. 18:

տեսնելու գնաց, ու շատ հոգևոր խօսքերով զինքը մխիթարելէն ետև, տեսաւ որ հնազանդ կրօնաւորը ան ծանր ու երկան հիւանդութե սաստիկ ցաւերովը շատ կըչարչարուէր կոր, վրան ցաւակցելով հարցուց՝ ու ըսաւ իրեն. Օգուստին՝ կուզե՞ս արքայութի երթալ: Հիւանդը պատասխան տրվաւ. Շատ սիրով կերթայի հայրիկ՝ թէ որ կրնայի: Սեծաւորը ըսաւ. Դուն՝ որ սիրելի զաւակս բոլոր կենացդ մէջը շատ հնազանդ էիր՝ ինչ որ հնազանդութիւնը կըհրամայէր նե՛ դէմ չէիր կենար, ու միշտ Քնի սիրուն համար սիրով կըկատարէիր, անոր համար հիմայ կըհրամայեմ քեզի, որ քու պատրաստ ու սիրով հնազանդութեդ վարձքին համար գնա արքայութիւր յաւիտենական փառքը ընդունելու համար, որն որ առատաձեռն ՄԺ բոլոր ճշմարիտ ու կատարեալ հնազանդներուն համար պատրաստած է. ու հայրական օրհնութիւով օրհնեց զինքը: Օարմանալի պտուղ հնազանդութե. մեծաւորը հրամանը ու օրհնութիւր կատարեց՝ հիւանդն ալ զհոգին արարչին ձեռքը աւանդեց: Իրեհոյ ժամանակագրութե մէջ:

ՏԵՍԻՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԻ ՀԱՄԱՐ

Աստուծոյ հիշգէտութեամբ պատկերանին զոս :

հ. Ենչ կընշանակէ աս խօսքը՝ թէ սպասանէր :

պ. Կընշանակէ, որ մասնաւոր մարդիկներու ամենեկին, օրինաւոր չէ՝ մարդ մեռցունելը, թէ որ թագաւորէ կամ հասարակութի մը տրված իշխանութիւնով՝ ու օրինաւոր դատաստանաւ չըլլար նէ :

հ. Սէկը որ չիմեռցուներ՝ հասպա մինակ կըբաղձայ նէ կըմեղանչէ :

պ. Անանկ մարդը քանի անգամ որ ասանկ կըբաղձայ նէ՝ Այ առջևը անչափ անգամ մարդասպանութի մեղք կըգործէ :

հ. Սէկը մեծ չարիքէ մը ազատելու համար ինքը զինքը կըրնայ մեռցունել :

պ. Չէ, վնդի մենք մեր կենացը տէր՝ չենք, մեր բացարձակ տէրը Ա՛՞՞ն է :

հ. Աս պատկերանը մինակ մարդ մեռցունելը կարգելու .

պ. Չէ, ատելութիւն՝ իս պահելը՝ ու եղբորը դէմ ամմէն տեսակ անիրաւութիւններն ալ կարգելու :

հ. Վէշ մարդիկները ատելն ալ մեղք է :

պ. Հրամներես, իրենց մոլութիւնները ու չարութիւնները ատելու է, ու զիրենք սիրելու է :



Է. Մսիկայ եղբօրը մինակ մարմնոյն վնասելը կարգելու :

Պ. Չէ, չար օրինակաւ՝ գայթակղութի տալով՝ ու զինքը մեղքի գրգռելով՝ անոր հոգևոր կենացը վնաս տալն ալ աւելի արգելած է :

Է. Վայթակղութիւր ի՞նչ բան է :

Պ. Խօսք կամ գործք մի է, որ իր բնութիւրը զեղբարը մեղքի կըշարժէ :

### Յերոբոամի մարտնալիւ :

Սողոմոն իր խմաստութիւնով Խորայէլին շատ աղէկ օրինակներ տալէն՝ ու իր բաղձանքովը Մ.Յ փառաւոր տաճար մը շինելէն ետքը՝ ծերութեանը մէջ իր կուսպաշտ կնիկներուն սիրուն համար արգելած բաներ ընելով՝ ժողովուրդը շատ գայթակղեցուց, որոնք որ իր սիրտը անանկ մոլորեցուցին, որ իրեն ինչևան կուռքերու երկրպագութի ընել տրվին : Մ.ս բանիս Մ.ճ շատ բարկացաւ՝ ու վճռեց, որ իր թագաւորութիւր բաժնէ, ու աղէկ մասը իր ստորակարգեալներուն մէկին տայ : Մ.նոր համար Խորայէլին տասը ցեղերը Յուդայի ցեղէն բաժնրվեցան, Խորայէլի թագաւորութեւն անունով զատ թագաւորութի հաստատեցին, ու Յերոբոամը իրենց թագաւոր ընտրեցին : Մ.սիկայ տես-

նալով՝ չըլայ, որ իր ժողովուրդը ԱՅ զոհելու պատճառաւ Արուսաղէմ երթալով գալով Յուդայի թագաւորին իշխանութենը տակ մտնեն, իրենց արգելեց Արուսաղէմ երթալը, ու մնասակար ճարպիկութիւնով երկու հատ ոսկի հորթեր կանգնեց, որ ժողովուրդը անոնց զոհեն՝ ու երկրպագութիւն ընեն, ու ինքն ալ անոնց զոհ մատուց՝ ու երկրպագութիւն ըրաւ: ()ր մը ասանկ կուսպաշտութիւն ըրած ատենը՝ իրեն մարգարէ մը եկաւ՝ պատմեց իրեն պատիժները, որոնցմով Ա՛ճ պիտի պատժէր աս իր տըլած գայթակղութիւնները: Յերոբովամ աջ ձեռքը երկնցունելով, հրամայեց՝ որ մարգարէն բռնեն՝ բանտը դնեն: Բայց անմիջապէս ան ձեռքը թռէն չորցաւ, անանկ որ չիկրցաւ իրեն քաշել: Ասանկ նեղուե՛ մէջ մարգարէին աղաչեց, որ իր ձեռքին առողջանալուն համար Ա՛Յ աղօթք ընէ: Մարգարէն խնդիրքը կատարեց, ու Ա՛ճ աղօթքին լսեց. բայց Յերոբովամ աս հրաշքները տեսնելով ալ չիդարձաւ, ու ժողովուրդը գայթակղեցունելէն չիզարեցաւ: Ա՛ճ իրեն Ա՛քիա մարգարէն խաւրեց, որուն բերնով որ յառաջ իր մեծնալիքը ու թագաւոր ըլլալիքը պատմած էր իրեն: Ա՛քիան յայտնեց իրեն, որ

Մճ իր գայթակղութիւնները պատժելու  
 համար զինքը ու բոլոր իր ընտանիքը պի-  
 աի ջնջեր : Արն որ կատարեց Ռասասա , որ  
 մարդ մը չապրեցուց , Յերոբոամին բո-  
 լոր ցեղը սրէ անցուց՝ լմնցուց : Իսրայէ-  
 լին թագաւորութիւնը Յերոբոամէն ու  
 անոր յաջորդներէն մոլորեցաւ , Մճ ալ  
 բարկացաւ , Մսորիներուն թագաւորը  
 Սաղմանասարին ձեռքովը ջնջեց անիկայ ,  
 ու մէյ մ'ալ չիկանգնեցաւ : Մհա սոսկա-  
 լի օրինակ մի , որ Մճ ասանկ կը պատժէ  
 սք հաւատքի մէջ չար օրինակ ու գայ-  
 թակղութի տրվողները , ու անոնց հե-  
 աւեողները : Գ . Թադա . Ժա . Ժբ . Ժգ :

Խրատ գայթակղութիւն լրտ :

ա . Գայթակղութի տրվողը հոգևոր  
 մարդասպան է՝ սատանայի սպասաւորը՝ ու  
 Քնի փրկագործութե պտուղները ապա-  
 կանող : Ար չէ որ մինակ գայթակղութիով  
 պատճառ եղած մեղքերու պարտրկան կը լ-  
 լայ , հապա ան մեղքերը բժշկելու և վեր-  
 ցունելու ալ պարտրկան կը լլայ , որ գայ-  
 թակղութէ գայթակղութի չիյառաջանայ :  
 Բայց շատ ալ դժար բան է իր տրված  
 գայթակղութիները բժշկելը , որուն փոր-  
 ձը յայտնի կեցած է . վնզի աշխրբի մէջ

շատ գայթակղութիւններ եկած են, բայց քիչերը բժշկուած են <sup>1)</sup> :

Բ. Շատերը աշխատիլ չուզելով առանց մասնաւոր ուղելու գայթակղութի կուտան : Շատերն ալ գայթակղութի կուտան եկեղեցւոյ մէջ անպարկեշտ կենալով՝ կամ իրենց աւելի համարձակ խօսքերովը ու կերպերովը, կամ իրենք հաւատքի ու բարեպաշտուն մէջ անհոգութիւններով, կամ ծաղր ընելով զանոնք, որոնք որ սք հաւատքը կրխոստովանին ու կրպաշտպանեն : Ահ, որչափ մեղքերու պատճառ կըլլան անոնք ալ՝ որ կրօնի ու բարի վարքի անհամաձայն կի՛ գէ՛մ գրքեր կը գրեն կի՛ կըտպեն, ու անպարկեշտ պատկերներ կը քաշեն, կամ կը բաժնեն <sup>2)</sup> :

Գ. Աւելի մեծ կըլլայ անոնց գայթակղութիւն ալ, որոնք որ իրենց պաշտօնէն պարտրկան են բարի օրինակ տալու. ինչպէս ծնողքները՝ իրենց զաւկրներուն, տէրերը իրենց ծառաներուն, ու ասանկ կարգաւ ուրիշները <sup>3)</sup> :

1. Վ ա՛յ աշխարհի ՚ի գայթակղութեանց . . . .  
վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ՛ գայթակղութիւն. Ստաւ. Ժ. 7 :

2. Աորնչիցի՛ տկար եղբայրն ՚ի բու՛մ գիտութե՛,  
որոյ վս՛ Բս՛ մնաւ. ա. Աորն. Է. 11 :

3. Գարխն նր ՚ի ձեռաց քոց խնդրեցից. Աւ. Է.  
Է. 8 :

( ) ընկալ :

Մ, շկերտի քարոզարան ըսված գրքին մէջ կը պատմուի, որ մոլի հար մը կար, ասիկայ իր տղուն աղէկ կը թուածը վրա փոյթ չէր տաներ, աս բաւական չէր՝ իր չար օրինակներովը իրեն գայթակղութի ալ կուտար, զինքը իր հետը գինեատուններ՝ խաղի և ուրիշ մոլութիներու տեղեր կը տանէր : Մ, սանկով ողորմելի տըղան իր հօրը չար օրինակներովը, ու տըղված գայթակղութիներովը՝ ուտելու՝ խըմելու՝ խաղի՝ հայհոյութե և ուրիշ մոլութիներու վարժեցաւ : Մ, յ արդարութի ալ շատ չըսպասելով՝ քիչ ժամանակէն մէջ երկուքն ալ չարաչար մահերով մեռան, ինչպէս որ արժանի եղած էին : Այ՛ մարդ մը՝ որ զիրենք աղէկ կը ճանչնար, տեսիլքի մէջ երկուքն ալ դժոխքի մէջ տեսաւ, որ հար ու տղայ մէկըմէկ կը խածնէին՝ ու կը պատուտէին կոր, ու տղան կանիծէր կոր իր հարը՝ ըսելով, որ Ղուն զիս չի կը թեցիր, ինծի բարի օրինակներ չի տրուիր, ասոր ներհակը ինծի չար օրինակներ ու գայթակղութիներ տրուիր, ու քու չար օրինակներովդ ինծի առաջնորդ եղար, սորվըցուցիր ան չար մեղքերը՝ որոնց համար հիմա կը տանջուիմ կոր :

ՏԵՍԻՒՐԵՒՆԵՐՈՐԻ ՀԱՄԱՐ

Աստուծոյ վէցեբոցդ պատկերանին վրաս :

Կ. Ա՛ճ ի՞նչ կարգելու՝ թէ շնոր՝ ըսելով :  
 պ. Ա՛մէն ներգործութիւները՝ որ մարտու-  
 թե՛ դէմ են՝ կարգելու, թէ արտաքին  
 ըլլան՝ թէ մինակ ներքին :

Կ. Սարքութե՛ դէմ մինակ խորհուրդնե՞-  
 ըր ու գործքերը արգելած են :

պ. Չէ, հապա խօսքերը՝ երգերը՝ ու գրու-  
 քեր կարգալն ալ՝ որ մարդը մարքութե՛  
 դէմ մեղքերու կրգրգունն, արգելած են :

Կ. Անպարկեշտութե՛ մեղքերու մէջ թե՛-  
 թե՛ կրգտնելի :

պ. Կամքով ու ազատութիւ՛ կրլլան նէ՛  
 ամէնն ալ ծանր են :

Կ. Աս մեղքը զԱ՛ճ շատ կրբարկացունէ :

պ. Հրամմերես, ինչպէս ինքը զարհուրելի  
 պատիժներով ցուցուց՝ որոնցմով աս մեղ-  
 քը շատ անգամ հոս ալ պատժելով :

Կ. Ի՞նչ բանով կրընանք աս մեղքէն հե-  
 ոու կենալ :

պ. Ա՛ղօթքով՝ շուտ շուտ խոստովանան-  
 քով, Հաղորդութի՛ առնելով, պատարագ-  
 ներ տեսնելով, պահք՝ ծոմ պահելով, ու-  
 թիշ մահացուցումներ ընելով, ու պատ-  
 ճառներէն փախչելով :



հ. Ինքը զինքը կամաւ մերձաւոր առիթ-  
ներու մէջ դնելը մեղք է, ինչպէս չար  
ընկերներու հետ կենցաղաւարովիլը, թէ  
որ փորձութիւններու գէմ՝ ալ կըրնայ կե-  
նալ նէ :

Պ. Հրամներես, վնդի յանդգնութիւր ու  
ինք իրեն ապաւինիլն ալ մեղք են, որ  
ասոնց պատիժը շատ անգամ չարաչար կյ-  
նայն է :

հ. Արբոր մէկը ասանկ առթի մէջ կը-  
գտնըվի ու փախչիլ ալ չիկրնար նէ՝ ի՞նչ  
պէտք է ընել :

Պ. Հոգեւոր հօրէն խրատ ուղելու է, իր  
զգայութիւններուն վրա արթուն կենալու է,  
գլխաւորաբար աչքերուն վրա, ու շուտ  
շուտ աղօթքի ու խորհուրդներու գիմե-  
լու է :

Սոգոմ Գոմոյն Էրվէլուն պատմութիւնը :

Աճ Աբրահամին յայտնեց, որ ինքը՝  
Սոգոմ քովի քաղքըներովը մէկ տեղ պի-  
տոր աւրեր իրեն գարչելի պղծուէցը հա-  
մար, որոնց մէջ ինկած էին : Աբրահա-  
մը Աստուծմէ աս շնորհքը ընդունեցաւ,  
որ թէ որ ան քաղաքները տասը արդար  
գտնըվելու ըլլայ նէ, անոնց համար բո-  
լորն ալ պիտոր աղատէին : Բայց մէջեր-  
նին Գոլտէն՝ իր կնկանէն, ու երկու աղ-

ջիկներէն իզատ արդար մարդ չիգտնը-  
վեցաւ : Արկու հրեշտակներ ճամբորդի  
կերպարանք մտած՝ Ղովտին երեցան, ի-  
րեն իմացունելու համար, որ ան անիծած  
քաղքէն ելլեն : Բայց ասոնք Ղովտին  
տունը մտան նէ՝ քաղքին անամօթ քաղ-  
քըցիները մեծ ու պղտիկ Ղովտին դրանք  
առջևը ժողվեցան, ու Ղովտը կրտսի-  
պէին ան մարդիկները իրենց տալու, որ  
անոնց հետ անասունի պէս իրենց չար  
կամքերը կատարեն : Արբոր դուռը կոտ-  
րել կուղէին կոր նէ, հրեշտակները զամ-  
մէնքն ալ կուրուծիով զարկին, ու Ղով-  
տին հարցուցին, որ ան քաղքի մէջ ազ-  
գական կամ բարեկամ ունի՞ . որ թէ որ  
ունի նէ՝ քաղքէն ելած ատենը հետը զա-  
նոնք ալ մէկ տեղ առնու : Ղովտը աս  
բանս փեսաներուն յայտնեց, որոնք որ իր  
աղջիկները պիտոր առնուին . բայց անոնք  
իր խօսքին չիհաւտացին՝ զինքը ծաղը բրին :  
Ակող հրեշտակները Ղովտը իր ընտա-  
նիքով քաղքէն դուրս հանեցին՝ ու իրենց  
ապսպրեցին, որ շուտով փախչին, ետ չի-  
նային : Ասոնք դուրս ելան, երկինքէն կը-  
րակն ալ սկսաւ անձրևի պէս Սողոմ՝ Ղու-  
մորի ու անոր մօտ երկիրներուն վրա իջ-  
նալ, որ բոլորն ալ երեց՝ տոչորեց, ու  
ժամանակաւոր կրակէն դժոխքին յաւի-

տե՛նական կրակը տարաւ՝ ձգեց : Ղովտին  
կինը՝ որ հետաքրքրութիւնով ետ դարձաւ  
նայելու նէ՛ անմիջապէս ան ալ աղի ար-  
ձան կտրեցաւ : Աս օրինակէն աղէկ կը-  
ճանչցրվի աս անպարկեշտութեան մեղքին  
հետ միացած կուրութիւն . իրեն շուտով  
ու սաստիկ տարածվիլը , ասոր պատճառած  
անհոգութիւն , ետեւէն հասած յանկարծա-  
կի մահը , ու ամէն աս տեսակ մեղքերու  
պատճառներէն ու հետաքրքրութեն փախ-  
չելու համար մեր պարտքը : Օ՛նն . Ժ . Ժ :

Խորոք անպարկեշտութիւնը :

Մ . Աս մոլութիւն ամէն մոլութիւնե-  
րէն աւելի մարդը մարդկային աստիճանէն  
վար կառնու՝ կրցածցունէ , հոգին մարմնոյ  
տակ ձգելով , մեծ իմաստուններն ալ ան-  
միտ կընէ , ինչպէս Սողոմոնի վրա յայտ-  
նի երեցաւ , ու ամէնէն գթածներն ալ  
անգութ կընէ , ինչպէս Ղաւթին պատա-  
հեցաւ , և մէկ ամչնալու հեշտութե հա-  
մար ամօթը ու խղճմտանքին սաստիկ զար-  
նելը ոտքի տակ կառնու<sup>1</sup>) :

Բ . Աս մոլութիւն ամէն մոլութիւներէն  
աւելի քրիստոնեաներուն պատիւը վար

1. Ս'ի մնասցէ հոգի իմ 'ի մարդկանդ յայգմիկ ,  
գն լինելոյ դոցա մարմին . Օ՛նն . 2 . 3 :

կառնու <sup>1)</sup> : Սեր անդամները սք մկրտու-  
թիւով Վրսի անդամներ եղած են , ու աս մո-  
լութիով սատանայի կրմատնըլին : Ըս մո-  
լութիւ քրիստոնէութե դէմ չէ թէ միայն  
սրտին մէջը կը պատերազմի , հապա հա-  
ւատքի մասունքները մեր մտքէն ալ հա-  
նելու կաշխատի : Ընմեզը դժոխքին յա-  
ւի տենականութե վրա չերկբայիր , բայց  
ասիկայ զմարդը ամմէն մեղքէն աւելի  
երկբայուե ու անհաւատուե մէջ կը ձգէ <sup>2)</sup> :

Գ . Ըսիկայ ամմէն մոլուխներէն աւելի  
ու շատ անգամ յանկարծական ու ան-  
զեղջ մահերով պատժըվեցաւ , վնդի աս  
մեղքը զմարդը կենդանութե ատենը կամ  
խորհուրդներէն կը պաղեցունէ , և կամ  
խոստովանելու ամրչցունելով , ու ասկէ  
ետ կենալուն դժարուիր մտմտալով սրբ-  
բապղծութի ընել կուտայ , անոր համար  
լաւագոյն է զգուշանալ փախչելով , ու  
զգայութիւնները մաքուր պահելով <sup>3)</sup> :

1. Ըսեալ զանդամս Վրսի , աննիցիմք անդամս  
պոսնկի . . . կրճ . շ . 15 :
2. Փսխանակեցին զճմարտութիւն Ըստուծոյ ընդ  
ստութեան . . . Վ ս արտրիկ մատնեայ բզ-  
նս 'ի կարիս անարգութե . . . 25 . 26 :
3. Սիրէ Տր զսիրտ սք , և ընդունելի են նմա ամ  
անարատք . Ը . 11 :

( ) րևակ :

Մեղաւոր կին մը շատ ատեն՝ ազնւական բայց բնութիով ցած մարդու մը հետ մեղք գործելէն ետքը՝ գոնէ մահւան ատենը զղջալուն՝ վերջի հոգևոր պատրաստութիները տեսնելուն տեղը՝ քովիններուն աղաչեց, որ ոտքերը նոր հողաթափներ (գունտուրաներ) հագցունեն, ու անանկ թաղեն զինքը, վսզի երկան ճամբայ պիտի քալէ. մեռնելէն ետքը ըսածին պէս թաղեցին զինքը: Ան գիշերը զօրսպետ մը ձի հեծած՝ ու հետը սպասաւորով մը լուսնկային քաղքէն դուրս կելլայ զբօսանքի համար: Քաղքէն քիչ մը դուրս հեռացածին պէս սոսկալի կնկան ձան մը կըլսէ, ու շատ կըվախնայ, ետեէն աս ողորմելի մեղաւոր կինը կըտեսնէ, որ մինակ շապկով ու հողաթափներով՝ մաղերը ցիրուցան եղած վախչելով՝ պռաւով ու ( ) գնէ ինծի, օգնէ ինծի, ըսելով իրեն կուգար կոր: Օջրապետը ձիէն վար կիջնայ՝ սուրը քաշած կնկան սիրտ կուտայ ըսելով, որ Քովս եկուր՝ մի վախնար, ինչւան մահս կըպաշտպանեմ զքեզ: Աինը քովը կուգայ նէ՛ կըճանչնայ զինքը, ու կըկարծէ, որ կենդանի է՝ որ վախնալով կըպատմէ իրեն, որ զինքը որսորդ մը կը-

փրնտուէր կոր : Արսկսի հեռուէն զարհու-  
 րելի փողի ձան մը ու որսի շներու ձա-  
 ներ լսիլ . կնիկը կըսկսի ալ աւելի վախ-  
 նալ՝ դողալ ու պոռալ , ան ատենը զօրա-  
 պետը կնկան մազերը մէկ թւին կըսկսի  
 աէ՛ ու մէկալ ձեռքը սուրը՝ պատերազմե-  
 լու կըպատրաստըփի ողորմելին ազատելու  
 համար : Աժոխային որսորդը մօտենա-  
 լով կնիկը նորէն կըսկսի պոռալ՝ ըսելով ,  
 Օհս թող տուր , թշնամիս եկաւ՝ հասաւ ,  
 չեմ կրնար ձեռքէն փախչիլ . զօրապետը  
 ցաւելով իրեն թող չիտար նէ՛ գլուխը  
 անանկ ուժով մը կըթօթվէ , որ մազերը  
 կըփրթին՝ զօրապետին ձեռքը կըմնան , ու  
 ինքը փախչիլ կըսկսի . բայց սատանան  
 կըհասնի ձիաւոր որսորդի կերպարանքով՝  
 կառնու զինքը իր սև ձիուն ետևը՝ ու օդը  
 կըթռչի , ու ողորմելին անանկ կըպոռայ՝  
 կըպոռչոտայ , որ զօրականը կարծեց , թէ  
 աշխարհք կըփլչի՝ կըվերջանայ կոր : Օջ-  
 րապետը աս տեսիլքէն շատ վախցած՝  
 քաղաք դարձաւ , տեսածները քաղքին  
 մեծերուն պատմեց , ու մազերն ալ իրենց  
 ցուցուց : Ըսոնք ալ գերեզմանը բացին՝  
 տեսան , որ գլուխը մազ չիկար , ու նոր  
 հողաթափները կտոր կտոր եղած էին :  
 Անտարիտաք իւրապէս , որ իր Ժամանակը պա-  
 րահած էր :



ՏԱՄԵՐ, ՉՈՐՍԵՐՈՐԴ ԼԵՄԵՐ

Աստուծոյ Եօլնէրոյդ պատիրանն լրա :

Հ. Աճ ի՞նչ կարգելու ըսելով՝ Ք Գ-  
ղանայ :

պ. Ընկերին ունեցածին անիրաւութի ը-  
նելը կարգելու :

Հ. Աս պատիրանին դէմ քանի՞ կերպ կը-  
մեղանչըվի :

պ. Ատ կերպ՝ բայց գլխաւորաբար յա-  
փրշտակելով՝ գողանալով՝ վաշխով՝ ու ան-  
իրաւութիներ ընելով անոր ունեցածին :

Հ. Գողութիւն մահացու ըլլալու համար  
օրհասի բան պէտք է :

պ. Աճ բանները հասարակ աղքատի մէկ  
աւուրչէքը բաւական կըսեպեն գողութն  
մահացու մեղք ըլլալու համար, ու ասկէ  
քիչն ալ՝ թէ որ կարօտութի ունեցողէ մը  
կըլլայ նէ, բաւական է մահացու մեղք  
ըլլալու. անոր համար ասոր դատաստանը  
ամմէն մարդ իր խոստովանահօրը հար-  
ցունէ :

Հ. Գողութի ընողը՝ կամ ընկերին վնաս  
տրվօղը ի՞նչ պէտք է ընել :

պ. Պէտք է՝ որ գողցած բանը տիրոջը  
դարձունէ, ու իր յանցանքովը անոր տը-  
ված վնասը հատուցանէ, թէ որ իրեն  
անկէ շահ մ' ալ եղած չէ նէ :

Հ. Ուրիշին բանը գտնօղը ի՞նչ պարտը-  
կան է ընելու :

Պ. Պարտըկան է մեծ ջանքով տէրը փրն-  
տուելու , ու տիրօջը տալու . թէ որ տէրը  
մեռած է նէ՛ իր մարդիկներուն տալու :

Հ. Արբոր անանկ ալ չիկրնար տէրը գըա-  
նել նէ՛ ի՞նչ ընելու է :

Պ. Աղքատի տալու է , կամ բարեպաշտ  
գործքի մը գործածելու է , որ կորսըն-  
ցունողին հոգևոր օգուտ բլլայ :

Հ. Աս պատւիրանը ուրիշ բանի ալ կը-  
պարտաւորէ՞ :

Պ. Հրամներես , մեր բաներէն ալ ընկե-  
րին տալու կըպարտաւորէ՛ երբոր կըր-  
նանք , ու ան ալ իրաւցընէ կարօտ է նէ :

Հ. Աս պարտքը ի՞նչպէս կըսվի :

Պ. Ողորմութե՛ր պատւիրան կըսվի :

Հ. Անանկ է նէ՛ աղքատի ողորմութի՛ տալը  
մինակ խրատ չէ՞ :

Պ. Չէ , պատւիրան մի է , որ Ա՛ճ պատ-  
ւիրած է մէկզմէկու օգնելու համար :

Տաճիկայի ու կոտնելուսի պատմութիւնը :

Յոպպէ քաղաքը Տարիթա անունով  
սք կին մը կար , որ բարի գործքերով ըն-  
ցուն էր՝ ու շատ ողորմութի՛ կուտար .  
ասիկայ հիւընդցաւ՝ ու մեռաւ : Հա-  
ւատացեալները գիտնալով , որ Պետրոս ա-

ապքեալը իրենց մօտ՝ Միգիա քաղաքն էր . երկու հոգի իրեն խաւրեցին աղաչելու համար , որ շուտով գայ . ու զինքը Տարիթային տունը տարին : Մեռելին քովը շատ աղքատներ ժողված՝ իրենց վրայի զգեստները լալով Պետրոսին կըցուցունէին , որոնք որ մեռնողը իր ձեռքովը շինած՝ իրենց հագցուցած էր : Պետրոս առաքեալը զիրենք դուրս հանեց . աղօթքի կեցաւ , մեռելը կենդանացուց , ու որբերը ու աղքատները ներս կանչելով ամմէնն ալ շատ ուրախացուց : Վորժ . Ը :

Առունելիոս հարուրապետը Մատուճմէ վախցող մարդ մի էր՝ ու շատ ողորմութի կուտար : Հրեշտակ մը երեցաւ՝ ու իրեն ըսաւ . Առունելիոս՝ քու աղօթքներդ ու ողորմութիւններդ Մ.Յ առջևը ելան . Պետրոս անունով մարդ մը կայ , որ հիմայ Յոպպէ քաղաքն է , անիկայ կանչել տուր , որ քեզի սորվըցունէ թէ՛ ինչ պէտք ես ընել : Առունելիոսը շուտ մը երկու ծառայ ու հետերնին բարեպաշտ զինւոր մը խաւրեց : Պետրոս առաքեալը եկած ատենը Առունելիոսը շատ հեթանոսներու առջևը անոր պատմեց իրեն պատահած քանը : Պետրոս առաքեալը սկըսաւ աւետարանել իրենց Յս Քնը՝ ու անոր հաւտալու հարկաւորութիւր : Պետրոս

կըխօսէր կոր նէ՝ Հոգին սք երևնալով  
ամմէնուն վրա ալ ինջաւ : Աս տեսնելով  
առաքեալը հրամայեց . որ մկրտըվին . ա-  
սոնք եղան հեթանոսներէն առջի դար-  
ձողները : Աս երկու պատմութիւնները եր-  
կու զօրաւոր օրինակներ են՝ ողորմութե  
զօրութիւր ցուցունելու համար , որ Այ  
հոգեւոր ու մարմնաւոր օրհնութիւններովը  
կըլեցունէ զմեզ : Վ. Կ. Ժ :

Խորոհողութիւն-Ը՛՛ Ժրտ :

« . Ողորմութե պարտաւորութիւր նախ՝  
Այ կողմանէ է , որ հարկ (խարաճ) մի է ,  
որն որ մեր իրմէն ընդունած բարիքնե-  
րուն տեղը իրեն տալու պարտըկան ենք .  
ինքը աս հարկը մեզմէ պահանջելու հա-  
մար իր տեղը աղքատները դրած է <sup>1)</sup> :  
Ունեւորներն ալ աղքատներուն նայելով  
Այ նախախնամութե կարգը կըկատարեն :  
Երկրորդ՝ ընկերին կողմանէ , վստի ընկե-  
րին օգնելու կարօղ եղած ատենը անոր  
կարօտութեը չօգնելը զԱ՛ճ չիսիրել է <sup>2)</sup> :  
Երրորդ՝ մեր կողմանէ . վստի աշխրբիս

1. Պատուեալ զՏ՛ր ՚ի քոյոց արդար վաստակոց .  
Ա. Կ. Ժ . 9 :

2. Որ ունիցի զկեանս ինչ զաշխարհիս , և տեսա-  
նիցէ զեղբայր իւր կարօտեալ իւրք՝ և փակիցէ  
զգութիւր ի նմանէ . զիարդ սէրն Աստուծոյ  
՚ի նմա իցէ բնակեալ . « . Յ. Կ. Ժ . 17 :

Հարստութիւնները մեզի թոյն են , որոնց փնասակարութիւր ողորմութիւր կըկտրէ , որ մեզի չիփնասեն :

Բ. Ողորմութիւր զմեզ մեղքէն կազատէ՝ ու մեղաց համար Մ.Յ կըվճարէ . մեր վրա հոգևոր ու մարմնաւոր օրհնութիւններ կըբերէ . մեզի մահւաննիս ատենը մեծ յոյս կուտայ , վնդի ողորմութիւր յաւիտենական արքայութե գրաւն (փէյն) է , որ աղքատները Քնի անունովը ու Քնի տեղ կընդունին մեզմէ <sup>1)</sup> :

Գ. Արողութիւր ու աւելորդը աշխրբիս հոգիովը չափելու չէ , որ երբէք բաւական է չըսեր . աւետարանի օրէնքով ու պատւիրանովը չափելու է , որ շոսյլութիւր ու հեշտութիւնները կարգելու . ինչպէս Հոգի սքն ալ Տորիթին բերնովը կըսորվեցունէ , որ Հատ ունեցած ատեննիս շատ ու քիչ ունեցած ատեննիս քիչ տալու ենք : Մասնաւոր կարօտութի ունեցողները նախադասելու է , ինչպէս հիւանդները՝ շատ ընտանիք ունեցողները , ու շատ կարօտները <sup>2)</sup> :

1. Արովհետե արարէք միւսժ յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք . Մատթ. Է. 40 :

2. Ար տայ աղքատաց՝ ոչ կարօտացի . Մատթ. Է. 27 :

Օրինակ :

Ողորմած քաղքըցի մը կար, որ ուրիշ շատ առաքինութիւններէն իզատ աս աղէկ սովորութիւն ալ ունէր. ամէն ուրբաթ օրը իր տունը աղքատ մը կըտանէր՝ ոտվըները կըլուար, ու Քնի չարչարանքներուն սիրուն համար իրեն շատ սիրով կերակուր կուտար : Եղբատները գիտնալով ասոր ասանկ աղքատասիրուիը՝ ուրբաթ օրերը կերթային իրմէն աս սիրոյ ողորմութիւն ընդունելու համար : Պատահեցաւ, որ ուրբաթ օր մը աղքատ մը չերեցաւ. ասիկայ առանց աղքատի սեղան նստիլ չուզելով՝ թողուց սեղանը ու պատրաստած կերակուրը, ու գնաց աղքատ փնտռելու : Ատքը պոպիկ ու աղտոտ աղքատ մը տեսաւ, ու առաւ տունը բերաւ. կնիկը աղքատը տեսածին պէս մեծ սիրով վազեց ոտքերը լուալու համար, ու լուացած ատենը տեսաւ, որ աղքատին երկու ոտքերն ալ մէկ դիէն մէկալ դին մէյմէկ ծակեր կային : Աինը աս բանիս վրա զարմանալով ընկերը կանչեց՝ ըսելով . Տէր իմ՝ եկուր, նայէ, աս աղքատին ոտքերը ծակեր կան՝ խաչի վրա Քնի ոտքերուն պէս : Ըն ատենը աղքատը՝ որ ԵՅ Արդին Քն ինքն էր, ըսաւ իրենց . Կուք զիս



ձեր տունը ուրիշ անդամներ իմ աղքատ անդամներովս կընդունէիք, աս օր զիս ընդունեցիք: Անոր համար ես ալ ձեզի կըխոստանամ, որ աս աշխարհքը ձեզի կերակուր չիպակսի. անդիի աշխարհքն ալ յաւիտենական կենաց արժանի ըլլաք. աս ըսաւ, ու անյայտ եղաւ: ( ) Երևա. Գ. ան. 31 Գ. 2 Կ. 4 Ե. 1:

ՏԱՍՆՐ, ՀԻՆԳ, ԵՐՈՐԴ, ՀԱՍՆՐ

Աստուծոյ ուրիշը պատկերանի զես:

Կ. Ի՞նչ կըպատուիրէ Ա՞ծ թ' սուս զլայեր' ըսելով:

Պ. Ի՞նչերին պատուոյն դէմ չիմնասելը կըպատուիրէ:

Կ. Ի՞նչերին պատուը ինչով կըմնասվի:

Պ. Օրպարտուիով, ու չարախօսուիով:

Կ. Օրպարտութիւն ի՞նչ է:

Պ. Ի՞նչերին չըրած յանցանքը վրան ձըգելն է:

Կ. Ի՞նչերը զըպարտողը ի՞նչ պարտըկան է ընելու:

Պ. Իր ըսած խօսքը ետ կոչելով՝ ու անխօսքով ընկերին տըլած մնասին տեղը իրեն հատուցումը ընելով:

Կ. Ի՞նչ է չարախօսութիւնը կամ բամբասանքը:

դ. Մեկերին գաղտուկ ըրած յանցանքը չի գիտցողներու, և կամ անոնց պատմելն է, որոնք որ զինքը ուղղելու պարտրկան չեն ու չեն կրնար ուղղել :

հ. Մեկերին յանցանքը պատմելը երբեմն օրինաւոր ալ կրնայ ըլլալ :

դ. Հրամմերես, երբոր ան յանցանքէն չար բան հետեւելու վտանգ կայ նէ, Մ. ճ կուզէ, որ եկեղեցւոյն ըսվի, այսինքն անոնց՝ որոնք որ կրնան ու պարտրկան են անոր դէմ ճար մը գտնելու :

հ. Մնչ բանի պարտրկան է ան, որ իր չարախօսութիւնովը ընկերին պատուոյն վնասեր է :

դ. Մեկերին պատիւը շահելու, ու տրված վնասին տեղը իրեն հատուցում ընելու :

հ. Մ. ճ ի՞նչ կարգելու թ' սուս վէտայե՛ր՝ ըսելով :

դ. Չէ որ մինակ ընկերին վնասակար սուս խօսիլը կարգելու, հապա իբրև ճշմարիտ հաստատելն ալ ան բաները, որոնց սրտութիւնը ուրիշներուն յայտնի է :

Մտե՛րդ ինչ որ պատմուի ինչ :

Ե. քաար թագաւորը Մարտիկին է գին գնել ուղեց, որ իր պալատին քովն էր, որն որ Մարտիկինը չէր ուղեր ծախել, վնդի իր հօրէն մնացած ժառանգուի էր :

**Մ. քաարին կինը** **Յեզարէլ** **Յեզրայէլն** դա-  
 տաւորներուն գիր մը գրեց, որ **Սարով-**  
**թը** դատաստանի առջևը կանչեն, իրեն  
 դէմ սուտ վկաներ բերեն՝ հաստատել  
 տան, որ **Սարովթը Մ. Ե** ու **Թագաւորին**  
 դէմ անէծք տրված ըլլայ, ու զինքը  
 մեռցունեն : **Վատաւորներուն** մէջը չար  
 մարդիկներ դանբլելով՝ **Յեզարէլին** ան-  
 օրէն հրամանը կատարեցին, **Սարովթին**  
 դէմ սուտ վկաներ գտան, զինքը զրպար-  
 տել տրվին, ու անոնց խօսքովը անմեղ  
 մարդը քարկոծելով մեռցունելու դատա-  
 պարտեցին. ու ասանկով ողորմելին է-  
 գին ալ պատիւն ալ կեանքն ալ մէկէն կոր-  
 սընցուց : **Մ. Ե** ատենը **Յեզարէլը Մ. քաարին**  
 ըսաւ. **Սարովթը** մեռաւ, հիմայ կըրնաս  
 էգին առնուլ : **Մ. քաար** էգին առաւ, ու  
 մէջը քալած ատենը **Ս. ղիա** մարգարէն զի-  
 մացը ելաւ, **Մ. Ե** կողմանէ զինքը յանդի-  
 մանեց, ու իրեն ըսաւ, որ **Մ. Ե** սոսկալի անի-  
 րաւութի համար **Մ. Ծ** իրենց բարկացած է,  
 ինքը՝ իր կինը **Յեզարէլը**, ու իր զաւկը-  
 ները **Սարովթին** մահաւանէն աւելի չարա-  
 չար մահերով պիտի մեռնին : **Մ. քաարը**  
 իր յանցանքը ճանչնալով խոնարհեցաւ՝  
 քուրճ հագաւ, ու պահք պահեց. **Մ. Ծ**  
 ալ անոր զղջումին նայելով՝ տալու պա-  
 տիժը ուշացուց : **Բայց Յեզարէլը՝** որ

բոլոր ան չարիքներուն պատճառ եղած էր, զինքը Յէուին հրամանաւը իր պալատին պատուհանէն վար նետեցին, ձիերու ոտքերուն տակը կոխել տրվին, ու մարմինը հոն տեղը շուները կերան, ուր որ իր հրամանաւը՝ Արարիւթը քարկոծած էին նէ: Գ. (Թ. Գ. Խ: Կ. (Թ. Գ. Ը:

Խրատ Բամբասանի վրա:

Մ. Բամբասանքը շատ չար աղբերներէն յառաջ կուգայ, այսինքն՝ գաղտնի ատելութենէն, կամ չար նախանձէն, կամ չար հոգիէ մը, որ ընկերին ամմէն բրածին չար մեկնութի կուտայ, ու կամ անարգող հպարտութէ մը, որ ընկերին վնասովը կուզէ ինքը սիրվել ու գովվիլ՝ անոր չեղած տեղը ու ատենը <sup>1)</sup>:

Բ. Բամբասանքը շատ ողբալի գործքեր ունի: Արուն ետեէ որ չար կըխօսվի նէ, անոր ամմէնէն աղէկ բանը կաւրէ, որ պատիւն է, ու բամբասողին հաճոյ ըլլալու համար մտիկ ընողներուն դառն ձանձրութի կուտայ, ու զերենք ԱՅ առջևը յանցաւոր կընէ <sup>2)</sup>, ու զինքը բամբասողն

1. Ահկուզ էին բանք նոցա քան զձէթ. և ինքեանք որպէս սլար. Սուր. ԶԲ. 22:

2. Չլեզու մարդկան ոչ որ կարէ հնազանդել՝ բղջարն և զանկարգն և զլի թունօք մահաբերին. Յու. Գ. 8:

ալ Աստուծոյ ու մարդու առջևը առեւիկ կրնէ <sup>1)</sup> :

Գ. Ռամբասողը ընկերին աւրած աւնունը ու պատիւը տեղը բերելու մեծ պարտք ունի : Աս պարտքէն ուրիշ կերպով խալըսելու ճար չիկայ : Թէ որ ընկերին անունը ու պատիւը շտկելու համար ինք իր պատիւը կորսնցունելու վտանգ ալ կայ նէ, անոր հատուցում ընելու համար պարտրկան է ան վտանգը յանձն առնելու . վնդի ինչպէս ստրկին ստրկով հատուցում կըլլայ, անանկ ալ պատուոյն պատուով հատուցում կըլլայ : Բայց աս հատուցումը շատերուն դժար գալով՝ աս աշխրբի մէջ եղած անչափ շատ չարախօսութիւններուն տեղը ասանկ քիչ հատուցում կըլլայ, ու մնացածը Ա՛յ անաչառ գատաստանին կըմնայ :

### ( Երկրորդ ) :

Փորթուգալի Գիոնեսիոս թագաւորին շատ սիրելի ու բարի զինւորական մը մեռնելու առեւեր իր մէկ հատիկ տղուն շատ աղէկ խրատներ տալէն ետե՛ պատուիրեց իրեն, որ Ա՛յ հաւատարիմ ըլլայ, ամմէն

---

1. Ահաւոր է ՚ի քաղաքի իւրում այր լեզուանի .  
Եկէս . Բ . 25 :

որ պատարագ տեսնալու չիմոռնայ, պարկեշտ ըլլայ, թէ որ ԱՅ սիրուն համար կուտուծի ալ պահելու ըլլայ նէ՛ շատ ազէկ կընէ, սը անձաճնայ ալ ջերմեռանդ ըլլայ, ու թագաւորին ծառայութենը մէջ հաւատարիմ ըլլայ, որուն որ աղաչած էր զինքը իր տեղը դնելու: Քարի հարը մեռաւ. թագաւորն ալ հօրը տեղը տղան առաւ իրեն ծառայութենը: Տղան ալ ասանկ բարեպաշտ հօր բարի զաւակ ըլլալով, հօրը խրատները բոլոր կը պահէր, ու անոր համար թագաւորը՝ սը Աղիսաբէթ թագուհին՝ ու պալատին բոլոր իշխանները զինքը զաւակի պէս կը սիրէին: Բնկերներուն մէկը ասոր նախանձելով՝ սկսաւ իրեն ու թագուհւոյն վրա թագաւորին առջևը չար զրպարտութիւն ընելու, ու ան չափ ըրաւ, որ թագաւորը հաւտացուց: Թագաւորն ալ ասանկ նախատական յանցանքը գաղտուկ պատժելու համար իրիկուն մը կիր (քիրէճ) վառողներու գըլխուն գաղտուկ ապսպրեց, որ Քեզի վաղը առտու մարդ մը պիտի խրկեմ, եկածին պէս զինքը փուռը նետես: Առտրւանց կանուխ ան անմեղ ծառան պատճառաւ մը անոր խաւրեց: Օտուան երթալու ատենը ան օրը պատարագ չիտեսած ըլլալով եկեղեցին կըմոռնայ՝ պատարագ մը կը տես-



նէ . ետքը սք շճաճնայ խորանին առջևը  
աղօթելու ատենը ՄՅ կարգադրութիւնը  
քունը կըտանի : Մն միջոցին մէջը թա-  
գաւորը ան զրպարտութի ընօղ ծառան  
ետեէն կըխարէ իմանալու համար , որ  
հրամանը կատարած է՝ թէ չէ . կիր վա-  
ռողները ասիկայ տեսածնինպէս կըբռնեն՝  
փուռը կընետեն : Տարի ծառան կարթըն-  
նայ , կերթայ՝ թագաւորին հրամանը կը-  
կատարէ : Ու կըդառնայ թագաւորին կը-  
զրուցէ , որ հրամանը կատարեր են : Թա-  
գաւորը զինքը կենդանի տեսնելով կըզար-  
մանայ , և անչափ ուշանալուն պատճառը  
կըհարցունէ : Մտան մէկիկ մէկիկ կը-  
պատմէ հօրը վերջին խրատները , անոր  
համար պատարագ տեսնելը , ետքը քու-  
նը տանիլը , որուն մէջը սք Մճաճինը երե-  
ցած՝ զինքը խրատած էր կուսութիւնը մէջ  
հաստատ կենալու՝ ՄՅ ու իր թագաւորին  
հաւատարիմ ըլլալու՝ ինչպէս որ ինչւան  
ան ատենը եղած էր նէ : Մն ատենը կը-  
ճանչնայ թագաւորը ՄՅ արգարուիը՝ չար  
ծառային զրպարտութիւնը վրա . ու բարի  
ծառային անմեղութիւնը : Մտրո . և Պե-  
րոս Փարիզի երգիչը իրպարմ :

ՏԼԱՆԲՎԵՅՆԲՈՐԴ ԼԵՄԵՐ

Այ իննեւրորդ եւ ասանեւրորդ պատմութեանն իրանն զլրա :

Է. Ինչ բան կարգելու Աճ Տի ցանկար ինչ լինելի չո՛ր ըսելով :

պ. Ինչպէս վեցերորդ պատմիրանով մաքրութիւն դէմ ամմէն տեսակ գործքերը արգելած էր նէ՛ անանկ ալ ասով՝ անոր դէմ ամմէն տեսակ բաղձանքները կարգելու :

Է. Աս խօսքով ինչ կարգելու . եւ Տի ասի որ նորոք իցէ :

պ. Այսովնեւրորդ պատմիրանով գողութիւն արգելեց . ասով ալ գողութիւն բաղձալը կարգելու :

Է. Ուրիշին բանին ամմէն կերպ բաղձալն ալ արգելած է :

պ. () րինաւոր կերպով որ կը լայ նէ՛ արգելած չէ, ինչպէս գնելով անոր ալ ուղեւոր, բայց անիրաւ կերպովը արգելած է :

Է. Ինչո՞ւ իր պատմիրաններուն դէմ բաղձանքը ու խորհուրդներն ալ Աճ մասնաւոր պատմիրաններով կարգելու :

պ. Այս գործքը բաղձանքէն ու խորհուրդէն յառաջ կուգայ, անոր համար անոնց դէմ կեցողը չար գործքի մէջ չիյնար :

Է. Հապա մարդկային օրէնքները ինչո՞ւ մինակ գործքերը կարգելուն ու կը պատժեն :

ող. Այլ սղի մարդիկները մինակ գործքը կըր-  
նան տեսնել բայց ՄԺ հոգին ու սիրտն ալ  
կըտեսնէ, ու կուզէ, որ իր առջևը ամմէնն  
ալ մաքուր ըլլան :

հ. ՄԺ պատւիրանին գէմ ամմէն խոր-  
հուրդն ալ մեղք է :

ող. Հրամմերես, թէ որ մէջը կուշանանք  
ու կընդունինք նէ. բայց թէ որ շուտով  
կըվճնտենք ու չենք ընդունիր զանոնք նէ՝  
մեզի արդիւնք վաստրկելու նիւթ կըլլան :

հ. Մըն է անշահ խորհուրդներու և չար  
բաղձանքներու արմատը :

ող. Անուլութի, դատարկութիւն է, որ ամ-  
մէն մոլութիւններու մայր կըսվի :

հ. Ինչո՞ւ դատարկութիւնը ամմէն մոլու-  
թիւններու մայրն է :

ող. Այլ սղի մարդուն սիրտը անանկ ապա-  
կանած է, որ թէ որ աղէկ ու օգտակար  
բանի ետեւէ զբաղած չըլլար ու պարապ կը-  
մնայ նէ՝ շատ անգամ չար բաներուն կը-  
դառնայ :

հ. Ի՞նչ բանով չար խորհուրդներու և  
բաղձանքներու գէմ կըրնանք կենալ :

ող. Եամանակնիս աղէկ գործածելով :

Մէկ քանի հարգելիներս պատահաւորէր, որ  
Ժամանակէն խորճուելէ վրա շատ անգամ  
իւրաքանչեւն ։

Յովը երանելին իր չարչարանքներուն  
մէջը ինքը զինքը մխիթարելու, ու իրեն  
սիրտ տալու համար՝ որ կարող ըլլայ համ-  
բերել ինք իրեն կըսէր՝ Սարգը տկարութե  
արգանդէ ծնած՝ ապրելու քիչ ժամանակ  
ունի, իր կեանքին օրերը կըրնան համը-  
վել անչափ նեղութիւններով՝ որ կընեղեն  
իր հոգին ու մարմինը ։ (Վէ որ երբեմն  
ծաղկի գեղեցկութիւն ալ ունի նէ, որ առ-  
տըւանց երկրէն կելլայ, ու անցաւորութիւ  
հետը ունենալով՝ երևնալը ու փայլիլը  
կըտեսնես, մէյմ՝ ալ կընայիս, որ թողմեր՝  
ապականեր է ։ Աեանքին մէկ ճշմարիտ  
պատկերն ալ շուքն է. որ անոր պէս կը-  
փախչի ու աներևոյթ կըլլայ ։ Յով. Ժ. ։

Պօղոս առաքեալը կըպատմէ, որ առ-  
ջի նախահարքը շատ անգամ վրաններու  
տակ կըբնակէին, ու օտարութիւնով երկրէ  
երկիր կըպտըտէին մտքերնէն չիհանելու  
համար, որ հոս տեղս իրենց հայրենիքը  
չէր՝ իրենք հոս ճամբորդ էին, ու հաստատ  
քաղքին կըբաղձային՝ որուն ճարտարա-  
պետը ու հիմը գնօղը Մ. Ժ. է. անոր համար

աչքերնին միշտ հոն տնկած էին, ու հե-  
ռուէն զանիկայ կողջունէին: Եւր. Ժ: :

Եւ բանս Յակովբ նահապետին մըտ-  
քին մէջն ալ շատ բանած ըլլալով, Եղիպ-  
տոս՝ Փարաւոն տարիքը հարցուց նէ, ը-  
սաւ՝ Երդէն հարուր յիսուն տարի է, որ  
աս աշխրքիս օտարութեան մէջն եմ, իմ  
օրերս քիչ ու դժար եղան: Օնն. Խէ:

Հոգի սքը մեղաւորները աչքերնիս  
առջևը կրբերէ, որ դժուրքի մէջ ասանկ  
կրխօսին՝ արդարները արքայութեն փառ-  
քերու մէջ տեսնելով. Ինչ օգուտ եղաւ  
մեզի մեր հպարտութէն, մեր հեշտութի-  
նները շուքի պէս անցան, կամ սուրհան-  
դակի պէս, որ խրկրված տեղը կրվագէ՛  
կերթայ, կամ ջրերու վրա հովէն գալօղ  
նաւի պէս, որ անցածին պէս ալիքներուն  
վրա ոչ ճամբան կրմնայ՝ ոչ հետքը (իզը),  
կամ թռչունի մը պէս, որ օդի մէջ կը-  
թռչի թևերը զարնելուն ձանը կըլսվի,  
բայց անցնելուն պէս իր ճամբուն նշանը  
չիմնար. ասանկ պակսեցան մեր կեանքե-  
րը աշխրքի վրայէն: Իմաս. Է:

Խորոտ Ժամանակը Գործածելու վրա:

« . Եամանակը յաւիտենականութեն  
քովը ոչինչ է. ինք իրեն կարճ ու շու-  
տով անցնող բոպէ մի է, որ կըթռչի ու

բան չիմնար : Անոր համար , ինչ մեծ  
խենդուծի է յախտնականութի մը կոր-  
սընցունելով ժամանակին վրա ուրախանալ  
խնտալը<sup>1)</sup> : Բայց թէ որ ժամանակը յա-  
ւիտենականութե կը ծախենք (կըխարճենք) ,  
ու Ա՛յ կը ծառայենք նէ , բոլորն ալ աղէկ  
գործածած կը լանք , որուն ամէն մէկ  
բոպէն մէյմէկ յաւիտենականութի կար-  
ժէ<sup>2)</sup> : Անանկ է նէ ինչ մեծ խելացութի  
է ժամանակը աղէկ գործածելը :

Բ. Եւ յամանակը անստոյգ բոպէ մի է ,  
որ մեր իշխանութեը տակ չէ , անոր հա-  
մար անոր ապաւինիլը մեծ կուրուծի է<sup>3)</sup> :  
Բայց ժամանակը անստոյգ ըլլալովն ալ  
իր ամէն մէկ բոպէին մէջը կը ընայ մեր  
յաւիտենական վիճակը որոշել , անանկ  
է նէ՛ ինչ մեծ ջանքով աշխատելու ենք  
ժամանակնիս աղէկ գործածելու<sup>4)</sup> :

Գ. Եւ յամանակը գրեթէ միշտ նեղու-  
ծիներով ու չարչարանքներով խառնած

- 
1. Օրագրում չարիս ուսոյց դատարկութիւնն .  
Լուսն . 1910 . 29 :
  2. Անիչ զեւ ժամանակս ՚ի ձեռս է՝ գործեսցուք  
գրարիս . Գաղատ . 2 . 20 :
  3. Երթուն կացէք՝ զի սչ գիտէք զօրն՝ և սչ ըզ-  
ժամն . Սաղմ . 11 . 13 :
  4. Ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ ա-  
ռարեացն զիս , մինչ աւուր կայ . գայ գիշեր՝  
յորժամ ոչ որ կարէ գործել . Յովն . 7 . 4 :



է, անոր համար ի՞նչ մեծ խաբէութի է  
ժամանակի հետ կապվելը: Բայց իր չար-  
չարանքներովը մեղի յաւիտենական երա-  
նութի մը վասարկելու պատճառ կը լայ-  
ի՞նչ մխիթարութի է անոնց, որ գիտեն  
ժամանակին ու անոր չարչարանքներուն  
աղէկ գործածութիւր <sup>1)</sup>:

( ) Ինչո՞ւ:

Այն Բեռնարդոսի կարգէն Վիարա-  
վալէ ըսված վանքը սք կրօնաւոր մը ա-  
ղօթք ըրած ատենը ձան մը կը լսէ, որ  
ողորմելի ու վախնալու կերպով կուլար  
ու կը տժգոհար կոր: Աքը լալով ու աղօթ-  
քով աղաչեց զՎ՛ճ, որ ասոր պատճառը  
իրեն յայտնէ, ան ձանը ըսաւ (իր անունը  
տալով) Աս ան մէկ մեղաւորին հոգին եմ,  
իմ յաւիտենական կորսրվելուս վրա կու-  
լամ կողքամ կոր, որուն որ իմ ծանր  
մեղքերուս համար դատապարտրվեցայ:  
Բայց մեր քաշած ծանր տանջանքներուն  
մէկն ալ աս է, որ զմեզ ուրիշ տանջանք-  
ներէն աւելի կուլացընէ կոր. երբ որ կը-  
յիշենք մեր կենացը մէջ մեր մեղքերէն

---

1. Ընթամայն յաճախութի թեթե նեղութեանս  
մերոյ՝ ի յաւիտենական առաւելութի, գմե-  
ծութի փառացն գործէ ի մեզ. Բ. Արշ. Գ. 17:

դառնալու համար ԱՅ մեզի տրված  
չնորհչքները, որ մենք զանոնք անարգեցինք  
ու բանի տեղ չխոյրինք : Գլխաւորաբար  
կուլանք կորսրված ժամանակին վրա, որն  
որ ունեցանք աշխրքի մէջ բարիք գործե-  
լու՝ ու յաւիտենական կեանքը վաստըկե-  
լու համար, որուն յարգութիւնը չիճանչ-  
նալով՝ անօգուտ տեղը կորսրնցուցինք, ու  
մեր դատապարտութենը պատճառ եղանք :  
ԱՅ կորսրված ժամանակին մտածմունքը  
ամմէն տանջանքներէն ու պատիժներէն  
աւելի յուսահատութիւնով կրտանջէ կոր  
զմեզ տեսնելով ու մտմտալով՝ որ ան մեր  
անցաւոր կենաց մէջը կորսրնցուցած ժա-  
մանակներուն մէկ ժամն ալ չենք կրնար  
յաւիտեան ձեռք բերել, որ անոր մէջ  
կրնայինք մեր մեղքերուն վրա զղջալ, ու  
արքայութիւնը վաստըկիլ : ԱՅ, որչափ կր-  
տանջէ զմեզ ան ժամանակները մտքերնիս  
գալով, որն որ աշխրքի ուրախութեց,  
զբօսանքներու, խաղերու, անպարկեշտու-  
թիւներու, գայթաղութիւններու ու չար  
ընկերներու մէջ կորսրնցուցինք : Ասոնց  
տեղը կրնայինք պատարագներ տեսնել,  
քարոզներ լսել, եկեղեցիներու այցելու-  
թիւներ՝ աղօթքներ և ուրիշ անսահման  
բարիքներ ընել, ու մեր դատապարտու-  
թենը համար թող տրվինք զանոնք, ու

ասոնց նման շատ բաներ յուսահատարար  
լալով ըսելէն ետև աներևոյթ եղաւ :  
Լ, օլէն պարգեհներուն գրքին Տըլլե և ուրիշ  
հեղինակներն ալ իւրպիսեան :

ՏԱՍՆԲԱՅՈՒՆԲՈՐԴ ԷՆՍՆԲ

Եկեղեցւոյ պարտեհներուն վրա :

հ. Այ պատուիրաններէն ուրիշ պատ-  
ւիրաններ ալ կան :

պ. Հրամմերես, եկեղեցւոյ պատուիրան-  
ներն են :

հ. Օանոնք պահելու ալ պարտըկան ենք :

պ. Հրամմերես, վնդի մէկը զՄ. ճ իրեն  
հայր չիկրնար ունենալ, թէ որ զեկե-  
ղեցին իրեն մայր չունենար ու իրեն չի-  
հնազանդիր նէ :

հ. Որո՞նք են եկեղեցւոյ պատուիրանները :

պ. Սասնաւոր պատուիրանները շատ են,  
բայց գլխաւորները վեց են, որ ամէն  
քրիստոնեաները կը պարտաւորեն :

հ. Ըսէ՛ որ լսեմ :

պ. Ա. Արարակի ու հրամայված տօնի օրերը  
ամբողջ պատարագ տեսնել :

Բ. Տարին գոնէ անգամ մը խոստովա-  
նանք ըլլալ :

Գ. Տարին գոնէ մէկ անգամ հաղորդիլ  
զատկին :

Գ. Եկեղեցւոյ դրած պահքերը ու ծոմերը պահել :

Ե. Երգելած ատենները հարսնիք չընել :

Օ. Երգար վաստրկածին տասանորդը տալ :

Կ. Ի՞նչպէս կատարելու է առջի պատուիրանը :

Պ. Են օրը միտ դնելով ու ջերմեռանդութիւնով ամբողջ պատարագ տեսնելու է :

Կ. Պատարագը ամբողջ տեսնելու համար ձր մասերուն ներկայ գտնւիլու է :

Պ. Գոնէ գրքէն, աւետարանէն ինչւան վերջի աւետարանը, բայց լաւագոյն է սկսած ատենէն ներկայ գտնւիլը, վնդի մնացած մասերուն անհոգութիւնով ներկայ չի գտնււողը ասանկ մեծ խորհուրդին պէտք եղած յարգութե մէջ պակասած կըսեպիլ :

Կ. Որն որ կամօք կըցըրուի ու պատարագին երևելի մասին միտ չի դներ նէ, անիկայ պատարագ տեսած կըսեպիլ :

Պ. Չէ, նմանապէս հոն խօսակցութիւնօղը՝ ալ աւելի անպարկեշտ կեցողն ալ յանցաւոր կըլլայ :

Կ. Վարողի ու խրատի ալ երթալու պարտք մը կայ :

Պ. Կայ, և ով որ իր յանցանքովը խրատ ու քարոզ լսելու չերթար նէ, իր տղիտութեւնը ինքը պատճառ կըլլայ :

ԱԵՐԳԻՆՆԱ ՊՕՂՈՍԻՆ ԿՊՐՅԻՆ ԿՊՄԿՏՈՒԼԷՆԸ :

Այն Պօղոս ու Բառնաբաս առաքեալները Աիպրոս կղզին բոլոր պտրտելէն ետև հրեաներուն ժողովրդանոցները աւետարանը քարոզելով՝ Պափոս եկան, ուր որ կղզիին փոխանորդը Սերգիոս Պօղոսը կրնատէր, որ իմաստուն մարդ մի էր : Ասիկայ Այն խօսքը լսել ուզելով՝ առաքեալները կանչել տրվաւ, որ իրեն Բնի յարութիւնը պատմեն : Ասոր քովը Աղիմաս անունով սուտ մարդարէ մի կար, որ փոխանորդին միտքը դարձունելու կաշխատէր, որ քրիստոնեայ չըլլայ : Պօղոս առաքեալը Հոգի սքով լեցված՝ յանդիմանեց զինքը՝ կեղծաւորութիւն երեսը զարնելով, ու ըսաւ իրեն. Ահա Այն ձեռքը վրայդ է՝ աչքերդ կուրնան ու ժամանակ մը արև չիտեսնես : Անմիջապէս երկու աչքերը մէկէն կուրցան, ու փոխանորդը տեսնելով աս բաները քրիստոնեայ եղաւ, Պօղոսին աւետարանած Այն խօսքին հաւտաց, ու մկրտեցաւ : Պօղոս առաքեալը անկէ Անտիոք եկաւ, ու հոն՝ աւետարանին քարոզութիւնը լսելու համար՝ բոլոր քաղաքը ժողովեցաւ : Հրեաները ասչափ բազմութիւն տեսնելով լեցվեցան, ու սկսան Պօղոսին ըսածներուն դէմ խօսել :

Պօղոսը ու Ռաոնարասը համարձակու-  
թիով իրենց պատասխան տրվին, որ  
Լ.ճի իրաւունքը ձեր ըլլալուն համար՝  
Լ.Յ աւետարանը յառաջ ձեզի քարոզվե-  
ցաւ. բայց դուք մերժեցիք, ու զձեզ  
յաւիտենական փրկութեան անարժան ըրիք.  
անոր համար մենք ալ Վ.ձէն հրաման ու-  
նինք երթալու հեթանոսներուն քարոզե-  
լու, որ մեզի հնազանդութիով կրլսեն:  
Ու անանկ ընելով շատ հեթանոսներ  
դարձան՝ սք հաւատքը գրկեցին, ու ան  
գաւառին մէջը աւետարանը շատ մեծ  
պտուղներով տարածեցաւ: Լ.ս պատմու-  
թէ յայտնի կերևնայ աւետարանի մէջի  
սերմանց առակին կատարվիլը, որ որը կը-  
չորնայ՝ որը շատ պտուղ կուտայ, ցանված  
երկիրներուն աղէկ կամ գէշ ըլլալովը:  
Վ.որժ. ԺԳ:

Խրատ Լ.Յ Խօսքը լսելուն ջրա:

ա. Վարող ու հոգևոր խրատներ  
լսելու պարտրկան ենք, նախ՝ Վ.ձի հնա-  
զանդելու համար, որ իր պաշտօնատէր-  
ներուն կը հրամայէ սորվրցունելու<sup>1)</sup>. նմա-  
նապէս եկեղեցւոյ ալ հնազանդելու հա-  
մար, որ աս վախճանաւ քարոզ տալու

1. Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զսմ հե-  
թանոսս. Ս.առլ. Էր. 19.



հրաման կուտայ, ասկէ յայտնի է՝ որ Վս ալ եկեղեցին ալ կուզեն, որ քարոզ ու խրատ լսենք: Արկրորդ՝ մեր հոգևոր օգտին ու փրկութեն չամար: Ա՛ճ մեր միտքը լուսաւորելու՝ ու մեր սիրտը շարժելու համար իր լուսը ու շնորհքները քարոզի ու հոգևոր խրատի հետ կապած է<sup>1)</sup>:

Բ. Վարողը ու հոգևոր խօսքերը Ա՛յ խօսքի պէս միտ դնելով՝ յարգութիով՝ ու խոնարհութիով մտիկ ընելու է<sup>2)</sup>. չէ որ մարդու խօսք մտիկ ընելու պէս հետաքրքրութիով՝ անպատուութիով, ու քարոզչին եղանակին ու անձին պակասութիւնները դիտելով:

Գ. Վարողը ու խրատը լսելէն ետքը անոնցմէ հոգևոր պտուղներ հանելու համար մտածելու և մտքին մէջը կրկնելու է. մտքի անոնց համարը Ա՛ճ մեզմէ պիտոր ուզէ: Բայց զասոնք լսողներուն շատերը մինակ հարեանցի լսելը բաւական սեպելով շուտ մը կը մոռնան<sup>3)</sup>, ու ալ չեն

1. Բանն իմ, որ ելանէ ՚ի բերանոյ իմմէ, մի գարձցի դատարկ. Ասայ. 27. 11:

2. Բնկալաբ ոչ իբրև գրան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ. ա. թ. 13:

3. Այժմէ որ լսող միայն իցէ՝ և ոչ առնելի, նման է նա մարդոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ ծնանիցի ՚ի հայելոջ: Ծի հայեցեալ

մտածեր, մտածելու ալ ըլլան նէ, մինակ  
ուրիշին պատմելու համար է. և ուրիշ  
պատուղ ալ չեն փնտուեր <sup>1)</sup>:

( ) ր և հ ա ի :

Սեծ քաղքի մը մէջ շատ մեղաւոր  
մարդ մը ամենեին քարոզի երթալ չէր  
ուզեր: Արեւելի քարոզիչ մը եկեղեցին  
քարոզ տալու ատենը, ընկերները կերպով  
մը ասիկայ եկեղեցին տարին: Աերս որ  
մտաւ նէ, քարոզիչը տեսաւ, որ սատա-  
նաները ասիկայ բոլոր կրակ կտրած շող-  
թաներով կապած կը քաշէին կոր: Քա-  
րոզիչը սկսաւ մեծ եռանդովը մեղքի վրա  
քարոզել, որ ինչպէս մեղաց պատճառաւը  
սատանաները մեղաւորներու վրա կը քա-  
րեն, որ իրենց բարիք մը թող չեն ի-  
տար գործելու. զիրենք իրենց իշխանու-  
թեւը տակ՝ մեղքերուն մէջը շղթաներով  
կապած կը բռնեն. ու ասիկայ վկայու-  
թիւնով ալ կը հաստատէ: Աս խօսքերը ան  
մեղաւորին սիրտը անանկ կը շարժեն, որ  
բրածներուն վրա կը գըղջայ՝ հոն տեղը աչ-  
քէն արցունքներ թափելով կառաջագրէ

---

ետես զինքն՝ և զանց արար, և անդէն մոռա-  
ցաւ թէ որպիսի որ է. 3-ի. 23. 24:

1. Աս՝ երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աս-  
տուծոյ և առնեն. Ղ. 1-ի. 2-ա. 28:

առջի չար ճամբաներէն դառնալուն : Ըն-  
տանէն քարոզիչը կրտեսնէ , որ աչքին  
արցունքները շղթաներուն վրան կաթե-  
լով , զանոնք կրկոտրրտէին , ու կրակը  
կրմարէին կոր . ան միջոցին մէջը պահա-  
պան հրեշտակը երեցաւ , ու քովէն սա-  
տանաները վունտեց : Քարոզը լմնցածին  
պէս գնաց քարոզիչին ոտքը ինկաւ , բոլոր  
մեղքերը մեծ զղջումով խոստովանեցաւ ,  
ու իմացաւ իրեն վրա պատահած բաները ,  
ու բոլոր մեղքերուն արձակումը առնելէն  
ետեւ աղէկ ապաշխարութիւններով քրիս-  
տոնէական կեանք մը սկսաւ : **Հեռիկոսը**  
**Իւպատի . հայել . օրինակ . ԶԶ :**

ՏԵՍՆԵՐՈՒԹԵՐՈՐՈՒ ՀԱՄԱՐ

Եղիւնքս յայ Երկրորդ ու Երրորդ  
պատիւ-խանութիւնս վրա :

Կ. Ինչ կը հրամայէ եկեղեցին՝ գոնէ  
պարին թանգամ խոստովանել՝ ըսելով :

Պ. Կը հրամայէ , որ ապաշխարութե խոր-  
հուրդը տարին գոնէ անգամ մի կատա-  
րենք , բայց ով որ աղէկ քրիստոնեայ է  
նէ՝ տարին շատ անգամ կը խոստովանի :

Կ. Ո՞ր ժամանակ կը սկսի աս պարտքը :

Պ. Բանականութիւ կը բացվի , ու մարդը  
զինքը ճանչնալ կը սկսի նէ :

հ. Ուրիշ պարագաներու մէջ ալ խոստովանելու հարկ կայ :

դ. Հրամներես, ով որ մահացու մեղքի խղճմտանք ունի, ու կուզէ հաղորդիլ նէ, խոստովանելու պարտրկան է. նմանապէս մահւան վտանգի մէջ գտնուված ատենները, բայց աղէկ քրիստոնեաները աս հաշիւները չեն ըներ, շուտ շուտ կըխոստովանին :

հ. Մնանկ առիթներու մէջ կատարեալ զղջումը բաւական չէ :

դ. Չէ, սք եկեղեցին հրամայած է, որ անանկ առիթներու մէջը ամենեին առանց խոստովանանքի հաղորդութի չառնուն, թէ որ զիրենք զղջացած ալ կրկարծեն նէ :

հ. Սք եկեղեցին ի՞նչ կըհրամայէ՝ դարձն Թանգամ հաղորդել՝ ըսելով :

դ. Կըպարտաւորէ ամմէն չափահաս քրիստոնեաները տարին գոնէ մէկ անգամ, այսինքն՝ զատկին հաղորդելու :

հ. Մս հաղորդութիը զատկին օրը պէտք է առնուլ :

դ. Բաւական է, որ ծաղկազարդէ ինչւան նոր կիւրակէ և կամ որչափ որ ժամանակ կըդնէ տեղւոյն եպիսկոպոսը նէ, այնչափ ատենւան մէջ հաղորդուի :

հ. Թէ որ մէկը ան տասնըհինկ օրւան մէջ կամ եպիսկոպոսէն դրված ատենին մէջ

Հաղորդիլ չիկրնայ նէ, ան տարւան պարտքէն կազատի՞ :

Պ. Չէ, պարտրկան է կրրցածին պէս շուտով Հաղորդելու :

Կ. Հաղորդելու պարտքը մինակ զատկի՞ն է :

Պ. Չէ, մահւան վտանգի մէջ ալ պէտք է Հաղորդիլ :

Կ. Տարին անգամ մի խոստովանիլ ու Հաղորդիլը բաւական է :

Պ. Պատուիրանը կատարելու և մահացու անհնազանդութի ազատելու համար բաւական է, ըսյց մոլութիները ուղղելու, և առաքինութիներու մէջ յառաջ երթալու համար բաւական չէ :

Կ. Հապա եկեղեցին ինչո՞ւ մինակ մի անգամ պարտք դրած է :

Պ. Տարին Գ<sup>ո</sup>նէ մի անգամ ըսելով արդէն կիմացունէ իր բաղձանքը, որ շատ անգամ Հաղորդին :

Կ. Թէ որ մէկը սրբապղծութիով կը խոստովանի ու կը Հաղորդի նէ՝ տարեկան պարտքը կը կատարէ՞ :

Պ. Չէ, աս դժբաղդութե մէջ ինկօղը պարտրկան է որչափ կարելի է նէ՝ շուտով նորէն աղէկ խոստովանելու ու Հաղորդելու :



Սննանային պատմութիւն :

Ըճ Խորայէլացիները անապատի մէջ քառսուն տարի մանանայով պահեց : Ըս կերակուրը եղեման պէս ճերմակ ու մանր հատերէն կը լլար, որ գիշերը արտերուն վրա կիջնար : Խորայէլացիները ասիկայ առջի անգամ տեսնելով՝ մէկզմէկու կը հարցունէին՝ Ըս ի՞նչ բան է՝ ըսելով : Սովսէս իրենց ըսաւ . Ըսիկայ հացն է, որ Ըճ ձեզի պատրաստեց՝ ու երկինքէն խաւրեց : Ըստուները ամմէն մարդ անչափ ժողվէ ասկէ, որ ան օրը իրեն բաւէ, ու որը շատ՝ որը քիչ ժողվեցին, ոչ մէկէն եւելցաւ, ոչ մէկալին պակսեցաւ : Սովսէս ապսպրեց իրենց որ վաղվան պահելու համար չիժողվեն, չիճնազանդօղները երկրորդ օրը աւելցածը որդնոտած գտան : Ըստըւանց կանուխ կըժողվէին՝ վսզի ետքը արեին տաքէն կըհալէր, բայց կրակին կըդիմանար : Ուրբաթ օրերը շաբաթ օրւան համար ալ կըժողվէին ան օրը չի գործելու համար, ու անիկայ չէր որդնոտէր : Ըսիկայ շատ աղնիւ համ ունէր, աս բաւական չէ՝ ամմէն մարդ ալ իր բաղձացած համը կառնուր : Բայց մեղաւորները աս հրեշտակային կերակուրին համը չիկրորնալով առնուլ՝ տրտնջացին՝ ու Սով-



սեսէն ուրիշ կերակուր ուղեցին : Ա՛ճ բարկացաւ՝ իրենց լորամարդի (պըլտորճին) խաւրեց, շատ բռնեցին, բայց անկէ ետեւ կերակուրը բերաննին առին նէ՛ սկսան պատժըվիլ ու մեռնիլ : Ա՛ճ Ա՛ճարոնին հրամայեց, որ մանանայէն տապանակին մէջը պահէ, որ ասանկ մեծ բարերարութե՛ն յիշատակը ժամանակաւ չիմոռցրվի : Ա՛սիկայ ամենասք շաղորդութե՛ն՝ ու անով եղած հրաշքներուն և օգուաններուն օրինակն էր, որ շուտ շուտ ու արժանաւորութիով հաղորդողները կը գտնեն, պատիժն ալ՝ պատիժներուն օրինակն էր, որ առանց արժանաւորութե՛ն ընդունողները կառնուն Ա՛ստուծմէ : Ալեց . ԺԿ : ԹԿ . ԹԿ . ԹԿ . ԹԿ . ԹԿ . ԹԿ :

Եւրոպի խորհուրդները շուտ շուտ  
ընդունելու ջրու :

« . Ո՛վ որ սովորութի՛ն ըրած է տարին մինակ մէկ անգամ խոստովանիլ և հաղորդիլ նէ, զինքը մեծ վտանգի մէջ կը ձգէ ան անգամին ալ աղէկ չիխոստովանելու և աղէկ չիհաղորդելու . վնդն աղէկ խոստովանելու համար պէտք է զինքը ուղղել՝ անկէ ետքն ալ առանց մեղաց ապրելու հաստատ առաջադրութի՛ն ունենալ . աս առաջադրութի՛ր աղէկ կատա-

րելու համար մեծագոյն ու գլխաւոր դերը  
խորհուրդները շուտ շուտ ընդունելն է<sup>1)</sup> :

Բ. Ասոր փորձը յայտնի է. վնդի անոնք  
որ անմեղ ու բարի վարքէն կրթունան,  
ու մեղքերու մէջ կըսկսին իյնալ նէ, խոր-  
հուրդներէն պաղելով ու հեռու կենալով  
կիյնան. որոնք ալ չար վարքերնին կը-  
թողուն՝ ապաշխարութե կրդառնան նէ՝  
կըսկսին խորհուրդները ջերմեռանդով  
ու շուտ շուտ ընդունիլ, վնդի որ միջոցնե-  
րը որ շնորհք կուտան նէ՝ ան միջոցները  
շնորհքը կըպահպանեն ու կեւելցունեն<sup>2)</sup> :

Գ. Որոնք որ իրենց կենդանութե ա-  
տենը խորհուրդներէն հեռու կըկենան նէ,  
հասարակօրէն մահաւանդին ատենը խոր-  
հուրդներէն կըզրկուին, կամ անարժա-  
նութիւն ընդունելով զանոնք՝ իրենց կոր-  
ծանուամբ կընդունին<sup>3)</sup> : Անդի ասանկ հար-  
կաւոր գործքերը քիչ անգամ ընելով  
չենք կրնար սորվիլ. ու խորհուրդներէն

---

1. Այդ է հաց՝ զոր ետ ձեզ Տէր ուտելոյ . Աւեւ .  
ժող. 15 :

2. Օ կերակուր հրեշտակաց ջամբեցեր ժողովըր-  
դեան քում. և զպատրաստական հաց յեր-  
կնից ետուր նոցա . . . առ մտ ցանկութիւն  
բաւական. Իմաս. ժող. 20 :

3. Ան այնորիկ իսկ են ՚ի ձեզ բազում հիւանդք  
և անտաժէտք. և շատ ևս այն են, որք և  
ննջեցեաքն իսկ իցեն. ա. Արմի. ժա. 30 :

փախչողները հասարակօրէն չեն ուզեր  
աղէկ պատրաստուիլ, անոր համար կը-  
փախչին:

(Օրինակ):

Թուովմաս անունով երեւելի ու սք  
ածարանի մը մահւան ատենը սատանան  
երեցաւ: Հիւանդը Քսի շնորհքին ապա-  
ւինելով ըսաւ. Ի՞նչ կուզես իզմէ անո-  
ղորմ գազան, Քսին շնորհքովը ինծի  
հետ բան չունիս. ետքը Լ՝Յ անունը սա-  
տանային երգում տալով ըսաւ. Բսէ ին-  
ծի գժոխային հոգի, ի՞նչ բան աւելի կը-  
նեղէ զձեզ: Սատանան Լ՝Յ անունէն գո-  
ղալով ըսաւ. Ո՞վ Թուովմաս զիս ան բանի  
ստիպեցիր, որն որ չէի ուզեր ըսել. բայց  
գիտնաս, որ Լ՝Յ եկեղեցւոյն մէջը ուրիշ  
բանէն անչափ չենք վախնար, որչափ  
խոնարհ ու շուտ շուտ խոստովանանքէն,  
որ մեր զօրութիւն բոլոր կըկտրէ: Անզի  
մարդը մահացու մեղքի մէջ գտնուած  
ատենը՝ բոլոր կարողութիւնները կըկապենք,  
ու զինքը մեր կամքերուն կըհնազանդե-  
ցունենք. բայց երբոր խոստովանանքի  
կերթայ, ու պէտք եղածին պէս բոլոր  
մեղքերը կըյայտնէ նէ, անմիջապէս մեր  
ձեռքէն կաղատի, ու իր հոգին ամմէն  
բարի գործքերը գործելու պատրաստ ու

կարող կըլայ՝ Այ շնորհքը ընդունելով,  
որ բարի գործելու համար իրեն կօգնէ՝  
ու կըշարժէ: Բայց մենք ալ ամեն բա-  
նէն աւելի ու ամեն կերպով կըջանանք,  
որ մարդիկները չխոստովանին, խոստո-  
վանելու ալ կըլան նէ՝ բոլոր մեղքերնին  
չըսեն, կամ անպատրաստ առանց զղջու-  
մի, ու մեղքէն դառնալու առաջադրութե  
խոստովանին, աս եղանակաւ շատ հոգի-  
ներ կըվաստըկինք, սատանան ասանկ շատ  
բաներ պատմելէն ետքը՝ աներևոյթ եղաւ:  
Կեանքիսը իւրապօ՛ւ իր պրամախօս . Դ՛ջը:

ՏԵՍՆԲ, ԻՒՆՆԵՐՈՐԻ ԼԵՍՆԲ

Եկեղեցւոյ շրջափակ, հինգերորդ — վեցե-  
րորդ պատիւներուն շրջա:

Կ. Եկեղեցւոյ դրած պահքերով ու  
ծովերով ի՞նչ կիմացվի:

ա. Կիմացվի՞ որ եկեղեցին մասնաւոր օրեր  
որոշած է, որ ան օրերը կէս գիշերէն ըս-  
կըսած ինչևան կէս գիշեր պահք պահենք,  
կամ չափաւոր կերակուրէն ալ պակսե-  
ցունենք՝ մեր մեղքերուն ապաշխարանքին  
համար, ու մեր մարմինը տկարացունելու  
համար:

Կ. Որո՞նք են մեր մէջը մինակ պահքի  
օրերը:

Պ. Չորեքշաբթի՝ ուրբաթ օրերը, շաբթուան պահքերը՝ մեծ պահոց առջի երկու օրերը, ու անոր շաբաթ ու կիւրակի օրերն են. մինակ զատկէն ինչւան համբարձում՝ ու ծննդէն ետքը չորեքշաբթի և ուրբաթ մի, ու թէ որ ծնունդը աս օրերուն մէկին կրպատահի նէ՝ ան օրն ալ միս կուտիլի :

Կ. Պահքի օրերը ի՞նչպէս պէտք է պահել :

Պ. Սնեղէն՝ հակըթեղէն ու կաթնեղէն բաներ չուտելով :

Կ. Ըս պահքերը մեր մեղքերուն ապաշխարանքէն, ու մեր մարմինը տկարացունելէն իզատ ուրիշ բանի համար ալ կը պահենք :

Պ. Հրամներես, ամմէն մէկը անձային անձերուն մէկին՝ կամ սք Մծածնայ՝ կամ մէյմէկ երևելի սքերուն պատուոյն համար ալ կրպահենք :

Կ. Ուրբաթը ու չորեքշաբթին ինչո՞ւ կը պահենք :

Պ. Ընջինը Քսի չարչարանքներուն՝ խաչին՝ ու մահուանը պատուոյն, ու երկրորդը սք Մծածնայ պատուոյն համար կրպահենք :

Կ. Սեծ պահքը ինչո՞ւ կրպահենք :

Պ. Ընջի քառսուն օրը Քսի պահած քառսուն օրուան պահքին յիշատակին համար՝ ու վերջի ութը օրն ալ անոր ան



շարժըւան մէջ բոլոր ըրածներուն ու քա-  
շածներուն պատուոյն համար կրպահենք :

հ . Շարժըւան պահքերը ինչո՞ւ կր-  
պահենք :

ա . Որը Քնի այլակերպութե՛ր խաչին՝  
ծնրնդեանը պատուոյն համար , որն ալ սք  
Մ՝ ծածնայ կամ ուրիշ սքերուն պատուոյն  
համար կրպահենք :

հ . Ա՞րք կրպարտաւորի մարդը աս պահ-  
քերը պահելու :

ա . Բանավարութիւնը բացվածին պէս :

հ . Ի՞նչ պէտք է իմանալ ծոմ կենալ  
ըսելով :

ա . Ա՛ն պէտք է իմանալ՝ որ ծոմի օրերը  
մէկ անգամ կուշտ ուտելէն՝ ու մէկ ան-  
գամ ալ քիչ բան ուտելէն ետքը՝ մէկը  
կէսօրը մէկալը իրիկունը՝ ալ ուրիշ բան  
չուտվիր :

հ . Որո՞նք են աս ծոմի օրերը :

ա . Ս՛եծ պահքին մնացած օրերը՝ ու բո-  
լոր աւագ շաբաթն է :

հ . Ա՞րք կրպարտաւորի մարդը ծոմ բըռ-  
նելու :

ա . Քսանըմէկերորդ տարին լմնցուցա-  
ծին պէս :

հ . Ա՛ս օրերը ի՞նչպէս բաժնած է եկե-  
ղեցին :

ա . Բոլոր ծոմի՛ պահքի ու տօնի օրերը



կէս գիշերէ կէս գիշեր բաժնած է, որ  
հրեաներուն չինմանինք :

հ. Այնչո՞ւ կարգելու երբեմն  
հարսնիք ընելը :

ա. Այ՞զի ան օրերը ապաշխարութե՛ս սք  
օրեր ըլլալով չուղեր, որ ուտելով խմե-  
լով ուրախութի՛ն ըլլայ, բայց պարզ պսա-  
կին՝ սք խորհուրդ ըլլալուն համար՝ հարկ  
եղած ատենը հրաման կուտայ :

հ. Ինչո՞ւ կրտէ՛ տրտալ լուսարկաճին աս-  
տանորդը ասլ :

ա. Այ՞զի աս պարտքէն մինակ արդար վաս-  
տրկածներնուս տասանորդը տալով կրխա-  
լըսինք, բայց անիրաւուք վաստրկածը բո-  
լոր ետ դարձունելու է օրինաւոր տիրոջը :

Յովնան հարգարէին պատմութիւնը :

Ը՛ծ Յովնան մարգարէին հրամայեց,  
որ երթայ Աինուէ քաղաքը ապաշխարու-  
թի քարոզէ : Յովնան աս գործքին դժա-  
րութէ վախնալով փախաւ, ու նաւով  
դէպ ՚ի Թարսիս քաղաքը կերթար կոր :  
Սո՞վուն վրա մէկէն ՚ի մէկ սաստիկ հով  
մը ելաւ, որ նաւը փարատելու և ընկրղ-  
մելու մօտեցուց. Յովնան գիտնալով, որ  
ան պատիժ հովը Ը՛յ ձեռքէն փախչելուն  
համար ելած էր, նաւավարներուն ըսաւ,  
որ աս բանը իրեն համար է, ու թէ որ

խալըսիլ կուզեն նէ՝ զինքը ծովը նետեն :  
 'Նաւավարները Մ.Յ աղաչելով , որ աս  
 բանը իրենց մեղք չխեղէ՝ զինքը ծովը  
 նետեցին , ու ծովը շուտ մը իջաւ : Մ.Ծ  
 մեծ կէտ ձուկ մի խաւրեց , որ զինքը կու-  
 տրվաւ , որուն փորին մէջը իրեք օր մնաց  
 Յովնան , ուր տեղ աղօթեց , ու Մ.Յ հրա-  
 մանին հնազանդեցաւ : Մ.ն ատենը Մ.Ծ  
 կէտին հրամայեց , որ զինքը ցամաքը փրս-  
 խէ . ելաւ հոն տեղէն 'Նինուէ գնաց :  
 'Նինուէ անանկ մեծ քաղաք մի էր , որ մէկ  
 ծայրէն մէկալ ծայրը իրեք օրւան ճամբայ  
 էր . Յովնան մէկ օրւան մէջը բոլոր մէկ  
 ծայրէն մէկալ ծայրը կանչելով գնաց ,  
 ըսելով՝ Իրեք օրէն 'Նինուէ պիտոր կոր-  
 ծանի : 'Ննակիչները Յովնանին քարոզու-  
 թեր հաւտալով , քուրձ հագան՝ վրանին  
 մոխիր ցանած՝ մեծէն ինչւան պղտիկը  
 խիստ ծով բռնեցին : Թագաւորն ալ ա-  
 թոռէն վար իջաւ՝ վրայէն բոլոր Թագա-  
 ւորական զարդերը հանեց , մոխիրի վրա  
 նստաւ . ու հրամայեց , որ մեղքերնէն  
 դառնան՝ ծով կենան՝ Մ.Յ ողորմութիւն  
 խնդրեն : Մ.նանկ պահեցին աս ծովը , որ  
 կենդանիներուն ալ իրեք օր բան չխաղվին  
 ուտելու : Մ.Ծ ալ իրենց ապաշխարանքին  
 նայելով՝ իրենց մեղքերուն թողութիւն տը-  
 վաւ , ու չիպատեց : Յովն . Թ . Գ :

Խրատ պահել ու ծովի վրա :

ա. Պահքին ու ծովին պատիրանը իրեք պատճառի համար դրված է : 'Այս' որ մարմինը մեր մեղքին գործիք ըլլալով՝ առջի մեղքը կոկորդէն (պողպէն) սկսած էր, անոր համար պէտք էր մարմինը պատժել՝ ու պահքով պատժել : Արկրորդ՝ մարմինը զմեզ հիմայ ալ մեղանչելու կը շարժէ<sup>1</sup>) . անոր համար պէտք է զինքը պահքով՝ ծովով ու աղօթքով սանձել<sup>2</sup>) : Արրորդ՝ որ պահքը ու ծովը աղօթքի հետ միանալով շատ զօրաւոր կը լինին Աստուծոյ մէջ շնորհքներ ընդունելու համար :

բ. Պահքէն ու ծովէն աղատելու համար բերված սուտ պատճառներուն առջինը՝ անհանգստութիւն է . պահքը ու ծովը մարմնոյ հանգիստ տալու համար հրամայված չեն, զանիկայ տկարացունելու համար դրված են : Արկրորդը տկարութիւն է . մեղք գործելու և հեշտութիւններու ետեւէն իյնալու համար բաւական զօրաւոր ես, մինակ ասոնց կուգայ նէ կը տկարանաս : Արրորդը առողջութիւն է .

1. Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ . Գաղատ . է . 17 :

2. Այս աղգ ոչ իւրիք եղանկ՝ և թէ ոչ աղօթիք և պահքով . Մատթ . Ժ . 20 :

ի՞նչ կրեսս, քու առողջութի՛ղ Վսի առողջութե՛ն աւելի պատուական է, որ քու սիրուդ համար քառսուն օր պահեց՝ ու իր առողջութի՛րը չիմամբտաց. մանաւանդ որ ծովը առողջութե՛ օգուտ ալ կրնէ՛<sup>1)</sup>: Չորրորդը աս հրամանը ձեռք բերելու դիւրութի՛ն է. բայց աս ալ գիտնաս, որ օրէնքը ու Վճ քու վրադ իրենց իրաւունքնին չեն կորսընցուներ:

Գ. Թէ որ մենք աս պահքերուն ու ծովերուն մէջը ապաշխարութե՛ հոգի ունենայինք նէ, ասոնք մեր մեղքերուն համար արժանի եղած պատիժներուն նայելով՝ մեզի շատ թեթեւ ու քիչ կուգային՝ ու բոլոր պատժական գործերուն մէկ փոքր մասին պէս կերենային, մանաւանդ որ հրամայված ալ են. անոր համար մերժէինք պիտոր մեղմէ ան հոգին ու անանկ խառնրւածները, որ պահքը ու ծովը վերցունելու կըջանան:

(Օրինակ):

Աբ Նիկողայոս Օմիւռնիոյ (Իզմիրի) եպիսկոպոսը ծնած օրէն սկսած չորեքշաբթի՛ ուրբաթ օրերը կաթ չէր ուտեր, ինչ-

1. Ի բազում խորակաց մտաննն ցաւք . . . Իսկ որ գգոջ լինի անձին իւրոյ՝ յաւելու ՚ի կեանս. Անշե՛. Է. 33. 34:

ւան արևը կրմտնէր նէ՛ ծոմ կրկենար :  
Մս սովորութիւն բոլոր կենացը մէջ պահեց՝ ան օրերը ինչւան արևը չէր մտներ նէ՛ բերանը բան չէր դներ : Արբոր կարգալ սորվելու համար դպրատուն երթալ սկսաւ նէ, անառակ ու չար տղոց ընկերութիւն կրփախէր, կնիկներու ընտանութիւն բոլորովին հեռու կրկենար, մեղքի պատճառներէն կրղգուշանար, իր մարմինը ուրիշ ծոմերով՝ քիչ քնանալով՝ ու խարազ հագնելով կրպատժէր, ու ձեռքը առաքինութի ու գիտութի սորվելու գրքերէն ուրիշ գիրք չէր առնուր : Վահանայ եղած ատենը իր ծնօղքներէն մնացած հարստութիւնները բոլոր աղքատներուն և կարօտներուն բաժնեց, ու Արուսաղէմի կողմերը մինակ տեղ մը քաշվեցաւ ալ աւելի ծոմի՛ պահքի՛ աղօթքի ու ճգնութիւններու ետևէ ըլլալու համար : Արբոր Մ.Յ կարգադրութիւն Օմիւռնիա դարձաւ նէ, զինքը ան տեղի եպիսկոպոս ըրին, սա պաշտօնին մեծութիւն մտմտալով՝ իր առաքինութիւններն ալ եւելցուց, ամմէն օր աչքերէն շատ արցունքներ թափելով պատարագ կրղրուցէր, երկան աղօթք կրնէր, անգաղար քարոզ կուտար, օրը անգամ մը կուտէր, ամմէն օր պահք կրպահէր, գիշերը գետնի վրա կրպառկէր,



ու եպիսկոպոսութենը բոլոր մուտքերը աղքատներու կրբաժներ: Ա՛ճ ալ կենդանուէր ատենը սքին ձեռքովը շատ հրաշքներ գործեց, ու մեռնելու օրը իրեն յայտնեց: Հոգեվարութե՛ն ատենը երկինքը բացվեցաւ, ու երբոր հրեշտակները դիմացը եկան՝ իր սք հոգին արքայութե փառքերուն տանելու համար՝ սաղմոսին աս խօսքը ըսաւ. Ա՛ճ իմ՝ ես քեզի յուսացեր եմ, իմ հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ: Սքե՛րո՛ւն ջարդին հըլ իւրապօրով:

ՔՍԵՆԵՐՈՐԴԻ ՀԱՄԱՐ

Սահմանոր հիմ պահոց ջրա:

հ. Ս՛եճ պահքը երբ դրվեցաւ:

պ. Ք՛սի սք առաքեալները դրին՝ որ ինչւան հիմայ պահվեցաւ:

հ. Առաքեալները ինչո՞ւ դրին մեճ պահքը:

պ. Ք՛սի սք պահոցը հետեւելու և անոր յիշատակին համար, ու զատկի սք յարութե՛ն տօնին և սք Հաղորդութե՛ն պատրաստութի տեսնելու համար:

հ. Ակեղեցին մեճ պահքին առջի չորեքշաբթի օրը ինչո՞ւ մոխիր կըցանէ հաւատացեալներուն վրայ:

պ. Ս՛եզի ապաշխարութիւնը յիշել տալու՝ ու մահւան յիշատակը մտքերնուս մէջը



նորոգելու համար, ըսելով, Յէշուս, ո՞վ  
հարց, զի հոգ էիք, եւ ՚ի հոգ դարչցիս :  
հ. Սե՛ծ պահքը ուրիշ պահքերէն ի՞նչ  
տարբերութի՛ ունի :

դ. Ուրիշները մինակ պահք են, ասիկայ  
ծում ալ ունի :

հ. Չո՞մի համար կրնայ մէկը եկեղե-  
ցական մեծաւորէն տնօրինու՞մ ուզել :

դ. Հրամմերես, թէ որ օրինաւոր պատ-  
ճառ ու հարկ մը կայ նէ. բայց սուս  
պատճառով առնելիս տնօրինու՞մը զինքը  
Լ.Յ առջևը ան պարտքէն չազատէր :

հ. Ո՞վ որ ծոմին մէկ մասին համար տը-  
նօրինու՞մ առած է նէ, բոլոր ծոմէն ազատ  
կըլլայ :

դ. Չէ, թէ որ ծոմէն տնօրինու՞մ է, ու  
պահքը կրնայ պահել նէ, պարտրկան է  
պահելու, ու թէ որ պահքը տնօրինու՞մ  
է, ու ծոմ կրնայ բռնել նէ, պարտրկան  
է ծոմ բռնելու :

հ. Թէ որ մէկը օրինաւոր պատճառի հա-  
մար ամմէնէն ալ տնօրինու՞մ է նէ, ի՞նչ  
պէտք է ընել :

դ. Չանալու է անոնց տեղը ողորմուի՞ով  
և ուրիշ բարի գործքերով լեցունելու :

Եղիսէին Երկու Ռուսներ ինքստանացու-  
նելուն պատմութիւնը :

Իսաքարի ցեղին Սովմնայ քաղքին մէ-  
ջը սի կին մը կար , որ իր երկանը հաւա-  
նութիւն խուց մի պատրաստեց , ու ամէն-  
անգամ որ Եղիսէ մարգարէն կուգարնէ՝  
հոն կրքնակէր • կնիկը զաւակ չունէր ,  
ու Մատուած իրեն Եղիսէին աղաչանքովը  
մանչ զաւակ մը տրվաւ • բայց մէկ քանի  
տարի վերջը զաւակը մեռաւ : Սորը շատ  
տրտմեցաւ , տարաւ մանուկին մարմինը  
Եղիսէին անկողինին մէջը պառկեցուց • ու  
ինքը շուտով Կարմեղոս գնաց , որ ան օ-  
րերը Եղիսէ մարգարէն հոն էր , ու լայով  
աղաչեց անոր , որ իրեն հետ Սովմնայ  
գայ իր տունը : Եղիսէն գնաց՝ մինակ  
խուցը մտաւ մանուկին պառկած տեղը ,  
դուռը գոցեց՝ մեռելին վրա երկնցաւ , բե-  
րանը բերնին՝ աչքերը աչքերուն՝ ու ձեռ-  
քերը ձեռքերուն վրա դրած՝ ջերմեռան-  
գութիով Մ.Յ աղօթեց , մանուկը կեն-  
դանացուց ու մօրը տրվաւ : Եղիսէն ա-  
սանկ շատ հրաշքներ գործելէն ետքը ինքն  
ալ հիւրնդցաւ՝ մեռաւ , ու թաղեցին զին-  
քը : Ըն տարին Իսրայէլի թագաւորին  
երկիրններուն վրա մովաբացի գողեր եկած  
էին : Օր մը քանի մի մարդիկ մեռել մի-

Թաղելու համար քաղքէ դուրս ելած ա-  
տեննինն աս աւազակները տեսան, ու վա-  
խէն մեռելը Աղիսէին գերեզմանի մէջ  
նետեցին, ու իրենք շուտով փախան. մե-  
ռելին մարմինը Աղիսէին ոսկորներուն դը-  
պածին պէս կենդանացաւ, ու քալելով  
իր տունը գնաց: Ասանկ ալ մահւան խոր-  
հուրդները ու մտածմունքները մեղաւոր-  
ներուն մեղքերով մեռած հոգիներն շնորհք-  
ներով կրկենդանացունեն: Գ. Թագ. Գ. ԺԳ:

Խորոյր հահւան հարձհունիւրուն զրա:

ա. Մահւան ստուգութիւր պէտք է  
որ, բաժնէ մեր սիրտը աշխրքէս ու ամմէն  
աշխարհային բաներէն, որոնք որ քիչ մը  
ետքը հարկագրինք պիտոր մեր չուղելովն  
ալ թող տալու, նմանապէս մեր մարմինէն  
ալ, որ հող պիտի դառնայ, ու մեր մեղ-  
քերէն՝ որ մինակ բաւական է մահը մեղի  
ղարհուրելի ընելու<sup>1</sup>): Մահւան ստուգու-  
թիւր աւելի պիտի շարժէր զմեզ ամմէն  
տեսակ առաքինութիւնները գործելու, որ  
անոնք մինակ կրնան մեր մահը անուշցու-  
նել, ու զմեզ ԱՅ սիրելի ընել:

---

1. Կայ մնայ մարդկան միանգամ մեռանել՝ և յետ  
այնորիկ դատաստան. ԱԷԳ. Ե. 27:

Բ. Անհր որչափ ստոյգ է նէ՛ իր ժամանակն ալ անչափ անորոշ է, անոր համար պիտի ջանանք ժամանակ չիկորսընցուցած շուտով մահւան պատրաստըվելու, ու ամմէն ատեն պատրաստ կենալու. ինչպէս Քն ալ ապսպրեց որ չէ թէ պատրաստըվեցէք ըսաւ, հապա պատրաստ կեցէք<sup>1)</sup>: Ինչպէս կրնան պատրաստ կենալ ասանկ մեծ ու դժար գործքի մը, որ մինակ մէկ անգամ պիտի ըլլայ, ու անով պիտոր որոշվի իրենց յաւիտենական փրկուածիք կամ դատապարտութիւնը, այնպիսի մարդիկ, որ անհոգ կեցեր են, կամ պէտք եղածին պէս չեն մտմտար վրան:

Գ. Աս պատրաստութիւն աղէկ տեսնելու համար մարդը պարտրկան է շատ անգամ ինք իրեն հարցունելու՝ թէ Աուղէի իմ մահւանս ատենը՝ արդեօք աս բաներս ըրած գտնըվիլ. որոնք որ հիմայ կրնեմ կոր. կամ թէ պիտոր ուրախանամ աննեղ ատենը ասոնց վրա, թէ պիտոր տրրամիմ: Ամսըւան մէջ օր մը որոշելու է ան օրը խոստովանելու հաղորդելու համար՝ մտմտալով, որ անիկայ մահւան խոստովանանքը ու վերջին թոշակն է. իր

---

1. Աղիւրճը պատրաստը՝ զի յորում ժամու ո՛չ ակն ունիցիք՝ գայ սրդի մարդոյ. Մատթ. Էր. 44:

գործքերը անանկ կարգաւորելու է, որպէս թէ ան օրը վերջին օժում պիտոր ըլլայ, ու անանկ ապրելու է, որպէս թէ ան օրը Վսի անաչառ դատաստանին առջևը պիտոր ելլայ<sup>1)</sup>:

(Օրինակ:

Եգիպտոսի մօտերը Թէոգորոս անունով տղայ մը կար, որ ունեւոր ու ազնււական ծնողաց մէկ հատիկ զաւակն էր: Եսիկայ մեծ ուրախութե օր մը տեսնելով իրենց տունը աշխրբի հպարտութե զարդերով զարդարւած՝ ամմէն դին ուրախութե երգերու ձաներով լեցւած, ԵՅ լուսաւորելովը սրտին զղջում մի եկաւ, ու սկսաւ ինք իրեն մտածելով ըսել. Ի՞նչ օգուտ կրնան ընել քեզի ում դրժբաղդ Թէոգորոս բոլոր աս աշխարհական պարապ ու անցաւոր բաները՝ աս խաբւբայ յաջողութիները՝ ու աշխրբիս անստոյգ հարստութիները, թէ որ աս կեանքէդ վերջը երկնային հայրենիքին երջանիկ հարստութիներէն ու ուրախութիներէն յաւիտեան պիտի զրկրվիս նէ. վսզի

1. Օր Տեառն իբրև զգող գիշերի՝ այնպէս հասանէ. յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն և շինութի է՝ յայնժամ յանկարծակի հասցէ նոցա սատակումն. =. Թիւսալ. է. 2. 3:



Հոս աս մահկանացու կենաց անցաւոր  
ուրախութիւները վայելել, ու ետքը ար-  
քայութե յաւիտենական ուրախութիւնե-  
րուն ալ արժանի ըլլալը կարելի բան չէ .  
Թէ որ հիմայ աս տարիքս աշխրբի սասանկ  
զբօսանքներու և մարմնական ուրախութի-  
ւներու մէջ կանցունեմ նէ՝ մահւանս ա-  
տենը իմ բանս ի՞նչպէս պիտոր ըլլայ :  
Աս հօրս մօրս մէկ հատիկ զաւակը ըլլա-  
լով ինծի ամմէն ազատութիւները կուտան  
կոր , իմ ամմէն կամքերս կրկատարեն  
կոր , վաղը իրենց մահւանէ ետքը աս հա-  
րըստութիւններն ալ բոլոր ինծի մնալով ամ-  
մէն կողմանէ շատ մեծ վտանգներու մէջ  
պիտոր իյնամ՝ ամմէն տեսակ մեղքերը  
գործելու , ու զՎճ բարկացունելով՝ վեր-  
ջապէս իմ ողորմելի հոգիս պիտի կորսըն-  
ցընեմ : Յանկարծ Թէ որ սոսկալի մահն  
ալ վրաս հասնելու ըլլայ նէ , իմ բանս  
ի՞նչպէս պիտոր ըլլայ : Իմաստուն տղան  
ասոնք ու ասոնց նման շատ բաներ մտա-  
ծելով մինակ խուց մը քաշվեցաւ , ու ըս-  
կաւ լալով Վճ աղօթել ու աղաչել , որ  
իրեն հոգւոյ փրկութե ճամբայ մը ցու-  
ցունէ , ու զինքը վտանգներէն ազատէ :  
Վն օրը անանկ լալով անցուց , ու ծնօ-  
ղացը աղաչանքները չիկրոցան զինքը ու-  
րախացունել : Ատքէն դպրատուն երթա-



լու ատեննր անապատը փախաւ, սը ճգնաւորներու վանք մը մտաւ՝ կրօնաւոր եղաւ, ու քիչ ժամանակի մէջ մեծ սրբութե՛ն հասաւ, և հրեշտակի մը պէս ապրելով ամ մէնուն բարի օրինակ կուտար: Ա՛ճ ալ չուզելով իր սիրելի ծառան երկան ժամանակ աշխրքի մէջ թողուլ՝ ծանր հիւանդութիով մը անցաւոր կեանքը թող տալ տրվաւ ու արքայուն յաւիտենական փառքերուն արժանի ըրաւ: **Հեռիկոսը Իւստատէ հայելէ օրինակացին Ռջը:**

## Գ Լ Ո Ւ Խ Գ

### ԽՈՐՀՈՒԲԳՆԵՐՈՒ ՎՃԸ

ԱՌՋԻ ՀԱՍՆԵՐ

Խորհուրդներու զեա ընդհանրապէս:

հ. Խորհուրդը ի՞նչ բան է:

պ. Արտաքին ու զգալի նշան մի է, որ ներքին ու իմանալի շնորհքները նշանակելու և տալու համար դրված է:

հ. Ինչո՞ւ խորհուրդը արտաքին ու զգալի նշան է:

պ. Այդի մարդը հողիէ ու մարմինէ կազմած ըլլալով Ա՛ճ ուզեց, որ աներևոյթ շնորհքը մեր հոգւոյն երևելի նշանի մը

ձեռքով տրրվի, որ մարմնաւոր զգայութիւններու տակ իյնայ :

հ. Ես արտաքին նշանը ի՞նչ բանի վրա կեցած է :

ա. Նիւթին վրա, ինչպէս ջուրն ՚ի մկրտութե, ու կերպին վրա, որ խորհուրդը կատարողին զուցած էական խօսքերն են :

հ. Ի՞նչ կերպով ատ արտաքին նշանը ներքին շնորհքը կրնշանակէ :

ա. Նմանութիով մը ան բանը աչքերնիս առջևը դնելով, որ մեր հոգւոյն վրա կրկատարվի . ինչպէս ջուրը մկրտովողին մարմինը լուարով՝ աչքերնիս առջևը կրբերէ շնորհքը՝ որ զհոգին մեղքէն կը լուսայ կըսրբէ :

հ. Խորհուրդները շնորհքը մինակ կընշանակեն :

ա. Չէ, կուտան ալ՝ Քսի արդիւնքները մօտեցունելով :

հ. Խորհուրդները իրենց նշանակած շնորհքները միշտ կուտան :

ա. շրամներես, բաւական է, որ ընդունողը չար տրամադրութիով իր կողմանէ արգելք մը չիդնէ :

հ. Խորհուրդները պէտք եղած պատրաստութիով չընդունելը մեծ մեղք է :

ա. շրամներես, զարհուրելի սրբապղծութեան մեղք մի է :

հ. Անդանակապտութիւր ի՞նչ է :

ա. Այլ բան մը պղծելն է :

հ. Խորհուրդին տրված շնորհքը սպասաւորին սյսինքն կատարողին աղէկուն կամ գէշութեւ հետ կապակցութի մը ունի՞ :

ա. Չէ, սպասաւորը մեղաւոր ըլլայ՝ արդար ըլլայ՝ խորհուրդը իր շնորհքը կուտայ :

հ. Ինչո՞ւ համար :

ա. Այնքան խորհուրդները կատարող սպասաւորը իր անունովը չի գործեր, Վնի անունով կը գործէ, որ ինքն է խորհուրդներուն տէրը, ինքը կը մկրտէ, ինքը կարձակէ, ինքը կը դրոշմէ. և այլն :

հ. Ի՞նչանկ է նէ սպասաւորը մահացու մեղքի մէջ գտնուելով խորհուրդ կատարած ատենը չարիք մի չի գործեր :

ա. Ինքը մահացու մեղք կը գործէ, բայց Ի՞՞ժ հաւատացեալներուն օգտին համար ուզեց, որ աս մեղքը մինակ իրեն վնասէ, ու ընդունողներուն չի կրնայ վնասելու :

հ. Խորհուրդը վաւեր ըլլալու համար ըստ սպասաւորը ի՞նչ ընելու է :

ա. Ի՞նչ խորհուրդին համար դրված նիւթը ու կերպը գործածելու և դիտաւորութի ունենալու է ան բանը ընելու, որն որ եկեղեցին կրնէ :

Վայինին ու Լքելին պատճառ-Ելիլ:

Եւա Լքամին երկու որդի ծնած էր, առջինին անունը Վային, որ երկիր կը գործեր, ու երկրորդինը Լքել, որ հովիւ էր. երկուքն ալ Լ՜Յ զոհ մատուցին, բայց մէկզմէկէ շատ տարբեր: Վայինը ազահ ըլլալով աղէկ պտուղները իրեն պահեց՝ մինակ անշահները Լ՜Յ մատուց: Լքելը անոր ներհակը առատաձեռնութիւն իր ոչխարներուն մէջէն ամմէնէն աղէկը զատեց՝ Լ՜Յ մատուց: Լ՜Ծ՝ որ մարդուն սիրտը կը տեսնէ, Լքելին պատարագը ընդունեցաւ, ու Վայինին պատարագին չինայեցաւ: Լ՜նոր համար Վայինը եղբօրը վրա չափէ դուրս նախանձեցաւ: Լ՜Ծ իմացուց իրեն, որ եղբօրը անիրաւ տեղը կը նախանձի կոր, ըսելով, որ Ռարի գործողը վարձքը կառնու, ու չար գործողին ալ չարութիւն իր վրան կը դառնայ. ու իր ձեռքն է իր սրտին անկարգ շարժումը սանձելը: Վային Լ՜Յ խրատներէն պտուղ հանելուն տեղը խաբէութիւն իր եղբարը դաշտ մը տարաւ, ու հոն վրան ելաւ՝ զինքը սպաննեց: Լ՜Ծ իր յանցանքը երեսը զարկաւ նէ՝ Վային խոնարհ ապաշխարութիւն՝ ու գլխաւորաբար իր կիւքերը մեռցունելով զզջալուն տեղը՝ ինքը զինքը

յուսահատութիւն տրվաւ, որ անով չարա-  
չար մահւան ու յաւիտենական դատա-  
պարտութիւն արժանի եղաւ, որ օրինակ էր  
անարժանութիւնով խորհուրդ ընդունողնե-  
րուն, ինչպէս Աբելին զոհն ալ պատկեր  
էր խորհուրդները արժանաւորութիւնով  
ընդունողներուն, ասիկայ արժանաւոր զոհ  
մատուցանելովը փրկեցաւ, ու անիկայ ան-  
արժան զոհ մատուցանելովը Այ շնորհ-  
քը կորսընցուց, ու յանցանքէ յանցանք  
կնալով, վերջապէս դատապարտեցաւ :  
Օհնիք . դ :

Խորհուրդ էլեղէցոյ խորհուրդներու զեռ :

« . Սեճ շնորհակալութիւն պարտրկան  
ենք ճանչնալու Այ մեզի ըրած երախտի-  
քը՝ որ արժանի ըրաւ զմեզ սիւ եկեղեց-  
ւոյ գիրկը ծնանելու <sup>1)</sup>, որն որ իր ամե-  
նասիւ խորհուրդներուն զօրութիւն, իր որդ-  
ւոցը ծննդենէն մինչուկ իրենց մահւանը  
ատենը, զօրաւոր ու դիւրին միջոցներ  
կուտայ մեծամեծ շնորհքներ ընդունելու,  
պահելու, ու նորէն ստանալու՝ թէ որ  
դժբախտութիւն կորսընցունելու ըլլան նէ,  
ու վերջապէս այսպիսի շնորհքներով

---

1. Ոչ այսպէս արար սմ ազգաց Տր . Սալ . Եկ . 20 :

զարգարած կը հանէ զանոնք Ա՛յ դատաստանին առջևը :

Բ. Ի՛նչ մեծ յանցանք կընեն անոնք, որ խորհուրդներէն կամ ետ կը կենան կամ զանոնք անարժանութիւն կընդունին : Ի՛նչ մեծ կուրութիւն է անոնց ըրածը՝ որ իրենց փրկութեանը համար սահմանաճ գեղերը չեն ընդունիր, կամ իրենց գեղ մահաւան ու թոյն կորստեան կը դարձունեն <sup>1)</sup> :

Գ. Ի՛նչ մեծ ցաւ պիտոր ըլլայ աս սիւ խորհուրդներուն յարգութիւն չիճանչողներուն, ու ասոնց դէմ ապերախտ գրտնըվողներուն սրտին, երբոր ասոնց ձեռքովը շնորհքներ վաստըկելով Ա՛յ հետ հաշտուիլու՝ ու իրենց հոգին փրկելու անդին ժամանակը ձեռքէն հանելէն ետքը՝ Ա՛յ անաչառ դատաստանին առջևը ելլալու ըլլան նէ, ու ի՛նչ ցաւ ու յուսահատութիւն զղջում պիտոր ունենան անատենը, երբոր արգար դատաւորէն իրենց ապերախտութեցը ու անհոգութեցը համար իրենց դատապարտութիւն դառն վճիռը լսելու ըլլան :

---

1. Աս եկի զի զկեանս ունիցին. և առաւել ևս ունիցին. Յովհ. Ժ. 10 :



( ) րէնակ :

Այ բարեպաշտ ծառայ մը մահւան վտանգի մէջ դանբըլելով՝ վերջին օժման վրա խօսք եղած ատենը դէմ կեցաւ՝ չուղեց վերջին օժում առնուլ, ու մահւան սաստիկ վախովը ըսաւ, որ Հիմայ պէտքը չէ անոր վրա խօսիլ, վերջ վերջին օժում եղողները շուտով կը մեռնին: Աղորմելին աս խօսքը չէ որ վերջին օժումը բանի տեղ չի դնելուն համար ըսաւ, հապա շուտով մեռնելէն բնական պարապ վախով մը, բայց անանկ կարծելով իր մահը աւելի ուշացունել, աւելի փութացուց ու շուտով մեռաւ: Արդը կատարելու ատենը մեռելը կենդանացաւ՝ ելաւ, ու ըսաւ. (Թ) Էպէտ կուղէի վերջին օժում առնուլ, բայց մահւան վախովը ծուլութի ընելուս համար Այ արդարութիւր վճուեց, որ հարուր տարի քաւարան քաշեմ, թէ որ սքեկեղեցույ ու բարեպաշտ քրիստոնէներու աղօթքները ու ողորմութե դործքերը ինծի օգնութի չեն հասնիր նէ: (Թ) որ ինչպէս պարտրկան էի՝ վերջին օժում առած ըլլայի նէ, ասանկ երկան ու ծանր ատանջանքէն ազատ պիտոր ըլլայի, ու շատակ արքայութի պիտոր երթայի: Աս ըսաւ՝ ու նորէն մեռաւ: Դանիարան օրէնակացին Տըլ իւպարմըլ:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Է Ա Մ Ա Ր

Պատրիարքական Խորհուրդի Երկրորդ Վրաստանի  
Հանրապետություն :

Հ. Քանի՞ են եկեղեցւոյ խորհուրդ-  
ները :

Պ. Աթոռ՝ մկրտութի, դրոշմ, ասպաշխա-  
րութի, Հաղորդութի, վերջին օծումն,  
կարգ քահանայութե, պսակ :

Հ. Ո՞վ սահմանեց աս խորհուրդները :

Պ. Քն սահմանեց, երբոր աշխարհի վրա  
էր նէ :

Հ. Այնպէս չի կրնար նոր խորհուրդ  
սահմանել, կամ սահմանաճներու մէջէն  
պակսեցունել :

Պ. Չէ, մինակ Քն կրնայ շնորհքներ  
տալ ու խորհուրդներ սահմանել, վնզի  
ինքը շնորհքներու աղբիւր ըլլալով մեր  
փրկութեանը համար ու ինչպան աշխարհին  
վերջը սահմանեց զանոնք :

Հ. Խորհուրդներու արարողութիները ո՞վ  
գրաւ :

Պ. Այն եկեղեցին գրաւ զմեզ յարգութե  
ու ջերմեռանդութե շարժելու համար :

Հ. Աս արարողութիները խորհուրդներու  
էական են :

Պ. Չէ, առանց ասոնց ալ կրկատարվին ,

բայց առանց հարկաւորութե՛ն զասոնք թող  
տըլօղը ծանր կըմեղանչէ :

հ. Խորհրդոց գործքերը քանի՞ են ընդ-  
հանրապէս :

ա. Գլխաւորները երկու են . նախ՝ որ  
չնորհք կուտան՝ կամ շնորհքը կեւելցու-  
նեն, երկրորդ՝ հոգին անջնջելի կնիք մը  
կըտպաւորեն :

հ. Որո՞նք են շնորհք տըլօղ խորհուրդները :

ա. Սկրտութե՛ն ու ապաշխարութե՛ն խոր-  
հուրդներն են, բայց թէ որ ապաշխա-  
րութե՛ն խորհուրդը ընդունողը մինակ նե-  
րելի մեղք ունի նէ, ան ատենը ան ալ նոր  
շնորհք չիտար, որ արդէն կայ, հապա  
եղածը կեւելցունէ :

հ. Ի՞նչպէս կըսվին աս երկու խորհուրդ-  
ները :

ա. Սեռելոց խորհուրդներ կըսվին, որ  
մեղքի մէջ մեռած հոգիները շնորհքնե-  
րով կըկենդանացունեն :

հ. Ի՞նչպէս կըսվին մնացած հինկ խոր-  
հուրդները :

ա. Անդամիններու խորհուրդներ կըսվին,  
որ զանոնք ընդունողները պէտք է, որ  
շնորհաց մէջ ըլլան, անոր համար ալ ա-  
նոնք շնորհքը կեւելցունեն :

հ. Խորհուրդները ամմէնուն ալ նոյն աս-  
տիճանի շնորհք կուտան :

ող. Մինակ մկրտութիւնը պզտիկ տղոց նոյն աստիճանի շնորհք կուտայ, բայց ան ալ չափահաս մկրտըվողներուն իրենց պատրաստութե՛ն չափովը կուտայ :

հ. Ո՞ր խորհուրդները կնիք կըտպաւորեն 'ի հոգին :

ող. Մկրտութիւնը՝ դրոշմը ու կարգ քահանայութե՛ր :

հ. Ի՞նչ է աս կնիքը :

ող. Ճշմարիտ ու սք նշան մի է մեր հոգին տպաւորված, որ կընշանակէ, որ աս խորհուրդներու ձեռքովը Ա՛յ մասնաւոր ընծայված ենք :

հ. Մեղքով ասոնց շնորհքը կորսրված ատենը նշանն ալ կըկորսրվի՞ :

ող. Չէ, ան նշանները ոչ հոս՝ ոչ մէկալ աշխարհքը մեր հոգիէն կելլան, անոր համար ալ աս խորհուրդները չեն կըրկնրվիր :

Եգիպտոսոց անբրանիինէրուն հահան պտտմո-ւնիւր :

Երբոր Ա՛ծ Սոլսէս մարգարէին ձեռքովը Եգիպտոս մեծ մեծ պատիժներով պատժեց նէ, վերջը ուզեց ալ աւելի ու սիրտ ցաւցունելու պատժով մը փարաւոնը պարտաւորել, որ Խսրայէլի ժողովուրդը թող տայ իր երկրէն դուրս ելլա-

լու : Աս պատիժը անդրանիկներուն մահն  
եղաւ : Աս պատիժը գալուն առջի օրը  
Այ հրամանաւը Սոփսէս ապսպրեց ժո-  
ղովուրդին , որ իրիկւնէ ամմէն մէկ տուն  
մէյմէկ անարատ ու մէկ տարւան ոչխար  
մորթեն , որոնց արունովը իրենց տներուն  
դռները ու անոնց սեամերը նշանեն , որ  
ան արունը թողութեն նշան ըլլայ անդրա-  
նիկները մեռցունող հրեշտակին : Այ  
մ' ալ կէս գիշերին Այ հրեշտակը բոլոր  
եգիպտացիներուն անդրանիկները մեռցուց'  
Փարաւոնի անդրանիկէն սկսած՝ ինչւան  
վերջին աղքատին անդրանիկը , ու մինակ  
արունով նշանած տներուն չիմօտեցաւ :  
Ան ատենը բոլոր Եգիպտոսի մէջ գիշե-  
րով վախնալու լացքի ձաներ ելաւ , ու  
տուն չիկար , որ անդրանիկին մահը չի-  
լար : Փարաւոնը շուտ մը Սոփսէսը ու  
Ահարոնը իրեն կանչեց , չէ որ մինակ  
երթալու թող տրվաւ , հապա ստիպեց  
ալ , որ շուտով իր հողէն դուրս ելան :  
Ելան Իսրայէլացիները բոլոր ոսկի ար-  
ծաթ զարդերն ալ հետերնին տանելով ,  
որոնք որ Այ հրամանաւը ամմէն մարդ  
իր դրացիէն փոխ առած էր , որ տէրերը  
ուղելու վախնալով , չըլլայ որ անոնք ու-  
շանալով ամմէնը մեռնին , թող տրված  
էին : Եւրաւ կերենայ աս ոչխարի արու-

նով եղած նշաններէն, որով ԱՅ ժողովուրդը որոշվեցաւ եգիպտացիներէն, ու ան կնիքին յայտնի օրինակը, որն որ սբ խորհուրդները կըտպաւորեն, որոշելով զմեզ անհաւատներէն, ու լեցունելով շնորհքներու անգին պարգևներովը: Եւնց. ԺԷ:

Խորոպ Խորհուրդնէրուն Էնոյն Չոս:

«. Աս խորհուրդներուն կնիքը շատ փառաւոր ու մեղի օգտակար բան մի է: Ասոր ձեռքովը մասնաւոր կերպով ԱՅ կընծայվինք: Սկրտութե՛ն ձեռքովը Խորայէլացիներէն աւելի ԱՅ ժողովուրդ կըլլանք<sup>1)</sup>. վնդի անոնց տըրված օրէնքները մեր աւետարանի օրէնքներուն մինակ պատկերն էին: Վրոշմի ձեռքովը ԱՅ զինւորներն ենք, ու կարգին ձեռքովը իր պաշտօնատէրները կըլլանք, անոր համար ալ շատ առատ շնորհքներ կընդունինք<sup>2)</sup>:

Բ. Սկրտութե՛ն կնքովը կըպարտաւորինք Վնի վարդապետութիներուն հետեւելու, և քրիստոնէաբար ապրելով՝ աշխրբի վարդապետութիներէն փախչե-

---

1. Սեք ժողովուրդ և խաչն արօտի նորա. Սալմ. 27. 3:

2. Քահանայից սորա զգեցուցից զփրկութիւն. Սալմ. 62. 16:



լու<sup>1)</sup> : Ղարոշմի կնիքովը կը պարտաւորինք Վսի սը հաւատքին վարդապետուէր վրա պատերազմելու , ու անոնց խոստովանու թէ վրա հարկը պահանջած ատենը կեանքերնիս դնելու և արուննիս թափելու : Կարգին ձեռքովը կը պարտաւորինք կատարեալ կեանք մը վարելով Վսի արժանաւոր պաշտօնատէրներուն նմանելու : Ընոր համար քրիստոնէին մեղքը անհաւատին մեղքէն , ու քահանային մեղքը աշխարհականին մեղքէն ծանր է :

Գ . Ըս կնիքը անջնջելի ըլլալով՝ Վսի դատաստանին առջևն ալ ասով պիտոր երևնանք արքայութիւնը ժառանգելու համար՝ թէ որ պարտքերնիս աղէկ կատարած ենք նէ , չէ նէ հեթանոսներէն աւելի խիստ քննուիով քննրվինք պիտի , ու այսպէս թէ դատապարտրված քահանան , թէ դատապարտրված քրիստոնեայ աշխարհականը իրենց անջնջելի կնիքով մէկ տեղ դժոխք պիտի երթան , որ անով հոն տեղը պատիժնին եւելնայ , ու իրենց յաւիտենական նախատինք ըլլայ :

---

1. Օձեր առարքին ուիս նուիրեցէք այնմ , որ զձեզ ՚ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն .  
ս . Գլխ . Բ . 9 :

( ) րիմա :

Թաթարներու Վասսիանոս Թագաւորը շատ յաղթութիւններ ընելով հպարտացած՝ Հայոց Թագաւորին աղջիկը իրեն կնութե ուղեց : Հայոց Թագաւորը աս բանիս դէմ կենալ չիկրորնալով՝ աս դաշամբ հաւնեցաւ, որ Վասսիանոսը աղջրկան հաւատքին չիդպչի, որ կարող ըլլայ քրիստոնէական հաւատքի մէջ ապրելու : Սեճ հանդիսութիւով հարսնիք եղաւ. զաւակ ծնանելու ատենը եկաւ նէ՛ Վասսիանոսը ու իր Թագաւորութեը բոլոր մեծամեծները կըսպասէին, որ մօրը պէս գեղեցիկ զաւակ մը ծնանի, բայց ողորմելի Թագուհին շատ անտանելի ցաւեր քաշելէն ետքը սե՛ անշնորհք՝ տգեղ ու հոտած զաւակ մը ծնաւ, որ չէ թէ մարդ՝ հապա ցուցանք մի էր : Թագաւորը ասիկայ տեսնելով շատ բարկացաւ՝ կարծիք դնաց, որ Թագուհին ուրիշին հետ մեղանչած ըլլայ, անոր համար ալ զաւակը ցուցանք եղած ըլլայ, հրամայեց մար ու տղայ երկուքը մէկ տեղ կրակը նետելու : Ընմեղ Թագուհին շատ լացաւ՝ ողբացաւ՝ երգումներ ըրաւ իր անմեղութիւր ցուցունելու համար, բայց օգուտ չընելով երելու կըտանէին կոր զինքը նէ, Ըս վերջին

ժամս գոնէ աս մխիթարութիւնը տրվէք  
ինծի ըսաւ, սպասեցէք, որ խոստովա-  
նանք ըլլամ, հաղորդ առնում, ու մեռ-  
նելէս յառաջ դժբաղդ զաւակս գիրկս  
առնում, ու անկէ ետքը ուրախութեամբ  
մեռնիմ: Թագաւորը աս աղաչանքը ըն-  
դունեցաւ: Թագուհին զաւակը գիրկը  
առածին պէս զինքը շուտ մը մկրտեց:  
Սկրտուէ ջուրը մանուկին մարմնոյն դը-  
պածին պէս ան գարշելի տգեղութիւն փոխ-  
վեցաւ, ու հրեշտակի նման աղւոր տղայ  
մը եղաւ: Թագաւորը աս հրաշքը տես-  
նելով՝ տրված հրամանին վրա զղջացաւ,  
մկրտութե սբ խորհրդոյն զօրութիւն ճանչ-  
ցաւ. ինքը ու իր թագաւորութե բոլոր  
մեծերը մկրտրվեցան, ու թաթարներու  
երկիրը ուղղափառ հաւատքը տարածե-  
ցաւ: Սեկնէրի Գ. Գառնի Ռջէ՝ Խ ուրիշ  
շատ հեղինակներն ալ իւրապէս:

Ե Ր Ր Ո Ր Դ Ն Ե Մ Ե Ր

Սկրտուէն ու անոր պարտնէրուն լրա:

Կ. Սկրտութիւն ինչ է:

Պ. Խորհուրդ մի է եկեղեցւոյ, որ մեր  
վրայէն սկզբնական մեղքը կըջնջէ, ու  
զմեզ Մ.Յ և եկեղեցւոյ որդի կընէ:

Կ. Սկրտութիւն մինակ սկզբնական մեղքը  
կըջնջէ:

Պ. Ներգործական մեղքին աղտերն ալ կըմաքրէ, թէ որ մկրտըվողը գործեր է նէ. ու մեղքին ամմէն պատիժներէն ալ կաղատէ :

Կ. Մնանկ է նէ մկրտութիւն ետքը անմիջապէս մեռնողը քաւարան չէրթար :

Պ. Չէ, մեծ ըլլայ՝ պղտիկ ըլլայ՝ շիտակ արքայութի կերթայ, թէ որ արժանապէս ընդունած է նէ :

Կ. Սկզբնական մեղքին վնասներէն մկրտութիւն ետքն ալ մնացողներ կըլլան :

Պ. Հրամմերես, տգիտութիւն, ցանկութիւն, հիւանդութիւն ու մահւան պարտքը կըմնան :

Կ. Ինչո՞ւ մկրտութիւնը ասոնցմէ ալ չխտարտէր զմեզ :

Պ. Անոր Մծ ասանկ չուղեց, որպէսզի մտքերնիս մնայ, որ մեղքի մէջ ծնած ենք. թէ որ ան մեղքը չըլլար նէ՝ աս չարիքներէն ազատ կըլլայինք. ու առիթ ալ ունենանք պատերազմելու և արդիւնք վաստըկելու :

Կ. Սկրտութիւնը մեր հոգին մինակ մեղքէն կաղատէ, ուրիշ բան չըններ :

Պ. Մեզի սրբարար շնորհք ալ կուտայ՝ հաւատքի՝ յուսոյ ու սիրոյ հեղական առաքինութիւններովը մէկ տեղ, ու մեր հոգին անջնջելի կնիք մի ալ կըտպաւորէ, ինչպէս վերը ըսինք :

Է. Ամեն մկրտութիւններն ալ աս պարզե-  
ները կրնդունի՞ն :

Պ. Պզտիկ տղաքը կրնդունին, բայց մե-  
ծերը յառաջուց պիտի հաւտան, ու ներ-  
գործական մեղքերնուն վրա զղջան, ու  
ասանկ անոնք ալ կրնդունին :

Է. Չափահաս մկրտութիւնը հաւատք ու  
զղջում չունի նէ՛ մկրտութի, շնորհք ու  
մկրտութե՛ ուրիշ պտուղները չընդունիր :

Պ. Անանկ մարդը մկրտութիւնը կրն-  
դունի, ու կնիքը կառնու, որ զինքը  
նորէն մկրտել չըլար. բայց սրբարար  
շնորհք չառնուր :

Է. Հապա անանկ մարդը ի՞նչպէս ընդու-  
նելու է սրբարար շնորհքը :

Պ. Ապաշխարութե՛ ձեռքովը՝ կամ հա-  
ւատքով միացած զղջումով :

Իսրայէլացիներուն կարմիր ծովէն անցնե-  
լուն պատմութիւնը :

Իսրայէլի ժողովուրդը Ագիպտոսէն  
ելած՝ կարմիր ծովին քովը հասան նէ,  
Փարաւոնը զիրենք թող տալուն վրա զըղ-  
ջացաւ, բոլոր իր ժողովուրդը ժողվեց,  
ու վեց հարուր կառքերով իրենց ետեէն  
վաղեց՝ կարմիր ծովին քովերը զիրենք  
բռնելու համար : Իսրայէլացիները զինքը  
տեսան նէ՛ շատ վախցան : Մովսէս սիրա

տրվաւ իրենց՝ մեծ հրաշքը իմացունելով,  
 որ ՄԺ իրենց օգնելու համար պիտոր գոր-  
 ծեր: Հրեշտակը, որ լուսաւոր ամպով  
 մը իրենց առջևէն կառաջնորդէր կոր,  
 ամպը ետևնին անցուց, իրենց ու փարա-  
 ւոնին բանակին մէջը կեցուց, որ փարա-  
 ւոնը չիկրնայ իրենց մօտենալ: Սովսէս  
 իր գաւազանը վեր վերցուց՝ ու ծովին  
 վրա բռնեց, ծովը շուտ մը բացվեցաւ,  
 իրենց չոր ու հանգիստ ճամբայ տրվաւ,  
 ՄԺ ժողովուրդին բոլոր բանակը անցաւ՝  
 երկու դին պատի պէս բարձր կեցած  
 ջրերուն մէջէն ան չոր ճամբով: Ատուէն  
 ան բացված ճամբուն մէջը Ագիպտացի-  
 ները մտան նէ, իրենց կառքերը սկսան  
 մէկզմէկու վրա խնալ: Ագիպտացիները  
 տեսնելով՝ որ ՄԺ կըպատերազմի կոյ  
 իրենց դէմ՝ կուզէին ետ դառնալ ու  
 փախչիլ: Ան ատենը Սովսէս ՄԺ հրա-  
 մանաւ գաւազանը ծովին վրա նորէն եր-  
 կընցուց, ծովը միացաւ, ու փարաւոնը՝  
 իր բոլոր բանակը՝ կառքերը՝ ձիերը ծած-  
 կեց՝ խրդդեց, ու հոգի մ'ալ չապրեցաւ:  
 Խորայէլացիները ծովին քովերը՝ Ագիպ-  
 տացիներուն մեռելներով լեցված տեսան  
 նէ՝ ՄԺ ու անոր ծառան Սովսէսի հաւ-  
 տացին, ու բոլորը մէկ տեղ ՄԺ գեղեցիկ  
 երգ մի երգեցին՝ ՄԺ յաղթութիւն պատ-



մելով : Ասասնկ հրաշքին յիշատակը մտքերնին պահելու համար դրովեցաւ հրէից զատիկը : Ասիկայ յայտնի օրինակ էր մեր մկրտութե՛ն, որ զմեզ սատանային գերութե՛ն կազատէ , մեր վրա հաւատքի շնորհք կը հեղու , Քսի ու իր եկեղեցւոյ առաջադրած ԱՅ յայտնութիւններուն հաւտալու համար , որուն բարիքները պարտրկան ենք անկորուստ պահելու ԱՅ ասանկ մեծ բարերարութիւնը չիմոռնալու համար : Եւլեց թի . թե :

**Խորագր Յնը ճանչնալուն վրա :**

«. Յնի առանց կենդանի հաւատքով հաւտալու՝ փրկութե՛ն չենք կրնար հասնիլ : Իսայց ի՞նչպէս կրնանք Յնի կենդանի հաւտքը ունենալ , երբոր զինքը աղէկ չենք ճանչնար նէ <sup>1)</sup> : Արնայ մեր հաւտքը կենդանի ըլլալ մեր թեթեւ ծանօթութիւնովը : Անանկ է՛նէ՛ շատ անգամ մտմրտանք մեր հաւտքին հեղինակը ու կատարողը Յնին վրա , անոր առաքինութիւններուն՝ խորհուրդներուն ու բոլոր գործքերուն վրա , որ մեր հաւտքը

1. Այս են յաւիտենական կեանք , զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած՝ և զոր առաքեցեր զՅն Քս. Յովն. թի . 3 :

կենդանի հաւատք ըլլայ, ու փրկութեան յոյս ունենանք <sup>1)</sup> :

Բ. Թէ որ Յի չենք նմանիր նէ, որ ընտրեալներուն գլուխը՝ ու առջի օրինակն է, ընտրեալներու կարգը գտնելու չենք կրնար յուսալ <sup>2)</sup> : Բայց ինչպէս կրնանք իրեն նմանիլ, երբոր զինքը չենք ճանչնար, ու ճանչնալու ալ չենք ջանար նէ : Պատկերահանը պատկեր մի օրինակելու համար աչքը շատ անգամ օրինակին վրա կըտնկէ, անոր ամէն գծադրութիւնը աղէկ ճանչնալու համար, մեր ջանքն ալ ասանկ պիտոր ըլլայ զՅի ճանչնալու համար <sup>3)</sup> :

Գ. ՕՅի Քի չիսիրողը անիծեալ է <sup>4)</sup>, անոր համար թէ որ մինակ տկար ու մութ ծանօթութի մը ունինք Յի վրա նէ, կամ չենք կրնար, կամ քիչ կրնանք զՅի սիրել, վսզի չիճանչցրված բանը չիսիրվիր, ու սէրը ծանօթութե ետևէն

1. Աչ արդարանայ մարդ . . . եթէ ոչ 'ի հաւատոցն Յի Քի. Գաղատ. Բ. 16 :
2. Հայեցարուք 'ի զօրագլուխն հաւատոց՝ և 'ի կատարինն Յի. Աբդ. ԺԲ. 2 :
3. Զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի Արդւոյն իւրոյ. Հռոմ. Է. 29 :
4. Եթէ որ ոչ սիրէ զՏէր Յի, եղիցի նզովեալ. — Աբդ. ԺԲ. 22 :

կերթայ <sup>1)</sup> : Աբերը զՅն արքայութեան մէջ հարկաւ կըսիրեն , վնդի զինքը ինչպէս որ է նէ՛ անանկ կըտեսնեն . մենք պէտք է՛ որ անոր տեղը ջանքով ու սորվելով լեցունենք . ուրիշ բան սորվելու և գիտնալու չաշխատինք , մինակ զՅն Վն գիտնանք , անիկայ ալ խաչ ելած <sup>2)</sup> :

( ) Երևալ :

Ապանիայի Ա ալլատողիտ քաղաքը ազնւական մարդ մը՝ Պետրոս Ֆասպրի ըսված քահանային գնաց՝ իրմէն հոգևոր խրատ ուղելու համար : Բարի քահանան՝ մեր գլուխը Վնի նմանելու պարտքը իրեն սորվեցունելէն ետքը աս մինակ ապսպրեց իրեն , որ իր կենացը ու Վնի կենացը մէջ եղած տարբերութիւր շատ անգամ մտածէ՛ ինք իրեն ասանկ ըսելով . Վն աղքատ՝ ու ես հարուստ , Վն մերկ՝ ու ես փառաւոր հագված , Վն անօթի է՛ ու ես աղէկ կուշտ եմ : Ընդնականը աս բանս կատարելու բերնով խոստացաւ , բայց մտքին մէջէն քահանային վրա ծիծաղելով գնաց , վնդի սորվեցուցած բանը

- 
1. Ընցեք շնորհօք և գիտութիւն Տեան մերոյ և փրկչին Յնի Վնի . Բ . Պէտր . Գ . 18 :
  2. Այ եղի՛ ՚ի մտի գիտել ինչ ՚ի ձեզ՝ բայց միայն զՅն Վն , և զնոյն՚ի խաչ ելեալ . ա . Պրդ . Բ . 2 :

իրեն թեթեւ բան երեցաւ : Բայց ծաղը  
ընելու համար ան խօսքերը երբեմն կը-  
զուցէր : Ընդամ մը ալ շատ ընկերնե-  
րով փառաւոր սեղան մը գտնուիւած ա-  
տենը աս խօսքը միտքը եկաւ . Վսն անօ-  
թի է՝ ու ես աղէկ կուշտ եմ . ան ատենը  
Ըյ շնորհքով հասկըցաւ ասոր զօրու-  
թիը , ու ինք իրեն սկսաւ ըսելու . Ես  
երկրի որդը տկրած եմ , Վսն երկնից թա-  
գաւորը քաղցած է . ես մեղքերով բեռ-  
նաւորուիւած՝ զբօսանքներու մէջն եմ . Վսն  
անմեղուէն աղբիւրը չարչարանքներու մէջ  
է . աս Բնչ անվայել բան է , ասանկ  
մտմտալով իրեն անանկ լալ մը եկաւ , որ  
պարտաւորեցաւ ընկերները ու սեղանը  
թող տալով մինակ խուց մը քաշվելու :  
Հոն տեղը քանի գնաց նէ , աւելի խո-  
րունկ մտմտալով իր Վսնի շինմանելուն  
վրա՝ շատ շփոթեցաւ , ու ամբշնալով ինք  
իրեն կրտէր . Բնչպէս կրնամ ես քրիս-  
տոնեայ ըսվիլ , որ իմ վարքս Վսնի վար-  
քին ամենեին շինմանիր . պէտք է՝ որ  
կամ հաւատքէս հրաժարիմ , կամ վարքս  
փոխեմ : Ըս ըսաւ , վարքը փոխեց , ու  
անկէ ետքը կատարեալ բարի քրիստոնէի  
վարքով ապրեցաւ : Բողնեօլնն իրպարմե-  
ծ շարքառ-լիան յառիպեմանինն Տեղս՝ Վսն  
Ժննդեան վրա :

ՉՈՐՐՈՐԴ ԼՆՄՆՐ

Ս'ըրբոս-Բէան հարկա-որո-Բէան՝ ուս ցալու  
Իբրպէն զլու :

հ. Ինչո՞ւ մանկունքը ծնածնին պէս բա-  
նականութիւննին չիբացված կըմկրտեն :

պ. Ե՛րև տ մը զիրենք մեղքէն ու սատա-  
նային գերութէն ազատելու համար՝ որ  
չըլլայ՝ որ անկնունք մեռնին :

հ. Ընանկ է նէ մկրտութի՛ր բացարձա-  
կապէս հարկաւո՞ր է :

պ. Զրամներես, մկրտութի՛ր առջի խոր-  
հուրդը ըլլալով՝ առանց անոր եկեղեցւոյ  
բարիքներուն ու խորհուրդներուն հաղորդ  
ըլլալ ու արքայութի՛ր մտնել չենք կրնար :

հ. Ընկնունք մեռնող տղոց ի՞նչ կըպա-  
տահի :

պ. Ըրքայուէ կըզրկւիին՝ ու լիմպոս կեր-  
թան, որ հոն կրակի պատիժը չիկայ,  
ինչպէս շատ սք հարքը կրկարծեն, բայց  
Ը՛յ տեսութէ՛ յաւիտեան կըզրկւիին :

հ. Սանուկը շուտով մկրտել տալու ծնող-  
քը պարտք մի ունի՞ն :

պ. Զրամներես, թէ որ իրենց անհո-  
գութի՛ովը զաւակնին անկնունք կըմեռնի  
նէ, իրենք Ը՛յ առջևը ծանր մահացու  
մեղքի պարտրկան կըլլան :

հ. Թէ որ մէկը մահուան մտանդի մէջն է, ու մկրտութիւն չի կրնար նէ՝ մկրտութեան տեղը բռնող բան մը կայ :

ա. Հրամմերես, մկրտութեան տեղը բաղձանքի կամ արեան մկրտութիով կրնայ լեցունել :

հ. Ի՞նչ է բաղձանքի մկրտութիւնը :

ա. Իր մեղացը վրա կատարեալ ու ճշմարիտ զղջում մի է՝ ժամանակ գտածին պէս մկրտութեամբ բաղձանքով ու առաջադրութիւնով :

հ. Ի՞նչ է արեան մկրտութիւնը :

ա. Յառաջուց չի կրնալով մկրտութեամբ ուղղափառ հաւատքի համար մարտիրոս ըլլալ ու արունը թափելն է. ինչպէս առջի հալածանքներու ատենը շատերուն կրպատահէր :

հ. Մկրտութիւն ի՞նչ բանով կրլայ :

ա. Մկրտութեան գլուխը ջուր լեցունելով՝ ու նոյն ատենը ջուր լեցունողը աս խօսքերը զրուցելով՝ (Մ. Ես. անուան) Ժառանգ կամ աղախին՝ Բնի հրաբի այժմ ՚ի յեան իմ յանունն շօք եւ Որդւոյ եւ Հոգւոյն սբ. :

հ. Մկրտութեան ի՞նչ ջուր գործածելու է :

ա. Բնական ջուր պիտոր ըլլայ՝ թէ ծովի՝ թէ գետի՝ թէ աղբեր՝ թէ անձրևի կամ թէ ուրիշ ջուր ըլլայ :

հ. Թէ որ շինծու ջուր կրլայ նէ՝ մկրտու-



Թիւնը վաւեր չըլլար . ինչպէս՝ վարդի ջրով կամ գարեջրով կամ օղիով :

Պ . Չէ, մկրտութիւնը ճշմարիտ մկրտութիւն չըլլար :

Կ . Այս խօսքերուն մէկը պակաս կը լլայ նէ, չօր՝ կամ Որդւոյ՝ կամ չոգւոյն «Էյ, մկրտութիւնը կատարեալ կը լլայ :

Պ . Չէ, պէտք է կրկնել, վնդի առջինը մկրտութիւն չէ :

Կ . Որչափ ջուր պէտք է :

Պ . Անչափ որ մարմնոյն վրա վազէ, ու վրաց կարող ըլլայ ըսվիլ :

Քնի Տիրութիւնն ու Կանգաւայ Լագուհայն  
Դերբնիկն Տիրութիւնն պատմութիւնն :

Չրեից Ժողովուրդը Յովհաննէս մկրտաբանին սք վարքը տեսնելով, որ մեծ աղքատութիւնով ու ճգնութիւնով անապատը կապրէր՝ անպաշտութեան շարժեցան, ու բազմութիւնով անոր քարոզութիւնը լսելու և անկէ մկրտուելու համար կերթային, որ կաշխատէր զիրենք Քնի գալուն պատրաստելու համար՝ ըսելով, Այս մկրտութիւնը, որ ես կրնեմ կոր, ուրիշ բան չէ, բայց եթէ ապաշխարութեան նշան մը, ու ջրոյ պարզ մկրտութիւն մի է, բայց Անսիան որ ձեր մէջն է, ու իմ ետեւէս կուգայ կոր, անիկայ զձեզ ՚ի Չորի սք պիտի

մկրտէ : Ըն ատենը Յս ինքն ալ ժողովուրդին մէջը մտած՝ իրմէն մկրտըվելու համար եկաւ : Սք Յովհաննէսը զինքը ճանչցաւ՝ ու ըսաւ . Ըքժանի էր , որ ես քեզմէ մկրտըվէի , դուն ինձի՞ կուգաս : Յս պատասխան տըվաւ , որ ինքը կուզէ կատարել ամմէն արդարութիւր ու կատարելութիւր : Յովհաննէս մկրտիչը հնազանդեցաւ , ու զինքը մկրտեց : Յս Յորդանան գետը մկրտըվածին պէս՝ երկինքը բացվեցաւ , Հոգի սքը աղաւնիի կերպարանքով Յսի վրան իջաւ , երկինքէն Հայր Ըժէն ձան մը եկաւ , որ կըսէր . Ըսիկայ է իմ սիրելի որդիս , ու իմ հաճութիս բոլոր ասոր վրա դրած եմ : Բս իր սք մկրտութիով՝ մկրտութե խորհուրդը հաստատեց , ջրերը սրբեց , որ մկրտութե գործիք ըլլալու կարող ըլլան , ու մեզի իմացուց , որ մկրտութիով Հոգին սքին տաճար կըլլանք , ու ԸՅ Հօր սիրելի որդիներ : Սաքլ . Գ :

Կանգակայ թագուհւոյն ներքինին Ըրուսողէմ եկած էր ԸՅ երկրպագութիւրնելու համար , ու ետ դարձած ատենը կառքին (արասպային) մէջը Ըսայի մարգարէին գիւրքը կըկարդար կոր : Հոգին սքը զսք Փիլիպպոսը շարժեց կառքին մօտ երթալու : Աերքինին զինքը տեսաւ նէ ,

իր քովը առաւ կառքին մէջը, ու աղա-  
 շեց՝ որ իրեն Կսայի մարգարէին զիբքը  
 մեկնէ, որն որ ինքը չէր կրնար կոր  
 հասկընալ: Այն Փիլիպպոսը սկսաւ իրեն  
 աւետարանել զՅս Բն, որուն վրա Կսայի  
 մարգարէն կըխօսէր, ու սորվեցունել  
 մկրտութե՛ն հարկաւորութի՛ր և թէ ինչ  
 բաներ կըպահանջուիին մկրտութի՛ր աղէկ  
 ընդունելու համար. անանկ որ ջրի մի քով  
 հասած ատեննին ներքինին մկրտութի՛ ու  
 զեց: Այն Փիլիպպոսը Յսի ճշմարիտ Արդի  
 Ե՛ջ ըլլալուն վրա իրեն հաւատքի դաւա-  
 նութի՛ ընել տալէն ետքը, զինքը մկրտ-  
 տեց, ու աներևոյթ եղաւ. ներքինին ալ  
 ուրախութի՛ով և մեծ մխիթարութի՛ով  
 լեցված՝ իր ճամբան գնաց: Գառթ. Ը:

Խրատ Յս Բնի կենացը վրա Տեղէ Կեո:

« . Այն մկրտուն ձեռքովը հին մարդը  
 կըհանվինք նորը հագնելու համար<sup>1)</sup>: Հին  
 մարդը մեր մոլութի՛նները ու կիրքերն են,  
 նոր մարդը Յս Բն, իր վարդապետու-  
 թի՛նները ու առաքինութի՛ններն են<sup>2)</sup>, որոնք

- 
1. Սերկացարո՛ւք զհին մարդն գործովքն իւրովք,  
 և զգեցարո՛ւք զնորն. Սողո. Գ. 9. 10:
  2. Արք միանգամ ի Վն մկրտեցարուք, զՅս ըզ-  
 գեցեալ էք. Գառթ. Գ. 27:

պարտրկան ենք մեր վարուցը մէջ ցուցունելու :

Բ. Սկրտութե՛ն ձեռքովը Յսի պատւաստրված ենք : Ինքը որթ (ասմա) է , ու մենք ուռ (ասմա չուպուղու) ենք , ուռը ինք իրմէն կեանք չունի , իր կեանքը որթէն կառնու <sup>1)</sup> : Ասանկ է 'ի Վս մեր կեանքին՝ ու անոր հետ մեր միաւորութե՛րը պատկերը , որ առանց անոր արքայութե՛ն արժանի պտուղ մը չենք կրնար տալ :

Գ. Սկրտութեան ձեռքովը անդամներ եղած ենք մարմնոյ , որուն գլուխը Վս է <sup>2)</sup> : Անդամները իրենցմէ կեանք ու գործք չունին . իրենց կեանքը ու գործքերը մինակ կենդանական ոգիներէն կը քաշեն , որ բոլոր մարմնոյ վրա գլխէն կիջնայ , առանց աս հաղորդակցութեան ուրիշ անդամները զօրութի՛ չունին : Ասանկ ալ մեր կեանքը 'ի Վս , ինքն է՝ որ պիտոր ապրի 'ի մեզ <sup>3)</sup> :

### (Երեւակ :

Թուվմաս Ս շլենցայի արքեպիսկոպոսը կը պատմէ , որ զինքը պարզ քահանայուէ

1. Աս եմ որթ և գուք ուռ , որ հաստատեալ է յիս՝ և ես 'ի նա , նա բերէ պտուղ յոյժ . զի առանց իմ ոչինչ կարէք աւնել . Յովհ . 24 . 5 :
2. Մարմինք ձեր անդամք են Քսի . ա . կորն . 2 . 15 :
3. Կենդանի եմ այսուհետեւ , ոչ ես՝ այլ կենդանի է յիս Վս . Պատար . Բ . 20 :

ատենը ծանր հիւանդի մը կրկանչեն . հիւանդը յառաջ մահւան հարկաւոր պատրաստութիւները տեսնելէն ու խորհուրդները ընդունելէն ետքը՝ իր տղայութեան ատենը Մ.Յ մեծ ողորմութեամբը սբ հաւատքը դառնալը կրպատմէ, որ յառաջ հրեայ է եղեր : Տղայութեան ատենը՝ կրսէ, իմ տարիքս ուրիշ տղու մը հետ, պտըտելու կերթայինք կոր՝ մէջերնիս Մեսիային վրա խօսելով, որուն վրա կրլստէինք, որ մեր ծնողքը ամմէն օր կրլստէին, վնդի անոնք ալ ուրիշ հրեաներուն պէս խարված ըլլալով՝ կրսպասէին, որ գայ, մենք ալ անոնց հետ նոյն անհաւատուն մէջ ըլլալով՝ կրսէինք կոր . Մհան բարեբաղդութեան արժանի ըլլայինք, որ մեր կենդանութեան ատենը Մեսիան գար, ասանկ խօսքերէն մեր սրտին ջերմեռանդութիւն եւեռնալով ան օրը իրիկուն ըրինք . ու մրթննալ սկսաւ նէ՛ մէյ մ՛ ալ տեսանք, որ երկինքը բացվեցաւ՝ ու մեծ լոյս մը երեցաւ : Մն ատենը երկուքնիս մէկէն ծունկ չոքեցանք ու աղաչեցինք Մ.Յ, որ Մեսիան մեր ժամանակը խրկէ, ու մեզի ցուցունէ, որ զինքը տեսնելու անչափ բաղձանք ունինք : Մսանկ աղօթք ըրած ատեննիս՝ ան գեղեցիկ լուսին մէջը փայլուն սկիհ մը տեսանք վրան նշտար-

քով մը, որ նման էր քրիստոնեայ քահանաներուն պատարագի մէջ վեր վերցուցածին : Աս որ տեսանք նէ՛ Հողին սքին շնորհքովը լուսաւորվեցանք, ու անտարակոյս հաւտացինք, որ ուրիշ Անսիա՛ ուրիշ ճշմարիտ օրէնք ու ճշմարտութի չիկայ քրիստոնէական հաւատքէն իզատ, անոր համար Այ շնորհակալ եղանք մեզի բրած անչափ շնորհքին ու մասնաւոր ողորմութեանը համար, ու տներնիս դարձանք : Ատքը յարմար ատեն գտածիս պէս մկրտրվեցայ, քրիստոնեայ եղայ, ու ինչւան հիմայ իմ Տէրս ու փրկիչս Յս Քնին աւետարանին օրինացը մէջ ապրեցայ :

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Է Ա Մ Ա Ր

Միբոս-լէ աբարողու-լէը ու անոր Ռջ Ռբ  
Խոսար-Ռն Չոս :

Հ. Որո՞նք պաշտօնն է մկրտելը :

Պ. Ապիսկոպոսին՝ ժողովրդապետ քահանային, ու անոնց դրած քահանային, բայց հարկաւոր եղած ատենը ամմէն մարդ կրնայ մկրտել, անոր համար մկրտելուն եղանակը պէտք է՝ որ ամմէն մարդ գիտնայ :

Հ. Ի՞նչ որ մէկը հերետիկոսէ կամ ան-



հաւատէ մկրտութիւնն է նէ, զինքը նորէն  
մկրտել պէտք է :

Պ. Չէ, բաւական է որ մկրտողը խօս-  
քերը ըսելով ջուրը լեցունէ, ու դիտա-  
ւորութի ունենայ՝ եկեղեցին ինչ որ կը-  
նէ նէ՝ ընելու :

հ. Մէկին մկրտութիւնը խոհեմութիւնով տա-  
րակուսական՝ կամ ամենեւին չիմկրտը-  
ված կերևնայ նէ, ի՞նչ պէտք է ընել :

Պ. Պէտք է զինքը թէութիւնն նորէն մկրտ-  
տել՝ ըսելով ասանկ (Մ. Մ.) ծառայ կամ  
ազատին Վսի՛ թիւ որ հրաւրւած չէ նէ՝  
մկրտի այժմ՝ ՚ի ձեռն իմ, յանուն Հօր՝  
և Արդւոյ և Հոգւոյն սբյ :

հ. Թիւ որ մանուկը մահւան վտանգի մէջ  
է նէ՝ եկեղեցւոյ դրած արարողութիւ-  
ները հարկաւոր է կատարել :

Պ. Մն ատենը չէ, բայց վերջէն կատա-  
րելու է, թիւ որ կապրի նէ :

հ. Ինչո՞ւ կնքահար՝ կնքամար կըտրվի  
մկրտութիւնը տղոց :

Պ. Վսղի պղտիկ տղաքը հաւատքի դա-  
ւանութիւնը և մկրտութեան խոստումները  
իրենք չեն կրնար ընել, անոր համար  
պէտք է, որ կնքահարը ու կնքամարը  
անոնց բերնէն ընեն :

հ. Ար՞ո՞ք են աս խոստումները :

Պ. Սատանայէն՝ բոլոր անոր գործքերէն՝

ու խաբերայ փառքերէն հրաժարիլ, ու  
Քսի վարդապետութենը հետեւիլն է :

Կ. Անքահարը՝ կնքամարը իրենց մկրտած  
տղուն ընելու պարտք մը ունին :

դ. Հրամներես, զինքը պարտրկան են  
կրթելու՝ մկրտութե ատենը անոր բեր-  
նէն ըրած խոստումներուն ու հաւատքի  
ճշմարտութիւններուն մէջ, թէ որ ծնողքը  
անհոգ եղած են նէ :

Կ. Ինչո՞ւ մկրտըվողին սուրբի մը անուն  
կրդրվի :

դ. Անոր համար՝ որ ետքը իրեն աղօթք  
ընէ, իր պաշտպանութիւնը խնդրէ, ու  
անոր վարքին հետեւելու ջանայ՝ մկրտուն  
չնորհքը զգուշութիւն պահելով, ու թէ որ  
կորսընցունելու ալ ըլլայ նէ, ապաշխա-  
րութիւն նորէն ձեռք բերելով :

Սոյն բաներէն Եօլը Եղեարնէրոսի պատ-  
մանէն հետեւիլն է :

Արբոր ամբարիշտ Անտիոքոսը կաշ-  
խատէր Արուսաղէմ՝ Այ պաշտօնը ու  
օրէնքները վերցունելու նէ՝ եօթը եղ-  
բարներ ամենքը մէկ մօրէ ծնած՝ որ մա-  
կաբայեցիք կրավին՝ բռնըվեցան ու Ան-  
տիոքոսին առջևը ելան, որ զիրենք ծե-  
ծել տալով Այ ան ատենուան հրամանին  
գէմ՝ խողի միս ուտել տալու կրատիպէր :

Մ.ս եղբարներուն մէջէն մեծը ամմէնուն առջևը ըսաւ . Մ.նչ կուզէք մեղմէ . գիտնա՛ք, որ ամմէնքս ալ պատրաստ ենք աւելի մեռնելու, քան որ Մ.յ՝ մեր նախահօրերուն տրված օրէնքներուն դէմ ընելու : Բռնաւորին հրամանաւը նախ իրմէն սկսան, յառաջ լեզուն կտրեցին, գլխուն կաշին քերթեցին՝ երեսին վրա դարձուցին, ետքը բոլոր մատուրները կտրեցին, ու մօրը և եղբօրներուն առջևը ղինքը երեցին : Մէկալնոնք աս սոսկալի տանջանքներէն չիվախնալէն ետքը՝ մէկզմէկու սիրտ ալ կուտային՝ ըսելով . Մենք որ Մ.յ պատուիրաններուն ու պատուոյն համար աս տանջանքները կը քաշենք կոր նէ, Մ.ձ ալ գիտէ մեր արեան վրէժը աս բռնաւորէն առնուլ, ու զմեզ յաւիտենական վարձքերով վարձատրել : Մ.նջինը մեռաւ : Մ.նտիոքոսը մէկալնոնք ալ ծանր ծանր տանջանքներով տանջել տրվաւ, որոնց մէջը քաջ նահատակները կը սէին . Մ.ձ՝ որ մեղի աս մարմինը ու անդամները տրվեր է նէ՝ հասարակաց յարուն օրը ասոնք մեծ փառքերով մեղի նորէն պիտի տայ : Բայց դուն չարագոյն մարդ՝ հիմայ քու իշխանութիդ մեր վրա չարաչար կը գործածես կոր, սպասէ քիչ մը, ու Մ.յ ձեռքը պիտի տեսնես : Մ.նտիոքոսը զարմացաւ

ասոնց կտրճութենք վրա, ու միանգամայն կատողելով իր ասանկ պղտիկ տղոցմէ յաղթը վերլուն վրա, ամմէնէն պղտիկը սկսաւ փորձել, որուն համար ալ ուղեց իրենց մարը պարտաւորել, որ խրատէ զինքը իր կամքը կատարելու համար: Մարը զանկայ հաւնեցունելու տեղը՝ իրեն սիրտ տրւաւ, որ իր եղբարցը առաքինութէն չիզատվի: Աւ սյսպէս ան պղտիկ տղան ալ բռնաւորին անգթութիւնը երեսը զարնելով, եղբարնորէն աւելի քաջութիւնով բոլոր տանջանքները քաշեց, որոնք որ Մնտիոքոսին բարկութիւնը ու կատաղութիւնը՝ իրեն վրա փորձել տրւաւ: Մամմէնէն ետքը բարեպաշտ մարն ալ մարտիրոսական մահւամբ յաղթութե պսակին արժանի եղաւ: Բ. Սնիմբ. Է:

Խորոք Մն պղտիկոցմէ ծառայելուն վրա:

« . Սկրտութիւնը Մն հետ դաշնագրութի մի է, որուն մէջը Մն զինքը կը պարտաւորէ զմեզ իր որդւոց թիւը ընդունելու՝ արքայութիւնը մեզի խոստանալով . մենք ալ զմեզ կը պարտաւորենք Մն՝ Քսի ու եկեղեցւոյ օրէնքներուն հնազանդելու՝ անոնց ներհականներէն հրաժարելով: Մն կուզէ, որ մեր բանականութեան հասածնիս պէս աս դաշնագրութե

Թէութիւնները հաւատարմութիւնով պահենք <sup>1)</sup>: Հին օրինաց ատենը ամմէն բաներուն առջինեկը ու անդրանիկը ՄԵր <sup>2)</sup>: Մն անդրանիկները մեր սրտերուն առջի պտուղներուն օրինակն էին, որոնք որ ՄԸ միշտ իրեն կուղէ: Մս պարտքերնիս վրա մտածենք, ու մեր խոստումները շատ անգամ մտքերնիս բերենք:

Բ. Պատանեկութիւնը ու երիտասարդութիւնը չէ որ մինակ չազատեր զմեզ աս պարտքէն, հապա ան ժամանակները ալ աւելի յարմար են, որոնց մէջը զանոնք շատ դիւրութիւնով կրնանք կատարել. վնդի ան ատենները շնորհքին քիչ ընդդիմութի կրգտնըվի, չար սովորութիւնները դեռ չեն կերպաւորված, կիրքերը ու ժշունին, ու արտաքին օգնութիւնները ու կրթութիւնները աւելի շատ են, վնդի ընդդիմութիւնները ու դժարութիւնները տարիքին հետ կըմեծնան <sup>3)</sup>:

Գ. Տարիքին պզտիկ ըլլալը մարդը մահւանէ չազատեր, աւելի տղաքը կը-

1. Բարի է մարդոյ՝ որ առնու զլուծ խոնարհութե՛ի մանկութենէ իւրմէ. Ուրբ Երեմ. Գ: 27:
2. Չանդրանիկս որդւոց քոց ինձ տացես. և այլն. Եւլեց. Էբ. 30:
3. Նորոգութի երիտասարդի ըստ ճանապարհաց իւրոց՝ նաև յորժամ ծերացի, ոչ մերժեսցի՛ի նոցանէ. Եսայ. Էբ. 6:

մեռնին՝ քան ծերերը, ու ամմէնքն ալ իրենց կեանքերուն ժամանակին վրա պիտի դատովին : Աւրիշ կողմանէ ամմէն մարդ հասարակօրէն տղայութե՛ն ու պատանեկութե՛ն մէջը ինչ է նէ, ծերութե՛ն մէջն ալ նոյնը կըմնայ, մինակ ծերնալով առաքինիներուն առաքինութիւնները աւելի կը մեծնան, ու մոլիներուն մոլութիւնները աւելի կըշատնան ու կըհաստատովին :

### Օրինակ :

Թուլենթինցի սք՝ Աիկողայոսը եօթը տարւան էր նէ՝ օր մը մեծ ջերմեռանդութիով պատարագ կըտեսնէր կոր . քահանան սք նշխարքը վեր վերցուցած ատենը՝ բարի Յս մանուկի կերպարանքով երեցաւ իրեն, անով՝ Աիկողայոս մանուկին սիրտը իր սիրելի Յսին սաստիկ սիրովը վառեցաւ : Աս սէրը ալ աւելի շատցաւ Յսը անոր սրտին մէջը աս քիչ՝ բայց անուշ խօսքերը խօսելով . «Իտե՛ս՝ ինչու կըսիրեմ՝ զքեզ՝ ու քեզի աս շնորհքը կընեմ իմ գեղեցկութիս ցուցունելով . վնդի դուն ուղղութե՛ն ու անմեղութե՛ն մէջը ինծի կը նմանիս . անմեղները իմ բարեկամներս են, անոնց հետ միշտ կըմիանամ իրենց կամքերը կատարելով, ու սիրուն պինդ կապանքովը ; ու իմ շնորհքներուս անգին



գրաւները իրենց վայելել կուտամ: Հիմայ դուն ալ Նիկողայոս անանկ ես, ինչպէս կուզեմ, որ ամէն քրիստոնեայ մանուկները ըլլան: Չանսի աս անմեղութեզ մէջը մնալու, որ մեր մէջը միշտ մնայ մէկզմէկու սիրուն միաբանութիւր: Նիկողայոսը անանկ ըրաւ, ու բոլոր կենացը մէջ ջանաց իր անմեղութե գեղեցիկ շնորհքը պահելու մանուկ Յսին տրված խրատը կատարելով: Յսն ալ իրեն իր խոստումը պահեց, մտղի ինչպէս գրած է ( ) գոստինեանց ժամագրքին մէջը, Յս՝ մանուկի կերպարանքով բոլոր կենացը մէջ շատ անգամ երեցաւ իրեն: Թորեւէն իւրապէս «Բ» ( ) Գոստինուսին գարե-բուսն Դջ 1605ին:

Վ. Ե. Յ. Բ. ՈՐԴ. Հ. Ե. Մ. Ե. Բ.

Դրոշմի վրա:

Կ. Դրոշմը ի՞նչ է:

դ. Խորհուրդ մի է եկեղեցւոյ, որ անով Հոգի սբին շնորհքները մեզի կը հաղորդին՝ զմեզ կատարեալ քրիստոնեայ ընելու, և պատրաստելու համար՝ Վսի սբ հաւատքը մեր կենաց վտանգաւն ալ խոստովանելու:

Կ. Մուանց դրոշմի փրկութե շնք կըրնար հասնիլ:

դ. Արրնանք հասնիլ, բայց ով որ կամաւ զանց կրնէ նէ, կրմեղանչէ զինքը անանկ մեծ ու զօրաւոր օգնութիւն զրկելուն համար, որն որ Մ. Թ. աս խորհուրդի հետ կապեր է:

հ. Արո՞նք են աս խորհուրդին պատուղները:

դ. Սրբարար շնորհքը կեւելցունէ, ու հաւատքի և բարեգործութեան մէջ հաստատ մնալու համար մեզի Հոգի սբին պարգևները կը հաղորդէ:

հ. Մ. Թ. խորհուրդին բարիքները ամմէնը կրնդունի՞ն:

դ. Մ. Թ. ջնջելի կնիքը ամմէնը կրնդունին, որ 'ի հոգին կը տպաւորվի. շնորհքները ու Հոգին սբին պարգևները պղտիկ տղաքը հաւասար կրնդունին, բայց մեծերը իրենց պատրաստութեանց չափովը կառնուն:

հ. Ի՞նչպէս պատրաստը վերու է աս խորհրդին:

դ. Թէ որ ընդունողը բանավարութեան հասած է նէ, պէտք է, որ հաւատքի գլխաւոր մասունքները ու աս խորհուրդին վերաբերած բաները սորված ըլլայ՝ ու շնորհքի մէջ գտնըվի:

հ. Մի՞ է գրոշմի սպասաւորը:

դ. Ապիսկոպոսն է՝ բայց հրամանաւ սբ եկեղեցւոյ երբեմն պարզ քահանայ ալ կրնայ տալ մկրտութեան ատենը:

հ. Ինչո՞ւ կը լլայ դրոշմը :

ա. Սի՛ միւռոնը դրոշմ՝ եղողին ճակատը  
խաչաձև քսելով, ու խօսքերը զրուցելով :

հ. Սիւռոնը ի՞նչ է :

ա. Վիչ մը բալասանով խառնած ձէթն  
է՛ աւագ հինգշաբթի օրը եպիսկոպոսէ  
օրհնած :

հ. Ձէթը ի՞նչ կը նշանակէ :

ա. Ըս խորհրդին ձեռքովը տրված օծու-  
մը ու շնորհքը կը նշանակէ :

հ. Բալասանը ի՞նչ կը նշանակէ :

ա. Կը նշանակէ, որ եղբօրնիս բարի օրի-  
նակ տալով Վսի անուշահոտութի պի-  
տոր ըլլանք :

հ. Սիւռոնը ինչո՞ւ դրոշմ՝ եղողին ճակտին  
խաչաձև կը քսվի :

ա. Սչանակելու համար, որ պարտրկան  
ենք սի՛ հաւատքը համարձակ խոստովա-  
նելու, և սի՛ աւետարանի համար չամըչ-  
նայու :

Աղիւսալարին — Սասալէի պատմութիւնը :

Մնտիդքոսին հալածանքին ատենը Ա-  
ղիազար անունով իննըսուն տարւան սի՛  
ծեր մը կար, որ կարգացողներու մէջ  
երևելի էր : Մնօրէն թաղաւորին իշխան-  
ները կը ստիպէին զինքը՝ որ Մյ օրէնքէն  
արգելված ու կուռքերու ընծայված կե-

բակուրները ուտէ, ու ինքը յայտնած ըլլալով, որ աւելի պատրաստ էր մեռնելու, քան արգելած բան մը ընելու, իր բարեկամները իրեն սուտ գծուծի մը կրցուցունէին՝ ըսելով, հրաման եղած կերակուրներ բերեն իրեն, ուտէ, ու թագաւորին ըսեն, որ Հրամանիդ հնազանդեցաւ, ու զինքը մահուանէ խալըսեն : Բայց Աղիազարը սքանչելի քաջութիւնով ըսաւ. Արմայլէ՞ իմ տարիքիս, որ կեղծաւորութիւն ընեմ, Խորայէլի երիտասարդներուն չար օրինակ ձգեմ, ու մարդկային տանջանքներէն ազատելով Ա՛յ առջևը պարտրկան մնամ, որուն դատաստանէն ոչ կենդանի մնալով՝ ոչ մեռնելով կրնամ ազատիլ : Ա՛ս խօսքերէն ետքը զինքը տանջելու տարին, որուն սիրով և ուրախութիւնով երթալով ու մեռնելովը՝ հաւատքի խոստովանութեւր ու Ա՛յ ծառայութեւր համար չամբռնալու ու չիվախնալու մեծ օրինակ ձգեց : Բ. Սփփ . 4 :

Նոյն հալածանքին ատենը Սովդիիմ քաղքին գլուխը Սատաթի իշխանն ալ ստիպեցին Ա՛նտիոքոսին պաշտօնատէրները, որ հաւատքը ուրանայ, ու կռապաշտութիւն դառնայ : Սատաթին իրենց պատասխան տրվաւ, որ ինքն ալ իր որդիքն ալ Ա՛յ օրէնքը թող չեն իտար, որ աս

ըսած ատենը տեսաւ, որ վախկոտ հրեայ մը կըտանէին կոր կուռքին գոհելու համար, սիրտը սաստիկ ցաւ մտաւ, զարկաւ, սպաննեց զո՛հ մատուցանող հրեան ալ, ու իրեն մատուցանել տրւիօղն ալ, կուռքը կոտորեց, անդանը փլցուց, ու ամուր ձանով պոռալ սկսաւ. Ով որ Ա՛յ օրինաց նախանձը ունի նէ, ետեւս գայ: Վնաց ընտանիքը ժողվեց, լեռներու վրա քաշվեցաւ, ու բոլոր հաւատացեալ հրեաները գլուխը ժողվեցան: Արոնց ինքը գլուխ եղած կռապաշտներու և ուրացօղներու դէմ յաջողութիւնով, ու մեծ յաղթութիւններով կըպատերազմէր: Ինքը մեռնելու ատենը Ա՛յ պատերազմին վրա իր տղան Յուդա Սակարէն զօրապետ դրաւ, որ անիկայ ալ զարմանալի յաղթութիւններով իր ժողովուրդը կռապաշտներուն բռնութէն ազատեց. Ա՛յ պաշտօնը նորէն հաստատեց, տաճարը Ա՛նտիոքոսին պղծութէ մաքրեց, որ Ա՛յ խորանին վրա գարշելի կուռք մի տնկած էր: \* . Ս\* . \* . \* . \* .

Խրոսոս հաստատելի ու բարեպաշտութիւն համար շարժելու ու պարտաւերջնա զեռ:

\* . Սարգկային նկատումը, որ զմեզ հաւատարի ու բարեպաշտութե վրա կամրջցունէ՝ մոլութի մի է՝ որ Ա՛յ մեծ նախա-

տինք կուտայ<sup>1)</sup> : Այք Այ և ուղղափառ  
 Հաւատքի Համար երկրի թագաւորներուն  
 առջևը մեր արունը թափելու պատրաստ  
 պիտոր ըլլանք<sup>2)</sup> . բայց սա է ողորմելին ,  
 որ թեթև անարգութե ալ Համբերելու  
 կրթախնանք : Ան ալ չէ թէ ճշմարիտ  
 Հաւատք ու բարի գործք ունեցողներուն  
 անարգելուն Համար , մնողի թէ որ անոնց  
 Համարձակ հետեւելու ըլլանք , անոնք կը-  
 գովեն զմեզ , Հապա քանի մի ողորմելի  
 չարագործներու անարգելուն Համար , որ  
 իրենց հետեւելնուս Համար անոնց զմեզ  
 գովելը՝ մեզի մեծ նախատինք պիտի սե-  
 պէինք : Այ անոնք ալ , որ առաքինութիւր  
 ու Հաւատքը նախատելու պէս կերևնան  
 նէ՛ անանկները սրտերնուն մէջը կրպատ-  
 ւեն , ու իրենց մոլութիւններուն հետեւող-  
 ները ծաղը կրնեն :

Բ . Սոյութիւն է , որ քրիստոնեան ա-  
 լելի գերի կրնէ՛ Այ որդիներուն ազա-  
 տութէ կրմերկացունէ , աշխրքի գերութեը  
 կրմատնէ , առաքինութի գործելու ուժը  
 կրտկարացունէ , որ առաքինութիւր որչափ

1. Այ եթէ ամօթ ինչ Համարիմ զաւետարանն .  
 Գործք . ա . 16 :

2. Ար խոստովանեսցի յիս առաջի մարդկան , խոս-  
 տովանեցից և ես վնմանէ առաջի շօր իմոյ .  
 Մատթ . Ժ . 32 :



ալ կրտիրէ նէ, չիկրնար համարձակ խոստովանիլ, ու մոլութե հաւնող ու մոլի կրնէ, թէպէտ զանիկայ սրտին մէջը կը գատապարտէ:

Գ. Մոլութիւն է, որ աւելի կըմերկացունէ զմեզ կրօնին յուսերուն ամմէն իրաւունքներէն: Արրնայ յուսալ անանկ մարդը Քնի ընտրեալներու մէջ գտնուելու, որ անոր աշկերտներուն մէջը գտնուելուն կամընայ, կամ կըլախնայ<sup>1)</sup>: Արրնայ անանկ մարդը Քնի սիւն անունը իրեն օղնութե կանչել, որ զինքը ու անոր ուղղափառ հաւատքը յայտնի խոստովանելու չիհամարձակիր: Ընոր համար նոյն տանջանքները պատրաստուած են անոր՝ որն որ կըլախնայ ու չիհամարձակիր Քնի սիւն անունը ու հաւատքը խոստովանելու, որ տանջանքները որ անհաւատներու համար պատրաստուած են նէ<sup>2)</sup>:

( ) Ենակ:

Այլ Պրուգենտիոս մարտիրոսը կըգրէ, որ իր աչքին առջևը պատահած է: ( )

1. Գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վնանունն Տեառն արժանի եղեն անարգելոյ. Վարժ. Է. 41:
2. Որ ամօթ համարեսցի զիս և զբանա իմ, զնա և Որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք. Ղաւ. Է. 26:

Տը ուրացող Յուլիանոս Ապոստոլը սուտ ան-  
ներուն հրապարակաւ զոհ մատուցած ա-  
տենը՝ անօրէն քուրմերը մէկէն ՚ի մէկ  
կապւնեցան, ու չիկրցան ան մօրթած  
կենդանիներուն աղիքներէն հմայել, ու  
իրենց գուշակութիւնը ընել՝ ինչպէս ու-  
րիշ ատեն կրնէին. քուրմերը սաստիկ  
ամրջցան՝ ու շփոթեցան, ու մէկը կան-  
չեց՝ համարձակ ըսելով. Այլ կայսր՝ մեր  
մէջը բալասանով օծված քրիստոնեայ մը  
կայ, որ մեր զոհերը կրխափանէ կոր, ու  
անիկայ թէ որ տաճարէն դուրս չես վը-  
որնաւեր նէ՝ միշտ պիտոր խափանէ: Յու-  
լիանոսը գլխին թագը մէկ դի դրաւ, ու  
իշխանութիւն մը հրամայեց՝ ըսելով. Ան-  
յանդուզը ո՛վ որ է նէ, որ մեր աններուն  
կըհամարձակի կոր պատերազմ բանալու,  
հոս գայ: Պահապան զինուորներուն մէկը  
անմիջապէս առջևը դնաց, ու համարձակ  
խոստովանեցաւ. ըսելով՝ Այս եմ ան Վնի  
զինուորը, որուն անունէն ամմէն դժոխային  
սատանաները կըդողան. քու քահանա-  
ներդ աս ամպարչտութիւնը ընելու ատենը՝  
ես սրտիս մէջէն Վնի ասանկ մեծ անունը  
կանչեցի, ու անիկայ բաւական եղաւ  
դժոխքին զօրութիւնը շփոթելու և կոտո-  
րելու: Ապոստոլը ըսելով Վնի զինուորին  
ասանկ համարձակ պատասխանը, բերանը



հ. Որն է առաջինը :

պ. Ով որ պէտք եղած պատրաստութիւնով կրխոստովանի նէ, բոլոր մահացու ու ներելի մեղքերը կըթողու :

հ. Որն է երկրորդ գործը :

պ. Յաւիտենական պատիժը կըթողու, որուն մահացու մեղքով արժանի կըլանք, ու զանիկայ ժամանակաւոր պատիժին կըփոխադրէ :

հ. Որն է երրորդը :

պ. Ընէ, որ բոլոր առջի արդիւնքները, որ մահացու մեղքով մեռած էին, նորէն կրկենգանացունէ, ու փորձութիւններու դէմ կենալու դարձեալ զօրութի կուտայ :

հ. Եւ պաշխարութիւն աս բարիքները ամէն անգամին կրնէ՞ :

պ. Հրամմերես, երբոր պէտք եղած պատրաստութիւններով կըլայ նէ :

հ. Որո՞նք են առ պատրաստութիւնները կամ տրամադրութիւնները :

պ. Իրեք են, որ ապաշխարուէ իրեք մասերը կըսվին, զիջում, խոստովանութի, ու վճարում, կամ հաստատ կամք Այ ու ընկերին պարտքը վճարելու :

Ընդհանուր հարցումն ու պատասխանները :

Հալածիչ Ընտիրութեան բոլոր հրէաստան սոսկալի անգթութիւններ ընելէն ետքը՝

մեծ ամօթով պարսկաստան գնաց՝ հոն տեղի գանձերը յափշտակելու և բուն իրենց քաղաքն ալ աւրելու համար: Բայց բոլոր ժողովուրդը զէնք առաւ, իրեն դէմ ելաւ, ու զինքը փախցուց: Ասոր և ուրիշ նախատինքներու համար շատ բարկացաւ, ու բարկութիւն Արուսաղէմի ու հրեաներու վրա թափելու համար երդում ըրաւ, որ Արուսաղէմ բոլոր հրեաներու գերեզմանն պիտոր ընէր: Աս խօսքերը բերնէն հանածին պէս՝ զինքը սաստիկ փորի ցամբ բռնեց: Չիմանալով՝ որ անիկայ Այ պատիժն էր՝ արտորքով Արուսաղէմի վրա կերթար կոր նէ, կառքէն ալ վար ինկաւ, ու բոլոր ոսկորտանքը կոտորտեցան: Անանկ որ ալ կառքի վրա չիկրնալով երթալ, զինքը մարդիկները կրտանէին, իր վէրքերը բոլոր որդնոտեցան, ու զօրքը և բոլոր սիրականները քովէն փախչիլ կուղէին: Ան ատենը ճանչցաւ, որ Այ աւմենակարող ձեռքը զինքը զարկած էր, սկսաւ աղէկ աղէկ ուխտեր ընել՝ Արուսաղէմայ տաճարը նորոգելու՝ հրեայ ըլլալու և Այ օրէնքները ու հաւատքը ամէն տեղ քարոզելու: Ասանկ խոստումներով Արուսաղէմի հրեաներուն գիր ալ գրեց: Բայց Աժ աս անօրէնին սիրտը գիտնալով՝ որ աս բաները մինակ առջի

առողջութիւնը ձեռք ձգելու համար կրկու-  
սէր ու կրգրէր կոր, չընդունեցաւ անանկ  
կեղծաւոր և ուշացած դարձը, ու ինչպէս  
ինքը ուրիշները մեռցուցած էր նէ, անանկ  
ինքն ալ մեռաւ անօրէն բռնաւորը՝ սաս-  
տիկ վէրքերու և կսկիծներու մէջ, ու  
փրկութեան յոյս կամ մտիթարութի մի ալ  
չունենալով, որ առաքինութեան ու անկեղծ  
զղջման պտուղներն են : Աս օրինակէն  
յայտնի կերևնայ սբ հաւատքի դէմ հա-  
լածանք հանողներուն չարաչար վախճանը,  
ու ինչպէս քիչ յոյս կրրնայ ըլլալ անանկ  
զղջումներու վրա, որ մինակ կենաց վերջի  
ատենները կրլան, ու մահւան վախէն  
կրծնանին : Բ. Սննդ. Ը :

Խրատ ապաշխարութիւնը շուրջստեղծու-  
մբ :

«. Սեղքէ շուտով չիդառնալը ու  
ապաշխարութիւնը ուշացունելը մարդը ա-  
ւելի կրվարժեցունէ մեղք գործելու. նախ՝  
որ ապաշխարութիւնը կիրքերուն զօրաւոր  
սանձն է, ու աս սանձը վերնալով կիր-  
քերը ազատութի կրգանեն համարձակ մե-  
ղանչելու : Արկրորդ՝ որ մարդը մեղքերու  
մէջ անհոգ կենալով՝ անհոգութեմ մեղան-  
չելու կրվարժի. երրորդ՝ որ մեղաց վեր-



քերուեն վրա դեղը շուտով չիդնելով ան-  
բժշկելի կըլան <sup>1)</sup>:

Բ. Սեղքի վարժութիւն ալ ապաշխարելու անհոգութի կըպատճառէ, անանկ որ աս վարժութիւր որչափ որ կըմեծնայ նէ, ապաշխարելը անչափ դժար կուգայ՝ թէ մարդու կամքին կողմանէ, որ չարի մէջ աւելի կըհաստատուի, թէ ՄՅ կողմանէ, որ իր շնորհքը բոլոր չիվերցուներ նէ աչ կըպակսեցունէ, ու հասարակօրէն անչափ կըպակսեցունէ, որչափ որ մեղաւորը զանոնք չարաչար կըգործածէ <sup>2)</sup>:

Գ. Կամքը չարութեն մէջ օրէ օր աւելի հաստատուելով՝ ՄԾ ալ քիչ քիչ մեղաւորէն երես դարձունելով ու շնորհքը վրայէն վերցունելով մեղաւորը վերջին անդղջութեն մէջ կիյնայ. վսիւ մահը ժամանակ չունելով՝ մեղաւորին իր դարձը ուշացուցած ատենը յանկարծ վրան կըհասնի, ու կըյարիշտակէ զինքը <sup>3)</sup>. կամ

1. Որդեակ, մի յապարկոցիս դառնալ առ Տր ՚ի մեղաց. Անշխ. է. 8:

2. Սի ասասցես զթութիւնք նորա բազում են, զի ողորմութիւն և բարկութիւն ՚ի նմանէ է. Ա՛. 6. 7:

3. Կսէի՛ և ոչ լսէիք. յերկարէի զբանս իմ. և ոչ անսայիք: Ա՛. Ս. ապախտ ասնէիք զսորհուրդս իմ . . . . Ա՛. յուհեակ ևս ծիծաղեցայ զկորստեամբ ձերով. և սոնաչար եղէց . . . .

ան դժարութիւները ու ընդդիմութիւնները , որոնք որ կենացը մէջ ապաշխարելը կարգելուին նէ՝ անոնք երբեմն ալ աւելի զօրաւորները շատ անգամ՝ հիւանդութե ու մահուան ատենը դիմացը կելլան :

( Երկուսի :

Իտալիայի Սպօլէտօ քաղաքը՝ աղջիկ մը կար՝ մարմնով շատ գեղեցիկ , բայց հոգևով տգեղ ու պիղծ , որ ինքը զինքը բոլոր աշխրթի ունայնութիւններուն և մեղքերուն տըված էր : Շատ մարդիկներ զինքը կըխրատէին զղջալու և իր գայթակղութի տալու ճամբաներէն ետ դառնալու համար , բայց բանի տեղ չիղնելով ան բարի խրատները զինքը ալ աւելի մեղքերու և պարսպ զբօսանքներու կուտար , վնզի իր խենդ մարն ալ իր աղջկանը մարմնաւոր գեղեցկութիւնը անոր հոգւոյն փրկութի աւելի սիրելով՝ զինքը չէր խրատեր : Աղջիկը ծանր հիւանդութիւնով մը պառկեցաւ . շատ պարկեշտ խաթուններ գացին՝ խրատեցին զինքը՝ գոնէ անանկ վտանգի մէջ զղջալու ու խոստովանանք ըլլալու համար : Բայց ողորմելին իր

---

յորժամ հասցէ ՚ի վերայ ձեր սատակումն .  
Երկուսի . . . 24 . 25 . 26 . 27 :

Հողւոյն փրկութենը վրա անհոգ ըլլալով, անանկ աղէկ խրատները կանարդէր, ու լսել ալ չէր ուզեր, որ մէկը ԱՅ ու իր Հողւոյն փրկութենը վրա բան խօսի: Ա կը ջապէս տեսնելով՝ որ հիւանդութիւն կը սաստկանայ կոր՝ ու քիչ մը ետքը իր անարժան կեանքը պիտի վերջանայ, մօրը աղաչեց իր գեղեցիկ ու փառաւոր զգեստները իրեն հագցունելու համար: Սորը՝ որ իր զաւակին կամքը չէր ուզեր կոտորել աս կամքն ալ կատարեց: Արբոր ամմէնը հագաւ, ու ունայնութիւնով հարսնիք երթալու պէս ինքը զինքը սաղեց զարդարեց նէ, սկսաւ յառաջ վրան նայիլ, ու ետքը յուսահատութիւն ու դառն արցունքներ թափելով լալ ու պոռալ՝ ըսելով. Այ ինձի որ ես ասանկ գեղեցիկ եմ՝ ու պիտի մեռնիմ, ասանկ սաղած՝ հագված ու կապւած՝ պիտի մեռնիմ, ասանկ ծաղկած հասակիս մէջը՝ կեանքս պիտոր վերջացունեմ: Արելի՞ է, որ ես ասանկ գեղեցիկ տարիքիս մէջը աշխրբիս ուրախութիւններէն՝ զբօսանքներէն . . . . իմ աղոր զգեստներէս՝ զարդերէս բաղձանքս չառած՝ իմ կամացս դէմ ասանկ ծանր ցաւերով ու նեղութիւններով կեանքս լմնցունեմ, ու ասոնց նման աշխրբի խենդութեաներ ըսելով լացաւ նէ, քովինները

դարձեալ ըսին իրեն. Աղջիկ անանկ մի  
 ըսեր, ինքը զինքդ Վաֆի յանձնէ, ու ի-  
 րեն աղաչէ, որ մեղքերուդ թողութի տայ :  
 Յուսահատած աղջիկը ալ աւելի սկսաւ  
 հառաչել՝ պոռալ ու տրտնջել ըսելով ,  
 Ի՞նչ բան ունիմ ես Վաֆի հետ . եկ՛ուր  
 սատանայ՝ իմ հոգիս առ , որ քուկդ է :  
 Աս ըսածին պէս սատանան հասաւ , զին-  
 քը խղզեց ու հոգին առաւ՝ գնաց : Անչի  
 ապաշխարութիւր ուշացունելուն համար  
 Ա՛ճ իրմէն երես դարձուցած էր : Ի՞նչ էր-  
 րոս լիկոցին Տժ պահոց արոպէն Տըլէ կտրէ :

Ո Ի Թ Ե Ր Ո Ր Դ Հ Ա Մ Ա Ր

Օղջու-Տե աս անոր գործ-Երուն զեռ :

հ. Օղջուամբ ի՞նչ է :

պ. Սէկ սրտի ցաւ , ու զզւիլ է գործած  
 մեղքերէն՝ մէյ մը ալ չիմեղանչելու հաս-  
 տատ առաջադրութիով :

հ. Վանի տեսակ զղջում կայ :

պ. Երկու՝ կատարեալ ու անկատար :

հ. Կատարեալ զղջումը ի՞նչ է :

պ. Սէկ սաստիկ սրտի ցաւ մի է զԱ՛ճ  
 բարկացունելուն համար , որ անսահման  
 բարի ու կատարեալ է , ու ինք իրմէն ար-  
 Ժանի է զինքը սիրելու ու ամմէն բանէն  
 աւելի իրեն ծառայելու :

հ. Անկատար զղջումը ի՞նչ է :

Պ. Այն անարգութիւնը վրա ցաւ մի է, հասարակօրէն մեղքին տգեղութիւնն ու դժօխքի յաւիտենական պատիժներուն վախէն, կամ արքայութիւն յաւիտենական բարիքները կորսընցունելու երկիւղէն յառաջ եկած :

հ. Ատարեալ զղջումին գործքը ի՞նչ է :

Պ. Անեղքերը խոստովանանքէն յառաջ ալ կը թողու, բայց մահացու մեղք ունինէ՛ խոստովանանքին պարտքը կը մնայ :

հ. Անկատար զղջումին գործքը ի՞նչ է :

Պ. Անղաւորը կը պատրաստէ ապաշխարութիւն խորհուրդին ձեռքովը իր մեղքերուն թողութիւնը գտնելուն :

հ. Ի՞նչ որ մէկը մահացան ատենը խոստովանանք չի կրնար ըլլալ նէ՛ մեղքերուն թողութիւնը համար անկատար զղջումը բաւական է :

Պ. Չէ, կատարեալ զղջում ունենալու է, անոր համար պէտք է՛ որ մարդը ջանայ շատ անգամ կատարեալ զղջման ներգործութիւններ ընելու՝ գլխաւորաբար խորհուրդ ընդունելու ատենը :

հ. Ատարեալ զղջման ներգործութիւնը ի՞նչ է :

Պ. Այն իմ, շատ կը ցաւիմ զքեզ վշտացունելուս համար, վնդի դուն անսահման

բարի ես, անբաւ սիրելի ես, անսահման  
կատարեալ ես, ու մեղքը անհաճոյ է քու  
անսահման բարութեանը : Անոր համար իմ  
փրկիչս Յիսուսին արդիւնքներովը քեզմէ  
թողութի կրխնդրեմ, ու քու շնորհքովդ  
հաստատ կառաջադրեմ ասկէ ետքը աւելի  
մեռնելու, քան ծանր մեղքով զքեզ վըշ-  
տացունելու :

Վառելի մեղքի ու պղծութեան պատճառով :

Վառելիք քիչ մը ատեն ինքը զինքը  
դատարկութե ու հետաքրքրութե տալով՝  
Ներսարէին հետ շնութե մեղաց մէջ ին-  
կաւ, ու աս մեղքը ծածկելու համար  
ուրիշ մեծ չարիք մի ալ դործեց : Ուրիա  
զօրապետին իր ձեռքովը՝ որ Ներսարէին  
ընկերն էր, Յովար զօրապետին նամակ  
մը խրկեց, որ զՈւրիան պատերազմի մէկ  
վտանգաւոր կողմը խաւրէ, ու թշնամի-  
ները վրան վազած ատենը՝ ընկերները  
զինքը մինակ թողուն, փախչին, որ մեռ-  
նի : Ուրիան ասանկ մեռցունել տալէն  
ետքը՝ Ներսարէն ինքը առաւ : Տարիի մը  
չափ իր կիրքերուն կուրութեք մէջ մնալէն  
ետքը՝ Աճ իրեն գթացաւ, Վաթան մար-  
գարէն խրկեց, որ իր յանցանքներուն  
սոսկալի ծանրութիւր իրեն իմացունէ՝ հա-  
րուստ մարդու մը առակաւ, որ իր անթիւ



ոչխարներուն խնայելով՝ աղքատին մէկ  
հատիկ ոչխարը առած էր իր հիւրը (մի-  
սաֆիրը) պատուելու համար: Ան ատենը  
Ղաւիթ խորունկ քունէն արթըննալու  
պէս արթընցաւ, իր մեղքը խոստովանե-  
ցաւ, ու սրտին մէջը անանկ անկեղծ՝ ա-  
նանկ կատարեալ ցաւ մը յղացաւ, որ  
Ա՛ճ՝ որ սրտերուն խորունկ խորհուրդները  
կրտեսնէ՝ մարգարէին բերնովը անմիջապէս  
յայտնեց իրեն, որ մեղքերուն թողութիւն  
տրված է: Բայց Ղաւիթ ասանկ չիթողուց  
իր մեղքերը, իր կենացը մնացած օրերը  
թաղաւորական ամփոփ վրա բոլոր ապաշ-  
խարութիւն անցուց: Ա՛յ ձեռքէն կատա-  
րեալ հնազանդութիւն ընկալաւ բոլոր  
հարւածները, որոնցմով անձային նա-  
խախնամութիւն ղինքը կը հարկանէր, այս  
ինքն՝ իր շատ զաւկրներուն տրտմալի մա-  
հերը, իր անդբանիկը Աբեսողոմին ապրս-  
տամբութիւն, Սեմէիին անէծքը, և ուրիշ  
ասոնց նման բաները: Ասչափ հարւած-  
ներու հետ միացուց աչքին արցունքները՝  
քուրձը՝ ծոմապահութիւն՝ արթուն կենա-  
լը, ու բոլոր անանկ բաները, որ ուրիշ  
երևելի ապաշխարողներու վրա չէին տես-  
նրված: Ա՛րջապէս իր տրված գայթաղ-  
ղութիւնները աղէկ մը բժշկելու համար իր  
ցաւին նշանը ու յիշատակը ապաշխարուն

սաղմոսներու մէջ ձգեց, որոնք որ եկեղեցին հաւատացեալներու ձեռքը կուտայ՝ զիրենք անկեղծ ու կատարեալ զղջումի շարժելու համար: Բ. Թագո. ԺԷ:

Խրոսոս գղջումի շարժելու աստիճաններու վրա:

ա. Աճ վարացած: Անանկ էակ մի, որ ինք իրմէն արժանի է, որ զինքը սիրենք կատարեալ սրտով, ու հնազանդինք որուն մէկ պղտիկ կամքը բոլոր աշխարհէն վեր սեպելու է, որուն մեղի բրած բարիքները մեր ամմէն շնորհակալութիւններուն ու մեր իրեն հետ ամմէն կարելի միաւորութեւն արժանի է<sup>1)</sup>: Բայց մենք ասոր ներհակ մեր ներելի մեղքերովը զինքը վշտացուցինք, ու մեր մահացու մեղքերովը իրեն մէկ հատիկ Արդին անարգեցինք՝ նախատեցինք, ու նորէն խաչ հանեցինք<sup>2)</sup>:

Բ. Սիրտը վարացումնող: Անանկ էակ մի, որ ինք իրեն ցածութի ու ոչոնչութի է, բան մը չունի՝ որ Աստուծմէ առած չըլլայ, ու չիկրնար մեղանչել, բայց եթէ Աստուծմէ առած մասնաւոր բարե-

1. Աճ նա է հայրն՝ որ ստացաւ զքեզ, արար զքեզ՝ և հաստատեաց զքեզ. Բ. Օրհն. ԼԲ. 6:

2. Վերստին ՚ի խաչ հանել անձանց զԱրդին Աստուծոյ. ԱԷԴ. 2. 6:

բարութիւնները իրեն զէմ գործածելով<sup>1)</sup> :  
 Ասանկ անարգ ստեղծւած մը անանկ մեծ  
 վայելչութիւն մը զէմ ապստամբած է, որ  
 թագաւորներուն թագաւորը՝ ու տէրե-  
 րուն տէրն է, որուն առջևը բոլոր աշ-  
 խարհքը շամանդաղի մի չափ չիկայ<sup>2)</sup> :

Գ . Ա շարժումն իւր իւր : Անարգ  
 շահ մը, կամ ամենալու կիրք մի է, որուն  
 համար թէ որ մտմըտային նէ, մարդիկ-  
 ներու առջևն ալ ամենային պիտոր : Ա-  
 դորմելի մարդը աս մեղքերու մէջ կիյնայ  
 անարգելով Այ բարեկամութիւնը, և բո-  
 լոր Այ հատուցումները, ու բանի տեղ  
 չիսեպելով Այ ատելութիւնը ու ապագայ  
 պատիժները, կամ գէթ Այ սիրուն պա-  
 դութիւնով մը, թէ որ մեղքը ներելի է նէ :  
 Անոր համար թէ որ մեղքի վրա շուտով  
 չենք զղջար նէ՝ նշան է, որ կամ հա-  
 ւատք չունինք, կամ չենք մտածեր<sup>3)</sup> :

### Օրինակ :

Անծ մեղաւոր մարդ մը ուրիշ շատ  
 մեղքերէն իզատ՝ սատանայէն խաբւելով

1. Ի մեղս և յանօրէնութիւնս քո վերակացու եղէ  
 քեզ . Ասայ . Իգ . 24 :
2. Ամենայն հեթանոսք ոչինչ են . և յոչինչ համա-  
 րեցան նմա . Ասայ . Ի . 17 :
3. Այգոյ մարդ՝ որ զնէ՛ ՚ի սրտի . Աբէմ . ԺԷ . 11 :

իր հայրական պարկեշտութիւնը դէմ ալ մեղք մի գործեց. ետքը ան մեղքին վրա շատ ցաւելով ու զղջալով սքեպիսկոպոսի մի խոստովանանքի գնաց, ու բոլոր մեղքերը անմիտութար լալով ու կատարեալ զղջումով պատմելէն ետքը, հարցուց սքեպիսկոպոսին, որ կարելի՞ է իրեն շատ երկան ու ծանր ապաշխարանքներով՝ զղջումով ու արցուքներ թափելով ան մեղքերուն վրա Ա՛յ թողութիւնը ու ողորմութիւնը գտնել: Արուն պատասխան տրվաւ խոստովանահայրը, որ անտարակոյս կըրնայ յուսալ Ա՛յ գթութիւնը ու ողորմութիւնը՝ թէ որ պէտք եղածին պէս ապաշխարելով՝ Ա՛յ դէմ ըրած նախատինքին հատուցումը կընէ նէ: Ապիսկոպոսը ասոր աչքի արցունքներուն վրա շատ շինվելով ապաշխարանք դրաւ, որ ապաշխարողներու կարգ մտնէ, ու եօթը տարի ապաշխարէ: Անդաւորը ալ աւելի լալով ու սրտանց և կատարեալ զղջումով ըսաւ. Ա՛յ ինծի հայր սքե՛ ինչո՞ւ ասանկ քիչ ապաշխարանք կըղենես ինծի, որ գարշելի մեղաւոր եմ: Ապիսկոպոսը ասոր կատարեալ զղջումին նայելով՝ ըսաւ. Գնա՛ մինակ իրեք օր հացով ու ջրով ապաշխարէ՛ բաւական է: Բարի ապաշխարօղը մեծ ցաւով ու զղջումով կանչեց. Հայր՛ ի՞նչպէս կարելի

է, որ Մ<sup>Ժ</sup> ասանկ պղտիկ ապաշխարանքով  
իմ ասանկ զարհուրելի մեղքերուս թո-  
ղութի տայ, թէ որ ինչևան դատաստա-  
նին օրը անթիւ ու ծանր ապաշխարանք-  
ներ քաշելու ըլլամ բաւական չեն իմ  
անօրէնութիւններուս թողութիւնը գտնելու  
համար : Ապիսկոպոսը ասոր ճշմարիտ  
դարձին ու խոնարհ զղջումին վրա զար-  
մացաւ՝ և ուրախանալով հրամայեց, որ  
երթայ ուրիշ ապաշխարանք չիքաշէ, մի-  
նակ հայր մեր մի ըսէ, ու հաւտայ, որ  
մեղքերը թողվեցան : Մ<sup>Գ</sup> ալ լսած ատենը  
սկսաւ անչափ դառն արցունքներով լալ,  
ու սրտին սաստիկ ցաւէն կանչել՝ ողոր-  
մութի ու փրկարար ապաշխարանք խն-  
դրել, որ իր ցաւին սաստկութի գետինը  
ինկաւ ու հողին աւանդեց : Ատքը յայտ-  
նըվեցաւ եպիսկոպոսին, որ ան բաղդաւոր  
ու երջանիկ ապաշխարօղը անանկ սաստիկ  
զղջումովը մաքրված՝ ու առանց քաւա-  
րանի շիտակ արքայութի դացած է : Այո-  
ւնէլմասը Ռեյոն-նէրոն գրեմ Ռջե իւրոպոմ :

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ Է Ա Մ Ա Ր

Օղջոմն իւրոյն Չոս :

Է. Ինչպէս պէտք է, որ ըլլայ կատար-  
եալ ու անկատար զղջումը :

Պ. Պէտք է, որ ներքին՝ գերբնական ընդ-  
հանուր՝ ու ծայրագոյն ըլլայ՝ զինքը ուղ-  
ղելու հաստատուն ու ներգործական ա-  
ռաջադրութիւնով :

հ. Ինչպէս ներքին կըլլայ զղջումը :

Պ. Երբոր գործած մեղքերու վրա զղջու-  
մը մինակ բերնով չըլլար՝ հապա սրտի մէ-  
ջէն ալ ցաւելով կըլլայ նէ :

հ. Ինչպէս գերբնական կըլլայ :

Պ. Երբոր զղջումը շնորհքէն ու հաւատ-  
քի սորվեցուցած պատճառէն յառաջ կու-  
գայ նէ, չէ որ մինակ բնական պատճառէ  
մը յառաջ գալով :

հ. Ես բանս ինծի օրինակաւ մը աղէկ  
հասկըցուր :

Պ. ()րինակի համար՝ երբոր մէկը իր մեղ-  
քերուն վրա կըցաւի բնականաբար մինակ  
տեսնելով, որ մեղանչելովը՝ պատիւը կամ  
առողջութիւնը՝ կամ ուրիշ ժամանակաւոր  
մէկ բարիքը կորսընցուցած է, անանկ մար-  
դը գերբնական զղջում չունի :

հ. Ինչպէս ընդհանուր կըլլայ զղջումը :

Պ. Երբոր բոլոր մեղքերուն վրա կըլլայ  
նէ, ու թէ որ մէկ մեղքի վրա պակաս  
կըլլայ նէ, մէկանոնց վրա եղածն ալ ճըշ-  
մարիտ զղջում չըլլար :

հ. Ինչո՞ւ համար :

Պ. Անշուշտ մեղքերն ալ բացարձակա-



պէս Այ սիրուն դէմ ըլլալով, ամմէնէն մէկ տեղ պէտք է հրաժարիլ:

հ. Ինչպէս ծայրագոյն կը լսայ զղջումը:

ա. Երբոր մեղքերուն վրա եղած ցաւը բոլոր ուրիշ ցաւերէն աւելի կը լսայ, ու մեղքերը ամմէն չարիքներէն աւելի կը սեպվի նէ:

հ. Հարկաւոր է, որ աս ցաւը զգայական ըլլայ, ինչպէս կը ցաւինք մեր մեռած հօրը կամ մօրը վրա:

ա. Չէ, վնդի անանկ ցաւերը արտաքին ըլլալով մեր զգայութիւնները աւելի կը շարժեն, բայց զԱ՛ծ վշտացունեննուս համար պէտք է, որ ներսէն զղջանք ու ցաւինք ուրիշ ամմէն բանէն աւելի:

հ. Ի՞նչ է հաստատուն առաջադրութիւր:

ա. Անկեղծ որոշում մի է ինքը զինքը ուղղելու, ու աս վախճանիս ամմէն հարկաւոր միջոցները գործածելու համար:

հ. Ինչո՞ւ ապաշխարութիւով ամմէնը թողութի չեն առնուր:

ա. Անոր շատ անգամ ճշմարիտ զղջումը ու հաստատուն առաջադրութիւր կը պակասի, ու անոր համար թողութիւր չեն կրունար առնուլ:

հ. Ճշմարիտ զղջման ստոյգ նշանը ո՞րն է:

ա. Սեղաւորին ապաշխարութիւն ետքը զինքը ուղղելու ճշմարիտ ջանքն է:

հ. Անանկ է նէ, մէկը նորէն կիյնայ նէ՝  
անոր զղջումը անկեղծ չէր :

դ. Խորհուրդը անմեղանչական ջրներ,  
բայց ան մարդը որ խոստովանութիւն կտար  
չուտով ու շատ անգամ ծանր մեղքերու  
մէջ կիյնայ նէ, արդար պատճառ ունի  
վախնալու, որ իր ցաւը ու զղջումը ան-  
կեղծ եղած չըլլայ :

Փարսաւոնին պատճառներ :

Սովսէսը ու Ահարոնը Աստուծոյ հրա-  
մանն ու իշխանութիւն առին Ազխիպտոս սու-  
կալի հարւածներով զարնելու և Փարա-  
ւոնը պարտաւորելու համար՝ որ Խորայե-  
լացիներուն թող տայ իր տէրութիւն դուրս  
ելլալու : Աս թագաւորը առջի հարւածին  
դէմ կեցաւ, որ Ազխիպտոսին ջուրերը  
արուն դարձունելն էր, բայց երկրորդին  
դէմ չիկրոցաւ կենալ, որ բոլոր Ազխիպտոս  
գորտերով լեցուցած էր, որ եզխիպա-  
ցիներուն տները, անկողիննին, ու կերա-  
կուրներուն մէջը կրմանէին, ու իրենց  
շատ փնասներ ու նեղութիւններ կուտային :  
Փարաւոնը նեղացաւ՝ ու Սովսէսին ըսաւ,  
որ Այ Աղօթք ըրէ, ու զիս ու իմ ժողո-  
վորդս աս պատիժէն ազատէ, որ ես ալ  
քու ուզածիդ հրաման տամ : Սովսէս ա-  
ղօթք ըրաւ, պատիժը վերցաւ, բայց

Փարաւոննը իր խոստումին վրա չիկեցաւ :  
Սոփսէս նոր պատիժով զարկաւ Ազիպ-  
տոսը , բոլոր եգիպտացիներուն տները  
անթիւ մեծակներով լեցվեցան՝ որ ամմէն  
բաներնին կապականէին , բայց հրէից աը-  
ներուն ամենեին չիմօտիկցան : Փարաւոնը  
նորէն կըխոստանայ Ասրայէլացիները ա-  
զատելու . բայց երբոր Սոփսէսին աղօթ-  
քովը ան հարւածէն ազատեցաւ նէ՛ իր  
խոստումը դարձեալ չիկատարեց : Քանի  
մի ուրիշ պատիժներէն ետքը , Սոփսէս իր  
գաւազանը վեր վերցուց , ու սկսաւ եր-  
կինքը սաստիկ գոռալ՝ կայծակներ զար-  
նել , ու կրակով խառն անանկ սոսկալի  
կարկուտ մը գալ , որ բոլոր ամմէն բա-  
ներնին կոտորտեց աւրեց ապականեց , ու  
Փարաւոնը պարտաւորեցաւ Սոփսէսը  
կանչելու ու ըսելու , թէ Ա՜ճ արդար է,  
ես ու իմ ժողովուրդս ամպարիշտ ենք,  
աղօթէ մեզի համար ու ես ալ կըհնազան-  
դիմ : Սոփսէս աղօթեց՝ ու պատիժը դա-  
դրեցաւ , բայց Փարաւոն իր առջի յամա-  
ռութե մէջ նորէն հաստատվեցաւ : Տը-  
րեակը որ բոլոր երկիրները ապականեց ,  
սոսկալի խաւարը՝ որ զիրենք իրեք օր իրեք  
գիշեր վախցուց , մինակ Ասրայէլացի-  
բուն կողմը լուսաւոր մնալով՝ հարկադրե-  
ցին Փարաւոնը ամմէն բանը նորէն խոս-

տանալու, որ դարձեալ պատիժները վեր-  
ցածին պէս ալ աւելի յամառեցաւ : Ա՛ր-  
ջապէս իր ու բոլոր եգիպտացիներու ան-  
դրանիկներուն մահը պարտաւորեց զին-  
քը Ա՛յ ժողովուրդը արձակելու : Հազիւ  
թէ, Խորայէլացիները Ագիպտոսէն ելան,  
նորէն ետենէն ինկաւ զիրենք ետ դար-  
ձունելու համար : Բայց իր կեանքը ու  
բանակը կարմիր ծովուն մէջը կորսընցը-  
նելով՝ իր խստասրտութիւնը ու չարաչար  
մահուան յաւիտենական յիշատակը ձգեց  
աշխարհքիս վրայ, Ա՛յ տրված խոստմուն-  
քը չիպահելուն ու նորէ նոր մեղանչելուն  
համար : Ա՛լեց . Ը . Բ . Ժ :

Խորայ նորէն չեյնալու զրո :

« . Արկրորդ անգամ մեղանչելը առ-  
ջի անգամէն շատ ծանր է : 'Սախ' որ ա-  
ւելի դիտելով դործելուն համար աւելի  
չարութի ունի <sup>1)</sup> : Ղ'անչցար՝ որ մեղքը  
Ա՛յ անհաճոյ ու քեզի վնասակար է՝ ա-  
տեցիր զանիկա ու ետ դարձար . ինչո՞ւ նո-  
րէն կըմեղանչես : Արկրորդ՝ որ Ա՛յ քեզի  
բրած բարիքներուն դէմ մեծ ապերախ-  
տութի է . վնզի արդարացունելը ամմէն

1. Սրգեակ, եթէ մեղար, մի ևս յաւելուր .  
Ե՛լէ . Բ . 1 :

բարիքներուն գերազանցն է . Ա՛ճ անչափ անգամ մեղքերուդ թողութի տալով՝ զքեզ արդարացունելէն ետքը՝ ինտո՞ր զինքը նորէն կրվշտացունես , իր արդար բարկութէ չես վախնար <sup>1)</sup> :

Բ . Թէ որ շուտով ու շատ անգամ կիյնաս կոր նէ , պէտք է՝ որ շատ տարակուսիս անցած զղջումներուդ անկեղծութեը վրա , վսօղի անանկ շուտով ու դիւրութիով ատելութիը բարեկամութե ու բարեկամութիը ատելութե փոխելը անկարելի է : Յաւիտենական մահւան բերնէն ազատեցար՝ ալ զգո՛ւշ կեցիր <sup>2)</sup> :

Գ . Նորէ նոր մեղանչելը անարգութե ու դատապարտութե ստոյգ նշաններուն մէկն է <sup>3)</sup> : Նախ՝ որ ապաշխարութիը շատ կը դժարցունէ սիրտը ճշմարտութեան ու շնորհքներու դէմ կարծրցունելով , որոնք որ յառաջ զինքը ՚ի բարին դարձուցեր էին : Արկրորդ՝ որ ինչպէս շնորհքներու մէջ հաստատ կենալը փրկութե ու

1. Ինի յետին մարգոյն այնորիկ չար քան զանաջինն . Ս՝առԷ . ԺԷ . 45 :
2. Ըհաւաղիկ ողջացար , մի ևս մեղանչեր , զի մի չար ևս ինչ լինիցի քեզ . Յ՝վճ . Է . 14 :
3. Այլ որ անդրէն դարձաւ յարգարութենէ ՚ի մեզս . Տէր պատրաստեաց զնա ՚ի սուր . Ա՛րԷԷ . Էլ . 27 :

նախասահմանութեան ստորոջ նշանն է<sup>1)</sup> . ա-  
սանկ ալ անհաստատութիւնը ներհականին  
նշանն է :

Օրինակ :

Թոսքանայի մեծ իշխանը Հուկոն իր  
բարերազուէ խաբւած՝ ընդարձակ կեան-  
քով մը զինքը անպարկեշտ հեշտութիւ-  
ներու տրւած կապրէր , բայց սիւ Մծած-  
նայ թեթեւ ջերմեռանդութի մը ունէր :  
Սիւ Մծածինը ողորմութեան մայր ըլլալով՝  
ուզեց ասոր թեթեւ ջերմեռանդութիւնը  
վարձատրել իր վարքը շակել տալով : Օր  
մի որս գացած ատենը երկինքը մէկէն 'ի  
մէկ ամպոտեցաւ , ու անանկ սաստիկ ան-  
ձրե եկաւ՝ որ Հուկոնը ճամբէն արգելեց ,  
ու զինքը փախչելու տեղ մը փնտռելու  
պարտաւորեց : Մնոր համար հեծած ձին  
վազողոց այրի (մաղարայի) մը մէջ փախ-  
չելու համար , այրին որ մօտեցաւ նէ , նայե-  
ցաւ , որ ներսը դարբինի (չելինկիրի) փուռ  
մը կայ՝ ու մէկ քանի սե դարբիններ կան ,  
որ կէս մերկ էին , ու կրակի մէջէն երկաթ  
հանելու տեղը մարդու գլուխներ՝ սիր-  
տեր՝ ձեռքեր՝ ոտքեր և ուրիշ կտոր կտոր  
անդամներ կը հանէին՝ ու սալի (էօրսի)

1. Ար համբերեցէ 'ի սպառն' նա կեցցէ . Մարտի .  
ժ. 22 :



վրա սաստիկ կրճեճէին կոր : Հուկոնը  
 կարծեց , որ կախարդներ են , հոն տեղը  
 պահւումս՝ կախարդութիւն կրնեն կոր .  
 որոնց ինքը դէմ ըլլալով , երդումով ը-  
 սաւ իրենց որ աս իրենց ըրած չարագոր-  
 ծութե պատիժը չարաչար քաշել պիտոր  
 տայ իրենց : Աւերուն մէկը բարկացած  
 երեսով ու ծանրութիւնով այրին դուռը  
 եկաւ , ու ըսաւ իրեն . Ինչպէս կրկարծես  
 կոր նէ՝ անանկ կախարդ կամ չարագործ  
 չենք , Այ արդարութե սպասաւորներ ենք ,  
 ու աս կերպով կրտանջենք մեր ձեռքը  
 մատնելովս՝ տեսակ տեսակ չարագործնե-  
 րը , կրսպասենք կոր Հուկոն անունով  
 մարդու մը ալ , որ աս երկիրներուն տէրն  
 է , մէյ մը որ ձեռքերնիս իյնայ նէ , իր  
 պղծութիւններուն պատիժները աս սալի վրա  
 աղէկ պիտի քաշէ : Հուկոնը ձին դար-  
 ձուց՝ պալատը գնաց բոլոր փոխւած՝ կար-  
 ծես , որ ան մարդը չէր : Անձ հանդի-  
 սութե օր մը իր բոլոր մեղքերը հրապա-  
 րակաւ խոստովանանք եղաւ . ան քաղքին  
 մայր եկեղեցւոյն մէջը՝ բոլոր ժողովուրդին  
 առջևը՝ երկու արքեպիսկոպոսի խօսք տը-  
 վաւ , ըսելով . Հուկոնը ասկէ ետքը առ-  
 ջի Հուկոնը պիտի չիմնայ : Ինչպէս որ  
 խոստացաւ նէ , անանկ ալ կատարեց՝ իր  
 առջի չար ճամբաները բոլոր փոխելով :

Սենք ալ կուզենք աղէկ խոստովանանք  
ըլլալ նէ, մեզի ըսելու ենք. Աստուծոյ  
կարգը առջի ետք պիտոր չիմնամ: Սենեկ-  
բնի իւրաքանչիւր Գ. Գալ. 14. ԳԼ:

ՏԵՍՆԵՐՈՐԻ ՀԵՄԵՐ

Խոստովանութիւն զեւ:

Հ. Խոստովանութիւն ի՞նչ է:

Պ. Սարգու իր մեղքերուն վրա իր ամ-  
բաստանութիւն է՝ որ կը լայ Տրաման ու-  
նեցող քահանային առջևը՝ իրմէն արձա-  
կուով առնելու մտքով:

Հ. Ինչո՞ւ համար ընելու է աս ամբաս-  
տանութիւն:

Պ. Ընոր համար՝ վնդի խոստովանահայրը՝  
որ իշխանութի ունի կապելու և արձակե-  
լու, մեղքերու արձակումը տալու կամ  
չիտալու՝ իր մեղքերը ճանչնայ՝ վրան դա-  
տաստան ընէ, ու իր իշխանութիւն գործ-  
ած է:

Հ. Խոստովանանքէն յառաջ ի՞նչ պէտք  
է ընել:

Պ. Իր խղճմտանքը քննելու՝ ու մեղքերը  
միտքը բերելու է:

Հ. Ըստ քննութիւն ի՞նչ բանի վրա ընելու է:

Պ. Ըստ ու եկեղեցւոյ պատուիրաններուն  
վրա՝ ու իր վիճակին մէջը Ըստ ընկերին՝

ու ինք իրեն ունեցած պարտքերուն վրա՝  
ըրած զանցառուիները ճանչնալու համար :  
հ . Օմեղ աղէկ քննելու համար քննու-  
թիւր ի՞նչպէս պէտք է ըլլալ :

ա . Պէտք եղածին չափ ատեն մտմտալու՝  
և Մ. շնորհքը խնդրելու է՝ որ իր մեղ-  
քերը միտքը բերէ՝ ու անոնց վրա զղջայ :  
հ . Արչափ ժամանակիւն մէջ ընելու է  
աս քննութիւր :

ա . Մ. ժամանակը՝ վերջին խոստովանան-  
քին ժամանակին կարծութիւր կամ եր-  
կայնութիւր՝ ու մեղքերուն շատութիւր կամ  
քիչութիւր նայելով՝ մեր շատ հարկաւոր  
ու սիրելի բաներնիս վրա որչափ ատեն  
կրմտմըտանք նէ, անչափ պիտոր ըլլայ :

հ . Օղջման ներգործութիւր երբ ընելու է :

ա . Քննութիւն ու մեղքերը միտքը բերե-  
լէն ետքը անմիջապէս :

հ . Ար մեղքերը պէտք է խոստովանել :

ա . Սեր խղճմտանքին վկայած բոլոր մա-  
հացու մեղքերը :

հ . Բաւակամն է ընդհանրապէս ըսել՝ որ  
աս մեղքը ըրի :

ա . Չէ, անոնց թիւերը՝ ու անանկ պա-  
րագաներն ալ յայտնելու է, որ մեղքե-  
րուն տեսակը կրփոխեն, կամ կըծանբա-  
ցունեն :

հ . Մ. սիկայ օրինակով մը մեկնէ ինծի :

ող. Օրինակի համար. բաւական չէ ըսել՝ սուտ խօսեցայ, հապա պէտք է յայտնել եթէ անով ընկերին մեծ փնաս տրված է նէ. բաւական չէ ըսել՝ գողութի ըրի, հապա գողութե մեծութին ալ յայտնելու է, և թէ որչափ կըրնայ արժել գողցած բանը, և կամ թէ եկեղեցւոյ կը վերաբերի, փնզի ան ատենը սեղանակապտութի ալ եղած կըլլայ, ու անոնց նման ուրիշ պարագաները:

Անգամաւոր-ժին պատմութիւն՝ որն որ Վ.նէ  
Բէրին:

Օր մը Վ.ն կըսորվըցունէր ու կը բարողէր կոր փարիսեցիներուն ու օրէնք գիտցողներուն մէջը, որ Արուսաղէմէն՝ հրէաստանէն՝ ու Վալիլեայէն ժողված էին՝ Վ.նի վարդապետութիւնները լսելու, ու անոր ըրած հրաշքները աչքով տեսնելու համար: Ան միջոցին մէջը անկողինովը բռնած անգամաւորոյժ մի բերին, ու կուղէին Յնի առջևը տանիլ. բայց մարդիկներու շատութէ ներս տանելու ճամբայ չի գտնալով՝ հիւանդը տանը վրան հանեցին, ու վերէն տանը ծածկը վերցունելով ծակ մը բացին, ու հիւանդը անկողինովը մէկ տեղ Յնի առջևը ինջեցուցին: Յն իրենց հաւատքը տեսնելով՝

անդամալուծին ըսաւ . որ մեղքերուն թողութի ըլլայ : Ապիրները ու փարիսեցիները աս խօսքը լսելով՝ սկսան մտմբտալ ու ըսել . Ա՛յլ է աս , որ ասանկ հայհոյութի կրնէ կոր , ու Ա՛յ փայլած զօրու թիւ իրեն կը յափշտակէ կոր : Յս իրենց ասանկ խորհուրդը ճանչնալով՝ իրենց հարցուց , որ Ա՛ս երկու բաներուն որը աւելի դիւրին է , հիւանդին ըսելը , որ մեղքերուդ թողութի ըլլայ , թէ իրեն հրամայելը , որ ստք ել , անկողինդ կրունակդ առ , ու գնա : Ա՛ս հարցումէն ետքը իրենց ըսաւ . դիտնաք , որ Արդի մարդոյ մեղքերու թողութի տալու իշխանութի ունի . դարձաւ հիւանդին՝ ու ըսաւ . Ատք ել , անկողինդ առ ու տունդ գնա : Հիւանդը շուտ մը ելաւ , անկողինը կրունակը առաւ , ու զԱ՛ծ գովելով ու փառաւորելով իր տունը գնաց : Բոլոր ժողովուրդը եղած հրաշքը տեսնելով զարմացան ու Ա՛յ փառք տրվին : Ա՛յ չիտեսներ անդամալուծին վրա մեղաւորին օրինակը , որ ինք իրեն չիկրնար առողջանալ , ու փրկութե՛ ճամբուն մէջը քալել . բայց կը պարտաւորի խոնարհուիով ու հաւատքով յայտնել իր հոգևոր հիւանդութիները քահանային առջևը , որուն Ա՛ծ իշխանութիւն տրվեր է զանոնք բժշկելու :  
Ղ Կ . Է :



Խորհրդախառնութիւնք զլսոս :

ա . Ապաշխարողը պիտի ջանայ զինքը ճանչնալու : Մարդուն սիրտը խոտորած է, քննելը շատ դժար է <sup>1)</sup> . Իր պարտքերը ու պակսութիւնները տեսնել չուզեր, վախնալով՝ որ ետքը թէ որ զինքը չուզէ զելու ըլլայ անպատասխանի պիտի մնայ : Մարդը զինքը ճանչնալու համար հարկաւոր է խղճմտանքը ամմէն օր քննել, որ պակսութիւնները չիմոռնայ, ու Հոգի սբին լուսաւորութիւն խնդրել <sup>2)</sup> :

բ . Պէտք է զինքը խոստովանահօրն ալ ճանչցունել : Մեղաւորը՝ որ մեղանշելու, ու երբեմն իր մեղքերը չար ընկերներու մէջ պարծենալով պատմելու չամր չցաւ նէ՛ ի՞նչպէս չի համարձակիր զինքը յանցաւոր խոստովանելու մինակ՝ մէկ մարդու առջևը թեթև ամբշնայէն փախչելով . ի՞նչպէս չիմըտածեր, որ խոստովանութե՛ն մէջը լուելուն համար՝ դատաստանին օրը Ա՛յ բոլոր հրեշտակներու՝ մարդիկներու՝ և սատանաներու առջևը

1. Խորին է սիրտ քան զսմ . և մարդ է՛ և ո՞վ ծանկնդէ զնա . Աշխ . ԺԷ . 9 :

2. Տէր ծանեայց գթեզ, և ծանեայց զիս, զի սիրեցից գթեզ, և ատեայց զիս . Մատթ . Օգոստ :



պիտոր խայտառակի՝ ու ամբնայ <sup>1)</sup> . ա-  
սանկ ամօթէն չիյաղթըվելու համար շուտ  
շուտ խոստովանանք ըլլալը շատ հարկա-  
ւոր է :

Գ. Մեղաւորը զինքը ճանչնալէն , ու  
խոստովանահօրը ճանչցունելէն ետքն ալ  
երբեմն զինքը ջատագովելու կաշխատի ,  
առիթները՝ անյաղթելի ու չափէն աւելի  
զօրաւոր փորձութիւնները պատճառելով ,  
կամ իր յանցանքը ուրիշին վրա ձգելով <sup>2)</sup> :  
Ասոր դեղը մտածելն է , որ ԱՅ դատաս-  
տանը մարդու դատաստանէն շատ տարբեր  
է , մարդու դատաստանին առջևը յան-  
ցանքնիս պահելով կամ զմեզ ջատագո-  
վելով շատ անգամ կրնանք արդարանալ .  
բայց ԱՅ դատաստանը անանկ չէ , ինքը  
մեր սիրտը կըտեսնէ , որուն առջևը պա-  
րսպ ջատագովութիւնները զմեզ աւելի յան-  
ցաւոր կրնեն :

### Օրինակ :

Երկու կրօնաւոր քահանայ մէկ տեղ  
ճամբոյ գացած ատենը՝ պզտիկ քաղքի

---

1. Ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս Տ՛ր . Սաղ .  
ԺԷ . 13 :

2. Աինս՝ զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ՚ի ծա-  
ռոյ անտի , և կերայ . . . Օճն խաբեաց զիս ,  
և կերայ . Օճն . Գ . 12 . 13 :

մը մէջ պատարագ զըուցելու համար եկեղեցի մը կըմտնեն : Ան քաղքի մէջ ալ ազնւական կին մը ատենօք մեծ մեղքի մի մէջ ինկած ըլլալով՝ վրան շատ կըցաւէր ու անհանգիստ կըլլար, բայց չափէ դուրս ալ ամբշնալէն խոստովանանքի մէջ կըպահէր, ու քահանայի մը չէր կըրնար պատմել : Աս քահանաները տեսաւ նէ, ասոնց մէկին ուղեց խոստովանանք ըլլալ ու ան մեղքն ալ պատմել, որ օտարական ըլլալնուն համար զինքը չէին ճանչնար : Պատարագէն ետքը գնաց մէկին ու սկսաւ մէկիկ մէկիկ իր մեղքերը խոստովանիլ, մէկալ քահանան ալ ժամին մէջը մէկ կողմը ծունկ չոքած աղօթք կընէր, ու ասոր խոստովանանք ըլլալը կըտեսնէր կոր, կընիկը բոլոր մեղքերը պատմելէն ետքը, ուղեց ան պահած մեղքն ալ զըուցել, բայց սատանայական ան ամօթով դարձեալ չիկըրցաւ բերնէն դուրս հանել, ու միտքս ալ մեղք չիկայ՝ ըսաւ, քահանան ալ արձակումը տրվաւ, ու ընկերովը ճամբայ ելաւ : Ղամբան ընկերը զարմանալով պատմեց իրեն, որ ան կնիկը քեզի ամմէն մէկ մեղքը ըսած ատենը բերնէն մէյմէկ օձ կելլար ու սողալով եկեղեցիէն դուրս կըփախչէր կոր, ետքը մեծ վիշապ մի ալ մէկ քանի անգամ գլուխը բերնէն դուրս

Հանեց՝ ու նորէն ներս փախաւ, ետքը արձակուամ տրված ատենդ առջի օձերն ալ ամմէնը մէկէն ետ դարձան, ու ան կնկան բերնէն ներս մտան: Խոստովանանքը նօղը իմացաւ, որ ան կնիկը մեծ մեղք մը պահած էր՝ շատ տրրտմեցաւ: Շուտով ետ դարձան, բայց զինքը եկեղեցին չի դրանելով, տունը փնտռեցին՝ գացին տեսան, որ Ա՛յ թոյլ տալովը սատանան զինքը խղզած էր: Ա՛ս բանիս վրա շատ տրրտմելով՝ Ա՛յ աղօթք ըրին, որ իրենց յայտնէ ան ողորմելի կնկան վիճակը: Մէ՛յ մը ալ կրնայիս, որ մէկը երեցաւ՝ որ վախնալու վիշապի մը վրա հեծած էր՝ և ուրիշ զարհուրելի օձեր ալ վրան թափված՝ զինքը կրխածնէին ու կրչարչարէին կոր, ու ըսաւ իրենց, թէ ինքը ան կնկան հողին է, Ա՛յ արդար դատաստանաւը սատանան զինքը խղզած է, ու դժոխքին մէջը աս տանջանքներու դատապարտրված խոստովանանքի մէջ ան մեծ մեղքը պահելուն համար: Այբնի՛նի սանդուխտ ըսած գրքի մէջ ինչպիսիք է:

ՏԱՄՆԲԱՐԿԵՐՈՐԴ ԼԱՄԱՐ

Խոստովանանքի ու պրոֆանիոմի վրա :

Կ. Ներելի մեղքերն ալ խոստովանելու պարտք կայ :

Պ. Չէ, բայց խոստովանելը շատ աղէկ ու օգտակար է, վնդի անոնք խոստովանութե հարկաւոր նիւթ ալ չեն նէ՝ բաւական նիւթ են :

Կ. Թէ որ մէկը տարակուսական մեղք ունի նէ՝ ի՞նչ պէտք է ընել :

Պ. Արբոր խոհեմութիով կը տարակուսի, որ իր մեղքը մահացու է, անիկայ խոստովանելու է :

Կ. Արն որ խոստովանութեք մեջ մինակ ներելի մեղքեր ունի նէ, անիկայ ճշմարիտ զղջում ընելու պարտրկան է :

Պ. Հրամներես, պէտք է՝ որ առաջագրութի ունենայ զանոնք ալ ուրիշ անգամ չընելու, դոնէ որոշակի միտ դնելու, անոնց թիւը պակսեցունելու :

Կ. Թէ որ մէկը մահացու մեղք մը չի խոստովանիր նէ ամբնալով կամ քննութե մեջ պակսելով՝ ան խոստովանանքը աղէկ եղած կըսեպի :

Պ. Չէ, խոստովանանքը աղէկ չըլլալէն ուրիշ՝ սրբապղծութի ալ կընէ :

հ. Ընդհանուր շտկելու համար ի՞նչ պէտք է ընել :

ա. Պէտք է նախ ան պահած մեղքը՝ ու պահելուն պատճառը ըսել, ու ետքը նորէն կրկնել բոլոր խոստովանանքները՝ որ եղած են ան սրբապղծութիւնով եղած խոստովանանքէն վերջը :

հ. Թէ որ մէկը աղէկ քննութիւն ընելէն վերջը ակամայ մահացու մեղք մը մոռցած է նէ, խոստովանանքը սրբապղծութիւն կը սեպվի :

ա. Չէ, պարտըկան է մինակ անհիկայ մէկալ խոստովանանքի մէջ զրուցելու :

հ. Ի՞նչպէս պէտք է ըլլալ խոստովանանքը :

ա. Ընկերդութիւնով՝ մեղքերը չխպակսեցունելով ու չեւելցունելով՝ խոնարհութիւնով՝ զինքը յանցաւոր ճանչնալով, և ոչ թէ մեղքերը պատմութիւն պէս պատմելով :

հ. Սեղքերը ամբաստանելէն ետքը ի՞նչ ընելու է :

ա. Խոստովանահօր խրատները բռնելու մտքով մտիկ ընելու, և զղջումով ու մեծ յարգութիւնով արձակումը ընդունելու է :

հ. Խոստովանահայրը պարտըկան է երբեմն արձակումը ուշացունելու :

ա. Հրամներես, երբոր կրտեսնէ, որ մեղաւորը բաւական տրամադրութիւն չունի,

վնդի թէ որ անանկ արձակելու ըլլայ նէ,  
իրեն ալ խոստովանորդւոյն ալ դատապար-  
տութեւնը պատճառ կը ըլլայ:

հ. Թէ որ խոստովանահայրը արձակումը  
կուշացունէ նէ՝ աս պատիժը խոստովան-  
որդին ի՞նչպէս ընդունելու է:

ա. Խոնարհութիով ու հնազանդութիով՝  
ու աղէկ պատրաստելու, և խոստովանա-  
հօրը պատւիրած օրը նորէն դառնալու է:

հ. Մասնկ խոստովանահայրը արձակում  
չիտրված ատենը, ուրիշ թուլ ու գթած  
քահանայի երթալ չըլար:

ա. Չէ, անոր համար ալ աւելի սիրելու  
է անիկայ՝ որ իր հոգւոյն փրկութիւնը ու-  
ղելով, պէտք եղած միջոցները կը գոր-  
ծածէ կոր:

հ. Մասնկ է նէ աղէկ բան չէ թուլ ու  
գթած խոստովանահայր փնտռելը:

ա. Չէ, անանկ խոստովանահայր ընտրե-  
լու է, որ կարող ըլլայ զմեզ աղէկ կըր-  
թելու, ու մեզի արքայութեան առաջ-  
նորդելու:

հ. Խոստովանահայրը կը պարտաւորի՞ մեզ-  
քերը գաղտուկ պահելու:

ա. Հրամմերես, ամմէն անձային ու մարդ-  
կային օրէնքները կը պարտաւորեն զինքը  
խոստովանանքի մէջը լսած բաները խիստ  
ու մշտնջենաւոր լռութիով գաղտուկ պահե-



լու: 'Սմանապէս անոնք ալ կը պարտաւորին գաղտուկ պահելու՝ որոնք որ խոստովանուեն ատենը ուրիշին մէկ մեղքը կը լսեն:

Նէէման ասորիին պատմութիւնը:

'Նեեման՝ ասորիներուն թագաւորին զօրապետը բորոտեցաւ: Հրեայ աղջիկ մը գերի ինկած ու ծախված ըլլալով՝ Նեեմանին կնիկը գնած էր: Աս աղջիկը խաթունին ըսաւ, որ թէ որ իմ տէրս՝ Աղիսէ մարգարէին երթալու ըլլայ, որ Սամարիա կընստի, իրաւ որ մարգարէն զինքը կը բժշկէ: Նեեմանը աս խօսքը լսեց նէ, թագաւորէն հրաման առաւ, ու շատ ընկերներով ու պատուով ելաւ զնաց: Աղիսէին դռանը առջևը հասաւ նէ, Աղիսէն իրեն ըսել տրվաւ, որ երթայ՝ Յորդանան գետը եօթը անգամ լուացվի՝ որ առողջանայ: Նեեմանը բարկացաւ, կարծելով որ Աղիսէն զինքը տեսնելու ու իրեն գալու զինքը առողջացունելու արժանի չի համարեցաւ: Ղամասկոսին գետերը ատ ջուրէրէն լաւագոյն չէին՝ արդեօք, ըսաւ, լուացվելու և մաքրրվելու համար, ու կուզէր նորէն իր քաղաքը երթալ: Իր սիրելի ծառաները իրեն ըսին, Սեր հարը ու տէրն ես, բայց մեղի լսէ. թէ որ մարգարէն կարգէ դուրս ու դժար գեղ հրամայած

ըլլար նէ, անոր ալ ճարը գրտնելու, և  
կատարելու էիր. ո՛ւր մնաց, որ Վրացիք  
ու առողջաննա կըսէ կոր: Վեեմանը ա-  
սանկ աղէկ խրատը մտիկ ըրաւ, դնաց,  
լրացփեցաւ՝ ու բժշկեցաւ: Եւ տով դար-  
ձաւ Նղիսէ մարգարէին շնորհակալ ըլլա-  
լու, ու մեծ պարգևներ տալու համար՝  
բայց Նղիսէն պարգևները չընդունեց:  
Վեեմանն ալ աւելի հողւով բժշկեցաւ,  
ու հրաման ուղեց Նղիսէէն հոն տեղէն  
իր երկիրը անչափ հող տանելու, որ բա-  
ւական ըլլայ ճշմարիտ Մ. Յ. խորան մը շի-  
նելու, որն որ մինակ կուզէր պաշտել, ու  
հաւատարմութիւն անոր հնազանդիլ: Բո-  
րտութիւն մեղքի օրինակ էր՝ Յորդանա-  
նին ջուրը Քնի արեան, ու Նղիսէն խոս-  
տովանահօր՝ օրինակներ էին, որուն ա-  
պաշխարօղը պարտրկան է հնազանդելու.  
խոստովանահայրն ալ Նղիսէին աղքատու-  
թիւնը հետեւելու է: Ա՛յ երջապէս Վեեմա-  
նին դարձը նոր կենաց պատկերն է, որուն  
մէջ պարտրկան է ապրելու ապաշխարօղը:  
Գ. Թագաւ. է:

Խրատ դարձեալ խոստովանութիւն ձեռն:

Խոստովանութեան ատեանը (տիվանը)  
իրեք անձինք կը գտնուիլին:

« . Յն՝ Քն՝ որ ողորմութեւ աթուրը

նստեր է , ինքն է վշտացողը , ինքը հաշտրվել կուզէ , ու հաշտութե միջոցներն ալ ինքը կուտայ , ու կըզօրացունէ որ իր սր արունով մեղի աւազան մը պատարաստեր է՝ մեր մեղքերը լուարու համար , ու մեր մեղքերուն արդար հատուցմանը տեղը մեր անսահմանաբար քիչ հատուցումը բաւական կըսեալէ : Ասանկ մեծ բարուիր յորչափ պարտրկան ենք սիրելու <sup>1</sup>) :

Բ . Խոստովանահայրը՝ որ պէտք է՝ որ աս ատեանի մէջ արդար դատաստան մը գործածէ : Ինքը ԱՅ պաշտօնեայ է , ԱՅ փառացը վրա հոգ տանող , որն որ մեղքով անարգըված է . անոր համար մեղաւորին՝ մեղքերուն տգեղութիւր ու չարութիւնը պարտրկան է հասկըցունելու : Ինքը խորհուրդին պաշտօնեան է , անոր համար պարտրկան է արթուն կենալու ու հոգ տանելու , որ խորհուրդը չիպղծի : Ինքը հոգիներու բժիշկ է , անոր համար պարտրկան է մեղաւորները չիխարելու ու վէրքերնին չիմեծցունելու , բայց օգտակար դեղերով բժշկելու <sup>2</sup>) . Ընտրէ մեծ ջանքով աղէկ խոստովանահայր մը :

1. Սիրեաց զմեզ , և ելոյժ զկապանս մեզաց մերոց արեամբն խրով . Յայտ . ա . 5 :

2. Պատեաց զվէրս նր , արկեալ 'ի վերայ ձեթ և գինի . Ղ . ա . 1 . 34 :

Գ. Ապաշխարողը՝ որ աս ատեանի մէջ պարտըկան է ինք իրեն դէմ արդար դատաստան մը գործածելու: Ինք իրեն որչափ քիչ թողութի կուտայ նէ, անչափ աւելի ԱՅ թողութեը արժանի կը լայ<sup>1)</sup>. Իր մեղքերուն խոնարհ խոստովանութիը անոնց թողութե դեղ կը լայ: Ասոր ներհակը թէ որ իր խոստովանահայրը կըխարէ նէ՝ ՂՄԾ չիկրոնար խաբել, մինակ ինքը զինքը կըխարէ. թէ որ ինքը իրեն դէմ գթած կը լայ նէ, ՔՍ իրեն դէմ խիստ կը լայ, ողորմութե ատեանէն արձակած ելլալու տեղը դատապարտրված կե լայ:

### Օրինակ:

Իտալիայի քաղաքներուն մէկը՝ մեծ մարդ մը կար, որ ուրիշին բանը տիրոջը չիտալուն համար իր խոստովանահարը իրեն արձակում չէր տրված, ու շատ ուրիշ խոստովանահայրերն ալ զինքը անանկ առանց արձակումի ետ դարձուցած էին, ասիկայ դժբաղդութիւնով թուլ քահանայ մը գտաւ, որ իր խոստովանանքը լը-

---

1. Չանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ՚ի քէն : Ասացի, թէ պատմեցից ինձէն զմեզս իմ, և դու թողցես զամ ամպարչտութիւնս մեզաց իմոց. Սաղ. Լու. 5 :

սեց, ուրիշ քահանաները վար զարնելով իրեն արձակումը տրվաւ . անոր համար ալ ան մեծ մարդը զինքը իրեն խոստովանահայր ընտրեց, որ տարիններով խոստովանանք սկսաւ ըլլալ . ու իրեն հետ մեծ բարեկամութի ունենալով, իրեն աղէկ պարգևներ կուտար, ու շատ անգամ զինքը սեղանի ալ կը հրաւիրէր: Արիկուն մը ասանկ մէկ տեղ կերակուր ուտելէն ետքը խոստովանահայրը իր տեղը գնաց՝ ու ան մեծ մարդն ալ իր անկողինը գնաց պառկելու, ու գիշերը մէկէն ՚ի մէկ իջված իջնալով վրան մեռաւ: Աոյն ժամանակը երկու սատանաներ ան մարդուն սպասաւորներուն կերպարանքները մտած՝ խոստովանահօրը կրվազեն, ու զինքը կարթընցունեն ըսելով. Մեր տէրը կը մեռնի կոր, շուտով հասիր: Առտ մը ելաւ քահանան, ու անոնց հետ վազելով գնաց խոստովանորդւոյն տունը, ու աստիճանէն վեր ելլալու ատենը տեսաւ, որ ան մեծ մարդը երկան զգեստով մը բոլոր ծածկըված՝ զինքը դիմաւորելու համար սենեակէն դուրս կելլար կոր: Արծեց՝ որ զինքը խաբելու համար կանչած է, սկսաւ ինք իրեն նեղանալ: Ան ատենը անիկայ ըսաւ իրեն. Վիտնաս՝ որ ճշմարիտ է, որ ես գէշ վիճակի մէջ եմ, անչափ տարի աղէկ

չիխոստովանելուս համար դժոխքը դատապարտութեցայ. բայց աս ալ ստոյգ է, որ հոն ես մինակ պիտի չերթամ. վնդի յանցանքիս մէջն ալ մինակ չէի, դուն ալ՝ որ անչափ անդամ ինծի անարժանութիւն արձակուամ տրվիր, անոր համար անձային արդարութիւն ինծի հետ դատապարտութեցար: Խօսքը լմնցուցածին պէս սատանաները երկուքնալ մէկ տեղ յափշտակեցին, ու անանկ սաստիկ կանչելով պողալով առին տարին, որ տանը մարդիկները բոլոր արթընցան՝ դատաստանի օր կարծելով: Սէնիէնի իւրապօք հասն Գ. պատմ. 16. Բէ. 13:

ՏԵՍԻՆԵՐԿՈՒՆԲՈՐԳԻ ՀԱՍՆԲ

Ս ճարման զրա:

Կ. Ս ճարումը ի՞նչ է:

Պ. Խոստովանահօրը դրած ապաշխարանքն է մեղքերուն թողութեւն համար: Կ. Մնանկ է նէ՛ ապաշխարութիւն մկրտութե պէս մեղքի պատիժնեցն ալ բոլոր չի՞թողուր:

Պ. Չէ, Մ արդարութիւն մեղքերը՝ ու անոնց յաւիտենական պատիժները կրթողու, բայց մեղքին համաձայն ժամանանակաւոր վճարում մը կը պահանջէ:



հ. Թէ որ մէկը խոստովանահօրը դրած ապաշխարանքը չիկատարեր նէ՛ անոր խոստովանանքը աղէկ կը լլայ :

դ. Թէ որ խոստովանանք եղողը ապաշխարանքը չիկատարելու մտքով խոստովաներ է նէ, խոստովանանքը աղէկ չէ. Թէ որ կատարելու մտքով էր, բայց ետքը ծուլութիւնով չիկատարեց նէ, խոստովանանքը աղէկ է, բայց ինքը կըմեղանչէ. ու ան մեղքը կըպարտաւորի խոստովանելու :

հ. Հարկաւոր է արձակումէն յառաջ ապաշխարանքը կատարել :

դ. Չէ, բաւական է կատարելու կամք ունենալը. բայց ուշացունելու չէ՛ Թէ չիմոռնալու համար՝ Թէ աւելի վարձքի արժանի ըլլալու համար՝ ժամանակին ու շունորհաց մէջ զրուցելով :

հ. Մ. թ. քահանային դրած ապաշխարանքով մեղքերուն բոլոր ժամանակաւոր պատիժներն ալ կըթողնու :

դ. Չէ, մանաւանդ որ եկեղեցին դժուր թե՛ համար ան առջի ծանր ապաշխարանքները վերցունելէն ետքը՝ Մ. յ. արդարութեւնը շատ բան կըմնայ վճարելու :

հ. Մ. թ. ժամանակաւոր պատիժները, որ հոս չեն թողվիր նէ՛ վերջը ո՛ւր կամ ի՞նչ կերպով կըթողվին :

դ. Քաւարանի կրմնան՝ ու հոն տեղի տան-  
ջանքներովը կրվճարվին ու կրթողվին :

է. (Թ)է որ մէկը ընկերին մնաս տրված է  
նէ՛ բաւական է իրեն համար աղօթքը ը-  
նելով՝ կամ ասոր պէս ուրիշ բաներով  
հատուցում ընելը :

դ. Աէ, [Թէ որ կարող է նէ, պարտը-  
կան է անոր ապրանքին կամ պատուոյն  
տրված մնասը խոստովանահօր խորհուր-  
դովը վճարելու :

### Օպէտոսին պարտութիւն :

Երիբով Օպէտոս անունով շատ հա-  
րուստ մարդ մը կար, որ մաքսապետ էր,  
ասիկայ Յսի վրա անչափ գովեստներ լը-  
սելով՝ շատ կրքաղձար զինքը տեսնելու :  
( )ր մը լսելով, որ Յսը կանցնի կոր, գնաց  
բաղձանքը կատարելու . ու ժողովուրդը  
շատ ըլլալով՝ իր հասակն ալ կարճ, Յսին  
անցնելու ճամբուն վրա վայրենի թղի մը  
ծառի վրա ելաւ, որ կարող ըլլայ բաղ-  
ձանքին հասնել : Յսը՝ որ հոն եկաւ նէ,  
Օպէտոսին մեծ փափաքը ճանչնալով՝ վեր  
նայեցաւ, զինքը տեսաւ, ու անուշու-  
թիով մը ըսաւ իրեն, Օպէտոս՝ շուտով  
վար իջիր, ասոր քու տունդ պիտոր գամ :  
Օպէտոսը շուտ մը վար իջաւ, ու զինքը  
մեծ ուրախութիւնով իր տունը տարաւ :

Հրեաները սկսան տրտնջել՝ որ Յսմեղաւոր մարդու տուն դնաց, վնդի մաքսաւորները հասարակօրէն արծաթասէր ու ազահ մարդիկ ըլլալնուն համար՝ հրեաներուն առջևը աղէկ անուն չունէին : Բայց բարի Օլաքէոսը՝ սրտանց դարձած ըլլալով՝ Յսին առջևը եկաւ, ու ըսաւ . Տէր հիմըկուց կուզեմ ունեցածիս կէսը աղքատներուն բաժնել, ու թէ որ մէկին զըկողութի ըրած եմ նէ, կուզեմ իր վնասը չորս անգամ վճարել : Ան ատենը յայտնեց Յս՝ որ Օլաքէոսը իր ապաշխարութիովը ուրիշ հրեաներէն աւելի Աբրահամի ճշմարիտ որդի եղած էր, որոնք որ Աբրահամի որդի ըլլալնուն վրա կը պարծենային : Ասիկայ ճշմարիտ ապաշխարութե՛ ուրիշին տրված վնասը վճարելուն ու սրտանց Այ դառնալուն աւելի գժար՝ ու քիչ գտնելօղ օրինակն է : ՂԴ-ի. ԺԷ :

Խրատ ապաշխարութե՛ հոգւոյն վրա :

« . Քրիստոնեայ ենք, անոր համար պարտրկան ենք ապաշխարելու : Ասղի քրիստոնէութե՛ հիմը խաչի վրա դրված է <sup>1)</sup>, ու որ Քսի ետեւէն երթալ կուզէ

1. Ար քսեանքն են, զմարմնս իւրեանց 'ի խաչ

նէ, պարտրկան է իր խաչը տանելու՝ ինքը իրմէն հրաժարելու, ներքին մահացուցումներով իր կիրքերը սանձելու, ու արտաքին ապաշխարանքներով մարմնոյ ցանկութիւնները մեռցունելու: Ինչպէս կրօնայ հանգիստ ապրիլ անդամ մը, որուն գլուխը փշերով պսակված է<sup>1)</sup>:

Բ. Հատ մեղքեր ունինք՝ յանցաւոր ենք, անոր համար ալ պարտրկան ենք ապաշխարելու: Անդի մեղքերը պէտք է, որ կամ աս աշխարհքը կամ անդին քաւենք. բայց շատ դիւրին՝ ու օգտակար է հոս քաւելը, ու շատ վասնալու բան է անդին թողուլ ու անարգըված Մ.Յ կենդանւոյ ձեռք իյնալը<sup>2)</sup>: Ար ապաշխարանքը թեթեւ չերևնար դժօխքի հոգիներուն, որ կենդանութեւն ատենը չուզեցին ապաշխարել, կամ քաւարանի հոգիներուն, որ գաղջութիով ապաշխարեցին կամ քաւական չապաշխարեցին, թէ որ Մ.Ծ աս

Հանին՝ կարեօքն և ցանկութեամբք հանդերձ,  
Գաղատ. Է. 24:

1. Եթէ որ կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր, և եկեացէ զկնի իմ. Սաղ. Ժ. 24:
2. Եւ մեծ է անկանել ՚ի ձեռս Մատուծոյ կենդանւոյ. Եւր. Ժ. 31:

մեր ունեցած ժամանակը իրենց պարգևե-  
լու ըլլայ<sup>1)</sup> :

Գ. Մեղանչելու վտանգներու մէջ ենք,  
անոր համար ալ աւելի պարտրկան ենք  
ապաշխարելու : Այնչի առանց ապաշխա-  
րութեան չենք կրնար աշխարհի՝ սատանայի՝  
ու ապականած մարմնոյ փորձութեցը դէմ  
կենալ<sup>2)</sup>, ով որ կրպնդէ իրեն մեղք չե-  
րեցած բաները գործելով՝ ու պատճառ-  
ներէն չիփախչելով սիրտը մաքուր պա-  
հելու, անսնկ մարդը կրակի մէջ կենալով  
չերպիւր կրպնդէ :

### Օրինակ :

Մեծ վաճառական մը բոլոր ունեցածը  
խաղի մէջ կորսընցունելով՝ յուսահատու-  
թեան մէջ ինկաւ . կարծելով, որ ան խաղի  
մէջ պատահած անյաջողութիւնը Վճ իրեն  
մասնաւոր խրկած էր, ու ասանկով սրը-  
տին մէջը ՎՅ դէմ սատանայական ոխ  
մը ունեցաւ, ու աս ոխը առնելու համար  
միտքը դրաւ ամմէն տեսակ մեղքը գոր-  
ծելու, ու որն որ գործքով կատարելը  
անկարելի էնէ, ան մեղքն ալ բաղձան-

- 
1. Մարտէք այսուհետեւ պոռուղս արժանի ապաշ-  
խարութեան . Ղ. 11. Գ. 8 :
  2. Աթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս  
կորնչիցիք . Ղ. 11. ԺԳ. 3 :





բաչար վիճակը յայտնելու . ու ժամանակ  
ուղեց աղէկ պատրաստըվելու : Ապքը ա-  
ղէկ պատրաստութի՞ք գնաց՝ խոստովանանք  
քը լմնցուց , արձակումը առաւ , խոստու-  
վանահօրը դրած ապաշխարանքէն իզատ՝  
աղէկ ապաշխարելու համար վանք մը քաշ-  
վեցաւ , կրօնաւոր եղաւ , ու իրեք տարի  
խիստ ապաշխարութի՞ններով ապրելէն ետ-  
քը՝ մեռաւ , ինչւան ետքի շունչը Հիւսի-  
անսահման բարութի՞ր քարոզելով : Պե-  
տրոս Առննիկն իբրոք իբր յիստորիկական  
ճշման , եւ ուրիշ շատ հեղինակները :

### ՏԱՍԻԻՐՆԻՐՆԻՐՈՐԻ ՀԱՍՆԻՐ

Ա ճարման ու ներողութի՞ք վրտ :

Կ . Աշխարհիս խաչերը ու նեղութի՞նները  
ապաշխարանքի տեղ կանցնի՞ն :

Պ . Հրամմերես , երբոր զանոնք խոնար-  
հութի՞ով կրնդունինք՝ ու համբերութի՞ով  
կրքաշենք նէ՝ անոնք ալ ապաշխարանքի  
տեղ կանցնին :

Կ . Սեր վիճակին պարտքերը ու աշխա-  
տանքներն ալ ապաշխարանքի տեղ կը-  
րունեն :

Պ . Արբունեն , բաւական է՝ որ զանցա-  
ռութի՞ով ու մարմնաւոր շահի համար չը-  
նենք զանոնք . հապա ջանքով՝ Այ սիրուն

Համար, ու ՄԾ արդարութեւնը մշտնջեն  
Համար ընենք .

Հ. Այնպէս ինչ որ ինչ միջոց ալ պարզեալ  
է մեզի աշխարհիս մէջը մեր մեղքերուն ժա-  
մանակաւոր պատիժները քաւելու համար:

Պ. Հրամմերես, ներողութիւններ դրած է:

Հ. Ներողութիւն ի՞նչ է:

Պ. Մեղքերուն ժամանակաւոր պատիժ-  
ներուն թողութիւն է:

Հ. Քանի՞ տեսակ ներողութի կայ:

Պ. Հաստ տեսակ՝ բայց գլխաւորները եր-  
կու տեսակ են, այս ինքն՝ լիակատար, որ  
բոլոր ժամանակաւոր պատիժները կը թո-  
ղու. ու մասնաւոր, որ մինակ մէկ մասը  
կը թողու.

Հ. Ի՞նչ բանի վրա հաստատուած է ստ  
ներողութիւն:

Պ. Այնպէս ինչ որ անհատներու գանձերուն  
վրա:

Հ. Աս անհատում գանձերը ո՞վ թողուց  
եկեղեցւոյ:

Պ. Մեր փրկիչը Քրիստոսն որ իր բոլոր խո-  
նարհական տնօրէնութիւններով՝ դառն չար-  
չարանքներով՝ ու մահաւոր անսահմա-  
նաբար վաստակած արդիւնքներուն բոլորն  
ալ եկեղեցւոյ ձգեց: Ասանկ ալ սիւս Մծա-  
ծիւնը՝ որ իր բոլոր քաջած ներողութիւններուն  
ու դառն ցաւերուն արդիւնքները եկե-

ղեցւոյ թողուց : Ասոր պէս բոլոր սրերը իրենց պէտք եղածէն եւելցած արդիւնքներնին եկեղեցւոյ ձգեցին :

Հ. Այլ ունի իշխանութի աս դանձերուն վրա կարօտ եղողներուն բաժներու համար :

Պ. Քն ան իշխանութիը եկեղեցւոյ ձգեց արքայութեան բանալիքը Պետրոսի յանձնելովը՝ որ սրն Պետրոս, ու իր յաջորդները կարօտելոց բաժնեն :

Հ. Պետրոսի յաջորդը սրբազան պապէն իզատ ուրիշը չի կրնար ներողութի տալ :

Պ. Ա իճակի եպիսկոպոսները իրենց վիճակներու մէջը քանի մի ներողութի կրնան տալ սրբազանէն առած իշխանութիովը, բայց անոր հրաման տրվածէն աւելի չեն կրնար տալ :

Հ. Ասչափ օրւան կամ ամսրւան ներողութի ըսելով ի՞նչ կիմացվի :

Պ. Ան կիմացվի, որ անչափ օրւան կամ ամսրւան ներողութիով քաւարանի պատիժներէն անչափը կը թողվի, որչափ որ պիտի թողվեր նէ՝ հին ժամանակվան ապաշխարողներուն վրա եկեղեցւոյ դրած անչափ օրւան կամ ամսրւան ծանր ապաշխարանքներովը, բայց թէ որ լիակատար է նէ՝ բոլորը կը թողվի :

Հ. Ա ներողութիները քաւարանի հոգիներու համար ալ կրնանք վաստրկիլ :

Պ. Հրամայեալ կրնանք, բայց Ա՛յ ազօթելու ենք, որ մեր անոնց համար վաստրկած ներողութիւները ընդունի. վստի անոնք մահաամբ զինւորեալ եկեղեցւոյ՝ ու անոր գլխուն իշխանութէ՛ դուրս ելած ըլլալով՝ Ա՛յ անմիջական կառավարութիւն տակն են :

հ. Ներողութիւնը վաստրկելու համար ի՞նչ ընելու է :

Պ. Ա՛յ շնորհքին մէջ գտնուելու է, ու զգուշութիւնով կատարելու է ան բաները, որ ամէն մէկ ներողութիւն վաստրկելու համար դրված են :

հ. Ինչո՞ւ Ա՛յ շնորհքին մէջ գտնուելու է :

Պ. Ա՛յ յստի Ա՛յ մեղքին յանցանքը չի՛ծողած՝ պատիժը չի՛ծողուր, անոր համար յառաջ խոստովանանք ըլլալով մեղքի յանցանքէն ազատելու ու Ա՛յ հետ հաշտուելու է :

հ. Ներողութիւնը ուրիշ ապաշխարանքներէն ալ կազատէ՞ :

Պ. Չէ, վստի եկեղեցիին միտքը ասով զմեզ աւելի ապաշխարութե՛ն շարժել է, ու ներողութիւն մինակ մեր տկարութե՛ն օգնելու համար կուտայ :

Յովհաննէս Սկրտիչն գլուխը կարելուն  
պատմութիւնը :

Յովհաննէս մկրտիչը անապատը խիստ ճգնութիւներով ապրելէն ետքը՝ Մժ ուղեց աս կամաւոր ճգնութիւններուն վրա խաչեր աշխատանքներ ալ եւելցունել, որ Քնի արժանի պատկերը ըլլայ, որուն արդէն կարապետն էր : Աք Յովհաննէս իր պաշտօնին իշխանութիւնովը շերովդէս յանդիմանեց իր եղբօրը կնիկը շերովդիադան իրեն կին առնելուն համար, անոր համար աս անօրէն թագաւորը զինքը բանտ դրաւ : շերովդէս իր ծննդեան օրը իր տէրութեւր բոլոր իշխաններուն ու մեծերուն փառաւոր սեղան մը ըրաւ : Անդանին ատենը շերովդիադային աղջիկը ներս մտաւ, ու խաղաց : Մս բանս սյնչափ հաճոյ եղաւ շերովդէսին, որ շատ երգումներով խոստացաւ աղջկանը ինչ բան ուղելու ըլլայ նէ՛ ինչւան թագաւորութեւր կէսը՝ իրեն տալու : Մղջիկը անօրէն մօրէն խրատված ըլլալով՝ Յովհաննէս մկրտիչին գլուխը ուղեց : Թագաւորը զինքը չխորտմեցունելու համար ուզածը կատարեց, ու շուտ մը սք Յովհաննէսին գլուխը սկտեղի (թէփսիի) մը մէջ դրոված՝ ողորմելի տեսքով մը սեղանին վրա

երևցաւ, որ ազգապիղծ Հերովդէսին ու  
շնացող Հերովդիադային աշխրհները ան-  
գթութիւնով կշտանան: Արդնայ գտնելի  
արդարներուն ասկէ աւելի մխիթարական  
օրինակ մը, որ համբերութիւնով աս աշ-  
խարհքին խաչերուն կրտանին, անանկ ալ  
աւելի սոսկալի օրինակ մը մեղաւորներուն,  
որ աշխարհքին փուճ ուրախութիւններովը  
կուրախանան: Մարի. 4:

Խրոսոս աշխրհի նեղութիւններն զլա:

« . Մի նախախնամութե կարգին մէջը  
ներդութիւնները շատ հարկաւոր են, կամ  
մեղաւորին անկարգութիւնները ուղղելու և  
քաւելու համար<sup>1)</sup>, և կամ արդարներուն  
առաքինութիւնները պահպանելու, ու ա-  
ւելի կատարելագործելու համար<sup>2)</sup>: Մտոր  
ներհակը երկան ժամանակ յաջողութիւն  
մեղաւորին անկարգութիւնները կեւեցունէ  
ու կըհաստատէ, ու շատ անգամ արդարին  
առաքինութիւններն ալ կաւրէ՛ կապա-  
կանէ<sup>3)</sup>»:

1. Գանք և կշտամբանք տան զիմաստութիւն .  
Մարի. 17. 15:
2. Ես՝ զոր սիրեմ, յանդիմանեմ և խրատեմ .  
Յայտ. 4. 19:
3. Գիրացաւ, ստուարացաւ և լայնացաւ, և  
եթող զՏր Մծ զարարիչ իւր . Է. Օրն. 27. 15:



բ. Անանկ է նէ արդարներուն նեղութիւնները Այ իրենց վրա ունեցած սիրուն նշանն է<sup>1)</sup>: Սեղաւորներուն յաջողութիւն ալ Այ արդարութե՛ աւելի սոսկալի պատիժներուն նշանն է. սքերը ասանկ կը մըտածէին: Արբոր սք Անգրէաս առաքեալը խաչը տեսաւ նէ՛ որուն վրա զինքը պիտի խաչէին, կանչել սկսաւ. Ով բարի խաչ՝ շատոնցմէ կըրաղձայի քեզի: Սք Փրանկիսկոս քսավերեանը իր խաչերուն ու առաքելութե՛ աշխատանքներուն մէջը շատ անգամ կըզրուցէր. Ալ աւելի՛ Տէր: Սրբուհի Թերեզիան կըսէր. Աամ մեռնիլ, կամ չարչարվիլ:

գ. Սեղութիւններուն մեր կողմանէ գիւնները մեր ընդունելուն եղանակը կորոշէ: Թէ որ զանոնք խոնարհութիւյ՛ կընդունինք նէ, անոնցմով արքայութիւր կըզընենք, ու աս աշխարհքիս մէջն ալ մեզի շատ քաղցր կերենան: Ասոր ներհակը եթէ նախախնամութե՛ կարգերուն դէմ տրտնջելով՝ ակամայ կընդունինք զանոնք նէ, անոնց գինը ու պտուղները կըկորսընցունենք, ու աս աշխրքիս անցաւոր

---

1. Բարի է ինձ, զի խոնարհ արարէր զիս, որպէս ուսայց զարդարութիւնս քո. Սուր. 67: 71:

պատիժներէն անդիի յաւիտենական պատիժներուն երթալու արժանի կը լընք :

(Օրինակ :

Ան ճգնաւոր մը ջերմեռանդ աղօթքով կաղաչէր Ա՛յ իրեն յայտնելու համար, թէ Ա՛ր առաքինութիւնը աւելի ընդունելի է իր առջևը : (Օր մը ալ ասանկ աղօթք բրած ատենը դրսէն աղքատի մը ձան կը լընէ, որ ճամբան ամուր ձանով օգնութի կրկնէրէր : Ճգնաւորը դուրս ելաւ ու տեսաւ, որ մերկ աղքատ մը կեցած էր՝ և ուսը (օմուզը) ծանր խաչով՝ ցրտէն կը դողար : Հարցուց իրեն, թէ Ա՛յ է, և ո՛ւր տեղաց կուգայ : Պատասխան տրվաւ Տէրը . թէ Այս կոյս Սարիամին որդին Քնն եմ : Ճգնաւորը անմիջապէս առջևը ծունկ չոքեցաւ, ու հարցուց : Ինչո՞ւ եկար Տէր հոս ինձի պէս մեղաւորի խուցին առջևը : Քնն բաւ . Գուն քու աղօթքովդ բերիր զիս հոս տեղս, վնդի անչափ ատեն աղաչեցիր ինձի քեզի յայտնելու համար՝ թէ որ կրթութիւնը աւելի ընդունելու է ինձի : Այս ալ հիմայ եկայ քեզի յայտնելու համար, աս իմ խաչիս աղէկ նայէ, մտմբտաւ, ու ամմէնէն աղէկ ծառայութիւն սորվէ դուն ու բոլոր իմ բարեկամներս ալ, որ իմ խաչս բառնալը,

ու իմ ծանր չարչարանքներուս ու դառն մահաւանս վրա մտածելով ու իմ սիրոյս համար խաչերը համբերութիւն տանելը, որն որ ես անձային թոյլտուութիւն ձեր հոգիներուն փրկութիւնը համար ձեր ուսը կրդնեմ, ինծի ամմէն բանէն աւելի սիրելի ու հաճելի է, անոր համար դուն ալ աս ճամբով եկու իմ ետեւս : Աս ըսաւ, ու աներևոյթ եղաւ : **Յովնանէս** **Հերոսոսը** **Իւլիոսի** :

ՏԵՍՆՐ ԶՈՐՍԵՐՈՐԴ ԼԵՄԵՐ

**Անանի** **Հաղորդութիւն** **Վեան** **Վրա** :

Կ. Հաղորդութիւն ի՞նչ է :

Պ. Այնպէս խորհուրդ մի է, որ Վան մարմինը՝ արիւնը՝ հոգին ու անձութիւնը հացին ու գինւոյն տեսակներուն տակը իրապէս ու ճշմարտապէս կրպարունակէ :

Կ. Հացի ու գինւոյ տեսակներով ի՞նչ կիմանաս :

Պ. Անոնց ան բաները կիմանամ, որ մեր զգայութիւններու տակ կիյնան, ինչպէս գունը՝ ձեր՝ համր՝ հոտը. և այլն :

Կ. Արք հաստատեց Վան աս խորհուրդը :

Պ. Աւագ հինգշաբթի օրը չարչարանքներուն նախընթաց օրը, ինքը՝ հացը ու գինին իր մարմնոյն և արեանը փոխարկելով,

ու առաքելներուն ալ իշխանութի՛ աա-  
լով նոյն բանը ընելու :

հ. Որո՞նք տրուած է եկեղեցւոյ մէջ առ  
իշխանութիւր :

ա. Սինակ քահանաներուն :

հ. Վահանան սբ խօսքերը ըսած ընծա-  
ները ի՞նչ են :

ա. Աշխարքը պարզ հաց է՝ ու սկիհին  
մէջինը քանի մը կաթիլ ջուրով խառնած  
պարզ գինի է, անոր համար ալ երկրպա-  
գելի չեն :

հ. Վահանան սբ խօսքերը ըսած ատենը  
անոնք ի՞նչ կը լլան :

ա. Առէք կերէքէն ետքը հացը անմիջա-  
պէս Վսի երկրպագելի մարմինը կը դառ-  
նայ, ու գինին արբէք ՚ի ամանէէն ետքը  
անմիջապէս Վսի երկրպագելի արիւնը  
կը դառնայ, անանկ որ՝ սբ խօսքերը լմըն-  
ցածին պէս հացին ու գինւոյն տեսակներ-  
ըէն ուրիշ բան չիմնար :

հ. Ի՞նչպէս կը սսիլի առ փոփոխութիւր :

ա. Վոյացափոխութի կը սսիլի, վսզի հա-  
ցին ու գինւոյն գոյացութիները Վսի  
մարմնոյն ու արիւնին գոյացութեանը կը-  
փոխսսին :

հ. Ի՞նչպէս կը կատարիլի առ մեծ հրաշքը :

ա. Վրիստոսի խօսքերուն ամենակարօղ  
զօրութիւր :

Վրնի ընդդէմ գիւնի ընկելուն ու հայր շար-  
ցունելուն պատմութիւնը :

Յս սք մօրը ու աշկերտներուն հետ  
Վալիլեա գտնելու վերջը՝ զինքը անոնց հետ  
հարսնիքը հրաւիրեցին, հրաւէրը ընդու-  
նեցաւ հարսնիքը օրհնելու ու պսակը խոր-  
հուրդ ընելու համար : Հոն տեղը գինին  
պակսելով, սք Մ. Ճաճինը իրենց կարօ-  
տութիւնը շուտ մը գնաց Յսի իմացուց, ու  
ծառաններուն ալ ըսաւ, որ Արդիս ձեզի  
ինչ որ ըսելու ըլլայնէ՛ք ըրէք : Հոն տեղը  
մէռմէռէ վեց հատ խոշոր կարասներ  
(քիւփեր) կային, որոնց մէջը վլացվելու  
համար ջուր կըլեցունէին. Յս սպասա-  
ւորներուն հրամայեց, որ անոնք ջրով  
լեցունեն, ետքը ըսաւ իրենց, որ առնուն  
ան ջրէն ու տաճարապետին տանին, որ  
համը նայի : Տաճարապետը նայեցաւ, ու  
զարմանալով անուշ գինի գտաւ : Վրնի  
առջի հրաշքը աս եղաւ, որ ուղեց աս  
հարսնիքի մէջ ջուրը գինի փոխելովը՝ հա-  
ցին ու գինուոյն սքանչելի գոյացափոխու-  
թիւնը իր մարմնոյն ու արունին երկրպա-  
գելի խորհուրդին մէջը՝ օրինակել, որ ա-  
նով ինքը կըպարգևի ու կըմիանայ մեզի  
հետ : Յովն. Բ :

Յս տեսնելով անապատի մէջ ժողո-



վուրդին մեծ բազմութիւն՝ որ իր ետեւէն  
 եկեր էին՝ գթացաւ իրենց վրա, յառաջ  
 իրենց ցաւագարները բժշկեց, ետքը իրի-  
 կունը մօտեցաւ նէ՛ աշկերանները ըսին ի-  
 րեն, որ ժողովուրդը ետ խրկելու ատենը  
 եկած է, որ երթան մօտիկ գեղերը, ու  
 իրենց ապրուստին համար ուտելիք գնեն :  
 Յս ըսաւ . Իրենց երթալ հարկաւոր չէ,  
 դուք տրվէք իրենց ուտելիքը : Աշկերտ-  
 ները ըսին, որ Իրենք հինկ հացէն ու եր-  
 կու ձուկէն իզատ ուրիշ բան չունին . ան  
 ալ ի՞նչպէս բաւեր պիտոր այնչափ ժողո-  
 վուրդին, որ կնիկները ու տղաքը չհամ-  
 րելով հինկ հազար հոգի էին : Յս հրա-  
 մայեց՝ որ ամմէնը նստել տան, ու ան  
 հինկ հացը ու երկու ձուկը առաւ, օր-  
 հնեց, կտորրտեց, ու աշկերտներուն  
 հրամայեց՝ որ ժողովուրդին բաժնեն : Ամ-  
 մէնն ալ առին ու ինչւան կշտացան նէ՛  
 կերան : Ատքը հրամայեց, որ եւելցած  
 կտորվանքը ժողվեն : Աշկերտները ժող-  
 վեցին ու տասւերկու զամբիւղ (զէմպիլ)  
 լեցվեցաւ, ժողովուրդը աս զարմանալի  
 հրաշքը տեսնելով՝ սկսան մտմբտալ զին-  
 քը թագաւոր ընտրելու . բայց Յս զիրենք  
 արձակեց, ու ինքը մինակ լեռը քաշվե-  
 ցաւ : Աս հացերուն բազմանալն ալ Քնի  
 մարմնոյն ու արունին օրինակն էր, որ սը



Հաղորդութե մէջ մեզի հոգևոր կերա-  
կուր տրվաւ: Սուրբ. Ժգ:

Խրատ ամենասք Հաղորդութե յեւոյն  
Վասի հեպէ ըրած Բարեխնէրուն զեւ:

« . Ամենասք Հաղորդութիւն Վասի  
ամենակարող զօրութե բոլոր զարմանալի  
գործքերուն համառօտութիւն է, վսղի ա-  
սոր մէջը հաստատապէս կրնորոգվին բո-  
լոր իր կատարած խորհուրդները ու ըրած  
հրաշքները<sup>1)</sup>: Վասի կրնորոգվի ճշմարիտ  
Սարգեղուն խորհուրդը իր անսպին խօս-  
քերովը, որոնք որ իր ամենակարողութե  
պաշտօնեան՝ քահանան իրեն անունով կը-  
ղբուցէ . Այս է հարմին իմ . այս է արեւն իմ:  
Արրորդ՝ իր սք ծննդեան խորհուրդը, որ  
հացին ու գինւոյն տեսակներուն տակը  
ծածկրված է, ինչպէս մսուրի մէջ մա-  
նուկի տկարութե քողքին տակը ծածկր-  
ված էր նէ: Արրորդ՝ իր կենացը սքսն-  
չելիքը, որ աս խորհուրդի մէջ մեզի հետ  
կենցաղավարելով անանկ ու ալ աւելի  
մեծ հրաշքներ կըգործէ, որոնք որ կեն-  
դանութե ատենը գործած էր՝ Վալիլեա  
ջուրը գինի փոխելովը ու անապատի մէջ

1. Յիշատակ արար սքանչելեաց իւրոց ուղղոց .  
ողորմած՝ գթած է Տր: Աերակուր ասյ եր-  
կիւղածաց իւրոց . Սուրբ. Եջ. 4. 5:

Հացը շատցունելով ու անչափ ժողովուրդը կերակրելով, ինչու որ հիմայ աս խորհուրդին ձեռքովը հացը ու գինին իր մարմինը ու արիւնը կրփօխէ, ու ասանկ անձային կերակրով ու ըմպելիով բոլոր աշխրթի հաւատացեալները կրկշատացունէ : Զորբորգ՝ իր ամենասք մահուան խորհուրդը, վնդի ասոր մէջը զինքը հաշտութեան զոհ կըմատուցանէ երկինքի ու երկրի մէջ ինչպէս ան ատենը խաչին վրա մատուցած էր նէ : Զինգերորգ՝ իր հրաշալի յարութիւնը, վնդի ասոր ձեռքովը նորէն կրկենդանանայ փառաւորապէս՝ զինքը արժանապէս ընդունողներուն սիրար :

Բ. Ասիկայ է իր բոլոր առատ բարիքներուն սքանչելին : Աւրիշ խորհուրդները շնորհքներու խողովակն (քիւնկն) են, ասիկայ շնորհքներուն աղբիւրը, ու հեղինակը ունի . ասոր ձեռքովը Յս Բս մեզի կերակուր կըլայ՝ մեր հոգւոյն հոգևոր կեանքը պահելու համար <sup>1</sup>), մեզի բժիշկ կըլայ՝ մեր հոգւոյն հիւանդութիւնները ու տկարութիւնները առողջացունելու համար <sup>2</sup>) : Աս է մեր վարդապետը՝

1. Աս կ՛հ հացն կենդանի, որ յերկնից իջեալ . Յճ. 2. 51 :
2. Ա՛մէ որ ուտիցէ ՚ի հացէս յայսմանէ՝ կեցցէ ՚ի յաւիտեան . Ա՛. 52 :

մեզի սորվըցունելու համար, մեր բարեկամը՝ զմեզ զօրացունելու համար, մեր փաստաբանը՝ իր Հօրը առջևը, ու մեր դրան (փէյն) է՝ յաւիտենական կեանքին համար:

Գ. Ասիկայ Վնի ամենասք մարդկութիւր բոլոր խոնարհութիւներուն համառօտութիւն է: Ար թէպէտ հիմայ փառաւորված ըլլալովը անչարչարելի ու անխոնարհելի է, բայց աս խորհուրդը սահմանած ատենը ապագան իրեն ներկայ ըլլալով՝ յառաջուց տեսաւ բոլոր հերետիկոսներուն ընելու նախատինքները ու հայհոյութիւնները՝ չար ուղղափառներու տալու անպատուութիւնները ու սրբապղծութիւնները, ու անոնց մտածմունքներովը չարչարանքները շատ եւելցաւ: Յնի սէրը որչափ ընդդիմութիւններու յաղթեց, որ զինքը այսչափ նախատինքներու դէմ դրաւ, և մեր ու բոլոր եկեղեցւոյ օգուտը իր փառքին օգուտներէն աւելի ուզեց<sup>1)</sup>:

( )ընիսի:

Բուտովֆոս Աւսպուրկի մեծ կոմսը՝ հազար երկու հարուր վաթսուն ու չորս

---

1. Արեւաց զիւրսն՝ որ յաշխարհի աստ են. 'ի սպառ սիրեաց զնոսա. Յւլհ. ԺԳ. 1:

Թւականին շերլետիայի անտառներու մէջ ձիով դացած ատենը՝ սաստիկ անձրևի բռնրվեցաւ, ան անձրևի մէջ քահանայի մը պատահեցաւ, ու հարցուց իրեն, որ անանկ անձրևին ո՞ւր կերթայ կոր, ու իմացածին պէս, որ մէկ հիւանդ գեղացիի մի շաղորդութի կրտանէր կոր՝ շուտ մը ձիէն վար ինջաւ՝ գետինը ծունկ չորեցաւ, ամենասք շաղորդութիը անձային երկրպագութիւնով պատուեց, կրունկի վերարկուն հանեց, քահանային կրունակը տրվաւ, ու ղինքը ձիուն վրա հեծցուց, ինքն ալ քալելով՝ մեծ խոնարհութիով ու պատուով հետը ընկերացաւ ինչան գեղացւոյն տունը : Քահանան հիւանդին ամմէն խորհուրդները կատարելէն ետև՝ նորէն իր ձիովը ինչան իր վանքը տարաւ ձգեց՝ ինքը հետը քալելով : Քահանան տեսնելով աս կոմսին խոնարհ ու ջերմ եռանդ գործքը՝ սք շաղորդութե ըրած յարգութիը՝ ու իրեն ցուցուցած սքանչելի մարդասիրութիը՝ իրեն սրտանց շնորհակալ եղաւ, ու աս մեծ բարեմաղթութիը ըրաւ՝ ըսելով որ Աս ըրած աղէկ գործը անձային գթութիը վարձատրէ : Իրացունէ՛ քահանային ըսածին պէս ալ պատահեցաւ : Անդի Ա՛ճ անմիջապէս սք կուսի մէ բերնով իրեն յայտնեց, որ ան

Հաղորդութե՛ն՝ ու քահանային ըրած յարգութե՛նը համար քիչ ժամանակի մէջ ինքը մեծ հատուցում պիտոր ընէ իրեն, ու վրան ամբողջ տարի մի չանցած Վերմանիայի կայսր ընտրովեցաւ, շատ դարեր ինքը ու իր զաւկընեքը յորդուոց յորդիս յաջորդելով կայսրութի՛ն ըրին, ու վեցերորդ Վառուոս կայսեր եկաւ նէ՛ ցեղին մէջէն մանչ զաւակը պակսելով՝ կայսրութի՛ր անոր աղջիկը Սարիա (Երեզելյային մնաց, որ հիմակւան Պերտինանտոս կայսրը անոր թոռանը որդին է: Սարգիսյէն ինչոց լեհասարտին մէջը իւրոստիւմէ:

ՏԵՍՆՐ, ՀԻՆԳԵՐՈՐԴ, ՀԵՍԵՐ

Վարչեալ Հաղորդութեան ժես:

- Կ. Ինչ կերպով է Վսի մարմինը սի՛ Հաղորդութե՛ն մէջը:
- ա. Իր ճշմարիտ մարմինն է, որն որ սի՛ կուսէն ծնաւ, մեղի համար խաչվեցաւ՝ մեռաւ՝ յարեաւ, ու հիմայ երկինքն է:
- Կ. Վս սի՛ Հաղորդութե՛ն մէջ եկած ատենը՝ երկինքէն կելլայ:
- ա. Չէ, մի և նոյն ատենը երկինքն է՝ ու բոլոր սրբադործըված նշխարքներու մէջ ալ է:
- Կ. Նշխարքին մէջը Վսի մինակ մարմինը, ու սկիհին մէջը մինակ արի՛ւնը կըլդանըվի:



ող. Չէ, բոլոր Վասն Նշխարքի մէջն է, ու բոլոր Վասն սկիհին մէջն ալ է, անանկ որ աշխարհականը մինակ սք նշխարքէն հաղորդը վերլով քահանայէն պակաս չառնուր, որ երկուքէն ալ կը հաղորդը վի :

հ. Ինչպէս կը լայ ատ բանը :

ող. Ասդի Վասն սք Հաղորդութե մէջ կենդանի ըլլալով իր մարմինը առանց արեան՝ ու իր արունը առանց մարմնոյ չի կրնար ըլլալ, ինչպէս կենդանի մարդու վրա՝ անոնք մէկզմէկէ ամենեւին չեն բաժնը վի :

հ. Ինչո՞ւ քահանան նշխարքը զատ ու սկիհը զատ կը սրբագործէ :

ող. Վասնի չարչարանքներուն մէջը արունին մարմնէն բաժնը վիլը նշանակելու համար, որ ամենասք Հաղորդութիլը անոնց կենդանի յիշատակն է :

հ. Աշխարքը բաժնը ված ատենը Վասնի մարմինն ալ կը բաժնը վի :

ող. Չէ, մինակ նշխարքին տեսակը ու երևոյթը կը բաժնը վի :

հ. Աշխարքը բաժնը ված ատենը Վասնի մարմինը ո՞ր մասին մէջը կը մնայ :

ող. Հաւասարապէս ամմէն մասին մէջն ալ ամբողջ մարմինը կը մնայ :

հ. Ինչպէս կը ընայ ըլլալ բոլոր մարմին մը պղտիկ նշխարքի մէջ՝ ու միանգամայն ամմէն եկեղեցիները :



դ. Աս մեծ հրաշքները, որ սբ Զաղորդութե մէջ կրլան՝ մեր մտքով անհասանելի են, բայց Այ կարելի են, ու ասիկայ մեղի Յն ու եկեղեցին կըսորվեցունեն, որ չեն կրնար զմեզ խաբել :

**Տապանակին փոխադրութի պատմութիւն :**

Վաւիթը Արուսաղէմի վրա խաղաղութիով իշխել սկսաւ նէ՝ ուղեց տապանակ ուխտին հոն փոխադրել : Բոլոր Իսրայէլի ժողովուրդը Վաբաս ժողվեց, ուր որ տապանակը կըգտնուէր : Վահանաները անիկայ փառաւոր կառքի մը վրա տեղաւորեցին, ու սկսան տանիլ : Ղամբան անանկ պատահեցաւ, որ տապանակը կառքին վրա ծռվեցաւ : Ողիա շակելու համար յանդգնութիով ձեռք երկնցուցած ատենը՝ անմիջապէս պատժեցաւ, ու մեռաւ : Վաւիթը աս բանս տեսնելով յարգական վախով մը լեցում՝ փոխադրութիւնը յառաջ տանելու չիհամարձակեցաւ, ու տապանակը Աբեղարին տունը տանել տրվաւ : Իրեք ամիս ետքը իմացաւ, որ Աճ տապանակին պատճառաւ Աբեղարին տունը օրհնած էր, նորէն ժողվեց քահանաները ու ժողովուրդը, ու ան սբ դանձր փառաւոր ու ջերմեռանդ հանդիսութիով մը Արուսա-

դէմ բերաւ : Ինքը տապանակին առջևէն  
տաւիղ չալելով մեծ ուրախութիւնով ու  
ջերմեռանդութիւնով կերթար, ինչպէս որ  
բոլոր ժողովուրդն ալ կերթար իր ետևէն .  
չուտ շուտ զոհեր կրմատուցանէին, ամմէն  
կողմէն ղեւտացուց փողերուն և ուրիշ ու-  
րախական գործիքներու ձայները կրլավէին,  
ու ասանկ մեծ յարգութիւնով տապանակը  
քաղաքը մտաւ : Բահանաները բերին,  
յառաջուց պատրաստըված խորանի մը վրա  
տեղաւորեցին, ետքը Գաւիթ բոլոր ժո-  
ղովուրդին հաց ու կերակուր բաժնեց :  
Ժողովուրդը տուներնին երթալէն ետքը  
Գաւիթը պալատը մտաւ նէ, իր կինը  
Սեղքով՝ որ Սաւուղին աղջիկն էր, յան-  
դիմանեց զինքը ժողովուրդին հետ տա-  
պանակին առջևը խաղալով երթալուն հա-  
մար, բայց Գաւիթ պատասխան տրւաւ,  
թէ խոնարհեցայ ու կրխոնարհիմ Ե՛մ  
առջևը, որ զիս քու հօրմէդ աւելի ըն-  
տրեց : Ե՛ս հպարտական յանդիմանու-  
թե՛ր համար Ե՛՞՞՞՞ զՍեղքովը պատժեց, որ  
բոլոր կենացը մէջ զաւակ չունեցաւ : Ո-  
ղիային մահը մեզի կըսորվեցունէ, թէ մէկ  
փոքր պակսութի մը ի՞նչ մեծ պատժոյ  
արժանի է Հաղորդութի յարգութե՛ր  
դէմ՝ որուն օրինակն էր տապանակը, ու  
Ե՛րեդդարին օրհնելիլն ալ կըցուցնէ՝ թէ

Ը՛ծ արժանապէս հաղորդւիողները մեծա-  
մեծ օրհնութիւններու արժանի կընէ : Բ.  
Թագա . Կ :

Խորատ Զաղորդութեան Դեղք Վրնի Դեպի  
պահանջածնէրոն զլու :

« . Յնի ամենակարող զօրութեան սքան-  
չելիքները ամենասք Զաղորդութեան մէջը  
մեր հաւատքը ամմէն խորհուրդներէն ա-  
ւելի կըպահանջեն : Յն աս խորհուրդը  
սահմանելով ինքը յայտնեց, որ ասիկայ  
պէտք է, որ մեր հաւատքին գլխաւոր  
կրթութիւնը ըլլայ : Զաւատքի խորհուրդ  
է, վնդի բոլոր ուրիշ խորհուրդները ու  
հրաշքները կըպարունակէ<sup>1)</sup> : Սնք ա-  
ռաքեալներուն պէս ան մասնաւոր պար-  
գեր չունինք՝ Վրնի հրէաստան գործած  
հրաշքները մարմնաւոր աչքով տեսնալու,  
բայց կենդանի հաւատքի աչքով զինքը  
կրնանք տեսնել աս ամենասք խորհուր-  
դին մէջը . կրնանք իրեն հետ խօսիլ, ու  
մեր տկարութիւնները իրեն պատմել աւելի  
արդիւնական ու մխիթարական կերպով<sup>2)</sup>,  
վնդի ինքը միշտ մեզի հետ է, ու միշտ

1. Ի միջի ձերու՞ կայ, զոր գուքն ոչ գիտէք .  
Յ՛ւհ . Գ . 26 :

2. Արանի՞ որոց ոչ իցէ տեսալ՝ և հաւատաս-  
ցեն . Յ՛ւհ . Է . 29 :

մեղի հետ կըմնայ ինչևան աշխարհիս  
վերջը <sup>1)</sup> :

Բ. Վսի Հաղորդութեն մեջ մեղի ըրած  
բարութեն սքանչելիքը իր ամմէն բարերա-  
րութիներէն աւելի կըպահանջեն մեզմէ  
մեր շնորհակալութիւնը ու մեր բոլոր սիրտը,  
թէ որ հազար սիրտ ալ ունենայինք: Ի՞նչ  
բան կըրնանք չիտալ Ա.Յ մը, որ զինքը  
կուտայ մեղի <sup>2)</sup>: Ի՞նչ մեծ ապերախտութի  
է զինքը ասանկ մոռնալ, ու իրեն ասանկ  
քիչ ու գաղջութիով մօտենալը: Սե՛ծ  
պատիւ կըսեպեն մարդիկ իշխանի մը քով  
մուտք ունենալը, չափէն աւելի կըզգովեն՝  
ու կըբարձրցունեն մեծ մարդու մը պզտիկ  
պարգևը. Վս երկինքի ու երկրի Տէրը,  
մեղի յաւիտենական կեանք պարգևելու  
համար իրեն կըհրաւիրէ, ու մենք իրմէն  
կըփախչինք <sup>3)</sup>:

Գ. Վսի ամենասք մարդկութեն բոլոր  
խոնարհութիներն ալ մասնաւորապէս կը-  
պահանջեն մեր եռանդը, ու մեր երկրը-  
պագութիւնը: Թէ որ իրեն չենք կըրնար

1. Ով իցէ ազգ մեծ՝ որոյ իցէ Ա.Տ մօտ ՚ի նս.  
Բ. Օրմ. Գ. 7:

2. Հացն զոր ես տայ՝ մարմին իմ է, զոր ես  
տայ վն կենաց աշխարհի. Յ.Լ. Զ. 52:

3. Եկայք առ իս նմ վաստակեալք և բեռնա-  
ւորք, և ես հանդուցից զձեզ. Ս.Գ. Գ. 29:

բոլոր պէտք եղած յարգութիւները տալ՝  
ու անարգութիւնները արգելուլ նէ, գոնէ  
մեր կարողութե հասածին չափ պատուենք  
զինքը սք հրեշտակներուն հետ մէկտեղ  
որ զինքը շուրջ կրպատեն, ջերմեռանդ  
հոգիներուն հետ՝ որ իրեն երկրպագութի  
կրնեն, ու բոլոր եկեղեցւոյ հետ՝ որ իր  
պաշտօնատէրներուն երգերովը քարո-  
ղիչներու ձայներովը ու շատ տեսակ հան-  
դիսութիւններով կաշխատի հաւատացեալ-  
ներուն ջերմեռանդութիւր շարժելու ու  
նորոգելու, և անհաւատներուն ու հերե-  
տիկոսներուն ամբարիշտ սիրտը խռովելու:

### Օրինակ:

Գերմանիայի Օթթոն կայսեր ատենը՝  
Փարիզ բարեպաշտ զօրական մը աս աղէկ  
սովորութիւր ունէր, որ երբոր քահանային  
Սրբութիւր վեր վերցունելը կրտեսնէր,  
կամ հիւանդի մը Սրբութի տանելուն  
կրպատահէր նէ, շուտով գետինը ծունկ  
կըչոքէր, ու մեծ խոնարհութիով ու յար-  
գութիով երկրպագութի կրնէր: Օր մի  
ալ շատ փառաւոր զգեստներ հագած՝ ձի-  
ու վրա հեծած՝ քաղաքը դացած ատենը  
շատ տղմոտ (չամուրլու) տեղ մը պատա-  
հեցաւ, որ հիւանդի հաղորդ կրտանէին  
կոր: Ըն տեղը կանկ առաւ. ու ինք ի-

րեն ասանկ մտմտալ սկսաւ, ըսելով. Հիմայ ի՞նչ կրնես, թէ որ ասանկ խորունկ տղմի (չամուրի) մէջ ծունկ չոքելու ըլլաս նէ՛ աս փառաւոր ու մեծագին զգեստներդ աղտոտին ու ապականին պիտոր, ու մէյ մը ալ պիտի չիկրնես հագնիլ. բայց թէ որ ձիէն վար չիջնաս ու ծունկ չոքելով Հաղորդութիւն անձային երկրպագութիւնով չիպատուելու ըլլաս նէ, խղճմտանքդ միշտ պիտի տանջէ զքեզ ասանկ աղէկ սովորութիւն զանց առնելուդ համար: Բայց իր ջերմեռանդութիւն իրեն յաղթելով զինքը ձիէն վար նետեց, անանկ խորունկ տղմին մէջը մեծ յարգութիւնով ու ջերմեռանդութիւնով ծունկ չոքեցաւ՝ երկրպագութիւն ու աղօթք ըրաւ անձային խորհուրդին: Արբոր ոտք ելաւ նէ, տեսաւ, որ զգեստները ամենեին չէին աղտոտած՝ մաքուր կարպետի (խալի) վրա չոքածի պէս մաքուր մնացած էին: Ասանկ մեծ հրաշքի վրա շատ զարմացաւ, Ա՛յ շնորհակալ եղաւ, ու իր ջերմեռանդութեւն ու բարի սովորութեւն մէջ ալ աւելի հաստատուեցաւ: Ահապիտակ իբրոք:



ՏԱՄՆԲԱՆՅՆԻՈՐԴ ԼԱԿԱՐ

Հաղորդութիւն լեւ :

Կ. Յի սիւ Հաղորդութե մեջ երկըն-  
պագութիւն ընելո՞ւ է :

Պ. Հրամներես , վսզի Յի իրապէս ու  
ճշմարտապէս սիւ Հաղորդութե մեջն է ,  
որ թէպէտ ուր որ ըլլայ նէ մեր բոլոր եր-  
կրրպագութեը ու պաշտելունն արժանի է ,  
բայց գլխաւորաբար աս խորհուրդին մեջը  
ամմէնէն աւելի պաշտելի է :

Կ. Յի մինակ երկրպագութիւն ընդունելո՞ւ  
համար սիւ Հաղորդութե մեջն է :

Պ. Չէ , միանգամայն ու գլխաւորաբար  
աս խորհուրդին ձեռքովը զինքը մեզի տա-  
լով՝ զմեզ իրեն հաղորդելու համար :

Կ. Հաղորդութե առնելու պարտք մը կայ :

Պ. Կայ , վսզի Քն ըսած է , թէ որ իմ  
մարմինս չէք ուտեր՝ չէք կրնար ապրիլ .  
ինչպէս որ սիւ եկեղեցին ալ կրպատուիրէ :

Կ. Ըրժանապէս հաղորդութիւն առնելու  
համար ի՞նչ պատրաստութիւն պէտք է :

Պ. Արկու տեսակ պատրաստութիւն պէտք  
է՝ այսինքն հոգւոյ և մարմնոյ :

Կ. Ի՞նչ է պատրաստութիւն մարմնոյ :

Պ. 'Նախ՝ կէս գիշերէն ետքը ամենեւին  
բան չուտելով ու չիսմելով ծով կենայն  
է , 'ի բաց առեալ հոգեւոր հիւանդները ,

և երկրորդ՝ պարկեշտ վարքով ու զգեստով ամենասք շաղորդութե մօտենայն է :

հ. Քանի՞ են հոգւոյ պատրաստութիւները :

ա. Արկու են՝ հեռաւոր և մերձաւոր :

հ. Արձնք են հեռաւոր պատրաստութիւները :

ա. 'Նախ՝ հաւատքի խորհուրդները աղէկ սորվել՝ գլխաւորաբար աս գերապանծ խորհուրդին պէտք եղած բաները, երկրորդ՝ առանց մեղաց ու ջերմեռանդութե ապրիլն է :

հ. Արձնք են մերձաւոր պատրաստութիւնները :

ա. 'Նախ մահացու մեղքերէն մաքրված ըլլալ՝ ու ներելիներէն ալ ձեռքէն եկածին չափ մեծ ջանքով ետ կենայն է, երկրորդ՝ հաղորդելէն յառաջ ու ետքը ասանկ մեծ գործողութե արժանի գործքեր ընելն է :

հ. Թէ որ մէկը մահացու մեղքով Արքութի կառնու նէ, անիկայ Քսի մարմինը կառնո՞ւ :

ա. շրամներնս, բայց Յուդային պէս իրեն դատապարտութիւր կառնու, ու սրբապղծութե ծանր մեղք կը գործէ :

հ. Թէ որ մէկը խորանին առջևը մահացու մեղք մի յիշելու ըլլայ, որ խոստովանելու մոռցեր է, ի՞նչ պէտք է ընել :

ա. Այս կենալու է, բայց թէ որ անկէ գայթաղութի ըլլալու վախ կայ նէ, կա-

տարեալ զղջումք ընելու է՝ ու ետքէն ան  
մեղքը խոստովանելու գիտաւորութիւնով  
սիւ Հաղորդութիւնը ընդունելու է :

Տապանակին Փղշտացիներուն մըջ ըրած-  
նէրուն պատմութիւնը :

Արբոր Փղշտացիները ԱՅ տապանակը  
գերի առին նէ, տարին Ազովտոս՝ իրենց  
Ղազոն չածին տաճարը դրին : Առաջ-  
ւանց տեսան, որ Ղազոնը վար ինկած՝  
ու տապանակին առջևը պառկած էր, վեր-  
ցուցին տեղը դրին : Արկրորդ առտու տե-  
սան, որ Ղազոնին գլուխը ու ոտքերը  
տաճարին յատակը, ձեռքերը դռան մօտ,  
ու մնացած մարմինը ուրիշ կողմը ցրւած  
էին : ԱՍ հրաշքը բաւական էր ան կռա-  
պաշտ աղգին՝ իրենց սուտ անին տկարու-  
թիւր ճանչնալու, և դառնալու համար, բայց  
երբոր չուզեցին իրենց մոլորութիւն դառ-  
նալ նէ, ԱՅ ձեռքը վրանին ծանրցաւ, որ  
ղիւրենք շատ ամչնալու ու չարչարող վեր-  
քերով զարկաւ, ու սոսկալի վախ մը ձգեց  
վրանին, որ գրեթէ մահուան դուռը հա-  
սած էին : Ազովտացիները իրենց մեծե-  
րուն աղաչեցին, որ ժողովին, ու սա պա-  
տիժներուն գէմ ճար մը գտնեն : Անոնք  
ալ որոշեցին տապանակը քաղքէ քաղք  
պտըտցունելու, բայց ուր որ կըրտանէին նէ,

տապանակը հոն տեղի մարդիկները նոյն պատժով կրպատժէր, ու անչափ սաստկացաւ աս պատիժը վրանին, որ վերջապէս հարկադրեցան տապանակը իսրայէլացիներուն ետ դարձունելու: Անոր համար իրենց նախարարները առին զանիկա, ու Քեթսամիւսին սահմանը տարին, ու անկէ ներս խրկեցին, որ ղեւտացիներու ձեռքը հասնի: Ան տեղաց ժողովուրդը թէպէտ շատ ուրախացաւ, բայց տապանակին պէտք եղած յարգութիւնը չիտալուն համար եօթանասուն հոգի իշխաններէն՝ ու յիսուն հազար հոգի ժողովուրդէն պատժւեցան, ու մեռան: Ասոնք են պատիժներուն օրինակը՝ որոնք որ սրբապղծութիւն ընօղները վրանին կը քաշեն, վսղի զՅս անանկ սրտի մէջ կը տեղաւորեն, ուր որ մեղքի կուռքը դրած է: \* . թ . Գ . Ե . Կ :

Խրատ Թեոսաթ Զաղորդութիւն զու:

\* . Ամենասթ Զաղորդութիւն անարժան ընդունօղը Յուդային կեղծաւորութիւնը ու նենգութիւնը կընօրոգէ, ու Յս Քս պազներով ու բարեկամութեն նշանով կը մատնէ: Թէ որ մարդիկ աս յանցանքին թողութիւնը շուտով չեն առնուր ճշմարիտ ապաշխարութիւնով, հասարակօրէն աս մեծ փնասները կընդունին, հոգւոյ կու-

բութի՝ սրտի խստութի՝ հողւոյ փրկու-  
թե՛ր բաներու մէջ թմբութի՝ անհողութի  
ու յուսահատական մահ՝<sup>1)</sup> :

Բ. Վաղջութի՛ք՝ այսինքն ներելի մեղ-  
քերուն կրպած՝ քիչ պատրաստութիով՝  
ու առանց ջերմեռանդութե՛ր Հաղորդութի  
առնօղը ամենասք Հաղորդութե՛ր շատ պը-  
տուղներէն կրզրկրվի, ինք իրեն պատճառ  
կրլայ ձանձրանալու, ու այսպէս կամաց  
կամաց սրբապղծութի՛ք հաղորդելու վտան-  
գի մէջ ալ կիյնայ՝<sup>2)</sup> :

Գ. Չ ջերմեռանդութի՛ք, այսինքն մեծ ջան-  
քով պատրաստութի տեսնելով, սիրով,  
բաղձանքով ինքը զինքը ժողվելով հա-  
ղորդվողը հաղորդութե՛ր շատ մեծ օգուտ-  
ներ կընդունի՝ անկէ պտուղներ հանելու  
կաշխատի, ու ետքէն աղէկ ապրելովը  
կըցուցունէ, որ Յս միշտ իր սիրտն է՝ ու  
ինքը Յսի հետ է՝<sup>3)</sup> :

- 
1. Որ ուտէ և ըմպէ անարժանութի՛ք՝ դատաս-  
տանս անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ  
խարէ զմարմինն ճեան. ա. Վրդ. Ժա. 29 :
  2. Փորձեցէ մարդ զանձն իւր, և ապա ՚ի հացէ  
անտի կերիցէ, և ՚ի բաժակէն արբցէ. Վրդ. 28 :
  3. Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս  
բնակեցէ, և ես ՚ի նմա. Յովհ. 2. 57 :

(Օրինակ):

Այն Իլարիոս եպիսկոպոսը յառաջ կարգը վաճ ըլլալով մէկ հատիկ աղջիկ մի ունէր: Արիօսեան հերետիկոսները զինքը քշեցին նէ, աղջիկը գրեց՝ իրմէն աշխարհք մտնելու հրաման ուղեց: Այն եպիսկոպոսը զինքը յորդորելով գրեց, որ ինքը շուտով պիտոր ազատի ու գայ, ու ինքը չեկած մարդու խօսք չիտայ՝ իրեն գալուն սպասէ, վստի զինքը շատ գեղեցիկ ու արեգակէն լուսաւոր փեսի մը պիտոր տայ: Իմացաւ աղջիկը իր հօրը միտքը՝ ու սք բաղձանքը, որ խոստացած փեսան Քսէր. հնազանդեցաւ՝ թողուց աշխարհքի սէրը, ու սրտին մէջը Յսին վրա անանկ սէր ու բաղձանք մը ձգեց, որ գիշեր ցորեկ Յսէն իղատ բան չէր մտածեր՝ ու չէր սիրեր: Արբոր հարը աքսորէն ետ գարձաւ՝ հօրէն լալով խնդրեց ան խոստացած փեսան՝ ըսելով. Հայր տո՛ւր ինձի՝ տո՛ւր ինձի իմ սիրելի հարս՝ կաղաչեմ քեզի, ան քու խոստացած՝ ու իմ անչափ սիրած փեսաս, որուն անպատմելի գեղեցկութիւնք քեզմէ լսելով՝ բոլոր աշխրքի բաղձանքներս անոր սիրուն փոխեցի. աս աղաչանքը գիշեր ցորեկ կրկրկնէր իր հօրը ականջին: Այն Իլարիոսը տեսնելով իր



Հնազանդ աղջկանը Յսին վրա ունեցած  
ասանկ սէրը շատ ուրախացաւ, զինքը  
մխիթարեց, ու իր խոստումը շուտով կա-  
տարելու համար խօսք տրւաւ: Մեծ հան-  
դիսութե մը օրը որ ձայնաւոր պատարագ  
պիտոր ըներ, ըսաւ իրեն՝ որ Մն երկնաւոր  
փեսան ընդունելու համար պատրաստու-  
թիւր տեսնէ. ինքն ալ հայրապետական  
ղգեստները հագաւ՝ պատարագ սկսաւ:  
Ղաշակման ատենը ինքը ճաշակելէն ետ-  
քը Յսը ձեռքը բռնած դարձաւ. ու աղ-  
ջիկը դնաց ծունկ չոքեցաւ խորանին առ-  
ջեր մեծ ջերմեռանդութիւնով ու բաղձան-  
քով: Մք եպիսկոպոսը, ըսաւ. Մսիկայ  
է՛ սիրելի զաւակս՝ ան գեղեցիկ ու փառա-  
ւոր փեսան, որն որ քեզի տալու խոստա-  
ցեր էի. ասիկայ է, որն որ դուն շատ  
կըսիրէիր, ու անչափ կըբաղձայիր, ու աս  
ալ նմանապէս քու հոգիդ անսահման սի-  
րով կըսիրէ. ասիկայ է անձային փեսան,  
որ իր գեղեցիկ արքայուհեր մէջը անձային ու  
յաւիտենական փառքերովը զմեզ պիտի  
կշտացունէ. ան քու սիրելի ու բաղձալի  
փեսագ, ընդունէ՛ քու սրտիդ մէջը՝ որուն  
ինչւան հիմայ մեծ բաղձանքով սպասեցիր:  
Մղջիկը աս խօսքերէն բոլոր անձային սի-  
րով լեցվեցաւ. ծայրագոյն ջերմեռան-  
դութիւնով՝ անպատմելի ուրախութիւնով ու

գոհութիւնով սք հօրը ձեռքէն ամենասք  
 Հաղորդութիւնը ընդունեցաւ : Մէյ մը ալ  
 կընայիս , որ հրեշտակները գեղեցիկ ու  
 անուշ եղանակաւ սկսան երգել՝ ըսելով :  
 Փառք 'ի Բարձրան Լ՛յ : Եւհո՛ւր Վսի հար-  
 սը ան պատիւ՝ որն որ Լ՛ճ 'ի յաւիտեանց Տեղէ  
 համար պարտասպաժ էր : Լ՛ն ձաներուն  
 մէջը Վսի երջանիկ հարսը , իր մարուր  
 հոգին Լ՛յ աւանդեց : Բոլոր ժողովուրդը  
 տեսնալով ասանկ երջանիկ ու փառաւոր  
 մահը՝ զարմացան , ու իր սք հայրը ան-  
 սահման փառք արվաւ Լ՛յ : Սքեանայի  
 երանելի Աերարարս եղեանպարսը իւրապէս :

ՏԵՍՆԻՆՆՈՒԹՅՆԲՈՐԴ ԼԵՍԵՐ

Սք Հաղորդութիւն պարտասպաժ զն :

հ . Որո՞նք են արժանաւորութիւն հա-  
 ղորդրվելուն պատուհները :

պ . Գլխաւորները իրեք են :

հ . Բսէ ինճի առջինը :

պ . Մեր վրա ուրիշ խորհուրդներէն ա-  
 ւելի սրբարար շնորհքը կեւեցունէ :

հ . Մեկնէ ինճի երկրորդը :

պ . Մեր հոգւոյն նոր զօրութի կուտայ  
 բարիքներ գործելու , ու առաքինութիւն-  
 ները շատցունելու , ինչպէս կերակուրը , որ

մարդուս կեանքը կրպահէ, ու կըզօրացունէ :

հ. Մէկ երբորդը :

ա. Ներելի մեղքերը կըթողու, ու փորձութիւններուն և մեղքի պատճառներուն յաղթելու համար շատ մեծ զօրութիւն կուտայ :

հ. Հաղորդութիւնը թէ որ ասչափ օգնութիւններ կընէ մեզի նէ, անանկ է նէ՝ պէտք է շուտ շուտ հաղորդվիլ :

ա. Երբ շուտ հաղորդվիլը շատ օգտակար բան է, բաւական է՝ որ պէտք եղած պատրաստութիւնով բլլայ :

հ. Երբ շուտ հաղորդվելու համար՝ ինչպէս ութը օրւան մէջ մը, մինակ մահացու մեղքէն փախչիլը բաւական է :

ա. Արբապղծութիւնով չիհաղորդվելու համար բաւական է. բայց ասանկ մեծ խորհուրդին յարգութիւնը ու եկեղեցւոյ գործածութիւնը կրպահանջեն, որ ներելի մեղքերու ակտորժակն ալ թող տրվի :

հ. Մնոնք որ գաղջութիւնով կըհաղորդվին նէ, Հաղորդութե պտուղները կըրնան հանել :

ա. Ես պտուղները կըհամեմատին մեր ջանքին ու ջերմեռանդութեանը որոնցմով որ կրպատրաստվինք ու կընդունինք սբ Հաղորդութիւնը :

հ. Հաղորդութիւն առնելէն յառաջ ի՞նչ պէտք է ընել :

ա. Վիսաւորաբար կենդանի հաւատքի՝ խորունկ խոնարհութե՛ն ու Յսի սիրուն ներգործութիւնները ընելու է :

հ. Հաղորդութիւն առնելէն ետքը ի՞նչ պէտք է ընել :

ա. Եղէկ ժամանակ մը Յսին սրտանց շնորհակալ ըլլալու է, ասանկ մեծ խորհուրդը ան օրը շատ անգամ միտքը բերելով. ու անոնց ամենեկին նմանելու չէ, որ Սրբութիւն առածին պէս շուտով՝ ջերմեռանդութի մը չորած՝ եկեղեցիէ կելլան, ու բոլոր օրը արտաքին բաներու ետեւէ կըլլան :

հ. Սրբութիւն առնելէն ետքը ի՞նչ ներգործութիւններ ընելու է :

ա. Սասնաւորապէս երկրպագութեան ու շնորհակալութե՛ն ներգործութիւններ ընելու է, ինքը զինքը Յսին յանձնելու՝ առաջագրութեան ու խնդիրքներու ներգործութիւններ ընելու է :

Եղեա հարգարէին իսկուհիս պատմութիւնը :

Եղեա մարգարէն երբոր ճշմարիտ ԵՅ հաւատքին նախանձովը լեցված՝ մեծ հրաշքով ԵՅ զոհ մատուց, ու ետքը Ռահազին սուտ մարգարէները սպաննեց նէ, Եգաար թագաւորին թագուհին Յեզա-

բէլը աս բանս լսելով շատ բարկացաւ ,  
 իրեն ետևէն մարդ խաւրեց , ու չմծնե-  
 րուն երդում ընելով ըսել տրլաւ , որ  
 վաղը աս ժամանակս ես ալ զքեզ անոնց  
 մէկին պէս մեռցունել պիտոր տամ : Ա-  
 ղիան աս բանը լսելով շատ վախցաւ , ե-  
 լաւ , գնաց Ներսաբէէ՝ ու անկէ Յուդայի  
 երկիրը եկաւ : Իր աշկերտը Աղիսէն հոն  
 թողուց , ու ինքը մէկ օրւան հեռու ան-  
 ապատ մը գնաց . հոն տեղը ծառի մը տակ  
 նստաւ , ու սկսաւ աղաչել Ա՛յ , ըսելով .  
 Իմ հոգիս առ , ես իմ հօրէս ու պապե-  
 րէս աղէկ չեմ : Հոն տեղը քունը տա-  
 րաւ , ու ննջելու ատենը քովը հրեշտակ  
 մը եկաւ , ու ըսաւ . Ա՛լ , ու կեր : Աղիան  
 արթնցաւ՝ նայեցաւ , որ գլխուն վերելը  
 հաց ու ամանով ջուր կար . ելաւ՝ հացէն  
 կերաւ , ջրէն խմեց , ու նորէն քնացաւ :  
 Հրեշտակը եկաւ՝ զինքը նորէն արթըն-  
 ցուց , ու ըսաւ . Ա՛լ , կեր , վնգի երթալու  
 ճամբադ շատ հեռու է : Ալաւ Աղիան՝ կե-  
 րաւ , խմեց , ու ան հացին ու ջուրին զօ-  
 րութիւնը քառսուն օր ու քառսուն գիշեր  
 ճամբայ գնաց , ինչւան Ա՛յ նուիրած Վո-  
 րէբ լեռը հասաւ , ուր կեցաւ այրի մի  
 մէջ : Ա՛ծ հարցուց իրեն . Աղիա՛ ինչո՞ւ  
 հոս եկեր ես : Աղիան ըսաւ . Ա՛մենակա-  
 րող Ա՛յ նախանձովը բորբոքելուս համար ,

որ Խորայէլի ազգը զքեզ թողուցեր էր՝  
քու սեղաններդ փլցուցեր, քու մարգա-  
րէներդ սրով կոտորած էր. մինակ ես մնա-  
ցի՝ զիս ալ կուզեն կոր մեռցունել: Աս  
հացը ամենասք չաղորդութե օրինակ կըր-  
նայ ըլլալ, որն որ Աղիան երկու անգամ  
ուտելով, անանկ ուժ առաւ, որ անչափ  
երկան ու դժար ճամբորդութեը մէջ գի-  
մացաւ, ու իր թշնամիներուն ալ ձեռքէն  
խալըսեցաւ, Այ լեռը հասաւ, ու իրեն  
հետ խօսեցաւ: Ասանկ ալ ամենասք չա-  
ղորդութիւն արժանապէս հաղորդելոյնե-  
րուն անանկ ուժ կուտայ, որ աշխրբիս  
փորձութիւներով լեցուն ճամբորդութե  
մէջը կըդիմանան, իրենց հոգևոր թշնամի-  
ներուն ձեռքէն ազատելով՝ ինչևան ար-  
քայութիւն կըհասնին, ու Այ պայծառ  
տեսութեը, ու իրեն հետ խօսակցելու  
արժանի կըլլան: շրեշտակը՝ որ երկու  
անգամ զԱղիան արթնցուց, քարոզիչ-  
ները՝ մեր հոգևոր հարերը, առաջնորդ-  
ները ու հոգևոր գիրքերը կընշանակեն,  
որ շատ անգամ զմեզ կարթնցունենն ՚ս  
ամենասք հացին շուտ շուտ հաղորդելու:  
Գ. Թուգա. Ժը. ԺԷ:



Խրոյս շոյս շոյս հաղորդվելուն լուս :

« . Ախնալով , որ աղէկ չենք կրոնար հաղորդիլ , սք Հաղորդութէ ետ կենալը , յանցանքէ մը փախչելու համար ուրիշ յանցանք ընել է , վնդի հաղորդիլը ու աղէկ հաղորդիլը մէկ տեղ հրամայված են <sup>1)</sup> . պատրաստութե պակասութիւր Հաղորդութէ ետ կենալու պատճառ չէ , վնդի հաղորդելու պարտքը՝ աղէկ հաղորդելու ալ կրպարտաւորէ <sup>2)</sup> )

Բ . Օմեղ դեռ կատարեալ չի համարելով , սք Հաղորդութէ քիչ մօտենալը սատանայի խաբէութի մի է . վնդի աս գերազանց խորհուրդը մինակ կատարեալներուն համար հաստատված չէ , կատարելութե հասնելու համար ալ դեղ է , ինչպէս կըսէ սք Փրանկիսկոս սալեղեանը՝ « թէ որ առաքինուէ մէջ զօրաւոր ես նէ , « Հաղորդութի սու , որ չիտկարանաս , թէ « որ տկար ես նէ , Հաղորդութի սու , որ « զօրանաս » <sup>3)</sup> ) :

1. Աս եմ հացն կենաց . . . Աս է հացն , որ յերկնիցն իջեալ է . զի որ որ ուտիցէ ՚ի սմանէ՝ մի մեռանիցի . Յովհ . շ . 48 . 50 :
2. Այնպէս կեաց , զի հանապազօր հաղորդելոյ արժանի լիցիս . Սուրբ Ագոստ . Էմմ էջ :
3. Ար ուտէ գմարմին իմ , և ըմպէ գարին իմ , ունի զկեանս յաւիտենականս . և ես յարուցից զնա յաւուրն յետնում . Յովհ . շ . 55 :

Գ. Որնոր իր զբաղմունքները պատճառ  
բերելով սբ Հաղորդութէ կտ կրկենայ՝  
ինքը զինքը կըխաբէ, վնդի մեր գործքերը  
որչափ աւելի հարկաւոր ու դժար են նէ,  
անչափ աւելի օգնութե ու շնորհքի կը-  
կարօտինք, զանոնք աղէկ ու առանց մեղաց  
կատարելու համար, չէ նէ մեր զբաղմունք-  
ները մոռնալ կուտան մեզի՝ մեր հոգւոյն  
փրկութե հարկաւոր հոգերնիս: Աս մի-  
նակ մտմբտանք, թէ շնորհքներուն ո՞ր  
աղբիւրը սբ Հաղորդութէ աւելի առատ  
կըրնայ ըլլալ, որ շնորհքներուն արարիչը  
իրեն հետ մէկ տեղ ունի:

( ) Երկնակ:

Երկու շատ բարեպաշտ առաքինի  
գալրատան տղաքներ մէկզմէկու հետ շատ  
սիրելի ու բարեկամ ըլլալով՝ մէջերնին  
խօսք դրին, որ երկուքէն ո՞վ որ յառաջ  
մեռնելու ըլլայ նէ՝ Ա՛յ կամելով, մահ-  
ւանէն ետքը կենդանի ընկերին երևնայ,  
ու իրեն վիճակը անոր պատմէ: Աս խօսքը  
մէջերնին ընելէն ետքը մէկը մեռաւ, ու  
քանի մի օր ետքը ընկերին երևցաւ:  
Հարցուց ընկերը՝ որ Ա՛նչպէս է: Պա-  
տասխան տրվաւ, որ անանկ աղէկ ու միտ-  
թարութե մէջ եմ, որ ասկէ լաւը չեմ  
կըրնար բաղձալ, վնդի երկինքի երջանիկ

Հայրենիքի մէջ Վրսի հետ եմ : Մեկերը  
ըսաւ . Կաղաչեմ՝ ըսէ ինձի սիրելի բա-  
րեկամս , որ առաքինութեդ համար աւելի  
արժանացար անանկ երջանիկ փառքերուն :  
Պատասխան տրվաւ . Յս Վրս՝ գլխաւորա-  
բար ամենասք Հաղորդութե խորհուրդը  
ջերմեռանդութիւն , ու շուտ շուտ հաղոր-  
դելու համար , զիս աս փառքերուն արժա-  
նի ըրաւ՝ ու հասցուց : Մայց գիտնաս , որ  
ես աս անցաւոր կեանքէս ելած ատենս՝  
հինգ հազար հոգիներ ինձի հետ մէկ տեղ  
ելան ան բոպէի մէջը , ու անչափ հոգի-  
ներու մէջէն մինակ չորս հոգի փրկութե  
հասանք , ու մէկալնոնք բոլոր դատապար-  
տեցան : Մեկերը աս բանիս վրա զարմա-  
ցաւ նէ , Մտոր համար մի զարմանար , սի-  
րելի ըսաւ , վնզի պիտոր գիտնաս , որ  
աշխարհիս մէջը շատ կռապաշտներ , հրեա-  
ներ , անհաւատներ , տեսակ տեսակ հերե-  
տիկոսներ , ու անթիւ չարագործ ուղղա-  
փառներ կան , որոնց մեծ մասը անզեղ  
կրմեռնին : Ատքը ջերմեռանդութիով ու  
շուտ հաղորդելուն վրա իրեն աղէկ  
խրատներ տրվաւ . ու անյայտ եղաւ :  
Ս իջէնցիս էպիսիոպոսը իւրապէս :

ՏԵՄԵՐՈՒԹՅԵՐՈՐԿ ԼԵՍԵՐ

Պատարագի զոհին զոհ :

- Կ. Սք Լաղորդուիլ մինակ խորհուրդ է :
- ա. Չէ, նոր օրէնքի զոհն ալ է :
- Կ. Օրհն ինչ բան է :
- ա. Ինծայ մի է, արտաքին բանով մը ՄՅ ընծայված՝ անով զՄՏ պատուելու, ու ցուցունելու համար, որ ինքը զինքը ՄՅ մեծութեան կընծայէ :
- Կ. Ինչ բաներով կը լային հին օրէնքի զոհերը :
- ա. Տեսակ տեսակ կենդանիները ՄՅ ընծայելով :
- Կ. Ըն զոհերը ՄՅ ընդունելի կը լային. ու կը ընային զինքը պատուել :
- ա. Իրենք իրենցմէ չէին ըլլար, բայց որովհետեւ նոր օրէնքի զոհին օրինակներն էին, անոր համար ՄՅ հաճոյ կը լային :
- Կ. Որն է նոր օրէնքին զոհը :
- ա. Ըն է, որ Յս Քս իր սք արունը թափելով՝ ու խաչին վրա մեռնելով մեր փրկութեան համար ՄՅ Լոր մատուց :
- Կ. Ըս ամենասք զոհէն ետքը հին օրէնքի զոհերը կը ընանք կատարել. ինչպէս մատաղ ընել :
- ա. Չէ, Քս ինքը զինքը զոհելով շուքը ու օրինակը խափանեց, ու անոնք նորո-

գել ուղողը Վսի գալը ու մեռնելը ու  
բացած կըլայ :

հ. Յս Վս մէկ անգամ ինքը զինքը խա-  
չին վրա զոհելով ալ ուրիշ զոհ պիտոր  
չըլայ :

ա. Խաչին զոհը կըլայ ու պիտոր ըլայ  
ինչևան աշխրբին վերջը պատարագի զոհին  
մէջը, որ նոյն խաչին զոհն է :

հ. Ինչ կերպով նոյն է պատարագի զոհը  
խաչին զոհին հետ :

ա. Ըսով, որ նոյն իր մարմինը ու արու-  
նը՝ որ Յս Վս խաչին վրա մատուց նէ՛  
քահանաներուն ձեռքովն ալ նոյնը պա-  
տարագին մէջը հացին ու գինեոյն տեսակ-  
ներուն ներքեւ կըմատուցվի ԸՅ :

հ. Ընանկ է նէ աս երկու զոհերուն մէջ  
տարբերութի մը չիկայ :

ա. Սինակ աս տարբերութիը կայ, որ  
խաչին զոհը արուն թափելով կատարվե-  
ցաւ, ու պատարագինը առանց արուն  
թափելու կըկատարվի :

հ. Պատարագի զոհը որոն կըմատուցվի :

ա. Սինակ ԸՅ, և ուրիշին չիկրնար մա-  
տուցվիլ :

հ. Երբոր սք Ըճածնայ ու սքերուն պա-  
տարաչ կըլայ նէ, իրենց չիմատուցվիր  
ան զոհը :

ա. Չէ, մինակ ԸՅ կընծայվի՝ անոնց

տրված շնորհքներուն համար, ու անոնց բարեխօսութիովը՝ մեզի պէտք եղած բաները Աստուծմէ ընդունելու համար:

հ. Թէ որ պատարագը ասանկ սրբազան զոհ է նէ, պատարագի առջևը ի՞նչպէս պէտք է կենալ:

դ. Սե՛ծ յարգութիով՝ ջերմեռանդութիով ու մտածելով՝ որ խաչի զոհին առջևն ենք, ու մեր դիտաւորութիւնը եկեղեցւոյ դիտաւորութե՛ն հետ միաւորելով, որ մեզի համար կրմատուցանէ:

### Աբրահամին զոհին պատմութիւնը:

Աբրահամ մէկ հատիկ որդի մը ունէր, որուն Ա՛ճ շատ մեծ բարիքներ խօստացեր էր: Ա՛ճ աս իր ծառային հաւատքը աւելի յայտնելու համար զինքը կանչեց՝ ու ըսաւ. Աբրահամ՝ գնա՛ քու սիրելի տղադ Իսահակը հետդ առ, ու տար ան լեռան վրա՝ որն որ քեզի ցուցունեմ պիտոր, ու հոն տեղը անիկայ ինձի ողջակէզ ըրէ: Աբրահամ անմիջապէս հնազանդեցաւ՝ ելաւ, ու ողջակէզին բաւելու չափ փայտ ջարդեց, մէկ հատիկ սիրելի զաւակը հետը առաւ, փայտը անոր կրունակը տրվաւ, ինքն ալ կրակը ու սուրը առաւ, ու գացին: Ղ՛ամբան Իսահակը ըսաւ. Հայր՝ մենք փայտ ու կրակ կրտա-



նինք կոր, բայց ուր է ողջակէզ ընելու  
 ոչխարը : Արթանք տղաս՝ ըսաւ Աբրա-  
 համը, Ա՛ճ ինքը կը հոգայ : Ա՛ճ լեռը ցու-  
 ցուց, ու երբոր վրան հասան նէ, հնա-  
 զանդ հայրը խորան մը պատրաստելէն,  
 փայտերը վրան շարելէն ետքը՝ Ա՛յ հրա-  
 մանը տղուն յայտնեց. ան ալ հօրը պէս  
 հնազանդ ըլլալով Ա՛յ կամացը, ամենեին  
 չիւխոցաւ, կամաւ թող տրվաւ, որ հայ-  
 րը զինքը կապէ՝ ու փայտերուն վրա պառ-  
 կըցունէ. Աբրահամը սուրը ձեռքը առաւ՝  
 ու վեր վերցուց նէ՝ զինքը մորթելու հա-  
 մար, ան ատենը՝ Ա՛յ հրեշտակը մէկէն՝ ի  
 մէկ կանչեց. Աբրահամ՝ Աբրահամ, տը-  
 ղուն ձեռք մի դպցուներ, Ա՛ճ ընդունե-  
 ցաւ քու պատրաստ կամքդ, ու քու հնա-  
 զանդութիդ, ու սէրդ Ա՛յ շատ հաճոյ  
 եղաւ : Աբրահամը դարձաւ՝ տեսաւ, որ  
 ծառէն ՚ի վար խոյ (խոչ) մը կախված էր,  
 անիկայ առաւ, տղուն տեղը Ա՛յ ողջակէզ  
 ըրաւ : Ատքը Ա՛ճ իրեն յայտնեց, որ իր  
 զաւկրները երկինքի աստեղներուն ու ծո-  
 վի աւաղներուն պէս պիտոր շատնան, ու  
 ամէն ազգերը իր զաւկէն, այսինքն՝ Վ՛սէ  
 պիտոր օրհնըվին, վնզի Ա՛յ հնազանդելու  
 համար իր մէկ հատիկ օրդւոյն չէր խնայ-  
 ած : Ասիկայ ան մեծ զոհին օրինակն էր,  
 որն որ Վ՛ս քահանայապետը ու միան-

գամայն զոհ՝ Վողգոթա լեռան վրա՝ մեր  
 փրկութեւնը համար ինքը զինքը ԱՅ Զօր  
 մատուց, ելաւ լեռանը վրա խաչը իր կրօ-  
 նակը տանելով, որուն վրա իր սիրտը  
 կրակ կտրելով ինքը զինքը երեց: Աս  
 զոհն է, որ ամենն օր մեր խորաններուն  
 վրա կընորոգվի, ու ասոր ձեռքովը ամեն  
 իրեն հաւտացող ազգերը ու բոլոր ընտը-  
 րեալները օրհնութեցան ու սրբութեցան:  
 Օհն. ԷԷ:

Խորատի սք պատարագի զոհին զեւ:

« . Պատարագի զոհը (գուրպանը) ող-  
 ջակիղի ու Աճ պաշտութե զոհ է, որով որ  
 կըրնանք զԱճ իր մեծութեւնը արժանի պատ-  
 ւով պատուել, վնդի իրեն նծային զոհ մը  
 կըմատուցանենք, որ Աճ ու մարդ Յս  
 Քնն է, որ ԱՅ փառքերուն բոլորովին  
 զոհ կըլայ<sup>1</sup>): Յնի մտքին համաձայնելու  
 համար պէտք է, որ սք պատարագի առ-  
 ջըը զոհի մտքով կենանք՝ միշտ անոր  
 վրան մտածենք, ու յարգելի ծանրու-  
 թիով մը մենք ալ զմեզ ներսէն ԱՅ ան-  
 սահման մեծութեւնը մատուցանենք, որուն

1. Նարեկից մինչև 'ի մուտս արևու փառաւո-  
 րեալ է անուն իմ 'ի մէջ ազգաց. և յամ  
 տեղիս մատչին խունկը անուան իմոյ. և պա-  
 տարագը սքբ. Ստեփ. . . 11:

պարտրկան ենք բոլոր մեր սիրտը ու մեր սրտին բաղձանքները զոհելու: Այն անոր՝ որն որ սք պատարագին առջևը ներսէն անջերմեռանդ ու դրսէն անպատու թիով կրկենայ, որ բոլորովին ներհակը կը լայ ան կատարեալ յարգութեը, որն որ Յս ու իր եկեղեցին կրմատուցանեն Մ. Ե:

Բ. Սք պատարագը հաղորդութե ու շնորհակալութե զոհ է, որ անով Մ. Ե շնորհակալ կը լանք իր գերազանց բարիքներուն համար, իրեն անանկ ընծայ մը մատուցանելով՝ որ բոլոր ուրիշ պարգևներուն արժողութիը կը պարունակէ, ու կը գերազանցէ<sup>1)</sup>: Մ. Ե համար պէտք է՝ որ սք պատարագին դիմացը Քսի ու զածին պէս շնորհակալութե հոգիով կենանք, մեր աղքատութիը խոստովանինք, որ մենք մեզմէ չենք կըրնար Մ. Ե արժանի հատուցում մի ընել, ու սիրելի Արդին՝ Մ. Ե օր մատուցանենք, որ մեր աղքատութե տեղը լեցունելը յանձն առաւ: Ինչ մեծ անկարգութի կընեն անոնք, որ սք պատարագին առջևը կամ բոլոր աս անծային բարիքները մոռնալով, կամ ալ չարագոյն՝ իրենց մեղքերուն մէջը յամառ կենալով

1. Բնդ ողջակէզս և ընդ վն մեղացն ոչ հաճնար: Հայնժամ ասացի թէ ահաւասիկ եկի. Եւր. Ժ. 6. 7:

աս բարիքներուն դէմ չար հատուցում  
ընելու պատրաստութիւնով կրկենան :  
Արնայ ասկէ մեծ ապերախտութիւն մը  
գտնելի :

Գ . Այն պատարագը քառութե զոհ է :  
Ըյ բարկութիւնը աս մեծ զոհին ձեռքովը  
կիջնայ , կենդանիներուն և մեռածներուն  
մեղացը թողութի կըլլայ , որոնց համար  
որ կըմատուցվի նէ <sup>1)</sup> : Օմեզ Յսի բաղ-  
ձանքներուն համաձայնելու համար պէտք  
է , որ սք պատարագին դիմացը մեր մեղ-  
քերուն վրա անկեղծ զղջումով ու քա-  
ւարանի հոգիներուն վրա գթութիւնով կե-  
նանք : Աւ գիտնանք՝ որ անանկ անկարգ՝  
խստացած սրտով ու առանց զղջումի կամ  
Ըստուծմէ զղջում չիխնդրելով կենալը՝  
անձային արիւնը անօգուտ ընել է , որն որ  
Ըյ ողորմութիւնը մեզի մեր մեղքերուն հա-  
մար դեղ տրված է :

Դ . Այն պատարագը ընդունական զոհ  
է : Ըս զոհին միջնորդութիւնովը կրնանք  
բոլոր մեզի պէտք եղած հոգևոր ու մար-

1. Ըյնպիսի իսկ վայել էր մեզ քահանայապետ ,  
նր . . . . սրում ոչ հանապազ հարկ է որ-  
պէս այրոց քահանայապետիցն , նախ վն իւր-  
եանց մեղացն պատարագս մատուցանել , և  
ապա վն թողովողեանն : Իսկ սա գայն միան-  
գամայն կատարեաց , զի գանձն իւր մատոյց  
պատարագ . Եւր . է . 26 . 27 .

մնաւոր օգնութիւնները ընդունիլ, որոնք որ սբ եկեղեցին ալ աս սբ զոհը մատուցած ատենը Յսի անունով ու արդիւնքներովը մեզի համար կրխնդրէ, անոր համար մենք ալ պէտք է, որ Վսի օրինակներուն ու մտքին հետեւինք, հաստատուն յուսով՝ գլխաւորաբար հոգևոր ու յաւիտենական բարիքներու բաղձանք, որոնք եթէ ստանալու ըլլանք՝ ժամանակաւոր բարիքներն ալ չեն պակսիր մեզի: Ինչ կը պատահի անանկ է նէ բոլորովին աշխրբիս բարիքներուն կպած սրտին: Ընանկ սիրտը ասանկ մեծ շնորհքներուն օրէ օր աւելի արգելքներ կը դնէ, որոնք որ աս ընդունական զոհին ձեռքովը կը ընար ընդունիլ:

### (Օրինակ:

Ը առաքինի քահանայի մը յայտնեց, որ շատ չերթար՝ մայրը պիտի մեռնի: Ը սիկայ մօրը խրատ տրվաւ ամմէն օր պատարագ տեսնելու: Սարը ըսաւ. Վիտես, որ ես հասարակօրէն ամմէն օր պատարագ կը տեսնեմ: Վահանան պատասխան տրվաւ. Վիտեմ, մայրիկ, որ ամմէն օր պատարագի կերթաս, բայց աս ալ գիտեմ, որ երբէք պէտք եղածին պէս պատարագ մի չիտեսար. վսզի մէկը մէկալը բարևելով՝ հետերնին խօսելով՝ ու ասոր անոր



Հետ ճանչորուի ընելով եկեղեցւոյ մէջը՝  
միտքդ կրցրուես՝ ու պատարագի միտ չիդնե-  
լով վարձքդ կրկորսընցունես: Թէ որ կու-  
ղես սք պատարագը աղէկ տեսնել նէ, ան  
սք ատենը թող տուր ան բարեւելը՝ խօ-  
սակցութիները, ու ճանչորութիները, որ  
վնասակար սովորութիներ, ու սատանայի  
փորձութիներ են ձեր միտքը շփոթելու  
համար, ու պատարագի ատենը մինակ  
միտ դիր քահանային ըսածին ու ըրածին:  
Սորը պատասխան տրվաւ, որ Թէ որ ա-  
նանկ բարեւերու ու հարցումներու պա-  
տասխան չիտամ նէ, մարդիկը կրկարծեն,  
որ հպարտութե համար կընեմ կոր: Վա-  
հանան ըսաւ, որ Ինքը անանկ մարդկային  
մտածմունքները չիհոգայ, մինակ իր հո-  
գւոյն փրկութեը միտ դնէ: Վարի կնիկը  
ընդունեցաւ իր բարեպաշտ տղուն աղէկ  
խրատները, սկսաւ անկէ ետքը եկեղեց-  
ւոյ մէկ կողմը քաշված մեծ մտադրութիով  
պատարագ տեսնել: Սատանան ալ ա-  
նոր ներհակը սկսաւ զինքը վախցունել  
ու միտքը շփոթելու բաներ ընել. բայց  
բարի կնիկը ամմէն պատահած բաները  
կուգար տղուն կրպատմէր, ու անոր տը-  
ված բարի խրատները պահելով պատա-  
րագի մէջ իր մտադրութիը ու ջերմեռան-  
դութիը կեւելցունէր: Աւ սյսպէս եր-



բորդ օրը մեծ ջերմեռանդութիով պատարագը տեսնալէն Վատքը հոն տեղը հոգին աւանդեց : Վատքը քահանային երևցաւ, ու շատ շնորհակալ եղաւ ան տրված բարի խրատներուն համար . վստի ան մտադրութիով ու ջերմեռանդութիով տեսած իրեք պատարագին զօրութիովը փրկութե՛հ հասած էր, չէ՛ նէ պիտի դատապարտուէր :  
Հեղինակուը՝ հայեւի օրինակացի Ռ. Վ. Լուսին :

ՏԱՄԵՐԻԻՆՆԵՐՈՐԴ ԸՆՄԱՆՔ

Ս Էրջին օժտան լրս :

հ. Ս Էրջին օժտմը ի՞նչ է :

ա. Այնպէս ինչպէս խորհուրդ մի է՝ հիւանդները զօրացունելու և մխիթարելու համար Վստէ սահմանված, որ իրենց մնացած մեղքերը թողու, ու սրբութիւն մեռնելու համար օգնէ :

հ. Ս Էրջին օժտմը ի՞նչ կերպով հիւանդներուն մխիթարութի կը լրայ :

ա. Իրենց մարմնաւոր առողջութի տալով՝ թէ որ իրենց հոգիներուն փրկութե՛ր օգտակար է՛ նէ, կամ համբերութի տալով իրենց հիւանդութիները սիրով քաշելու համար :

հ. Ի՞նչպէս կը թողու մնացած մեղքերը :

ա. Չի թողված ներելի մեղքերը ջնջելով,

եթէ հիւանդը անոնց վրա կրղղջայ, ու ազատելով ան մահացու մեղքերէն, որոնք որ մնացած են իր չգիտնալովը:

հ. Ի՞նչպէս կօզնէ հիւանդին սրբութիւն մեռնելու համար:

պ. Օջրութի տալով ան վերջին ժամանակին պէտք եղած առաքինութիւններուն ներգործութիւնները ընելու, ու սատանային սաստիկ փորձութիւններուն դէմ կենալու համար:

հ. Բացարձակ պատք մը կա՞յ աս խորհուրդը ընդունելու համար:

պ. Այո, հիւանդը յանկարծ մեռնելով աս խորհուրդը չիկրցաւ ընդունիլ ալ նէ, փրկութե կրնայ հասնիլ, քայց ասիկայ ընդունելու անհոգ եղողը զինքը անանկ մեծ օգնութիւններէն կրղղկէ, ու Մ.Յ առջևը յանցաւոր կը ըլլայ:

հ. Ի՞նչ պատրաստութիւն պէտք է աս խորհուրդը ընդունելու համար:

պ. Պէտք է՝ որ մարդս Մ.Յ շնորհքի մէջ ըլլայ խոստովանելով՝ թէ որ կրնայ նէ, չէ նէ զղջման ներգործութի ընէ խոստովանանքի աեղը, ու միտ դնէ քահանային ըրած աղօթքներուն:

հ. Միկայ բանալարութեան չիհասած տղոց ալ կրտրովի՞:

պ. Այո, վնդի անոնք մկրտութի ետքը

մեղք չեն գործած , որ ասոր ձեռքովը  
ջնջուվի :

հ . Օ ինքը կորսընցուցած հիւանդի ալ  
կըտորովն :

դ . Հրամմերես , բայց ամի՛ն մարդ պէտք  
է , որ ջանայ ասանկ օգտակար խորհուր-  
դը զինքը չիկորսընցուցած ընդունելու՝  
աւելի պտուղ հանելու համար , ու իր վնա-  
սովը ինչւան վերջին ժամը չիձգելու :

հ . Սէկ անգամ վերջին առնօղը մէյ մը  
ալ կըրնայ առնուլ :

դ . Հրամմերես , ամի՛ն անգամ որ մար-  
դը նոր վտանգով մը ծանր կըհիւընդնայ  
նէ , կըրնայ առնուլ , բաւական է՝ որ մէկ  
վտանգէ մէկալը բանաւոր ժամանակ մը  
անցնի :

Ազեկիային — Ասային հիւանդութիւններուն  
պատմութիւնը :

Ազեկիա թագաւորը շատ ծանր հիւ-  
ընդցաւ նէ , Ասայի մարգարէն իրեն  
եկաւ , ու ըսաւ . Տէր իմ՝ տանգ վրա  
կարգ դիր , ու կտակդ ըրէ , վնդի աս հիւ-  
ւանդուէ պիտոր մեռնիս : Ազեկիա երեսը  
անդին դարձուց , մեծ ջերմեռանդութիով  
ու աչքէն արցունքներ թափելով Այ ա-  
ղօթք ըրաւ : Ան առենը Ա՛ճ ալ Ասայի  
մարգարէին հրամայեց , որ նորէն Ազե-

կիային երթայ, ու իր կողմանէ ըսէ. Ա՛ն-  
 քիդ արցունքներուն նայեցայ, ու աղօթ-  
 քըդ ընդունեցայ, առողջութիւն նորէն կը-  
 շնորհեմ քեզի, տասնըհինկ տարի ալ  
 կեանքդ ու թագաւորութիդ երկընցունե-  
 լով՝ թշնամիներուդ վրան ալ յաղթութի  
 կըպարգևեմ քեզի. անոր համար կուզեմ՝  
 որ իրեք օրէն իմ տաճարս գաս ինձի շը-  
 նորհակալ ըլլալու համար: Ազեկիա՛ Ա-  
 սայի մարգարէէն նշան մը ուզեց, իմանա-  
 լու համար, որ Ա՛յ կողմանէ կըխօսի կոր:  
 Ասային հարցուց իրեն, որ Արը կուզէ,  
 արեւին շուքը տասը աստիճան յառաջ  
 երթայ, թէ ետ երթայ: Աիւրին է՝ ըսաւ  
 Ազեկիան շուքին յառաջ երթալը, կու-  
 զեմ՝ որ ետ երթայ: Ա՛յն բոպէի մէջ ա-  
 րեւի ժամացուցին վրա շուքը տասը աստի-  
 ճան ետ դարձաւ: Ա՛ն Ազեկիային խոս-  
 տացածները բոլոր կատարեց, վնդի հի-  
 ւանդութենը մէջ լեցուն յուսով ու ան-  
 կեղծ սրտով Ա՛յ աղաչած էր: Դ. (Թ. Գ. Ի:

Ա՛սոր ներհակը՝ Ա՛սա թագաւորը ոտքը  
 սաստիկ ցաւելով, Ա՛յ չապաւինեցաւ, բո-  
 լոր իր յոյսը բժիշկներու վրա դրաւ, Ա՛ն  
 ալ զինքը թող արվաւ. ցաւը սաստկացաւ,  
 ու մեռաւ: Բ. Ս՛նացոր. Ժ. Գ.:

Ասայի մարգարէին՝ Ազեկիային գրտ-  
 նըւած մահուան վտանգը, անոր իմացունե-

լովը հիւանդի տէրերուն կըսորվեցունէ, որ հիւանդին գտնըված մահւան վտանգը իրմէ չիպահեն, ու Աղեկիային և Մսային օրինակները կըսորվեցունեն մեզի, որ հիւանդութիւններու մէջ բոլոր յուսերնիս բժիշկներու վրա չիդնենք, Մ.Յ օգնութե յուսանք՝ զմեզ իր ամենասուրբ կամքին յանձնելով :

Խրատ հիւանդութիւնէն զամբէն ընդ  
 Խաչէլու զլու :

Մ. Մ. հիւանդութիւնները մեզի մեր մեղքերուն թողութեը համար կըխրկէ, որոնք որ առաքինի մարդիկներու վրա շատ երևելի պտուղներ կուտան, զիրենք Մ.Յ կամքին յանձնելու՝ խոնարհութե ու համբերութե մէջ կըկրթեն<sup>1)</sup> : Բայց շատերը զանոնք նոր մեղքերու՝ տրտունջներու՝ անհամբերութիւններու ու Մ.Յ կամացը ու կարգադրութեը դէմ ապստամբելու պատճառ կընեն :

Բ. Մ. հիւանդութիւնները մեր վրա կըխրկէ մեր սիրտը աս աշխարհէ՝ մարմիններնէս ու անոնց հեշտութիւններէն բաժնելու համար՝ որոնց պարապ, սուտ ու անցաւոր

1. Օգրութի իմ 'ի տկարութե կատարի. Բ. Կրտ. Ժ. 9 :

ը ըստը հիւանդութիւններնիս մեզի կիմացու-  
նեն . բայց այսպիսի խարէութիւններէն  
փրկարար ազատութիւնը մինակ առաքինի  
անձինքներու վրա կերենայ , վնդի շատե-  
րը հիւանդութե մէջը աս կեանքիս անցա-  
ւորութե խարերայ բաներուն վրա նորէն սէր  
կրճդեն , մահւան անկարգ վախով մը ի-  
րենց մարմնոյն ալ աւելի կրկպչին՝ իրենց  
անձնական հանգստութեը օրէ օր ալ աւել-  
լի հոգ տանելով :

Գ. Այ հիւանդութիւնները մեր վրա  
խաւրելուն վախճանը զմեզ մահւան պատ-  
րաստելու համար է . աղէկ մարդիկները  
իրենց հիւանդութիւնները աս վախճանին  
կրճառայեցունեն . ամէն ժամանակ՝ բայց  
գլխաւորաբար , հիւրնդութե ատենները  
իրենց մահը սպասելով , իրենք զիրենք  
խոնարհութիւնով Այ սք կամքին յանձնած՝  
հոգևոր պատրաստութիւններ կրտեսնեն ,  
վերջին օժումնին կրնդունին <sup>1)</sup> , կրղինա-  
ւորվին , ու Այ որոշմանը կրսպասեն , թէ  
որ առողջանալու ալ ըլլան նէ , աւելի

---

1. Հիւանդանայցէ որ'ի ձէնջ՝ կոչեսցեն զերիցունս  
եկեղեցոյն , և արասցեն ՚ի վերայ նր աղօթս ,  
օժցեն իւղով յանուն Տեառն . և աղօթքն հա-  
ւատովք՝ փրկեսցէ զաշխատեալն . . . և եթէ  
մեղքս ինչ իցէ գործեալ թողցի նմա . Յա՛ւ . է .  
14 . 15 :



սրբութիւնք ապրելով բարի մահւան միշտ պատրաստ կը գտնուին<sup>1)</sup> . բայց աշխարհի կպած ու արքայութեան վրա անհոգ մարդիկները իրենց հիւանդութիւններնէն առողջանալէն ուրիշ բան չիմտածելով վերջին բողոքն առողջանալու յուսով իրենք զիրենք կրխաբեն . կամ թէ որ առողջանալու ալ կը լլաննէ, շուտով անցած վտանգները մոռնալով, ուրիշ բան չեն մտածեր, բայց եթէ վայելել աշխարհին ուրախութիւնները :

(Օրինակ :

Ան Վարիգոր պապին ատենը Հրեատենդա կոյսը երկու կոյս աշկերտներովը մէկ տեղ՝ մէկը նմանապէս Հրեատենդա ու մէկը Հռովմոլա անունով կրօնաւորի զգեստ հագած՝ սք Մ. Թաճնայ եկեղեցւոյ մէջ կը ծառայէին : Ասոնք երկրաւոր բաները բոլոր թող տը վաճ՝ աղքատ, բայց Ա. Յ շնորհքներովը շատ հարուստ, ու ամէն տեսակ երկնային ու հրեշտակային առարքիներով զարդարւած էին, բայց մէջերնին Հռովմոլա կոյսը ալ աւելի սրը-

1. Աւ գուք նմանողք մարդկան՝ որ ակն ունիցին տեսան իւրեանց . . . . զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա : Արանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արժուես . Ղ. 36 . 37 :

բուժե՛հ հասած էր, վնդի զարմանալի համ-  
բերութիով ու խորունկ խոնարհութիով  
լեցված՝ իր մտքովը միշտ երկինքն էր :  
Մճային գթութիւր աս իր սիրելի աղջկանը  
երկան ու ծանր անդամայուծութե՛հ հիւան-  
դութի մը խրկեց : Հռովմոլա ասանկ հի-  
ւանդութե՛հ դառն ցաւերուն մէջը շատ տա-  
րիներով անկողինը մնաց, որ ամենևին չէր  
կըրնար անդամները շարժել, բայց անչափ  
զարմանալի համբերութիով կը քաշէր, որ  
բերնէն տրտունջ մի չհհանելէն ետքը՝  
անհամբերուն կամ տրտմուն նշան մընալ  
չէր ցուցուներ, ու օրէ օր համբերուն ու  
սրբուն մէջ յառաջ կերթար : Մնկողինի  
մէջ անանկ կապված ու անշարժ կեցած  
ատենը իր հանգիստը և ուրախութիւր մը-  
տածական աղօթքն էր, որուն մէջ, մըտ-  
քով միշտ երկինքը կը վերնար : Մահանէ  
չորս օր յառաջ գիշերը ասանկ մտքովը  
երկինքը վերցած ատենը սկսաւ վարպետը  
կանչել : Հրետենդա՛ մէկալ աշկերտովը  
հիւանդին քովը վազեց, մէյ մը ալ եր-  
կինքէն անպատմելի լոյս մը ծագեցաւ, որ  
իրենց խուցը լուսաւորելէն ետքը սրտեր-  
նին ալ Մճ սիրովը վառեց : Մն ատենը  
բազմուն ձայներ ալ լսեցին որ ուրախու-  
թիով ներս կը մտնէին կոր՝ անանկ որ  
խուցը բոլոր լեցաւ, ու անուշ հոտ մընալ

բուրեց, որ կարծէին՝ թէ երկինքը վեր-  
ցան: Չորրորդ գլխերը հիւանդը նորէն  
կանչեց վարպետը, ու իր ուղեւորը վեր-  
ջին օժումը և ուրիշ խորհուրդները ըն-  
դունելէն ետքը՝ երկինքէն երկու դաս լու-  
սաւոր երգիչներ իջան, ու խուցին առջևը  
սկսան դիմացէ դիմաց անպատմելի անուշ  
եղանակներով երգել և մեծ ուրախու-  
թիւով Հռովմոլային մահւան կարգը կա-  
տարել, անոնց երգելու ատենը իր սք հո-  
գին ալ մարմնոյ չարչարանքներուն բան-  
տէն ելաւ, իրենց մէջը խառնըվեցաւ, որն  
որ երգելով առին գացին: ՄԷ Ղ. Երեմի  
պատմելու պատմէ իր պատման. ԺԶ. Գեր. 4:

### ՔԱՏԱՆԱՅԻՆՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Աստուծոյ ու պատիւի խորհուրդներուն վրայ:

Կ. Աստուծոյ ի՞նչ բան է:

Պ. Այնպէս խորհուրդ մի է, որ կա-  
րողութիւն ու շնորհք կուտայ եկեղեցական  
պաշտօնները արժանապէս կատարելու:

Կ. Քահանայութիւնը ի՞նչ է:

Պ. Այնպէս խորհուրդ մի է, որ իշխա-  
նութիւն կուտայ Քսի մարմինը ու արիւնը  
սրբագործելու, ու կարգ տալէն ու դրոշ-  
մելէն իղատ ամմէն խորհուրդները մատա-  
կարարելու համար:

հ. Ապիսկոպոսութիւնը քահանայութիւնը զատ  
կարգ մի է :

ա. Չէ, անոր կատարեալն է, որ եպիս-  
կոպոսը քահանայէն մեծ է :

հ. Պսակը ի՞նչ է :

ա. Ակեղեցւոյ խորհուրդ մի է, որ այր  
ու կին մէկ տեղ կըկապէ՝ սրբութիւնով ապ-  
րելու՝ և իրենց զաւկընները ԱՅ երկիւղի  
մէջ մեծցունելու համար :

հ. Պսակի խորհուրդը ընդունելու համար  
շնորհքի մէջ ըլլալը հարկաւոր է :

ա. Հրամայեալ, ու ով որ մահացու մեղ-  
քի մէջ կընդունի նէ՝ սրբապղծութե մեղք  
կըգործէ :

հ. Արն որ բռնի՝ իր կամքին դէմ կըպսա-  
կեն նէ, պսակը պսակ կըլլայ :

ա. Չէ, պէտք է՝ որ այրն ալ կինն ալ  
իրենց ազատ հաւանութիւններովը պսակ-  
վին, ու իրենց հաւանութիւնները վկանե-  
րու առջևը դրսինշանով մի ալ ցուցունեն,  
չէ նէ պսակ եղած չեն սեպվիր :

հ. Պսակի խորհուրդը կըընայ քակվիլ :

ա. Չէ, ամենեւին անկարելի է, ինչպան  
մէկը չիմեռնիր նէ, չիքակվիր :

Ու՛ե՛թե՛կոյնն Իսաահակին հէտ պատկէլուն  
պատմութիւնը :

Աբրահամը կենդանութե՛ն ատենը իր որդին Իսահակին արժանի կին մը գտնելու համար իր տանը վերակացուն կանչեց, ու զինքը երգվընցուց, որ իր տղուն ան իրենց բնակած Վանանու երկրէն կին չառնու, որոնք ամմէնն ալ կռապաշտ էին: Օ՛ինքը Սիջագետ խրկեց իր ազգականներուն քաղաքը ու տունը՝ Ա՛յ աղաչելով, որ իր հրեշտակը խաւրէ՛ ճամբան իրեն ընկերանալու համար: Օ՛առան հետը տասը ուղտ առաւ՝ պարգևներով բեռնաւորեց, գնաց հասաւ ան քաղաքը, ուր որ Աբրահամին եղբարը՝ Նաբոյը կրբնակէր, հոն տեղը քաղքէն դուրս ջրհորի մի քով կեցաւ, ուր որ ան քաղքին կնիկները ու աղջիկները ջուր առնելու համար կուգային, և Ա՛յ աղօթք ըրաւ, ու ըսաւ. Ի՛մ տիրոջս Աբրահամին Ա՛ճը՝ յաջողէ՛ ինձի ասոր: Այս խմելու ջուր պիտոր ուղեմ. ան աղջիկը որ ինձի կրխմցունէ, ու քաղաքավարութիւյ՛ կրսէ, որ Ուղտերուդ համար ալ քաշեմ ու խմցունեմ, ան ատենը գիտեմ, որ անիկայ պատրաստեցիր քու ծառագ Իսահակին կնութե՛ն համար: Ա՛ղօթքը լմնցուցածին պէս Ռաթուէլի աղ-

ջիկը Աւերեկան եկաւ . ծառան խմելու  
ջուր ուզեց . Աւերեկան իրեն խմցունելէն  
ետքը՝ վազեց նորէն ջուր քաշեց , բոլոր  
ուղտերուն ալ խմցուց , ու ղինքն ալ ի-  
րենց տունը բնակելու հրամցուց : Բարի  
ծառան Ա՛յ երկրպագութի ընելով , ու իր  
նախախնամութեւ շնորհակալ ըլլալով ,  
Աւերեկային ծնողացը տունը գնաց , ու  
պատմեց անոնց Ա՛յ իր ըրած աղօթքը ,  
Աւերեկային գալը , ջուր խմցունելը , ու  
Աբրահամին կողմանէ ընելու խնդիրքը :  
Ամէնքը զարմացան Ա՛յ նախախնամու-  
թեւ վրա . որ աս պսակը կրկարգադրէր  
կոր , ու չուզելով դէմ կենալ , աղջկան  
հարցուցին , երբոր ան ալ հաւնեցաւ նէ ,  
ծառան հետը բերած ոսկի արծաթ աման-  
ները՝ զարդերը ու զգեստները Աւերեկայ-  
ին տրվաւ , ծնողացը ու եղբօրն ալ պար-  
գեններ տալէն ետքը՝ երկրորդ օրը աղջիկը  
հետը առած՝ ճամբայ ելաւ : Արբոր տե-  
ղերնին մօտեցան նէ , Խսահակը դիմացնին  
ելաւ՝ որ դաշտի վրա մտածական ու ա-  
ղօթք կրնէր Ա՛յ : Օտառան պատմեց բո-  
լոր եղած բաները ու Ա՛յ յաջողութիւր :  
Խսահակ ընդունեցաւ Աւերեկան Ա՛յ ու  
հօրը Աբրահամին ձեռքէն իրեն կնութեւ ,  
ու հաւատարմութիւնով՝ մեծ գութով ու  
սիրով ապրեցաւ իրին հետ բոլոր կենացը



մէջը: Հոս տեղս յայտնի կերևնան Ար-  
րահամին խելացի զգուշութիւն՝ ծառային  
հաւատարմութիւն՝ Իսահակին բարեպաշտ  
հնազանդութիւն՝ ու ԱՅ սբէ կամբքը, որ  
ամմէն կերպով յաջողեց աս կոչումը ու  
վիճակը: Օհնն. իբ:

Խրտտ իբ իէնացը վեճով հը բնորէլու զս:

ա. Աս ընտրութիւն շատ հարկաւոր  
բան է: Աժ անանկ կարգ դրած է, որ  
տեսակ տեսակ վիճակներ գտնուվին, ու  
ինքը ամմէն մէկը մասնաւորապէս անանկ  
վիճակի մը կըսահմանէ, ու անոր մէջը  
իրենց անանկ մասնաւոր շնորհքներ կը-  
պատրաստէ. որ կարող ըլլան փրկութե  
հասնիլ<sup>1</sup>). անոր համար աս վիճակը ճանչ-  
նալը շատ հարկաւոր բան է. շատ անկար-  
գութիւնները անկից յառաջ կուգան, որ  
շատերը անանկ վիճակ կըմտնեն, որուն  
յարմար չեն, ու Աժ ալ զիրենք անոր  
կանչած չէ:

Բ. Աս ընտրութիւն աղէկ ընելու համար  
պէտք է նախ՝ աղօթքով, աղաչանքով ու  
շատ անգամ խորհուրդներ ընդունելով

---

1. Ոչ եթէ անձամբ որ անու պատիւ. այլ կո-  
չեցեալն յԱստուծոյ՝ որպէս և Ահարոն. ԱժԷ.  
Է. 4:

ՄԾ հետ խորհրդակցիլ<sup>1)</sup>: Արկրորդ՝ ինք  
իրեն իր կարողութիւնը ու բերմանը հետ  
խորհրդակցիլ, շահասիրութիւնը՝ հպարտու-  
թիւնը ու անկարգ կիրքերը մէկ դի ձգելով:  
Արրորդ՝ բարեպաշտ, իմաստուն ու զինքը  
աղէկ ճանչցող կառավարի մը խորհուրդ  
հարցունել: Օնօղքներն ալ պարտըկան  
են իրենց զակրներուն չար ընտրութիւն  
խափանելու, ու անոնց ՄԾ կօչմանը հե-  
տևելու ատենը իրենց դէմ չիկենալէն  
ետքը՝ ձեռքերնէն եկածին չափ ալ իրենց  
օգնելու:

Գ. Մսանկ կարգաւորեալ ընտրութիւն  
ՄԾ կամքը ճանչնալէն ետքը արիութիւնով  
հետևելու է: Վլխաւորաբար իր վիճակին  
պարտքերը կատարելու միտ դնելով, որուն  
մէջ որ ՄԾ զինքը կանչած է<sup>2)</sup>: Մեր սրը-  
բութիւնը աս բանիս մէջը պիտոր երևնայ,  
ասկէ դուրս ջերմեռանդութիւնը, որ մեր  
վիճակին պարտքերը ու հարկաւոր դործ-  
քերը կրխափանէ, սուտ ու խաբէական է<sup>3)</sup>:

### ( ) Բնակ:

Պատանի մի ՄԾ ազգեցութիւնով, ծնօղք-  
ները՝ ազգականները ու ամմէն բանը թու-

1. Յոյց ինձ ճանապարհ յոր գնացից . Սողմ . 617 . 8:

2. Չգոյշ լեր սպասաւորութեդ՝ զոր ընկալար ՚ի  
Տը, զի գայդ կատարեսցես . Սողմ . 7 . 17:

3. Չպաշտօնդ քո կատարեալ կալ . Է . Տիմոթե . 7 . 5:

զուց , գնաց՝ աղէկ վանք մը մտաւ , ու ըս-  
 կըսաւ մեծ ջանքով ու խոնարհութիով Մ<sup>Յ</sup>  
 ծառայելու : Հայրը ուրիշ զաւակ չունե-  
 նալով աս բանս իմացաւ նէ , շատ տրտմե-  
 ցաւ ու յուսահատեցաւ : Անոր համար Մ<sup>Յ</sup>  
 վախը՝ ու իր հոգւոյն փրկութիւն վնասը մէկ  
 դի ձգեց , ելաւ գնաց ան վանքը , ու խա-  
 բէութիով մը հրաման առաւ տղուն հետ  
 խօսելու համար . յառաջ սկսաւ անուշու-  
 թիով ըսել տղուն , որ տուն դառնայ , իր  
 մահաւանքը պատճառ չըլլայ , վնդի իրմէն  
 ուրիշ զաւակ չունենալուն համար իրեն  
 շատ մեծ ցաւ կըլլայ կոր առ բանը : Աղոր-  
 մելի պատանին աս խօսքերուն յառաջ  
 ականջ չիդրաւ , ու պատասխան տրւաւ  
 հօրը , որ Մ<sup>Յ</sup> իր անսահման ողորմութիւնը  
 ու շնորհքովը զիս կանչեց , աշխրբի ու-  
 նայնութիւն խալըսեց , ու իր սք ծառայու-  
 թիւր մէջ բերաւ , չեմ կրնար ասիկայ  
 թողուլ , ու նորէն խաբէութիւններու և  
 որոգայթներու մէջ մտնել : Բայց երբոր  
 տեսաւ , որ հարը լալ սկսաւ նէ , խաբ-  
 վեցաւ , միտքը դարձաւ , ու որոշեց ան սք  
 կոչումը թող տալու : Արօնաւորները ա-  
 սոր խաբվելը իմանալով՝ զինքը առանձին  
 խրատեցին , երկնաւոր հօրը սք ծառայուիլը  
 թող չիտալու , բայց օգուտ չընելով՝ կրօնի  
 զգեստը փրայէն հանեցին ու թող տրվին

որ երթայ : Հօրը տունը շատ ազատու-  
թիւներ գտնելով քիչ ժամանակի մէջ  
զինքը շատ մեղքերու և մոլութիւներու  
տրվաւ : Քայց ամիս մը ասանկ մոլութիւնե-  
րու մէջ ապրելէն ետքը՝ օր մընալ հօրը  
հետ մէկ տեղ ուրախութե մը տեղ գրտ-  
նըված ատենը՝ յանկարծակի երկուքին  
վրան մէկ տեղ կաթմված իջաւ, ու առանց  
խոստովանանքի և ուրիշ հոգևոր պատրաս-  
տութիւններու մեռան : Աս եղաւ ողորմելի  
ու դժբաղդ հօրը ու խարմված տղուն վախ-  
ճանը : Հենրիկոսը իւրապէս՝ հայելի, օրինա-  
կացին Ռջլ :

## ԳՒՂՈՒԽ Ե

ՉԸՐԻ՛Ն ՓԸԽՉՆԻՂՈՒ՛Ն  
ՈՒ ԻՇԸԻ՛Ն ԳՈՐ՝ՕՆԻՂՈՒ՛Ն ՎՂԸ

ԵՈՋԻ ՀԵՄԸՐ

ՍԵՂՃԻ ՎԵՄ :

հ. Ո՞ր չարն է, որ ամմէն բանէն ա-  
ւելի պարտրկան ենք ատելու :

ա. Սեղքն է :

հ. Սեղքը ի՞նչ է :

ա. Այ՛ս օրինացը դէմ անհնազանդուի մի է :

հ. Քանի՞ տեսակ մեղք կայ :

« . Արկու՛ սկզբնական ու ներգործական :  
հ . Ո՛րն է սկզբնական մեղքը :

« . Ա՛ն մեղքն է , որով կրճնանինք , և  
որով մեր նախահայրը Ադամ իր անհնա-  
զանդութիւնը զմեզ յանցաւոր ըրաւ :

հ . Ա՛մէն մարդ աս մեղքով կրճնանի :

« . Հրամմերես , ամմէն բնական ճամբով  
ծնած մարդը աս մեղքով կրճնանի , մինակ  
սիւն Ա՛ծածնայ համար սիւն եկեղեցին բարե-  
պաշտ կարծիք ունի , որ առանց սկզբնա-  
կան մեղաց յղացաւ՝ անոր համար ալ անա-  
րատ յղութե տօն դրած է , ու մեծ հան-  
դիսութիւնով կրկատարէ : Ու սիւն Յովհան-  
նէս մկրտիչն ալ սիւն Ա՛ծածնայ այցելութիւն  
իր մօրը արգանդը մաքրելեցաւ :

հ . Ի՞նչ բանով ազատած ենք սկզբնական  
մեղքէն :

« . Սիւն մկրտութիւնով :

հ . Ո՛րն է ներգործական մեղքը :

« . Ա՛ն է , որ մենք մեր կամօքը ու ազա-  
տութիւնը կրգործենք :

հ . Բանի՞ տեսակ ներգործական մեղք կայ :

« . Արկու՛ մահացու ու ներելի :

հ . Ո՛րն է մահացու մեղքը :

« . Ա՛ն չարն է , որ մեր հոգին կրմեռցու-  
նէ սրբարար շնորհքէն զրկելով , որ մեր  
հոգւոյն կեանքն է , ու դժոխքի արժանի  
ընելով , որ մեր յաւիտենական մահն է :

հ. Մըն է ներելի մեղքը :

դ. Ան պակսութիւն է, որ Ա՛յ շնորհքը կորսընցունել չիտար, բայց կը պակսեցունէ, զմեզ ժամանակաւոր պատիժներու պարտական կընէ, որ կամ աշխրբին մէջը կամ մահուանէ ետքը քաւարանը պիտի քաշենք :

Հրեշտակներուն ու Վաթուգոյրնոսորին  
Տեղէններուն պատմութիւնը :

Ա՛ծ հրեշտակներուն անթիւ բազմութիւնը ստեղծելէն՝ ու գերազանց պարզեներով զարդարելէն ետքը՝ իրենց հաւատարմութիւնը փորձելու համար զիրենք թող տրվաւ, մէկէն երանութեան չիհասցուց : Ա՛րուսեակը՝ անոնց մէջը երևելիներուն մէկը, որ հիմայ սագայէլն է, իր մեծուեր ու գեղեցկութեւնը վրա հպարտանալով Ա՛յ փառք տալուն տեղը՝ ապստամբեցաւ, ամենևին չուզեց հնազանդիլ, ու մէկալ հրեշտակներուն ալ երրորդ մասին չափը իրեն հետ մէկ տեղ ապստամբեցուց, ու ասանկ գրեթէ երկինքը մեծ պատերազմ բարձրեցաւ, արուսեակը ու իր արբանեակները մէկ կողմանէ, սբ՝ Սիքայէլ հրեշտակապետը ու հաւատարիմ մնացող հրեշտակները մէկալ կողմանէ : Սագայէլը իր զօրքը պատերազմի կրկանչէր՝ ըսելով . Ա՛ր-



կինքը պիտոր ելլամ, աթուս աստեղներու վրա պիտոր դներմ, ու Ա՛յ պիտինմանիմ . ու Միքայէլ հրեշտակապետը իր երկնային զօրքերը պատերազմի շարժելու համար կըսէր . Ով կըրնայ Ա՛յ նման ըլլալ՝ ու իր հրեշտակներն ալ պատասխան կուտային՝ Սուրբ սուրբ սուրբ, Տէր զօրութեց : Ա՛ս խօսքերուն զօրութէ սաղայէլը ու իր սատանաները տկարացան՝ յաղթը վեցան, ու կայծակէն աւելի շուտով երկինքէն վար թափվեցան, ու դժոխքին յաւիտենական կրակը իջան, որն որ Ա՛ծ ապստամբներուն գլխուն ու ինքնահաւանութե ու ապստամբութե մէջ անոր հետեողներուն համար պատրաստած էր : Այ՛ հրեշտակներն ալ իրենց պատրաստըված արքայութիւն մտան : Ասայ . Կ . ԺԳ : Յայտ . ԺԷ : Գ . Ի . Ժ :

Աբուգոգոնոսորը օր մը իր պալատը պարտելով ինք իրեն ստանկ հպարտութիւնով մը կըպարծենար թէ . Ա՛սիկայ չէ սքանչելի մեծ Նարիլոնը, որ ես իմ կարողութիւնս շինեցի, իմ մեծութեան անմահ յիշատակը ձգելու համար : Ա՛ս խօսքը բերնէն հանած ատենը՝ իրեն երկինքէն ձան մը եկաւ . Ա՛ն կարողութիւն՝ որուն վրա որ կըպարծենաս կոր նէ . վրայէդ պիտի վերնայ, և դուն իալ գազաններու կարգ պիտի

մտնես, ու խոտ պիտոր ուտես, ինչւան  
ճանչնաս՝ որ Ա՛ծ մը կայ, որ Թագաւո-  
րութի՛ները կուտայ՝ որուն որ կուղէ նէ :  
Հպարտ Թագաւորին վրան անմիջապէս  
ամմէնը կատարվեցան, վնդի անարգ կեն-  
դանեոյ կարգ մտած՝ պալատէն վունտվե-  
ցաւ, անտառներու մէջ գնաց, ու վայրենի  
կենդանիներու հետ արածվելով խոտե-  
րով փորը կրկշտացունէր : Ա՛օթը տարիէն  
ետքը աչքը երկինքը վերցուց, միտքը  
վրան եկաւ, խոնարհեցաւ, Ա՛յ երկրպա-  
գութի՛ ըրաւ. Ա՛ծ ալ իր Թագաւորութի՛ր  
նորէն տրվաւ, իր արդարութի՛ր վկայ ըլ-  
լալու համար, որ հպարտները կըխոնար-  
հեցունէ, ու մեղքը սոսկալի պատիժնե-  
րով կըպատժէ : Ղաւնի . դ :

### Խորագր Տահացոս Տեղի Չլտ :

« . Սահացու մեղքը Ա՛յ ու բոլոր ա-  
նոր կատարելութի՛ներուն դէմ է<sup>1</sup>) . բայց  
մասնաւորապէս, նախ՝ ողորմելի ստեղծա-  
ծէ մի անարժան նախատի՛նք մի է Ա՛յ  
անսահման մեծութի՛ր դէմ, որ մէկ ան-  
ցաւոր հեշտութիւնը Ա՛յ բարեկամութե-  
նէ աւելի ընտրելով՝ չուղեր Ա՛յ հնազան-

1. Խղեցիք դու զկապանս քո. և ասացեր՝ Թէ  
ոչ ծառայեցից. Ա՛րհ. Բ. 20 :

դիւ<sup>1)</sup> : Արկրորդ՝ տղեղ ապերախտութի մի է ԱՅ դէմ, որմէն որ ամմէն բարեքը ընդունած ենք. անոր համար հարկաւ ու անսահման ատելութիով Աճ ամմէն բանէն աւելի մեղքը կատէ :

Բ. Անդքը մարդուն ամմէն օգուտներուն դէմ է, որ սրբարար շնորհքէն՝ բոլոր վաստրկած արդիւնքներէն՝ ու երկինքի իրաւունքէն կրգրկէ, որ անոնցմէ աւելի մեծ զրկում մը չիկրնար գտնուիլ : Ասկէ իղատ ալ զինքը շատ մեծ պատիժներու արժանի կրնէ, անանկ որ մեղանչելը մարդը ԱՅ բարեկամէն՝ ԱՅ թշնամի կրնէ, ու արքայութե՛ն ժառանգէն՝ դժոխքի յաւիտենական զոհ<sup>2)</sup> :

Գ. Աճ մահացու մեղքը պատժեց, նախ՝ ապստամբ հրեշտակներուն վրա՝ ամենևին իրենց բազմութե՛րը ու պատուոյն չինայելով, երկրորդ՝ Ադամին ու անոր զաւկրներուն վրա, երրորդ՝ յաւիտենական դժոխքին մէջը, ուր որ բոլոր անոնք ժողված են,

- 
1. Յիմարեցան երկինք վն այսորիկ և սոսկացան յոյժ՝ ասէ Տր : Զի երկուս չարիս գործեաց ժողովուրդն իմ. զիս թողին զազգիւր ջուրց կենաց. և փորեցին իւրեանց դուրս ծակոսս՝ որք ոչ կարեցեն ունել զջուր. Աճ. 12. 13 :
  2. Օանիցես և տեսցես՝ թէ չար և դառն է քեզ թողուն զիս՝ ասէ Տր Աճ. քո. Աճ. 19 :

որոնք որ մահացու մեղքի մէջ մեռած են ,  
չորրորդ՝ սք խաչին վրա , ուր պէտք եղաւ ,  
որ ՄԺ ու մարդ Յս Քս մարմնովը մեռ-  
ներ , որ մեղի համար երաշխաւոր եղաւ ,  
ու մեղքի համար զոհ . ասկէ կրննաս  
իմանալ , որ ինչպէս մեղքը անսահման  
չար է <sup>1)</sup> :

### Օրինակ :

Մղնրւական ասպետ մը , իր ստրուկ-  
դերը (բայաները) շատ կըչարչարէր ու  
կրնեղէր , և ուրիշ շատ մահացու մեղքե-  
րու մէջ ալ ինկած ըլլալով ժողովուրդը  
զինքը չէր ուզեր տեսնել : Վիշեր մի  
պառկած ատեննին ասոր սենեկապետը  
տեսիլ մը տեսաւ՝ որ իր տէրը Վսի դա-  
տաստանին առջևը ելաւ , որուն ըրած  
չարութիւնները ու մեղքերը շատ բազմու-  
թիով սատանաներ ամբաստանեցին , անոր  
համար դատաւորը զինքը յաւիտենական  
դժոխքը դատապարտեց : Մն ատենը սա-  
տանաները ասիկայ սաղայէլին առջևը  
տարին , որ Ռերէք պագնեմ զինքը՝ ըսաւ ,  
մեր սիրոյն ու բարեկամութեւ համար ,  
վսղի մեղի հնազանդեցաւ՝ միշտ մեր կամքը

1. Փախիր 'ի մեղաց իբրև յերեսաց օձի . . . .  
Ժանիք առիւծու են ժանիք նր . որ սպանա-  
նեն զհոգիս մարդկան . Նիլէս . Խ . 22 . 23 :

կատարեց՝ Ա՛յ կամքին չի՛հնազանդելով :  
 Ետքը հրամայեց , որ զինքը բաղնիք տա-  
 նին , վսճի փափուկ բաղնիքներու մէջ  
 հանգչիլը կըսիրէր . սատանաները շուտով  
 զինքը ծծումբով վառած լիճ մը նետեցին ,  
 ուսկից որ հանեցին զինքը սաղայէլին  
 հրամանաւը , ու կրակէ անկողինի մը վրա  
 պառկեցուցին , ետքը հրամայեց դժոխքի  
 իշխանը , որ իրեն Ա՛յ բարկութե՛ք բաժակը  
 խրմցունեն . սատանաները կրակով ու  
 ծծումբով խառնած խրմելիք մը խրմցու-  
 ցին իրեն : Սաղայէլը քանի մի սոսկալի  
 տանջանքներէն ետքը հրամայեց աղ-  
 նուականին՝ որ զինքը , իր հայրը , մայրը ,  
 ծնած օրը ու զԱ՛ծ անիծէ . աս ալ ըլլալէն  
 ետքը ըսաւ սատանաներուն , որ տանին  
 զինքը դժոխքին տակը իրեն համար պատ-  
 րաստրված աթոռը նստեցունեն : Սատա-  
 նաները տարին ողորմելի իշխանը խորունկ  
 ծակի մը մէջ նետեցին , ու նետելու ա-  
 տենը անանկ սաստիկ ու վախնալու ձան  
 մը ելաւ , որ սենեկապետը կարծեց՝ որ  
 աշխարհք կըվերջանայ կոր . ու ան սոս-  
 կալի ձանէն վախցած արթըննալով շուտ  
 մը տիրոջը սենեակը վազեց , ու տեսաւ՝ թէ  
 տէրը մեռած՝ ածուխի պէս սւեցած՝ գետնի  
 վրա կըպառկէր կոր . աս տեսնալով վա-  
 խէն մեռածի պէս գետինը ինկաւ , իմա-

նալով՝ որ տեսածը ճշմարիտ տեսիլք էր :  
Ետքը խելքը վրան եկաւ նէ՝ թողուց աշ-  
խարհքը ու ամէն բանը , վանք մը մտաւ՝  
ու իր հոգւոյն փրկութիւնը ետեւէն ինկաւ :  
Կէսաբիւսը իւրապէս :

ԵՐԿՐՈՐԴ ԷՆՍԵՐ

ՍԷՂԷԻՆ ԶԱՐԻՆՆԱԿՈՒԹԻՆԻՆԸ :

հ. Ներգործական մեղքը քանի՞ կեր-  
պով կրնայ գործըվել :

ա. Չորս կերպով՝ խորհրդով , խօսքով ,  
գործքով ու զանցառութիւնով :

հ. Ինչպէս կրմեղանչըվի խորհրդով :

ա. Երբոր մէկը ազատութիւնով հաւանու-  
թի կուտայ սրտին մէջը ան բանին , որ ԱՅ  
օրինացը դէմ է , ինչպէս՝ եղբօրը չար  
ուղել :

հ. Ինչ է զանցառութե՛ն մեղքը :

ա. Պարտրկան եղած բանի մի մէջ պակ-  
սիւն է , որ մէկը իր յանցանքովը կրնէ .  
ինչպէս՝ տօնի ու կիրակի օրերը պատարագ  
չիտեսնալ :

հ. Ինչո՞ւ կրսես՝ իր յանցանքովը :

ա. Անոր համար՝ վնդի թէ որ մէկը՝ օրի-  
նակի համար , չիգիտնալով առանց իր  
յանցանքին որ ան օրը տօն է , կամ օրի-



նաւոր արգելք մը ունենալով ան օրը պատարագ չիտեսներ նէ՝ չիմեղանչեր :  
Է. Արբեմն ուրիշին մեղքն ալ մեզի կըր-  
նայ սեպվիլ :

Պ. Հրամներես, երբոր մեր յանցանքովը իրեն պատճառ կըլլանք նէ :

Է. Քանի՞ կերպով ուրիշին մեղքին պատ-  
ճառ կըրնանք ըլլալ :

Պ. Վխաւորաբար եօթը կերպով՝ չար օրինակով, չար խորհուրդ տալով, չար հրամայելով, չարին հաւնելով, չար գործօղները գովելով, անոնց մասնակից ըլլալով, ու կըրցած ատեննիս զանոնք չար գեղով :

Վասն-ի՞ն ժողովուրդը համբէլ փառաւ համար պատժելէ-լու-ն պատճառ-ի՞ն :

Վաւիթը աւելորդ հետազրգուիով մը իր ստորակարգեալներուն թիւը գիտնալու համար հրամայեց Յովաբ զօրապետին, որ երթայ բոլորը համբէ : Յովաբը աս աշխատանքին անօգուտ բան ըլլալը յարգութիով մը իրեն իմացուց . բայց Վաւիթ մտիկ չըրաւ, ուղեց, որ իր հրամանը կատարէ : Յովաբ հնազանդեցաւ, քանի մի պաշտօնատէրներով բոլոր Վարայէլի ցեղերը պտըտեցաւ, ու եկաւ Վաւիթին պատմեց, որ մինակ կտրիճ մարդիկ-

ները՝ որ կրնան զէնք տանիլ՝ ու պատե-  
րազմել, Իսրայէլի մէջ ութը հարուր հա-  
զար՝ ու Յուդայի մէջ հինկ հարուր հազար  
էին: Ղաւիթը անմիջապէս ճանչցաւ, որ ը-  
րածը աւելորդ բան էր՝ զղջացաւ, ու Մս-  
տուծմէ թողուի ուղեց: Իսայց Մ<sup>ծ</sup> Ղադ  
մարգարէին բերնով՝ ըրած յանցանքին  
համար իրեն իրեք պատիժ առաջարկեց,  
որ մէկը ընտրէ. կամ իր երկիրները իրեք  
տարի սով ըլլայ, կամ իրեք ամիս դժբաղդ  
պատերազմ, կամ իրեք օր սաստիկ մահ:  
Ղաւիթը խոնարհեցաւ, աւելի աղէկ սե-  
պեց մահը ընտրել՝ ու Մ<sup>յ</sup> ձեռքը լյնալ  
անոր անսահման գթութեւնը ապաւինելով:  
Սահը առտրւանց սկսաւ՝ ու ինչւան կէս-  
օրը բոլոր թագաւորութեւնը մէջ եօթա-  
նասուն հազար հոգի մեռան: Կէսօրը Ղա-  
ւիթ Մ<sup>յ</sup> հրեշտակը տեսաւ, որ սուրը  
Երուսաղէմի վրա երկնցուցած՝ կուզէր  
կոր հոն ալ զարնել, շուտով ծունկ չօքե-  
ցաւ, ու ըսաւ. Տէր՝ մեղքը ես ըրի, ա-  
սոնք յանցանք չունին, զիս ու իմ տունս  
զարկ, ու պատժէ, բայց ասոնց օղորմէ:  
Ան ատենը Ղադ մարգարէն հրամայեց  
իրեն, որ հրեշտակին երեցած տեղը սե-  
ղան մը շինէ, ու հոն տեղը Մ<sup>յ</sup> զոհ մա-  
տուցանէ: Ղաւիթ հրամանը կատարեց,  
հրեշտակն ալ սուրը պատեանը դրաւ, ու

մահը դադրեցաւ : Ասիկայ յայտնի օրինակ է ներելի մեղքին տրված վնասին , որ իրաւցընէ աւելի մեծ է անչափ մարդիկ-ներուն մահէն : Բ . Թագա . Էդ : Թ . Սնայոր . Է :

Խորատի հերելի Տեղին Չրո :

Թ . Շատերը ներելի մեղքէն քիչ կը վախնան <sup>1)</sup> . բայց մահացու մեղքէն վերջը ներելին ալ ինք իրմէն մեծ ու ճշմարիտ չար է . վնդի ան բանը՝ որ զՎճ կը վշտացունէ՝ չար է . Այ բաղդատութիւնը մնացած բաները ոչինչ են . անանկ որ կարելի ըլլար ներելի մեղքով մը աշխարհքը կործանումէն ազատել նէ , պէտք չէր ան ներելի մեղքը ընել :

Բ . Սեղի նայելով չիկայ ներելի մեղք մը որ գիտութիւն գործըված ըլլայ , և Այ ու մեր մէջը պաղութի չիձգէ՝ խորհուրդներէն ու ներողութիւններէն հանելու պրտուղներուն մէկ մասը չարգելու . և կամ աս աշխարհքը կամ քաւարանը պատիժ քաշելու զմեզ չիպարտաւորէ <sup>2)</sup> . ինչու որ

1. Բագում ինչ յանցանեմք ամենեքեան . Զ-Է . 2 :

2. Բնդ ամ դատարկ բանի՝ զոր խօսիցին մարդիկ , տացեն համար . Սար . Ժ . 36 :

Այ արքայութիւնը անօր քան չի կրնար մտնել :

Գ. Արքոր ներելի մեղքերը ուղղելու միտ չենք դներ նէ՝ անոնք քիչ քիչ մահացուններուն ճամբայ կրբանան, ինչպէս պղտիկ հիւանդութիւնները չի հոգալով մահւան կրտանին մարդը : Ասկէ իզատ ալ մարդը վտանգաւոր գաղջութիւն մը մէջ կը ձգեն, որ շատ անգամ ան գաղջութիւն ազատիլը ներելի մեղքէն ազատելէն աւելի դժար կը լլայ<sup>1)</sup> :

### Օրինակ :

Սանկիա Վարիլիա անունով կին մի Հայր Յովհաննէս Աւիլային խրատովը աշխրքի բոլոր ունայնութիւնները թողուց, խիստ ապաշխարութիւն մը սկսաւ, ու շատ տարիներ աղօթքով, պահքով ու ծովով անցունելէն ետքը Այ աղաչեց՝ որ իր հոգւոյն վիճակը ցուցունէ իրեն, որ իր մեղքերուն տգեղութիւնը ալ աղէկ իմանալով՝ աւելի զգվի ու լայ անոնց վրա : Իրիկուն մը իր գաւիթը գուռը բաց նստած ատենը տեսաւ, որ առջեւէն ճերմակներ հագած՝ պարկեշտ կերպարանքով ճգնա-

---

1. Այլ դու գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ ցուրտ, հանդերձեալ ես փսիլ ի բերանոյ իմմէ .  
Յոյս. 7. 16 :

ւոր մի կանցնէր: Աւշ ատեն ասանկ հազ-  
ված մարդ մը տեսնելով յառաջ վախցաւ,  
բայց վերջը ինքը զինքը ժողվելով, սիրտ  
առաւ, ու հարցուց իրեն. որ Հայր՝ ի՞նչ  
կրօնատուես աս ատեն հոս տեղս: Ճգնա-  
ւորը պատասխան տրվաւ վերարկուս վեր  
վերցուր, ու կիմանաս: Արցուց վերար-  
կուն, ու տեսաւ, որ տգեղ ու զզուելի  
աղջիկ մանուկ մի կար երեսը բոլոր գար-  
շելի ճանճերով լեցված. հարցուց իրեն,  
որ ի՞նչ կընշանակէ ան տգեղ մանուկը.  
Ճգնաւորը պատասխան տրվաւ, Վուն չա-  
ղաչեցիր Մյ անչափ բաղձանքով քու  
հոգիդ քեզի ցուցունելու համար. նայէ՛ աս  
տգեղ մանուկին կերպարանքը, որ քու  
հոգիդ ալ ասանկ տգեղ է: Ճգնաւորը  
աս ըսաւ, ու աներևոյթ եղաւ: Մն բոլոր  
տգեղութիւր ու գարշութիւր, որ երեսը  
ծածկեր էին նէ, ներելի մեղքեր էին:  
Բօսսինեօլտի կրպտարէ ներելի մեղքերու վրա:

## ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՐ

Գլխաւոր մեղքերու վրա:

4. Քանի՞ են գլխաւոր մեղքերը:  
ա. Լօթն են՝ հպարտութի, նախանձ,  
բարկութի, ազահուցութի, ծուլութի, որ-  
կրամոլութի, բղջախոհութի:

- հ. Աստուծոյ ինչո՞ւ գլխաւոր կրտսիւնն :
- պ. Այլ ի՞նչ ուրիշ մեղքերուն գլուխները ,  
ու սկիզբներն են :
- հ. Հպարտութիւն ի՞նչ է :
- պ. Սեր վրա անկարգ համարում մի է ,  
որ անով վրանիս գտնուիմք բնական ու  
գերբնական պարգևները մեզմէ կարծելով  
մենք զմեզ ուրիշներէն աղէկ կըսեպենք :
- հ. Սախանձը ի՞նչ է :
- պ. Ուրիշին բարիքին վրա տրտմութի մի  
է , ու անոնց պատահած չարիքին վրա ու  
բախտութիւնն :
- հ. Բարկութիւն ի՞նչ է :
- պ. Սրտին մէկ անկարգ շարժումն է , որ  
կըպատահի մեզի եղած նախատինքի մը  
տածմունքէն , անոր քէնը առնելու բաղ-  
ձանքով :
- հ. Ազատութիւն ի՞նչ է :
- պ. Աշխարհի բարիքներու ու հարստութիւն-  
երու անկարգ սէր ու բաղձանք մի է :
- հ. Օուլութիւն ի՞նչ է :
- պ. Հանգչելու անկարգ սէր մի է , որ մեզի  
մեր հոգեւոր ու մարմնաւոր գործքերէն  
ձանձրութի կըբերէ :
- հ. Որկրամոլութիւն ի՞նչ է :
- պ. Ուտելու ու խմելու անկարգ բաղ-  
ձանք մի է :
- հ. Բղջախոհութիւն ի՞նչ է :



Մըջնայու մուլութի մի է, որ զմարդը մարմնոյ անկարգ հեշտութիներու ետեւն կըձգէ:

Հերովդէսին՝ Գեեզիին ու Սաֆսոնին  
պարտաւէրները:

Ագրիպպա Հերովդէս որ մի իր թագաւորական զգեստները հագած ժողովուրդին հետ կըխօսէր կոր. ժողովուրդը ասոր խօսքերը լսելով՝ սկսաւ կանչել, որ Մսիկայ մարդ չէ, ան մի է, որ կըխօսի կոր: Հերովդէսը Այ փառք տալու տեղը, որ ամեն փառքերը անոր մինակ կըվայլեն՝ ժողովուրդին ասանկ շողոքորթութիւր վրա հպարտացաւ, ու բոլոր փառքը իրեն առաւ: Ան բոպէի մէջ Այ հրեշտակը զարկաւ զինքը, բոլոր մարմինը որդնոտեցաւ, ու մեռաւ: Գործ. ԺԸ:

Գեեզի Աղիսէ մարգարէին սպասաւորը իր տիրոջը պէս աղքատութի չխտրելուն համար տեսնելով, որ անիկայ՝ Աեմանին պարգևները չընդունեցաւ, ինքը վաղեց, ու Աեմանը խաբելով, որ Աղիսէին տունը երկու օտարականներ եկան, անոր համար ան տըված պարգևներուն մէկ մասը հարկաւոր եղաւ, առաւ անկէ պարգևները ու գնաց պահեց: Բայց մարգարէն իմացաւ Այ յայտնելովը իր

ծառային ազահուածիը ու կեղծաւորուիը ,  
ու իր առջևը եկած ատենը , ըսաւ իրեն .  
Պատիժ քեզի , Նեւեմանին պարգևները  
առիր նէ , անոր բորոտուին ալ քու վրագ  
ու քու զաւկըներուդ վրան դառնայ : Աս  
խօսքը մարգարէին բերնէն ելածին պէս  
Վեեզիին բոլոր մարմինը բորով լեցվե-  
ցաւ : Դ . Թագա . Է :

Սամիսոնը՝ որ ինքը մինակ բոլոր  
փղշտացիները յաղթած էր , Վալիլային  
սիրուն համար իր կիրքերէն յաղթըվե-  
ցաւ : Փղշտացիները աս կնկան շատ մեծ  
պարգևներ խոստացան՝ զինքը խաբելով  
իմանալու համար , թէ ո՞ւր է ասոր ան  
սքանչելի զօրութիը , որ անով իրենց կը-  
յաղթէր : Սամիսոն քիչ մի ատեն խա-  
բէութիւն դէմ կեցաւ , իր զօրութիը Վա-  
լիլային չիյայտնեց , բայց վերջը անոր  
խաբերայ սէրին չիդիմանալով յաղթը-  
վեցաւ՝ ու յայտնեց իրեն , որ իր զօրու-  
թիը իր մազին հետ կապված էր : Վա-  
լիլան շողոքորթելով զինքը քնացուց , սա-  
փրիչ (պէրպէր) կանչեց , ու մազերը ա-  
ծիլել տրվաւ . ետքը փղշտացիները կան-  
չեց . անոնք ալ բազմութիով վրան թափ-  
վեցան , աչքերը հանեցին , զինքը եր-  
կաթներով կապեցին , ու բանտը դրին :  
Եր դժբաղդութե մէջը իր կիրքին առար-

կայէն հեռու մնալով՝ ըրած մեղքը ճանչցաւ, ու մաղերն ալ երկննալով՝ ուժը սկսաւ տեղը գալ: Վիղշտացիները որ մի իրենց Ղազոն չնձին տունը ժողոված ըլլալով՝ զինքն ալ հոն բերին ծաղը ընելու համար, ան ատենը աղաչեց Մ.Յ, որ իր առջի զօրութիւնը տայ իրեն, բռնեց երկու սիւները, որոնց վրա որ ան տունը կեցած էր, ու սաստիկ շարժածին պէս տունը կործանեցաւ, ինքը փլատակին տակը մնաց՝ մեռաւ, ու իրեն հետ բոլոր վիղշտացւոց նախարարները ու ժողովուրդը՝ որ հոն էին մեռան: Ղապառ. ԺԿ:

Խորասոս պատարայ՝ հարսպարութիւն ու հեշտութիւն  
ինքեւրոս վրա:

« . Պատուոյ կիրքէն փառամոլութիւն՝ կեղծաւորութիւն՝ վրէժխնդրութիւն և ուրիշ մոլութիւններ կը ծնանին<sup>1)</sup>: Մ.ս մոլութիւնը ուղղակի Մ.Յ գէմ կը պատերազմի, վնդի ամմէն փառքը պատիւը անոր են, ու անոր կրփայլեն, որ իր նախախնամութիւնովը բոլոր պարզէները ու մեծութիւնները կը բաժնէ: Բայց հպարտը Մ.Յ տրվածովը գոհ չըլլար, անոր համար Մ.ճ ալ աս մոլութիւն

1. Ակիզըն մեղաց ամբարտաւանութիւն է. Արշէ. Ժ. 15:

դէմ կը պատերազմի, հպարտները խոնարհեցունելով, ու անոնց խորհուրդները իրենց վնասին դարձունելով <sup>1)</sup> :

Բ. Հարստութե կիրքը կամ ազահութիւր Ա՛յ դէմ անիրաւութի մի է, անցաւոր բաները Ա՛յ բարեկամութէն ու տալու վարձքերէն աւելի աղէկ սեպելով, ընկերին դէմ ալ անիրաւութի է, անոր բաներուն բաղձալով, ու անոր պարտական եղած բաները չի տալով <sup>2)</sup>, ու իրեն դէմ ալ անիրաւութի է՝ անցաւոր ու սուտ բաներու համար իր հանգիստը ու խղճմը տանքը զոհելով :

Գ. Հեշտուն կիրքը մարդուն պատիւը վար կառնու՝ անասունի կրնմանցունէ <sup>3)</sup>, զվ՛ճ մոռցունել կուտայ, իր սրտէն ամմէն տեսակ բարեպաշտութե խորհուրդները կը ջնջէ, ու ամմէն մոլութիւններէն ու շարիքներէն աւելի իր դարձը կը դժարցունէ :

### () Երկնակ :

Արի զորիտ անունով հարուստ մարդ մը կար, որ շատ հպարտ՝ անգութ ու ա-

1. Ա՛ճ ամբարտաւանից հակառակ կայ, տայ շրնորհս խոնարհաց. — Պէր. է. 5 :

2. Ազահի ոչինչ է անգթութի. Ա՛յլէս. Ժ. 9 :

3. Հաւասարեաց անասնոց անմտից, և նմանեաց նոցա. Ա՛լ. էր. 13 :

գահ մարդ մի էր . ասիկայ ծանր հիւանդանալով երբոր մահւան մօտեցաւ նէ, սե մարդ մը երեցաւ իրեն, որ զինքը դժոխք տանելու համար եկած էր : Ասոր վախնալու կերպարանքէն սկսաւ ողորմելի հիւանդը գլխէն ինչւան ոտքը գողալ, ու սաստիկ վախէն նեղութեան քրտինքներ թափել, ու օգնութե կանչել իր տղան Սաքսիմոսը՝ որ սը Վրիգոր պապին ատենը կրօնաւոր եղած էր, և աղաչել՝ որ զինքը ան սեին ձեռքէն աղատէ, որ ժամանակ ունենայ չար վարքը փոխելու : Սաքսիմոսը քովն էր, բայց բան մը չէր տեսներ, ու իր հօրը օգնութի մի ալ չիկրնալով ընել կուլար ու կողբար . տան մարդիկները բոլոր քովը ժողվեցան, բայց անոնք ալ չէին կրնար բան մը տեսնել, մինակ գործողութիներէն կրճանչնային, որ երեցօղը սատանայ էր : Հիւանդը որ կողմը որ կրդառնար՝ ան սե մարդէ ան կողմը կրտեսնէր, որ ուրիշ ընկերներով մէկտեղ եկած կրսպասէր զինքը առնելու ու դժոխք տանելու համար : Հիւանդը սկսաւ յուսահատական ձանով պոռալ, որ մը սպաշխարութե ժամանակ ուղելով, բայց ինչ օգուտ սատանան խղղեց զինքը, ու հողին առաւ՝ դժոխքը տարաւ : Սը Վրիգոր պապը կրսէ, որ օր մը ալ

ապաշխարուէն ժամանակ չխորվիլը յայտնի  
նշան էր, որ ան ատենը արդէն դատա-  
պարտըված էր : Ու ինչը իւրապէս  
պատահեալէն էր :

## ՉՈՐՐՈՐԳ ԼԱՍՆԸ

Լոգի «Էնի դէմ. Ի «-ընչ Տեժ Տեղէնը»  
վրա :

Կ. Քանի՞ են Լոգի սքին դէմ մեղ-  
քերը :

Պ. Ա եց են՝ յուսահատուի, յանդգնուի,  
յայտնի ճշմարտութեան դէմ կենալ, ընկե-  
րին շնորհքին վրա սաստիկ նախանձիլ,  
մեղքի մէջ յամառութի (ինատ), ու ան-  
զղջուի, այս ինքն՝ ինչչան վերջը չիղղջալ :

Կ. Քանի՞ են Մի դատաստանը բողոքող  
(չէքվա ընող), ու արդարութի ուղղ  
մեղքերը :

Պ. Գլխաւորները չորս են՝ կամաւ մարդ  
մեռցունել, աղքատներու՝ որբերու և  
սյրիններու դէմ անիրաւութի ընել ու զի-  
րենք նեղել, վարձկաններու վարձքը կը-  
տրել, ու ան դարչելի մեղքը, որ Սողոմ  
Գոմորի վրա երկինքէն կրակ իջեցուց :

Կ. Արժնք են սովորական մեղքերը :

Պ. Շատ անգամ դործելով սովորութի  
եղած մեղքերն են, որ շատ դժար կուղ-



ղումինն , անոր համար հարկաւոր է չար սովորութիւններուն յառաջուց դէմ կենալ , ու դժբաղդութիւնով կրպատահի նէ՛ անմիջապէս զղջալով ուղղել :

հ . Որո՞նք են պարզ շարութեան մեղքերը :

ա . Սեր ազատութիւնով , կամքով , մտածելով՝ խղճմտանքնիս դրդելուն դէմ գործած մեղքերնիս են :

հ . Ի՞նչ տարբերութի կայ շարութեան ու տկարութեան մեղքերու մէջ :

ա . Արկուքն ալ մեղք են , բայց շարութեան մեղքերը շատ ծանր են :

հ . Տգիտութիւնը մեղքէն կազատէ՞ :

ա . Ընյաղթելի տգիտութիւնը կազատէ , բայց թէ որ մէկը կրնայ ու պարտրկան է սորվելու՝ և չխտրվիր նէ , չկրնար արդարանալ :

Բարոյաւորութեան լուրջ անորոշումներ :

Նարոյ գոչոնոսորին տղան Բաղտասար իր թագաւորութեան մեծերէն հազար հոգւոյ երեւելի սեղան մը տալով , հրաման տրվաւ՝ որ իր հօրը Արուստղէմի տաճարէն յափշտակած բոլոր ոսկի ու արծաթ ամանները հոն բերեն՝ սեղանին վրա դնեն : Ուր որ ինքն ալ նստած ըլլալով , սկսաւ անոնց մէջէն իր կնիկներով ու պաշտօնատէրներով մէկտեղ գիտի խմել ու

չածները օրհնել ու փառաւորել : Բայց շատ չանցաւ վրան՝ յանկարծակի մարդու մը ձեռք երևցաւ, որ պատին վրա խորհրդաւոր գիր մը կը դրէր : Թագաւորը աս տեսնելով տակն ու վրա եղաւ, շատ վախցաւ, հազար կերպ խորհուրդներով ներզնքով՝ երեսին դունը նետեց, ու ոտքէ ինչւան գլուխը դողալ սկսաւ : Հուտով բոլոր կախարդները ու մոգերը կանչեց, բայց և ոչ մէկը կրօցաւ ան խորհրդաւոր գիրը մեկնել : Ատքը Ղանիէլ մարգարէն կանչեցին, ու հարցուցին, որ թագաւորին ըսաւ . Տէր իմ՝ ան ամենակարօղ Մ. ճը՝ որ քու հարդ անչափ մեծցուցած էր, նոյն Մ. ճը անչափ ալ զինքը խոնարհեցուց, որ կենդանիներու կարգ խոթեց՝ երբոր զինքը հպարտացած տեսաւ : Հիմայ դուն ալ որովհետեւ ան բաները գիտնալով աղէկ պտուղներ տալուն տեղը Մ. Յ դէմ հպարտացար, որուն ձեռքն է քու թագաւորութիւնը ու կեանքդ, ու անոր տաճարին սք ամաններովը դուն քու կնիկները ու իշխաններդ գինի խմեցիր, ու պղծեցիր զանոնք, ու ոսկիէ, արծըթէ, քարէ, փատէ սուտ անոնք պաշտեցիր : Մ. նոր համար կշտեց զքեզ Մ. ճ՝ ու պակաս գտնելով, քու թագաւորութիւնը վերջացուց, երկու բաժնեց, Սորաց ու Պարսիկներուն

տրվաւ . աս է թագաւոր՝ ան քու տեսած բառերովդ նշանակված վճիռը՝ Սանէ, Բէ-  
 կէդ, Ժորէս : Թագաւորը՝ Ղանիէլին իմաս-  
 տութեւր վրա զարմացաւ , իրեն միառաւոր  
 զգեստներ հագցուց , ու քարոզ կարգալ  
 տրվաւ , որ Ղանիէլը իր երրորդն է : Ան  
 գիշերը թագաւորը մեռցուցին , ու անոր  
 տեղը Ղարեհը անցաւ : Ան ալ Ղանիէ-  
 լը իր իշխանութեանը մէջ հաստատեց :  
 Աս պատմութե մէջ Ռադասարին շիո-  
 թութիւնը կերէնայ յանցաւոր խղճմը-  
 տանքին շիոթութիւնը , ու պատին վրա գրը-  
 ված վճռով աւետարանի մէջ մեղաւորին  
 դէմ գրված վճիռները : Ղանիէլը օրինակ  
 է Այ պաշտօնէին , որ աւետարանը կրմեկ-  
 նէ : Ղանի . է :

Խրատ խղճարանքին գրգռելուն ջրա :

« . Խղճմտանքը սոսկալի է իր ազդե-  
 ցութիւները մտիկ չընելով մեղանչող մե-  
 ղաւորին դէմ խօսած ժամանակը<sup>1)</sup> , վնդի  
 զինքը անպատասխանի կրնէ բոլորովին ,  
 անանկ ալ սոսկալի է անոր՝ որն որ մեղքէն  
 դառնալ չուզելով խղճմտանքին խածնելը  
 կրմերժէ , ու Այ անգին շնորհքը՝ որ զին-  
 քը մեղքէն ազատելու կրջանայ , չարաչար  
 կրգործածէ : Անոր համար ալ խղճմտանքը

1. Մեղք իմ առաջի իմ են յիմ ժամ . Սալ. 7. 3 :

իր դատապարտութիւնը՝ իր տանջանքը ու իր կանխիկ (փէշին) դժոխքը կը լլայ<sup>1)</sup> :

Բ. Խղճմտանքը աւելի սոսկալի է լուսածատները . ասիկայ կը պատահի՝ երբոր մեղաւորը կամ իր կամօքը անոր զարնելը կարգելու , կամ զարնելուն չանսալով ձայնը կը տկարացունէ , և կամ զինքը անարգելով՝ համարձակ մեղանչելու համար իրեն ծուռ խղճմտանք մը կը շինէ : Եւ բանս աս աշխրբի պատիժներուն մէջը ամմէնէն մեծ պատիժն է , որ մարդը վերջին անգղջութիւն կը տանի<sup>2)</sup> :

Գ. Խղճմտանքը , նախ՝ Ե.Յ դատաստանին առջեւ անսահման սոսկալի պիտորը լլայ , վնդի մեղաւորին դէմ պիտոր ամբաստանէ . երկրորդ՝ դժոխքի մէջը , որ խածնօղ որդ մի եղած՝ դատապարտեալը յաւիտեան պիտոր խածնէ , որ իր զարնելովը ու Ե.Յ շնորհքովը կը ընար մեղքերէն դառնալ , ու չուզեց . դժոխքին մէջը խրղճմտանքը լուել տալը , կամ անոր խօսելէն բարի պտուղ հանելը որչափ անկարելի պիտորը լլայ նէ , անչափ ալ աւելի սոսկալի պիտորը լլայ անոր յանդիմանելը<sup>3)</sup> :

1. Ո՞չ ապարէն թէ ուղիղ մատուցանես . և ուղիղ ո՞չ բաժանես՝ մեղար . Օճ. Գ. 7 :

2. Եւսկարիչան ամաչէ . և ոչ գտցէ համարձակութիւն . Եւսկ. ԺԳ. 5 :

3. Ուր սրգն նոցա ոչ մեռանի . Սճ. Բ. 48 :

Օրինակ :

Այն Սարիամ Անիէսին մայրը գիտնալով՝ որ իր ծնօղքը զինքը անիրաւ վաստակով, վաշխառութիւնով ու խաբէութիւնով կրպահեն կոր, խիղճ կընէր իրեն. բայց կարծէր, որ ինքը շատ ողորմութի տալով՝ ու բարեգործութիւններ ընելովը կրնայ փրկութե հասնիլ՝ բոլորովին անհոգ կրկենար : Այլ աշխրքի կարգ ալ մտնալով իր կեանքը բարիքներ գործելով, ու ողորմութիւն տալով կանցունէր, աղօթելով միայն Ա՛յ՛ որուն դատաստանը անքննելի է, որ փրկէ իր հոգին, յաւիտենական դատապարտութի, ու ասանկով առանց իր հոգւոյն յայտնի վտանգին, ճար մը հոգալու ինչպէս, որ իր խղճմտանքն ալ կըզարնէր, մեռաւ : Անհաւանէ ետքը աղջիկը սը Սարիամ Անիէս իր մօրը հոգւոյն փրկութեը վրա շատ վախի մէջ ըլլալով՝ աղօթքով ու աչքի արցունքներ թափելով աղաչեց Ա՛յ՛, որ անոր հոգւոյն վիճակը իրեն յայտնէ : Օր մը ալ ժամը խորանի առջևը պատարագ տեսնելու համար սպասած ատենը՝ իրեն սև հոգի մը երեցաւ : Սարիամ շուտ մը երեսը խաչ հանեց, վախը մէկդի ձգեց, ու հարցուց իրեն, որ ինքն ո՞վ է : Հոգին՝ Աս քու

մարդ եմ՝ ըսաւ : Հարցուց իրեն . որ Սա-  
րիկ ի՞նչպէս ես . հոգին պատասխան տը-  
վաւ . Եւտ գէշ եմ . քու աղօթքներդ չի-  
կրօցան ինձի օգնութի մը ընել . վնդի յա-  
ւիտեան դատապարտըված , ու դժոխքի  
մէջն եմ : Այն մարիկ՝ ըսաւ սք աղջիկը ,  
ի՞նչ պատճառի համար դատապարտեցար :  
Սայրը պատասխան տրվաւ , Արուհեաւե  
իմ ծնողքս անիրաւ վաճառականութիով՝  
վաշխառութիով ու ասոնց նման չար վաս-  
տակներով պահած էին զիս , ես ալ ասոնք  
բոլոր գիտէի , ու անհոգ կեցայ , անիրա-  
ւութի վաստրկած բաները տէրերնուն չի-  
գարձուցի , ու չարգելեցի ալ ան չարիք-  
ները , որ իմ պատճառաւս Մ.Յ հրամանին  
ու իրենց հոգիներուն փրկութեը դէմ կը-  
գործէին . ու ես ալ իրենց վնասակար ու  
դատապարտուն ճամբուն հետեւելով՝ քու  
խրատներդ չիպահեցի . ասոր համար Մ.Յ  
արդար դատաստանաւը դժոխքի յաւիտե-  
անական կրակին դատապարտեցայ : Աս-  
լէւհաս Էպիստոպոսը իւրապէս Տեղաւնէրու  
Գրքին Տեղ. Գլ. Ժդ :



ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ՀԱՄԱՐ

Առաքինութիւնք զես :

Հ. Փրկութեան հասնելու համար չարէն  
փախչիլը բաւական է :

Պ. Այն, պէտք է բարին ալ ընել, ու  
առաքինութիւն գործել :

Հ. Որ առաքինութիւնները աւելի հարկա-  
ւոր են փրկութեան հասնելու համար :

Պ. Աճաքանական ու կարգինարական ա-  
ռաքինութիւնները :

Հ. Որո՞նք են աճաքանական առաքինու-  
թիւնները :

Պ. Աս իրեքն են՝ հաւատ, յոյս, սէր՝ որ  
ասոնց վրա յառաջ խօսեցանք :

Հ. Ասոնք ինչո՞ւ աճաքանական կրօնին :

Պ. Այն իրենց պատճառն ալ առարկան  
ալ Աճ է :

Հ. Հաւատոյ ներգործութիւն մի ըրէ :

Պ. Աճ իմ՝ ես կը հաւատամ հաստատապէս  
բոլոր ան բաներուն՝ որ սք կաթուղիկէ  
առաքելական ու հռոմէական եկեղեցին  
կը հաւտայ ու կը սորվեցունէ, վնդի զանոնք  
բոլոր դուն յայտնած ես, որ ինքդ ճշ-  
մարտութիւն ես, ու չես կըրնար խաբւիլ  
կամ խաբել զիս :

Հ. Յուսոյ ներգործութիւն մի ըրէ :

Պ. Աճ իմ՝ ես կը յուսամ կատարեալ յու-

սով քու բարութեդ ու խոստումներուդ մէջը հաւատարմութեդ, որ մեր փրկիչը Յս Բնին արդիւնքներովը ինծի աս աշխարհի մէջ պէտք եղած շնորհքները կուտաս, ու անդին քու սք արքայութեանդ փառքը պիտի տաս :

Կ. Արդոյ ներգործութի մի ըրէ :

Պ. Ա՛ճ իմ՝ ես բոլոր սրտովս ու բոլոր կարողութիւս ամմէն բանէն աւելի կրտիրեմ գքեզ, մնղի անսահման սիրելի ու կատարեալ ես, ու հազար անգամ կուզեմ մեռնիլ գքեզ չիւշտացունելու համար, ընկերս ալ կուզեմ ինծի պէս սիրել քու սիրուդ համար :

Կ. Քանի՞ են կարդինարական առաքի՛նութիւնները :

Պ. Չորս են՝ խոհեմութի, արդարութի, արիութի ու բարեխառնութի :

Կ. Խոհեմութիը ի՞նչ է :

Պ. Առաքինութի մի է, որ մեզի ճշմարիտ ու ստոյգ միջոցները ընարել կուտայ մեր վախճանին հասնելու համար, այս ինքն՝ ճշմարիտ չարէն փախչելու ու ճշմարիտ բարին ընելու համար :

Կ. Արդարութիը ի՞նչ է :

Պ. Առաքինութի մի է, որ մեզի հատուցանել կուտայ ամմէն մէկին մեր պարտքերը, այս ինքն՝ Ա՛յ ու ընկերին :

Է. Արիութիւնը ի՞նչ է :

Պ. Առաքինութի մի է, որ Ա՛յ օրէնքները պահելու համար հարկաւոր եղած ատենը մեզի ամեն զժարութիւնները յաղթել ու մահւան ալ համբերել կուտայ :

Է. Ռարեխառնութիւնը ի՞նչ է :

Պ. Առաքինութի մի է, որ բոլոր մեր անկարգ ախորժակները ու կիրքերը կրկարդաւորէ՝ ու կրսանձէ :

Է. Արձնք են եօթը գլխաւոր մեղքերուն ներհական առաքինութիւնները :

Պ. Խոնարհութիւն՝ հպարտութե՛ն, առատաձեռնութիւն՝ ազահութե՛ն, մարբութիւն՝ բղջախոհութե՛ն, սէրը՝ ատելութե՛ն ու նախանձու, պահքը՝ օրկրամոլութե՛ն, հեղութիւն՝ բարկութե՛ն, եռանդը՝ ծուլութե՛ն ներհական առաքինութիւններն են :

Է. Քանի՞ են Հոգին սքին պարզւելները :

Պ. Եօթն են՝ իմաստութի, հանճար, խորհուրդ, արիութի, գիտութի, բարեպաշտութի ու Ա՛յ երկիւղը :

### Շուշանին պատմութիւնը :

Արկու անամօթ ծերեր՝ որ Ռարիլոնի հրէից դատաւորներուն մէջն էին, սրտերնուն մէջը Շուշանին վրա չար ցանկութի մի ունեցան, որ Յովակիմ անունով երևելի հրէի մի կին էր : Աստեք իմանալով՝

որ Շուշանը իր պարտէզին մէջը մինակ  
կըմբայցի կոր, գաղտուկ վրան վազեցին,  
ու կուզէին իրենց չար կամքը կատարել,  
ու թէ որ Շուշանը իրենց կամքը կատա-  
րել չուզելու կըլլայ նէ, կուզէին վրան  
սուտ զրպարտութի ընել: Բայց պարկեշտ  
տիկինը չուզեց իրենց չար կամքը կատա-  
րել, Շատ աղէկ է ինձի՛ ըսաւ, անմեղու-  
թք ձեր ձեռքովը մեռնիլ, քան որ Այ  
առջևը՝ մեղք գործելով յանցաւոր ըլլալ.  
ու ամուր ձանով մը պոռաց. ան ատենը  
դատաւորներն ալ պոռացին: Շուշանին  
ընտանիքը ան ձաները լսելով պարտէզը  
վազեցին. ծերերը Շուշանին վրա շնուե-  
սուտ զրպարտութի ըրին. ու երկրորդ  
օրը՝ ասանկ անիրաւ զրպարտութիով բո-  
լոր ժողովուրդին առջևը կանչեցին զինքը:  
Սովսէսին օրէնքով դատեցին, ու քար-  
կոծելով մեռցունելու դատապարտեցին:  
Արբոր մեռցունելու համար կըտանէին  
կոր նէ՛ բոլոր ընտանիքը քովէն կերթային  
ու կուլային. Շուշանը բարձր ձանով  
կանչեց. Տէր Ա՛ճ՝ իմ դատս քեզի կը-  
ձգեմ՝, որ սրտերուն մէջը կըտեսնես,  
դուն իմ անմեղութիս ու ինձի գէմ եղած  
զրպարտութե՛ ստութիւն աղէկ գիտես:  
Ա՛ճ ան բոպէին մէջ յայտնեց Գանիէլ  
մարգարէին, որ գեւ տղայ էր՝ Շուշա-

նին անմեղութիւնը: Վանիէլ բոլոր ժողովուրդը դարձուց հոն տեղը, ուր որ անանիքաւ դատաստանը բրած էին. ու զատ զատ առջևը բերել տրվաւ ան անիքաւ դատաւորները, քննեց զիրենք, ու մէկին խօսքը մէկալին չիհամաձայնելով՝ խայտառակեց իրենց ստութիւնը ու անիքաւ դատաստանը, ու պարկեշտ Շուշանին տեղը Սուխեսի օրէնքով անիքաւ դատաւորները դատապարտեց քարկոծելով մեռցունելու: Աս օրինակը կըսորվեցունէ չարերուն, որ իրենց շարութիւնները չեն ծածկրվիր Այ առջևը, որն որ ամմէն մեղքերուն արգար վրէժը կըխնդրէ. ու բարիներուն ալ կըսորվեցունէ, որ Աճ ուրուն ամմէն տեղ ներկայութիւնը կըճանչնան, զիտէ շուտ կամ ուշ իրենց անմեղութիւնը յայտնել: Վանի. ԺԳ:

Խորատ Այ ամմէն Գեղ ներկայութիւնը վրա:

«. Այ ամմէն տեղ ներկայութիւնը մեղքէն հեռու կենալու համար զօրաւոր սանձ (կէմ) մի է<sup>1)</sup>. վսգի մեղքը զԱճ ու Այ դատաստանը մոռնալէն յառաջ կուգայ: Կարելի է ահաւոր իշխանի մի առջևը ի-

1. Յամ տեղիս աչք Տեան զիտեն զբարիս և զբարս. Առաջ. ԺԳ. 3:

րեն անհնազանդութի ընել, կամ զինքը  
անարգել: Ահկ պատւաւոր մարդու՝ կամ  
մեծաւորի մինակ տեսուիր կարգելու զմեզ  
կանոնի դէմ գործելէն: Անանկ է նէ՝  
թէ որ մտածելու ըլլանք, որ Աճ ամմէն  
տեղ է, ու ամմէն ժամանակ զմեզ ու մեր  
սրտերուն գաղտուկ խորհուրդներն ալ կը-  
տեսնէ՝ կրճանչնայ, ու սաստիկ կատէ  
ամմէն տեսակ մեղքերը, ինչպէս կըրնանք  
մեղանչել<sup>1</sup>):

Բ. Այ ամմէն տեղ ներկայութիւր ա-  
ռաքինութի գործելու ալ զօրաւոր խթան  
մի է: Ինչ մեծ սիրտ ու զօրութի կառ-  
նու զինւորը՝ երբոր իր զօրապետը կամ իր  
թագաւորը իրեն քովը ներկայ կըլլայ նէ:  
Թէ որ մէկը գործելու ատենը իր գործ-  
քերը թագաւոր մի ու անոր հետ մէկտեղ  
անարգ գերի մի ալ տեսնելու ըլլայ, հոգ  
կունենայ արգիօք ան գործօղը՝ կամ կը-  
մըտածէ արգիօք ողորմելի գերիին տես-  
նելը, չի մտածեր մինակ թագաւորին տես-  
նելը, չի ջանար մինակ թագաւորին հաւնե-  
ցունելու իր ըրած գործքերը: Անանկ՝ ալ  
աւելի Այ ներկայութիւր ու անոր մեր ամ-  
մէն գործքերը տեսնելը զմեզ շարժէ, ու

1. Ոչ է Աճ առաջի աչայ նր. պիղծ են ճանա-  
պարհք նր յամ ժամ. Սաղ. Ժ. 5:



մեզի սիրտ պիտոր տայ իրեն մինակ հաճոյ ըլլալու՝ ու մեր գործքերը իրեն մինակ հաւնեցունելու <sup>1)</sup>:

Գ. Մեր մեղքերէն հեռու կենալը՝ առաքինութիւններու մէջը յառաջ երթալը՝ ու մեր փրկութե հասնիլը շատ անգամ կենդանի հաւատքով մտածելուն վրա կեցած է, որ Մ<sup>Ժ</sup> ամմէն տեղ ներկայ է, իր կարողութիւնովը՝ իր զօրութիւնով՝ ու իր էութիւնովը ամմէն բաները կըտեսնէ, ու կըկառավարէ <sup>2)</sup> . որ ինքը մեր սրտին մէջը անանկ մեծ է, ինչպէս որ երկինքը, ու մենք իրմով անանկ պատած ենք, որ մէկ սպունգ մը (սիւնկէր) ծովի մէջ ջրերով, կամ մէկ թռչուն մը օդի մէջ օդով անանկ պատած չիկրնար ըլլալ <sup>3)</sup>:

### (Օրինակ):

Մը Ատմունտոսը պզտիկութե տտենը իր սք մարը զինքը եղբօրը հետ մէկ տեղ Փարիզ խաւրեց ազատական արհեստներ սորվելու համար . բայց յառաջ աղէկ

1. Հաճոյ լին առաջի իմ . և լին անարատ . Օ.Պ.Գ. Ժ. 1.
2. Մի թէ զերկինս և զերկիր ես ոչ լնուցում, ասէ Տր . Ար. 1. 24:
3. Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, և թէ իջանեմ՝ ի գոթս՝ և անդը մտն ես . Ս.Պ. Ե. 8:

խրատներ տրվաւ իրենց ԱՅ ամմէն տեղ  
ներկայութիւնը միշտ մտածելու՝ չար ըն-  
կերներէն հեռու կենալու՝ ու մեղքէն և  
Աճ բարկացունելու պատճառներէն փախ-  
չելու վրա . բայց ալ աւելի Ատմունտոսը  
խրատեց , մնղն ինքը սք կնիկ մը ըլլալով  
մարդարէական հոգիով ճանչցած էր , որ  
ան տղան վերջէն երևելի սք պիտոր ըլլար ,  
ու հրեշտակի պէս մաքրութիւնով սատա-  
նային խարդախութիւններուն դէմ պիտի  
պատերազմեր . իրեն խարաղէ (հարա-  
րէ) կոչա շապիկ մը շինեց՝ տրվաւ , որ  
հագնի . ու սորվեցուց իրեն , ինչպէս  
պէտք է պատերազմ ընել իր անմահ հոգ-  
ւոյն թշնամիներուն դէմ : Արկիւղած ու  
սք տղան մեծ մտադրութիւնով կը պահէր  
սրտին մէջը իմաստուն ու սք մօրը խրատ-  
ները , ու ձեռքէն եկածին չափ հոգւոյն  
վտանքներէն կը փախչէր , գիշեր ցորեկ ա-  
ղօթքով՝ բարի կրթութիւններով կանցու-  
նէր , ու խաղի և տղսյական բաներու  
ետեր ամենեկին չէր իյնար : ( )ր մը ալ  
ասանկ մինակ քաշված ու մեծ ջերմեռան-  
գութիւնով աղօթք ըրած ատենը՝ իրեն գե-  
ղեցիկ՝ ու խնտումերես մանուկ մի երևցաւ ,  
որ իրեն բարև տրվաւ , ու անանկ անու-  
շութիւնով նայեցաւ , որ Ատմունտոսը  
զմայլեցաւ , ու զինքը կորսընցունելու պէս

եղաւ : Անուշիկ մանուկը հարցուց իրեն ,  
 որ զինքը կրճանչնայ՝ թէ չէ : Ատմունտոսը  
 պատասխան տրվաւ , թէ Չէ : Վեղեցիկ  
 մանուկը ըսաւ . Ինչպէս չես ճանչնար  
 զիս , որ ամէնն օր քեզի հետ եմ , դպրա-  
 տան մէջը քու քովդ կրնասիմ , ու քեզ  
 մէ երբէք չեմ զատվիր , աղէկ նայէ երե-  
 սրս , որ իս ճանչնաս : Ատմունտոսը նայե-  
 ցաւ , տեսաւ՝ որ ճակտին վրան գրած էր ,  
 Յս՝ Ապովրեցի : Ան ատենը մանուկը ը-  
 սաւ , Աս է իմ անունս՝ ու ասիկայ դուն  
 ալ սրտիդ վրան պէտք է գրած պահես  
 միշտ՝ իմ զքեզ սիրելուս յիշատակին հա-  
 մար : Ապէ սիրելիս , որ աս անունը ինչ-  
 ւան մահւանդ ատենը սրտիդ մէջը մա-  
 քուր ու սք պահես , որ զքեզ շատ հո-  
 գևոր ու մարմնաւոր վտանգներէն պիտոր  
 պահէ , աս ըսաւ Յս մանուկը՝ ու անյայտ  
 եղաւ : Ատմունտոսը աս տեսիլքով շատ  
 մխիթարվեցաւ , իր խոստովանահօրը հրա-  
 մանաւ սք Աճաճնայ խորանին առջևը կու-  
 սու թիւն ուխտեց , ու իր ազւոր մատնին ,  
 որուն վրան Աղջոյն քեզ Մարիամ փոր-  
 ված էր , հանեց իր ձեռքէն՝ սք Աճա-  
 ճնայ արձանին մատը դրաւ : Իրաւ մայրը  
 ինտոր որ մարդարէացաւ նէ , անանկ սա-  
 ւանան շատ տեսակ փորձութիւներով պա-  
 տերազմեցաւ իրեն հետ , բայց ինքն ալ

Աստուծմէ վախնալով անոր ամմէն տեղ  
ներկայութիւն մտածելով, ու Յսին և սբ  
Մծածնայ սիրովը ամմէնուն յաղթեց, ու  
մեծ սրբութեւ հասաւ: Ա իջնցիս էպէս  
իտպսը իբեբէ հայեւն պատմութեցն թըլ:

### Վ. Ե. Յ. Բ. Ո. Բ. Գ. Է. Ը. Մ. Ը. Բ.

Բարի գործերու լուս:

Կ. Աստուծոյ ներուն գլխաւոր գործ-  
քերը որոնք են:

ա. Բարի գործքերն են:

Կ. Բարի գործքերը փրկութեւ հասնելու  
համար հարկաւոր են:

ա. Հրամմերես, փնղի նախ՝ որ արքայու-  
թիւն վարձք մի է՝ որուն հարկաւոր է բարի  
գործքերով արժանի ըլլալ. երկրորդ՝ որ  
Յս Քս արքայութեւ մէջը ամմէն մէկին  
գործոցը համաձայն ուրիշ վարձքեր ալ  
պիտոր տայ:

Կ. Սեր բարի գործքերը՝ որ քիչ բան են,  
ինչպէս կրնան արքայութիւն վաստակիլ:

ա. Բարի գործքերը արքայութեւ արժանի  
կրնան մինակ ԱՅ բարութիւնը, որ կը հաճի  
զանոնք Յս Քսի անսահման արդիւնքնե-  
րուն հետ միացունել ու ընդունել ան իր  
տալու վարձքերուն գիմացը:

հ. Քարի գործքերը արդիւնաւոր ըլլալու համար ի՞նչպէս պէտք է՝ որ ըլլան :

ա. Պէտք է, որ գործողը շնորհքի մէջ ըլլայ, ու գործքերը գերբնական պատճառէ յառաջ գան :

հ. Հարկաւոր է, որ միշտ սիրոյ պատճառաւ ըլլան :

ա. Չէ, կրնան հաւատքի՝ յուսոյ և ուրիշ քրիստոնէական առաքինութիւններու պատճառաւ ալ ըլլալ :

հ. Արբոր մէկը շնորհքի մէջ չէ նէ, անոր բարի գործքերը մեղք են :

ա. Չէ, բնականապէս բարի են, բայց արքայուն արժանի չեն, վնդի մեռած են :

հ. Անանկ է նէ, մէկը որ շնորհքի մէջ չէ նէ, բարեգործութիւնները կրնայ թող տալ, որովհետեւ անոնք արքայութեան արժանի չեն ըլլար :

ա. Չէ, մանաւանդ պարտըկան է ալ լեւի բարեգործութիւններ ընելու՝ մեղքի վիճակէն դուրս ելլալու՝ ու պէտք եղած օգնութիւնները Աստուծմէ ընդունելու համար, ու նորէն կրմեղանչէ, թէ որ իրեն հրամայվածները չիկատարեր նէ :

հ. Հասարակօրէն քանի՞ տեսակ են բարի գործքերը :

ա. Վիսաւորները իրեք են՝ աղօթք, պահք ու ողորմութի :

Է. Աղօթքով ի՞նչ կիմանաս :

Պ. Ամէն տեսակ բարեպաշտութեան կրթութունները, ինչպէս՝ մտածական աղօթք, ձայնաւոր աղօթք, պատարագ տեսնել, խորհուրդներ ընդունել, հոգևոր գրքեր կարդալ՝ մտիկ ընել, ու ասոնց նման բարեգործութիւնները :

Է. Աս ըսած պահքով ի՞նչ կիմանաս :

Պ. Ամէն տեսակ մարմնոյ մահացուցումները կիմանամ :

Է. Ողորմութիւնով ի՞նչ կիմանաս :

Պ. Գէպ ՚ի եզբօրը ամէն տեսակ սիրոյ ու ողորմութեան գործքերը կիմանամ :

Է. Քանի՞ են ողորմութեան գործքերը :

Պ. Արկու են՝ հոգևոր ու մարմնաւոր :

Է. Քանի՞ են հոգևոր ողորմութեան գործքերը :

Պ. Այժմ են՝ Ա. Տգէտները սորվեցունել :

Բ. Տարակուսողներուն աղէկ խորհուրդ տալ :

Գ. Ս շտացեալները մխիթարել :

Դ. Սնդք գործողները խրատել՝ ու ետ կենան :

Ե. Սեղի վնաս ընողներուն թողութի տալ :

Յ. Բնկերին պակսութիւններուն համբերել :

Զ. Կենդանիներուն ու մեռնողներուն համար Ա. Յ աղօթք ընել :



Կ. Քանի՞ են մարմնաւոր ողորմութեան գործքերը :

Պ. Եօթն են՝ Ը. Քաղցածներուն կերակուր տալ :

Բ. Օտարողներուն ջուր խըմցունել :

Գ. Մերկերուն զգեստ հագցունել :

Դ. Օտարները ու պանդուխտները տունը ընդունել :

Ե. Հիւանդներու ծառայել :

Օ. Բանտը կեցողներուն սյցելութիւն ընել :

Զ. Մեռելները թաղել :

Յովսէփ Բագաւորին պատճառներ :

Յովսիա երբոր թագաւոր նստաւ՝ ու թը տարւան էր, որ իր մանկութէ սկսաւ Ը.Յ ծառայել՝ ու առաքինի և շխտակ ճամբէն ամենեւին դուրս չելլալ : Ար թագաւորութեան առջի տարիներէն սկսած՝ Գաւթին առաքինութիւնները առջևը օրինակ դրաւ, ու սկսաւ Արուսաղէմի ու բոլոր թագաւորութեը մէջ կռապաշտութե պղտիկ նշաններն ալ չիթողուլ՝ վերցունել : Ալլա՛ բոլոր թագաւորութիւր պարտեցաւ, կուռքերը կոտորտեց, անոնց տաճարները փլցուց, անտառները՝ ուր որ ժողովուրդը չածներուն զոհելու համար կրժողվելէր նէ, բոլոր ջարդել արվաւ : Ատքը Արու-

ստղէմ դարձաւ . Այ տաճարը նորոգել  
տրվաւ , տաճարին մէջը Սոփսէսին իր  
ձեռքովը դրած օրէնքներու ձեռագիրը  
գտաւ , ու կարդալ տրվաւ . և տեսնելով  
որ անչափ ժամանակ ժողովուրդը աս օ-  
րէնքներուն ներհակը բրած էին , սիրտը  
չափէ դուրս ցաւեցաւ , ու հրամայեց ժո-  
ղովուրդին , որ աս օրէնքներուն բոլորն  
ալ պահեն , ապսպրեց , որ մեծ հանգի-  
սութիւնով զատիկ մը տօնեն , որ ժողո-  
վուրդին եւելօք յարգելի՝ ու Այ ընդու-  
նելի ըլլայ : Քահանաները ու ղեւտացի-  
ները յորդորեց , որ իրենց պաշտօնները  
հաւատարմութիով ու շէնքով շնորհքով  
կատարեն , ու իր օրինակաւ ու խօսքե-  
րովը բոլորն ալ անանկ բարեպաշտութե  
ու ջերմեռանդութե շարժեց , ու անանկ  
զատիկ մը բրաւ , որ Սամուէլ մարգարէին  
ատենէն սկսված ինչևան ան ատենը ուրիշ  
թագաւորի ատեն նմանը չէր տեսնուված :  
Ա երջապէս իր ճշմարիտ հաւատքին հետ  
իր անթիւ բարեգործութիւններն ալ միա-  
նալով , որոնք որ ինչևան իր մահը գոր-  
ծեց , իր յիշատակը անանկ մեծցուցին , որ  
Յուդայի թագաւորուէր մէջ օրէնք եղաւ ,  
որ ամմէն տարի մահւանը օրը՝ իրեն վրա  
կուլային : Արեմիա մարգարէն ալ ասոր  
վրա շինեց իր ողբը , որուն մէջը կըսէ , որ

պէտք է յաւիտեան բաղձալ ասանկ մէկ  
առաքինի թագաւորին թագաւորութե օ-  
րերուն : Բ . Ս՝հայո՝ . ԸԲ . ԼԵ : Եկնէս . Խ :

ԽՐԿԻ ԲԱՐԻ ԳՈՐԾԷՐՈՒ ՎԵՄ :

« . Հաւատքը առանց բարի գործքի  
մեռած հաւատք մի է <sup>1)</sup> . ասանկ հաւատ-  
քով հաւատացեալը կը դատապարտուի .  
մնզի աղէկ հաւատով ու չար ապրելով ,  
ու գործքը հաւատքին չի համաձայնելով  
իր հաւատքին անհաւատներուն ու հերե-  
տիկոսներուն առջևը անպատուութի կընէ :  
Արքայութե ու դժոխքին հաւտալը , ու  
ասկէ փախչելու ու անոր հասնելու անհոգ  
ըլլալը ի՞նչ մեծ անխելքութի է : Ան-  
սահման սիրելի ու անսահման վախնալու  
ԱՅ մը հաւտալ , ու զինքը չի սիրելը , ու  
իրմէն չի վախնալը ի՞նչ մէկզմէկու ներհակ  
բաներ են :

Բ . Գործքերը առանց ճշմարիտ հա-  
ւատքի ու առանց հարկաւոր թէութիւնե-  
րուն յաւիտենական փրկութե անպտուղ  
գործքեր են <sup>2)</sup> . մնզի ան արմատէն ծրլած  
ու բուսած չեն , ուսկից որ պէտք էր նէ ,  
ու անոր համար պարապ գործքեր են , ու

1. Հաւատք առանց գործոց մեռեալ են . Յ . Գ . Բ . 26 :

2. Արդարն իմ ՚ի հաւատոց կեցցէ . Եփ . Ժ . 38 :

մինակ իրենց շահասիրութեն՝ հպարտութե  
ու հեշտութե համար եղած գործքեր են,  
անոր համար ալ Մ.Յ հաճելի չեն կրնար  
ըլլալ: Մ.Ծ իրմէն իզատ ուրիշ վախճանի  
համար եղած գործքերը երբէք չիվարձա-  
տրէր:

Գ. Հաւատքը բարի գործքերով միա-  
ցած ճշմարիտ քրիստոնէին իմաստութիւն  
է<sup>1)</sup>, որ ուղիղ հաւատքի մէջ բոլոր պատ-  
ւիրաններու պահպանութիւնը ապրելով՝ իր  
վախճանին ամմէն խոստումներուն կատա-  
րեալ վարձքովը կրվարձատրվի: Մ.Յ դա-  
տաստանին առջևը հաւատքը պիտի փա-  
ռաւորէ ճշմարիտ քրիստոնէն, վնդի ինքն  
ալ իր կենացը մէջ բարի գործքերով ու  
սքե վարքով իր հաւատքը ցուցուցած ու  
փառաւորած է, չար քրիստոնէին հաւատքն  
ալ իրեն դէմ պիտոր ամբաստանէ, որ իր  
չար վարքովը գայթաղուածի տրված է<sup>2)</sup>:

### (Ը) ընակ:

Սնուղա անունով միամիտ ու բարի աղ-  
ջիկ մը կար, որ տղայութե հասակը նոր  
լմնցուցած էր: Մ.սոր գիշերը քնացած ա-

1. Հաւատք սիրով յաջողեալք. Գառար. է. 6:

2. Վ ս ձեր անուն իմ հանապաղ հայհոյի ՚ի մէջ  
հնթանսսայ. Աշայ. ԺԷ. 5:

տենը սբ Լճածինը կերևնայ հետը փա-  
ռաւոր կուսանքներով, որ ամմէնն ալ ճեր-  
մակներ հագած ու զարմանալի պայծառու-  
թիւնով զարգարված էին : Մուզան սբ  
Լճածնայ ու ընկերներուն պայծառութիւր  
տեսնելով՝ սկսաւ սիրտը վառվիլ ու բաղ-  
ձալ իրենց մէջ մտնելու, բայց չի համար-  
ձակելով ոչ իրենց մօտ երթալու, ոչ սբ  
Լճածնայ իր բաղձանքը յայտնելու զմայ-  
լած կրնայէր : Սբ Լճածինը տեսնելով իր  
սրտին բաղձանքը՝ անուշ կերպով մը հար-  
ցուց իրեն՝ Գունն ալ կուզե՞ս, աղջիկս, իմ  
ծառայութեանս գալ՝ ու իմ սիրելի զաւ-  
կըներուս հետ մեր երանութիւն փառքերը  
վայելելու համար ինծի ընկերանալ : Մու-  
զան պատասխան տրվաւ . Տիրուհի իմ՝  
քու գթութէդ ու ողորմութէդ աս մեծ  
շնորհքէն իզատ ուրիշ բան չեմ բաղձար :  
Սբ Լճածինը ըսաւ . Ես ալ կուզեմ զքեզ  
մեր ընկերութեւր ընդունել . բայց կու-  
զեմ ու կը հրամայեմ քեզի, որ թող տաս  
ասկէ ետքը բոլոր պարսպ բաները՝ վար-  
քիդ մէջի թեթեւութիւնները ու տղայական  
խաղերը, ու հաստատ մնաս իմ քաղցր որ-  
գիս Յս Բսին ու իմ սիրուս մէջը . ես ալ  
երսունն օրէն կուգամ քեզի, ու երկինքի  
փառաւոր բնակութիւր կը տանիմ զքեզ .  
որ հոն տեղը վայելես և ուրախանաս՝ չէ որ

մինակ իմ առջևս, հասցա ալ աւելի ամե-  
նասք Նորորդութեանսահման մեծութիւնը  
ու փառաւոր գեղեցկութիւնը առջևը՝ եր-  
կինքի բոլոր սք հրեշտակներուն ու սքե-  
րուն հետ մէկ տեղ : Ըս երանութիւնը յա-  
ւիտենական է, մարդ մը չիկրնար ձեռ-  
քէդ առնուլ : Սուղա կուսիկը շատ ու-  
րախացաւ ասանկ երջանիկ խոստումի վրա .  
Թող տրվաւ բոլոր անցաւոր ուրախութիւնե-  
րը, տղայական թեթեւութիւնները ու պա-  
րապ խաղերը, մէկ դի քաշվեցաւ իրեն  
հասակակից աղջիկներուն ընկերութէ, ու  
ինքը զինքը բոլոր աղօթքի և հոգևոր ջերմ-  
եռանդութիւններու տրվաւ : Օնողքը  
տեսնելով ասոր ան հասակին մէջը ասանկ  
մէկէն ՚ի մէկ փոխվիլը զարմացան, ու  
պատճառը հարցուցին իրեն : Ըն ալ պատ-  
մեց իրենց ուրախութիւնով սք Ըծածնայ  
երենալը, ու երսուն օրէն զինքը արքայ-  
ութիւնը տանելու խոստումը : Քսանըհին-  
գերորդ օրը հիւընդցաւ, մահւան ամմէն  
տեսակ պատրաստութիւնները տեսնելէն վեր-  
ջը երեսներորդ օրը հոգեվարութե ատենը  
սք Ըծածինը հետը սքերու բազմութիւնով  
նորէն երեցաւ, ու անուշ ձանով հրաի-  
րեց զինքը, որ երթայ իրենց ընկերութեը  
մէջ մտնէ . սք Սուղա մանուկը ու կոյսը  
ասանկ ուրախական ձանը լսելով, խնտու-



մով ու մեծ ուրախութիւնով սկսաւ կանչել՝  
 Կուգամ կոր տիրուհի իմ, կուգամ կոր  
 տիրուհի իմ, աս ըսելով հոգին աւան-  
 դեց, ու երկինքի թագուհիին ու բոլոր  
 սքեքուն դասուն հետ մէկ տեղ երկինքը  
 թռաւ : ՍԷ Գրեգոր պապը իւրաքանչիւր  
 պրահախօս . ՏԶ . ԳԵՐ . Կ :

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԸՆՄԵՐ

Երանուելիննէրու եւ աւելաբանական  
 իրապնէրու զլոս :

Հ. Քանի՞ են աւետարանական երա-  
 նութիւնները :

Պ. Ութն են, որ նաև Քնի ութը սկըղ-  
 բունքներն ալ կըսվին, որոնք կատարող-  
 ները աշխրբին աչքին առջևը անարգ ու  
 ողորմելի կերևնան, բայց ԱՅ աչաց առ-  
 ջևը երանելի են :

Հ. Որո՞նք են աս երանութիւնները :

Պ. Ըսոնք են՝ Ա. Երանի հոգւով աղ-  
 քատներուն, որ երկինքի արքայութիւնը  
 իրենցն է :

Բ. Երանի տրամոզներուն ու սգաւոր-  
 ներուն, որ պիտի մխիթարվին :

Գ. Երանի հեղերուն, որ երկիրը պի-  
 տի ժառանգեն :

Դ. Երանի արդարութե՛ք քաղց ու ծա-  
 րաւ ունեցողներուն, որ պիտոր կշտանան :

Ե. Երանի ողորմածներուն, որ ողորմութի պիտոր գտնեն :

Օ. Երանի սբ սիրտ ունեցողներուն, որ զԸԺ պիտոր տեսնեն :

Ե. Երանի խաղաղութի ընօղներուն, որ ԸՅ որդիքները պիտոր ըսվին :

Բ. Երանի արդարութե համար հալածանք քաջօղներուն, վնդի անոնց համար է երկնից արքայութիը :

հ. Որո՞նք են աւետարանական խրատները :

պ. Ըսանկ կըսվին քանի մը առաքինութիներ, որ անոնք պահելը պարտք չէ, բայց Յս պահեց, ու պահելու խրատ ալ տրվաւ կատարեալ ըլլալ ուզողներուն :

հ. Քանի՞ են աս խրատները :

պ. Վլխաւորները իրեք են՝ կամաւոր աղքատութի, մշտնջենաւոր կուսութի, ու հնազանդութի բոլոր ան բաներու մէջը, որ մեղք չեն :

հ. Ի՞նչպէս կըպահվին աս իրեք խրատները :

պ. Վլխաւորաբար եկեղեցիէ դրված կրօնաւորական կարգերու մէջ ԸՅ ուխտ ընելով կըպահվին :

հ. Ըղէկ բան է աս ուխտերը ընելը :

պ. Շատ աղէկ ու գովելի բան է, բայց աս բանիս ամմեն մարդ կանչված չէ, ու աս ուխտերը ընելու համար պէտք է՝ որ մարդ յառաջ ինքը զինքը աղէկ փորձէ :

Համանին պատմութիւնը:

Համան շատ մեծնալով Արտաշէս  
Թագաւորին առջի պաշտօնատէրը եղաւ,  
ու կուզէր՝ որ բոլոր ժողովուրդը իրեն եր-  
կրրպագութիւն ընէին: Ամէնը իր կամքը  
կրկատարէին, մինակ Սուրթքէն՝ հոն գերի  
ինկած հրեաներուն մէկը՝ չէր ուզեր կա-  
տարել, անանկ երկրպագութիւնը Այ կը-  
վայլէ ըսելով: Համան ասոր համար ան-  
չափ բարկացաւ, որ մտքին մէջը որոշեց  
զինքը բոլոր ան կողմերը գերի ինկած հա-  
զարաւոր հրեաներուն հետ մէկ տեղ մեռ-  
ցունել տալու: Թագաւորէն հրովարտակ  
մը առաւ աս բանիս համար, ու Թագա-  
ւորութեան ամէն քաղաքները խաւրեց:  
Սուրթքէ աս հրովարտակը Աստեր Թա-  
գուհին իմացուց, որ հրեայ ու Սուրթ-  
քէին եղբօրը աղջիկն էր, և Սուրթքէ  
ապսպրրած էր իրեն՝ որ իր ցեղը Թագա-  
ւորին չիմացունէ: Աստեր աս դժբաղդ  
լուրը լսեց նէ՝ պատասխան խրկեց Սուրթ-  
քէին աղաչելով՝ որ բոլոր հրեաները ի-  
րեք օր պահք պահեն՝ ու Այ մասնաւոր  
աղօթք ընեն: Ան իրեք օրերը ինքն ալ  
անանկ անցունելէն ետքը Թագաւորին  
առջևը ելաւ, որուն սիրտը Աճ գարձու-  
ցած ըլլալով, շատ սէր ու գթութիւն ցու-

ցուց իրեն, ու խոստացաւ ինչ խնդիրքի  
համար որ եկած է նէ՛ կատարելու : Աս-  
թեր զինքը սեղանի հրաւիրեց, ու աղա-  
չեց՝ որ Համանն ալ մէկ տեղ բերէ :  
Համանն աս նոր պատուոյն վրա ալ աւելի  
հպարտացաւ, տունը յիսուն կանգուն  
բարձրութիով կախաղան մը շինել տրվաւ  
Սուրթքէն կախել տալու համար : Քայց  
ան գիշեր Ա՛յ կարգադրութիւն Արտաշէսին  
քունը փախաւ ու ատենն անցունելու համար  
իր թագաւորուն ատենը անցած բաները  
կարդալ կուտար. պատահեցաւ ան տեղը,  
ուր կը պատմըվէր իրեն դէմ ապստամբուն  
միաբանութի մը, որն որ Սուրթքէն յայտ-  
նելով զինքը մահուանէ ազատած էր, ու  
իրեն աս հաւատարիմ բարիքին համար  
ամենեւին բարի հատուցում մի չէր եղած :  
Թագաւորը առտըւանց շուտ մը Համա-  
նին հրամայեց, որ Սուրթքէն հատու-  
ցում մը ընէ, իրեն թագաւորական զգեստ-  
ները անոր հագցունէ, թագաւորական  
ձիուն վրա հեծցունէ, ու բոլոր քաղաքը  
պտըտցունէ : Համանը կտորած սրտով  
աս հրամանը կատարելէն ետքը սեղանի  
գնաց, որուն որ թագուհին նորէն հրա-  
ւիրած էր զինքը թագաւորին հետ. հոն  
տեղը թագուհին իմացուց թագաւորին իր  
ազգը ու Համանին իր ազգին դէմ ըրած

Նենդուծիր ու խարդախ անդծուծիր, որ զինքը ու բոլոր իր ազգը մէկ տեղ կուղէր կոր կորսընցունել: Թագաւորը խաբէուծիր ճանչցաւ, սաստիկ բարկացաւ, ու հրամայեց, որ Համանը նոյն կախաղանէն 'ի վար կախեն, որն որ ինքը Սուրթքէին համար պատրաստած էր. ու անոր մեծուծիւնը ու հարստուծիւնները Սուրթքէին պարգևեց: Ա՛ճ ասանկ կրկորսընցունէ հպարտները, ու կրբարձրացունէ խոնարհները, որ զԱ՛ճ չիբարկացունելու համար ամմէն վնասը սիրով կուղեն քաշել: Եսէր:

Խրատ խոնարհութիւն զլս:

«. Խոնարհուծիւնը իրեք աստիճան ունի, ու առջի աստիճանը ինքը զինքը բանի տեղ չիղնելն է: Ինչպէս հպարտուծիր բոլոր մեղքերուն ու մոլուծիներուն արմատն է, ու մեր վրա անկարգ յարգուծիրով ու համարումով մը զմեզ մեզի հրամայված բաներուն դէմ ապստամբուծե կրշարժէ. ասանկ ալ խոնարհուծիր ամմէն առաքինուծիներուն արմատն է, ու զմեզ մեզի անարգել կուտայ՝ մեր սիրտը Ա՛յ բոլոր հրամաններուն հնազանդելու պատրաստելով <sup>1)</sup>:

1. Ուր մտանեն թշնամանք (ըստ լստ) հպարտու-

Բ. Արկրորդ աստիճանը չիրաղձայն է, որ մարդիկները զմեզ աղէկ կարծեն: Ինչպէս հպարտութիւն մարդիկներուն առջևը պատուրվելու բաղձալով զմեզ բոլոր բարի գործքերու վարձքերէն կըղրկէ<sup>1)</sup>, անանկ ալ խոնարհութիւն մարդիկներուն աղէկ կարծելը բանի տեղ չիդնելով՝ մեզի ԱՅ փառքէն իզատ ուրիշ բանի բաղձալութող չիտար, որ անով մեր բարի գործքերուն վարձքը կըշատնայ, ու անոր համար ալ Աճ կըհաճի մեր ձեռքովը գործելու, և զմեզ մեծ գործքերու գործիք ընելու<sup>2)</sup>:

Գ. Արրորդ աստիճանը անարգութիւնները սիրով ընդունել ու անոնց խոնարհութիւնը համբերելն է: Ինչպէս հպարտութիւնը խոնարհելէն կըփախչի, բանի մի համբերել չուզեր, ու անմիաբանութիւն ատելութիւն և ուրիշ անկարգութիւններ կըպատճառէ, անոր ներհակ խոնարհութիւն ալ զմեզ անխրաւութիւններու ու վշտերու համբերող կընէ, ԱՅ ու մեր մէջի խաղաղութիւնը կը-

---

Բիւն, անդ են անարգութիւնը: Իսկ ուր է խոնարհութիւն անդ է և իմաստութիւն. Աբր. 17. 2:

1. Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա. Մատթ. 23. 2:

2. Քակեաց զՏորոս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս. Աբր. 17. 2:



պահպանէ . անանկ ալ մեր ու ընկերին  
մէջը սէր ու խաղաղութի կը հաստատէ <sup>1)</sup> :

### Օրնակ :

Այն Գոմինիկոսը իր կարգէն քանի մի  
ընկերներով քաղաք մը երթալու առնելը  
ուր որ քարոզ պիտոր տային ու ան քաղքի  
հերետիկոսներուն հետ միժաբանութի պի-  
տոր ընէին , ճամբան աղէկ չի գիտելով  
հերետիկոսի մի ճամբայ հարցուցին՝ զինքը  
ուղղափառ կարծելով : Ան չար հերետի-  
կոսը՝ որ զինքը կը ճանչնար ու վախճանն  
ալ գիտէր՝ որ ինչ քանի համար հոն կեր-  
թար կոր , առջենին ինկաւ , ու զիրենք  
անտառէ անտառ ծուռ ճամբաներէն սկը-  
սաւ տանիլ , ու փուշերուն մէջը անչափ  
պտըտցունել , որ բոլոր մարմիննին փու-  
շերէն պատուելով երեսներնէն՝ ձեռքեր-  
նէն՝ ոտքերնէն արուններ սկսաւ վազել :  
Աս չարութիւնը ընելուն միտքը ան էր , որ  
զիրենք հոն տեղերը թող տալ ու փախչել  
կուղէր , որ գիշերն ալ վրանին գալով  
չարչարվին , անտառներուն մէջէն դուրս  
չիկրնան ելլալ՝ և գիշերը գաղաններն ալ  
զիրենք փարատելով , չիկրնան երթալ ու

1. Ասարուք յինէն՝ զի հեղ եմ և խոնարհ սրբ-  
աիւ . և գտջիք հանգիստ անձանց ձերոց .  
Աճառ . 7 . Ժա . 29 :

իր աղանդակիցներուն հետ վիճել : Այն  
Ղափնիկոսը ճանչցաւ , որ առաջնորդը  
հերետիկոս ու չար մարդ է , ու չարութեան  
համար անանկ ծուռ ու դժար ճամբաներ  
ու տարաւ զիրենք , սկսաւ մեծ համբեր  
ութիւնով ու խոնարհութիւնով Այն շնոր  
հակալ ըլլալ , ու ան տանջանքները Յնի  
սիրուն համար ուրախութիւն քաշելով ու  
ուրախ երեսով ընկերներուն ըսել . Տէրը  
գովեցէք , ուրախ կեցէք ընկերներս , վնդի  
Յնի սիրուն համար չարչարվելու ու ա  
րուննիս թափելու արժանի եղանք , հի  
մայ կրօնանք յուսալ , որ Յն մեզի պիտոր  
օգնէ՝ սքեկեղեցւոյ թշնամիներուն յաղ  
թելու համար : Այն ատենը տեսնելով ան  
չար հերետիկոսը սքին ու անոր ընկերնե  
րուն ուրախ ու զարմանալի համբերութիւնը ,  
ու լսելով ան սքեկեղեցւոյ , շատ շինվե  
ցաւ , ըրածին վրա զղջացաւ , ու իր չար  
միտքը խոնարհութիւնով խոստովանեցաւ ,  
ըսելով . Այս ձեզի միշտ մահուան թշնամի  
էի , բայց տեսնելով քու մեծ համբերու  
թիւնը ու զարմանալի խոնարհութիւնը՝ մեծ  
շինութիւն եղաւ ինձի , ու զղջացայ , ասկէ  
ետքը կուզեմ հերետիկոսութիւն ու չարու  
թիւն թող տալ՝ ուղղափառ ըլլալ , ու ինչ  
ւան մահս անանկ ապրիլ : Օհրենք ան  
ծուռ ճամբաներէն դուրս հանեց , երթաւ

լու տեղերնին տարաւ. ու խոստումը կատարեց : Դաշար ծաղկալէին Տեղը կը պատահէ :

ՈՒԹՆԵՐՈՐԴ ԼԱՍՄԱՐ

Ներգործական շնորհի զեռ :

Հ. Սեր փրկութե՛ն հարկաւոր առաքի- նութիւները ու բարի գործքերը կըրնանք գործել մինակ մեր զօրութիւնով :

Պ. Չէ, Այ շնորհքը մեզի օգնութե՛ն չի հասնիր նէ՛ մենք մեր զօրութիւնը չենք կըր- նար գործել :

Հ. Վանի՞ կըբաժնըվի շնորհքը :

Պ. Երկու՝ ներգործական և ունակական :

Հ. Ներգործական շնորհքը ի՞նչ բան է :

Պ. Ներքին ու գերբնական օգնութի մի է, որն որ Ա՛ծ կուտայ չարէն փախչելու՝ ու բարին գործելու համար :

Հ. Աս օգնութիւնը մեր ամմէն փրկուե՛ն օգ- տակար գործքերու համար ալ հարկաւոր է :

Պ. Հրամներես, առանց աս օգնութեան աղէկ բան մը չենք կըրնար մտածել, որ կարող ըլլայ մեր փրկութե՛նը ծառայել :

Հ. Ի՞նչ բան է աս շնորհքի օգնութիւնը :

Պ. Ա՛ծային վերին լոյս մի է, որ մեր միտ- քը կըլուսաւորէ, ու մէկ շարժում մի է, որ մեր կամքը կըշարժէ, ու անոր կօզնէ բա- րի գործելու :

հ. Մնանկ է նէ՝ ամմէն ներգործական շը-  
նորհքը Մ.Յ սէր չէ՞, որ մեր սիրտը կրքնակի:

դ. Չէ, վնդի թէ որ անանկ ըլլար նէ,  
մեղաւորը՝ որ Մ.Յ սէրը չունի, ամենեին  
շնորհք մի չէր ունենար:

հ. Մ.Ճ մեղաւորներուն ու արդարներուն  
հարկաւոր շնորհքը կուտայ՞, որ անոնք  
կարող ըլլան մեղքերնէն դառնալ, և ա-  
սոնք իրենց արդարութեանը մէջ հաս-  
տատ մնալ:

դ. Հրամներես, վնդի թէ մէկը թէ մէկ-  
այլը ինքը կը հրամայէ, ու չէր կրնար  
հրամայել՝ թէ որ անկարելի ըլլար, անոր  
համար ամմէնը ունին դո՞նէ իրենց փրկուե-  
հարկաւոր բաները խնդրելու շնորհքը:

հ. Շնորհքը ձրի պարգև մը չէ՞, որ Մ.Ճ  
կարող չըլլայ չիտալու:

դ. Հրամներես, բայց Յս Քս ամմէն  
մարդիկներուն փրկութիւնը համար մեռնե-  
լը յանձն առնելով ամմէնուն փրկութեան  
համար հարկաւոր եղած շնորհքները ար-  
դիւնաւորեցաւ:

հ. Թէ որ Մ.Ճ ամմէնուն փրկութիւնը հա-  
մար հարկաւոր շնորհքները կուտայ նէ,  
հապա ինչո՞ւ համար ամմէն մարդ չիփրը-  
կրվիր:

դ. Սնդի Մ.Յ շնորհքները ամմէն մարդ  
աղէկ չիգործածեր:

Պօղոս աստուծոյ լինի զաստուծոյն պատմութիւնը :

Սօղոս՝ որ ետքը Պօղոս ըսվեցաւ, հրէից քահանայապետէն իշխանուի առած՝ մեծ բարկութիով Ղամասկոս քաղաքը կերթար կոր, բոլոր ան տեղը գտնելիս քրիստոնեաները կապելու ու Երուսաղէմ բերելու համար : Ճամբան երկինքէն յանկարծ մեծ լոյս մը ծագեցաւ, որ զինքը բոլոր պատեց, ու վախով ձիէն վար ինկաւ . ետեէն ձայն մի ալ լսեց, որ կրսէր իրեն . Սաւուղ Սաւուղ՝ ինչո՞ւ զիս կը հալածես կոր : Սաւուղը հարցուց՝ ըսելով . Տէր՝ դուն ո՞վ ես : Պատասխան տրվաւ ձայնը . Ես եմ Յսւր՝ որ դուն կը հալածես կոր : Սօղոսը սաստիկ վախցած ու շփոթած՝ ըսաւ . Տէր իս ի՞նչ կուզես ընել : Յս պատասխան տրվաւ իրեն, Ոտքի վրայ ել, քաղաքը մտիր, ու հոն տեղը կը պատմըվի քեզի՝ ինչ պէտք ես ընելու : Սաւուղը ոտք ելաւ, բայց ան երեցած սաստիկ լոյսը իր աչքին լուսը առած ըլլալով՝ բան մը չէր կրնար տեսնել : Էտը եղած մարգիկները զինքը ձեռքէն բռնած Ղամասկոս տարին, ու հոն իրեք օր իրեք գիշեր անօթի ծարւած կեցաւ : Ետքը Յս զԵնանիան խաւրեց, իրեն իմացունելով՝ որ Սաւուղը երկինքէն ըն-

տրրված ու սահմանված ընտիր գործիք  
 մը է իր սք անունը թագաւորներուն ու  
 հեթանոս ազգերուն առջևը քարոզելու  
 համար: Անանիան գնաց Սաւուղին բնա-  
 կած տունը մտաւ, ու ձեռքերը Սաւուղին  
 դիտուն վրա դրած՝ ըսաւ իրեն. Սաւուղ  
 եղբար՝ վեր նայէ. զիս քեզի՝ քու ճամբան  
 տեսած է՞: Յի Քսր խաւրեց, որ տեսնես՝  
 ու Հոգի սքով ալ լեցվիս: Աչքերը ան-  
 միջապէս լուսաւորեցան, սկսաւ տեսնել,  
 մկրտը վեցաւ, ու Քսի հալածողէն՝ Քսի  
 առաքեալ եղաւ, անունն ալ Պօղոս դրաւ:  
 Սկսաւ անկէ ետքը Յի սք անունը ժո-  
 ղովորդանոցներու մէջ անանկ զօրաւոր  
 խօսքերով քարոզել, որ հրեաները կը-  
 շփոթէր, ու կը զարմացունէր: Ասանկ ե-  
 ղաւ Յին շնորհքին վաստակը, որ ինչ-  
 ւան իր մահը Յի սք անւանը իմաստուն  
 ու եռանդնոտ քարոզիչ եղաւ: Գործք. Ը:

### Խրատ շնորհքի վրա:

«. Շնորհքը անանկ հարկաւոր է,  
 որ մեր փրկուէ կարգի մէջը առանց շնորհ-  
 քի բան մի ալ չենք կրնար ընել<sup>1)</sup>. ասի-  
 կայ քրիստոնէական խոնարհութիւն հիմն

1. Առանց իմ ոչ ինչ կարիք առնել. Յով. 4: 5:



է, ու խոնարհութիւնը շնորհք ընդունելու համար հարկաւոր միջոց է :

Բ. Շնորհքին զօրութիւն անչափ մեծ է, որ անով ամմէն բանը կարող ենք ընելու՝ որչափ որ մեծ ու դժար բան ըլլալու ըլլայ<sup>1)</sup>, ասիկայ ալ քրիստոնէական սրտոտուէ ու արիուէ հիմն է՝ Այ հնազանդելու, և անոր փառացը ու մեր փրկուէրը համար աշխատելու ատենները մեր վախկոտուէ ու կասկածոտութեան չանսալու համար :

Գ. Շնորհքին հետեւելու ըլլանք նէ՛ ամմէն բանը կըրնանք ընել, բայց թէ որ շնորհքին զմեզ շարժելուն չհետեւինք ու գործակից չըլլալու ըլլանք նէ՛ շնորհքը մեր վրա բան մը չիգործեր. վնդի ինքը մեզի կըտըրովի մեզի գործել տալու և մեզի հետ մէկ տեղ գործելու համար<sup>2)</sup> :

( ) Երևակ :

Գաղղիայի թագաւորին շենրիկոս եղբայրը օր մը գործքի մը համար սը Նեոնարդոսին վանքը կերթայ. ետքը բոլոր

1. Յամի կարող եմ, այնու՛ որ զօրացոյցն զիս. փիլ. 13 :

2. Այլ շնորհքն Աստուծոյ եմ՝ զինչ և իցեմ. . . ոչ եմէ ես՝ այլ շնորհքն Աստուծոյ՝ որ ընդ իս. Բ. Կոր. 10 :

կրօնաւորները կուղէ տեսնել: Արօնաւոր-  
ները սի՛ Բեռնարդոսին հրամանաւը կար-  
գաւ կուգան, իշխանը ամմէնը տեսնելէն  
ետքը երթալու ատենը իրենց կաղաչէ ի-  
րեն համար Ա՛յ աղօթք ընելու, որ իր սի՛  
շնորհքը տայ, որ միշտ ու ամմէն բանի  
մէջ Ա՛յ սի՛ կամքը կարօղ ըլլայ կատարել:  
Սի՛ Բեռնարդոսը աս խօսքէն Ա՛յ սիրուն  
վրա սի՛ խրատաբանութի՛ մը ընելէն ետքը՝  
ըսաւ. Արշուսամ իմ Բ՛նէս, որ դուն  
աս քու հիմակէն վիճակիդ մէջը չես մեռ-  
նիր, փորձով ճանչնաս պիտոր շուտով՝  
որ ինչ մեծ օգուտ ու օրհնութիւն պիտի  
ըլլայ քու հոգւոյդ աս Ա՛յ ծառաներուն  
աղօթքովը, որն որ անչափ բաղձանքով  
կուղես կոր: Իշխանը գնաց, ու սի՛ը կրօ-  
նաւորները ժողվեց՝ աղօթքի կեցաւ, ան  
օրը Ա՛ծ իշխանին շնորհք տրվաւ, սիրտը  
Ա՛յ շնորհքովը բռնկեցաւ, որուն ինքն  
ալ շուտով հետեւելով՝ թողուց բոլոր աշ-  
խարհային իշխանութի՛ր՝ մեծութի՛ր ու  
հարստութի՛ր, ու կրօնաւոր ըլլալու հա-  
մար վանքը դարձաւ: Ա՛սոր ասանկ շու-  
տով վանք մտնելուն վրա ազգականները  
չատ տրտմեցան՝ լացին, գլխաւորաբար  
Ա՛նդրէաս փարիզեան անունով ազնւա-  
կանը, որ Հենրիկոսին ստորակարգեալը՝  
ու շատ ընտանի բարեկամն էր, ու սկսաւ

խենթեցածի պէս զինքը նախատել : Զեն-  
 րիկոսը ասիկայ լսելով՝ սկսաւ սք Ռեո-  
 նարդոսին աղաչել, որ անոր համար ալ  
 աղօթք ընեն Մ, որ զինքը ան խենթուէ  
 ազատէ, ու իր սխալանքը իրեն ճանչցու-  
 նէ : Սքը ըսաւ, որ անոր հիմայ աս դառ-  
 նութե մէջը ըրածներուն վրա չխորամի,  
 վնդի ան ալ ատենօք իրեն պիտոր հետևի՝  
 ու աղէկ ծառայ Մ պիտոր ըլլայ : Սք  
 Ռեոնարդոսին աս մարդարէութիւր Մն-  
 դրէասին ականջը հասնելով՝ որ չափէ  
 դուրս կատէր կրօնաւորական վիճակը,  
 մտքովը ըսաւ . Ես ալ իրեն ճանչցունեմ  
 իր ըրած գուշակութեը ստութիւր, ու զին-  
 քը թագաւորին ու ժողովուրդին առջևը  
 խայտառակեմ : Բայց ան գիշեր Մ շը-  
 նորհքը անոր վրան ալ իջնալով՝ ըսած  
 խօսքերուն ու ըրած մեղքերուն վրա շատ  
 մեծ զղջումի եկաւ . շնորհքին հետևեցաւ,  
 ու սկսաւ սիրով բորբոքիլ ու սպասել, որ  
 երբ առտու պիտոր ըլլայ : Մ. ստու եղածին  
 պէս վանքը վաղեց . շատ արցունքներ  
 թափելով՝ կրօնաւոր ըլլալ ուզեց սք  
 Ռեոնարդոսէն : Ես փոփոխութեան վրա  
 ամմէնը զարմացան, ու սքը շատ ուրա-  
 խութիւր ընդունեցաւ զինքը, ու կրօնի  
 զգեստ հագցուց : Ար անչափ սրբութիւր  
 սկսաւ ապրիլ, որ ամմէնը կը զարմացունէր .

մնղի ասանկ քիչ ժամանակէան մէջ անանկ  
կատաղի մարդ մը Սողոսէ Պօղոս եղած  
էր ԱՅ շնորհքովը : Ախարիսուր իւրապէս  
իւր պատ . . . . գիրք :

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ Ի Հ Ա Ս Ե Ր

Պատրիստը ներգործական շնորհի զեռ :

հ. Սարգը կըրնայ ներքին շնորհքին  
գէմ կենալ :

պ. Հրամներես, ու շատերը իրենց ազա-  
տուծիով գէմ կըկենան, մնղի շնորհքը  
հարկ չիդներ :

հ. Շնորհքը ինչո՞ւ համար հարկ չիդներ :

պ. Անղի թէ որ շնորհքը հարկ դներու  
ըլլար նէ՛ մեր ազատուծիը կաւրէր :

հ. Անանկ է նէ՛ մարդը շնորհքով ալ իր  
ազատուծիը կըպահէ :

պ. Հրամներես, մնղի թէ որ մարդը իր  
ազատուծիը չիպահեր նէ՛ ոչ առաքի-  
նուծիը առաքինուծի կըլլար, և ոչ մո-  
լուծիը մոլուծի, անոր համար ալ ոչ ար-  
դիւնք կըլլար, ու ոչ յանցանք :

հ. Շնորհքը ազատուծի հետ ի՞նչպէս  
կըմիաբանի :

պ. Աս ալ մեր սք հաւատքին ուրիշ խոր-  
հուրդներուն պէս անհաս խորհուրդ մը  
ըլլալով՝ պէտքը չէ, որ ասկից աւելի

քննենք. մեզի բաւական պիտոր սեպենք  
գիտնալը, որ Մ<sup>ծ</sup> ասանկ յայտնած է, ու  
եկեղեցին ալ ասանկ կըսորվեցունէ մեզի,  
որ հաւտանք:

հ. Ո՛ւր տեղաց գիտենք, որ եկեղեցին  
կըսորվեցունէ մեզի աս խորհուրդը:

ա. Անդի եկեղեցին շնորհքը հարկաւոր  
չէ ըսողներն ալ՝ շնորհքով ազատութիւն  
կըկորսրվի ըսողներն ալ՝ կըդատապարտէ:

հ. Մ<sup>ծ</sup> ի՞նչ շնորհքներ ու միջոցներ կու-  
տայ հեթանոսներուն ու անհաւատնե-  
րուն, որ կարող ըլլան փրկութիւն հասնել:

ա. Մեզի մասնաւորապէս գիտնալ հար-  
կաւոր չէ, բաւական է ընդհանրապէս  
գիտնալը, որ Մ<sup>ծ</sup> ամմէնուն փրկութիւնը  
կուղէ, ու ամմէն մարդիկները զինքը ճանչ-  
նալու՝ սիրելու՝ իրեն ծառայելու ու յա-  
ւիտենական կեանքը վաստըկելու համար  
ստեղծեր է, ու ամմէն մէկին իր անսահ-  
ման իմաստութիւնովը բաւական շնորհքներ  
ու միջոցներ կուտայ իրենց վախճանին  
հասնելու կարող ըլլալու համար:

հ. Մ<sup>ծ</sup> կըրնայ ամմէնուն փրկութիւնը ուղել,  
ու իրենց փրկութիւնը հարկաւոր եղած շը-  
նորհքները ու միջոցները չիտալ:

ա. Չէ, մնդի ասիկայ ուղել ու միանդա-  
մայն չուղել կըլլար, որովհետեւ անկարելի  
է վախճանը ուղել ու միջոցները չուղել:

հ. Մենք մեղմէ կըրնանք շնորհքին արժանի ըլլալ :

դ. Չէ, վսզի ան ատենը շնորհք չէր ըլլար, վարձք կըլլար. բայց Ա՛ճ միջոցներ դրած է՝ Վսի արդիւնքներովը շնորհքներ ընդունելու համար :

հ. Որո՞նք են աս միջոցները :

դ. Գլխաւորները աղօթք ու խորհուրդներն են :

Յակոբէն Ասաւին Կէղք անցնելուն  
դաստիարակութիւնը :

Աբրահամին որդին Ասահակը շատ ծերացած ըլլալով աչքերը չէին տեսներ : Ասիկայ անդրանիկ տղան Ասաւը կանչեց, ու ըսաւ իրեն. Տղաս՝ ալ ես ծերացայ, ու մեռնելս մօտ է. գնա՛ աղեղդ ու նետդ ան, ու որսի գնա՛, և առջի զարկած որսըդ շուտով եփէ, ու ինձի բեր, որ ուտեմ, ու քեզի իմ օրհնութիւն տամ : Իր կինը Աբրեկա աս խօսքերս լսեց, ու որովհետեւ ինքը՝ Յակոբը Ասաւէն աւելի խոնարհ ու հնազանդ ըլլալուն համար՝ զանիկայ աւելի կըսիրէր, ու Ասաւը իր հօրը մօրը կամքերուն դէմ քանանացի կուսպաշտ աղջիկներու հետ կարգըլլելուն համար երեսէ ձգած էր, անոր համար անմիջապէս Յակոբին ըսաւ, որ երթայ շուտ



մը իրենց ոչխարներուն մէջէն երկու այծու ձագեր բերէ, որոնք ինքը Խասհակին ուղածին պէս շուտով խորտիկ ըրաւ՝ Ասաւին պահած զգեստները առաւ, Յակոբին հագցուց, և վիզը ու ձեռքերն ալ այծուն կաշիովը ծածկեց, որ Ասաւին մաղտութիւնը նմանին, ու եղանակն ալ սորվեցունելով իրեն, որ ինչպէս պէտք է ան խորտիկը հօրը առջևը տանիլ՝ խրկեց զինքը հօրը առջևը, որպէսզի անոր առջի օրհնութիւնը ինքը առնէ: Խասհակը կարծելով, որ Ասաւն է, անանկ շուտով գտնելուն ու եփելուն վրա զարմացաւ, ու խորտիկէն ուտելէն ետքը, անդրանկութեւ օրհնութիւնով օրհնեց զինքը, որ Քնին իր զակէն ծնանելու օրհնութիւն էր: Ամէն բանը լմննալէն ետքը Ասաւը վրան հասաւ, որ երբոր եղած բաները լսեց՝ որ իր անդրանկութիւն ալ յառաջ ոսպի ապուրի փոխելը միտքը բերելով՝ սիրտը անանկ սաստիկ ցաւեցաւ, որ ամուր ձանով ըսկըսաւ լալ: Բայց Խասհակը տրված օրհնութիւնը ետ չիզարձունելէն ետքը՝ աւելի հաստատեց, ու Ասաւին ալ յայտնեց, որ պզտիկ եղբարը իրեն ու բոլոր ընտանեացը աէր պիտոր ըլլար: Բոլոր աս եղած բաները Այ կարգադրութիւնովը կը լար կոր, որ Յակոբը բարեսիրտ ու իր կամքերուն

հնազանդօղ մարդ ըլլալով՝ իր ժողովուրդին գլուխ դրովեցաւ Ասաւին տեղը: Ասիկայ օրինակ է շնորհքներուն փոփոխութենը, որ անով Վսի ըսածին պէս առջինները վերջին՝ ու վերջինները առջին պիտոր ըլլան: Օհնն. Էէ:

Խրատ Այ շնորհքները աղէկ չեգործածելուն զլոս:

« . Շնորհքը քանքար մի է, որ Աժ կրբաժնէ մեր ամմէն մէկին՝ անով գործելու, ու զանի եւելցունելու համար <sup>1)</sup> . Ե ո՞վ որ շատ շնորհք ունի նէ՝ անկէ շատ առաքինութիւններ ու աղէկ գործքեր պիտոր պահանջէ: Շնորհքը աղէկ չիգործածելը Վսի սքարունը ոտքի տակ կոխել է, որ իր ամենասքարունը թափելով մեղի համար վաստրկած է, ու իր ամմէնէն գերազանց պարգևները անարգել է: Աս շնորհքի չարաչար գործածուէ աւելի ի՞նչ բան կըրնայ ըլլալ. մենք ալ քանի՞անգամ շնորհքի դէմ կենալով Հոգի սուրբը տրամեցուցեր ենք <sup>2)</sup> :

Բ . Շնորհքը ո՞վ որ աղէկ չիգործածեր

1. Աս նոցա տասն միաս, և ասէ ցնն. Յարգեցէք զայդ՝ մինչև եկից. Ղու. ԺԷ. 13:  
 2. Սի տրամեցուցանէք զՀոգին սք Աստուծոյ. Երեմ. 7. 30:

նէ , Ըճ անոր վրայէն կրվերցունէ , ու անոնց կուտայ , որոնք որ անկէ աղէկ պրտուղներ կըհանեն : Վն սս զարհուրելի փոխադրուիլը աւետարանի մէջ շատ տեղ յայտնած ու կրկնած է <sup>1)</sup> , սս պատիժը հրեաներուն շատ անգամ սպառնացած է , որ վերջապէս հեթանոսները անոնց տեղը մտան՝ արքայութե՛ն որդիքներ եղան <sup>2)</sup> : Ինչւան հիմայ ալ , որ ազգը որ հաւատքին՝ որ մեծագոյն շնորհք է , պտուղը աղէկ չիհանեց նէ՛ ան ազգէն առաւ , ուրիշ ազգերուն տրվաւ . սս պատիժը ինչպէս ազգերուն կուտայ նէ , անանկ մասնաւոր մարդիկներուն ալ կուտայ :

Գ. ԸԵ անչափ շնորհքները աղէկ չի գործածելնիս , ու պէտք եղած առաքիւնութիւնները ու արդիւնքները վաստրկելու և սպաշխարելու համար տրված ժամանակները պարապ տեղ կորսընցունելնիս մահւան ատենը մեզի անտանելի ցաւ ու տրամուծի պիտոր բլան : Հիմայ՝ որ սս միջոցները քանի որ ձեռքերնիս են նէ , գործածելու և աղէկ պտուղներ հանելու

1. Ըւէք ՚ի դմանէ զմնասն , և տարայք տուք պյնմ՝ որ ունիցի զտասն մնասն . Վն . 1 . 24 :

2. Ըարձցի ՚ի ձէնջ արքայութիւն Մստուծոյ , և տացի ազգի՝ որ աւնիցէ զպտուղս նորա . Մտ . 1 . 43 :

աշխատինք, որ ան ատենը մեր վնասովք Վրնէն յանդիմանութի չըլսենք<sup>1)</sup>:

( ) Երկուսի :

Աողոնիա քաղքին մօտ բարեպաշտ խաթունի մի քովը անպարկեշտ աղախին մը կար, որ ինքը զինքը բոլոր մարմնական մեղքերու տըված էր: Վիշեր մի քունի մէջ կըտեսնէ, որ զինքը Վրնի դատաստանին առջևը տարեր էին, որ հոն տեղք բոլոր հրեշտակները՝ ու երկինքի սքերը ժողված էին, ընտրեալ սք հոգիներուն բաղմութիւնը շատ ուրախութիւնով Վրնի աջ կողմը, ու դատապարտեալները շատ տրտմութիւնով՝ վախով ու սատանաներու տանջանքներուն մէջը Վրնի ձախ կողմը կըկենսոյին: Աղորմելի աղջիկը աս զարհուրելի տեսիլքը տեսած ատենը շատ ահու գողի մէջ ինկաւ խղճմտանքը վկայելով, որ ինքն ալ իր չար գործքերուն համար ձախ կողմիններուն կարգը դրվելու արժանի եղած էր: Անոր համար յաւիտենական դատաւորին առջևը անմիջապէս չոքեցաւ, ձեռքերը բացած շատ լալով ու արցունքներ թափելով աղաչեց՝

1. Յի՛նչ ինչ ամենէլ էր այգւոյ իմոյ՝ և ևս ոչ արարի նմա. Աստուծոյ է. 4:

որ իրեն ողորմի, ու զինքը իր անսահման գթութիւնովը յաւիտենական տանջանքներուն չիզատապարտէ : Ան ատենը Վսն անձային աջը վեր վերցունելով ողորմեցաւ իրեն, ու ըսաւ . **Անչ՞ն** կաղաչես ինձի . քու մէկ մատդ տուր ինձի, ես ալ բոլոր ձեռքս տամ քեզի . **Վսն** աս խօսքով իրեն իմացուց, որ խօսք տուր ինձի ասկէ վերջը չար գործքերովդ իս չիվշտացունելու համար, ես ալ քեզի յիմ շնորհքս կուտամ, որ անով դատապարտութիւն աղատիս, ու ընտրեալներու կարգը մտնելու արժանի ըլլաս : **Ազ** իկը քունէն արթընցաւ, գնաց աս տեսիլքը բարեպաշտ անձի մը պատմեց, ու անոր բարի խրատներովը ու տեսիլքին վախովը առաջադրուի դըրաւ անկէ վերջը իր վարքը շտկելու ու քիչ մը ժամանակ ալ սկսաւ աղէկ նշանների ցուցունել : **Վայց** քիչ քիչ մոռնալով ողորմելին **Վսն** իրեն ըրած ողորմութիւնը՝ ու ան բարեպաշտ անձին աղէկ խրատները՝ ու շնորհքը չարաչար գործածելով սատանայէն նորէն խաբւեցաւ, առջի մեղքերուն մէջը ինկաւ, և օրէ օր չարէ չարագոյնը երթալով՝ **Այ** արդար դատաստանը հասաւ իր վրան . վսն ծանր հիւանդութիւնով մը պառկեցաւ, լեզուն մէկէն՝ ի մէկ կապւեցաւ . ու ասպաշխարութեն նշան մը չի-

կրօնալով ցուցունել շուտով մեռաւ՝ իր պիղծ մեռելը սաւանով ծածկած կեցած ատենը՝ երկու հատ կատաղի շուներ վրան վազեցին սաւանը պատռտեցին, ու մարմինը անչափ խածին, որ ողջ տեղ չիթողուցին, ու թէ որ քովինները շատ դժարութիւնով չիվընտէին շները նէ, բոլոր կուղէին կոր փարատել : Տանելէն թաղելէն ետքն ալ բոլոր ան կողմի շները սաստիկ կատաղութիով վրան վազեցին, գերեզմանը փորեցին՝ բացին, մարմինը դուրս հանեցին, ու կուղէին մնացածն ալ կասոր կտոր ընել . բայց շատ մարդիկներ զէնքերով վրանին գացին, ու մեծ աշխատութիով ազատեցին հոտած մարմինը շներուն բերնէն . վնդի ինքը ան մարմնոյն պատճառաւ Մ.Յ շնորհքը չարաչար գործածած ըլլալով՝ հոգին դատապարտութեն մատնած էր, Մ.Ճ ալ ուզեց, որ անիկայ ասանկ շները փարատեն : Կէստրիոսը իւր պարտէ :

ՏԵՍՆԵՐՈՐԴ ԼԵՍԵՐ

Ունակական շնորհքի վրա :

- Կ. Ինչ է ունակական շնորհքը, որ սրբարար շնորհք ալ կըսվի :
- դ. Գերբնական ու մնացող պարզե մի է,



որ Աճ մեր հողւոյն կուտայ մեր մեղքերուն  
թողութի տալով :

հ. Արօնք են սրբարար շնորհքին գործ-  
քերը :

ա. Օմեղ կարգարացունէ , Այ որդի՛  
Հողի սուրբին տաճար՝ Քնի ժառան-  
գակից , ու յաւիտենական կեանքին ար-  
ժանի կրնէ :

հ. Արօնք են առաքինութիւնները , որ սրբ-  
բարար շնորհքին հետ կից են :

ա. Հաւատքի՛ յուսոյ ու սիրոյ հեղական  
առաքինութիւններն են :

հ. Սրբարար շնորհքը կըրնայ մեր վրա  
աճիլ կամ շատնալ :

ա. Հրամմերես , անոր համար պէտք է  
որ աճեցունելու աշխատինք , ու անհո-  
գութիով կորսընցունելէն վախնանք :

հ. Սրբարար շնորհքը երբ կըկորսըն-  
ցունենք :

ա. Արբոր մահացու մեղք կըգործենք նէ :

հ. Սրբարար շնորհքը կորսընցունողը հա-  
ւատքը յոյսը՝ ու սէրն ալ կըկորսընցունէ :

ա. Սէրը կըկորսընցունէ , բայց հաւատքը  
ու յոյսը կըմնան , թէ որ անոնց ներհական  
մեղքերու մէջ ինկած չէ նէ , ինչպէս ան-  
հաւատութե ու յուսահատութե մէջ :

հ. Աերելի մեղքերը ի՞նչ կընեն մեր վրա  
սրբարար շնորհքի դէմ :

Պ. Սիրոյ եռանդը կը պակսեցունեն մահացու մեղքի փոխվելու վտանգի մէջ ձգելով զլիաւորաբար երբոր ներելի մեղքերը շուտ շուտ ու գիտութիւնով կը պատահին նէ, ու ասանկ ալ շնորհքը բոլոր կորսընցունելու մեղի ճամբայ կը բանան :

հ. Ինչպէս կը ընանք սրբաբար շնորհքը աճեցունել :

Պ. Օսնազան քրիստոնէական առաքիչ նութիւններուն ներգործութիւններովը, բարի գործքերով, ու ալ աւելի խորհուրդները շուտ ընդունելով :

հ. Սրբաբար շնորհք ունենալնուս վրա կը ընանք ապահով ըլլալ :

Պ. Չէ, առանց մասնաւոր յայտնութեան մարդը ստոյգ չի գիտեր, որ սիրոյ արժանի է, թէ ատելութեան, ու Մ<sup>Ժ</sup> ասանկ կարգադրած է զմեզ արթուն ու խոնարհուն մէջ պահելու համար :

հ. Մեզի մեծ պատիժ մը չէ՞ ասանկ անստուգութեան մէջ ապրիլը :

Պ. Հրամմերես, բայց ո՞վ որ իր ձեռքէն եկածը կընէ, խորհուրդները արժանապէս ընդունելով, ու կաշխատի իր պարտքերը կատարելու, անիկայ կը ընայ ինքը զինքը Մ<sup>Ե</sup> բարութեանը յանձնել, ու հանգչիլ :

Քանքարնէրոն պատմութիւնը :

Սնծ մարդ մը հեռու քաղաք մը երթալու ատենը իր ծառաները կանչեց, ու իր հարստութիւները բոլոր անոնց բաժնեց, մէկին հինգ քանքար տրվաւ՝ մէկին երկու քանքար, ու մէկալին մէկ քանքար, ամէն մէկին կարողութեւր չափ: Հինկ քանքար առնօղը գնաց շուտով բանեցունել սկսաւ, ու մէկին մէկ վաստրկելով հինկ քանքար ալ վրան եւելցուց: Ամանապէս ձրկու քանքար առնօղն ալ անանկ բանեցունելով՝ երկու քանքար ալ անիկայ եւելցուց: Սէկ քանքար առնօղն ալ ծուլութիւնով գործել չուզելով գնաց անիկայ գետինը թաղեց: Ատքը երբօր քանքարներուն ու իրենց տէրը եկաւ, ու իրենցմէ հաշիւները ուզեց նէ՛ գնաց հինկ քանքար առնօղը, ու տիրոջը ան հինկ քանքարը տալէն ետեւ, իր վրան վաստրկած հինկ քանքարն ալ տրվաւ՝ ըսելով, Ան քու տրվածովդ աս հինկ քանքարն ալ ես վաստրկեցայ: Տէրը ծառային ասանկ պզտիկ բանի մէջ հաւատարմութիւն գովեց, ու ձեռքը մեծ բարիքներ հաւատալու խոստացաւ, զինքն ալ իր ուրախութեւր մասնակից ըրաւ: Արկու քանքար վաստրկողն ալ անանկ ընելէն ետքը՝ մէկ քանքար

առնօղը առջևը ելաւ , ու ըսաւ . Տէր՝  
գիտէի , որ դուն խիստ մարդ մի ես , չի-  
ցանած տեղէ կըհնձես , ու չիտարածած  
տեղէ կըժողվես , անոր համար վախէս  
գացի՝ քու քանքարդ գետինը թաղեցի ,  
ու հիմայ ամբողջ բերի քեզի : Տէրը  
յանդիմանեց զինքը ըսելով . Չար ու ծոյլ  
ծառայ՝ թէ որ գիտէիր , որ ես չիցանած  
տեղէն կըհնձեմ , ու չիտարածած տեղէն  
կըժողվեմ , հապա իմ արծաթս ինչո՞ւ  
համար սեղանաւորներուն չիտրվիր , որ  
հիմայ անոնցմէ շահովը պահանջէի . առէք  
սաւոր ձեռքէն ատ քանքարն ալ , ու տա-  
րէք տասը քանքար ունեցողին տրվէք :  
Այլի ո՞վ որ ունի , անոր ալ աւելի տրու-  
վի , ու եւելնայ , ո՞վ որ ալ չունի , ունե-  
ցածն ալ ձեռքէն առնրվի : Ըտ անպիտան  
ծառան ալ գրսի խաւարը տարէք , ուր  
լալ ու աղուաները կըճտել պիտոր ըլլայ :  
Բնի աս օրինակը մեզի յայտնի կըսորվե-  
ցունէ , որ ինչ վտանգաւոր բան է շնորհ-  
քը աղէկ չիգործածելը , ու եւելցունելու  
չաչիտտելը , որ Ըճ ասանկ կըբարկանայ ,  
ու բոլոր ունեցածն ալ ձեռքէն առնելէն  
ետքը՝ զինքը յաւիտենական դատապար-  
տութե կըմատնէ : Ստոր . Ի :

Խրբարար սրբարար շնորհքի զեռ :

Պ. Սրբարար շնորհքը անսահման ու անդին գանձ մի է , որուն մէկ պզտիկ աստիճանը աշխարհի բոլոր թագերէն աւելի գերազանց է <sup>1)</sup> : Անանկ է նէ , ի նչպէս մեծ պիտի սեպենք ասիկայ , ի նչպէս պիտի աշխատինք չիկորսընցունելու համար , և ի նչ գեղեցիկ է սրբարար շնորհքի մէջ գտնուիմք հոգին <sup>2)</sup> . որ հաճելի է ԱՅ ու ամեն հրեշտակներուն :

Բ. Սրբարար շնորհքը անանկ գանձ մի է , որ չափէն աւելի շուտով կրկորսըլի , մինակ մահացու մեղք մը բաւական է զանիկայ կորսընցունելու համար <sup>3)</sup> . հազար թշնամիներ կըջանան ասիկայ մեր վրայէն վերցունելու համար , անոր համար ջանալու ենք զինքը վտանգի չիդնելու : Անչ մեծ կուրուծի կընեն անոնք , որ ասիկայ առանց ցաւելու կրկորսընցունեն : Անչ մեծ վտանգի մէջ է հոգի մը , որ սրբարար շնորհք չունի . ու ի նչպէս պիտոր աշխատի սրբարար շնորհքը ձեռք ձգելու համար :

1. Արեւելի . և եկն ինձ հոգի իմաստութիւն : Աւելի անսահման ընտրեցի զնա՝ քան զիշխանութիւն և զաթոռս . ինչ . է . 7 . 8 :
2. Զի ամ ոսկի առ նովաւ՝ որպէս սակաւ մի աւուադ . Անչ . 9 :
3. Անիմք զգանձս զայս յամանս իսեցիդէնս . Բ . Արեւելի . 7 . 7 :

Գ. Աս շնորհքը դանձ մի է, որն որ  
Ա՛ծ մեզի կուտայ ասով գործելու և վրան  
եւեւցունելու համար<sup>1)</sup>: Աէրը պարապ չի-  
կըրնար կենալ. սիրոյ մէջ յառաջ չեր-  
թալը ետ երթալ՝ ու սէրը եւեւցունելու  
չաշխատիլը՝ զինքը կորսընցունելու վտան-  
դի մէջ դնել է:

### Օրինակ:

Ախտերսական կարգէն կրօնաւոր մը  
Ա՛յ շնորհքը աղէկ գործածելով, ու միշտ  
վրան եւեւցունելով մեծ սրբութե՛հ հասած  
էր. ասիկայ հիւրնդցաւ, ու մահւան մօ-  
տեցաւ նէ, վանքին արբան գիշերը տե-  
սիլք մի տեսաւ՝ երկու գեղեցիկ երիտա-  
սարդներ, որ արեգակէն աւելի կրփայլէին  
կոր, դասին բոլոր յատակը հոտաւէտ  
աղւոր ծաղիկներով զարդարած՝ երկրա-  
ւոր դրախտի պէս ըրած էին: Ա՛բբան հար-  
ցուց իրենց, Ա՛վ բարի երիտասարդներ՝ ը-  
սաւ, ի՞նչ կրնէք, աս տեղս մեր սովո-  
րութե՛ր դէմ՝ աշխրբի մէջ չիգտնըված  
ծաղիկներով լեցուցեր էք: Աւրախուիով  
ու խնտալով պատասխան տրվին հրեշ-  
տակները, որ Ա՛ի զարմանար արբահայր  
աս մեր ըրածին վրա. վնդի սյսօր հոս

1. Ա՛նցէք շնորհօք. Բ. Պէր. Գ. 18:



տեղս մէկ սուրբ կրօնաւորի համար նոր ու  
մեծ ուրախութեան տօն պիտի կատարենք,  
որ Մ.Յ ու բոլոր երկինքի բաղմութիւններուն  
շատ սիրելին է, որուն ցնծութեան տօնին  
հրեշտակները կուրախանան կոր, ու վերի  
Լըրուսաղէմի մէջը Մ.Յ նոր երգ պիտոր  
երգեն, անոր համար Մ.Ծ զմեզ ալ հոս  
խրկեց, որ անոր անուշահոտ առաքինութեան  
թիւներուն համաձայն անոր հանդիսութեան  
օրը հոս ալ ասանկ հոտաւէտ ծաղիկներով  
զարդարենք: Մ.բբան տեսիլքի մէջ ասանկ  
հրեշտակներուն հետ խօսած ատենը կրօ-  
նաւորները եկան՝ զինքը արթընցուցին,  
որ հիւանդը մեռնելու վրա է, երթայ  
վերջին օծումը տայ, որուն համար եր-  
կինքի սուրբերը հրեշտակները անանկ մեծ  
պատրաստուն մէջ կրսպասէին կոր՝ զինքը  
ուրախութեամբ ընդունելու համար: Մ.բ-  
բան վաղեց շուտով, ու մեծ ուրախութեամբ  
բոլոր խորհուրդները որվաւ, գիտնալով  
որ հիւանդը աչքը գոցածին պէս հոգին  
երկինքը պատրաստըված հարսնիքը պի-  
տոր թուէր, որ ամմէն խորհուրդները  
կատարելէն ետքը իր սուրբ հոգին սպա-  
սօղ հրեշտակներուն ձեռքը խնտալով ա-  
ւանդեց: Ախարէրստիաննէրուն Ժամանակա-  
գրոս. Բ-ը: :

ՏՄԱՆԲԱՒԵՂՆԲՈՐԻ ՀԱՄԱՐ

Սահման շտա :

Կ. Ո՞ր բանը աւելի կարթընցունէ զմեզ  
չարէն փախչելու, ու բարին գործելու  
համար :

Պ. Սեր վերջինները շատ անգամ մըտ-  
քերնիս բերելը :

Կ. Վրանի՞ն են մեր վերջինները :

Պ. Չորս են՝ մահ, դատաստան, գժոխք,  
արքայութի :

Կ. Սահը ի՞նչ բան է :

Պ. Հոգւոյն մարմնէն բաժնըվիլն է :

Կ. Ըմէն մարդ պիտոր մեռնի՞ :

Պ. Հրամներես, ամմէն մարդ՝ որ բնա-  
կան եղանակաւ Ըդամին օրդին է, պիտոր  
մեռնի, ասկէ ամենեին ազատիլ չիկայ .  
ինչւան հիմայ մինակ Ենովքը ու Եղիան  
կենդանի պահեց Ըժ, բայց անոնք ալ  
նեռին ատենը իրեք ու կէս տարի հրաչքներ  
գործելով Վնի սք հաւատքը քարոզելէն  
ու նեռին դէմ պատերազմելէն ետքը՝ մար-  
տիրոսութի պիտոր մեռնին :

Կ. Ըժ աս մեռնիլը ի՞նչ բանի համար  
դրաւ :

Պ. Սեր նախահօրը Ըդամին դրախտի մէջ  
ըրած անհնազանդութե մեղքին համար  
պատիժ դրաւ, ու մենք ալ Ըդամին օր-

դիքները ըլլալով՝ աս պատիժը մեր վրա  
ալ ինկաւ :

հ. Որ ժամանակ պիտի մեռնինք :

ող. Սեռնելնիս որչափ յայտնի է նէ, ժա-  
մանակն ալ անչափ դաղտնի պահեց Մծ,  
մինակ ինքը դիտէ, իրմէն իզատ ոչ եր-  
կինքը ոչ երկրիս վրա դիտցող կրգտնրվի,  
և մեզի ապսպրած է ամմէն ժամանակ  
պատրաստ կենալու, որ յանկարծ մահը  
հասած ատենը անպատրաստ չիգտնրվինք :

հ. Սեռնելէն ետքը ի՞նչ կըլլայ :

ող. Սնորմինը կըփտտի՝ հող կըլլայ, ու  
հողին Մյ դատաստանին առջևը կելլայ :

Սաւուղէն Խարայէլին պատմութիւն :

Սաւուղ Խարայէլին առջի թագաւորը  
Մմաղէկի դէմ պատերազմելու ատենը Մյ  
յայտնի հրամանին անհնազանդութի ըրաւ  
նէ, Սամուէլ մարդարէն Մյ կողմանէ  
իրեն ըսաւ, որ ըրած անհնազանդութեդ  
համար Մծ շատ բարկացած է, թագաւո-  
րութիւնը ձեռքէդ պիտոր առնու և ուրիշ  
քեզմէ աղէկին պիտոր տայ, ու Մյ հրա-  
մանաւը չար դե մի ալ սկսաւ զինքը  
տանջել, որ ըրած անհնազանդութե մեզ-  
քին ծանրութիւնը ճանչնայ, ու զղջայ :  
Սաւուղ զղջալուն տեղը աւելի չարացաւ,  
սկսաւ եղբարսիրութե պատուիրանն ալ

ստքի տակ առնուլ, ու անիրաւ տեղ  
Ղաւթիթը հալածել. որն որ Մ<sup>Ժ</sup> անոր  
տեղը թագաւոր օծել տրված էր, ու Մ<sup>Ե</sup>  
Հողին ալ Սաւուղին վրայէն վերցաւ ու  
Ղաւթիթին վրա եկաւ: Մ<sup>Ե</sup> պատժով ալ  
չիդարձաւ ու չիզղջացաւ նէ՛ այլազգի-  
ները Մ<sup>Ե</sup> թողլ տալովը իրեն դէմ պատե-  
րազմ բացին, ու զինքը չափէ դուրս վա-  
խի ու նեղութե մէջ ձգեցին: Մ<sup>Ն</sup> ատենը  
սկսաւ զՄ<sup>Ժ</sup> փնտռել, որ զինքը ան նե-  
ղութիներէն ազատէ: Մ<sup>Ժ</sup> ալ իրեն բար-  
կացած ու զինքը երեսէ ձգած ըլլալով,  
իրեն պատասխան չիտրվաւ: Ատքը մահ-  
ւանէն օր մը յառաջ յայտնեց իրեն, որ  
իրեն դէմ շատ բարկացեր ու երեսէ ձգեր  
է զինքը, անոր համար երկրորդ օրը պա-  
տերազմի մէջը պիտոր յաղթըվի, ինքն ալ  
տղաքներն ալ պիտի մեռնին, ու թագա-  
ւորութիը ուրիշին պիտոր երթայ: Արը-  
նայ գտնըվիլ աշխրբիս մէջը ասկէ մեծ  
ցաւ, որ մէկը իմանայ, որ Մ<sup>Ժ</sup> իրեն դէմ  
սաստիկ բարկացեր ու երես դարձուցեր է,  
մահւան ատենը եկեր հասեր է. մեղքերը  
աչքին առջևը շարված՝ խղճմտանքը զինքը  
սաստիկ կրտանջէ, ու սրտին մէջը զղջում  
չունի: Մ<sup>Ն</sup> անկ կրպատահի շատ անգամ  
անզեղ կեանք անցունող մեղաւորներուն  
ալ. չիկարծած ատեննին մահը դիմացնին





կամուժե՛ մէջ ըլլալով՝ Վճ ալ անոնց անանկ նեղ ժամանակը՝ իրենց սրտի մխիթարութի, ու անգին ուրախութի մը կը պարզէ, որ հոս տեղէն կըսկսին արքայութե մէկ պղտիկ համը առնուլ. վնդի արդարներուն մահը սիրելի է Վճ<sup>1</sup>):

Բ. Սեղաւորները անոր ներհակը՝ իրենց կեանքերնուն մէջը աշխրբիս բաները անոնց արժողութէ աւելի սիրելով՝ բոլոր իրենց երանութիը անոնց վրան դրած ըլլալով՝ մահուան սոսկալի ատենը իրենց հասարակ նեղութիներուն վրա՝ զանոնք թող տալն ալ իրենց վրա նոր նեղութիներ ու նոր չարչարանքներ կեւելցունէ. քանի անգամ որ Վճ ու ընկերին սիրուն պատւիրանները ոտքի տակ առնելով զՎճ բարկացուցած էին նէ՛ բոլոր աչքերնին առջևը շարվելով՝ իրենց խղճմտանքներուն անմահ որդերը իրենց սիրտերը կը խածնեն ու կըտանջեն, վերջապէս Վճ շունորհքը ու բարեկամութիը կորսնցուցած ըլլալով վերջին յուսահատութե մէջ կիչնան<sup>2</sup>): Ինչ մեծ չար կըրնայ դտնելիլ ասոնցմէ աւելի, որ բոլորը մէկ տեղ ողորմելի մեղաւորին երթալու դժոխքին

1. Պատուական է առաջի Տեառն մահ սըց իւրոց .  
Սաղմ. 62է. 6 :

2. Սահ մեղաւորի չար է . Սաղմ. 127. 22 :



դառն համերը հոս տեղէն կըսկսին ճաշակել տալ :

Գ. Սեղաւորներուն ասանկ դառն մահւանէ փախչելու՝ ու արդարներուն անանկ անուշ մահւանը արժանի ըլլալու համար գլխաւորաբար հարկաւոր է, որ մեղաւորներուն մահը շարունակ աչքերնիս առջևը պահենք մահւաննիս ատենը ինչպէս կուզէինք, որ ապրած ըլլայինք նէ՛ հիմըկուց սկսինք անանկ ապրելու՝ ու Վսի արժուն կենալու պատւիրանը ամենեւին չիմոռնանք<sup>1)</sup> :

### ( ) Երկնայի :

Ճգնաւոր մը շարունակ Ա՛յ կաղօթէր իրեն յայտնելու համար, որ ինչպէս կըբաժնըվին արդարին ու մեղաւորին հոգիները իրենց մարմիններէն : ( ) ր մի խուցը կեցած ատենը մեծ առիւծ մը կուգայ՝ ճգնաւորին զգեստէն ակռայովը կըբռնէ, ու կըսկսի քաշել, ճգնաւորը առիւծին ետեւը կիյնայ՝ կըսկսի երթալ, որ զինքը քաղքի մի մօտ կըտանի՝ կըձգէ : Ան տեղը կընստի ճգնաւորը, ու կըտեսնէ, որ մեծ անունով ճգնաւոր մը կըմեռնի կոր, որուն

---

1. Արժուն կացեք՝ զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամ .  
Սարգ. Է. 13 :

բոլոր քաղքի մարդիկները մոմերով, խուճկերով ու տեսակ տեսակ պատրաստութիւններով գլուխը ժողված՝ կուլային կոր՝ ըսելով . **Մ**Թ ասոր աղօթքովը կուտար մեզի մեր հացը , ջուրը ու մեր խաղաղուիը , թէ որ ասիկայ կրմեռնի նէ , ամմէնքս ալ պիտի կորսրվինք : **Բ**այց ճգնաւորին մարդկան առջևը գովելի գործքերը **Մ**Ե առջևը գովելի չըլլալով , ու բոլոր ըրածը կեղծաւորութե համար ըլլալով մահւան ատենը եկաւ նէ՝ դժոխքը բացվեցաւ , ձեռքը իրեքճղի (իւչ չաթալ) կրակէ տէգով սատանայ մը ելաւ՝ ու հիւանդին քովը կեցաւ : Իրեն ձայն մը եկաւ , որ կրսէր . **Ի**նչպէս ասիկայ զիս ժամ մը չիհանգչեցուց , անանկ դուն ալ ասոր մի ողորմիր , հոգին դառնութիւով առ , ու յաւիտեան չիհանգչի : **Մ**ն ատենը անողորմ սատանան ձեռքի հրեղէն տէգը հիւանդին կուրծքը խօթեց , սիրտը վիրաւորեց , երկայն ու ծանր տանջանքներով հոգին առաւ , ու դժոխքի յաւիտենական տանջանքներու մէջ ձգեց : **Ղ**գնաւորը աս տեսիլքէն վախցած՝ քաղաքը մտաւ , ու մէկ կողմը նստած լալու ատենը ուրիշ տեսիլք մի ալ տեսաւ : **Ո**ր ճամբուն վրա ուրիշ ճգնաւոր մի ալ հիւանդ պառկած էր , իրեն օգնելու համար քովը մարդ մը չունէր , ու ինքն

ալ հոգեվարութե՛ն մեջն էր : Միքայէլ ու  
 Վարրիէլ հրեշտակապետները երկնային  
 զօրքերով ու մեծ պատուով հոգին առնե-  
 լու համար եկած՝ երկուքը երկու դին ան-  
 ցած հոգին աւանդելուն կըսպասէին կոր .  
 հոգին ալ բնական կապակցութե՛ն սիրուն  
 համար չէր ուղեր կոր մարմինէն զատվիլ :  
 Միքայէլը Վարրիէլին ըսաւ, որ հոգին  
 առնու, որ երթան . ան ալ պատասխան  
 տրվաւ, որ Մ<sup>ծ</sup> հրամայած է, որ ասոր  
 հոգին անուշութիով առնունք : Մ<sup>ն</sup> ա-  
 տենը Միքայէլը Մ<sup>յ</sup> հարցուց, ըսելով .  
 Տէր՝ ի՞նչ կըհրամայես աս հոգւոյ հա-  
 մար, որ չուղեր կոր մարմինը թող տալ :  
 Երկինքէն ձան եկաւ . կամացը թող տը-  
 վէք, մի բռնադատէք, ես Վաւիթ մար-  
 գարէն կըխրկեմ ուրիշ երգիչներով, որ  
 գան՝ հոն տեղը երգեն, ու հոգին երգե-  
 րուն անուշութիւր ըսելով՝ կամաւ կելլայ,  
 անոնց հետ կըխառնըվի, ու շատ պատուով  
 բերէք ինծի : Մէյ մը ալ տեսաւ եկող  
 ճգնաւորը, որ երկինքէն Վաւիթ մար-  
 գարէն շատ երգիչներով իջաւ, դաս կա-  
 պեցին, սկսան անոնցին երգեր երգել,  
 հիւանդին հոգին ըսելով՝ ան երգերուն  
 անուշութիւր՝ իր կամքովը ելաւ, ու Մի-  
 քայէլ հրեշտակապետին ձեռքը եկաւ,  
 որ զինքը երկինքը տարած ատեննին դաս

դաս հրեշտակներ գիմացը կելլային, ու  
ասանկ մեծ պատիւներով ԱՅ առջևը հա-  
նեցին յաւիտենական կեանքը վայելելու  
համար: Հարանց շարիմի մեջը կըպարտուին:

### ՏԵՍԻՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ ԷՆՍՆԸ

Առանցնալան դասաստանի շրջան:

հ. Քանի՞ տեսակ դատաստան կայ:

ա. Երկու՝ առանձնական ու ընդհան-  
րական:

հ. Առանձնական դատաստանը ի՞նչ է:

ա. Բարակ քննութի մի է, որ Քս մահ-  
ւանէ ետքը անմիջապէս կընէ ամմէն մար-  
դուն գործքերուն վրա՝ անոնց արժանի  
հատուցումները անմիջապէս ամմէն մէկին  
հոգիներնուն տալու համար:

հ. Քս աս առանձնական դատաստանէն  
ետքը արդար հոգիներուն ի՞նչ հատու-  
ցում կուտայ:

ա. Թէ որ ամենեին արդար են, ու մեղքի  
արատ մի ալ չունին նէ՝ անմիջապէս ար-  
քայութե յաւիտենական փառքերը կու-  
տայ, ու սքերուն ու սք հրեշտակներուն  
մէջը կըխառնէ:

հ. Ի՞նչ հատուցում կուտայ ան արդար  
հոգիներուն, որ թողված մահացու մեղ-

քերու, և չիթողված ներելի մեղքերու  
ժամանակաւոր պատիժները չիվճարած  
մեռած են :

Պ. Օանոնք ալ քաւարանը կըխրկէ՝ հոն  
տեղի տանջանքներով ան պատիժները  
վճարելու, մաքրվելու, ու անանկ արքայ-  
ութիը մտնելու համար :

հ. Սահացու մեղքերու մէջ անղեղջ մեռ-  
նօղ մեղաւորներու հոգիներուն ի՞նչ հա-  
տուցում կրնէ :

Պ. Օանոնք ալ դժոխքը կըդատապարտէ,  
ու վճիռը ելածին պէս իր հրամանաւը սա-  
տանաները զիրենք կըյափշտակեն, ու  
անմիջապէս դժոխքի յաւիտենական կրա-  
կի ու տանջանքներուն մէջ կըտանին :

հ. Ինչո՞ւ աս դատաստանը առանձնական  
կըսվի :

Պ. Նախ՝ որ աս դատաստանի մէջ մինակ  
Վ.Յ դատաւորը ու դատելի հոգին կը-  
գըտնելին, ու հրապարակական չէ, երկ-  
րորդ՝ որ Վ.Յ մինակ զհոգին դատելով  
անոր միայն վարձքը կամ պատիժը կուտայ :

հ. Արբ կըլլայ աս առանձնական դա-  
տաստանը :

Պ. Ըմմէն մէկ մարդու մահւան տտենը՝  
անմիջապէս հոգին մարմինէն բաժնրվա-  
ծին պէս :

հ. Ինչո՞ւ համար Վ.Յ ան ատենը բոլոր



մարդը մէկ տեղ չի գատեր, ու մինակ զհոգին կրգատէ:

Պ. Այլի հոգին մահաւմբ բաժնրվածին պէս մարմինը անբան անզգայ բան մը կըլլայ, որ դատաստանի՝ վարձքի կամ պատժոյ ընդունակ չէ:

հ. Ինչո՞ւ Քս հոգւոյն դատաստանն ալ վերջին դատաստանին չի թողուր, ու մեռածին պէս կընէ:

Պ. Այլի հոգին անմահ ըլլալով մարդուն մահաւանէն ետքն ալ կըմնայ, ու վարձք կամ պատիժ ընդունելու կարող է, անոր համար Այ արդարութիւր՝ որ կը պատուիրէ վարձկանին վարձքը վաղւան թող չիտալու, ուզեց անմիջապէս դատաստանին կտրել ու վարձքերնին՝ կամ պատիժնին հատուցանել:

Սեծատունն ու Վազարոսին պարտութիւն:

Սեծատուն մարդ մը կար, որ բոլոր կենացը մէջ փառաւոր կըհագնէր, կըկապվէր, կուտէր, կըխմէր ու կուրախանար: Աղորմելի աղքատ մի ալ կար Վազարոս անունով, որ մարմինը բոլոր վէրքերով լեցված, չափէ դուրս անօթի՝ ան մեծատունին պալատին դռան քովը կըպառկէր, ու անոր սեղանէն ինկած փրշրանքներով կըբաղձար իր սաստիկ անօ-



թու թեր օգնել : Բայց մեծատունին շատ  
 ազահ ըլլալուն համար անոնք ալ դժար  
 կրնար գտնել : Եւները մեծատունէն  
 աւելի գթած ըլլալով՝ չորս գիէն կամա-  
 ցուկ կամացուկ վերքերը կըլզէին : Վա-  
 զարոսը մեռաւ, ու ԵՅ արդար դատաս-  
 տանաւը հրեշտակները իր սք հոգին Եբ-  
 րահամու գոգը տարին՝ (վսղի ան ատենը  
 արքայուն գուռը գոց ըլլալով՝ արքայուն  
 արժանի արդարները հոն կըժողվէին) :  
 Սեծատունն ալ մեռաւ, ու հոգին դժոխքը  
 դատապարտեցաւ : Վժոխքի տանջանքնե-  
 րուն մէջը վեր նայեցաւ, Եբրահամը տե-  
 սաւ, ու անոր գիրկը Վազարոսը՝ որ հան-  
 գիստ կեցած էր : Վարէն կանչեց . Հայր  
 Եբրահամ՝ ողորմէ ինձի, ու Վազարոսը  
 խրկէ, որ մատին ծայրը ջրով թրջէ, ու  
 լեզուս քիչ մը պաղըշտրկէ, որ աս տաքէն  
 կըպապակիմ կոր : Եբրահամը պատասխան  
 տրվաւ, որ Սիտքդ բեր աշխրքի մէջ քու  
 ունեցած բարիքներդ, ու Վազարոսին  
 քաշած չարչարանքները . հիմայ ասիկայ  
 հոս կըմխիթարվի, դուն ալ հոն կըպապա-  
 կիս : Եսիկայ երկու առանձնական դա-  
 տաստաններուն պատմութիւն է, արդարին  
 ու մեղաւորին . արդար Վազարոսին հոգին  
 երանութն վարձքին վճիռը կընդունի՝  
 Եբրահամին գոգը կերթայ, որ Քսի

մահաւամբը արքայութե՛ն դուռը բացվածին  
պէս երթայ յաւիտենական կեանքը ժա-  
ռանգէ, ու մեղաւոր մեծատունը յաւի-  
տենական դժոխքը կը դատապարտի, որ  
միշտ բաց ըլլալով՝ անմիջապէս կերթայ,  
ու կը սկսի չարչարվիլ: Ա՛ս պատմութիւնը  
աւետարանի մէջ Վ՛ս ինքը կը պատմէ ար-  
քայութե՛ն, դժոխքին ու առանձնական  
դատաստանին ճշմարտութիւնը մեզի յայտ-  
նելու համար. անոր համար չեմ գիտեր,  
ի՞նչ պատասխան ունին տալու աս դա-  
տաստանը ուրացողները Վ՛ս դատաւորին  
առջևը ելած ատեննին: Ղ Դ-ի. ԺԿ:

Խորոպ առանձնական դատաստանի վրա:

« . Ա՛ռանձնական դատաստանը շատ  
բարակ քննութի մի է. որն որ Վ՛ս իր  
անսահման իմաստութիւնովը կընէ ամ-  
մէն մէկ հոգիներուն վրա մահաւամբ իրենց  
մարմիններէն բաժնըված բոպէն. որ չի-  
կըրնար ամենևին խաբվիլ, կամ իրմէն բան  
մը ծածկըվիլ: Ա՛ս զարհուրելի քննութիւնը  
մարդուն ամմէն խորհուրդներուն, խօս-  
քերուն ու գործքերուն վրա կը լլայ <sup>1)</sup>:  
Արոնց վրա իր անձային լոյսը ծագելով՝

1. Չմտ սիրտ քննէ Տէր . և զմտ խորհուրդս  
անհասէ . « . Ս՛նայոյ: Է. 9:

ողորմելի հոգին ալ զանոնք առջի տեսածէն շատ տարբեր կըտեսնէ<sup>1)</sup>, անոնք՝ որ յառաջ առաքինութի կրկարծէր նէ՝ կըտեսնէ, որ շատերը մոլութիւններ են եղեր, որոնք որ կենդանութե ատենը մեղքի տեղ չէր դներ նէ, կըճանչնայ, որ մեղք են եղեր, ու շատ բաները՝ որ իրեն ներելի ու թեթե մեղքեր կերենային նէ՝ կիմանայ, որ մահացու և ծանր մեղքեր են եղեր<sup>2)</sup>, ու թէ որ ծանր յանցանօք պատաւորելու ըլլայ, մեծ վախով ու դողալով դատաւորին վճիռին կըսպասէ . ինչ զարհուրելի բոպէ:

Բ. Դատաւորը անմիջապէս վճիռը կուտայ . արդար հոգւոյն վրա տրվածը շատ քաղցր ու շատ երջանիկ վճիռ է, որ անով արքայութե յաւիտենական փառքերը իրեն վարձք կուտայ<sup>3)</sup>, դատաւորէն վճիռը ելածին պէս հրեշտակները զինքը ուրախութիով արքայութի կըտանին յաւիտեան իրենց հետ զՎճ փառաբանելու համար<sup>4)</sup>: Սեղաւոր հոգիներուն վրա ալ

1. Ս Բաժան մարդոյ յայտնութի գործոց իւրոց՝ Երկ. Բ. Գ. 29:
2. Այնչ զիտեմ անձին իմոյ . այլ ոչ եթէ այսու արդարանամ, զի որ քննէն զիս՝ Տէր է. Ե. Երկ. Գ. 4:
3. Ս Եւ յուրախութի տեան քո . Ս. Երկ. Գ. 23:
4. Ս Եւ են՝ որ գան ՚ի վշտաց մեծաց, և լուացին

տասր ներհակը վախնալու և դառն վճիռ  
կուտայ, որ իրեն չար գործքերուն համար  
դժոխքին յաւիտենական տանջանքներուն  
կըղատապարտէ <sup>1)</sup> . ու նոյն բոպէի մէջ  
սասանաները զինքը դժոխք կըտանին, որ  
յաւիտենական տանջանքներու՝ լացքի ու  
ողբի տեղն է :

Գ. Այլև ու զարմացիր Ա՛յ արդարու-  
թե՛ր վրա . որ չուզեց՝ որ իր սիրելիներ-  
րուն, այս ինքն՝ Ա՛քելին, սք մարգարէնե-  
րուն, սք Յովհաննէս Ա՛կրտիչին, սք ա-  
ռաքեալներուն, մարտիրոսներուն, մեր  
բազմաչարչար սք լուսաւորչին ու բոլոր  
հին ու նոր օրէնքի սքերուն ու արդար-  
ներուն մաքուր հոգիները, որ իրենց  
կեանքերնուն մէջը Ա՛յ սիրուն ու Յնի սք  
անւանը խոստովանութե՛ր համար անչափ  
չարչարանքներ քաշեցին, մահւանէ ետքն  
ալ Այսենին, Յուդային, բոլոր չար հե-  
րետիկոսներուն, հերետիկոսապետներուն  
ու անզեղջ մեռնօղ մեղուորներուն պիղծ  
հոգիներուն հետ մէկ տեղ հաղարաւոր

զարկանելիս իւրեանց՝ և սպիտակացուցին ա-  
րեամբ գառինն : Ա՛ն այնորիկ են առաջի աթո-  
ռոյն Աստուծոյ և պաշտեն զնա զաիւ և զգի-  
շեր ՚ի տաճարի նր . Յոյ . Է . 14 . 15 :

1. Զճառայդ անպիտան հանէք ՚ի խաւարն ար-  
տաքին . անդ եղիցի լալ և կըճել ատամանց .  
Ա՛սդ . Է . 30 :

տարիներով ինչպէս վերջին դատաստանին օրը անորոշ վիճակի մէջ մնալով հառաչեն ու չարչարվին, այլ ուղեց անմիջապէս ամսէն մէկին մահաւամբը աշխատութեան օրերնին իրիկուն եղածին պէս վարձերնին ձեռքերնին տալ ու մսիթարել զիրենք<sup>1)</sup>։ Ամանապէս մեղաւոր հոգիներուն ալ ուղեց պատիժնին անմիջապէս տալ, որ իրենց կեանքերնուն մէջը անչափ չարիքներ գործելէն ետքը անչափ տարիներ ալ անպատիժ չիմանն։

( ) Երկուսի :

Փարիզ քաղաքը սբ Վրանկիսկոսի Էրչը ըսված կարգէն մէկ վանքին մէջը պատանի մը նորընծայ եղաւ, որ քիչ ժամանակ շատ միամիտ ու մաքուր վարքով ապրելէն վերջը ծանր հիւրնդցաւ, ու հոգեվարութեան հասաւ. ինքը զինքը կորսրնցուցած պառկած ատենը՝ վախնալու ձայնով մը պոռաց, ըսելով. Այն ինձի ողորմելիս, երանի թէ չէի ծնած. քիչ մը ատենէն ետքը նորէն կանչեց՝ ու ըսաւ. Արդարութիով կըշուէ. ետքէն աղաչեց՝ որ քիչ մը ալ Յս Քսին չարչարանքներուն

1. Մի ազգին վարձք վարձկանին առ քիչ մինչև ցառաւտու. Ղ. Է. Գ. 13:



արդիւնքներէն վրան դնեն, և վերջը հան-  
 դիստ սրտով ըսաւ . Հիմայ աղէկ է : Արօ-  
 նաւորները՝ որ քովը ժողված էին, շատ  
 վախցան ու զարմացան, որ տղայ մի ան-  
 չափ մայքրութիով ու անմեղութիով ապ-  
 րելէն ետքը ասանկ վախնալու և դողալու  
 բաներ ըսէ : ‘Նորընծան արթընցաւ, ինք  
 իրեն եկաւ նէ, կրօնաւորները անանկ բա-  
 ներ կանչելուն ու խօսելուն պատճառը  
 հարցուցին իրեն : Աւ ան ալ պատմեց ի-  
 րենց, որ Ա՛յ դատաստանին առջևը ելայ,  
 ու տեսայ, որ անանկ խիստ համար կը-  
 պահանջէր կոր պարապ խօսքերու ու պրզ-  
 տիկ պակսութիւններուն վրա, ու անանկ  
 բարակ կը քննէին կոր ամմէն մէկ պղտիկ  
 պակսութիւներս ու անկատարութիւներս,  
 որ բոլոր արդիւնքներս յանցանքներուս  
 քովը բան մը չէին սեպվեր կոր, ու անոր  
 համար վայ տրլի ինծի անանկ պողալով :  
 Տանցանքներս սաստիկ ճշդութիւնով  
 կը շուրջէն ետքը, երբոր արդիւնքներս  
 բանի տեղ չէին դներ կոր նէ, ըսի՝ որ  
 արդարութիով կը շեն, և տեսայ՝ որ բարի  
 դործքերս քիչ էին, ու անոնցմով փրո-  
 կութ չէի կը ընար հասնիլ, աղաչեցի՝ որ  
 քիչ մի ալ Յս Քնի չարչարանքներուն  
 արդիւնքներէն դնեն վրան, ու երբոր  
 դրին նէ, անմիջապէս կը իտին բարեգոր-



ծուծէ կողմը ծանրցաւ, ու դատաւորը  
փրկուծէս վճիռը տրվաւ. ան ատենը  
ըսի ուրախուծիով, որ հիմայ աղէկ է:  
Նորընծան ասիկայ պատմեց, ու հոգին  
ուանդեց: Ըն կրօնին ժամանակագրութեան  
Տեղե գրված է:

### ՏԵՍԻՒՐՆԻԵՆՐՈՐԴ ԼԵՍՆԵՐ

Ընդհանրական դատաստանի ու յարուէ վրա:

հ. Ընդհանրական կամ վերջին դա-  
տաստանը ի՞նչ է:

պ. Ըն է, որ Քս աշխարհքին կատարա-  
ծին պիտի գայ՝ ու ամեն մարդիկներուն  
վրա մէկ տեղ ընդհանուր դատաստան  
պիտոր ընէ:

հ. Ընչ բանի համար ան ատենը զամեն-  
քը նորէն պիտի դատէ, որ մեռած ատեն-  
նին արդէն մէկիկ մէկիկ դատած, ու իրենց  
գործքերուն յարմար վարձք կամ պատիժ  
տրված է:

պ. Ըն ատենը նորէն ամեն մէկին խոր-  
հուրդներուն, խօսքերուն ու գործքերուն  
վրա քննուծի պիտոր ընէ. յառաջ՝ որ  
մինակ զհոգին դատած էր նէ, ան ատենը  
բոլոր մարդը հոգևով ու մարմնով պիտի  
դատէ. յառաջ՝ որ մինակ հոգիներուն  
վարձքը կամ պատիժը տրված էր նէ՝ ան

ատենը բոլոր մարդուն պիտոր փայ, ու յառաջ որ առանձին դատած էր նէ, ան ատենը իր դատաստանին արդարութիւր բոլոր հրեշտակներուն, սքերուն, սատանաներուն և դատապարտեալներուն առջևը պիտոր հաստատէ, ու անոնց ալ հաստատել պիտոր փայ :

հ. Ա երջին դատաստանէն յառաջ ի՞նչ պիտի պատահի :

ա. Ա երջի ժամանակները աշխրբիս վրա ետեւէ ետեւ մեծ մեծ նշաններ ու վախնալու պատուհասներ պիտի գան, Վս դատաւորին իշխանութիւր, մեծութիւր ու ահաւորութիւր ցուցունելու համար :

հ. Ընոնցմէ իզատ ուրիշ բան ալ պիտոր ըլլայ :

ա. Հրամներես, ընդհանուր կրակ մի ալ պիտի ըլլայ, որ բոլոր աշխարհքը երէ՛լափէ ու մաքրէ, ու առջի պատուհասներէն կենդանի մնացող մարդիկներն ալ ան կրակէ մեռնին, ու աշխրբի վրայի բոլոր կենդանիները, ու բուսերը վերջանան պիտոր :

հ. Հարութիւր երբ պիտի ըլլայ :

ա. Ընմիջապէս ան կրակը բոլոր աշխարհքը մարդկան մեղքերուն աղտոտութիւննոր մաքրելէն, ու նոր երկիր ըլլալէն ետքը :

հ. Հարութիւր ի՞նչպէս պիտոր ըլլայ :

դ. Վարրիէլ Տրեշտակապետը մեծ փողով մը երկինքի արդարները ու դժոխքի դատապարտեալները՝ ու բոլոր մեռած մարդիկները դատաստան պիտի կանչէ, որուն ձայնը արքայութիւն ինչւան դժոխքը պիտի լըսվի, ու անմիջապէս ամմէն մարդ իր մարմնովը յարութի պիտոր առնու և կենդանանայ :

հ. Վս ինչպէս պիտի գայ դատաստան ընելու համար :

դ. Մարդկային մարմնով ու կերպարանքովը, բայց անձային փառօքը՝ լուսերու մէջ, ու չորս դին երկինքի բոլոր Տրեշտակներովը պիտի գայ, ու օդը կենայ, որ զինքը ամմէնը տեսնեն :

հ. Ինչ ըսել է աւետարանին ան խօսքը, որ կըսէ. Եւս երեւոյցի նշան Սրբոց Կարգոց :

դ. Ըսել է, որ Վսի առջևէն սք խաչին նշանը մեծ փառքերով ու ճառագայթներով պիտի գայ, ու օդին վրա կենայ, որ արդարները տեսնելով իրենց փրկութե գործիքը՝ ուրախանան, ու մեղաւորները և անհաւատները խաչին յարգութիւնը չիճանչնալնուն համար տրտմին :

հ. Սր պիտոր ընէ Վս իր աս վերջին դատաստանը :

դ. Յովսափաթի ձորը՝ իր աղօթած, պըտրտած ու շարչարված տեղերը :

հ. Լ՛ս գասաստանի մէջ արդարները ո՛ւր պիտի կենան :

դ. Իրենց փառաւոր մարմնովը օգը պիտոր ելլան հրեշտակներուն կարգը, որ Վ՛սի աջ կողմը կըսվի :

հ. Ս՛եղաւորները ո՛ւր պիտի կենան :

դ. Իրենց տգեղ մարմնովը՝ անմխիթար տրտմութե՛ն մէջ արդարներէն զատված՝ մեծ ամօթով ու վախով՝ սաղայելին ու բոլոր անոր սատանաներուն հետ մէկ տեղ երկրի վրա պիտի կենան, որ Վ՛սի ձախ դին կըսվի :

հ. Վ՛ս արդարներուն ի՞նչ վճիռ պիտի տայ :

դ. Իրենց բարի գործքերը ու գովեստները ամմէնուն առջևը հրատարակելէն ետքը՝ զիրենք իրենց մարմնովը նորէն արքայուի պիտի հրաւիրէ, ըսելով. Լ՛իայ օրհնեալը Լ՛օր ի՛նչ՝ Ժառանգեցէ՛ք զպարտապետ յեզ զարքայո՛ւնն՝ ՚ի սիւլէանէ տշխարհի :

հ. Ս՛եղաւորներուն ի՞նչ վճիռ պիտի տայ :

դ. Իրենց մեղքերը ու անգթութիւնները ամմէնուն առջևը երեսնին զարներէն վերջը՝ զիրենք ալ իրենց մարմնովը նորէն դժոխք պիտի դատապարտէ, ըսելով. Լ՛իւլայ յինէն անիծեալը՝ ՚ի հոսն յա՛նիստ

նախն : որ պարտապէտք է ստատանայի եւ  
հրէշտակաց նր :

հ. Արդարները ի՞նչպէս պիտոր երթան  
արքայութիւն :

ա. Անդաւորներուն աչքին առջևը՝ իրենց  
փառաւորված մարմնովը՝ անպատմելի  
փառքերով ու մեծ ուրախութիով՝ Վսի  
ու բոլոր հրեշտակներուն հետ մէկ տեղ  
երկինքը պիտոր վերնան :

հ. Անդաւորները ի՞նչպէս պիտոր իջնան  
դժոխք :

ա. Արդարներու բոլոր փառքերը տես-  
նելէն վերջը՝ մեծ տրտմութիով՝ ողբով՝  
ու լացքով՝ իրենց տգեղ մարմնովը սա-  
դայելին ու բոլոր սատանաներուն հետ մէկ  
տեղ գետինը պիտի բացվի, ու յաւիտե-  
նական դժոխքը պիտոր իջնան . Վարչյնն  
անդրէն Տղաւորք ՚ի դժոխս :

### Յովբին պարտաւիճիւն :

Յովբ երանելին շատ հարուստ, բայց  
շատ ալ արդար ու անձամբ մարդ մի էր :  
Սատանան ասոր առաքինութիւններուն նա-  
խանձելով Աստուծոյ հրաման ուղեց զին-  
քը փորձելու համար : Ա՞՞՞ ալ Յովբին  
մեծ առաքինութիւնները բոլոր աշխարհիս օ-  
րինակ ձգելու համար հրաման տրվաւ սա-  
տանային՝ որ անանկ թագաւորի պէս հա-



բուստ մարդը շուտ մի վերջին ողորմելուն  
ու աղքատութե մէջ ձգեց: Ար բոլոր ու-  
նեցած երկիրները՝ կենդանիները ու ամ-  
մէն բաները կորսընցունել տալէն ետքը՝  
տունն ալ՝ որուն մէջը զակերները ժողված  
էին, փլցուց ու ամմէնը մէկէն մեռցուց:  
Արանելի Յովբը բոլոր աս դժբաղդ լուրերը  
ետեէ ետե լսելէն ետքը՝ տրտմելուն տեղը՝  
Այ երկրպագութի ըրաւ, ու ըսաւ. Տէրը  
տրվաւ, Տէրը առաւ, իր անունը օրհնեալ  
ըլլայ: Բայց սատանան ասոնցմով ալ  
չիկշտացաւ, բոլոր մարմինն ալ զարկաւ,  
վէրքերով լեցուց: Յովբը աշխրբիս վրա  
տուն տեղ չունելով գնաց աղբանոցը  
(չէօփլիւկը) նստաւ, ու հողէ ամաններու  
կտորվանքովը մարմնոյն վէրքերը կը քերէր,  
ու կը մաքրէր: Ա երջապէս աս բոլոր նե-  
ղուիններուն վրա իր կինն ալ զինքը ծաղը  
կընէր իր պարզամտութեը ու Այ յուսա-  
լուն համար: Իր բարեկամներէն ալ իրեք  
հոգի զինքը տեսնելու համար եկած ըլլա-  
լով՝ մխիթարելուն տեղը իրենց նախա-  
տական խօսքերովը Յովբին նեղութիները  
եւելցունելու կաշխատէին: Բայց ասոնք  
բոլորն ալ չիկրոցան Յովբին համբերուի  
հատցունել. որ ինքը զինքը ապագայ յա-  
րութե ու դատաստանին մտածմունքնե-  
րովը ու յուսովը կը մխիթարէր, ըսելով.



Պատեմ, որ իմ փրկիչս կենդանի է. ես վերջին դատաստանին օրը գերեզմանէն պիտոր ելլամ. Տիմայ անչափ շարձարված մարմինս ան ատենը փառաւորված պիտոր առնում՝ իմ ԱՅ ու փրկիչիս առջևը ելլալու համար. աս իմ աչքերս, որ Տիմայ մինակ աս իմ ցաւերուս տրտում կերպարանքը կրտեսնեն կոր, ան ժամանակը զԱՅ տեսնելու արժանի պիտոր ըլլան. ես որ Տիմայ ողորմելի մարդ եմ, ան ատենը երանելի մարդ պիտոր ըլլամ. բայց միշտ ես ինքս պիտի մնամ, և ուրիշը չէ. աս յուսը իս կրպահէ. որ մտքէս ամենեկին չելար: Յովէ:

Խրատք ընդհանրտիան դատաստանի վրա:

« . Աս դատաստանի մէջ դատապարտեալներուն բոլոր գաղտուկ մեղքերը իրենց նախատինքին ու խայտառակութիւնը համար անչափ բաղմութե առջևը պիտի յայտնուին<sup>1</sup>): Անոր համար թէ որ կուզես ան ատենը դժբաղդ դատապարտեալներուն մէջը չլուսնուիլ, որ քու մեղքերդ ալ անանկ խայտառակութիւնով չիյայտնուին, ու յաւիտեան գաղտուկ մնան, հի-

---

1. Յուցանին գաղտնիք մարդկան՝ իւրաքանչիւր սրբ գործիցան. Ե. Գ. Գ. 1:2. Գ. 2:

մըկուց աղէկ յայտնէ զանոնք իմաստուն խոստովանահօրդ<sup>1)</sup> : Ս քղի մեղքերը ծածկելուն ճամբան հիմայ զանոնք աղէկ յայտնել ու անոնցմէ փախչիլն է . ան ատենը ՄԺ ալ քեզի հետ մէկ կըլլայ զանոնք ծածկելու համար<sup>2)</sup> :

Բ . Մ ս դատաստանի մէջ մեղաւորները իրենց մեղքերուն համար ՄԺ՝ հրեշտակներու՝ սքերու և ան սոսկալի բաղմութե առջևը չափէ դուրս պիտոր ամրչնան<sup>3)</sup> : Մնոր համար թէ որ կուզես ան ատենը քու անսահման վնասովդ աս ամրչցողներուն կարգը չիգտնելիլ նէ՝ հիմայ մեղքերդ դուն քեզմէ մտմբտա՝ անոնց վրա ամրչցիր , ու անոնց համար թողութիւն գտնելու ճար փնտռէ<sup>4)</sup> :

Գ . Ղատապարտեալները թէպէտ ամէն ժամանակ , բայց ալ աւելի աս դատաստանին մէջ զղջան ու ցաւին պիտոր իրենց մեղքերուն վրա ժամանակին չիղղջալուն ու չիցաւելուն համար՝ տեսնելով

1. Սի ասիցես եթէ ՚ի տեառնէ թագեայց , և ՚ի բարձանց ո՞ յիշեսցէ՛ զիս . Միլէ . Ժ . 16 :
2. Արանի ում թողութի եզև մեղաց . և ծածկեցան ամ յանցանք նր . Սաղ . Լա . 1 :
3. Մամաչեսցեն՝ և յամօթ լիցին . զի ՄԺ անարգեաց զնս . Սաղ . ԺԳ . 6 :
4. Օի է ամօթ որ զմեզս ածէ , և է ամօթ՝ որ փառք է և շնորհք . Միլէ . Գ . 25 :

արդարներուն փառքերը՝ պատիւները ու յաւիտենական հանդիստը, ու իրենց նախատիւքը՝ ամօթը՝ խայտառակութիւր ու յաւիտենական տանջանքները <sup>1)</sup>: Աս իրենց տանջանքներուն մէջը ամմէնէն աւելի ԱՅ անուշ ու անպատմելի տեսութիւն յաւիտեան զուրկ մնալէքնին վրա պիտոր ցաւին, ու արդարներուն նայելով՝ յուսահատաբար լալով պիտոր ըսեն. «Ասէ աս մարդն ալ, որուն վրա ատեն մը կրխորնտայինք ու զինքը ծաղը կրնէինք, ի՞նչ պէս ԱՅ սիրելի որդիքներուն մէջը մտեր է, ու սրերուն մէջը խառնըվեր է. անանկ է նէ, մենք սխալած ենք եղեր շիտակ ճամբէն <sup>2)</sup>: Բոլոր փրկութեան առիթները աչքերնին առջևէն յաւիտեան պիտի չերթան, որոնք որ Աժ իրենց կենդանութեան ատենը իրենց պարզեւած էր, ու իրենք անոնց յարգը չիճանչնալով զանոնք ոտքի տակ առած էին <sup>3)</sup>: Ի՞նչ լալու վիճակ:

1. Զգջասցին ՚ի միաս իբրեանց. և առ նեղութեան՝ անձանց յողւոյ հանցեն. Իմաս. Է. 3:
2. Ի յս այն այր է՝ զոր երբեմն մեք ծաղը առնէաք և յառակս նախատանաց... զիմորդ համարեցաւ ընդ որդիս Աստուծոյ. և ընդ սբս վիճակ դսրա: Ուրեմն մոլորեցար ՚ի ձանապարհէ ճշմարտութեն. Իմաս. Է. 3. 5. 6:
3. Անորէնութի և կորստեան շաւղօք լցար... զձանապարհս Տեառն ոչ ձանեար. Իմաս. Է. 7:

(Օրինակ:

Այն Հերոնիմոսը՝ որ Կոստանդ կայսեր  
ատենը Ղազմատիային Ստրիտոն քաղա-  
քը ծնած էր, խելքը վրան եկած ատենը  
սկսաւ ուսման ետեւէ լյնալ, անոր համար  
Հում ու յունաստան բոլոր պտըտելէն  
ու ան տեղերուն դպրատունները գտնելիւ  
գիտութիւնները սորվելէն ետքը՝ ասորեստան  
գնաց՝ հոն տեղաց իմաստուններէն ալ  
բան սորվելու, ու ետքը Արուսաղէմ եր-  
թալու և սք տեղերը պտըտելու համար:  
Ան կողմերը ճգնաւորները տեսաւ նէ՛  
ինքն ալ Այ ծառայելու բաղձանքով ան-  
ապատ գնաց, չորս տարի գլխուն տակը  
քարէ բարձ՝ գետնի վրա պառկելով՝ խիստ  
ճգնութիւններով՝ մեծ ծումապահութիւնով ու  
շարունակ աղօթքով անցուց: Բայց Այ  
թոյլ տալովը անանկ ծանր ճգնութիւններուն  
մէջն ալ սատանան շատ անպարկեշտ խոր-  
հուրդներով կրփորձէր զինքը: Անոր հա-  
մար խաչելութն առջևը ինկած Քնի ոտ-  
քերը աչքին արցունքներովը կը թրջէր,  
ու միտքը պարապ թող չիտալու համար,  
որ սատանան ալ աւելի չիկրնայ զինքը  
փորձել՝ անձաշունչը շատ մտադրութիւնով  
կրկարգար, ու հրեարէն կը սորվէր անձա-  
շունչը նորէն թարգմանելու համար: Այ կը-

ջը Արուսաղէմ գնաց, որ հրեարէնը աղէկ  
 սորվի, ու սք տեղերն ալ պտըտի. իր լա-  
 տիներէնն ալ իրեն աղէկ չերևնալով՝ հոն  
 տեղը Աիկերոնի գործքն ալ շատ կրկար-  
 դար, որ անոր շարագրութիւնը հետևի: Ա-  
 սոր համար Ա՛ժ իրեն բարկացաւ. ծանր  
 հիւանդութիւնով մը պառկեցաւ, ու տե-  
 սիւքի մէջ զինքը Ա՛յ առջևը տարին: Ա՛ժ  
 իրեն հարցուց, որ Ո՛վ է. Հերոնիմոսը  
 պատասխան տրվաւ, որ քրիստոնեայ եմ:  
 Սուտ կրեսս՝ ըսաւ Ա՛ժ, դուն քրիստոնեայ  
 չես՝ Աիկերոնի հետևողն ես, վսղի քու  
 դանձդ ուր է նէ՝ սիրտդ ալ հոն է. ու  
 հրամայեց՝ որ զինքը աղէկ մը ծեծեն, որ  
 ծեծին տակը կաղաչէր Ա՛յ, ըսելով. Տէր  
 ինձի դժան, Տէր ինձի ողորմէ. ծեծը  
 դադրեցաւ, բայց չորս դին ուռած ու  
 վիրաւորված էր: Ասով ճանչցաւ իր  
 սխալանքը, բոլոր ան կռապաշտ մարդուն  
 դիրքերը և ուրիշ աշխարհական անպտուղ  
 դիրքերը ձեռքէն ձգեց. մեծ բաղձանքով  
 անաշունչը ձեռք առաւ, կէսմը հրեարէ-  
 նէն թարգմանեց, ու կէս մ՝ ալ յունա-  
 րէնէն սրբագրեց, ու աղէկ պայծառացուց:  
 Արեսներորդ տարին քահանայ ձեռնա-  
 դրովելէն ետքը Հռովմ գնաց՝ ու հոն  
 ազնրւական տղաքներ կրթելու ետևէն  
 եղաւ ու շատ հալածանքներ ալ քաշեց:



Լատքը Ղամատոսս պապը մեռաւ նէ, նորէն Լորուսաղէմ գնաց, ու Ռեթղեհէմ քաղաքը Վրնի ծնած մսուրին մօտ սքի կարգերով կանոններով զարդարած կուսանաց վանք մը հաստատեց: Ասանկ մեծ գործքերուն մէջ մէկ զիէն ալ նոր ելած հերետիկոսներուն գրով ու խօսքով գէմ կրկենար, անոնց գէմ շատ մեծ յաղթութիներ կրնէր, բոլոր կենացը մէջ հոովմէական սքի եկեղեցւոյ թշնամիներուն գէմ կրպատերաղմէր, ու աչքին հալածանքը ու մահը բան չէին երենար, ինչպէս ինքը կրսէ: Շատեր արեւոյն համար իրենէ, ինչպէս որ էս Այ համար շեխուիմ: Բոլոր հերետիկոսները իրմէն կրվախնային՝ ու ճշմարիտ ուղղափառները զինքը կրտիրէին ու կրպատուէին: Բայց ինքը Վրնի խոնարհութիւր առջևը օրինակ դրած՝ զինքը մեծ խոնարհութե մէջ կրթած էր, ըրած պակասութիները բոլոր կենացը մէջ աչքին առջևը գրած՝ անդադար արցունքներ կրթափէր՝ ըսելով. Տէր՝ իմ մանկութեան անգիտութեան մեղքերը մի՛ յեղէր՝ շարունակ վերջին դատաստանին վրա կրմտած էր, ու վերջին փողին ձայնը ականջն էր, ինչպէս ինքն ալ կրսէր: Վրանի անգամ որ իմաստէն ան դարհուրելի օրոն զլա, իրապարտիմ, ու գլխէն ինչուն ուրէրս իւրողամ, իւրած ա-



արէնս՝ խնամք տարէնս՝ ու ամեն գործքերու  
 Տեղը ան օրը ուշիս աստիճան է, խորձերով,  
 որ հրէշաստիային ժողովն ժողովնու խայտը աս-  
 իանքն ինքու ինք, բանով. Այլէ՛ք Տեաւորներ՝  
 գապատարան էլէ՛ք: Աս վախով զինքը անանկ  
 խիստ ճգնութիներու տրված էր, որ ծե-  
 բուին ալ վրան հասնելով՝ կաշի ու ոսկոր  
 մնացած՝ անկողին ինկաւ, մէկ կողմէն մէկ-  
 ալը չէր կրնար դառնալ: Ա երջին օժուժը  
 և մահուան խորհուրդները ընդունելէն ետ-  
 քը՝ կրօնակիցներուն ԱՅ ու ընկերին սի-  
 բուն վրա խրատներ տալով՝ իր սք հոգին  
 արարչին ձեռքը աւանդեց: Արեւոյն ձառ-  
 քին Տեղն է:

ՏԵՄԵՐԱՌՍԵՐՈՐԴ ԼԵՄԵՐ

ՂԺՌԻՔԻ ԲՈՋԱՆՏԱՆՈՒ ՈՒ ՄԱՍԻՍԻՆԻ ԺԵՍ:

Կ. ՂԺՌԻՔ անունով ի՞նչ բան կի-  
 մացվի:

Պ. Չորս տեղ կիմացվի, գոգն Աբրա-  
 համու, քաւարանը, լիմպոսը ու բուն դը-  
 ժՌԻՔը:

Կ. Ղոգն Աբրահամու ի՞նչ բան էր:

Պ. Ան բանան էր, ուր որ Վնէ յառաջ  
 մեռնող արգարներուն հոգիքը կրժողվե-  
 վէին ու սատանային իշխանութեք տակ  
 կըսկահվէին, որ հոն տեղը կրակ ու տան-

ջանք չիկար, մինակ Մ.յ տեսութիւն զուրկ էին, ու յուսով Վ.նի գալուն կըսպասեին :

Կ. Հիմայ ի՞նչ եղաւ ան դժոխքը :

Պ. Վ.նի հոգին մարմինէն մահաւմբ բաժնը վերէն ետքը գնաց՝ հոն տեղի արդար հոգիները ազատեց, ու սատանային իշխանութիւն ալ կասեց, որ մէյ մը ալ արդար հոգիներուն վրա չիկրնայ իշխել :

Կ. Քաւարանը ի՞նչ է :

Պ. Տանջանքներու բանտ մի է, որ հոն ան արդարներուն հոգիները կերթան, որ մեռած ատեննին չիթողլած ներելի կամ թողլած մահուչափ մեղքերուն ժամանակաւոր պատիժները լմնցուցած չեն ըլլար :

Կ. Մ.ն հոգիները ի՞նչ տեսակ տանջանքներ ունին քաւարանի մէջը :

Պ. 'Նախ' զՎ.ճ տեսներու սատարիկ բողձանքով կըչարչարվին, երկրորդ՝ ուրիշ տանջանքներ ալ կան, որ անձային արդարութիւնը կըսահմանէ ամմէն մէկին համար իրենց մնացած ժամանակաւոր պատիժներուն պարտքին համաձայն :

Կ. Մ.ս հոգիները քաւարանի ան տանջանքներուն համար գօնէ նոր վարձեր ալ կառնուն :

Պ. Այ, վնդի իրենց վերջը հասած բըլալով նոր վարձք չեն կրնար վաստակել :

ասոր համար ջանալու ենք քաւարանի պարտքերնիս՝ քանի որ ճամբան ենք նէ, հոս տեղի նեղութիւններուն համբերելով՝ պահքով՝ ծովով՝ աղօթքով՝ ողորմուիով և ուրիշ առաքինութիւններով վճարելու, որ քիչով վճարենք, ու նոր նոր վարձքերու ալ արժանի ըլլանք :

Հ. Վաւարանի հոգիներուն կրնանք օգնել :

Պ. Հրամներես :

Հ. Ի՞նչ բանով կրնանք օգնել :

Պ. Պատարագով՝ աղօթքով՝ ներողութիւնով և ուրիշ բարի գործքերով կրնանք իրենց օգնել. որոնք հին ու նոր եկեղեցւոյ սովորութիւնքն անոնց համար մատուցանելու . ինչպէս մեր ազգին սբ հարքն ալ քաւարանի ճշմարտութիւնը ճանչնալով անչափ ննջեցելոց շարականներ ու պաշտօններ դրած են :

Հ. Աս բաներով իրենց ի՞նչ օգնութիւն կրլայ :

Պ. Ա՛ծային արդարութիւնը ասոնք կրնգունի, ու ան հոգիներուն՝ որոնց համար որ մատուցված են, տանջանքները կրթեթեցունէ՝ կրկարձէ, կամ բոլորը կրթողու :

Հ. Ա՛ն հոգիները քաւարանէն ազատելէն ետքը ո՛ւր կերթան :

Պ. Շիտակ արքայութի կերթան, զԱ՛ծ

երես երեսի կըտեսնեն, ամէն բաղձանքնին կըկատարվի, ու մէկ ալ սքերուն հետ մեզի համար բարեխօս կըլլան :

հ. Աշխրբիս կատարածին մեռնողներէն քաւարանի պարտք ունեցող հոգիները երբ կըվճարեն իրենց քաւարանի պարտքերնին, որովհետեւ ալ ուրիշ ժամանակ չիկայ :

դ. Անոնք աշխրբի կատարածին ան սոսկալի պատուհասներուն ու վախերուն համբերելով հոս կըհատուցանեն իրենց ժամանակաւոր պատիժներուն պարտքերը :

հ. Վիմպօր ի՞նչ է :

դ. Չիմկրտըված պղտիկ մեռնող տղոց հոգիներուն բանտն է, որ իրենք անձնական մեղք կամ արդիւնք չունենալով հոն փառք կամ պատիժ ալ չունին. մինակ սկզբնական մեղքին համար արքայութի զրկըված են. բայց ԱՅ կարգադրութիւն իրենք զիրենք արքայութի արժանի չլսեպելով՝ իրենց զրկմանը վրա ան մեծ ցաւը չեն իմանար :

հ. Յարութէն ու վերջին դատաստանէն ետքը ասոնք ո՞ւր կերթան :

դ. Աս մինակ ստոյգ է՝ որ դժոխք չեն երթար՝ արքայութի չեն կրնար մտնել, բայց թէ ո՞ւր կրմնան, եկեղեցին մասնաւոր որոշած չէ. սք հարք կըկարծեն, որ

աշխարքի վրա կրմնան, բայց ուտել՝ խմել՝  
շատնալ կամ մեռնիլ չիկայ:

Յուզա Սակաբէի մեռելիքի հոգին  
համար Արուստղէ՛մ պատարագ ցո-  
խրիւնն պատմո՞ւմ է:

Յուզա Սակաբէ հրեաներուն բարե-  
պաշտ զօրապետը, որ Անտիոքոսին ու  
անոր զօրապետներուն դէմ հաւատքի ու  
Ա՛յ պաշտօնին համար շատ երևելի պա-  
տերազմեր բռաւ. Ա՛ծ ալ միշտ իրեն հետ  
բլալով՝ ուր որ կերթար, քիչ զօրքովը  
շատ մեծ յաղթութիւններ կրնէր: Օր մը  
Գորգիոս զօրապետին դէմ ալ պատե-  
րազմելու ատենը՝ պատերազմը առջի բե-  
րան քիչ մը դժբաղդ գնաց, ու իրեն  
զօրքէն խել մը մարդ մեռաւ: Ատքը Յու-  
զա իր զօրքովը Ա՛յ օգնութիւն խնդրեց,  
ու մեծ յուսով թշնամւոյն վրան վազեց,  
յաղթեց, ու զօրքովը մէկ տեղ փախցուց:  
Արկրորդ օրը շարաթ պատահելով՝ սրը-  
րովեցան՝ հանգչեցան. ետքը պատերազ-  
մին տեղը գացին իրենց մեռածները թա-  
ղելու համար: Տեսան՝ որ անոնց զգեստ-  
ներուն տակը կուռքի ու կռապաշտութե-  
մանը նշաններ կային, որ ան բաները  
իրենց օրէնքը արդելած էր. և իմացան,  
որ իրենց մեռնելուն ու ան դժբաղդութե-



պատճառը ան բաներուն համար Ա՛յ բար-  
 կութիւն էր, ամմէնը մէկ բերան Ա՛յ տր-  
 դարութիւնը օրհնեցին, որ գաղտուկ յան-  
 ցանքները կը յայտնէ : Բայց պատերազմը  
 հաւատքի պատերազմ՝ ու մեռնօղնները  
 հաւատքի մէջ ու հաւատքի վրա արիւն  
 թափած ըլլալով մեծ յոյս կար, որ մէ-  
 ջերնին շատը չէ թէ կռապաշտութե՛հ հա-  
 մար, հապա տղիտութիւնով՝ ու անոնք  
 պղտիկ յանցանք կարծելով պահած ըլլան,  
 ու իրենց ան մեղքը մինակ ներելի մեղք  
 ըլլայ, ու շատն ալ մեռնելու ժամանակը  
 զղջալով՝ Ա՛ծ յաւիտենական պատիժնին  
 թողած ըլլայ : Ա՛նոր համար ամմէնքը  
 գետինը ինկան, անոնց մեղքերուն թո-  
 դութե՛րը համար Ա՛յ աղօթք ըրին : Յուդա  
 իր զօրքը մխիթարելէն ու խրատելէն ետ-  
 քը, որ անանկ մեղքերէն ետ կենան, որ  
 Ա՛յ պատիժը իրենց աչքերով տեսեր էին .  
 ամմէնէն առատ ողորմութիւն ժողովեց :  
 Արուսաղէմ խաւրեց, որ ան մեռնօղններուն  
 մեղքերուն թողութե՛րը համար պատարագ-  
 ներ՝ զոհեր մատուցանեն : Ա՛ս տեղը Յու-  
 դային համար Հօգի սքը կըսէ, որ վնդի  
 ինչ որ կընէր նէ, ան մեռնօղններուն յա-  
 բութե՛րը վրա մտածելով կընէր, թէ որ  
 ան պատերազմի մէջ մեռնօղններուն յա-  
 բութե՛րը յոյս շունենալու ըլլար նէ՝ անոնց



Համար աղօթք ընելը պարսպ բան կրու-  
լար: Աճային իմաստութիւնը յառաջուց  
գիտնալով, որ քրիստոնեաներուն մէջէն  
քաւարանի ճշմարտութիւր կամապաշտու-  
թիով ուրացողներ պիտոր գան, որպէսզի  
իր գատաստանին առջևը անպատասխանի  
մնան, աս ճշմարտութիւր սբ գրքի մէջ  
շատ կերպով յայտնելէն վերջը՝ Յուգա  
Սակարէն ալ շարժեց, որ ան պատերազմի  
մէջ մեռնօղ զինւորներուն հոգիներուն  
համար անանկ աղօթք ընէ, ու պատա-  
րագցու խաւրէ, որ թէ մէջերնին քաւա-  
րան դացողներուն օգնութի ըլլայ, թէ  
քաւարանի ճշմարտութիւր ինչւան աշխրբին  
կատարածը ամմէնուն յայտնի ըլլայ:  
Անոր համար քաւարանի ճշմարտութիւր  
իրենց կենդանութե առենը ուրացողնե-  
րուն մահւանէ ետքն ալ քաւարան ու  
միանգամայն քաւութիւն չիկայ: Բ.  
Սուխ. ԺԲ:

Խորատ Դաւարանի շէտ:

« . Քաւարանի տանջանքները ան-  
տանելի են <sup>1)</sup> . վնդի ան բանտի մէջ  
ողորմելի հոգիները կըտանջըվին նախ՝

---

1. Աղսրմեցարու.ք ինձ, ողորմեցարու.ք ինձ ու բա-  
րեկամք . զի ձեռն Տեառն մխեցաւ յիս . Յով. Գ. 21 .

զԼԾ տեսնելու սաստիկ բաղձանքով, վնդի մարմնոյ վարագուրը մահւամբ վերցրված ըլլալով՝ աղէկ կրճանչնան, որ ԼԾ ի՞նչ բան է. երկրորդ՝ սոսկալի կրակով, որ զիրենք դժոխքի կրակին պէս կերէ կրտոչորէ<sup>1)</sup>: Լս բանտին հոգիները մինակ աս յուսով կրմխիթարվին, որ պիտի ազատին ան տանջանքներնէն, ու արքայուժառանգեն<sup>2)</sup>:

Բ. Լս սբ հոգիներուն պարտրկան ենք օգնելու, նախ՝ ԼՅ պատւիրանին համար<sup>3)</sup>. երկրորդ՝ ԼՅ ու ընկերին սիրուն համար, որ մեր օգնութիւններուն կարօտ ծնողացը՝ ազգականներնուս և ուղղափառ հաւատքի մէջ վախճանած ընկերներնուս հոգիները շուտով ազատին ան կրակէն ու տան-

1. Օ՛ի լուսացէ Տ՛ր զազուն ուստերաց Սիւնի . . . հոգւով դատաստանաց, և հոգւով այրման. Եւայ. Գ. 4: Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս աացէ. և եթէ ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն կեցցէ, այլ այնպէս՝ որպէս թէ՛ ի հուր. . . Կորն. Գ. 15:
2. Բարկութե՛ն Տեառն համբերից՝ զի մեղայ նմա. մինչև արդարացուսցէ զդատաստան իմ. և արասցէ ինձ իրաւունս, և հանցէ զիս ՚ի լոյս. և տեսից զարգարութի նր. Սբ. Ե. 9:
3. Սփռեսցես դու զհացն քո՛ ՚ի վերայ գերեզմանաց արդարոց. և մի տացես զայն մեղաւորաց. ՏԳ. Գ. 18: Ի մեռելոց մի արգելցես զչնորհս. Եւրեւ. Ե. 37:

ջանքներէն <sup>1)</sup>, ու երթան արքայութիւնը զՆՃ փառաբանեն, ու մեզի համար ալ բարեխօս ըլլան <sup>2)</sup>:

Գ. Քաւարանի չիհաւտալը մեծ հերեւտիկոսութի է. վնդի քաւարանը մեր հաւատքի մասերուն մէկն է <sup>3)</sup>: Քաւարանի հաւտալ՝ ու ժամանակաւոր պատիժներու պարտքերը կենդանութեան ատենը ներողութիւններ վաստըկելով, բարի գործքերով՝ ու աշխրբիս թեթեւ ու անցաւոր ներողութիւնները համբերութիւն քաշելով չիվըճարելը մեծ խելագարութի է. վնդի մենք հիմայ ճամբու մէջ ըլլալով՝ ՆՃ իր ողորմութե աթոռին վրա՝ մեր քիչը շատի տեղ ընդունելէն ետքը՝ ան քիչին համար ալ մեզի աւելի վարձք կուտայ. բայց մեր անհոգութիւնով մէյ մը վախճանը հասնելէն ետքը ՆՅ արդարութիւն քաւարանի

1. Նճեղ խորհուրդ քահանային՝ բազկատարած կայր ՚ի բեմին. առաջի սիւ սեղանոյն. հուր շիջանի. խաւար մերժի. արամեալ հոգիքն ուրախանան. զի թողութի մեղաց լինի. և այլն. Եւրոպ. 22 է. ՎՉ:
2. Նճա՛ արժանի և զմեր զննջեցեալն մտանել յերկնային քո սիւ առադաստ. և ընդ վերին գօրսն օրհնել սիւ զԼըրրորդութիդ, Եւրոպ. 22 է. ՎՉ:
3. Որ ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմալ. բայց որ զՉողւոյն սիւ ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայտ աշխարհի և մի ՚ի հանդերձելումն. Սարգ. ԺԷ. 32:

մէջ ինչւան յետին նաքարակիտը պիտի պահանջէ մեզմէ՝ մեր պարտքերուն հատուցումը <sup>1)</sup> :

(Օրնակ :

Աթ շերտնիմոսին մահւանէ ետքը հերետիկոսներ ելան, որ քաւարանի հոգիներուն վրա հերետիկոսութիւններ կը քարոզէին, ու ԱՅ թոյլ տալովը իրենց մոլորութիով շատ հաւատացեալներ կը մոլորեցունէին : Աթ շերտնիմոսը իր աշկերտը Աւսերիոսին երեցաւ, ու հրամայեց՝ որ իր խարազը առնու՝ որն որ ինքը կենդանութե՛ն ատենը վրան կառնուր նէ, ու տանի ան գիշերւան մէջ իրեք հոգի մեռած էին, ու իրենց մարմինները՝ որ երկրորդ օրը պիտի թաղվէին՝ անոնց վրա ձգէ : Աւսերիոս երկրորդ օրը սթ շերտնիմոսին խարազը առաւ, ու գնաց եկեղեցւոյ մէջ կատարեց իր վարժապետին հրամանը : Աեռելները իրեքը մէկ տեղ կենդանացան, ու բազմութե՛ն առջևը ելան : Ասոնց

---

1. Ա եր իրաւախոհ ընդ ոսոխի քուժ վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա՛ ՚ի ձանապարհի. գուցէ մասնիցէ գքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի. և արկանիցիս ՚ի բանա : Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն. Մատթ. 5. 25. 26 :

մէկը սկսաւ խօսիլ Աւսերիոսին՝ հրամանաւոր՝ ու երկուքը անոր ըսածները կը հաստատէին . որ ըսաւ : „Հոգին մարմինն էն բաժնրված ատենը՝ թէ որ ԱՅ շրնորհքին մէջն է , ու վճարելու բան ալ չունի նէ , շուտ մը շիտակ արքայութիւն կը թուչի . թէ որ մահացու մեղքի մէջն է նէ , շուտով դժոխք կերթայ . ու թէ որ արդար է , բայց մեղքերուն ժամանակաւոր պատիժները աս կեանքը ապաշխարութիւններով բոլոր վճարած չէ նէ , քաւարան կերթայ , ու հոն կը վճարէ ԱՅ արդարութեւնը՝ ԱՅ սահմանած ժամանակին մէջը . բայց ան տեղէն ԱՅ սահմանած ժամանակէն յառաջ ալ կրնայ ազատիլ ու արքայութիւն երթալ , երբոր կենդանի հաւատացեալներուն օգնութիւն կը հասնի նէ , ասիկայ է ճշմարտութիւն՝ ու կատարեալ հաւատք , որ ամէն քրիստոնեաները ասանկ պարտրկան են հաւատալու միակուն հասնելու համար : Մինք սքե՛րոնիմոսին բարեխօսութիւնը աս ճշմարտութեւն վկայելու համար կենդանացանք , ու քսան օր ետքը Աւսերիոսին հետ չորսերնիս մէկէն պիտի մեռնինք , որ մեր ըսածներուն ճշմարտութիւնը ալ աւելի յայտնի ըլլայ“ : Իրաւցընէ քսաներորդ օրը իրեքը մէկէն , ու Աւսերիոսն



ալ հետերնին մեռան : Էրիտիկոսները տեսնելով բոլոր աս եղած բաները ու լսելով աս խօսած խօսքերը շատ շփոթեցան, ու մեծ մասը նորէն ուղղափառ հաստատքը դարձան : Ըստ պատմութեան Կիւրեղ Երուսաղէմացին սԷ ( ) գոսպիմոսին իւգրէ :

### ՆՐԵՐԿ օրինակ :

Ընդդիմա՝ քաղքի մը մէջ վաճառական մը կար, որ թէպէտ առուտուրի մէջ էր, բայց սրտին մէջը ՄՅ վախը ունէր, ու բարի քրիստոնէի պէս ապրելու կաշխատէր՝ ձեռքէն եկածին չափ ՄՅ պատուիրանները պահելով. որ ամմէն աղէկ սովորութիւններէն իզատ աս ողորմուէ գործն ալ սովորութիւն ըրած էր, որ ամմէն անգամ եկեղեցին մտած ու ելած ատենը եկեղեցւոյ գերեզմանատեղը կը հանդիպէր, մեռելներուն հոգիներուն համար աղօթք կընէր, նմանապէս գերեզմանոցներուն առջևէն անցած ատենը ան տեղերուն մեռելներուն համար աղօթք կընէր. ասանկ մեռելոց հոգիներուն վրա գթութեան աղէկ սովորութիւնը երբէք չէր թողուր, գործ ունենայ՝ չունենայ, մարդու հետ ըլլայ՝ մինակ ըլլայ՝ կրկենար, անոնց համար սահմանած աղօթքը կընէր : Ըսիկայ ծանր հիւընդցաւ, գիշերով քահանայ



ուղեց, որ իրեն վերջին օժումը և ուրիշ  
խորհուրդները տայ : Աղեղեցիէն Ղա-  
նիէլ անունով ջերմեռանդ ու աղէկ քա-  
հանայ մը եկաւ . ամմէն բաղձանքները  
կատարեց, զինքը մխիթարեց, խրատեց,  
ԱՅ յանձնեց ու գնաց . քահանան դա-  
ցածին պէս հիւանդն ալ հոգին աւանդեց :  
Քահանան եկեղեցին հասած ատենը  
դռները բոլոր բաց գտաւ, որ ինքը աղէկ  
կղպած, ու անանկ դացած էր, շատ զար-  
մացաւ, ու պատճառը չի գիտնալով տե-  
սակ տեսակ բաներ մտածել սկսաւ : Տե-  
սաւ, որ եկեղեցին ալ անթիւ ճրագնե-  
րով լուսաւորված էր, ներս մտնելու ա-  
տենը գերեզմանատեղէն ձայն մը լսեց՝ որ  
ամուր ձայնով կանչեց, ըսելով . Ալէք  
շուտով ձեր գերեզմաններէն, ամմէնքս  
մէկ տեղ եկեղեցին երթանք, ու մեր  
հաւատարիմ բարեկամին ու սիրելի բա-  
րերարին համար ԱՅ աղօթք ընենք՝ որ  
հիմայ հոգին աւանդեց, իր բարիքներուն  
հատուցումը ընենք իրեն՝ որ ինքը մեզի  
միշտ կրնէր ամմէն անգամ՝ որ մեր գե-  
րեզմանատուններուն քովէն կանցնէր նէ  
կենալով՝ ու ան տեղի մեռելներուն հա-  
մար ԱՅ մասնաւոր աղօթք ընելով : Ան-  
ուելները շուտ մը մեծ որոտումով ու ոս-  
կորներու ժողվելու ձաներով գերեզման-

ներէն ելան , ամէնը մէկէն եկեղեցին  
մտան , ու սկսան անուշ եղանակներով՝ ու  
մեծ ջերմեռանդութիով մեռնողին կարգը  
կատարել , ու հոգւոյն համար Ա՛յ աղօթք  
ընել : Աղօթքը լմնցուցին նէ , ձանը նորէն  
կրկնեց՝ ըսելով . Ա՛մէն մարմին իր գե-  
րեզմանը երթայ՝ պառկի , ինչւան վերջի  
գատաստանին օրը : Ա՛մէնը մէկէն ինչ-  
պէս որ եկած էին նէ , անանկ մեծ որո-  
տումով տեղերնին գացին , ճրագները  
անյայտ եղան , գոները բոլոր գոցւեցան :  
Քահանան աս բաները տեսնելով շատ  
զարմացաւ , ամէն բանը թողուց , գնաց ,  
վանք մը մտաւ , ու իր բոլոր կեանքը նըն-  
ջեցելոց հոգւոյն համար աղօթք ընելով  
անցուց : Պէտքոս Ղառախանէանը իրոպարմ :

ՏԱՍՆՐՆԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՆՍՆՐ

ՂԺՈՒԽԻ ու արքայուլեան վրա :

Կ . ՂԺՈՒԽԻ ի՞նչ է :

Պ . Ս՛եր վրան քալած հողագունտին մէջ  
տեղը՝ սատանաներուն ու մահացու մեղքի  
մէջ անղեղջ մեռնող մեղաւորներուն ամ-  
մէն չարիքներով լեցուն բանտն է , որ հոն  
ամենևին բարիք չիկայ :

Կ . Ս՛եղաւորները ի՞նչ տեսակ մեղքերուն  
համար զժոխք կերթան :

դ. Ներդործական, սյս ինքն՝ իրենց ըրած մեղքերուն համար :

հ. Սեղաւորները երբ կերթան դժոխք :

դ. Սահլանէն ու առանձնական դատաստանէն ետքը անմիջապէս հոգւով, ու ընդհանրական դատաստանէն ետքը անմիջապէս հոգւով ու մարմնով կերթան :

հ. Արչափ ժամանակ կըտանջուիին հոն :

դ. Հոգւով ինչւան վերջին դատաստանը, ետքը հոգւով ու մարմնով յաւիտեանս յաւիտենից պիտոր տանջուիին :

հ. Գժոխքը ի՞նչ տեսակ տանջանքներ կան :

դ. Հոն տեղի բանտարկեալները իրենց յանցանքներովը Մ.Յ անուշ տեսութենէն յաւիտեան զոկրվելնուն համար՝ խղճմրտանքնին զիրենք սաստիկ խածնելով, ու յուսահատական զղջումով չափէն աւելի կըշարշարվին, սոսկալի կրակը հոգինին ու մարմիննին մէկ տեղ կերէ կըտոչորէ. և ուրիշ շատ տեսակ հոգւոյ ու մարմնոյ տանջանքներ ու պատիժներ ալ կան, և ամենևին մխիթարուէ բան չիկայ դժոխքի դատապարտեալներուն համար :

հ. Գժոխքին մէջ դատապարտեալները տանջողներ ալ կան :

դ. Հրամմերես, սադայէլը իր սատանաներուն հետ իրենց մասնաւոր թշնամութէն

իզտտ՝ ԱՅ դրրած դահիճներն են զիրենք  
տանջելու համար, անոնցմէ ուրիշ ալ ի-  
րենք իրենց՝ ու մէկզմէկու ալ պատիժ  
պիտոր ըլլան նախատելով ու անիծելով :  
հ. Արքայութիւն ի՞նչ է :

ա. Երեցած երկինքին վրա ԱՅ, հրեշտակ-  
ներուն, սքերուն ու արդարներուն երջա-  
նիկ բնակարանն է՝ ամմէն բարիքներով լե-  
ցուն, ու մէջը ամենեին չարիք մը խառ-  
նած չէ, որ հոն արժանի եղողները զԱ՛ծ  
յայտնապէս պիտի տեսնեն, ուրախուիով  
սիրեն, պատուեն ու յաւիտեանս յաւի-  
տենից պիտի ժառանգեն :

հ. Արքայութիւն ո՞վ կերթայ :

ա. Բարեպաշտութիւնով ապրող ու ԱՅ  
շնորհքի մէջ մեռնողները :

հ. Սքերը արքայութեն մէջը զԱ՛ծ ի՞նչպէս  
կրտեսնեն :

ա. Սք հրեշտակներուն պէս հոգևոր տե-  
սութիւնով, այս ինքն՝ մտքի աչքով կրտես-  
նեն, որ մարմնաւոր տեսուէ շատ պայծառ  
ու գերազանց է, ինչպէս բոլոր հրեշտակ-  
ներն ալ անանկ պիտոր տեսնանք, ու  
հետերնին մտքով պիտի խօսինք :

հ. Մարմնաւոր աչքով ի՞նչ պիտոր տես-  
նենք :

ա. Քն թագաւորը՝ որուն փառքը ան-  
սահման է, սք Ա՛ծածինը՝ որ Քնէն ետքը

ամմէնէն փառաւոր է, ու արքայութիւն ըն-  
տր սքերը, որոնց ամմէն մէկը արեգակէն  
շատ փառաւոր ու պայծառ պիտոր երևնայ:  
Է. Արքայութեւ սքերուն մէջն ալ հրեշտակ-  
ներուն պէս մէկզմէկէն վերը կը գտնուի:

Կ. Հրամմերես, ամմէն մէկին իր բարի  
գործքերուն համաձայն մէկզմէկէ վեր  
փառքեր պիտի տայ Ա՛ծ, բայց ամմէնուն  
վարինին փառքն ալ անպատմելի պիտոր  
ըլլայ. Ա՛ն ոչ էփէս, ունին ոչ լոուսն  
'է սէրփ հարգոյ ոչ անխոս, զոր պարսա-  
տեաց Ա՛ծ սէրէլեաց էրոյ: Թ. Արք. Բ. 9:

Ա-էփէսց Էրիւրնէրը գացող լոսնէրոն  
պարսո-լէր:

Սովսէս Իսրայէլի ժողովուրդը Ազիպ-  
տոսէն հանելէն՝ ու կարմիր ծովը անցու-  
նելէն ու Սինայ լեռան վրա Աստուծոյ օ-  
րէնքները ընդունելէն ետքը՝ Ա՛յ հրամա-  
նաւը ամմէն մէկ ցեղի գլուխներէն մէյ  
մէկ հոգի ընտրեց, ու ան տասերկու հո-  
գին մէկ տեղ խրկեց, որ երթան Ա՛յ  
խոստացած երկիրները աչքէ անցունեն,  
ու ինչպէս որ կը տեսնեն նէ, գան իրեն  
ու ժողովուրդին պատմեն: Աս տասերկու  
հոգի քառսուն օրւան մէջ ան երկիրները  
բոլոր պտըտեցան, երկրին պտուղներէն  
հետերնին առին, ու մասնաւորապէս ողկուղ



մի ալ խաղող առին, որ շատ մեծ ըլլալով  
 երկու հոգի փատով վերցուցած կրբերէին:  
 Արբոր դարձան նէ, ժողովուրդին պատ-  
 մեցին, որ Երաւ է, որ երկիրը չափէ դուրս  
 պողարեր ու առատ է. բայց աս ալ իրաւ  
 է, որ բոլոր մեծ ու պարիսպներով պա-  
 տած քաղաքներով լեցված է, մէջի բնա-  
 կիչները բոլոր հսկայ մարդիկներ են, ա-  
 նանկ որ մենք առջևնին մարախի պէս կե-  
 րենայինք կոր, ո՞վ կարող է իրենց դիմացը  
 ելլալու և պատերազմելու: Ժողովուրդը  
 աս լսելով ամմէնը մէկ բերան սկսան  
 Սոլսէսին դէմ արտոնջալ՝ ըսելով որ  
 Սենք մեզի նոր առաջնորդ մը կրնտրենք,  
 ու Ագիպտոս կըզառնանք: Երտեսներուն  
 մէջէն երկու հոգի՝ Յեսու և Քաղէր  
 կաշխատէին ան խռովութիւն խաղաղցու-  
 նելու, ըսելով Ա՛յ օգնականութիւն՝ (որ  
 միշտ իրենց հետն էր) անոնցմէ չենք  
 վախնար, բայց անօգուտ եղաւ, քիչ  
 մնաց՝ որ ապերախտ ու կոյր ժողովուրդին  
 բազմութիւնը պիտոր քարկոծէր զիրենք:  
 Սէկէն ՚ի մէկ տապանակին վրա Ա՛յ  
 փառքը երևցաւ, ու Ա՛ծ Սոլսէսի ըսաւ.  
 Արովհետեւ աս ժողովուրդը իմ բարիքնե-  
 րուս ապերախտ է, ու իմ հրաշքներս  
 մոռցաւ՝ որոնցմով որ զիրենք Ագիպտոսէն  
 հանեցի, իմ զօրութեւս չապաւինիր, ու



աս տասր՝ անգամ է, որ ինձի գէմ կա-  
 պրատամբի կոր, անոր համար Յեսուէն  
 ու Քաղէբէն իզատ ամենեին մէկն ալ  
 չիմտնէ խոստացած երկիրները, և ամ-  
 մէնքն ալ աս անապատը քառսուն տարի  
 պտըտին, ու իրենց ոսկորները անապատի  
 մէջ մնան: Իրենց քսան տարւընէ վար  
 զաւկընները՝ որոնց համար ըսին, որ հըս-  
 կանները պիտոր յափշտակեն անոնք մըտ-  
 նեն, ու ժառանգեն ան խոստացած եր-  
 կիրները, որոնց իրենց ծնօղքները ար-  
 ժանի չեղան: Ինչպէս որ ըսաւ Մ՛ծ, ա-  
 նանկ ալ կատարեց, վնզի քառսուն տարի  
 ան ահագին անապատին մէջ պտըտցուց  
 զիրենք, ինչևան որ քսան տարւընէ վեր  
 ամմէնը մեռան Յեսուէն ու Քաղէբէն  
 իզատ: Իսրայէլի ժողովուրդին անանկ  
 վախկոտութիւր ու ապստամբութիւր կեն-  
 դանի օրինակ էր մեղաւորներուն երկմը-  
 տուերը, որ Մ՛յ խոստումները ու հրաշքները  
 բանի տեղ չեն դներ, ու վախկոտութիւ  
 կըմտածեն, որ դժարութիւներուն չեն կըր-  
 նար յաղթել, որ աս խոստացած երկիր-  
 ներուն նշանակած երջանիկ յաւիտենա-  
 կանութեան ճամբուն մէջը իրենց գիմացը  
 կելլան: (Ո՛րոհոց, ԺԳ, ԺԻ):

Խորհրդի յաւիտեանսն ուրիշ վրա :

«. Ընտրքիս վրա ամմէնքս ալ ճամբայ  
ելած կերթանք կոր դէպ 'ի կամ միշտ  
դժբաղդ՝ կամ միշտ բարեբաղդ յաւիտե-  
նականութի մը, մէկերնիս ալ ստոյգ չենք  
դիտեր, որ որուն պիտոր հասնինք, ու  
չենք վախնար, չենք մտածեր, ու աշխրքիս  
հոգերէն իզատ ուրիշ բանի մը ետեէն  
չենք իյնար, որ կարճ ու վտանգաւոր  
անցք մի է<sup>1)</sup> :

Բ. Սեր ձեռքն է՝ կամ աւետարանի  
ու սքերուն նեղ ճամբովը երջանիկ յա-  
ւիտենականութե հասնիլը<sup>2)</sup> . կամ աշխրքի  
ու մեղաւորներուն լայն լայն ճամբաներովը  
դժբաղդ յաւիտենականութե մէջ իյնալը<sup>3)</sup> ,  
Լ'նանկ է նէ ինտոր ընենք, վտանգի դը-

1. Արեւիկը՝ աղաչեմ, իբրև զպանդուխտս նրժ-  
դէհս 'ի բաց մերժել 'ի մարմնաւոր ցանկու-  
թեցն. . . Պէր. Բ. 11 :
2. Ի լուծանել այսպէս այսր ամի, որպիսի ինչ  
պարտ իցէ ձեզ գտանել. այլ սիւ և ամապաշտ  
կարգաւ ահն ունել, և փութալ հասանել  
գարտեան աւուրն հեռուն՝ յորում երկինք  
հրայրեացք լուծանիցին, և բնութիք հրդեհալ  
հալիցին: Նորոյ երկնից և նորոյ երկրի ըստ ա-  
ւետեացն հայեցեալ սպասիցեմք՝ յորս արդա-  
րութիւնն բնակէ. Բ. Պէր. Գ. 11. 12. 13 :
3. Ընդարձակ է դուանն և համարձակ ճանա-  
պարհն՝ որ ամի 'ի կորուստ, և բաղումք են՝  
որ մտանեն ընդ նա. Պէր. Գ. 13 :

նե՛նք աս յաւիտենական վիճակը, երթանք յիմարութիով մեղաւորներուն լայն ճամբան, թէ գլխերնուս ճարը փնտռենք :

Գ. Հիմակեան աս ժամանակին ու աս տեղի միջոցները պիտոր անցնին՝ ձեռքերնիս պիտոր չիմնան<sup>1</sup>) : Ի՞նչ մեծ երջանկութի է, թէ որ ասոնց պտուղը հանած կըլլանք նէ, ու ի՞նչ մեծ ցաւ ու տրտմութի պիտոր ըլլայ մեզի բոլոր յաւիտենականութե մէջը՝ թէ որ ասոնք չարաչար կորսընցուցած կըլլանք նէ : Թէ որ Լճ աս մեր ունեցած ժամանակին մէկ պզտիկ մասը դատապարտըված մարդու մը շնորհելու ըլլար նէ, ի՞նչ չէր ըներ ան մարդը . ուրեմն յաւիտենականութիւր մտածելով հիմայ ընենք՝ անոնք, քանի որ բանը մեր կամքէն կախված է նէ<sup>2</sup>) :

### ( ) Ե՛նի :

Ընդդիսյին թուվմաս Սորոս անունով եպարքոսը (մատնին) թագաւորին մէկ անիրաւ հրամանը կատարել չուզելով իր պատիւներէն ու բոլոր մեծութիւններէն վար իյնալէն ու բոլոր հարստութե՛ն և ունեցածէն զրկըվելէն ետքը՝ խիստ բանտի

1. Աչ ևս կայ սյլ ժամանակ. Յայտ. Ժ. 6 :

2. Չամս յաւիտենից յիշեցի. Ս. 2. 4. 6 :

մը մէջ հազար նեղութիւններ ու տառապանքներ քաշելու պարտաւորեցաւ : Նոյն լոր ազգականները ու բարեկամները բանտը կերթային , զինքը կըխրատէին , որ ինչ որ է նէ՛ թագաւորին կամքը կատարէ , որ կորսընցուցած մեծութիւնները՝ պատիւները ու հարստութիւնները նորէն ձեռք բերէ , ու բանտէն ալ ազատի . բայց ինքը անոնց խրատները արիութիւնով մը կըմերժէր՝ Մ.Յ հրամանին դէմ չընելու համար մեռնելը հազար անգամ լաւ սեպելով : Մ.Բ մէնէն ետքը իր կնիկը Մ.Լիզիան բոլոր զաւկրները ժողովեց , ու անոնց հետ մէկ տեղ բանտը գնաց : Ու իր երկանը առջևը ինկած շատ լայով հառաչելով աղաչելէն ետքը՝ սիրտը կակղցունելու համար գրւխաւորաբար ըսաւ , որ թագաւորին կամքին դէմ կենալով մեծ սխալ կընես կոր . վստի ինքը զինքդ շատ տարւան երջանիկ կեանքէ մը կըզրկես կոր , վստի տակաւին երիտասարդ ես , ու շատ ժամանակ կըրնաս ապրիլ : Թուովմաս ասոնք բոլոր լսելէն ետքը՝ ծանրութիւնով մը հարցուց կընկանը . Որչափ ատեն կըրնամ ապրիլ Մ.Լիզիա . կինը պատասխան տրվաւ . Թէ որ Մ.Ը կուզէ նէ՛ գոնէ քսան տարի : Քսան տարի՛ ըսաւ թուովմասը , տգէտ վաճառական ես , ու անխելքութիւնով խօ-

սեցար . ի՞նչ բաղդատութի ունի քսան տարին բոլոր յաւիտենականութե հետ : Վասն տարւան անստոյգ կեանքին համար կուզենս , որ ես երջանիկ յաւիտենակա նութի մը փոխեմ , չէ՞ չէ իմ կինս , իմ սիրտս հաստատած է յաւիտենական վարձ քին վրա՝ որ Մ<sup>Ժ</sup> խոստացեր է , ժամա նակաւոր բարիքները ամենեւին չեմ մը տածեր : Իմաստուն թոյլմասը յաւիտե նականութե մեծ վահանովը ասանկ դէմ դրաւ իր կնկանը ու ոտքը ինկած զաւ կրներուն թափած արցունքներուն ու ը րած շողքորթութիւններուն , ու ալ աւելի հաստատուեցաւ թագաւորին անարժան կամքը չիկատարելուն վրա : Բօլնիւօլնիւ քոտորէ յաւիտենականութե միտածութեւնն յիշէ :



# Յ Ե 'Ն Կ

Լ. Գրիգորի Տեղե Գրքանքաժ Զին-Լեւոնն ու  
 Կոմիտաս-Լեւոնի Երոնն՝ այլ ու բէնի խորհար :

Լ. Ղօթքի վրա . . . . .	157
Լ. պաշխարութեան խորհուրդին վրա . . . . .	392
Լ. Աանձնական դատաստանի վրա . . . . .	585
Լ. Աաքեալներուն հաւատամքին վրա . . . . .	33
Լ. Աաքինութեան վրա . . . . .	528
Լ. ստուածաշունչի պատմութիւններ	
Լ. բեսողովին հօրը զէմ ապստամբութիւնը . . . . .	127
Լ. բրահամին և Վ. ովտին եղբայրսիրութիւնը . . . . .	221
Լ. բրահամին զոհը . . . . .	479
Լ. բրահամին հաւատքը . . . . .	35
Լ. նդամալոյծը . . . . .	417
Լ. նտիոքոսին մահը . . . . .	393
Լ. շխրքի ստեղծագործութիւնը . . . . .	3
Լ. ճի բրիստոնեաներուն վարքերը . . . . .	113
Լ. սային հիւանդութիւնը . . . . .	489
Լ. ստուծոյ պատւիրանաց փախտակները . . . . .	235
Լ. Էւտեաց երկիրները գացող լրտեսները . . . . .	622
Բարելոնի երեք մանկունքները . . . . .	16
Բաղտասար թագաւորը . . . . .	522
Գ. եղէտնին բուրդը . . . . .	199
Գ. եղէտնին մադիանացիները յաղթելը . . . . .	99
Գ. Եեզի . . . . .	516
Գ. ողգոթայի երեք խաչերը . . . . .	70
Դ. անիէլ մարգարէ . . . . .	242
Դ. աւթին Գ. ոլիաթը յաղթելը . . . . .	151
Դ. աւթին Ժողովուրդը համրել տալը . . . . .	510
Դ. աւթին մեղքը . . . . .	401
Դ. երոզվրա . . . . .	192



Մատուածաշունչի պատմութիւններ

Լեզիպոտացոց անդրանիկներուն մահը . . . . .	357
Լեզիկիա թագաւորը . . . . .	261
Լեզիկիային հիւանդութիւնը . . . . .	488
Լեզիազարին մարտիրոսութիւնը . . . . .	386
Լեզիա մարգարէ . . . . .	213
Լեզիա մարգարէին փախչիլը . . . . .	471
Լեզիսէին երկու մեռել կենդանացունելը . . . . .	343
Լըրեք մոգերը . . . . .	64
Օւրէոս . . . . .	433
Խորայէլացիներուն աւետեաց երկիրը մտնելը . . . . .	227
Խորայէլացիներուն կարմիր ծովէն անցնելը . . . . .	364
Կորիս, Ղազան ու Արիրոն . . . . .	282
Կուանելիոս հարիւրապետ . . . . .	302
Համան . . . . .	548
Հեղի քահանայապետ . . . . .	274
Հերովդէս . . . . .	516
Հրէշտակին ամենասուրբ Կուսին աւետելը . . . . .	55
Հրէշտակներուն մեղքը . . . . .	503
Մագդաղենացին . . . . .	247
Մակարայեցի եօթը եղբայրները . . . . .	379
Մանանայ . . . . .	329
Մատաթի իշխանը . . . . .	387
Մարդուն իյնալը . . . . .	9
Մեծատուն ու Ղազարոս . . . . .	587
Մովսէսին աղօթելը . . . . .	158
Մովսէսին պղնձէ օձը . . . . .	28
Յակոբին Ասաւին տեղը անցնելը . . . . .	563
Յակոբ նահապետին հօրը դառնալը . . . . .	90
Յարութեան տեսիլքը . . . . .	144
Յերոբոզամ . . . . .	288
Յովբ երանելի . . . . .	598
Յովհաննէս մկրտչին գլխուն կտորովքը . . . . .	442
Յովնան մարգարէ . . . . .	336
Յովսիա թագաւորը . . . . .	540
Յովսէփ զեղեցիկ . . . . .	41
Յուդայ Մակարէին մեռելներու հոգիներուն համար Արուսազէմ պատարագացու իւրկելը . . . . .	610

Մատուածաշունչի պատմութիւններ

Յուդիթ . . . . .	206
Նաբովթ . . . . .	307
Նաբուգոդոնոսորին մեղքը . . . . .	504
Ներքինիին մկրտութիւնը . . . . .	373
Նիկանովը . . . . .	254
Նոյին տապանը . . . . .	120
Շուշան . . . . .	530
Պետրոս առաքեալին գլխաւորութիւնը . . . . .	107
Պետրոս ա. տաճարին դուռը բրած հրաշքը . . . . .	22
Պօղոս առաքեալին դառնալը . . . . .	556
Սեբեկային Իսահակին հետ պսակվիլը . . . . .	496
Սամուէլին մայրը ամուլ Մենա . . . . .	165
Սամիսոն . . . . .	517
Սաւուղին անհնազանդութիւնը . . . . .	171
Սաւուղին մահը . . . . .	578
Սերգիոս Պօղոսին դարձը . . . . .	322
Սողոմ Գոմորին երվիլը . . . . .	294
Սողոմոնին տաճարը . . . . .	267
Սուրբ Ստեփաննոս . . . . .	178
Տարիթա . . . . .	301
Տապանակին փղշտացիներու մէջ բրածները . . . . .	464
Տապանակին փոխադրութիւնը . . . . .	456
Տորիթ . . . . .	49
Փարաոն . . . . .	409
Քանանացի կնիկը . . . . .	164
Քանքարները . . . . .	572
Քրիստոսի Ամմաւուսի ճամբան աշկերտներուն երևնալը . . . . .	83
Քրիստոսի հացը շտոցունելը . . . . .	448
Քրիստոսի մկրտութիւնը . . . . .	372
Քրիստոսի չարչարանքները . . . . .	77
Քրիստոսի ջուրը գինի ընելը . . . . .	448
Քրիստոսի Տիրերիա ծովուն քովը առաքելոց երևնալը . . . . .	135
Քրիստոսի փորձութիւնները . . . . .	184
Մատուած գրեց ինչո՞ւ ստեղծեր է . . . . .	2
Մատուած թիչ է . . . . .	1
Մատուած մեզի հայր կոչելու վրա . . . . .	163

Լստուած սիրելու վրա . . . . .	246
Լստուծոյ անունը պատուելու վրա . . . . .	258
Լստուծոյ անւան փառքը խնդրելու վրա . . . . .	169
Լստուծոյ առջի պատուիրանին մեկնութիւնը . . . . .	240
Լստուծոյ արքայութիւնը ուզելու վրա . . . . .	170
Լստուծոյ կամքը ուզելու վրա . . . . .	170
Լստուծոյ շօր վրա . . . . .	39
Լստուծոյ Որդւոյն վրա . . . . .	53
Լստուծոյ պատուիրաններուն վրա . . . . .	233
Լստուծոյ սիրուն վրա . . . . .	211
Լրգելած օրերը հարսնիք չքնելու վրա . . . . .	336
Լրդար վաստակին տասանորդը տալու վրա . . . . .	336
Լրձակումի վրա . . . . .	424
Լրքայութեան վրա . . . . .	621
Լամբասանքի վրա . . . . .	306
Լարի գործքերու վրա . . . . .	537
Վայթագղութիւն չիտալու վրա . . . . .	288
Վլխաւոր մեղքերուն վրա . . . . .	514
Վողութեան վրա . . . . .	300
Վժոխքի բաժանման վրա . . . . .	606
Վժոխքի միջիններուն անօգուտ զղջումը . . . . .	316
Վժոխքի վրա . . . . .	619
Վրայի վրա . . . . .	384
Վկեղեցւոյ անսխալութեան վրա . . . . .	125
Վկեղեցւոյ պատուիրաններուն վրա . . . . .	320
Վկեղեցւոյ վրա . . . . .	105
Վրանութիւններու և աւետարանական խրատ- ներու վրա . . . . .	546
Վրդումի վրա . . . . .	249
Վրկու բնութեան վրա . . . . .	21
Վրրորդութեան վրա . . . . .	14
Չզջումին կերպին վրա . . . . .	406
Չղջումին ու անոր գործքերուն վրա . . . . .	399
Չրպարտութեան վրա . . . . .	306
Րնդ հանրական դատաստանի վրա . . . . .	594
Րնկերին բաներուն չիցանկալու վրա . . . . .	313
Րնկերին սիրուն վրա . . . . .	219
Րնքը զինքը սիրելու վրա . . . . .	226
Րիմպոսի վրա . . . . .	609

խոստովանանք ըլլալու պարտքին վրա . . .	326
խոստովանանքի վրա . . . . .	415 . 423
խորհուրդներու կնքոյն վրա . . . . .	357
խորհուրդներու վրա ընդհանրապէս . 348 .	355
Խրատ աղօթքի կերպին վրա . . . . .	166
— աղօթքի վրա . . . . .	160
— անպարկեշտութեան վրա . . . . .	296
— աշխրբին ներութիւններուն վրա . . . . .	443
— ապաշխարութեան հոգւոյն վրա . . . . .	434
— ապաշխարութիւնը չուշացունելու վրա . . . . .	395
— առանձնական դատաստանի վրա . . . . .	589
— Աստուծոյ ամէն տեղ ներկայութեան վրա . . . . .	532
— Աստուծոյ խօսքը լսելու վրա . . . . .	323
— Աստուծոյ ծառայութեանը վրա . . . . .	244
— Աստուծոյ մեծութեանը վրա . . . . .	17
— Աստուծոյ շնորհքները աղէկ չհոգործա- ծելու վրա . . . . .	565
— Աստուծոյ պաշտօնին մէջ հաստատուն կենալու վրա . . . . .	238
— Աստուծոյ պատուիրաններուն պահպա- նութեանը վրա . . . . .	236
— Աստուծոյ պզտիկուցմէ ծառայելու վրա . . . . .	381
— Աստուծոյ սիրուն եղանակին վրա . . . . .	249
— Աստուծոյ սիրուն վրա . . . . .	215
— աւետման վրա . . . . .	58
— բամբասանքի վրա . . . . .	309
— բարի գործքերու վրա . . . . .	542
— գայթազութեան վրա . . . . .	290
— եկեղեցւոյ դէմ ապերախտութիւններու վրա . . . . .	128
— եկեղեցւոյ խորհուրդներուն վրա . . . . .	352
— եկեղեցւոյ յարգութեան վրա . . . . .	268
— եկեղեցւոյ ունեցած պարտքերնուս վրա . . . . .	121
— եկեղեցւոյ սորվեցուցած ճշմարտու- թեան վրա . . . . .	109
— զղջումի շարժելու առիթներու վրա . . . . .	403
— ընդհանուր յարութեան վրա . . . . .	145

Խրատ ընդհանրական դատաստանի վրա . . . . .	600
— ընկերին սիրուն վրա . . . . .	223
— ժամանակը գործածելու վրա . . . . .	316
— իր կենաց վիճակ մը ընտրելու վրա . . . . .	498
— խաչելութեան վրա . . . . .	72
— խաչին վրա . . . . .	29
— խղճմտանքին գրգելուն վրա . . . . .	524
— խոնարհութեան վրա . . . . .	550
— խոստովանութեան վրա . . . . .	415 . 427
— խորհուրդները շուտ շուտ ընդունելու վրա . . . . .	330
— խորհուրդներուն կնքոյն վրա . . . . .	359
— ծնողքներու և զաւկրներու մէկզմէկու պարտքերուն վրա . . . . .	276
— Զաղորդութեան բարիքներուն վրա . . . . .	450
— Զաղորդութեան մէջ Քրիստոսի մեզմէ պահանջածներուն վրա . . . . .	458
— Զաղորդութեան վրա . . . . .	465
— Հաւատքի ու բարեպաշտութեան հա- մար չամրանալու վրա . . . . .	388
— Հաւատքի վրա . . . . .	36
— Հաւատքի օգուտներուն վրա . . . . .	115
— Հիւանդութիւնները համբերութեամբ քաշելու վրա . . . . .	490
— Զոգի սուրբին անձին ու գործոցը վրա . . . . .	101
— մահացու մեղքի վրա . . . . .	505
— մահւան մտածմունքներու վրա . . . . .	344
— մահւան վրա . . . . .	580
— մարդու վախճանին վրա . . . . .	4
— մեղի եղած անիրաւութիւնները թող տալու վրա . . . . .	179
— մեծերու հնազանդելու վրա . . . . .	284
— մեղքերու թողութեան վրա . . . . .	137
— մեր կամքը Աստուծոյ կամքին համա- ձայնելու վրա . . . . .	173
— մեր հոգւոյն փրկութեանը վրա . . . . .	229
— յաւիտենականութեան վրա . . . . .	625
— Զխուսը ճանչնալուն վրա . . . . .	366

Խորատ Յիսուսի ամե . անուան փառայր վրա .	24
— Յիսուսի ճնունդին վրա . . . . .	66
— նախախնամութեան վրա . . . . .	43
— նախանձաւորութեան վրա . . . . .	263
— ներելի մեղքի վրա . . . . .	512
— նորէն չիյնալուն վրա . . . . .	411
— շնորհքի վրա . . . . .	557
— շուտ շուտ հաղորդվելուն վրա . . . . .	474
— սղորմութեան վրա . . . . .	303
— պահապան հրեշտակներու վրա . . . . .	51
— պահքի ու ծովի վրա . . . . .	338
— պատարագի զօհին վրա . . . . .	481
— պատուոյ , հարստութեան ու հեշտութեան վրա . . . . .	518
— սուրբ Աստուածածնայ ջերմեանդութեան վրա . . . . .	209
— սուրբ Աստուածածնայ վերափոխման վրա . . . . .	200
— սուրբ Աստուածածնայ վրա . . . . .	194
— սուրբերուն պաշտօնին վրա . . . . .	256
— սրբարար շնորհքի վրա . . . . .	574
— փորձութիւններու վրա . . . . .	186
— քաւարանի վրա . . . . .	612
— քրիստոնէական յուսին վրա . . . . .	152
— քրիստոնէին վախճանին վրա . . . . .	11
— Քրիստոսի անձին ու բնութեանցր վրա . . . . .	78
— Քրիստոսի կենաց վրա մեզի հետ . . . . .	374
— Քրիստոսի համբարձման վրա . . . . .	92
— Քրիստոսի յարութեան վրա . . . . .	85
Պարզի խորհուրդին վրա . . . . .	494
Սիւրբալի ու տօն օրերու վրա . . . . .	266
Շաղորդութեան մէջ Յիսուսի երկրպագութիւն բնելու վրա . . . . .	462
Շաղորդութեան վրա . . . . .	446 . 454
Շաղորդութիւն առնելու պատրաստութիւններու վրա . . . . .	462
Շաղորդութիւն առնելու պարտքին վրա . . . . .	327
Շայհոյութեան վրա . . . . .	259
Շայր մերին վրա . . . . .	162




Նարր ժարր պատուելու վրա . . . . .	272
Նաւատամբի վրա . . . . .	31
Նաւաորի վրա . . . . .	8
Ներեակոսաց եկեղեցիներուն ստուծեան վրա	118
Նին օրէնքի զօհերուն վրա . . . . .	477
Նոզի սուրբին առարելոց վրա զայլը . . . . .	97
Նոզի սուրբին բղիման վրա . . . . .	95
Նոզի սուրբին զէժ և ուրիշ ծանր մեղքերու վրա . . . . .	521
Նոովմէական եկեղեցւոյ ճշմարտութեան վրա	112
Նրեշտակային ողջունատրութեան վրա . . . . .	190
Նրեշտակներու վրա . . . . .	47
Ոճմարիտ եկեղեցւոյ նշաններուն վրա . . . . .	107
Սահլան վրա . . . . .	577
Սարգեղութեան խորհուրդին եղանակին վրա	61
Սարգեղութեան խորհուրդին վրա . 20 . . . . .	55
Սարգ չքսպաններու վրա . . . . .	287
Սեծաւորները պատուելու վրա . . . . .	281
Սեծ պահոց վրա . . . . .	341
Սեղքերնուս թողութիւնը խնդրելու վրա . . . . .	177
Սեղքերու թողութեան վրա . . . . .	134
Սեղքի վրա . . . . .	50 . 509
Սեռելոց յարութեան վրա . . . . .	141
Սեր ամմէն օրւան հացը ուզելու վրա	176
Սկրտութեան արարողութեան վրա . . . . .	377
Սկրտութեան հարկաւորութեան վրա . . . . .	370
Սկրտութեան մէջ մեր խոստացածներուն վրա	378
Սկրտութեան ու անոր պտուղներուն վրա . . . . .	362
Սկրտութիւն տալու կերպին վրա . . . . .	371
Յիսուսի ծննդեան վրա . . . . .	62
Յովբ երանելիին խօսքերը . . . . .	315
Յուսոյ ու անոր ներհակ մղութիւններուն վրա	149
Նախախնամութեան վրա . . . . .	41
Ներգործական շնորհքի վրա . . . . .	554 . 561
Ներողութեան վրա . . . . .	439
Շնութեան վրա . . . . .	293
Ողորմութեան վրա . . . . .	361
Ողջոյն քեզ Մարիամին մեկնութիւնը . . . . .	196
Ուխտի վրա . . . . .	260

Ունակական կամ սրբարար շնորհքի վրա . . . . .	569
Չարէ խալըսելու համար Աստուծոյ աշաչելու վրա . . . . .	183
Պաշար ու ծոմ բռնելու վրա . . . . .	333
Պատարագի զոհին վրա . . . . .	477
Պսակի խորհուրդին վրա . . . . .	495
Սատանաներու վրա . . . . .	49
Սուտ չիխօսելու վրա . . . . .	307
Սուրբ Աստուածածնայ ջերմեռանդութիւնով ծառայելու վրա . . . . .	204
Սուրբ Աստուածածնայ վրա . . . . .	63
Սուրբերուն հաղորդութեանը վրա . . . . .	133
Սուրբերուն պաշտօնին վրա . . . . .	252
Սուրբ խաչին նշանին վրա . . . . .	26
Սուրբ Յովսեփին վրա . . . . .	63
Վերջին դատաստանի վրա . . . . .	143 . 594
Վերջին օժման վրա . . . . .	486
Վճարման վրա . . . . .	431 . 438
Փորձութեանց դէմ Աստուծոյ օգնութիւնը խնդրելու վրա . . . . .	182
Փրկագործութեան խորհուրդին վրա . . . . .	22
Քաւարանի վրա . . . . .	607
Քննութեան վրա . . . . .	415
Քրիստոնեայ անւան վրա . . . . .	7
Քրիստոսի անվախճան թագաւորութեան վրա . . . . .	90
Քրիստոսի դատաստան գալուն վրա . . . . .	89
Քրիստոսի համբարձման վրա . . . . .	89
Քրիստոսի հոգւոյն գոգն Աբրահամու իջնա- լուն վրա . . . . .	82
Քրիստոսի մահւան վրա . . . . .	69
Քրիստոսի յարութեան վրա . . . . .	82
Քրիստոսի չարչարանքներուն և խաչին վրա . . . . .	68
Քրիստոսի չարչարվելուն ու մեռնելուն պատ- ճառը . . . . .	75
Քրիստոսի քառսուն օր աշխրջի մէջ մնալուն վրա . . . . .	88
Օրինակ Աղաղոն ձկնաւորին եղբարսիրութիւնը . . . . .	225
— աղօթքի զօրութեան վրա . . . . .	167
— անպարկէշտութեան վրա . . . . .	298

Օրինակ աշխարհք տեսնելով զՆստուած	
ձանձնալու վրա . . . . .	245
— ապաշխարութիւնը ուշացունելու նիւա-	
սին վրա . . . . .	397
— առանձնական դատաստանի վրա . . . . .	592
— Նստուծոյ ամսէն տեղ ներկայութիւնը	
մտածելու վրա . . . . .	534
— Նստուծոյ դատաստանին վախին վրա . . . . .	231
— Նստուծոյ կոչմանէն ետ չիդառնալուն	
վրա . . . . .	499
— Նստուծոյ համաձայնելու վրա . . . . .	174
— Նստուծոյ շնորհքները աղէկ չիգործա-	
ծելու վրա . . . . .	567
— Նստուծոյ պղտիկուցմէ ծառայելու վրա	
բարի գործելու վրա . . . . .	543
— գայլթագղութեան վրա . . . . .	292
— Դաւիթ չարագործին դարձը . . . . .	140
— եկեղեցիէ դուրս չելալու վրա . . . . .	131
— եկեղեցւոյ մէջ ջերմեռանդ կենալու	
վրա . . . . .	271
— Արրորդութեան անհասանելիութեան	
վրա . . . . .	19
— զՆստուած սիրելու վրա . . . . .	250
— զարդարանքին մնասին վրա . . . . .	264
— զաւկրներուն պարտքերուն վրա . . . . .	280
— զբպարտութեան վրա . . . . .	310
— Ընդհանրական դատաստանը մտածելու	
վրա . . . . .	603
— Թողութիւն տալու վրա . . . . .	181
— Թուլ խոստովանահայր փնտաելու մնա-	
սին վրա . . . . .	429
— Ժամանակը աղէկ չիգործածելու վրա	
խաչելութեան վրա մտածելուն օգուտը	
խաչին նշանին զօրութեան վրա . . . . .	30
— Խղձմտանքին զբղելը մտիկ ընելու վրա	
խոնարհութեան ու համբերութեան վրա	
խոստովանանքի զօրութեան վրա	
խոստովանանքի մէջ մեղք պահելուն	
մնասը . . . . .	420

(Օրինակ ճնողաց պարտերու վրա . . .	278
— կատարեալ զղջումի պտուղին վրա . . .	404
— Աղոթմանային դարձը . . . . .	123
— Հաղորդութիւնը բաղձանքով առնելու վրա . . . . .	467
— Հաղորդութիւնը յարդութիւնով առ- նելու վրա . . . . .	492 460
— Հաւատքի դէմ փորձութեան վրա . . .	38
— Հաւատքի խոստովանութեան վրա . . .	12
— Հաւատքի համար չամբնայու վրա . . .	390
— Հիւանդութիւններու համբերելու վրա . .	492
— Հօգի սուրբին ողորմութեան վրա . . .	163
— Հպարտութեան, անգթութեան ու ա- զահութեան վրա . . . . .	519
— Հրեայ աղու մը դարձը . . . . .	375
— Ծջմարիտ զղջումի վրա . . . . .	413
— մահւան մտածմունքին օգտին վրա . . .	346
— Սարգեղութեան խորհուրդին պտուղին վրա . . . . .	60
— մեծաւորներու հնազանդութեան վրա . .	285
— մեղաւորին ու արդարին մահւան վրա . .	582
— մեղքէն դառնալուն վրա . . . . .	110
— մեղքին պատիժին վրա . . . . .	507
— մկրտութեան զօրութեան վրա . . . . .	361
— յարութեան վրա . . . . .	147
— յաւիտենականութիւնը մտածելու վրա . .	626
— Զիսուսը ամսէն բանէն աւելի սիրելու վրա . . . . .	5
— Զիսուսի անունին զօրութեանը վրա . . .	25
— Զիսուսի ճնունդը մտածելու վրա . . .	67
— Զիսուս մանուկը սրտանց սիրելու վրա . .	217
— նախախնամութեան վրա . . . . .	45
— ներքի մեղքին մեասին վրա . . . . .	513
— շնորհքը աղէկ գործածելու վրա . . . .	575
— շնորհքի հետեւելու վրա . . . . .	558
— շուտ շուտ հաղորդութիւնն վրա . . . .	475
— ողորմութեան վրա . . . . .	305
— ուղղափառ հաւատքէ դուրս հրաշք չըլլալուն վրա . . . . .	116

Օրինակ պահապան հրեշտակին բարեխօսու-	
թեանը վրա . . . . .	52
— պահքի ու ծովի վրա . . . . .	339
— պատարագը ջերմեսանդու թեամբ տես-	
նելու վրա . . . . .	484
— Պարասպեւիին դարձր . . . . .	154
— Պոպղիոս ձկնաւորին աղօթքին զօ-	
րութիւնը . . . . .	161
— սուրբ Լստուածածինը ողջունելու վրա	195
— սուրբ Լստուածածնայ պաշտպանու-	
թեան վրա . . . . .	210
— սուրբերուն բարեխօսութեանը վրա .	257
— սուրբ վարդարանին զօրութեան վրա .	202
— վարքերնիս Յիսուսի վարքին նմանցու-	
նելու վրա . . . . .	368
— վերջին օձուժ չուղելուն պատիժը .	354
— փորձութեան յաղթելու վրա . . . . .	188
— քարոզ լսելուն օգուտին վրա . . . . .	325
— քաւարանի վրա . . . . .	615. 617
— Վրիստոսի ետեւէն երթալու վրա .	445
— Վրիստոսի երկու բնութեանցը վրա .	80
— Վրիստոսի համբարձման օրը ըրած	
պարգևը . . . . .	93
— Վրիստոսի սիրուն վրա . . . . .	86



ՎՐԻՊԱԿԻՔ ՏՊԱԳՐՈՒԹՎԵԼՆ

Է.Պ.	ՏՈՂ.	ՎՐԻՊԱԿԻՔ	ՈՒՂԱԳՐ
3	22	բնական	բանական
33	4	երկի	երկրի
—	19	ճախացուցած	ճոխացուցած
—	24	Տէր մեր Յն Քն	Տէր Յն Քն
37	16	մուլբուժիւնները	մուլբժիւնները
55	13	կատարեալ մարմին	կատարեալ մարդ- կային մարմին
57	22	որ իրէն	ու իրեն
71	8	Քն մարդ	Քն ճշմարիտ մարդ
—	10	աշխարհքքը	աշխարհքքը
72	6	ինք	ենք
88	16	աշքի	աշխրքի
92	24	35	3 · 5
105	3	իրին	իրեն
243	8	ձէթ	ձիւթ
277	24	պատուեու	պատուելու
288	27	տեսնալով	վախնալով
322	26	լիցվեցան	նախանձով լիցվեցան
331	29	ննջեցեաքն	ննջեցեալքն
350	1	սեղանակապատիք	սեղանակապատու իք կամ սրբապղծու իք
392	17	երրորդ	երկրորդ
415	14	վասն զի	որպէս զի
469	6	մեզի	բեզի
473	22	կընշանակին	կըշնանակէ







